



NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA

---

INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# **THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST**

**XXIX**

YEREVAN – 2014



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

---

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

# **СТРАНЫ И НАРОДЫ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА**

## **XXIX**

ЕРЕВАН – 2014



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXIX

ԵՐԵՎԱՆ – 2014

ՀՏԴ 93/99  
ԳՄԴ 63.3  
Մ 663

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Սաֆրաստյան Ռ.Ա.** (նախագահ), **Ղազարյան Ռ.Պ.** (նախագահի տեղակալ),  
**Հովհաննիսյան Ն.Հ.**, **Բայբուրդյան Վ.Ա.**, **Զոբանյան Պ.Ա.**, **Քոսյան Ա.Վ.**,  
**Հակոբյան Ա.Հ.**, **Բայբուրդյան Ա.Վ.**, **Հարությունյան Լ.Մ.**

Տեխնիկական համակարգող՝ **Ն.Վ. Կարախանյան**

**ՄԵՐԾԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ**

Մ 663 **ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ. XXIX/** Խմբ. խորհուրդ՝ Ռ. Ա. Սաֆրաստյան և  
ուրիշ.— Եր.: «Զանգակ» հրատ., 2014.— 352 էջ:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի  
հերթական XXIX հատորը ընդգրկում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հին  
և միջին դարերի պատմության, նոր և նորագույն ժամանակների, ինչպես նաև  
աղբյուրագիտության և պատմագրության հարցերի վերաբերյալ հետազոտություն-  
ներ: Զգալի տեղ է հատկացված տարածաշրջանի քաղաքական զարգացումների,  
միջազգային հարաբերությունների և այլ հիմնախնդիրների լուսաբանությանը:

Նախատեսվում է արևելագետների, հայագետների, միջազգայնագետների,  
ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների  
համար:

ՀՏԴ 93/99  
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-68-311-9

© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2014

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## Հին եվ Միջին դարերի ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈՔԵՐՏ

ԽԱԹԹԻԻ ՄԵԾ ԱՐՔԱ ՄՈՒՐՍԻԼԻ II-Ը ԵՎ ՆՐԱ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ..... 14

### ՑԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՍՈՐԵՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(Ք.Ա. VIII-VII դդ.) ..... 40

### ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ  
ՇՈՒՐՋ Ք.Ա. VI-IV դարերին ..... 61

### ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ք.Ա. V-III դարերի ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՇՈՒՐՋ ..... 80

### ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ..... 97

### ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՈՒ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ  
ՇՈՒՐՋ (XVI դ.) ..... 112

## ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ՍԱՆՈՅԱՆ ՌՈՒՔԵՆ

ԱՐԱՐ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԼԻՔԱՆԱՆՈՒՄ  
(1819-1850 թթ.) ..... 127

**ԵՂՈՅԱՆ ԱՍՏԴԻԿ**

Լիբանանի ՄոնթասարիֆոնիթՅոնիւն ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1861-1868 թթ.)..... 139

**ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱԶԵԼԻ**

Ռոմիսիայի ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ (XIX Դ. ՎԵՐՋ XX Դ. ՍԿԻԶԲ)..... 149

**ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ**

Թոմիթ-Եմենիայի ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. 1911 թ. ԴԱՆՆՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ..... 174

**ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՎԱՀԱՆ**

ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՅԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 1916-1923 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ .....186

**ՄԱԻԼՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ**

ԱՋԱՐԻԱՅԻ ԵՎ ՍԱՄՅԽԵ-ՄԵՍԽԵԹԻԱՅԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՎՐԱՍԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՅԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1918-1921 թթ.)..... 214

**ՍՏԱՄԲՈԼՅՅԱՆ ԱՆՈՒՇ**

ԲԱՆԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՈՐՊԵՍ 1978-1979 թթ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԽՈՐՈՇՈՂ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ. ՀԵՏԱՀԱՅԱՑ ԴԻՏԱՐԿՈՒՄ .....245

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՎԱ**

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՊԱՐՄԻՑ ԾՈՑԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ «ԾՈՎԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԻ» ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 2001 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԴԵՊՔԵՐԻՑ ՀԵՏՈՒ ..... 261

**ՍԱՄՎԵԼՅԱՆ ԿԱՐԻՆԵ**

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ՄԵՐՋԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (2010-2013 թթ.).....276

**ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ՄԱՐԳԱՐՅԱՆ ԵՐՎԱՆԴ**

ՀԵԼԼԵՆԻԶՄԸ ԵՎ ԶԵԼՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ  
ՀԵԼԼԵՆԻՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ..... 289

**ՅԱԿՈՐԵԱՆ ԱԼԵՔՍԱՆ**

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ 961 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԱՆԻՆ  
ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՀՌԶԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՆՈՐ ԱՂԲԻՒՐԱԳԻՏԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹԻՒՆ) ..... 309

**ԱՎԵՏՅԱՆ ԿԱՐԻՆԵ**

«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՐԵՎԵԼՔ» ՀԱՆԴԵՍԸ ԵՎ ՀՈՎԱԵՓ ՕՐԲԵԼԻՆ .....332

**ԿՈՉՄՈՅԱՆ ԱՐՄԱՆՈՒՇ**

ԴԵՆԻ ԴԸ ՌՈՒԺՄՈՆԸ «ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎՄՈՒՏՔ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԿԱՊԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ .....342

# СОДЕРЖАНИЕ

## ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

### КАЗАРЯН РОБЕРТ

ВЕЛИКИЙ ЦАРЬ ХАТТИ МУРСИЛИЙ II И ЕГО ВРЕМЯ ..... 14

### ЦАКАНЯН РУСЛАН

ПОЛИТИКА МАССОВЫХ ПЕРЕСЕЛЕНИЙ В АССИРИИ И ВАНСКОМ  
ЦАРСТВЕ (VIII-VII ВВ. ДО Р.Х.) ..... 40

### ХОРИКЯН ОГАННЕС

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ САТРАПСКОГО ДЕЛЕНИЯ СРЕДНЕЙ АЗИИ В  
VI-IV ВВ. ДО Н. Э ..... 61

### МОВСИСЯН АРТАК

ЗАМЕТКИ ПО ИСТОРИИ АРМЕНИИ V-III ВЕКОВ ДО Р. Х. .... 80

### МАТЕВОСЯН АРТУР

АПОСТОЛЬСКИЕ ИСТОКИ УЧЕНИЯ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ ..... 97

### МАРКАРЯН ГОР

К ВОПРОСУ О ЦЕРКОВНОМ ЗЕМЛЕВЛАДЕНИИ В ВОСТОЧНОЙ ГРУЗИИ  
(XVI В.) ..... 112

## НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

### САНОЯН РУБЕН

ОБРАЗОВАНИЕ АРАБСКОЙ ЕВАНГЕЛИЧЕСКОЙ ОБЩИНЫ В ЛИВАНЕ  
(1819-1850 ГГ.) ..... 127

### ЕГОЯН АСТХИК

МУТАСАРИФИЯ ЛИВАНА В ПЕРИОД ФОРМИРОВАНИЯ  
(1861-1868 ГГ.) ..... 139



**НАВАСАРДЯН НАЗЕЛИ**

ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИЕ ИНТЕРЕСЫ РОССИЙСКОЙ ИМПЕРИИ В  
ИРАНЕ (КОНЕЦ XIX-НАЧАЛО XX ВВ.) ..... 149

**ГАСПАРЯН АРАМ**

ЙЕМЕНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В НАЧАЛЕ 20-ГО ВЕКА: ДААНСКОЕ  
СОГЛАШЕНИЕ 1911 Г. .... 174

**БАЙБУРТЯН ВААН**

КУРДСКИЙ ВОПРОС В МЕЖДУНАРОДНОЙ ДИПЛОМАТИИ В 1916-1923  
ГОДАХ ..... 186

**МАИЛЯН БЕНИАМИН**

ПРОБЛЕМА АДЖАРИИ И САМЦХЕ-МЕСХЕТИИ В КОНТЕКСТЕ  
ИНТЕГРАЦИОННОЙ ПОЛИТИКИ ПРАВИТЕЛЬСТВА ГРУЗИИ  
(1918-1921 ГГ.)..... 214

**СТАМБОЛЦЯН АНУШ**

ПОЗИЦИЯ РУКОВОДСТВА АРМИИ КАК ВАЖНЫЙ ФАКТОР,  
ПРЕДОПРЕДЕЛЯЮЩИЙ ЗАВЕРШЕНИЕ И ПОСЛЕДСТВИЯ ИРАНСКОЙ  
РЕВОЛЮЦИИ 1978-1979 ГГ.: РЕТРОСПЕКТИВНОЕ ОБОЗРЕНИЕ ..... 245

**АРУТЮНЯН ЕВА**

АКТИВАЦИЯ ВОЕННОЙ РОЛИ ЯПОНИИ В РЕГИОНЕ ПЕРСИДСКОГО  
ЗАЛИВА И ПРОБЛЕМА БЕЗОПАСНОСТИ «МОРСКИХ ЛИНИЙ» ПОСЛЕ  
СОБЫТИЙ 11 СЕНТЯБРЯ 2001 ГОДА ..... 261

**САМВЕЛЯН КАРИНЭ**

СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ИРАКЕ В КОНТЕКСТЕ  
СОБЫТИЙ В СТРАНАХ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА  
(2010-2013 ГГ.)..... 276

**ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ИСТОРИОГРАФИЯ****МАРГАРЯН ЕРВАНД**

ЭЛЛИНИЗМ И ЗЕЛОТИЗМ В СОВРЕМЕННОЙ ЭЛЛИНИСТИКЕ ..... 289

|  |     |
|--|-----|
| <b>АКОПЯН АЛЕКСАН</b>  |     |
| СВИДЕТЕЛЬСТВО МАТТЭОСА УРҲАЙЕЦИ О ПРОВОЗГЛАШЕНИИ<br>АНИ СТОЛИЦЕЙ В 961 ГОДУ (НОВЫЙ ИСТОЧНИКОВЕДЧЕСКИЙ<br>АНАЛИЗ) ..... | 309 |
| <b>АВЕТЯН КАРИНЕ</b>   |     |
| ЖУРНАЛ “ХРИСТИАНСКИЙ ВОСТОК” И ИОСИФ ОРБЕЛИ.....   | 332 |
| <b>КОЗМОЯН АРМАНУШ</b>   |     |
| ДЕНИ ДЕ РУЖМОН В ПОИСКАХ КУЛЬТУРНЫХ СВЯЗЕЙ<br>“ВОСТОК-ЗАПАД” .....   | 342 |

# CONTENTS

## HISTORY OF ANCIENT AND MIDDLE AGES

### **GHAZARYAN ROBERT**

THE GREAT KING OF HATTI MURSILI II AND HIS TIME ..... 14

### **TSAKANYAN ROOSLAN**

THE POLICY OF MASS DEPORTATIONS IN ASSYRIA AND KINGDOM  
OF VAN IN VIII-VII CENTURIES B.C. .... 40

### **KHORIKYAN HOVHANNES**

ON THE SOME PROBLEMS OF THE SATRAPIC DIVISION OF THE MIDDLE  
ASIA IN THE VI-IV CENTURIES B.C. .... 61

### **MOVSISYAN ARTAK**

REMARKS ON THE HISTORY OF ARMENIA OF THE V-III  
CENTURIES B.C. .... 80

### **MATEVOSYAN ARTHUR**

THE APOSTOLIC SOURCES OF DOCTRINE OF THE ARMENIAN CHURCH..... 97

### **MARGARYAN GOR**

THE QUESTION OF MONASTERY LANDHOLDING IN EASTERN GEORGIA  
(XVI CENTURY).....112

## MODERN AND CONTEMPORARY HISTORY

### **SANOYAN RUBEN**

THE FORMATION OF ARAB EVANGELICAL COMMUNITY IN LEBANON  
(1819-1850)..... 127

### **YEGHOYAN ASTGHIK**

MUTASARIFIYYA OF MOUNT LEBANON IN FORMATIVE PERIOD,  
1861-1868 .....139

**NAZELI NAVASARDYAN**

THE TRADE AND ECONOMIC INTERESTS OF RUSSIAN EMPIRE IN IRAN  
(THE END OF THE 19<sup>th</sup> - THE BEGINNING OF THE 20<sup>th</sup> CENTURIES) ..... 149

**GASPARYAN ARAM**

TURKISH-YEMENI RELATIONS IN THE BEGINNING OF THE 20<sup>th</sup> CENTURY:  
TREATY OF DAAN IN 1911..... 174

**BAYBURDYAN VAHAN**

KURDISH ISSUE DISCUSSIONS BY THE INTERNATIONAL DIPLOMACY  
IN 1916-1923 .....186

**MAILYAN BENIAMIN**

THE PROBLEM OF ADJARA AND SAMTSKHE-MESKHETI IN THE  
CONTEXT POLICY OF INTEGRATION OF THE GOVERNMENT  
OF GEORGIA (1918-1921) ..... 214

**STAMBOLTSYAN ANUSH**

THE POSITION OF ARMY LEADERSHIP AS AN IMPORTANT FACTOR FOR  
DESTINING THE END AND THE CONSEQUENCES OF IRANIAN REVOLUTION  
IN 1978-1979: RETROSPECTIVE LOOKOUT .....245

**HARUTYUNYAN YEVA**

THE ACTIVATION OF JAPAN’S MILITARY ROLE IN THE PERSIAN GULF  
AND THE ISSUE OF SECURITY OF “SEA LINES” AFTER THE EVENTS OF  
SEPTEMBER 11, 2001 ..... 261

**SAMVELYAN KARINE**

THE SOCIAL-POLITICAL SITUATION IN IRAQ IN THE CONTEXT OF  
THE EVENTS IN THE COUNTRIES OF THE NEAR AND MIDDLE EAST  
(2010-2013)..... 276

**SOURCE STUDY AND HISTORIOGRAPHY**

**MARGARYAN ERVAND**

HELLENISM AND ZEALOTISM IN MODERN HELLENISTIC STUDIES ..... 289

**HAKOBYAN ALEKSAN**

THE TESTIMONIAL OF MATTHĒOS URHAYETSI ON PROCLAMATION OF ANI  
THE CAPITAL CITY IN 961 (A NEW STUDY OF THE SOURCE) ..... 309

**AVETYAN KARINE**

REVUE “XRISTJANSKIĪ VOSTOK” ET JOSEPH ORBELI.....332

**KOZMOYAN ARMANUSH**

DENIS DE ROUGEMONT IN THE QUEST FOR “EAST-WEST” CULTURAL  
CONNECTIONS.....342

---

---

# ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

---

---

ՌՌԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

## ԽԱԹԹԻ ՄԵԾ ԱՐՔԱ ՄՈՒՐՍԻԼԻ ԻԻ-Ը ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

### *Ներածություն*

Հին Արևելքի ամենանշանավոր արքաներից մեկի՝ Մուրսիլի<sup>1</sup> ԻԻ-ի (Ք.ա. 1321-1295 թթ.) ժամանակաշրջանը լի է իրադարձություններով, որոնք լույս են սփռում ոչ միայն Խաթթիի, այլ նաև Մերձավոր Արևելքի պատմության վրա: Խեթական արքան յուրօրինակ անձնավորություն էր՝ և՛ հզոր տիրակալ, և՛ աստվածավախ մահկանացու, և՛ հմուտ դիվանագետ, և՛ տաղանդավոր զորավար: Նրա օրոք ստեղծված սկզբնաղբյուրները թույլ են տալիս գրեթե ամբողջական պատկերացում կազմել նրա կառավարման տարիների մասին: Նրա ժամանակաշրջանը առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև Հայաստանի հին շրջանի պատմությունն ուսումնասիրողների համար, քանի որ վերոնշյալ աղբյուրները լույս են սփռում այդ ժամանակի Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի պատմության վրա:

Աշխատության նպատակն է խեթագիտության նորագույն ձեռքբերումների հիման վրա փորձ անել տալ Մուրսիլի ԻԻ-ի և նրա ժամակաշրջանի պատմությունը:

---

<sup>1</sup> Առանձին հետաքրքրություն է ներկայացնում արքայի անունը, որը դարերով պահպանվել է խեթերին հարևան հայերի մոտ՝ որպես Մուշեղ անձնանուն: Անվան հայերեն հին ձևն է Մուրշեղ, որը հետագայում ր-ի անկումով դարձել է Մուշեղ (Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 455): Անձնանունն, ըստ երևույթին, բաղադրվում է Murš արմատից և ili ածանցից՝ Murš+ili (Melchert G., The Luwians, Leiden-Boston, 2003, p. 16): Հավանաբար, Մուրսիլին նրա գահակալական անունն էր, իսկ նրա իսկական, խորիական անվանումը Տասմիսարումա (Tašmi-Šarruma) էր (Ünal A., Muršili II, Reallexikon der Assyriologie und vorderasiatischen Archäologie, 1995, 8, S. 435-436):

## **Մուրսիլի II-ի ժամանակաշրջանի պատմության աղբյուրագիտական հենքը**

Մուրսիլի II-ի թողած գրավոր ժառանգությունը բազմազան է և խիստ կարևոր նրա կառավարման ժամանակաշրջանի՝ Փոքր Ասիայի և հարակից տարածքների երկրների և ժողովուրդների պատմության ուսումնասիրման առումով: Նրա ժամանակաշրջանը կարելի է համարել խեթական պատմագիտության գագաթնակետը: Հարկ է առանձնացնել հատկապես Մուրսիլի II-ի տարեգրությունները, որոնք հայտնի են որպես «Տասնամյա» և «Ընդարձակ»: «Տասնամյա»-ն ներկայացնում է արքայի կառավարման առաջին տասը տարիների իրադարձությունները, իսկ «Ընդարձակ»-ն ընդգրկում է նրա կառավարման գրեթե ողջ շրջանը: Տարեգրությունների տեքստերը և հատվածները հրատարակվել են տարբեր հեղինակների կողմից՝ ամբողջական կամ հատվածաբար<sup>2</sup>: Մուրսիլի II-ը թողել է նաև իր հոր՝

---

<sup>2</sup> «Տասնամյա» տարեգրության հիմնական տեքստի առաջին գիտական տառադարձումը տվել է Է. Ֆոռերը (2 BoTU 48): Հետագայում հիմնական տեքստի տառադարձումը և թարգմանությունը, «Ընդարձակ» տարեգրության տեքստի հետ զուգահեռ, տվել է Ա. Գյոթցեն (Götte A., Die Annalen des Muršiliš, Mitteilungen der Vorderasiatisch-ägyptischen Gesellschaft, 1933, 38 (այսուհետ՝ AM): Հավելյալ կրկնօրինակները հրատարակել է Հ. Օտտենը (Otten H., Neue Fragmente zu den annalen des Muršili, Mitteilungen des Instituts für Orientforschung, 1955, 3, S. 153-179): Կան նաև նոր հրատարակություններ՝ նոր տեքստերի ընդգրկմամբ (Kümmel H.M., Die Zehnjahr-Annalen Mursilis II. Rechts-und Wirtschaftsurkunden Historisch-chronologische Texte. B. I, 1985, S. 471-481; Grélois J.-P., Les Annales Decennales de Mursili II (CTH 61.1), Hethitica, 1988, IX, pp. 17-145; Del Monte G.F., L'annalistica ittita, pp. 32-33; Beal R., The Ten Year Annals of Great King Muršili II of Hatti (2.16), The Context of Scripture, II, Leiden, Boston, Köln, 2000, pp. 82-90; Ղազարյան Ռ., Մուրսիլի II-ի «Տասնամյա» տարեգրությունը, Երևան, 2013): «Ընդարձակ» տարեգրությունները մասնակի կամ ամբողջական հրատարակել են մի շարք հեղինակներ (AM; Otten H., Neue Fragmente zu den annalen des Muršili, S. 153-179; Houwink ten Cate Ph. H.J. Mursilis' northwestern campaigns-additional fragments of his Comprehensive annals, Journal of Near Eastern Studies, 1966, XXV, 3, pp. 162-191. Նույնի, Mursilis' North-Western Campaigns-A Commentary, Anatolica, 1967, I, pp. 44-61. Նույնի, Mursilis' Northwestern Campaigns-Additioanl Fragments of his Comprehensive Annals Concerning the Nerik Foundation, Florilegium Anatolicum, Paris, 1979, pp. 157-167. Նույնի, The Mashuiluwa Affair: A join (KBo XIX 46) and a Duplicate (KBo IX 77) to Mursilis's Comprehensive Annals (12<sup>th</sup> year of his reign), Studia Mediterranea Piero Meriggi Dicata (Pavia), 1979; Хачатрян В., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, с. 152-159; Del Monte G.F., L'annalistica ittita, Brescia, 1993, pp. 33-40, 73-131; Խաչատրյան

Սուպպիլուլիումա I-ի խմբագրված տարեգրությունը<sup>3</sup>: Գոյություն ունեն նաև արքայի՝ իր վասալների հետ կնքած պայմանագրերի տեքստերը<sup>4</sup>: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Մուրսիլի II-ի «Աղոթքի» տեքստերը<sup>5</sup>: Այս և Մուրսիլիի օրոք ստեղծված մի շարք այլ տեքստերի բովանդակության մասին կխոսվի ստորև<sup>6</sup>:

### ***Կառավարման սկիզբը. երիտասարդ արքան մտնում է պայքարի մեջ***

Մուրսիլի II-ը նորխեթական տերության հիմնադիր Սուպպիլուլիումա I-ի (Ք.ա. 1344-1322 թթ.)՝ մեզ հայտնի հինգ որդիներից կրտսերն էր<sup>7</sup>, որը զբաղեցրեց Խաթթիի գահը շատ բարդ ժամանակաշրջանում: Երիտասարդ արքան, կառավարման առաջին տարիներից սկսած, ստիպված էր ծանր պայքար մղել Խաթթիի ներքին և արտաքին թշնամիների դեմ:

Սուպպիլուլիումայի մահվանից հետո գահ բարձրացավ նրա ավագ որդին՝ փորձառու Առնուվանդա II-ը (Ք.ա. 1322-1321 թթ.): Ի սկզբանե Մուրսիլին չէր դիտարկվում հոր կողմից որպես գահի հավակնորդ: Սակայն տեղի ունեցավ մի դեպք, որը փոխեց Խաթթիի պատմության ընթացքը և Մերձավոր Արևելքի պատմության թատերաբեմ հանեց երիտասարդ Մուրսիլիին: Առնուվանդան հիվանդացավ և շուտով

---

Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 69-77: Немировский А., «Пространные анналы» Мурсилиса II-текстологическая условность?, Вестник древней истории, 2005, 1, с. 3-14):

<sup>3</sup> Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, Journal of Cuneiform Studies, 1956, 10, 2-4; pp. 41-68, 75-98, 107-130.

<sup>4</sup> St' u Beckman G., Hittite Diplomatic Texts, Atlanta, 1996, N 9, 10, 11, 12, 20, 29, 30, 31, 31A, 31B.

<sup>5</sup> Gurney O., The Hittite Prayers of Mursili II, Annals of Archaeology and Anthropology, 1940, 27, pp. 2-163; Goetze A., "Hittite Prayers", Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament, Princeton, 1955, pp. 393-401; Singer I., Hittite Prayers, Leiden, Boston, Köln, 2002, pp. 47-79 և այլն:

<sup>6</sup> St' u նաև Klengel H., Geschichte des hethitischen Reiches, Leiden, Boston, Köln, S. 170-178.

<sup>7</sup> Մուրսիլիի ավագ եղբայրներն էին Առնուվանդան, Տելիպինուն, Պիյասիլին (Շարրիկուշուխը) և Յանանցան: Առնուվանդան թագաժառանգն էր, Տելիպինուն՝ Հալեպի (Խալպայի) արքան, Պիյասիլին՝ Կարգամիսի, իսկ Յանանցան սպանվել էր Եգիպտոսում (մեկնել էր՝ դառնալու Եգիպտոսի փարավոն):



դարձավ այն համաճարակի զոհը, որի պատճառով մինչ այդ մահացել էր («աստված էր դարձել»՝ DINGIR<sup>LM</sup>:iš DÙ-at) նաև նրա հայրը՝ Խաթթիի մեծ արքան: Սակայն Առնուվանդայի մահվանից հետո ողջ էին Մուրսիլի երկու ավագ եղբայրները՝ Շարրիկուշուխը և Տելիպինուն: Նրանք երկուսն էլ կարող էին հավակնել իրենց հոր գահին: Սակայն հաշվի առնելով պետության ներսում և նրա սահմանների մոտ ստեղծված ծանր վիճակը՝ հարկավոր էր արագ լուծում գտնել գահաժառանգման հարցում և ավագ եղբայրները, հավանաբար չցանկանալով ավելի բարդացնել երկրի վիճակը, համաձայնեցին, որ գահին բազմի իրենց կրտսեր եղբայրը: Չկա տեղեկություն այն մասին՝ արդյոք նրանք այդ պահին գտնվել են Խաթթուսայում, թե մնացել են իրենց վստահված ենթակա թագավորություններում, որպեսզի վերահսկեն տերության հարավային տարածքները: Փաստ է այն, որ հետագայում հատկապես Շարրիկուշուխը մեծապես աջակցել է եղբորը տերության պահպանման և հզորացման նրա անխոնջ ջանքերի մեջ<sup>8</sup>:

Այնուամենայնիվ, երիտասարդ արքայի ուսերին մեծ պատասխանատվություն էր ընկել: Նա որդին էր հզոր Սուպպիլուլիումայի, որի անունը, բնական է, նա չէր ցանկանա հեղինակագրել: Բացի այդ, Մուրսիլին Մերձավոր Արևելքի «մեծ» արքաներից մեկն էր և պատասխանատու էր տերության համար, որը նրան բաժին էր հասել հորից: Ահա այս ծանր պատասխանատվության բեռով էր նա գահ բարձրանում: Հարկավոր էր գործի դնել և՛ հնարամտություն, և՛ դիվանագիտություն և, իհարկե, նաև ուժի գործադրումով հասկացնել հարևան պետություններին և ժողովուրդներին, որ Խաթթիի գահի վրա բազմել է Սուպպիլուլիումայի արժանավոր հետնորդը:

Մուրսիլին իր արքայական կյանքի մեծ մասն անցկացրել է արշավանքների մեջ՝ կարծես կրկնելով իր նշանավոր հորը՝ մի տարբերությամբ, որ նրա հայրը ռազմական գործողություններին մասնակցում էր դեռևս մինչև գահ բարձրանալը և գահ բարձրանալով՝ արդեն մեծ փորձ ուներ, իսկ Մուրսիլին խեթական

---

<sup>8</sup> Գոյություն ունի մի տեքստ (KBo I 28), որտեղ Խաթթիի մեծ արքան (Մուրսիլ II-ը) ճանաչում է Պիյասիլիին որպես Կարգամիսի արքա:

սկզբնաղբյուրներում չի հիշատակվել իր հոր մղած բազմաթիվ պատերազմների ժամանակ: Պատճառները երկուսը կարող էին լինել. այդ ժամանակ Մուրսիլին հասուն չէր պատերազմների համար, կամ հայրը նրան չէր նախատեսել զինվորական և ընդհանրապես արքայական գործունեության համար, որի բաղկացուցիչ մասերից մեկն էր կազմում ռազմական գործունեությունը: Այնուամենայնիվ, նա ուներ բնատուր զորավարական տաղանդ:

Մուրսիլին ստացել էր ծանր ժառանգություն: Տերությունը գտնվում էր փլուզման եզրին: Սուպպիլուլիումայի ձեռքբերումները հարավում փոշիացման եզրին էին: Ասորեստանն իր վերահսկողության տակ էր վերցրել Միտաննիի տարածքի մեծ մասը և ցանկանում էր գրավել նաև Եփրատի ափին գտնվող Կարգամիսը: Տերությանը սպառնում էին նաև Կասկա, Հայասա (Ազգի), Արցավա երկրները:

Խաթթիի մեծ արքան իր կառավարումը սկսեց Խաթթիի հյուսիսային մասի անհանգիստ ցեղերի՝ կասկերի դեմ պատերազմով: Նրանք հարձակումներ էին գործում Դուրմիտա քաղաքի վրա: Ի պատասխան նրանց հարձակումների՝ խեթական զորքերը գրավում և այրում են կասկական երկու գլխավոր քաղաքներ՝ Խալիլան և Դուդուսգան: Այդ քաղաքներին օգնության են շտապում մյուս կասկական ցեղերը: Մուրսիլիի բանակին հաջողվում է նրանց պարտության մատնել Դուրմիտայի մոտ և ետ շարտել նրանց: Բացի այդ, խեթերը ստիպված էին հպատակեցնել նաև Իսխուպիտա քաղաքի կասկերին, որոնք հրաժարվում էին զորք ուղարկել Խաթթիի արքային: Իր կառավարման երկրորդ տարում Խաթթիի արքան նորից է շարժվում դեպի կասկերի հողերը՝ սկզբում հնազանդեցնելով Տիբիյա երկիրը, այնուհետև նորից՝ Իսխուպիտան: Պատերազմը ձգձգվում է մինչև ձմեռնամուտ, որի ընթացքում Մուրսիլին գրավում է Պալխուխա, Իստախարա, Կամմամմա քաղաքները: Իր թագավորության միայն երրորդ տարում է նրան հաջողվում առժամանակ հաղթել կասկերին և իր ուժերն ուղղել դեպի Արցավա երկիր<sup>9</sup>:

Համաձայն «Ընդարձակ» տարեգրության երկրորդ տարվա՝ Մուրսիլի II-ը նաև մեծ մատովակ Նուվանցային ուղարկում է իր եղբոր՝ Կարգամիսի արքա Շարիկուշուխի մոտ՝ օգնելու նրան դիմագրավել

---

<sup>9</sup> AM, S. 22-37.

ասորեստանյան հնարավոր հարձակմանը<sup>10</sup>: Խեթական զորքերի ժամանումը Կարգամիս, հավանաբար, ստիպեց, որ ասորեստանցիները ժամանակավորապես պահպանեն status-quo-ն տարածաշրջանում:

### **Փոքր Ասիայի արևմտյան մասի հնազանդեցումը**

Կասկա երկրում ժամանակավորապես հարցերը լուծելուց հետո Մուրսիլին իր ուշադրությունը սևեռեց դեպի Փոքր Ասիայի արևմուտք: Այնտեղ ձևավորվել էր Արցավայի<sup>11</sup> գլխավորությամբ մի համադաշնություն, որը թշնամաբար էր տրամադրված Խաթթիի նկատմամբ: Բացի այդ, այստեղ գործերին միջամտում էր Էգեյան ծովի ավազանի երկիր Ախիսիական<sup>12</sup>: Պատերազմի առիթ հանդիսացավ Խաթթիի նախկին ենթակա Արցավայի արքա Ուխիսացիտիի մերժումը՝ հանձնել Ատտարիմա, Խուվարսանասա և Սուրուդա քաղաքների բնակիչներին, որոնք մինչ այդ հարձակումներ էին գործել խեթական տարածքների վրա: Արցավան գրավել էր նաև Միլլավանդան (հետագայի Հոնիայի Միլեթ քաղաքը-Ռ.Ղ.): Փոքր Ասիայի արևմուտքի մյուս առաջնորդները նույնպես փոխել էին իրենց դիրքորոշումը Խաթթիի նկատմամբ: Սեխա գետի երկրի արքա Մանապա-Թարխունտան լավ հարաբերությունների մեջ էր Ուխիսացիտիի հետ: Խապավա երկիրը և Միրա-Կուվալիյա երկրի կեսը նույնպես դաշնակից էին Արցավայի արքայի հետ: Վիլուսան (Տրոյա), որի հարաբերությունները միշտ թվում էին բարեկամական, նույնպես այդ պահին միացել էր Արցավային: Զարմանալի չէր, որ վերահսկողություն

---

<sup>10</sup> AM, S. 26-29.

<sup>11</sup> Արցավան «միությունը» կամ «համադաշնությունը» բաղկացած էր բուն Արցավայից և մի շարք այլ քաղաքական միավորներից՝ Միրա-Կուվալիյա, Սեխա գետի երկիր, Խապավա, Վիլուսա և այլն: Փոքր Արցավայի արքան, հավանաբար, հանդիսանում էր նաև համադաշնության առաջնորդը (տե՛ս Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 2005, p. 55. Տե՛ս նաև Del Monte G., Tischler J., Répertoire Géographique des Textes Cunéiformes, VI. Die Orts-und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, (այսուհետ՝ RGTC, VI) S. 42-45):

<sup>12</sup> Հավանաբար նույնն է, ինչ Միկենյան Հունաստանը (Ք.ա. 16-11-րդ դդ.): Ախիսիական Միկենյան Հունաստան խնդրի շուրջ տե՛ս Քոսյան Ա., Խեթական տերությունը և Ախիսիական (Տրոյական պատերազմը), Երևան, 1997: Նույնի, Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 50-69:

ունենալով Փոքր Ասիայի ողջ արևմուտքի նկատմամբ՝ Ուխտացիտին մերժեց Խաթաթի արքայի պահանջը՝ վերադարձնել խեթահպատակ փախստականներին: Առավել ևս, որ պահանջում էր անփորձ և երիտասարդ արքան: Սակայն դա նրա ճակատագրական սխալն էր:

Մուրսիլին սկզբում իր փոխարեն Փոքր Ասիայի արևմուտք ուղարկեց խեթական զորավարներ Գուլլային և Մալլացիտիին, որպեսզի նրանք հարձակվեն Միլլավանդայի վրա: Նրանք հաջողության հասան և վերադարձան Խաթաթուսա մեծաքանակ ավարով և բազմաթիվ գերիներով: Ի պատասխան դրա՝ Ուխտացիտի որդին՝ Պիյամա-Կուրունտան, հարձակվեց խեթերին դաշնակից Միրա երկրի կառավարիչ Մասխուիլուվայի հողերի վրա<sup>13</sup>:

Կասկերի դեմ պատերազմը ավարտելուց հետո պատերազմի մեջ մտավ նաև Խաթաթի մեծ արքան: Պատերազմին հիրավի մեծ կարևորություն էր տրվել, քանզի հարավից այստեղ ժամանեց նաև Մուրսիլի եղբայրը Շարրիկուշուփն՝ իր զորքերով: Երկու եղբայրների զորքերը հանդիպեցին Սալլապա քաղաքում: Խեթական բանակը սկսեց նվաճել և հպատակեցնել Փոքր Ասիայի արևմտյան մասը: Երբ Մուրսիլի բանակը հասավ Աուրա քաղաքի մոտ, լուր ստացվեց Մասխուիլուվայից, որ Ուխտացիտին հիվանդացել է և ընկճված է<sup>14</sup>: Խեթերի դեմ Արցավայի արքան ուղարկեց իր որդուն՝ Պիյամա-Կուրունտային: Աստարպա գետի ափին՝ Վալմա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում արցավացիները պարտություն են կրում և փախուստի դիմում: Դրանից հետո խեթերը գրավում են Ուխտացիտի մայրաքաղաք Ապասան (հետագայի Եփեսոսը - Բ.Ղ.): Ուխտացիտին հասցրել էր հեռանալ քաղաքից և նստելով նավ՝ անցել Էգեյան ծովի կղզիները: Սակայն Ապասայի գրավումը դեռևս չէր նշանակում ողջ երկրի հնազանդեցում: Մուրսիլի բանակը ստիպված էր նվաճել նաև Արցավայի վերջին դիմադրության օջախներից մեկը՝ հնազանդեցնելով

---

<sup>13</sup> AM, S. 36-39.

<sup>14</sup> Մուրսիլի տարեգրությունում նշվում է, որ Ամարոպի աստվածը ցույց է տվել իր զորությունը և «կայծակով» հարվածել Ուխտացիտի քաղաք Ապասային, որը ծնկի էր բերել Արցավայի արքային (տե՛ս AM, S. 46-49):

Արինանդա դժվարամատչ լեռներում ապաստան գտած արցավական ուժերին<sup>15</sup>:

Մուրսիլի կառավարման չորրորդ տարում լուր ստացվեց, որ Ուխտացիտին մահացել է օտար ափերում: Սակայն պայքարը շարունակեցին նրա որդիները: Տապալացունավալին վերադարձավ և իր ուժերով ամրացավ Պուրանդայում: Նա կռվի բռնվեց խեթերի հետ, սակայն անհաջողություն կրեց, որից հետո խեթերը պաշարեցին Պուրանդան: Քաղաքը գրկվեց ջրից և ստիպված եղավ հանձնվել: Մինչ այդ քաղաքից հեռացել էր Տապալացունավալին: Խեթերը հետապնդում են նրան, սակայն նրան հաջողվում է փախչել Ախխիյավա: Մուրսիլին Ախխիյավայի արքայից պահանջում է, որ վերջինս վերադարձնի իրեն Տապալացունավալին և նրա հետ փախուստի դիմաձեռնին: Ախխիյավայի արքան, հաշվի առնելով իրավիճակի փոփոխությունը, համաձայնում է և խեթերին հանձնում փախստական արցավացիներին: Պուրանդայի անկումը վճռական եղավ Արցավայի համար. Փոքր Ասիայի արևմուտքում այլևս դիմադրության կենտրոններ չէին մնացել:

Բացի այդ, Մուրսիլին հնազանդեցնում է նաև Սեխա գետի երկիրը, որի արքա Մանապա-Թարխունտան անցել էր Ուխտացիտի կողմը: Այս դեպքում Խաթթիի արքան մեծահոգություն է ցուցաբերում և հաշվի առնելով նրա զոջումը՝ չի պատժում նրան և նորից վերահաստատում գահին: Իրենց հպատակությունը հայտնեցին նաև Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող Խապալլա և Միրա երկրները: Մուրսիլին Տարգասնալլին հաստատեց Խապալլայի կառավարիչ, իսկ Մասխուիլուվային՝ Միրայի և Կուվալիյայի<sup>16</sup>: Այդ երկրներում խեթական զորքեր տեղակայվեցին: Հետաքրքիր է նաև այն, որ Խաթթիի մեծ արքան Արցավայում գահին բազմեցրեց Ուխտացիտի որդուն՝ Պիյամա-Կուրունտային, որն անցել էր խեթերի կողմը և իր հպատակությունը հայտնել Մուրսիլիին<sup>17</sup>: Երկու տարվա պայքարից

---

<sup>15</sup> AM, S. 50-61.

<sup>16</sup> Այս երկրների արքաների հետ պայմանագրեր կնքվեցին (Beckman G., նշվ. աշխ., N 10, 12).

<sup>17</sup> Այս մասին տրված է Մուրսիլի որդու՝ Մուվաթալի II-ի՝ (Ք.ա. 1295-1272 թթ.) Վիլուսայի կառավարիչ Ալաքսանդրոյի հետ կնքված պայմանագրում (տե՛ս Friedrich J., Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, Leipzig, 1930, S. 50-102; Otten H.,

հետո Մուրսիլիին հաջողվեց հպատակեցնել Փոքր Ասիայի արևմուտքը: Տեղի բնակչության մի մասը գերեվարվեց և բնակեցվեց Խաթթիում (66.000 մարդ)<sup>18</sup>:

***Խնդիրներ հյուսիսում, արևելքում և հարավում.  
պայտերազմ երեք ճակատով***

Արցալայի խնդիրը լուծելուց հետո Մուրսիլին ստիպված էր շարունակել պայքարը ռազմատենչ կասկական ցեղերի դեմ: Իր կառավարման հինգերորդ տարում Մուրսիլին զորքերը շարժեց դեպի Ասխարպայա լեռնային երկրի կասկերի դեմ, որոնք փակել էին դեպի Պալա երկիր<sup>19</sup> տանող ճանապարհները: Կտրվել էր կապը նաև Տումմաննա երկրի հետ, այդ պատճառով Մուրսիլին գրավեց նաև այդ տարածքը: Այնուհետև նա շարժվեց դեպի Սամուխա և կանգ առավ Զիուլիլա քաղաքում: Կարգի բերելով գործերը այնտեղ՝ նա այնուհետև նվաճեց նաև անհնազանդ Արավաննա երկիրը (Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան հատվածում-Ռ.Ղ.): Այս ամենից հետո արքան վերադարձավ մայրաքաղաք Խաթթուսա: Հաջորդ տարի խեթական բանակը Զիխխարիյա<sup>20</sup> երկրի կասկերի դեմ պայքարում հաղթեց նրանց և վտանգը հեռացրեց Խաթթուսայից:

Մուրսիլի կառավարման յոթերորդ տարում խնդիրներ առաջացան նաև հարավում՝ Սիրիայում: Հավանաբար ոչ առանց եգիպտական

---

Zusätzliche Lesungen zum Alakšandu-Vertrag, Mitteilungen des Instituts für Orientforschung, 1957, 5, S. 26-30):

<sup>18</sup> AM, S. 63-77.

<sup>19</sup> Պալա երկիրը հանդիսանում էր խեթերին ցեղակից պալայացիների երկիրը: Գտնվել է Խաթթուսայից հյուսիս՝ կասկերի տարածքներին մոտ (RGTC, VI, S. 297-298):

<sup>20</sup> «Տանանայա» տարեգրության վեցերորդ տարվա հատվածում (KBo III 4 III 60-69) Մուրսիլի II-ը նշում է, որ երբ տարին սկսվեց, ինքը զորքերը շարժեց դեպի Զիխխարիյա երկիր: Նա հայտնում է, որ Տարիկարիմու լեռների երկրի կասկերը դեռևս նրա պապի՝ Թուդխալիյա III-ի օրոք (Ք.ա. 1360-1344 թթ.) գրավել էին Զիխխարիյա երկիրը և վտանգավոր հարևաններ էին դարձել մայրաքաղաք Խաթթուսայի համար, որի վրա երբեմն հարձակվում էին և վնասներ պատճառում: Մուրսիլին որոշում է վնասագերծել այդ վտանգը և նախահարձակ լինելով՝ հարձակվում և գրավում է և՛ Տարիկարիմու լեռների երկիրը, և՛ Զիխխարիյա երկիրը, որը նա ավերում է: Զիխխարիյան հավանաբար, գտնվել է Արևելապոնտական լեռների շրջանում՝ Խաթթուսայից հյուսիս-արևելք (RGTC, VI, S. 498):

աջակցության ապստամբեց խեթահպատակ Նուխասսի երկրի (Հալեպ քաղաքի և Օրոնտես գետի միջև) կառավարիչ Տետտեն<sup>21</sup>: Եգիպտացիները հարձակման էին անցել հարավից: Վտանգված էր նաև Կարգամիսը: Շարրիկուշուխի ընտանիքը ստիպված էր ժամանակավորապես տեղափոխվել Խաթթուսա<sup>22</sup>: Հարցը պահանջում էր շտապ լուծում, սակայն Խաթթիի մեծ արքան զբաղված էր Փոքր Ասիայի գործերով: Մայրաքաղաքի և հարակից տարածքների անվտանգության տեսակետից նա չէր կարող կիսատ թողնել հյուսիսում իր ծավալած ռազմական գործողությունները և զորքերն ուղղել դեպի Սիրիա: Ապստամբության ճնշման պատասխանատվությունը ընկավ Շարրիկուշուխի վրա: Մուսիլիին եղբորն օգնության ուղարկեց իր զորահրամանատար Կանտուցցիլիին: Չնայած Շարրիկուշուխի և Կանտուցցիլիի համատեղ գործողությունների արդյունքում հաջողվեց պարտության մատնել եգիպտացիներին և ապստամբներին<sup>23</sup>, սակայն Նուխասսիի ապստամբությունը, կարծես, չհաջողվեց վերջնականապես ճնշել: Համենայն դեպս, երկու տարի անց այնտեղ նորից ապստամբություն բռնկվեց:

Միննույն ժամանակ Մուսիլի II-ը պատերազմ էր մղում կասկական Տիբիյա երկրի առաջնորդ Պիխսունիյայի դեմ, որը դեռևս Սուպիլուվիումա I-ի օրոք հարձակվել և ավերածություններ էր գործել խեթական Վերին երկրում<sup>24</sup>: Պատերազմ սկսելու պատճառներից մեկն էր նաև այն, որ Պիխսունիյան իրեն, հավանաբար, հռչակել էր թագավոր և սկսել միավորել կասկական ցեղերին, որը Խաթթիի համար շատ վտանգավոր հետևանքներ կարող էր ունենալ: Այդ պատճառով Մուսիլի II-ն անմիջապես միջոցներ ձեռնարկեց՝ վերացնելու այդ վտանգը: Խեթական զորքը ներխուժեց Տիբիյա, որտեղ տեղի ունեցած ճակատամարտում կասկական զորքը

---

<sup>21</sup> St' u Bryce T., Tette and the Rebellions in Nuhasi, Anatolian Studies, 1988, 38, pp. 21-28.

<sup>22</sup> AM, S. 82-87.

<sup>23</sup> Ավելի մանրամասն տե՛ս Bryce T., The Kingdom of the Hittites, pp. 199-201.

<sup>24</sup> Վերին երկիրը գտնվել է Խեթական տերության հյուսիս-արևելքում՝ Հալիսի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորանն ընկած տարածքում՝ հյուսիսում հասնելով մինչև Գալլ գետի ավազանը: Այն հիմնականում ընդգրկել է Փոքր Հայքի տարածքը (տե՛ս RGTC, VI, S. 293-294):

պարտություն կրեց, երկիրն ամայացվեց, իսկ Պիխտունիյան գերվեց<sup>25</sup>: Կասկերի առաջին և վերջին արքայի հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ: Հավանաբար, խեթական արքան նրան կա՛մ մահապատժի է ենթարկել, կա՛մ պատանդ է պահել՝ Տիբիյա երկիրը հնազանդ պահելու համար:

Կառավարման յոթերորդ տարում Մուրսիլին իր տերության հյուսիսարևելյան մասում նոր խնդրի առջև է կանգնում՝ կապված Հայասա (Ազգի) երկրի հետ: Սկզբնապես փորձելով հարցը խաղաղությամբ լուծել՝ Մուրսիլի II-ը նամակներ է ուղարկում՝ Հայասայի (Ազգիի) արքա Աննիյայից պահանջելով վերադարձնել դեռևս Սուպալիլուլիումայի օրոք Հայասայում ապաստանած (կամ գերի տարված) խեթահպատակներին: Աննիյայից մերժում ստանալով՝ Մուրսիլի II-ն իր կառավարման ութերորդ տարում հարձակվում է Հայասայի սահմանային Ուրա քաղաքի վրա<sup>26</sup>: Արշավի ելքի մասին մեզ տեղեկություններ չեն հասել, սակայն հետագայում խեթական արքան ստիպված էր կրկին արշավել դեպի Հայասա (Ազգի):

Իր կառավարման 9-րդ տարում Մուրսիլին մեկնեց Կումմանի (գտնվում էր Փոքր Ասիայի հարավ արևելքում)՝ մասնակցելու Խեպատ աստվածուհուն նվիրված տոնակատարություններին: Խաթթիի արքան լավ դասեր էր քաղել իր հոր բացթողումներից՝ կապված աստվածներին նվիրված ծեսերը չկատարելու և աստվածներին բարկացնելու հետ, այդ պատճառով նույնիսկ այդ դժվար պահին նա գերադասեց նախ և առաջ տոնել աստվածուհու տոնը և ստանալ նրա բարեհաճությունը: Սա հարմար առիթ էր նաև հանդիպելու եղբոր՝ Շարրիկուշուխի հետ, որը ժամանել էր այնտեղ Կարգամիսից: Չնայած մենք ոչ մի տեղեկություն չունենք հանդիպման բուն պատճառի մասին, սակայն, հավանաբար, քննարկվել են սիրիական իրադարձությունները և Եգիպտոսի նկրտումներն այդ տարածաշրջանում: Բացի այդ, հարկավոր էր Հալեայի (Խալպա) գահին նոր փոխարքա նշանակել՝ մահացած Տելիպինուի փոխարեն: Սակայն Կումմանիում գտնվելու ժամանակ Շարրիկուշուխը

---

<sup>25</sup> AM, S. 86-95.

<sup>26</sup> Ղազարյան Ռ., Հայասա. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009, էջ 71:



հիվանդանում և մահանում է: Մուրսիլին զրկվում է իր լավագույն աջակիցներից և խորհրդականներից մեկից: Միևնույն ժամանակ Սիրիայում դրուսթյունը նորից է սրվում: Իսկ Ասորեստանը գրավում է Կարգամիսը: Դարձյալ գլուխ են բարձրացնում Նուխասսիի ապստամբները: Բացի այդ, Կադեշի (Կինգա) կառավարիչ Աիտակկաման իր կապերը խզում է Խաթթի հետ: Լուր է ստացվում նաև խեթական Կաննուվարա (գտնվում էր Վերին երկրում – Ռ.Ղ.) քաղաքի վրա Հայասայի (Ազգի) զորքերի հարձակման մասին:

Բախվելով նման բարդ իրավիճակի հետ՝ Մուրսիլին նորից ցույց է տալիս իր վճռական և հաստատական բնավորությունը և սկսում արագ գործել մի քանի ճակատով այնպես, ինչպես իր կառավարման առաջին տարիներին: Նա իր զորավարներից Կուրունտային ուղարկում է սիրիական ապստամբների դեմ: Մյուս փորձառու զորավար Նուվանցան շարժվում է դեպի հյուսիս՝ Վերին երկիր: Իսկ ինքը՝ Խաթթիի մեծ արքան, նախապատրաստվում է Ասորեստանի դեմ պատերազմին:

Նուվանցան, ըստ խեթական սկզբնաղբյուրների, Կաննուվարայի մոտ պարտության է մատնում հայասացիների բանակին: Մինչ այդ խեթերը զուգահեռ ռազմական գործողություններ էին սկսել նաև Սիրիայում: Մուրսիլին ետ է վերցնում Կարգամիսը, սակայն Եփրատը չի անցնում: Խեթական զորավար Կուրունտայի զորքերը պարտության են մատնում Նուխասսեի ապստամբներին և վերահսկողություն հաստատում նաև Կադեշի վրա: Դրան նպաստել էր նաև Կադեշի արքա Աիտակկամայի սպանությունը իր որդի Նիքմադդուի կողմից: Խաթթի արքան դժվարին խնդրի առջև է կանգնում. մի կողմից պետական շահերը թելադրում էին Նիքմադդուին հաստատել Կադեշի գահի վրա, իսկ մյուս կողմից բարոյական սկզբունքները թույլ չէին տալիս խրախուսել հայրասպան որդուն: Ի վերջո հաղթեց պետական գործիչը, և Նիքմադդուն հաստատվեց Կադեշի գահին: Մինչև Սիրիայից հեռանալը Մուրսիլին Շարրիկուշուխի որդուն՝ Սախուրունուվային հաստատում է Կարգամիսում որպես փոխարքա, իսկ Հալեպում՝ Տելիպինուի որդի Տալմի-Շարրունմային, որի հետ կնքվում է պայմանագիր<sup>27</sup>:

---

<sup>27</sup> St' u Beckman G., նշվ. աշխ., N 14:

Սիրիայում գործերը կարգավորելուց հետո արքան շարժվում է դեպի Թեգարամնա<sup>28</sup>՝ դեպի Հայասա (Ազգի) արշավանք ձեռնարկելու նպատակով: Սակայն տարին ավարտվում էր, և արքան որոշում է առժամանակ հետաձգել արշավանքը<sup>29</sup>:

Իր թագավորության հաջորդ՝ 10-րդ տարում, Մուրսիլի II-ը ռազմերթ է սկսում դեպի Հայասա (Ազգի): Ինգալավա քաղաքում զորատես անցկացնելուց հետո խեթական արքան արշավում է դեպի Հայասա: Խեթերը պաշարում և գրավում են «ծովի մեջ գտնվող» Արիպաս քաղաքը, որի բնակիչները հեռացել էին մոտակա լեռները: Արիպասն ավարի մատնելուց հետո Մուրսիլի II-ը հպատակեցնում է նաև Դուգգամա հայասական քաղաքը, որի բնակիչները դիմադրություն ցույց չեն տալիս: Խեթական արքան քաղաքը չի ավերում, միայն 3000 դուգգամացիների՝ որպես զինվորների, տանում է Խաթթի: Այնուհետև՝ գահակալության 11-րդ տարում, Մուրսիլի II-ը, նպատակ ունենալով վերջնականապես հպատակեցնել Հայասան (Ազգին), կրկին արշավանքի է ելնում: Հայասայի իշխանավորները, տեղի տալով գերազանցող ռազմական ուժին, ստիպված բանակցություններ են սկսում Խաթթիի արքայի հետ: Հայասական կողմը պարտավորվում է զորք տրամադրել խեթական բանակին, ինչպես նաև վերադարձնել դեռևս իր մոտ գտնվող խեթական գերիներին: Մուրսիլի II-ին հաջողվում է որոշ ժամանակով Խաթթիի հյուսիս-արևելքում չեզոքացնել հայասական վտանգը<sup>30</sup>:

Խաթթիի արքային առաջին տասը տարվա ընթացքում շատ բան է հաջողվում իրագործել: Նա կարողանում է վերականգնել տերության միասնականությունը և տարածքային ամբողջականությունը, ճնշել ենթակա երկրներում ծագած ապստամբությունները: Իր երկու եղբայրների մահվանից հետո նա կարողանում է շարունակել հոր սկսած քաղաքական գիծը և Հալեպի ու Կարգամիսի գահերին է բազմեցնում նրանց որդիներին: Հյուսիսսիրիական այդ տարածքները

---

<sup>28</sup> Գտնվում էր Կումմանիի և Վերին երկրի միջև (տե՛ս Garstang J., Gurney O., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 47):

<sup>29</sup> AM, S. 124-130.

<sup>30</sup> Տե՛ս Քոսյան Ա., Մուրսիլի II-ի հայասական արշավանքները, Պատմաբանասիրական հանդես, 2004, 2, էջ 197-204: Ղազարյան Ռ., Հայասա. քաղաքական և մշակութային պատմությունը, էջ 72-74:

շատ կարևոր դիրք ունեին այն առումով, որ մոտ էին գտնվում Խաթթիի հակառակորդ Եգիպտոսի և Ասորեստանի տարածքներին: Մինչ այդ Մուրսիլիին հաջողվել էր նաև լուծել արցավական խնդիրը՝ ջախջախելով Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող Արցավա երկիրը: Հյուսիսում և հյուսիս-արևելքում ժամանակավորապես լուծվել էին նաև կասկական և հայասական խնդիրները: Այսպիսով, մենք կարող ենք արձանագրել, որ Մուրսիլի II-ի կառավարման առաջին տասը տարիներն առանձնահատուկ նշանակություն ունեին նրա ողջ կառավարման համար: Թերևս այս պատճառով է նա առանձնացրել այդ ժամանակաշրջանը և տվել «Տասնամյա» տարեգրության տեսքով:

### **«Ասրվածային» և ներընտանեկան գործերի կարգավորումը**

Մուրսիլիի օրոք լուրջ խնդիրներ կային՝ կապված ինչպես ժանտախտի համաճարակի բռնկման, այնպես էլ արքունիքում լարված իրավիճակի հետ:

Խոսելով Մուրսիլիի գահակալման մասին՝ հարկավոր է շեշտել, որ առնվազն քսան տարի, այսինքն՝ նրա կառավարման մեծ մասի ընթացքում Խաթթին իր մահացու ճիրանների մեջ էր առել ժանտախտի համաճարակը, որը հազարավոր մարդկանց մահվան պատճառ էր հանդիսացել և կանգնեցրել պետությունը անդունդի եզրին: Եվ ավելի քան զարմանալի է, որ երիտասարդ արքային հաջողվում է հաղթահարել բոլոր ներքին և արտաքին վտանգներն ու արհավիրքները և փայլուն հաղթանակով դուրս գալ այդ ամենից: Մուրսիլին իր աղոթքի տեքստերում բողոքում է, որ աստվածները այդպես դաժանորեն են պատժում իր երկիրը: Նա զգուշացնում է նաև աստվածներին, որ երկիրը կարող է թշնամիների ավար դառնալ: Արքան նշում է նաև, որ եթե Խաթթիում բոլորը մահանան, ապա մարդ չի մնա, որ աստվածներին զոհեր մատուցի: Աստվածավախ արքան իր երկրին պատուհասած այս դժբախտության պատճառը տեսնում էր իրենց գործած մեղքերի մեջ: Միայն մնում էր պարզել, թե ով և ինչ մահացու մեղք էր գործել, որ այդպես բարկացրել էր աստվածներին: Նա պարզում է, որ պատճառը նրա հայրն է՝ Սուպպիլուլիուման: «Աղոթքների» տեքստերից մեկում (CTH 378.II) նշվում է այն մասին, որ արքան հայտնաբերել էր մի հին աղյուսակ, որը նկարագրում էր նրա

նախնինների կողմից կատարվող Մալա (Եփրատ) գետին նվիրված ծեսը: Սակայն նրա հայրը (Սուպպիլուլիումա I-ը) թերացել էր այդ ծեսն իրականացնել և դա Խաթթիում, ըստ նրա, համաճարակի բռնկման պատճառներից մեկն էր հանդիսացել: Մյուս «աղոթքում» (CTH 378.I) խոսք է գնում այն մասին, որ Սուպպիլուլիումա I-ը մինչև գահ բարձրանալը խախտել էր ավագ եղբորը՝ Թուդխալիյային տված երդումը և սպանելով նրան՝ տիրացել գահին: Կար նաև մեկ այլ պատճառ՝ Սուպպիլուլիուման խախտել էր Եգիպտոսի հետ կնքված պայմանագիրը և հարձակվել ու ավերել էր նրան ենթակա տարածքները (CTH 378.II): Չնայած այն բանին, որ Սուպպիլուլիումայի գործողությունները թելադրված էին պետական շահերից և ուղղված էին նախ և առաջ Սիրիայում Եգիպտոսի նկրտումների դեմ, սակայն Մուրսիլին չի քննարկում այդ ամենը: Նա գտել էր պատճառները և փորձում էր մեղմել աստվածների զայրույթը: Փաստորեն, հոր մեղքերը ծանրացել էին որդու վրա: Մուրսիլիի հրամանով անց են կացվում ծիսական արարողություններ, որոնցում ինքն անձամբ մասնակցում էր՝ հույս ունենալով դրանով վերջ տալ համաճարակին: Մենք չգիտենք, արդյոք նրա կառավարման հետագա տարիներին ժանտախտը դադարեց թե ոչ, սակայն հավանական է, որ նրա կառավարման վերջին տարիներին համաճարակը վերջացել էր: Համենայն դեպս, նրա հաջորդի՝ Մուվաթալլիի օրոք (Ք.ա. 1295-1272 թթ.) նման համաճարակի մասին տեղեկություն չկա:

Սակայն նրա հայրը՝ Սուպպիլուլիուման, որդուն «ժառանգել» էր ոչ միայն այդ ամենը: Մի մեծ խնդիր կար նաև Խաթթիի արքունիքում՝ կապված Սուպպիլուլիումա I-ի վերջին կնոջ՝ բաբելոնյան արքայադուստր տավանանա (թագուհի) Ամմինայայի հետ: Սուպպիլուլիումայի կինը տարիների ընթացքում մեծ ազդեցություն էր ձեռք բերել իր ամուսնու վրա և ամբողջ տերությունում: Նույնիսկ Սուպպիլուլիումայի մահվանից հետո նա պահպանում էր իր ազդեցությունը և դիրքը արքունիքում: Մուրսիլին, ինչպես իր եղբայր Առնուվանդան, համբերությամբ և հարգանքով էին վերաբերվում թագուհուն՝ իրենց խորթ մորը: Նա կառավարող թագուհին էր մնում նույնիսկ իր ամուսնու մահվանից հետո: Սակայն թագուհին թագավորական գանձարանը դատարկում էր իր կողմնակիցներին

նվերներ բաժանելով, որով, հավանաբար, ցանկանում էր ստանալ նրանց աջակցությունը: Թագուհին հանդիսանում էր նաև *šiwanzanni*<sup>31</sup>-քրմուհի, որի ձեռքում էին գտնվում պետական հոգևոր-ծիսական արարողությունների վրա վերահսկողությունը և իրականացումը, որը նույնպես նրան մեծ իշխանություն էր տալիս: Մուրսիլին բողոքում էր, որ թագուհին պալատը լցրել էր օտար (բաբելոնյան-Ռ.Ղ.) աստվածներով և ծեսերով, որ իր հոր տունը (Սուպպիլուլիումայի պալատը-Ռ.Ղ.) նա վեր էր ածել «քարե տան» (դամբարանի - Ռ.Ղ.): Թագավորական ընտանիքի մեջ լարվածությունը աճում էր: Մուրսիլին սկզբում ոչինչ չէր անում. դա կապված էր նաև մայրաքաղաքից նրա երկրարատն բացակայությունների հետ: Սակայն ամեն ինչ փոխվում է, երբ Մուրսիլի II-ի կինը՝ Գասսուլավիյան արքայի կառավարման իններորդ տարում հիվանդանում է և մահանում: Մուրսիլին համոզված էր, որ այս ամենը իր խորթ մոր իրականացրած սև մոգության ծեսի հետևանքն էր: Արքայի գուշակային խորհրդակցությունը ցույց է տալիս, որ թագուհին մեղավոր է: Չնայած խորթ մոր մեղքը ապացուցված էր համարվում, սակայն արքան նրան մահապատժի չդատապարտեց: Թագուհուն գրկեցին իր զբաղեցրած դիրքերից և վտարեցին արքունիքից: Նրան գրկեցին *šiwanzanni*-քրմուհու պաշտոնից, սակայն ապրելու բոլոր պայմանները ապահովեցին, որպեսզի նա հանգիստ ապրի մինչև իր կյանքի վերջ<sup>32</sup>: Մենք ավելի հակված ենք տեսնել այս ամենի մեջ պարզապես իշխանության համար պայքարի հետևանք, որը բերեց նրան, որ թագուհիներից մեկը մահացավ անհասկանալի հիվանդության պատճառով, իսկ մյուսը գրկվեց իր դիրքից և վտարվեց արքունիքից: Բնական է, որ սև մոգության ծեսը չէր Գասսուլավիյայի մահվան պատճառը, այլ որևէ հիվանդություն, կամ էլ Ամմինայան նրան պարզապես թունավորել էր: Եթե նա այդ քայլին էր գնացել, ապա հավանական է, որ հաջորդ

---

<sup>31</sup> MUNUS<sup>31</sup>*šiwanzanna* խթթերենում նշանակում է քրմուհի, բառացի՝ «աստծո մայր», տե՛ս Tischler J., *Hethitisches Handwörterbuch*, Innsbruck, 2001, S. 153.

<sup>32</sup> Hoffner H., *A Prayer of Muršili II about his Stepmother*, *Journal of the American Oriental Society* (այսուհետ՝ JAOS), 1983, 103/1, pp. 187-192; Alparslan M., *Die Gattinnen Muršili II: Eine Betrachtung des heutigen Forschungsstandes und seiner Interpretationsmöglichkeiten*, *Studi Micenei ed Egeo-Anatolici*, 2007, XLIX, S. 31-37. Քոսյան Ա., Մուրսիլիս II-ի հայասական արշավանքները, էջ 199-200:

քայլը պետք է լիներ նաև Մուրսիլիին իշխանությունից հեռացնելը և նրա փոխարեն ավելի հարմար թեկնածուի նշանակումը Խաթթիի գահին<sup>33</sup>:

Լինելով աստվածավախ մարդ՝ Մուրսիլի II-ը, հավանաբար, վախենում էր, որ Ամմիննայայի մահապատիժը կարող էր առաջացնել աստվածների զայրույթը: Նա ցանկանում էր նաև աստվածներին ցույց տալ իր անսահման բարեգթությունը նույնիսկ իր թշնամիների նկատմամբ:

Հետաքրքիր է այս առումով Մուրսիլիի որդի Խաթթուսիլի III-ի (Ք.ա. 1267-1237 թթ.) թողած տեքստը, որտեղ նա կասկածի տակ է դնում հոր արարքը՝ գտնելով որ այդ ամենն անօրեն քայլ էր, և ինքը ոչ մի մասնակցություն չի ունեցել դրանում<sup>34</sup>:

Գաստուլավիայի մահվանից որոշ ժամանակ անց Մուրսիլին ամուսնանում է երկրորդ անգամ: Նոր կնոջ՝ Տանուխեպայի վերաբերյալ Մուրսիլիի կառավարման ժամանակաշրջանի տեքստերը լռում են: Սակայն Տանուխեպայի անունը տրված է մի քանի կնիքների վրա՝ արքայի անվան հետ միասին<sup>35</sup>:

---

<sup>33</sup> Մուրսիլիի ժամանակաշրջանից պահպանվել է տեքստ (KUB XIV 4), որտեղ հիշատակվել է հավանաբար նրա 10-րդ տարում դեպի Հայասա (Ազգի) կազմակերպած արշավանքի ընթացքում թագուհու՝ Խաթթուսայում պալատական հեղաշրջում իրականացնելու փորձը: Տրվում է նաև այն մասին, որ թագուհին փորձել էր արևի խավարումը օգտագործել ընդդեմ արքայի: Արևի խավարման նկարագրությունը թույլ է տալիս ճշգրտել Մուրսիլիի կառավարման ժամանակագրությունը: Հետազոտողների մի մասի կարծիքի համաձայն՝ արևի խավարումը տեղի է ունեցել Ք.ա. 1312 թ. հունիսի 24-ին: Այն եղել է ամբողջական արևի խավարում, որը երևացել է Փոքր Ասիայի և՛ հյուսիսային, և՛ կենտրոնական հատվածներում, նմանապես նաև Հայկական լեռնաշխարհում (տե՛ս Åström P., *The Omen of the Sun in the Tenth Year of the Reign of Mursilis II, Horizons and Styles: Studies in Early Art and Archaeology in Honour of Professor Homer L. Thomas*, 1993, pp. 11-17; Huber P.J., *The solar omen of Mursili II*, JAOS, 2001, 121/4, pp. 640-644; Քոչյան Ա., Հայասան և Ազգին, Շնորհի ի վերուստ. առասպել, ծես և պատմություն, Երևան, 2008, էջ 283-285):

<sup>34</sup> Singer I., *Hattusilli's Prayer of Exculpation to the Sun-goddess of Arinna (CTH 383)*, Hittite prayers, Leiden, Boston, Köln, 2002, pp. 97-101.

<sup>35</sup> Տանուխեպան ողջ էր և՛ Մուվաթթայի II-ի, և՛ Մուրսիլի III-ի օրոք: Տանուխեպայի մասին տրված է նաև Խաթթուսիլի III-ի աղոթքի տեքստում, որտեղ երևում է, որ բավականին լարված հարաբերություններ են եղել նրա և խորթ մոր միջև (Singer I., նույն տեղում: Տե՛ս նաև Hout Th. P.J. van den, *The purity of kingship*, Leiden, Boston, Köln, 1998, pp. 44-53):

Մուրսիլին ուներ չորս զավակ: Նրա որդիներն էին Խավպասուլուպին (մահացել էր հոր կենդանության օրոք), Մուվաթալլին և Խաթթուսիլին<sup>36</sup>: Վերջին երկուսը հետագայում դարձան Խաթթի մեծ արքաներ և շարունակեցին իրենց հոր գործերը: Մուրսիլին ուներ նաև դուստր՝ Մասսանաուցցին, որը հետագայում Մուվաթալլի օրոք կնության է տրվում Մաստուրիին՝ Սեխա գետի երկրի ենթակա արքային<sup>37</sup>:

### ***Նոր խնդիրներ արևմուտքում և հյուսիսում***

Մուրսիլի կառավարման տասներկուերորդ տարում նոր ապստամբություն բռնկվեց Փոքր Ասիայի արևմուտքում՝ Արցավայում: Ապստամբության առաջնորդն էր É.GAL.PAP-ը: Նրա ծագման և դիրքի մասին տեղեկություններ չկան: Հավանական է, որ նա Մասա երկրից էր: Ապստամբության մասին Մուրսիլին տեղյակ պահեց Միրա-Կուվալիյա երկրի ենթակա արքա Մասխուիլուվան: Սակայն այնուհետև նա անցավ ապստամբների կողմը՝ Պիտասա երկրին նույնպես դրդելով ապստամբության: Մուրսիլին նորից անձամբ գլխավորեց արշավանքը դեպի Փոքր Ասիայի արևմուտք: Նա մտադիր էր նախ և առաջ դիվանագիտական ճանապարհով դարձյալ իր կողմը գրավել Մասխուիլուվային: Սակայն վերջինս մերժեց Մուրսիլի առաջարկը՝ ներկայանալ իրեն և հեռացավ Մասա երկիր: Խեթական զորքը ներխուժեց Մասա երկիր և պատժիչ գործողություններ իրականացրեց այնտեղ: Խաթթի արքան Մասայի բնակիչներից պահանջեց իրեն հանձնել Մասխուիլուվային: Խեթական արքայի վերջնագիրն ազդեցություն գործեց նրանց վրա: Մասխուիլուվային ձերբակալեցին և հանձնեցին Մուրսիլին, որը նրան տարավ Խաթթուսա: Մուրսիլին Միրա և Կուվալիյա երկրների գահին հաստատեց Մասխուիլուվայի եղբորորդուն՝ Կուպանտա-Կուռունտային, որի հետ պայմանագիր կնքեց<sup>38</sup>՝ այդ ամենը ներկայացնելով որպես թագավորական մեծահոգության դրսևորում, մինչդեռ իրականում դա լավ հաշվարկած քաղաքական քայլ էր:

<sup>36</sup> Otten H., Die Apologie Hattusilis III, Studien zu den Boğazköy-Texten, 1981, 24, S. 4-5.

<sup>37</sup> St' u Beckman G., նշվ. աշխ., N 17:

<sup>38</sup> St' u Beckman G., նշվ. աշխ., N 11:

Սակայն տերության հյուսիսային մասում դեռևս չլուծված խնդիրներ կային<sup>39</sup>: Մուրսիլին իր կառավարման հետագա տարիներին անընդհատ ստիպված էր պատժիչ գործողություններ ձեռնարկել անհանգիստ կասկական ցեղերի դեմ: Այսպես օրինակ՝ նա իր թագավորման տասնիններորդ տարում կրկին արշավեց դեպի Կասկա երկիր: Կապուպուվա բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում խեթական արքան հաղթանակ տարավ: Այս արշավանքի ընթացքում Մուրսիլին հավաստիացնում էր, որ իրեն հաջողվել է հասնել այնտեղ, որտեղ մինչ այդ ոչ մի խեթական արքա ուր չէր դրել. խոսքը վերաբերում է Տակկուվախինա և Տախանտատիպա երկրների նվաճմանը<sup>40</sup>: Իսկ իր թագավորման քսաներկուերորդ տարում Մուրսիլի II-ը նորից արշավել է Կասկա երկիր, հաղթել կասկերի միացյալ բանակին, գրավել Տապապանուվա երկիրը, այնուհետև շարժվել դեպի Խաթենցուվա երկիր և նվաճել Չիթխարիյա բնակավայրը: Մուրսիլին նշում է, որ Տելիպինու արքայից հետո ինքն առաջինն էր, ով հասել է մինչև Խաթենցուվա երկիրը և նվաճել այն: Մեկ այլ խնդիր առաջացավ նաև Կալասմա երկրում, որը հրաժարվեց զորք տրամադրել Խաթթիի արքային: Մուրսիլին Կալասմա ուղարկեց իր փորձառու զորավար Նուվանցային, որին հաջողվեց առժամանակ կարգուկանոն հաստատել այնտեղ<sup>41</sup>: Չնայած իր մի շարք հաջող արշավանքներին, կասկական խնդիրն այդպես էլ մնաց չլուծված:

Կասկական խնդիրը լուծելու տարբերակներից մեկն էր նաև սահմանամերձ լքված բնակավայրերի բնակեցումը խեթահպատակներով: Դա կարող էր բուֆերային գոտիներ ստեղծել կասկերի և խեթերի կենտրոնական տարածքների միջև: Օրինակ՝ Մուրսիլին վերաբնակեցրեց Տիլիուրա սահմանամերձ քաղաքը, որը դեռևս Խանտիլի II-ի օրոք (Ք.ա. XV դ. II կես) էր լքվել: Հետագայում այս քաղաքականությունը շարունակեցին նրա որդիները՝

---

<sup>39</sup> Փոքր Ասիայի հյուսիսային մասի պատմական աշխարհագրության վերաբերյալ տե՛ս Matthews R., Glatz C., The historical geography of north-central Anatolia in the Hittite period: texts and archaeology in concert, *Anatolian Studies*, 2009, 59, pp. 51-72.

<sup>40</sup> AM, S. 150-151.

<sup>41</sup> AM, S. 162-165.



Մուվաթալլին և Խաթթուսիլին: Մուրսիլին փորձեց նաև վերականգնել խեթական տիրապետությունը սրբազան Ներիկ<sup>42</sup> քաղաքի վրա, որտեղ խեթերը զիջել էին իրենց դիրքերը դեռևս Հին թագավորության տարիներին: Արքայի արշավը դեպի Ներիկ, որտեղ նա տոնեց Ամպրոպի աստծո տոնը, ընդունվեց որպես դարակազմիկ երևույթ: Երեք հարյուր տարվա ընդմիջումից հետո Խաթթիի արքան առաջին անգամ ոտք դրեց սրբազան քաղաք և այդ տարածքները ազատագրեց կասկերից<sup>43</sup>: Սակայն Մուրսիլին այդպես էլ չհաջողվեց բնակեցնել բնակավայրը. դա տեղի ունեցավ միայն նրա թոռան Մուրսիլի III-ի օրոք (Ք.ա. 1272-1267 թթ.):

### ***Արքայի առողջական խնդիրը և դրա «լուծումը»***

Մուրսիլի II-ի կյանքի հետաքրքիր դրվագներից մեկն է նաև նրա առողջության հետ կապված դեպքը: Դեպի Թիլ-Կուննու ուղևորության ժամանակ արքան զգում է հիվանդության առաջին նշանները, որը, համաձայն աղբյուրի, առաջացել էր կայծակի հարվածի պատճառով: Արքան մասնակիորեն կորցնում է խոսելու ունակությունը: Լինելով սնահավատ անձնավորություն, իր ժամանակի մարդկանց մեծ մասի պես, նա անմիջապես սկսում է փնտրել պատճառը, թե որ աստծուն է նա բարկացրել, որ իրեն այդպիսի հիվանդություն է ուղարկել: Արքան խորհրդակցում է գուշակների հետ և պարզում, որ պատճառը Մանուցցիյա Ամպրոպի աստվածն է: Հավանաբար, արքան կաթված էր ստացել և մասնակիորեն կորցրել խոսելու ունակությունը: Դրա պատճառ կարող էր հանդիսանալ արքայի դժվար և հոգսաշատ կյանքի ուղին, անընդհատ պատերազմների մեջ գտնվելը, որը ծանր էր անդրադարձել արքայի առողջության վրա: Աստծո գույթը շարժելու համար հարկավոր էր հատուկ արարողություններ կատարել՝ «մաքրագործվել», զոհաբերություն կատարել, որի նպատակով Մուրսիլին ուղևորվում է Կումմանիի Ամպրոպի աստծո տաճար<sup>44</sup>: Այս

---

<sup>42</sup> RGTC, VI, S. 286-289.

<sup>43</sup> Ղազարյան Ռ., Կասկա երկիրն ըստ սեպագիր աղբյուրների, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2007, XXVI, էջ 57-59:

<sup>44</sup> Goetze A., Pedersen H., Mursili's Sprachlähmung, Copenhagen, 1934; Lebrun R., L'aphasie de Mursili II =CTH 486, Hethitica, 1985, 6, pp. 103-137.

ամենը բերում է արքայի վիճակի մասնակի բարելավման: Մենք տեղյակ չենք, թե արքայի կառավարման որ տարում է այդ դեպքը տեղի ունեցել: Ավելի հավանական է կարծել, որ իրադարձությունները տեղի են ունեցել նրա կառավարման վերջին տարիներին:

### ***Մուրսիլի II-ի տերությունը. փարածաշրջանը նրա օրոք***

Մուրսիլիի օրոք խեթերը պատերազմել են Եգիպտոսի, Ասորեստանի, Արցավայի, Հայասայի, կասկերի և այլ երկրների ու ժողովուրդների հետ: Մուրսիլիի արշավանքներն ընդգրկում էին լայն աշխարհագրություն՝ հյուսիսում հասնելով մինչև Պոնտական լեռներ, հարավում՝ Կադեշ, արևմուտքում՝ Էգեյան ծովի ափերը, արևելքում՝ Վանա լիճ: Բոլոր ուղղություններով արքան մեծամասամբ հաջողության էր հասել:

Տերությունը կառուցելիս Մուրսիլին հաճախ էր դիմում դիվանագիտական միջոցների: Խեթական շատ արքաներ, ինչպես նաև Մուրսիլին, դիվանագիտական նուրբ հոտառություն ունեին, տիրապետում էին դիվանագիտական արվեստին և ճկուն քաղաքականություն էին վարում: Մուրսիլին գերադասում էր նաև հպատակեցված տարածքներում նշանակել ենթակա կառավարիչներ՝ այսպիսով պահպանելով տերության տարբեր շրջանների՝ մասամբ նաև ինքնավար կարգավիճակը:

Մուրսիլիի կառավարման շրջանի կարևորագույն երևույթներից մեկն էր նաև մեծ քանակությամբ բնակչության տեղափոխումները նվաճված երկրներից դեպի տերության այլ շրջաններ: Այդ ամենը երկու կարևոր խնդիր էր լուծում: Նախ բնակչությունից գրկում էին նախկին թշնամական տարածքները, այնուհետև հնարավորություն էր ստեղծվում բնակեցնել տերության առավել հնազանդ շրջանները: Բացի այդ, նաև անհրաժեշտ էր բնակեցնել համաճարակի պատճառով բնակչության մեծ կորուստ կրած տարածքները: Կարևոր էր նաև բանակը համալրելու հարցը: Խաթթին պատերազմներ էր վարում մի քանի ուղղություններով, ուստի անընդհատ կարիք կար զենքի տակ պահելու մեծ քանակությամբ մարդկանց և նրանց թիվը համալրելու: Նման խնդիրները լուծելուն էին միտված նաև արքայի գործողությունները, երբ նա նվաճված երկրներից պահանջում էր իրեն

զինվորներ տրամադրել: Տեղափոխվածները կարող էին նաև օգտագործվել պետական շինարարության մեջ, կայազորերում ծառայություն անցկացնել, աշխատել տաճարներում: Նրանց մի զգալի հատվածը բաժին էր հասնում նաև խեթական ազնվականներին և զինվորականներին: Սակայն հաճախ տեղափոխված բնակիչները փախուստի էին դիմում այլ երկրներ, որը բերում էր նրան, որ Խաթթիի արքան ետ էր պահանջում իր նախկին հպատակներին: Շատ հաճախ սա առիթ էր դառնում նաև նոր ռազմական գործողությունների: Խաթթիի թշնամի կամ հակառակորդ երկրները հաճախ իրենց հովանավորության տակ էին վերցնում փախստականներին՝ ցանկանալով ընդգծել իրենց անկախ կամ հակախեթական դիրքորոշումը:

Խաթթին պատկանում էր Մերձավոր Արևելքի «մեծ» տերությունների շարքին<sup>45</sup>: Տարածաշրջանում այս տերությունների միջև անընդհատ պայքար էր գնում առաջատար դիրք զբաղեցնելու, առևտրական ճանապարհների վրա վերահսկողություն սահմանելու և նոր տարածքներ և ազդեցության գոտիներ ձեռք բերելու համար: Տարածաշրջանի հզոր տերություններն էին Խաթթին, Եգիպտոսը, Բաբելոնիան, Ասորեստանը և Ախիյալան:

Խաթթիի և Եգիպտոսի միջև քաղաքական հարաբերությունները սկսվել էին դեռևս Եգիպտոսի փարավոններ Ամենհոտեպ III-ի (Ք.ա. 1390-1352 թթ.) և Ամենհոտեպ IV-ի (Էխնաթոն) (Ք.ա. 1352-1336 թթ.) օրոք: Թուֆանխամոնի օրոք (Ք.ա. 1333-1324 թթ.) եգիպտական գլխավոր զորահրամանատար Հոռեմիեբը (Արմա'ան)<sup>46</sup> ռազմական

---

<sup>45</sup> Մուվաթալի II-ի՝ Վիլուսայի Ալաքսանդոսի հետ կնքած պայմանագրում (տե՛ս Beckman G., *Hittite Diplomatic Texts*, N 13) հիշատակվել են մի քանի տերություններ (Եգիպտոս, Բաբելոնիա, Խանիգալթատ (Միտաննի) և Ասորեստան), որոնց արքաներին նա համարում էր իրեն հավասար: Թուղթալիյա IV-ի (Ք.ա. 1237-1209 թթ.) և նրա վասալ Ամուրրոսի արքա Շաուշկամուվայի միջև կնքված պայմանագրում (տե՛ս Beckman G., նշվ. աշխ., N 17) նման մոտեցումով տրված են Եգիպտոսի, Բաբելոնիայի, Ասորեստանի և Ախիյալայի արքաները: Այսինքն, այս երկրներն էին հանդիսանում Ք.ա. XIII դարի Մերձավոր Արևելքի գերտերությունները (բացի Միտաննիից, որը արդեն Ք.ա. XIII դ. II կեսին ամբողջովին կորցրել էր իր հզորությունը): Նմանատիպ իրավիճակ էր նաև Մուրսիլի II-ի օրոք:

<sup>46</sup> Miller J., *Amarna Age Chronology and the Identity of Nibhururiya in the Light of a Newly Reconstructed Hittite Text*, *Altorientalische Forschungen*, 34, 2007, 2, pp. 252-293.

գործողություններ է իրականացրել Սիրիայում Խաթաբի դեմ<sup>47</sup>: Թուֆանխամոնի մահվանից հետո նրա այրին՝ Էխնաթոնի դուստր Անխեսենամունը, որոշել էր ամրապնդել իր դիրքերը Եգիպտոսում և ապահովագրել տերության հյուսիսային սահմանները: Նա նամակով դիմում է Սուպպիլուլիումային՝ խնդրելով Եգիպտոս ուղարկել նրա որդիներից մեկին՝ որպես իրեն ամուսին: Սուպպիլուլիուման Եգիպտոս է ուղարկում է իր որդիներից Յանանցային՝ հույս ունենալով ամրապնդել դրանով Խաթաբի դիրքերը տարածաշրջանում: Սակայն Յանանցան սպանվում է եգիպտացիների կողմից: Սա պատճառ է դառնում խեթագիպտական հակամարտության բռնկման, որը շարունակվում է Մուրսիլի II-ի օրոք և իր գագաթնակետին հասնում Կադեշի ճակատամարտում (Ք.ա. 1274 թ.):

Յուրահատուկ հարաբերություններ էին հաստատվել նաև տարածաշրջանում առաջնային դիրքերի ձգտող Ասորեստանի և Խաթաբի միջև: Այդ հարաբերություններում խաչաձևվում էին նաև Միտաննիի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները: Պայքար էր գնում երկու տերությունների միջև նախկին գերտերության «ժառանգության» համար<sup>48</sup>: Միտաննիի տարածքի նկատմամբ Ասորեստանի գործողությունները բերեցին տարածաշրջանում քաղաքական ուժերի նոր վերադասավորման: Սկսեց ձևավորվել եգիպտասասորեստանյան դաշինքը՝ ի հակակշիռ խեթաբաբելոնյան դաշինքի: Բաբելոնիան այս շրջանում թշնամական հարաբերությունների մեջ էր Ասորեստանի հետ և բնական դաշնակից

---

<sup>47</sup> Հոռեմհեթի մինչարքայական («Գլխավոր հրամանատարի») դամբարանի պատերին պատկերված են այն բազմաթիվ գերիները, որոնց ինքը Նուբիայից և Սիրիայից բերել էր Թուֆանխամոնի համար: Արձանագրություններում Հոռեմհեթը հպարտանում է, որ «իր անունը հայտնի է խեթերին»: Կարելի է եզրակացնել, որ Սիրիայում Սուպպիլուլիումայի օրոք գործող եգիպտական զորքերին առաջնորդել էր Հոռեմհեթը և որոշակի հաջողությունների հասել (Martin G.T., *The Memphite Tomb of Horemheb, Commander-in-Chief of Tut'ankhamun. I. The Reliefs, Inscriptions and Commentary*, London, 1989):

<sup>48</sup> Ք.ա. 1330-20-ական թթ. Միտաննիի դադարեց գոյություն ունենալ որպես ինքնուրույն քաղաքական ուժ և այսուհետև, ընդհուպ մինչև իր անկումը, շուրջ մեկ դար գտնվում էր մի կողմից Խաթաբի, մյուս կողմից Ասորեստանի միջև՝ ծառայելով որպես արգելապատնեշ վերջինիս դեմ (տե՛ս Քոսյան Ա., Միտաննի: Քաղաքական պատմություն, Հայաստանի հարակից երկրների պատմություն, Երևան, 2013, հ. I, էջ 397-398):

էր համարվում Խաթթիի համար: Ասորեստանցիները դեռևս Աշշուր-ուբալլիտ I-ի օրոք (Ք.ա. 1353-1318 թթ.) սպառնում էին Խեթական տերության հարավարևելյան սահմաններին: Հետագայում, օգտվելով Սուպպիլուլիումայի և Առնուվանդայի մահվանից, Ասորեստանը գրավում է Միտաննին՝ որի արքա Շատտիվասան պարտություն է կրում, իսկ Կարգամիսի արքա Պիյասիլին չի կարողանում օգնություն ցուցաբերել: Մուրսիլիի առաջին գործերից մեկն է լինում զորք ուղարկել Կարգամիս, որի վրա էր հարձակվել Ասորեստանի արքա Էնիլ-նիրարի I-ի (Ք.ա. 1317-1308 թթ.) բանակը: Կարգամիսը ճանապարհ էր բացելու Ասորեստանի համար դեպի Սիրիայի խեթական տարածքները, դեպի Միջերկրական ծով: Մուրսիլին չնայած հաջողվեց ետ մղել ասորեստանյան հարձակումը, սակայն Եփրատը նա չանցավ՝ այսպիսով ակամայից ճանաչելով ասորեստանցիների նվաճումները Եփրատից այն կողմ: Ասորեստանի և Եգիպտոսի համար բնական դաշնակից էր Ախիսիյավան, որը պայքար էր մղում Փոքր Ասիայի արևմուտքում Խաթթիի դեմ: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանի ուժերի դասավորությունը Խաթթիի օգտին չէր: Այս առումով Մուրսիլի II-ի ձեռնարկումները և հաջողությունները առավել գնահատելի են՝ հաշվի առնելով, որ նա ստիպված էր պայքար մղել բոլոր ուղղություններով:

### ***Ամփոփում***

Իր թագավորման վերջին տարիներին Խաթթիի մեծ արքա Մուրսիլի II-ը կարողացավ ապացուցել իր բոլոր քննադատներին, հատկապես նրանց, ովքեր իրեն անփորձ պատանու տեղ էին դրել, որ նա իսկապես իր տաղանդավոր հոր արժանի զավակն է: Չնայած որպես կրտսեր որդի նրան, հավանաբար, չէին նախապատրաստել թագավորական գործունեության համար, սակայն նա փայլուն կերպով գլուխ հանեց իր վրա դրված պարտականություններից: Նա պատահականորեն դարձավ արքա, սակայն ապացուցեց, որ արժանի է գրանցվելու Խաթթիի մեծ արքաների շարքում: Նա ոչ միայն ռազմական գործիչ էր, այլ նաև պարտքի մեծ զգացումով լեցուն մի անձնավորություն, որն իր անձնական գործն էր համարում նաև իր հոր

գործած «մեղքերը» քավել: Նրան կարելի է բնորոշել նաև որպես փայլուն դիվանագետ:

Գահ բարձրանալով՝ արքան ժառանգություն էր ստացել բավականին թուլացած մի տերություն, որը նա իր համառ և հաստատակամ պայքարի շնորհիվ նորից հզորացրեց: Մահվանից հետո Խաթթիի մեծ արքա Մուրսիլի II-ն իր ժառանգին թողեց կայուն և հզոր երկիր:

ROBERT GHAZARYAN

### THE GREAT KING OF HATTI MURSILI II AND HIS TIME

Mursili II (1321-1295 B.C.) is one of the greatest monarchs of the Ancient World. He is remarkable not only for his own military achievements, but also for his contributions to Hittite historiography. The historiography of the time of Mursili II is very important for the Ancient history of Armenia as well.

He was exceptionally pious. This piety was inspired by the necessity of calling upon the gods to relieve the realm of the scourge of the plague. He had to discover the causes of the gods' seemingly implacable wrath against the land of Hatti. His father's neglect of a certain festival, his alleged breaking of a frontier treaty with Egypt and far the most serious-his slaying his elder brother to gain the throne were all cited as provoking the gods. Mursili could not understand why his offerings were not sufficient compensation, although he never denied that a father's guilt descended on his children.

When he came to the throne, Mursili II was mocked by his enemies as a mere child. This may have happened because he was the youngest son of Suppiluliuma I, his eldest brother, Arnuwanda II, having died of the plague and another brother, Zannanza, having been murdered on entering Egypt to marry Ankhesenamun. Yet it seems curious that two other brothers, viceroys of Aleppo and Carchemish, were willing to remain as such, allowing their younger brother to ascend the throne in Hattusa. It is noteworthy that during their lifetimes Mursili seems to have relied heavily on their support in maintaining his hold on his father's territorial gains in Syria. Mursili was immediately to prove his enemies sorely mistaken in their estimate of him: his youth probably gave him an energy not always seen in kings of more mature years. The first major crisis of his reign was one experienced by most Hittite kings, whose enemies, sometimes seducing some of the Hittite vassals, saw the accession of a new king as an opportunity to strike out against their overlord or

threatening neighbor. The most unrelenting danger to the Hittite Empire came from the Kaska lands to the north. Mursili then turned his attention to the west, where he was to win his most significant successes, removing Arzawa from the map as a political and military unit. He was to have no serious trouble in the west for the remainder of his reign, bar minor sedition, enabling him to concentrate on dangers in the northeast, the south and the southeast.

It was to the north and northeast—the Kaska lands, the Upper Land and Hayasa (Azzi)—that Mursili constantly found his attention drawn, in the early years of his reign leaving Syria to the experienced hands of Sarri-Kusuh in Carchemish. Trouble with a rebellious vassal in Nuhasse was aggravated by Egyptian military involvement. The death of Sarri-Kusuh encouraged Assyria to invade the kingdom of Carchemish, at least to the Euphrates. This was a serious enough danger for Mursili himself to march into Syria, where he successfully restored Hittite control over the viceroyalty of Carchemish, though not removing the future threat from that quarter. It was in the same ninth year of his reign that Mursili II suffered the heaviest personal blow of his life, with the death of Gassulawiya, his wife, from a mysterious illness. This he came to blame on his domineering stepmother Amminaya, a Babylonian princess. He resisted advice to execute her, instead banishing her from Hattusa, while giving her adequate provision for daily life.

The king had another affliction, evidently a minor stroke. It cannot have been too severe, since he was able fully to continue his responsibilities. It is a unique medical record for the time.

Mursili II died leaving the Empire rather stronger than at his father's death, especially in the west and south, although a threat from Egypt was soon to emerge for his successor.

## ՌՌԻՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ

### **ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՈՐԵՍԱՆՈՒՄ ԵՎ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Ք.Ա. VIII-VII Դ.Դ.)**

Ք.ա. VIII-VII դարերի ընթացքում Մերձավոր Արևելքում տեղի ունեցան այնպիսի դարակազմիկ իրադարձություններ, որոնք միտված էին ձևափոխելու և վերադասավորելու տարածաշրջանի քաղաքական ուժերի հարաբերակցությունը՝ հիմնովին վերածնելով էթնոքաղաքական քարտեզը: «էթնոքաղաքականությունը»<sup>1</sup> որպես

---

<sup>1</sup> Եզրույթի՝ քաղաքագիտության մեջ որպես առանձին ճյուղի ծագումը կապվում է քաղաքագետ Մ. Պարենտիի (Parenti M., Ethnic and Political Attitudes, Arno, 1975) անվան հետ՝ 1967 թ.: 1980-ական թթ. այն զարգացրին Ռ. Ռոկետտոն ու Ջ. Ռոթշիլդը: Վերջինս էլ մշակեց էթնոքաղաքագիտության հիմնական տեսությունները (Rothschild J., Ethnopolitics: a conceptional framework, New York, 1981): Փաստացի այն իր մեջ ներառում է էթնոլոգիան և քաղաքագիտությունը: Այն ուսումնասիրում է քաղաքական սուբյեկտիվությունը (քաղաքական կյանքում հասարակության մասնակցության հնարներն ու ճանապարհները), էթնոազգային կազմավորումների (ազգերի, էթնիկական փոքրամասնությունների և այլն) հարաբերությունները ինչպես միմյանց, այնպես էլ նրանց հարաբերությունը պետության հետ, ինչպես նաև պետության վերաբերմունքը միջազգային հարաբերությունների կարգավորմանը և միջէթնիկական հարաբերություններին: Էթնոքաղաքականությունը ազգությունների և էթնիկական խմբերի միջև փոխհարաբերությունների կարգավորման նպատակով նպատակաուղղված քաղաքականությունն է, որն իրականացվում է պետության կողմից մշակված հատուկ քաղաքականությամբ: Այն պետության և քաղաքական խմբավորումների քաղաքականությունն է ինչպես տարբեր ազգությունների, այնպես էլ երկրի ներսում ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Իսկ ըստ մեկ այլ ամերիկյան սոցիոլոգ Պ. Վան դեն Բերգի՝ էթնոքաղաքականությունը պետության և էթնիկական խմբերի միջև տեղի ունեցած փոխհարաբերություններն են, որոնք գտնվում են ոչ հավասար պայմաններում: Իսկ այդ փոխհարաբերություններում հիմնական հարցը հանդիսանում է իշխանության հարցը: Այդ իսկ պատճառով, նրա կարծիքով՝ ուսումնասիրել էթնոքաղաքականությունը նշանակում է ուսումնասիրել այն, թե ինչպիսի էթնիկական խմբեր և հետաքրքրություններ են ներկայացված պետական իշխանության կառուցվածքում, ինչպիսին է էթնոսների դերը որպես քաղաքական գործոն պետությունների և նրանց տարածքում բնակվող էթնոսների միջև փոխհարաբերությունները: «էթնոքաղաքագիտություն» եզրույթը ինքնին ենթադրում է, որ այստեղ զլխավոր դերում հանդես է գալիս էթնիկական հանրությունը՝ էթնիկական



գիտություն ուսումնասիրում է մի կողմից էթնիկական, մյուս կողմից քաղաքական իրականությունը: Այս եզրույթը գիտության նորաբանությունների շարքին է պատկանում և ունի շուրջ կեսդարյա պատմություն: Լինելով դարաշրջանի ծնունդ՝ այն միտված էր բացահայտելու և կարգավորելու միջազգային էթնոքաղաքական հակամարտությունները: Սակայն այն իր բնույթով միտված չէ կարգավորելու լոկ էթնոքաղաքական հակամարտությունները, այսինքն՝ այն կարգավորիչ գործոն լինելուց զատ ունի նաև այլ տարբերակիչներ:

Ելնելով էթնոքաղաքականության՝ որպես օբյեկտիվ գործընթացի հանգամանքից, որը ներառում է պատկանելիությունը տվյալ էթնոսին և քաղաքական կյանքում նրա դրսևորման ձևերին, այդուհանդերձ պետք է ընդգծել, որ այս երևույթն առկա է շուրջ հինգ հազարամյակ, և առաջացել է պետությունների հետ զուգահեռ՝ կապված նրա վարած ներքին և արտաքին քաղաքականության հետ: Երևույթը սկսում է ավելի ընդգծված բնույթ կրել տվյալ պետության արտաքին նվաճումների և օտար բնակչության գերեվարման ժամանակ: Այս ժամանակահատվածում ընդգծված բնույթ է կրում նաև «յուրային» և «օտար» կամ «սեփական» և «ոչ սեփական» հակադրությունը փոխհարաբերությունում: Ըստ երևույթին, այն ի հայտ է եկել կոսմոգոնիական պատկերացումների հետ միաժամանակ և անմիջականորեն՝ հասարակության ներսում շերտավորման հետ: Քաղաքակրթությունը հին հասարակության մարդկանց աշխարհայացքում վերջանում էր տվյալ քաղաք-պետության պարիսպներից անդին: «Սեփական» և «ոչ սեփական» հասկացողությունն առկա էր բոլոր քաղաքակրթություններում: Փաստացի «էթնոքաղաքականություն» եզրույթն այստեղ հանդես է գալիս որպես կոնկրետ պետության ներսում ոչ էթնիկ բնակչության նկատմամբ տարվող քաղաքականությունը և որպես պետության

---

խումբը, որը միանշանակորեն հետապնդում էր որոշակի քաղաքական նպատակներ: Այսպիսով, էթնոքաղաքականությունը՝ որպես օբյեկտիվ գործընթաց, ներառում է պատկանելիությունը տվյալ էթնոսին և քաղաքական կյանքում նրա դրսևորման ձևերին. St'u Майборода А., Зарубежная этнополитология о природе национальных движений, Философская и социологическая мысль, 1991, 12, с. 69-81.

արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ կապված զանգվածային վերաբնակեցումների հետ: Այս առումով, հիշյալ ժամանակահատվածում և տարածաշրջանում հիմնական գործող ուժը Ասորեստանն էր, որպես տարածաշրջանի էթնիկական պատկերի ձևախախտման կարևորագույն գործոն: Այս նույն ժամանակաշրջանին են վերաբերում Ասորեստանի քաղաքական ու տնտեսական վերելքը, նրա վերածվելը որպես համաշխարհային գերտերության ու անկումը, Վանի թագավորության անկումը, Նորբաբելոնյան թագավորության ստեղծումը, Բաբելոնիայի, Եգիպտոսի և Մարաստանի պայքարը գերիշխանության համար և նույն տարածաշրջանի նվաճումը պարսիկների կողմից: Մերձավոր Արևելքում վերոնշյալ գործողությունները հիմնականում առնչվում են Ասորեստանի և Վանի թագավորության վարած արտաքին ու ներքին քաղաքականության հետ: Փաստացի քաղաքական և մասամբ էլ մշակութային առումով տեղի ունեցան լուրջ տեղաշարժեր: Առաջնությունը սեմական տարրից անցավ հնդեվրոպական տարրին: Բավականին երկար ժամանակ Մերձավոր Արևելքում այս տարրը պահպանեց իր գերիշխանությունը:

Տարածաշրջանի էթնոքաղաքական պատկերի փոփոխության լուսաբանման գործում պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ նրա ընթացքը շաղկապված էր տարածաշրջանի պետությունների արտաքին և ներքին քաղաքականության հետ: Այստեղ կարևորվում է ոչ միայն էթնոքաղաքական տեղաշարժերի (գաղթեր) խիստ ընդգծված ուղղորդվածությունը, այլև՝ կոնկրետ միգրացիաները (էթնոքաղաքական խոշոր տեղաշարժեր, որոնք վերափոխեցին ամբողջ տարածաշրջանի պատկերը. որոշ վերապահումներով կարելի է առանձնացնել Ք.ա. XIII-XII և Ք.ա. VIII-VI դդ. տեղի ունեցած տեղաշարժերը) որպես այդպիսին: Եվ եթե առաջինն ուներ խիստ ընդգծված ուղղորդվածություն, ապա երկրորդի համար որպես բնութագրիչ ծառայում են «սահմանափակ» և «առավել ընդգրկուն» ածականները:

Միգրացիոն երևույթները հայտնի են վաղ ժամանակաշրջանից, և բավականին մեծ է նրանց թողած ազդեցությունն այս կամ այն տարածաշրջանի ընդհանուր պատկերի վրա: Նրանք կարևոր դերակատարում են ունեցել նոր էթնիկական կազմավորումների

ձևավորման և տնտեսական ու մշակութային կապերի զարգացման մեջ: Միգրացիաների պատճառները զանազան են՝ բնակլիմայական, տնտեսական, քաղաքական և այլն: Միգրացիաները, որպես կանոն, ո՛չ միայն ձևափոխում էին ներթափանցվող տարածաշրջանի առկա միջավայրն ու ընդարձակում կամ նվազեցնում իրադարձությունների դաշտը, այլև՝ կարևոր փոփոխություններ էին ներմուծում տարածաշրջանի այլ էթնիկ մասնակիցների կամ արդեն տեղաբաշխվածների կոնկրետ դասավորություններում: Վերադասավորում էին այն կամ էլ վերածնունդ՝ բաժանելով և դեպի հեռավոր ծայրամասերը մղելով հարևաններին: Լեզվամշակութային առումով տեղի էր ունենում նաև խիստ դրական մի գործընթաց, որի ընթացքում խաչասերվում էին նախնիսնում իրարից հեռացած բարբառները: Երևույթի առումով բավականին ուշագրավ է Ա. Քոսյանի մոտեցումը, որը ներկայացված է երկու հայեցակետերով.

1. էթնիկական տեղաշարժեր միևնույն էթնոքաղաքական միավորի ներսում՝ սահմանափակ միգրացիաներ,

2. էթնիկական տեղաշարժեր մի էթնոքաղաքական միավորից մեկ այլ միավոր՝ միջոցգիծնալ միգրացիաներ<sup>2</sup>:

Այս երկու հայեցակետերն էլ քննարկվող ժամանակաշրջանում հատուկ էին և՛ Վանի թագավորությանը, և՛ Ասորեստանին:

Մերձավորարևելյան այս երկու տերությունների վարած ակտիվ արտաքին քաղաքականությունը և պայքարը հեգեմոնիայի համար ենթադրել է տալիս մի այնպիսի ռազմական մեքենայի գոյության մասին, որն իր մեջ պետք է ներառեր մի յուրօրինակ գերատեսչություն, որը ակտիվ ռազմական գործողությունների հրահանգներ տալուց բացի, պետք է զբաղվեր նաև էթնիկական հարցերով: Գտնում ենք, որ այն կարող էր կենտրոնացած լինել «պալատական վարչության» ձեռքում<sup>3</sup>, որտեղից ղեկավարում էր պետությունը և գտնվում էր rab ummâni-ի ձեռքում: Ըստ երևույթին «rab ummâni»-ի գործակալությունը

---

<sup>2</sup> Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 185-186:

<sup>3</sup> The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago (այսուհետ՝ CAD), U and W, 2010, vol. XX, pp. 102-115; Оппенхейм А., Древняя Месопотамия, Москва, 1990, с. 80-81.

կարելի է համեմատել Աքեմենյան Իրանում և Հայաստանում կիրառվող «hazarapati»<sup>4</sup> «հազարապետի» գործակալության և հունականացված χιλιάρχος-ի պաշտոնի հետ<sup>5</sup>:

Ասորեստանում Թիգլաթպալասար III-ի (Ք.ա. 745-727 թթ.) եռանդուն գործունեության շնորհիվ կառավարման հենց առաջին տարում կատարվեցին ռազմական և վարչական բարեփոխումներ, որոնց արդյունքում Ասորեստանը կարողացավ դուրս գալ քաղաքական այն քաոսից, որում հայտնվել էր շուրջ կես դար առաջ: Ամենայն հավանականությամբ, հենց այս բարեփոխումների արդյունքում է, որ ծնունդ առավ «**համաշխարհային**» տերության գաղափարը:

Այդ բարեփոխումների և ամբողջապես նորովի վերակազմավորված բանակի շնորհիվ է, որ Առաջավոր Ասիայում, և մասնավորապես Արևելյան Փոքր Ասիայում ու Հյուսիսային Սիրիայում՝ Վանի թագավորության և Ասորեստանի միջև գերիշխանության համար մղվող պայքարը ավարտվեց վերջինիս հաղթանակով<sup>6</sup>:

Ք.ա. 743 թ. Քիշտանի և Խալպիի ճակատամարտերում հակասորեստանյան խմբավորումը Վանի թագավոր Սարդուրի II-ի (Ք.ա. 764-735 թթ.) գլխավորությամբ պարտություն կրեց: Հաղթանակը Թիգլաթպալասար III-ին լայն հնարավորություն ընձեռեց արևելյան Փոքր Ասիայում և Սիրիայում Ասորեստանի սասանված հեղինակությունը վերականգնելու համար: Ք.ա. 729 թ. Թիգլաթպալասար III-ը ջախջախելով քաղղեացիներին՝ գրավեց Բաբելոնիան: Վերջինս միացվեց Ասորեստանին, իսկ Թիգլաթպալասար III-ը դարձավ նրա թագավորը՝ Պուլու անվամբ<sup>7</sup>:

---

<sup>4</sup> Junge J.P., Hazarapatiš, Klio, 1940, Band 34, S. 13-38.

<sup>5</sup> Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 496-497: Фрай Р., Наследие Ирана, Москва, 1972, с. 139; Дандамаев М., Луконин В., Культура и экономика Древнего Ирана, Москва, 1980, с. 123.

<sup>6</sup> Salvini M., Geschichte und Kultur Urartäer, Darmstadt, 1995, S. 72-78; Barnet R.D., Urartu, The Cambridge Ancient History (այսնիտն՝ CAH), III/1, 1982, pp. 348-350; Astour M., The Arena of Tiglath-pileser III's campaign against Sarduri II (743 B.C.), Assur, 2/3, 1979, pp. 69-91.

<sup>7</sup> Brinkman J.A., A Political History of Post-Kassite Babylonia 1158-722 B.C., Roma, 1968, p. 240 n. 1544.

Անհրաժեշտ ենք համարում նաև հակիրճ անդրադառնալ Ք.ա. VIII դ. վերջին ասսուրական հասարակությունում տիրող իրավիճակին: Այսպես. ասսուրական հասարակությունում իշխանությունը պատկանում էր ազնվական-աստիճանավորների վերնախավին, որոնք անմիջականորեն կապված էին բանակի և կայսերական վարչակազմի հետ: Նրանք անմիջական եկամուտներ էին ստանում նվաճված տարածքների շահագործումից: Նվաճված տարածքներից որոշ շրջաններ էին կցվում կոնկրետ վարչական պաշտոններին, այնպես, որ այդ տարածքներից գանձված հարկերը ստացվում էին որպես համապատասխան պաշտոնյայի կողմից նվիրատվություն: Բացի այդ, ռազմական և քաղաքացիական վարչակազմի խոշոր ներկայացուցիչները ռազմավարից ու հարկերից որոշակի մասնաբաժին էին ստանում: Նրանք իրենց մասնաբաժինն ունեին նույնիսկ, ընդհանուր առմամբ վերցրած, ենթակա պետություններից ստացված հարկերից, իսկ վարչական բարեփոխումներից հետո՝ տվյալ մարզային տարածքներից: Ասսուրական պաշտոնյանների վերնախավը տիրում էր նաև մանր, սակայն տերության տարբեր շրջաններում բազում կալվածքների:

Այս առումով Պ. Բեդֆորդը իրավացիորեն նշում է, որ տնտեսության կառավարական մասնաբաժնի հիմքը նահանգային համակարգն էր:

Այսպես. նահանգային կառավարությունը պատասխանատու էր իր նահանգի հարկահավաքման (բանակին զինվորների տրամադրումը, բանակի համար նախատեսված հարկը, քաղաքներում աշխատանքների կազմակերպման համար սևագործների տրամադրումը, և այլն) գործի կազմակերպման համար: Նահանգային կառավարության նկատմամբ նմանատիպ պարտավորություններ էլ իր հերթին կրում էր գյուղական համայնքային տեսուչը և այլն<sup>8</sup>:

Տաճարները նույնպես ունեին խոշոր կալվածքներ և մեծ քանակությամբ ստրուկներ: Ընդհանրապես տաճարային տնտեսությունները բավականին ընդարձակ էին և ունեին ներքին բարդ կառուցվածք: Ստրուկների թիվն այստեղ գնալով ավելանում էր

---

<sup>8</sup> Bedford P., Empire and Exploitation: The Neo-Assyrian Empire, Social Science History Institute, Stanford University, May 21-22, 2001, p. 10f.

արքայի և մասնավոր անձանց կողմից նվիրատվությունների միջոցով: Տաճարները համապետական հարկեր չէին վճարում և կարծես թե ոչ մի պարտավորություն չէին կրում, դեռ ավելին՝ հաստուկ առանձնացված տարածքներից, նրանք նույնպես հարկեր էին ստանում: Փաստացի տաճարային ղեկավարությունը, բացի համայնքային կառավարումից իր իշխանությունն էր փորձում տարածել այս կամ այն շրջանների վրա՝ միաժամանակ զբաղվելով նաև հասարակական կյանքի կարգավորմամբ: Տաճարներում կուտակված հարստության չափերի մասին պատկերացում ունենալու վերաբերյալ բավական է հիշել միայն այն, որ Ք.ա. 702-689 և 652-648 թթ. բաբելոնացիներն Էսագիլայի տաճարի հարստությունն օգտագործեցին՝ վճարելու էլամցիներին Ասորեստանի դեմ պայքարում իրենց միանալու համար: Աշշուր քաղաքը Բաբելոնիայի Սիպպար, Նիպպուր, Բաբելոն և այլ քաղաքների օրինակով ուներ արտոնյալ կարգավիճակ և ազատված էր համապետական հարկերից: Ասորեստանում շուտով նույն կարգավիճակը ստացավ նաև Խառանն ու այլն:

Ինչևէ, Թիգլաթպալասար III-ի հաջորդները շարունակեցին նրա քաղաքականությունը՝ Ասորեստանը վերածելով հսկայածավալ կայսրության: Սալմանասար V-ի (Ք.ա. 727-722 թթ.) և մասնավորապես Սարգոն II-ի (Ք.ա. 722-705 թթ.) կառավարման ընթացքում «**համաշխարհային**» տերության գաղափարը մտավ ավարտական փուլ: Թիգլաթպալասար III-ի, Սալմանասար V-ի և Սարգոն II-ի ակտիվ արտաքին քաղաքականության արդյունքում Առաջավոր Ասիայի էթնոքաղաքական քարտեզը վերածնունդ ենթարկվեց:

Նոր էթնոքաղաքական քարտեզի ձևավորումն ուներ բավականին հեռու գնացող ծրագրեր՝ իր դրական և բացասական կողմերով: Այն հղի էր բազմաթիվ կործանարար վտանգներով, սակայն հաջողված էր ուժեղ արքայական իշխանության և կենտրոնաձիգ պետության դեպքում<sup>9</sup>: Իսնդիրն այն քաղաքականության մեջ էր, որ վարում էին Ասորեստանի թագավորները նվաճված տարածքների և նրանց

---

<sup>9</sup> Lambert W.G., The Reigns of Aššurnāširapal II and Shalmaneser III: An Interpretation, Iraq, 1974, vol. 36, 1/2, pp. 103-109.

բնակչության նկատմամբ: Այն արմատապես փոփոխման էր ենթարկվել՝ ձեռք բերելով որակապես նոր երանգներ: Նախկինում Ասորեստանի թագավորները նվաճված տարածքների նկատմամբ սահմանափակվում էին քաղաքական գերիշխանության հաստատմամբ, որն ամրագրվում էր հատուկ պայմանագրով՝ Ասորեստանի թագավորի և տեղական արքայիկի միջև:

Նոր ներքին և արտաքին քաղաքականությունը ձևավորվեց հնի բացառման արդյունքում: Ասորեստանյան կայսրության պատմության մեջ սկսվում է մի նոր փուլ, որը կարելի է անվանել «*pax assyriaca*»: Կայսերական գաղափարախոսությունն էլ իր հերթին գործում էր ինչպես մի մեխանիզմ, որի նպատակը կայսրության որոշ չափով էլիտային մակարդակով միասնականություն տալն էր<sup>10</sup>:

Վերոհիշյալ խնդրին անդրադարձել է նաև Ա. Քոսյանը: Անդրադառնալով Արևելյան Փոքր Ասիայում ասորեստանցիների վարած քաղաքականությանը, որն էլ միաժամանակ, ընդհանուր առմամբ կարելի է տարածել նաև ամբողջ Մերձավոր Արևելքի նկատմամբ, աղբյուրների համադրման արդյունքում նա գալիս է հետևյալ եզրակացության, որ նվաճված տարածքների նկատմամբ Ասորեստանի վերոհիշյալ քաղաքականության հիմքում ընկած էին հետևյալ կտրուկ միջոցառումները՝

1) տեղական արքայատոհմերի և ազնվականության ֆիզիկական բնաջնջում կամ բռնի փոխադրում Ասորեստան,

2) մարիոնետային վարչակազմի ստեղծում կամ ուղղակի ենթակայություն՝ ասորեստանյան կառավարչի գլխավորությամբ,

3) Ասորեստանից սեմական բնակչության բնակեցում<sup>11</sup>:

Եթե վերոհիշյալ դիտարկումները, ընդհանուր առմամբ ճշմարտացի լինելով հանդերձ, տարածվում են հյուսիսային և հյուսիս-արևմտյան ուղղությունների վրա, ապա նույնը չի կարելի ասել հարավում և հարավ-արևմուտքում վարած քաղաքականության առումով: Այստեղ անհրաժեշտ է դառնում նշել ևս մեկ կարևոր միջոցառում, որն իր բնույթով ճիշտ երրորդ կետի հակառակ քաղաքայանությունն է, այն է՝ տեղական բնակչության բռնի տեղահանում և Ասորեստանի

<sup>10</sup> Bedford P., *Empire and Exploitation*, p. 23.

<sup>11</sup> Քոսյան Ա., Տուն Թորգոմայ (առաափել և իրականություն), Երևան, 1998, էջ 14-15:

ծայրամասային նահանգներում նրանց վերաբնակեցում: Ըստ երևույթին, այն առաջին անգամ կիրառվել է Եգիպտոսում, խեթերի մոտ, Միջագետքի այլ երկրներում, իսկ հետո Ասորեստանում և ապա Վանի թագավորությունում<sup>12</sup>:

Նորասորեստանյան ժամանակաշրջանում այս քաղաքականությունը նկատվում է Աշշուրնաձիրապալ II-ի (Ք.ա. 884-859 թթ.) կառավարման ընթացքում<sup>13</sup>: Բ. Օդետը, որը խնդրի վերաբերյալ առաջին հետազոտողներից է, գտնում է, որ առաջին անգամ որպես արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ զանգվածային վերաբնակեցումների քաղաքականությունը կիրառվել է Ասորեստանում՝ Թիգլաթպալասար III-ի կառավարման ժամանակաշրջանից սկսած<sup>14</sup>:

Սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ այս երևույթների կիրառումը կոնկրետ արտաքին քաղաքականությունում որպես այդպիսին՝ առաջին անգամ հանդես է գալիս Վանի թագավորությունում՝ Մենուայի (Ք.ա. 810-786 թթ.) և Արգիշտի I-ի (Ք.ա. 786-764 թթ.) ժամանակաշրջանում<sup>15</sup>:

Երևույթի քննությունը մեզ ստիպում է ենթադրել, որ արտաքին քաղաքականության մեջ նրա **զանգվածային** կիրառումը հանդես է գալիս հենց Վանի թագավորությունում, և չի բացառվում նաև այն հանգամանքը, որ վերջինից էլ այն փոխառած լինեն ասորեստանցիները: Սակայն նվաճված տարածքների ու նրանց

---

<sup>12</sup> Oded B., Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire, Wiesbaden, 1979, p. 2. Նոյնի՝ Observations on Methodos of Assyrian Rule in Transjordan after the Tiglath-Pileser III, Journal of Near Eastern Studies, 1970, vol. 29, 3, pp. 177-186; Дьяконов И., Типы этнических передвижений в ранней древности (с конца IV по начало I тыс. до н.э.), Древний Восток (այսուհետ՝ ДВ), 4, 1983, с. 8.

<sup>13</sup> Grayson A.K., Assyria: Ashur-Dan II to Ashur-Nirari V (934-745 B.C.), САН, III/1, 1982, pp. 253-259.

<sup>14</sup> Oded B., Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire, p. 2; Gallagher R.W., Assyrian Deportation Propaganda, SAAB, VIII/ 2, 1994, pp. 57-65.

<sup>15</sup> Վանի թագավորությունում նմանատիպ քաղաքականության վրա առաջին անգամ ուշադրություն դարձրեց Գ. Մելիքիշվիլին՝ Меликишвили Г., Некоторые вопросы социально-экономической истории Наири-Урарту, Вестник древней истории, 1951, 4, с. 22-40: Այստեղ հանգամանորեն նկարագրված է Վանի թագավորների կողմից իրականացված քաղաքականության սոցիալ-տնտեսական պատճառները:



բնակչության նկատմամբ երկու երկրների վարած քաղաքականությունը նույնական չէր: Ի տարբերություն արեեստանցիների, որոնք նվաճված ժողովուրդներին չէին պարտադրում իրենց մշակույթը, ապա ուրարտացիները ամեն կերպ ձգտում էին նվաճված ժողովուրդներին պարտադրել այն: Դա առավելապես կատարվում էր նվաճված ժողովուրդների շրջանում Խալդ աստծո պարտադիր պաշտամունքի ներմուծման ճանապարհով<sup>16</sup>:

Այսպիսով, նվաճված տարածքների նկատմամբ քաղաքականությունն արմատական փոփոխության ենթարկվեց: Նվաճված տարածքները մասնատվեցին առանձին շրջանների՝ նահանգների, որոնք մեծամասամբ ղեկավարվում էին ասորեստանցի <sup>amei</sup>bēl piāti-ների, այն է՝ նահանգների կառավարչների կողմից:

Մինչև Թիզլաթպալասար III-ի կողմից ձեռնարկված ռազմավարչական բարեփոխումները, նվաճված տարածքները վեր էին ածվում փոխարքայությունների և կառավարվում էին փոխարքաների՝ <sup>amei</sup>šaknû-ների կողմից: Բարեփոխումների արդյունքում փոխարքայությունները բաժանվեցին ավելի մանր վարչաքաղաքական միավորների՝ մարզերի, որոնք էլ ղեկավարվում էին մարզային կառավարիչների՝ <sup>amei</sup>bēl piāti -ների կողմից<sup>17</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, նվաճելով տարբեր տարածքներ՝ Ասորեստանի թագավորները բնակչության նկատմամբ վարում էին զանգվածային վերաբնակեցման քաղաքականություն: Նմանատիպ քաղաքականության ընդհանրական բնութագրման համար որպես եզրույթ կարելի է օգտագործել արքադերեն nasāīu(našāīu, iss(š)u) բայը, որի հայերեն թարգմանությունն է՝ արմատախիլ անել, վրնդել, ոչնչացնել և այլն<sup>18</sup>: Իսկ նույն քաղաքականության «ուրարտական մոդելի» համար կարելի է որոշ վերապահումներով օգտագործել գրեթե

---

<sup>16</sup> Дьяконов И., К вопросу о символе Халди, ДВ, 4, 1983, с. 190. Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կարգը, Երևան, 1990, էջ 33-37:

<sup>17</sup> Postgate J.N., The Plase of the Šaknu in Assyrian Government, Anatolian Studies, 1980, XXX, pp. 68-76.

<sup>18</sup> CAD, vol. XI, N2, Chicago-Glückstadt, 1980, nasāīu, pp. 1-15; W. von Soden, Akkadisches Handwörterbuch, Wiesbaden, 1972, III, 1286.

նույն իմաստը կրող ուրարտերեն tamū(u)?, tašm(u)?, naī(u)? բայերը, որն, ամենայն հավանականությամբ, նշանակում է «վերաբնակեցնել»<sup>19</sup>: Սակայն Վանի թագավորներն իրենց արձանագրություններում մեծամասամբ օգտագործում են ag(u) - տանել<sup>20</sup> և par(u) - քշել, քշել տանել բայերը<sup>21</sup>: Շատ հաճախ այս երկու բայերի կիրառությանը հանդիպում ենք միևնույն արձանագրությունում:

Որպես օրինակ նշենք Արգիշտի I-ի կողմից Ուրմիա լճից արևելք ընկած տարածքներ կատարած արշավանքի նկարագրությունից մեկ հատված՝

- «29. KUR<sup>e</sup>-ba-ni a-ma-áš-tú-bi URU<sup>MEŠ</sup> Ūar-Ūa-ar-šú-bi  
 30. 'a-še LÚ<sup>ú</sup>-e-di-a-ni iš-ti-ni-ni **pa-ru-ú-bi**  
 31. VII LIM VIII ME LXXIII LÚ<sup>ú</sup>ta-ar-šú-ú-a-ni šá-a-li-e  
 32. a-li-ki za-áš-gu-bi a-li-ki še-Ūi-ri a-gu-bi  
 33. II ME LXXX ANŠU.KUR.RA<sup>MEŠ</sup> **pa-ru-bi** I ME I ANŠU.A.AB.BA<sup>MEŠ</sup>,»  
 «29. Երկիրը հրի մատնեցի, քաղաքները ավերեցի,  
 30. տղամարդ և կին **քշեցի փարա**:  
 31. 7.873 մարդ տարվա ընթացքում:  
 32. Մի մասին սպանեցի, մյուսներին կենդանի **փարա**:  
 33. 280 ծի **քշեցի փարա**, 101 ուղտ»<sup>22</sup>:

Հիմնախնդրի առումով ուրարտական արձանագրությունները և մասնավորապես Սարդուրի II-ի «Տարեգրությունը» մեծ հետաքրքրություն է առաջացնում այն առումով, որ այստեղ առաջին

<sup>19</sup> Меликишвили Г., Урартские клинообразные надписи, Москва, 1960, 265 строка 3 и с. 409; Дьяконов И., Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963, с. 91; Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей (այսուհետ՝ КУКН), Ереван, 2001, 388, стк. 3, с. 466, 467; Salvini M., Corpus dei testi Urartei այսուհետ՝ CTU), vol. I, Roma, 2008, A10:3, p. 495.

<sup>20</sup> КУКН, 44 стк. 14-15 и стк. 9-10, с. 64-68; CTU, A5-9: 14-15, 9-10, pp. 199-200; КУКН, 52:4; 173:13,43; CTU, A5-2E: 4; A8-3: 13,43, և այլուր:

<sup>21</sup> КУКН, 173, I, стк. 13-15, и стк. 30, с. 155-160; CTU, A8-3 I: 13-15, 30, pp. 332-333 և այլուր:

<sup>22</sup> КУКН, 174 B2: 29-33; CTU, A8-2: 29-33.

անգամ խոսվում է նվաճված տարածքի բնակչությանն՝ Վանի թագավորություն վերաբնակեցնելու մասին՝

«4. e-di-ni ta-áš-mu-ú-bi **pa-ru-bi** e-er-šī-du-[bi]

5. <sup>KUR</sup>e-ba-ni-ú-ki-e»

«4. այնտեղից ես գերեցի (?), **քչեցի փարա**,

5. իմ երկրում բնակեցրի»<sup>23</sup>:

Իհարկե այս ամենը չէր ենթադրում, որ Վանի մյուս թագավորները վերաբնակեցումներ էին կատարում ոչ հպատակ տարածքներում: Վանի թագավորությունում երևույթն առկա է ընդհուպ մինչև Ք.ա. VII դ. առաջին կեսը կամ մինչև Ռուսա II (Ք.ա. 685-660(?) թթ.): Հայտնի նմանատիպ վերջին արձանագրությունը պատկանում է հենց իրեն՝ Ռուսա II-ին՝

«3. ... <sup>m</sup>Ru-sa-a-še <sup>m</sup>Ar-giš-te-šī-ni-šē a-li **pa-ru-bi** <sup>LÚ4.SAL</sup>lu-tú-ni <sup>KUR</sup>lu-lu-i-na-ni KUR-ni-i-[na?]-ni»

«3. Ռուսա Արգիշտիորդին ասում է՝ ես թշնամական երկրից **քչեցի փարա** կանանց ... »<sup>24</sup>:

Իսկ Ասորեստանում երևույթն առկա է ընդհուպ մինչև Աշշուրբանապալի (Ք.ա. 669-627 թթ.) կառավարումը ներառյալ՝

«14. nišê<sup>meš</sup> áluKir-bít ma-la áš-lu-lu

15. as-suš-ma qí-rib <sup>álu</sup>Mu-šur (Եգիպտոս - Ռ.Ց.) ú-ša-aš-bit<sup>25</sup>»

«14. Կիրբիտ (Կիրբիտու՝ քաղաք Արևելյան Տիգրիսի շրջակայքում<sup>26</sup>) քաղաքի բնակչությանը, այնքան ինչքան ես վերցրել եմ՝

15. տարա և բնակեցրի Եգիպտոսում»<sup>27</sup>:

<sup>23</sup> КΥΚΗ, 241C, 4-5, стр. 234-238; CTU, A 9-3 II, pp. 421-422.

<sup>24</sup> КΥΚΗ, 414, 3; CTU, A 12-4, 3.

<sup>25</sup> Piepkorn A. C., Historical Prism of Ashurbanipal, I, Chicago, 1953, col. III, lines 14-15, p. 48.

<sup>26</sup> Grayson A.K., Assyrian and Babylonian Chronicles, New York, 1975, p. 258.

<sup>27</sup> Luckenbill D.D., Ancient Records of Assyria and Babylonia (այսուհետ՝ ARAB), vol. II, Chicago, 1927, 908, p. 351; Piepkorn A.C., Ashurbanipal, p. 49:14-15.

Եվս մի կարևոր հանգամանք, որին, սակայն, սույն հոդվածի շրջանակներում մանրամասն չենք անդրադառնա: Մենուայի (Ք.ա. 810-786 թթ.) արձանագրություններից մեկում (հիմնախնդրի առումով այն եզակի չէ) նշվում է, որ նվաճված երկրների բնակչության տեղահանման ժամանակ տղամարդկանց տալիս էին զինվորներին, իսկ կանայք, ըստ երևույթին, բաժին էին հասնում թագավորին, տաճարներին ու ազնվականներին: Արձանագրության համապատասխան տողերը մեջ ենք բերում ամբողջությամբ՝

«14. [ ..... ] ME LV <sup>LÚ</sup>ta-ar-ճւ-a-ni MU a-li-ké za-áճ-gu-bi a-li-k[é]

15. [T<sup>MEŠ</sup> a-gu]-bi a-li 'a-še ma-nu a-ru-bi <sup>LÚ</sup>Սu-ra-di-na-ú-[e]»

«14. [ ..... ] հարյուր 55 մարդ մեկ տարվա ընթացքում: Մի մասին (ես) սպանեցի, իսկ մնացածին՝

15. կենդանի տարա: Նրանցից տղամարդկանց (ես) տվեցի ռազմիկներին»<sup>28</sup>:

Նույն երևույթն առկա է նաև արձանագրության «Դիմային կողմում» որտեղ ներկայացված է Ալզինի երկրից Մենուայի կողմից գերության քշած մարդկային զանգվածների մասին՝

«8. ... II LIM I ME XIII <sup>LÚ</sup>ta-ar-ճւ-a-ni

9. [ճո-a-li]-e a-li-ké za-áճ-gu-ú-bi a-li-ké T<sup>MEŠ</sup> **a-gu-ú-bi**

10. [ʾa-še]-e a-li ma-a-nu a-ru-ú-bi <sup>LÚ</sup>Սu-ra-di-na-ú-e<sup>MEŠ</sup>»

«8. .... 2113 մարդ

9. մեկ տավա ընթացքում՝ մի մասին (ես) սպանեցի, մյուսին՝ կենդանի տարա:

10. Նրանցից տղամարդկանց (ես) տվեցի ռազմիկներին»<sup>29</sup>:

<sup>28</sup> КУКН, 44:14-15; СТУ, А5-9:14-15, 10. Երևույթը բավականին հետաքրքիր է՝ ակնկալում ենք հետագայում անդրադառնալ այս խնդրին: Նշենք միայն, որ ըստ երևույթին, այն իրենից ուժացում էր ներկայացնում և, ամենայն հավանականությամբ, տղամարդկանց և կանանց վերաբնակեցնում էին իրարից զատ և տարբեր տարածքներում, չնայած որ այն հաստատելու կամ ժխտելու համար չունենք ոչ մի փաստ: St'au նաև Меликишвили Г., Некоторые вопросы ..., Вестник древней истории, 1951, 4, с. 37.

<sup>29</sup> КУКН, 44:8-10; СТУ, А5-9:8-10.

ինչևէ, *nasāī*-ի, այս պարագայում որպես եզրույթի, էությունը կայանում էր նրանում, որ նվաճելով նոր տարածքներ՝ բնակչությանը տեղահանում և վերաբնակեցնում էին հսկայաձավալ տերության ծայրամասերում: Իսկ արդեն տեղահանված տարածքներում էլ վերաբնակեցնում էին այլ տարածքների բնակիչներին, որի արդյունքում կտրուկ փոփոխվում էր այդ տարածքների էթնիկական պատկերը<sup>30</sup>:

Մենք այստեղ *nasāī*-ն օգտագործում ենք որպես եզրույթ, սակայն այդ չի նշանակում, որ նշյալ բայը եզակի է: Բ. Օդետը խնդրո առարկա «արտաքսում» և «վերաբնակեցում» բառերի համար ընդգծել է աքթադերեն շուրջ քսան բայ<sup>31</sup>: Այդ բայերից, սակայն քիչ ավել կամ պակաս գործածական են *abāku* - տանել, հեռացնել, գերության քշել<sup>32</sup>, *ramū* - բնակեցնել<sup>33</sup>, *šabātu*<sup>34</sup> և այլ բայեր: Մեծ հետաքրքրություն է առաջացնում նաև *šalālu* (*šallatu*, *šallūtu*) բայի օգտագործումը<sup>35</sup>, որն ըստ Բ. Օդետի վերաբերում է զուտ մարդկային վերաբնակեցումներին, բայց կան դեպքեր, երբ այդ բառը օգտագործվում է նաև ավարի առումով<sup>36</sup>:

Նվաճված տարածքների բնակչությունը և նոր վերաբնակեցվածներն իրավական տեսանկյունից հավասարվում էին «Ասորեստանի մարդկանց»՝ *niše matAššur* կամ «Երկրի մարդկանց»՝ *niše māti* հետ, սակայն սկզբունքորեն տարբերվում էին բնիկ աշշուրցիներից՝ *mar'e matAššur*՝ «Ասորեստանի զավակներից»: Նրանց անվանում էին *āīn*, *nakru*՝ օտարներ, *munnarbu*՝ գաղթականներ և այլն: Այսպիսով, *nasāī*-ի քաղաքականությունն իրենից մի տեսակ էթնիկական ծուլում կամ **Assyrianization** էր ներկայացնում:

Ասորեստանի թագավորները նախընտրում էին տեղահանվածներին վերաբնակեցնել ոչ մեծ և մասնատված խմբերով

---

<sup>30</sup> Մանրամասն տե՛ս Zadok R., On the Ethnolinguistic Composition of the Population of Assyria Proper in 9<sup>th</sup>-7<sup>th</sup> Centuries B.C., Assyria im Wandel der Zeit, Heidelberg, 1992:

<sup>31</sup> Oded B., Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire, p. 5.

<sup>32</sup> CAD, vol. I, A1, 1964, *abāku* հոդվածը, pp. 3-9.

<sup>33</sup> CAD, vol. XIV, R, 1999, *ramū* հոդվածը, pp. 127-147.

<sup>34</sup> CAD, vol. XVI, 5, 1962, *šabātu* հոդվածը, pp. 5-41.

<sup>35</sup> Borger R., Die Inschriften Asarhaddons Königs von Assyrien, Graz, 1956, S. 33:27, 36.

<sup>36</sup> Oded B., Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire, p. 7.

կամ նույնիսկ ընտանիքներով՝ ըստ հնարավորության մի տարածքում համախմբելով էթնոլեզվական առումով տարբեր մարդկանց խմբեր:

Տեղահանված բնակչությանը նոր տարածքներում վերաբնակեցնում էին արքայական, տաճարական և նույնիսկ մասնավոր անձանց հողատարածքներում: Նրանք պաշտոնապես համարվում էին *wardu ša šarrim*՝ արքայական ստրուկներ<sup>37</sup>, սակայն միաժամանակ անձնապես ազատ էին և համարվում էին Ասորեստանի ազատ քաղաքացի՝ *awilum* և կարող էին շարժական և անշարժ գույք ունենալ, զինվորագրվել բանակում, վարել ինքնուրույն տնտեսություն և նույնիսկ՝ ծառաներ ունենալ<sup>38</sup>:

Ք.ա. VIII դ. վերջերից Առաջավոր Ասիայում կրկին սկսված ժողովուրդների տեղաշարժերը Ք.ա. VII դ. առաջին քառորդին ընդգրկեցին բավականին խոշոր մասշտաբներ՝ կիմմերներ, սկյութներ, արամեացիներ, Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններում հնդեվրոպական ցեղեր ու ժողովուրդներ, և այլն: Այս բնական տեղաշարժերն էլ ավելի ընդգրկված բնույթ ստացան ասորեստանցիների կողմից *nasānu*-ի քաղաքականության կիրառման արդյունքում:

*Nasānu*-ի քաղաքականությունը, օրինակ, արամեացիների և հրեաների առումով չարդարացրեց իրեն: Խնդիրն այն էր, որ Սիրիայից արամեական ցեղերի խոշոր զանգվածներ վերաբնակեցվեցին Միջագետքում, որտեղ նրանց թիվը բավականին մեծ էր, իսկ այժմ հպատակվելով ասորեստանցիներին՝ նրանք տարածվեցին ամբողջ Միջագետքով մեկ: Բուն Ասորեստանի տարածքում նրանց թիվը բավականին պատկառելի էր<sup>39</sup>:

Ք.ա. 722 թ.-ին ասորեստանցիները գրավեցին Իսրայելի մայրաքաղաք Սամարիան: Իսրայելական թագավորությունը դադարեց գոյություն ունենալ՝ վերածվելով ասսուրական նահանգի: Սարգոն II-ի հրամանով՝ Իսրայելից շուրջ 27.290 մարդ տեղահանվեց և

<sup>37</sup> Diakonoff I., *The Cities of the Medes; Ah, Assyria*, Jerusalem, 1991, p. 19.

<sup>38</sup> Մանրամասն տե՛ս Oded B., *Mass Deportations*, pp. 75-115: Նույն երևույթն առկա է նաև Վանի թագավորությունում՝ Меликишвили Г., *Наири-Урарту, Тбилиси*, 1954, с. 346.

<sup>39</sup> Tadmor H., *The Aramaization of Assyria: Aspects of Western Impact, Mesopotamien und seine Nachbarn*, Berlin, 1982, pp. 449-453; Zadok R., *On the Ethnolinguistic*, pp. 77-78.

վերաբնակեցվեց Միջագետքի ու Մարաստանի հեռավոր շրջաններում: Հրեաների տեղահանման մասին, սկսած Թիզբաթալասար III-ից մինչև Սինախներիբ (Ք.ա. 705-681 թթ.)՝ հիշատակություններ է պահպանվել նաև Աստվածաշնչում: Առաջինը վերաբերում է Թիզբաթալասար III-ի կողմից կատարած վերաբնակեցումներին՝ «Իսրայելի թագաւոր Փակէէի (Պեկայ (Ք.ա. 740-732 թթ.) - Ռ.Յ.) օրերումն եկաւ Ասորեստանի Թագաւթփաղասար թագաւորը եւ առաւ Իյօնը, Աբէլ-բեթամաքան, Յանովէն, Կադէսը, Հասորը, Գաղաաղը եւ Գալիլեան՝ Նեփթաղիմի բոլոր երկիրը, եւ նորանց գերի տարաւ Ասորեստան»<sup>40</sup>: Ընդ որում, Աստվածաշնչում նշվում է նաև նրանց վերաբնակեցման վայրը՝ «Մարաց քաղաքներում»<sup>41</sup>:

Սարգոն II-ի կառավարման ժամանակաշրջանում նմանատիպ քաղաքականություն էր վարվում նաև Արևելյան Փոքր Ասիայում: Օրինակ, Թիլ-Գարիմնուից տեղահանվեց մոտ 5000 մարդ, որոնց տեղը վերաբնակեցվեցին Կամմանուից սուտիական ցեղերը<sup>42</sup>: Իսկ Սինախներիբը շուրջ 150.000 բնակչի Բաբելոնիայից վերաբնակեցրեց Սամարիայում<sup>43</sup>, իսկ նույն Հրեաստանից արտաքսեց շուրջ 200.150 մարդ<sup>44</sup>:

Ըստ Արգիշտի I-ի «Խորխոռոյան տարեգրության», ռազմագերիների ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 320 հազար մարդ, իսկ ըստ Սարդուրի II-ի «Տարեգրության»՝ շուրջ 200 հազար<sup>45</sup>: Օրինակ, Ք.ա. 782 թ.-ին նորակառույց Էրեբունիում Արգիշտի I-ը վերաբնակեցրեց Խաթիի և Ծուփանի երկրից շուրջ 6600 մարդ<sup>46</sup>:

Նմանատիպ երևույթները թե՛ Ասորեստանում և թե՛ Վանի թագավորությունում բազմաթիվ էին, և հետևաբար հիմնախնդրին մեկ հոդվածի շրջանակներում անդրադառնալը հնարավոր չէ: Եվ եթե

---

<sup>40</sup> Դ Թագաւորաց, ԺԵ, 29-30, տե՛ս Աստուածաշունչ մատեն, Կոստանդնուպոլիս, 1896:

<sup>41</sup> Դ Թագաւորաց, ԺԵ, 6-7; ԺԸ, 11-12:

<sup>42</sup> ARAB, II, 80, 99, 137; Քոսյան Ա., Տուն Թորգոմայ, էջ 18-19:

<sup>43</sup> Isserlin B.S.J., The Israelites, Thames and Hudson, London, 1998, pp. 87-89.

<sup>44</sup> Luckenbill D.D., The Annals of Sennacherib, Chicago, 1924, p. 32:24-27.

<sup>45</sup> Հայ Ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 341:

<sup>46</sup> KYKH, 173-174.

Ասորեստանում զանգվածային վերաբնակեցումներն առաջին հերթին կրում էին քաղաքական<sup>47</sup> և հետո նոր տնտեսական բնույթ<sup>48</sup>, ապա Վանի թագավորությունում, ըստ երևույթին, ճիշտ հակառակը:

Nasāīu-ի քաղաքականությունն արամեացիների պարագայում չլուծեց քաղաքականության առջև ծառայած բուն խնդիրներն այն առումով, որ նրանք նոր տարածքներում չծուլվեցին իշխող բնակչությանը:

Երևույթն ընդհանրական կարելի է համարել նաև Բաբելոնիայի առումով: Եթե նախկինում բաբելացիներին հաջողվել էր ուժացնել ամորեացիներին և քասսիտներին, ապա խնդիրն այլ էր հիմնականում գյուղական համայնքներում բնակվող երկու արևմտասեմական ծագում ունեցող ցեղերի՝ արամեացիների և քաղդեացիների առումով<sup>49</sup>:

Արամեացիների դեպքում տեղի ունեցավ ճիշտ հակառակը: Նրանք մշակութային և տնտեսական առումով այնքան մեծ ազդեցություն ունեցան ասորեստանցիների վրա, որ համեմատաբար կարճ ժամանակահատվածում վերջիններս սկսեցին ծուլվել նրանց: Դեռ ավելին, արամեացիները շարունակեցին պահպանել իրենց հատուկ ցեղային կառուցվածքը, անձնական արամեական հատուկ անունները և նույնիսկ շարունակեցին ակտիվ մասնակցություն ունենալ Բաբելոնիայի ներքին կյանքում: Նրանք հիմնականում բնակություն էին հաստատել Տիգրիս գետի ստորին հոսանքի շրջանում, Սիպպուր քաղաքի շրջակայքում և մասամբ էլ՝ Հյուսիսային Բաբելոնիայում:

Ք.ա. VII դ. արամեական ցեղերից ամենահայտնին Գամբուլուն էր<sup>50</sup>: Ինչպես նշում են Բ. Մազարը, Հ. Թադմորը և այլք, սկզբում արամեերենը դարձավ Ասորեստանի երկրորդ պաշտոնական լեզուն, հետո տերության երկրորդ լեզուն և վերջապես Միջագետքի ու Մերձավոր Արևելքի բազմաթիվ ժողովուրդների մայրենի լեզուն<sup>51</sup>:

---

<sup>47</sup> Oded B., *Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire*, pp. 33-40.

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 55-74:

<sup>49</sup> Brinkman J.A., *A Political History of Post-Kassite Babylonia*, pp. 260-285; Նույնի, *Prelude to Empire: Babylonian Society and Politics, 747-626 B.C.*, Philadelphia, 1984, p. 12 n. 41.

<sup>50</sup> Brinkman J.A., *Babylonia in the Shadow of Assyria (747-626 B.C.)*, CAH, III/2, 1991, p. 8.

<sup>51</sup> Mazar B., *The Aramean Empire and its Relations with Israel*, *The Biblical Archaeologist*, 1962, 25/4, p. 111; Tadmor H., *The Aramaization of Assyria*, pp. 451-455; Parpola S., *National and Ethnic Identity in the Neo-Assyrian Empire and Assyria Identity in Post-Empire*



Շուտով, ինչպես արդեն նշեցինք՝ սկսած Ք.ա. VI դ., արամեերենը հանդես էր գալիս որպես *lingua franca*:

Եվ եթե հետագայում արամեացիների ազդեցությունը տեղաբնիկների վրա հիմնականում կրում էր մշակութային բնույթ, ապա իրավիճակն այլ էր նրանց ցեղակից քաղղեացիների առումով՝ որոնք ինչպես հետագայում կտեսնենք՝ կարողացան նույնիսկ հասնել քաղաքական լուրջ հաջողությունների:

Չնայած քաղղեացիներն ավելի ուշ ներթափանցեցին կամ էլ վերաբնակեցվեցին Մերձավոր Արևելքի տարբեր շրջաններում, միևնույնն է, նրանք վարում էին ավելի նստակյաց կյանք և ավելի համախմբված էին, քան արամեացիները<sup>52</sup>: Բաբելոնիայի տարածքում գոյություն ունեին երեք մեծ և երկու փոքր քաղղեական ցեղեր: Քաղղեացիները պահպանում էին իրենց հատուկ ցեղային ապրելակերպը և ինչպես արամեացիները՝ նշված ժամանակահատվածում չձուլվեցին տեղաբնիկներին: Նրանք իրենց ակտիվ մասնակցությունն էին ցուցաբերում նաև միջազգային առևտրում: Ամեն մի քաղղեական ցեղախումբ անվանված էր որպես «Այսինչ ցեղային առաջնորդի կամ առասպելական նախահոր Տուն՝ (Bit)»: Քաղղեական այդ երեք խոշոր ցեղերն էին՝ Եփրատ գետի ստորին հոսանքի շրջանում, Ուրուկ քաղաքից հյուսիս՝ Բիթ - Ամուկանին, Բիթ-Դակկուրին՝ Բորսիպպայից հարավ, սակայն սրանք երբեմն ավելի ակտիվ էին գործում անմիջապես Բաբելոն քաղաքի շրջակայքում, և Բիթ - Յակինը, որը միաժամանակ քաղղեական ցեղերից ամենահզորն էր, տիրապետող դիրք ուներ Ուր քաղաքի շրջակայքում գտնվող հողերի վրա, ինչպես նաև արևելքի ճահիճներում (Շովի երկիր)<sup>53</sup>:

Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ Բաբելոնիայում հակաստորեստանյան ելույթները գլխավորում էին հենց քաղղեացի առաջնորդները<sup>54</sup>: Բաբելացիների հետ միասին նրանք ձգտում էին

---

Times, Journal of Assyrian Academic Studies, 2004, vol. XVIII, 2, p. 4; Дьяконов И., Типы этнических передвижений в ранней древности, с. 8 прим. 5.

<sup>52</sup> Brinkman J. A., *Babylonia in the Shadow of Assyria (747-626 B.C.)*, p. 9.

<sup>53</sup> *Ibid.*: p. 9.

<sup>54</sup> Brinkman J. A., *Babylonia in the Shadow of Assyria (747-626 B.C.)*, p. 14.

ընդլայնել հակաստրեստանյան խմբավորման աշխարհագրական տարածքը և շատ հաճախ դիմում էին էլամցիների (իսկ, քանի դեռ Բաբելոնիան ու էլամը համագործակցում էին, նշանակում էր, որ Ասորեստանի խնդիրները տարածաշրջանում բավականին լարված բնույթ էին ստանում, իսկ սրա հետ էլ զուգահեռ՝ սրվում էր նաև միջազգային հարաբերությունները) ու արաբների օժանդակությամբ:

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ արաբների կողմից դեպի Բաբելոնիա ներխուժման կամ էլ այն իրենց ազդեցությանը ենթարկելու միտումներ էին նկատվում: Վերջինիս մասին են վկայում Եփրատ գետի ավազանում մի քանի արաբական տեղանունները<sup>55</sup> և այլն: Այդպիսի հակաստրեստանյան խմբավորման վերաբերյալ որպես վառ օրինակ կարելի է բերել այն փաստը, որ Բաբելոնի թագավոր Մարդուկ-ապլա-իդդին II-ը (Ք.ա. 721-710 և 703 թթ.)՝ Ք.ա. 703 թվականին համախմբեց մի պատկառելի միություն, որի մեջ ներգրավված էին քաղղեացիները, արամեացիները, էլամցիները և արաբները<sup>56</sup>:

Ինչևէ, պետք է նշել նաև, որ ոչ բոլոր քաղղեական ցեղերն էին հանդես գալիս հակաստրեստանյան ելույթներով: Նույնիսկ, ինչպես վկայում է Ասարխադդոնի (Ք.ա. 681-669 թթ.) մի արձանագրությունը, ասորեստանյան բանակում կային քաղղեացի զինվորներ ու հրամանատարներ<sup>57</sup>:

Դեռևս Ք.ա. II հազարամյակի վերջերին Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմտյան շրջաններում հետագա Մարաստանի տարածքում, հաստատվեցին տարբեր էթնիկական ծագում ունեցող ցեղեր, որոնք ստեղծեցին մանր իշխանություններ: Այդ ցեղային խմբերից էին՝ կուտիները, լուլուբեյները, կասսիտները, խուրրիները, իրանախոս տարբեր ցեղեր, արամեացիները և այլն: Իսկ Ք.ա. IX-VIII դդ. ընթացքում, Մարաստանի տարածքներում բնակչության թվաքանակի ավելացում է նկատվում, իսկ արդեն Ք.ա.

---

<sup>55</sup> Eph'al I., "Arabs" in Babylonia in the 8<sup>th</sup> century B.C., Journal of the American Oriental Society, 94, 1974, pp. 108-115.

<sup>56</sup> Brinkman J. A., Prelude to Empire, p. 57 n. 268.

<sup>57</sup> Borger R., Die Inschriften Asarhaddons, Königs von Assyrien, Graz, 1956, S. 52:12; Brinkman J.A., Prelude to Empire, pp. 106, 183, 188.

VII դ. Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմուտքում և հարակից շրջաններում աճում է մարերի ազդեցությունը: Դարերի ընթացքում իրանալեզու՝ մասնավորապես պարսկական, և ոչ իրանալեզու էթնիկական տարրերի անընդհատ տեղաշարժերի արդյունքում փոփոխման էին ենթարկվում նրանցով բնակեցված տարածքների աշխարհագրական սահմանները<sup>58</sup>:

Այսպիսով, տարածաշրջանում, վերոհիշյալ ժամանակաշրջանում էթնոքաղաքականությունը որպես երկրի արտաքին ու ներքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչ՝ ընդգծված հանդես էր գալիս Ասորեստանում և Վանի թագավորությունում: Այս պարագայում այն կրում է զուտ տարածաշրջանային բնույթ և իրականացվում էր զանգվածային վերաբնակեցումների միջոցով: Իսկ դրանց արդյունքում, ճիշտ է, փոփոխվում էր տվյալ տարածաշրջանի էթնիկական պատկերը, և նվազում էր վերաբնակվողների ըմբոստության հավանականությունը<sup>59</sup>, այս էլ միայն ուժեղ ռազմական մեքենայի պարագայում, սակայն նույն մեքենայի քայքայումը հանգեցրեց Ասորեստանի և Վանի թագավորության անկմանը: Եվ եթե առաջինում իշխանությունը շարունակում էր գտնվել սեմիտների ձեռքում, ապա Վանի թագավորությունում գրեթե ամբողջապես անցել էր հնդեվրոպացիներին:

Սույն աշխատանքը եզրափակենք Ն. Ադոնցի մեկնաբանությամբ՝ «Այն հեղափոխությունը, որ կատարվեց մեր թվականությունից առաջ VII դարի վերջում և կործանեց Ասորեստանը, Վանի թագավորությունը և բազմաթիվ այլ պետություններ, էական նշանակություն ունեցող մի նոր դարազլուխ բացեց մարդկության պատմության մեջ: Այն հեղաշրջեց հին աշխարհի քաղաքական պատկերը: Սեմականությունը, որ դարեր ի վեր ապահովել էր իր համար առաջին տեղը պատմության թատերաբեմին, վերացավ, առաջնությունը զիջելով հնդեվրոպական տարրին»<sup>60</sup>:

Իհարկե, անվանի գիտնականն իրավացի է, սակայն այդ տեսակետին պետք է բավականին զգույշ մոտենալ, քանզի, ինչպես

<sup>58</sup> Diakonoff I., *Media, The Cambridge History of Iran*, Cambridge, 1985, vol. 2, p. 36ff.

<sup>59</sup> Oded B., *Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire*, pp. 41-54.

<sup>60</sup> Ադոնց Ն., *Հայաստանի պատմություն*, Երևան, 1972, էջ 287:

արդեն նշեցինք, եթե քաղաքական առումով գերիշխանությունը գտնվում էր վերջիններիս ձեռքում, ապա մշակութային առումով առաջինները բավականին ուշ զիջեցին իրենց տեղը:

ROOSLAN TSAKANYAN

### **THE POLICY OF MASS DEPORTATIONS IN ASSYRIA AND KINGDOM OF VAN IN VIII-VII CENTURIES B.C.**

Discussing the problems of the policy of mass deportations of the Assyrian and Urartian kings' it may be assumed that in both countries it was almost the same character. But it is possible that the policy of mass deportations' against conquered peoples in their countries was originally recorded in the state of Van. Moreover it is not excluded that the Assyrians could borrow this policy from the Van kingdom. They carried out displacements of population by force generally with the political purpose in Assyria, with the economic purpose in kingdom of Van. Such policy caused ultimately, in both countries changes of the ethnic picture and as a result, the decline of both states. In addition the author offers Akkadian verb *nasālū* (*našālū*, *iss(š)uŕ*)- «to root out», «destroy», «drive», and the Urartian verb *tamŕ* (*u*)?, *tašm(u)*?, *naŕ* (*u*)? - «displace» as terms for the mass deportations' policy.

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

### ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ Ք.Ա. VI-IV ԴԱՐԵՐՈՒՄ

Պատմահայր Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան Պարսկաստանի XVI սատրապությանը, գրում է. «Պարթևները, քորասմները, սոգդերը և արեյները վճարում էին երեք հարյուր տաղանդ հարկ. սա տասնվեցերորդ նահանգն էր»<sup>1</sup>: Հերոդոտոսը տարբեր առիթներով մի քանի անգամ ևս հիշատակում է նշված ժողովուրդներին: Տեղեկությունում առաջինը հիշատակված պարթևների սկզբնական պատմության մասին մինչև քոչվոր պարսների ներխուժումը Պարթևք գրեթե ոչինչ հայտնի չէ<sup>2</sup>:

Պարթևները հիշատակվում են Հերոդոտոսի հետևյալ տեղեկությունում, որը, ելնելով քննության շահեկանությունից, մեջբերում ենք ամբողջությամբ. «Ասիայում կա մի դաշտավայր, բոլոր կողմերից լեռներով շրջապատված, իսկ այդ լեռներով անցնում են հինգ նեղ կիրճեր: Այս դաշտավայրը հնում պատկանել է քորասմներին և գտնվում է նույն քորասմների, հյուրկանների, պարթևների, սարանգների և թամանների սահմաններում: Պարսից իշխանության հաստատումից հետո այն արդեն պատկանում է (պարսից) արքային: Արդ, դաշտավայրը շրջափակող լեռից հոսում է մի մեծ գետ, որի անունն է Ակես: Այս գետը, բաժանված լինելով հինգ թևի, հնում յուրաքանչյուր թևով ոռոգում էր վերոհիշյալ ժողովուրդներից յուրաքանչյուրի երկիրը, քանի որ ամեն մի կիրճից մի թև էր հոսում: Բայց պարսից իշխանության տակ ընկնելուց հետո այդ երկրների վիճակը այսպիսին եղավ: Արքան լեռների այդ կիրճերը փակելով, յուրաքանչյուր կիրճում (ջրարգելակ) դռներ շինեց: Այս պատճառով էլ ջրի ելքը փակվեց և լեռներով շրջափակված դաշտավայրը դարձավ

<sup>1</sup> Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, 93 (այսուհետև՝ Հերոդոտոս):

<sup>2</sup> Массон М., Некоторые новые данные по истории Парфии, Вестник древней истории, 1950, 3, с. 41 и след.; Фрай Р., Наследие Ирана, Москва, 1972, с. 79, 244.

լիճ, քանի որ դաշտավայր մտնող գետը ոչ մի ելք չուներ: Արդ, նրանք, ովքեր հնում օգտագործում էին այդ ջուրը (ոռոգման համար), այժմ դրանից զրկված լինելով, մեծ աղետի մեջ ընկան: Քանզի ճմռանը աստված նրանց անծրև է պարզևում, ինչպես և մյուս մարդկանց, բայց նրանց ցանած կորեկը և քնջուրը ջրի կարիք ունեն ամռանը: Ու քանի որ նրանց ոչ մի ջուր չի տրվում, ապա նրանք իրենց կանանց հետ միասին գալիս են Պարսկաստան և, կանգնելով արքայի դռների առաջ, աղաղակում են ողբագին, մինչև որ արքան հրամայում է (ջրարգելակ) դռները բաց անել դեպի ջրի առավել կարիք ունեցողների կողմը: Երբ սրանց հողերը լիովին հագնում են, արքան հրամայում է բաց անել մյուս դռները նրանց համար, ովքեր արդեն այժմ մյուսներից ավելի (ջրի) կարիք ունեն: Ինչպես ես լսել և իմացել եմ (Հերոդոտոսը - Խ.Հ.), (ջրարգելակ) դռները բացելու համար (արքան), հարկերից բացի, մեծ գումարներ է վերցնում»<sup>3</sup>:

Այս տեղեկության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Այսպես, որոշ ուսումնասիրողներ այս տեղեկությունը դիտել են որպես արհեստական ոռոգման մասին հաղորդում և Ակես գետը չեն նույնացրել որևէ գետի հետ, այն դեպքում, երբ Ակեսը նույնացվել է Օքոս, Օքոսոս, Մուրղաբ, Հարիռուդ, Հիլմենդ, Ամու-Դարյա գետերից որևէ մեկի հետ<sup>4</sup>: Ակեսը հիմնականում նույնացվել է Հարիռուդ գետին<sup>5</sup>:

Հերոդոտոսի տեղեկության մեջ կա աշխարհագրական խառնաշփոթ, ինչը պայմանավորված է Հերոդոտոսի ձեռք բերած բանավոր տեղեկությունների բազմազանությամբ: Անշուշտ, տեղեկության մեջ արտացոլվել են Աքեմենյանների ժամանակ իրականացված ոռոգման աշխատանքները, և նկատի ունենալով նշված ժողովուրդների բնակության տարածքները՝ անհնար է Ակես գետի նույնացումը մի որոշակի գետի հետ, որի ջրերից կօգտվեին այդ բոլոր ժողովուրդները: Հետևաբար, Հերոդոտոսի ամբողջ

---

<sup>3</sup> Հերոդոտոս, III, 117:

<sup>4</sup> Доватур А., Каллистов Д., Шишова И., Народы нашей страны в «Истории» Геродота, Москва, 1982, с. 201 (այսուհետև՝ Դ.Կ.Մ.).

<sup>5</sup> Дьяконов И., История Мидии, Москва-Ленинград, 1956, с. 357; Фрай Р., նշվ. աշխ., էջ 65; Дьяконов М., Очерк истории древнего Ирана, Москва, 1961, с. 64.

տեղեկությունը պետք է քննել առանձին հատվածներով: Քորասմների, հյուրկանների, պարթևների, սարանգների և թամանների համատեղ հիշատակությունը ցույց է տալիս ոչ թե այդ ժողովուրդներից յուրաքանչյուրի բնակության տարածքն առանձին վերցրած, այլ Աքեմենյան երկու՝ XIV և XVI սատրապությունների ընդհանուր տարածքը<sup>6</sup>, հետևաբար Հերոդոտոսի հիշատակած դաշտավայրը համապատասխանում է Արեյային, որը Ստրաբոնը նկարագրում է որպես լեռներով շրջափակված դաշտավայր<sup>7</sup>: Արեյան վարչական առումով մտնում էր XVI սատրապության կազմի մեջ, որից հարավ գտնվում էին սարանգները և թամանները՝ XIV սատրապության կազմում<sup>8</sup>: Այսպիսի նույնացման դեպքում էլ Ակես գետը համապատասխանում է Արիուս գետին՝ ներկայիս Հարիռուդին, որը հոսում է Արեյայով<sup>9</sup>: Տեղեկության սկզբնամասում քորասմների առանձին հիշատակությունը սրանց կապում է ոչ թե Օքսոսի ստորին հոսանքի շրջանի հետ, ինչն արդեն մյուս ժողովուրդների հիշատակության պարագայում չի տեղավորվում տեղեկության շարունակության ընդհանուր տրամաբանության մեջ, այլ պարթևներից դեպի արևելք՝ Ք.ա. VI դ. վերջին զբաղեցնելով Թուրքմենահորասանական լեռների արևելյան մասը և Թաջանդ-Հարիռուդի հովիտը<sup>10</sup>: Այս վերջին հանգամանքը նույնպես հետազոտողների շրջանում տարակարծությունների տեղիք է տվել: Ուսումնասիրողների մեծ մասը, հենվելով Հերոդոտոսի III, 117 տեղեկության վրա, ենթադրում է հորեզմի գլխավորությամբ մինչաքեմենյան խոշոր պետական կազմավորման գոյության մասին, որի կենտրոնը գտնվել է հորեզմի օազիսում, և այդ թագավորության տիրապետությունը

---

<sup>6</sup> Անշուշտ, հյուրկանների ներառումը XVI սատրապության կազմի մեջ Դարեհի վարչական վերափոխումներից հետո հնարավոր չէ, չնայած մինչև Դարեհի գահակալումը Պարթևքը և Վրկանը կազմել են մեկ սատրապություն:

<sup>7</sup> Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, XI, 10, 1. Հմմտ. Пьянков И., Хорасмии Гекатея Милетского, Вестник древней истории, 1972, 2, с. 11.

<sup>8</sup> Հերոդոտոս, III, 93:

<sup>9</sup> The Geography of Strabo, with an English translation by H.L. Jones, vol. V, Cambridge-Massachusetts-London, 1969, XI, X, 1; 5; XI, 5.

<sup>10</sup> Пьянков И., Хорасмии Гекатея Милетского, с. 10.

տարածվել է XVI սատրապության մեջ մտնող ժողովուրդների վրա<sup>11</sup>: Սակայն Խորեզմի միավորման հիմնական կենտրոնները ավելի շուտ եղել են պարթևներից դեպի արևելք ընկած տնտեսապես զարգացած Մերվի և, հնարավոր է, Հերաթի շրջանները, որտեղից էլ պարսիկների ճնշման տակ քորասմները աստիճանաբար շարժվում են Ամու-Դարյայի ստորին հոսանքի շրջան՝ ներկայիս Խորեզմի օազիս<sup>12</sup>: Խորեզմը նվաճվում է Կյուրոսի կողմից Ք.ա. 545-539 թթ. միջև ընկած ժամանակահատվածում<sup>13</sup>:

Յ. Մարկվարտը, որին հետևել են բազմաթիվ ուսումնասիրողներ, Խորեզմին նույնացնում էր, այսպես կոչված, «իրանական (արիական) տարածությունը» *Airyānəθm vaējah*<sup>14</sup>, որը հիշատակվում է «Ավեստայում»՝ որպես իրանական (արիական) ցեղերի բնակության վաղ շրջան<sup>15</sup>: Սակայն այդ բնակության շրջանի հետ նույնանում է ոչ թե բուն, այլ Մեծ Խորեզմը<sup>16</sup>:

Խորասմներին պարթևներից արևելք և Խորասմի քաղաքը հիշատակում է Հեկատեոս Միլեթացին<sup>17</sup>: Խորասմներին խորոմներ-խորամներ անունով հիշատակում է Կտեսիասը<sup>18</sup>, իսկ Ստրաբոնը

---

<sup>11</sup> Д.К.Ш., с. 199; Таиров А., Кочевники Арало-Каспия и Хорезм в V-IV вв. до н. э., Вестник Челябинского государственного университета, 2005, т. 10, 1, с. 53-63. Ուսումնասիրողը խորասմներին համարում է սակեր (անդ., էջ 53):

<sup>12</sup> Д.К.Ш., с. 199. St'u նաև Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н.э., Вестник древней истории, 1965, 2, с. 42. Հմմտ. Frye R., *The History of Ancient Iran*, München, 1983, pp. 18, 112; նույնի, *The Heritage of Central Asia*, Princeton, 1998, p. 85.

<sup>13</sup> Дандамаев М.А., *Иран при первых Ахеменидах*, Москва, 1963, с. 106. Խորեզմի նվաճումը դնում են նաև Ք.ա. 539-530 թթ. միջև, այսինքն Բաբելոնի անկումից հետո (տե՛ս, օրինակ, Массон В., *Древнеземледельческая культура Маргианы, Материалы и исследования по археологии СССР*, вып. 73, Москва-Ленинград, 1959, с. 137):

<sup>14</sup> Frye R., *The History of Ancient Iran*, p. 61.

<sup>15</sup> Marquart J., *Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i*, Berlin, 1901, S. 155. St'u նաև՝ *History of Civilizations of Central Asia*, ed. J. Harmatta, vol. II, Paris, 1996, p. 42.

<sup>16</sup> Гафуров В., *Таджики: Древнейшая, древняя и средневековая история*, Москва, 1972, с. 37 и след.

<sup>17</sup> Müller C., *Fragmenta historicorum graecorum*, vol. I, Parisiis, 1841, fr. 173, p. 12.

<sup>18</sup> Пьянков И., *Средняя Азия в известиях античного историка Ктесия (текст, перевод, примечания)*, Душанбе, 1975, с. 49, 93.



խորասմներին հիշատակում է որպես մասսագետների և սակերի ցեղերից մեկը<sup>19</sup>:

Վերը կատարված քննությունը թույլ է տալիս համաձայնվել նաև Ի. Պյանկովի հետևյալ դիտարկման հետ: Վիթխարի տարածք ընդգրկած XVI սատրապության վճարած հարկը տարեկան կազմել է երեք հարյուր տաղանդ, այն դեպքում, երբ գրեթե նման տարածք ունեցող XIV սատրապությունը վճարել է վեց հարյուր տաղանդ հարկ<sup>20</sup>: Հնարավոր է, որ XVI սատրապության ժողովուրդները բացի ամենամյա հարկից Աքեմենյան արքունիքին վճարել են նաև առանձին հարկ՝ օգտվելով ոռոգման համակարգից<sup>21</sup>: Համենայն դեպս, XVI սատրապության մեջ մտած Սոգդիանան և Խորեզմը, ըստ *DSF* արձանագրության, այլ պարտավորություններ ևս ունեցել են Աքեմենյանների հանդեպ և պալատական շինարարության համար տրամադրել են համապատասխանաբար լաջվարդ, սարդիոն և փիրուզ<sup>22</sup>:

Հերոդոտոսի կողմից Սոգդի ներառումը Պարթևքի, Խորեզմի և Արեյայի հետ XVI սատրապության կազմում մասնագիտական գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տվել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված երկրները հին պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակվում են որպես առանձին սատրապություններ<sup>23</sup>: Սակայն նկատենք, որ հին պարսկական սեպագիր արձանագրություններում հիշատակված հպատակ երկրները չեն ներկայացնում Աքեմենյան Պարսկաստանի սատրապական բաժանման համակարգը<sup>24</sup>: Ուսումնասիրողների կարծիքով, Սոգդը միշտ էլ կապված է եղել Բակտրիայի հետ և

---

<sup>19</sup> Strabo, XI, 8, 8. Խորեզմ անվան բացատրությունները՝ «արևային երկիր», «լավ երկիր» և այլն, բավարար չեն (տե՛ս Фрай Р., նշվ. աշխ., էջ 72):

<sup>20</sup> Հերոդոտոս, III, 93:

<sup>21</sup> Пьянков И., Хорасмии Гекатея Милетского, с. 12.

<sup>22</sup> Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2<sup>nd</sup> ed., New Haven, 1953, p. 144.

<sup>23</sup> Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, p. 298; Дьяконов И., նշվ. աշխ., էջ 346: Массон В., Древнеземледельческая культура Маргианы, с. 148; История таджикского народа, т. I, Москва, 1963, с. 203 (այսուհետև՝ ИТН):

<sup>24</sup> Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Երևան, 2010, էջ 7-8:

Մարգիանայի հետ մտել է բակտրիական միավորման մեջ<sup>25</sup>: Ըստ էության, այս կարծիքը հիմնված է Բեհիսթունի արձանագրության այն տեղեկության վրա, համաձայն որի Մարգիանան մտել է Բակտրիայի սատրապության կազմի մեջ<sup>26</sup>: Հետևաբար, եթե նկատի ունենանք, որ Պարթևքի և Սոգդի միջև ընկած Մարգիանան մտել է Բակտրիայի սատրապության մեջ, ապա Մարգիանայից հյուսիս-արևելք ընկած Սոգդի գտնվելը Բակտրիայի սատրապության կազմի մեջ հավանական է: Այսպիսի կացությունը հնարավոր էր մինչև Դարեհ Ա-ի կողմից կատարված համապետական վարչական վերափոխումները: Սակայն Հերոդոտոսի մոտ պահպանված սատրապությունների ցուցակի ուսումնասիրությունը բացահայտում է վարչական նոր իրողությունների հաստատումը Աքեմենյան պետությունում: Ամենայն հավանականությամբ ապստամբությունների ճնշումից և վարչաքաղաքական վերափոխումներից հետո վիթխարի մարդկային կորուստներ կրած Մարգիանան<sup>27</sup> ներառվում է XVI սատրապության կազմում, քանի որ միայն այս դեպքում տրամաբանական կլինի պարթևների, քորասմների, սոգդերի և արեյների համատեղ հիշատակությունը մեկ սատրապության մեջ, ընդ որում Բակտրիայի սատրապությունն էլ Մարգիանայի փոխարեն ստանում է Այգլերի երկիրը<sup>28</sup>:

Ի. Դյակոնովի կարծիքով, XVI սատրապությունը համընկել է հին Խորեզմի պետության և նրանից կախյալ տարածքների հետ, կամ էլ Դարեհ Ա-ի օրոք սատրապության կառավարումը հանձնված է եղել Դարեհ Ա-ի հորը՝ Վշտասպին, որը Բեհիսթունի արձանագրությունում հիշատակվում է որպես Պարթևքի սատրապ<sup>29</sup>: Այս կապակցությամբ նկատենք, որ ելնելով Բեհիսթունի արձանագրության տվյալներից՝ Վշտասպը Դարեհի դեմ ուղղված ապստամբությունների ժամանակ ոչ

---

<sup>25</sup> Бартольд В., Сочинения, т. III, Москва, 1965, с. 25; Массон В., նշվ. աշխ., էջ 149; ИТН, с. 159.

<sup>26</sup> «Դարեհ Վշտասպի Բիսթունյան արձանագրությունը» (թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Գ. Նալբանդյանի), Երևան, 1964, էջ 18: Kent R., նշվ. աշխ., էջ 127:

<sup>27</sup> Дандамаев М., Иран при первых Ахеменидах, с. 224.

<sup>28</sup> Հերոդոտոս, III, 92:

<sup>29</sup> Дьяконов И., նշվ. աշխ., էջ 348, 438:

միայն Պարթևքի, այլ նաև Վրկանի սատրապն էր<sup>30</sup>: Ապստամբությունների ճնշումից և Դարեհ Ա-ի վարչաքաղաքական վերափոխումներից հետո Պարթևքը և Վրկանը ներառվում են առանձին՝ առաջինը՝ XVI, իսկ երկրորդը, նկատի ունենալով կասապրկան նույնացումը, XI սատրապությունների մեջ<sup>31</sup>: Հնարավոր է, որ XVI սատրապության ձևավորումից հետո Վշտասպը նշանակվում է այդ ընդարձակ վարչական միավորի սատրապ, կամ էլ սատրապության ղեկավարումը հանձնվում է Աքեմենյան տոհմի ներկայացուցիչներին:

Սոգը կամ Սոգդիանան, հավանաբար, ըստ Ի. Դյակոնովի, մտել է Մարաստանի տերության կազմի մեջ<sup>32</sup>: Կյուրոսի կողմից Սոգդի նվաճման մասին վկայում է Սոգդիանայի հյուսիսային սահմանների մոտ Կյուրոպոլիս քաղաքի հիմնադրումը<sup>33</sup>: Համաձայն հին աղբյուրների՝ Սոգդիանայի մայրաքաղաքն էր Մարականդան՝ ներկայիս Սամարղանդը<sup>34</sup>:

Սոգդերը մասնագիտական գրականության մեջ համարվել են սակերի ցեղերից մեկը, որը վաղ անցավ նստակեցության: Այս տեսանկյունից սակեր և Սոգդ (հին պարսկ. *Sug<sup>u</sup>da*, ավեստ. *Suyda*) անվանումները ստուգաբանորեն համադրվել են, ինչը չի ընդունվել Ի. Դյակոնովի կողմից<sup>35</sup>: Ջ. Հարմատտան սոգդերի անունը բացատրում է «*burnt with fire*», այսինքն՝ «մաքրված, մաքուր, սուրբ» և կապում

---

<sup>30</sup> «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», էջ 17-18: Kent R., նշվ. աշխ., էջ 124, 127; Խորիկյան Հ., նշվ. աշխ., էջ 11:

<sup>31</sup> Տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2006, 1, էջ 147-157:

<sup>32</sup> Дьяконов И.М., նշվ. աշխ., էջ 349, 358:

<sup>33</sup> Arrian, *Anabasis Alexandri*, with an English translation by E. Iliff Robson, vol. I-II, Cambridge-Massachusetts-London, 1958-1961, IV, 3; Страбон, XI, 11, 4; Rufus Curtius Quintus, *History of Alexander*, with an English transl. by John C. Rolfe, vol. I-II, Cambridge-Massachusetts-London, 1956 (Loeb Classical Library), VII, VI, 16, 19-20.

<sup>34</sup> Пьянков И., Мараканды, Вестник древней истории, 1970, 1, с. 35; Д.К.Ш., с. 197. Մարականդայի մասին հին աղբյուրների տեղեկությունները տե՛ս Пьянков И., Древний Самарканд (Мараканды) в известиях античных авторов, Душанбе, 1972, с. 10-20.

<sup>35</sup> Дьяконов И., նշվ. աշխ., էջ 244: Արիանոսը հիշատակում է սոգդեր անունով հնդկական մի ցեղ (տե՛ս Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987, էջ 222):

կրակի մինչգրադաշտական պաշտամունքի հետ<sup>36</sup>, հետևաբար *Sugda* նշանակել է «Սրբազան երկիր»<sup>37</sup>: Սոգդերի լեզուն մտել է իրանական լեզվաընտանիքի մեջ<sup>38</sup>:

Աշխարհագրական առումով սոգդերը բնակվել են Բուխարայի, Սամարղանդի օազիսներում և, հավանաբար, զբաղեցրել Ֆերգանայի բերրի դաշտի որոշ մասը և այլ հարակից տարածքներ: Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից սկսած կարելի է խոսել սոգդերի համայնքների մասին արևելքում, ընդհուպ մինչև Չինաստան<sup>39</sup>:

Ինչ վերաբերում է արեյներին (հին պարսկ. *Haraiva*)<sup>40</sup>, ապա սրանց բնակության հիմնական տարածքը համապատասխանում է Թաջանդ-Հարիռուդ գետի հովտին, Հերաթի շրջանին, որը նվաճվել էր Մարաստանի կողմից<sup>41</sup>: Հարիռուդ գետը Ստրաբոնը և Պտղոմեոսը անվանում են *Arios* և *Areias*<sup>42</sup>, իսկ երկիրն էլ՝ *Aria* և *Areia*: Հավանաբար, հին հեղինակները գետանունը և երկրանունը շփոթել են «արիացի» տերմինի հետ: Ռ. Ֆրայի կարծիքով, Հերաթի տարածքում է տեղի ունեցել արիացիների հիմնական բաժանումը՝ մի մասը շարժվել է Հնդկաստան, մյուս մասը՝ արևմուտք: Ճարունակելով միտքը՝ ուսումնասիրողը եզրակացնում է, որ «արևելքի պարսիկները» կենտրոնացել են հենց Հերաթի շրջանում կամ էլ վերջինիս բնակչությունը իրեն համարել է «արիացիներ»՝ իրանական (և զրադաշտական) ավանդությունում հենվելով իրենց երկրի նշանակության վրա: Սակայն Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո Արիա անվանումը էրատոսթենեսի մոտ<sup>43</sup>

<sup>36</sup> Harmatta J., The Origin of the Name Σόγδοι, Acta classica Universitatis Debrecensis, 1977, XIII, p. 6.

<sup>37</sup> Szemerényi O., Four Iranian ethnic names: Scythian-Skudra-Sogdian-Saka, Wien, 1980, p. 46.

<sup>38</sup> History of Civilizations of Central Asia, p. 47.

<sup>39</sup> Фрай П., նշվ. աշխ., էջ 72:

<sup>40</sup> Ըստ Ե. Հերցֆելդի՝ արեյներն առաջին անգամ հիշատակվում են Սարգոնի «Տարեգրություններ»-ում՝ “Aribi of the rising sun” (տե՛ս Herzfeld E., նշվ. աշխ., էջ 330):

<sup>41</sup> Дьяконов И., նշվ. աշխ., էջ 358:

<sup>42</sup> Claudii Ptolemaei Geographia, ed. C.F.A. Noebbe, t. II, Lipsiae, 1845, VI, 17, 2. Հմմտ. Արիանոս, էջ 137: Գետի անունը մեկնաբանվում է «հոսող» (տե՛ս Фрай П., նշվ. աշխ., էջ 80):

<sup>43</sup> Страбон, XV, II, 8.

առաջին անգամ դառնում է Արիանա, որը պարթևական շրջանում լայն ընկալմամբ՝ *Aryānšahr* «արիացիների թագավորություն» ընդգրկում էր ամբողջ արևելյան Իրանը, բացառությամբ Բակտրիայի ու հյուսիսային տարածքների, և համապատասխանում Պարթևական թագավորությանը<sup>44</sup>:

XVI սատրապության վարչական կացության մասին կարևոր տեղեկություններ է պարունակում Հերոդոտոսի հետևյալ հաղորդումը: Հույն պատմիչը, նկարագրելով Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմը, գրում է. «Արիները զինված էին մեղական աղեղներով. նրանց մնացած հանդերձանքը բակտրիացիների նման էր: Արիներին առաջնորդում էր Հյուդառնեսի որդի Սիսամնեսը: Պարթևները, քորասմները, սոգդերը, գանդարները և դադիկները արշավել էին բակտրիացիների նման հանդերձանք ունենալով: Նրանց առաջնորդում էին հետևյալները: Պարթևներին և քորասմներին՝ Փառնակեսի որդի Արտաբազոսը. սոգդերին՝ Արտայոսի որդի Ազանեսը. գանդարներին և դադիկներին՝ Արտաբանոսի որդի Արտյուփիոսը»<sup>45</sup>: Տվյալ տեղեկության մեջ հիշատակված ժողովուրդները, բացառությամբ արիների կամ արեյների մեղական աղեղների, հանդես են գալիս բակտրիական սպառազինությամբ: Սակայն տեղեկության ուշադիր քննությունը բացահայտում է մի շարք կարևոր իրողություններ:

Քսերքսեսի բանակի նկարագրությունն իր նշանակությամբ համեմատվում է սատրապությունների հերոդոտոսյան ցուցակի հետ և ներկայացնում է Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգը Քսերքսեսի գահակալության ժամանակ: Օրինակ, XVI սատրապության կազմը Քսերքսեսի գահակալության ժամանակ ենթարկվել է փոփոխությունների: Արիների կամ արեյների և սոգդերի առանձին հրամանատարությունների տակ հիշատակվելը ցույց է տալիս, որ Դարեհի ժամանակ ձևավորված XVI սատրապության էթնիկական կազմը ենթարկվել է վերափոփոխությունների, և

---

<sup>44</sup> Фрай Р., նշվ. աշխ., էջ 80-81: Արիանան ընդգրկում էր Միջագետքի և Հնդկաստանի միջև ընկած տարածքը (տե՛ս Roller D.W., Eratosthenes' Geography, Princeton and Oxford, 2010, pp. 181, 226):

<sup>45</sup> Հերոդոտոս, VII, 66:

տարածքն էլ կրճատվել է: XVI սատրապության կազմում, փաստորեն, դատելով պարսկական բանակի էթնիկական կազմի նկարագրությունից, շարունակում էին մնալ քորասմները և պարթևները: Աշխարհագրական առումով Սոգդի առանձին սատրապություն լինելը միանգամայն հավանական է, իսկ Արեյան թերևս միավորվել է Մարգիանայի հետ, չնայած վերջինս կարող էր ներառված լինել նաև Բակտրիայի սատրապության մեջ: Սակայն առավել հավանական է, որ Արեյան և Մարգիանան միավորված են եղել մեկ սատրապության մեջ<sup>46</sup>:

XVI սատրապության վարչական նոր փոփոխությունների մասին վկայում են Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները նկարագրող հին հեղինակները: Ըստ Արիանոսի՝ Գավգամելայի ճակատամարտին ներկայացած սոգդերը բակտրիացիների հետ միասին միևնույն սատրապության մեջ են<sup>47</sup>, Արեյան առանձին սատրապություն է, իսկ պարթևները վրկանների և տապուրների հետ ներկայանում են առանձին սատրապի՝ Թրատաթերնի իշխանության տակ<sup>48</sup>: Վրկանը և Պարթևստանը՝ որպես մեկ սատրապություն<sup>49</sup>, ինչպես նաև Արեյան<sup>50</sup>, հիշատակվում են Արիանոսի այլ տեղեկություններում ևս<sup>51</sup>: Արիանոսը

---

<sup>46</sup> Հմմտ. Frye R., The History of Ancient Iran, p. 112.

<sup>47</sup> Frye R., The Heritage of Central Asia, p. 99.

<sup>48</sup> Արիանոս, էջ 97: Ռուփոսը սոգդերին և պարթևներին հիշատակում է առանձին, ինչը կապված է մարտադաշտում նրանց զբաղեցրած դիրքով (տե՛ս Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987, էջ 350-351):

<sup>49</sup> Տե՛ս նաև Страбон, XI, IX, 1.

<sup>50</sup> Արիանոս, էջ 118, 121: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 422, 454: Մի տեղում Արիանոսը արիացիներին և սարանգներին հիշատակում է միևնույն սատրապության մեջ (տե՛ս Արիանոս, էջ 236): Չբացառելով նման սատրապության գոյությունը՝ կարելի է նաև ենթադրել, որ արիացիների փոխարեն պետք է նշված լինեին արաքոսիացիները (անդ., էջ 114):

<sup>51</sup> Արիանոս, էջ 116, 118, 121, 124, 137, 152, 193, 236: Տապուրներն ունեին առանձին սատրապ (անդ., էջ 118-119), որի իշխանությունը տարածվում էր հերոդոտյան XI սատրապության նախկին տարածքի մի մասի վրա: Ավելի ուշ Ալեքսանդրը տապուրներին, մարդերին և Վրկանը միավորում է, ըստ էության Պարթևստանի հետ, մեկ սատրապության մեջ (տե՛ս Ռուփոս, էջ 498): Ռուփոսը հիշատակում է Վրկանի սատրապ Մանապին (անդ., էջ 416): Ռուփոսի համար անկախ վարչական բաժանումից յուրաքանչյուր երկիր թերևս մի սատրապություն էր, կամ էլ Ալեքսանդրը արշավանքների

հիշատակում է Արեւայի Սուսիա քաղաքը և նստավայր Արտակոնանան<sup>52</sup>: Ստրաբոնը Արեւյան և Դրանգիանան՝ սարանգների երկիրը, համարում է մեկ սատրապություն, ընդ որում՝ հույն հեղինակի համար Արեւյան բուն երկրի անվանումն է, իսկ Արիանան օգտագործում է իր ժամանակների համար՝ նկատի ունենալով արևելյան Իրանի ընդարձակ տարածքները<sup>53</sup>: Ինչ վերաբերում է խորասմներին, ապա սրանց Արիանոսը կապում է արդեն Ամու-Դարյայի ստորին հոսանքի շրջանի հետ<sup>54</sup>:

Սոգդերը, դատելով Ռուփոսի տեղեկություններից, Աքեմենյան Պարսկաստանի մայրամուտին բակտրիացիների հետ միավորված են եղել միևնույն սատրապության մեջ<sup>55</sup>, և ավելի ուշ Ալեքսանդրը Սոգդիանան դարձնում է առանձին սատրապություն<sup>56</sup>, որը պահպանվում է նաև Ալեքսանդրի մահից հետո<sup>57</sup>: Արիանոսը հիշատակում է նաև Նավթակի երկիրը՝ ներկայիս Շահրիսաբզը<sup>58</sup>, որը մտնում էր Սոգդիանայի մեջ<sup>59</sup>:

Այժմ քննենք Բակտրիայի վարչաքաղաքական բաժանման վերաբերյալ հին աղբյուրների տեղեկությունները: Մասնագիտական գրականության մեջ կան կարծիքներ, ըստ որոնց՝ մինչև Աքեմենյանների կողմից նվաճվելը գոյություն է ունեցել Հին Բակտրիական թագավորությունը, և պատահական չէ, որ զրադաշտական ավանդույթում հիշատակվում է բակտրիական թագավոր Վշտասպը՝ Ջարատուշտրայի հովանավորը: Սակայն Հին Բակտրիական թագավորության գոյության մասին հարցը մնում է վիճելի<sup>60</sup>:

---

ժամանակ, ելնելով պահի թելադրանքից, կատարում էր ժամանակավոր վարչական վերաձևումներ:

<sup>52</sup> Արիանոս, էջ 120-121:

<sup>53</sup> Страбон, II, V, 32; XI, X, 1.

<sup>54</sup> Արիանոս, էջ 149, 176: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 457, 487:

<sup>55</sup> Ռուփոս, էջ 457, 459: Հմմտ. Страбон, XI, VIII, 8.

<sup>56</sup> Արիանոս, էջ 149:

<sup>57</sup> Ռուփոս, էջ 596:

<sup>58</sup> Пьянков И. В., Мараканды, с. 37.

<sup>59</sup> Արիանոս, էջ 125, 152:

<sup>60</sup> Տե՛ս Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, Москва, 1985, с. 29-30; Frye R., The Heritage of Central Asia, p. 68.

Բակտրիան և սակերը արևելյան Իրանի և Միջին Ասիայի հետ նվաճվել էին դեռևս Կյուրոսի կողմից Ք.ա. 545 և 539 թթ. միջև<sup>61</sup>: Պլինիոս Ավագը հաղորդում է, որ Կյուրոսը ավերում է Կապիշա քաղաքը, որը գտնվել է, հավանաբար, ներկայիս Քաբուլից հյուսիս<sup>62</sup>: Արիանոսը հայտնում է, որ Կյուրոսը հարձակվել է հնդիկների վրա, որոնք հավանաբար գանդարիներն են, իսկ արիասպների ցեղն էլ՝ Դրանգիանայի հարավային սահմանի մոտ, օգնում է Կյուրոսին սկյութների դեմ արշավանքում<sup>63</sup>: Ամենահին տեղեկությունը Բակտրիայի մասին պահանվել է Էսքրուեսի «Պարսիկներ» ստեղծագործությունում, որտեղ նշվում է Քսերքսեսի հունական արշավանքին բակտրիացիների մասնակցության մասին<sup>64</sup>:

Բակտրիայի և բակտրիացիների մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Հերոդոտոսը: Պատմահայրը, ներկայացնելով Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունների ցուցակը, Բակտրիայի մասին գրում է. «Բակտրիացիներից մինչև Այգլերի (երկիրը բնակվողները) վճարում էին երեք հարյուր տաղանդ հարկ. սա էլ տասներկուերորդ նահանգն էր»<sup>65</sup>: Բակտրիան և բակտրիացիները տարբեր առիթներով մի քանի անգամ ևս հիշատակվում են Հերոդոտոսի կողմից:

Այսպես, հույն պատմիչը գրում է, որ Կրեսոսին հաղթելուց և գերեվարելուց հետո Կյուրոսին «դեռ խանգարում էին Բաբելոնը և՛ բակտրիական ազգը, և՛ սակերը, և՛ եգիպտացիները: Սրանց դեմ էլ նա

---

<sup>61</sup> Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, с. 28.

<sup>62</sup> Pliny, Natural History, vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, VI, 92. Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, с. 27.

<sup>63</sup> Արիանոս, էջ 123, 232: Կյուրոսը Սոգդիանայում՝ մասսագետների դեմ, հիմնադրում է Կյուրոպոլիս կամ Կյուրեսխատա քաղաքը, որը կործանում են մակեդոնացիները (տե՛ս Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, с. 52-53; Ammianus Marcellinus, with an English translation by J.C. Rolfe, vol. II, Cambridge-Massachusetts-London, 1972, XXIII, 6, 59; Արիանոս, էջ 130-131): Հմմտ. Frye R., The History of Ancient Iran, p. 94.

<sup>64</sup> Տե՛ս Попов А., Греко-бактрийское царство, С.-Петербург, 2008, с. 31, 34.

<sup>65</sup> Հերոդոտոս, III, 92: Տե՛ս նաև Herodotus (with an English translation by A.D. Godley), vol. II, Cambridge-Massachusetts-London, 1957, III, 93, p. 121.



մտադիր էր անձամբ արշավելու...»<sup>66</sup>: Ինչպես նշում են ուսումնասիրողները, Հերոդոտոսը Բակտրիան հիշատակում է Մերձավոր Արևելքի կարևորագույն պետությունների հետ միևնույն շարքում, որոնք խոչընդոտում էին Կյուրոսի կողմից համաշխարհային կայսրության ստեղծմանը<sup>67</sup>:

Քսերքսեսի Հելլադա արշավող բանակի կազմում Հերոդոտոսը բակտրիացիներին հիշատակում է երկու խումբ սակերի հետ՝ «սրածայր բարձր գդակավոր» և մյուրգյան, միևնույն հրամանատարության տակ<sup>68</sup>: Ընդ որում, հաջորդ տեղեկությունից պարզվում է, որ արիները, պարթևները, քորասմները, սոգդերը, գանդարները և դադիկները արշավել էին բակտրիացիների նման հանդերձանք ունենալով<sup>69</sup>, ինչը ցույց է տալիս կայսրության մեջ բակտրիացիների զբաղեցրած առաջնակարգ դերի մասին: Բակտրիացիները արշավանքին տրամադրել էին հեծյալներ<sup>70</sup>: Թեսսալիայում գտնվելու ժամանակ բակտրիացի զինվորները հիշատակվում են սակերի և հնդիկների միջև, իսկ Պլատեայի ճակատամարտում բակտրիացիներից հետո հիշատակվում են հնդիկները և սակերը<sup>71</sup>, որոնք աշխարհագրական առումով ևս Բակտրիայի հարևաններն էին: Հերոդոտոսը բակտրիացիներին և սակերին կողք կողքի հիշատակում է նաև այլ տեղեկությունում՝ խոսելով Բակտրիայի սատրապ Մասիստեսի մասին, որը Քսերքսեսի եղբայրն էր<sup>72</sup>: Հերոդոտոսի մեկ այլ հաղորդումից էլ պարզվում է, որ գերեվարված բարկացիներին պարսիկները Եգիպտոսից տանում և վերաբնակեցնում են Բակտրիայի գյուղերից մեկում, որը կոչվում էր Բարկա<sup>73</sup>:

---

<sup>66</sup> Հերոդոտոս, I, 153: Քսենոփոնը գրում է, որ Կյուրոսը նվաճում է բակտրիացիներին (տե՛ս Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, էջ 5):

<sup>67</sup> Дьяконов М., Сложение классового общества в Северной Бактрии, Советская археология, 1954, XIX, с. 125; ИТН, с. 156 и след.; Гафуров В., Таджики, с. 37 и след.

<sup>68</sup> Հերոդոտոս, VII, 64:

<sup>69</sup> Անդ., VII, 66:

<sup>70</sup> Անդ., VII, 86:

<sup>71</sup> Անդ., VIII, 113; IX, 31:

<sup>72</sup> Անդ., IX, 111; 113: Տե՛ս նաև Геродот, История в девяти книгах, пер. и прим. Г. Стратановского, Ленинград, 1972, IX, 113.

<sup>73</sup> Անդ., IV, 204: Հմմտ. անդ., VI, 9 (հունիացիներին պարսիկները սպառնում են Բակտրիա գերեվարությամբ): Տե՛ս նաև Тревер К., Памятники греко-бактрийского искусства, Москва-Ленинград, 1940, с. 4.

Բակտրիան հիշատակվում է նաև հին պարսկական սեպագիր արձանագրություններում: Բեհիսթունի արձանագրությունում Դարեհ Ա-ին հպատակ երկրների շարքում Խորեզմից հետո հիշատակվում է Բակտրիան, որին հաջորդում են Սոգդը, Գանդարան, Սական<sup>74</sup>: Նույն արձանագրությունում խոսվում է նաև Մարգիանայում բռնկված ապստամբության մասին, որը դաժանաբար ճնշում է Բակտրիայի հավատարիմ սատրապ Դադարշիշը: Ապստամբությունը ճնշելուց հետո Դարեհ Ա-ն հայտարարում է, որ այդ է իր կատարածը Բակտրիայում<sup>75</sup>, ինչը նշանակում է, որ Մարգիանան մինչև Դարեհ Ա-ի վարչական վերափոխումները մտել է Բակտրիայի սատրապության կազմի մեջ<sup>76</sup>: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ՝ Մարգիանայի՝ Բակտրիայի կազմում լինելու մասին հաղորդում է նաև Ռուփոսը<sup>77</sup>: Հին պարսկական մյուս սեպագիր արձանագրություններում Բակտրիան հիմնականում հիշատակվում է Արեյայի և Սոգդիանայի միջև<sup>78</sup>: Արձանագրություններից պարզվում է նաև, որ Բակտրիան Աքեմենյաններին պալատական շինարարության համար տրամադրել է նաև ոսկի<sup>79</sup>:

Բակտրիան և բակտրիացիները աղբյուրներում գրեթե միշտ հիշատակվում են հնդիկների, սոգդերի և սակերի հետ միասին կամ հարևանությամբ: Օրինակ, Գավգամելայի ճակատամարտում բակտրիացիները, սոգդերը, հնդիկները և Դարեհ Գ-ի անմիջական

---

<sup>74</sup> Տե՛ս «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», էջ 8:

<sup>75</sup> Անդ., էջ 18:

<sup>76</sup> Դատելով Բեհիսթունի արձանագրությունից՝ Ֆրադայի՝ Մարգիանայի թագավոր հռչակվելը (տե՛ս Kent R., նշվ. աշխ., էջ 127, 131) խոսում է այն մասին, որ մինչև Աքեմենյանների կողմից նվաճվելը Մարգիանան թերևս թագավորություն է եղել, որը վերացնում են պարսիկները: Մ. Դյակոնովը Բեհիսթունի արձանագրությունում ընդունում է ոչ թե թագավոր, այլ առաջնորդ ընթերցումը, ինչը, նրա կարծիքով, վկայում է այն մասին, որ մարգիանացիները չեն իմացել թագավորական ավանդույթների մասին (տե՛ս Дьяконов М., Очерк истории древнего Ирана, с. 75): Մենք հակված ենք այն կարծիքին, որ գոնե Դարեհ Ա-ի դեմ ուղղված ապստամբությունների ժամանակ Ֆրադան կարող էր իրեն թագավոր հռչակել:

<sup>77</sup> Ռուփոս, էջ 482:

<sup>78</sup> Kent R., նշվ. աշխ., էջ 136, 138, 141, 145, 151, 156:

<sup>79</sup> Անդ., էջ 144: Բակտրիական ոսկու և արծաթի մասին հաղորդում է նաև Կոտեսիասը: Տե՛ս նաև Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 41-42. Հմմտ. Тревер К., Памятники греко-бактрийского искусства, с. 10.

դաշնակիցներ սակերը միավորված են Բակտրիայի սատրապ Բեսի հրամանատարության տակ<sup>80</sup>: Տեղեկությունը խոսում է այն մասին, որ Բեսի սատրապական իշխանությունը տարածվել է նաև սոգդերի և հնդիկների (հավանաբար, Արիանոսը նկատի ունի գանդարիներին<sup>81</sup> ու դադիկներին) վրա: Բակտրիայի սատրապ Բեսի իշխանությունն, իրոք, տարածվել է Սոգդիանայի վրա, ինչի մասին գրում է Արիանոսը<sup>82</sup>: Ռուփոսի տեղեկություններից նույնպես կարելի է ենթադրել, որ Թանահիս-Սիր-Դարյան կազմել է Բակտրիայի սատրապության հյուսիսային սահմանը<sup>83</sup>: Անշուշտ, Բեսը Դարեհ Գ-ի պետության մեջ ունեցել է բացառիկ դիրք, և պատահական չէ, որ հենց նա էլ սպանում է Դարեհին և հռչակվում Ասիայի արքա՝ Արտաքսերքսես անվամբ<sup>84</sup>: Բեսի այս նկրտումները պայմանավորված էին այն կարևոր հանգամանքով, որ Բակտրիան ռազմական և տնտեսական առումով հզոր սատրապություն էր<sup>85</sup>, որտեղ կային խոշոր քաղաքներ. Դրապսակ, Ահորն, մայրաքաղաք Բակտրան, որն իր անունը ստացել է Բակտր գետի անվանումից, Ջարհասպ, ավելի ուշ արդեն Ալեքսանդրի հիմնադրած Ալեքսանդրիան<sup>86</sup>:

---

<sup>80</sup> Արիանոս, էջ 97: Հմմտ. անդ., էջ 169: Ստրաբոնը հայտնում է, որ սակերը նվաճել են Բակտրիանան (տե՛ս Տրաբոն, XI, 8, 4):

<sup>81</sup> Վարչական առումով Գանդարան սկզբում Բակտրիայի հետ կազմել է մեկ սատրապություն (տե՛ս Դանդաмаев М., Луконин В., Культура и экономика древнего Ирана, Москва, 1980, с. 111):

<sup>82</sup> Արիանոս, էջ 125: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 421:

<sup>83</sup> Ռուփոս, էջ 470, 477: Հերոդոտոսի մոտ Սիր-Դարյան համապատասխանում է Արաքս գետին (տե՛ս Հերոդոտոս, I, 201, նաև՝ Ammianus Marcellinus, XXIII, 6, 59): Ստրաբոնը գրում է, որ Օքսոս գետը բաժանում է Բակտրիանան և Սոգդիանան՝ վերջինս տեղադրելով Ամու-Դարյայի և Սիր-Դարյայի միջև (տե՛ս Տրաբոն, II, 1, 15; XI, 11, 2): Օքսոսի տակ կարելի է հասկանալ նաև Ջարաֆշան գետը:

<sup>84</sup> Արիանոս, էջ 120: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 421:

<sup>85</sup> Гафуров В., Таджики, с. 77-78, 83. Պերսեպոլիսի բարձրաքանդակներում բակտրիացիները հարկատու ժողովուրդների թվում 15-րդ տեղում են պատկերված (տե՛ս Դանդамаев М., Луконин В., Культура и экономика древнего Ирана, с. 195): Ըստ Ռուփոսի՝ բակտրիացիները պարսից բանակին տվել են 30 000 հեծյալներ (տե՛ս Ռուփոս, էջ 460):

<sup>86</sup> Արիանոս, էջ 125, 127, 130, 137, 151, 158: Տե՛ս նաև Ռուփոս, էջ 460, 557-558: Ստեփանոս Բյուզանդացին հիշատակում է բակտրիական Ռետիա քաղաքը (տե՛ս Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 41): Համաձայն Ստրաբոնի՝ Բակտրան կոչվել է նաև Ջարհասպա (տե՛ս Տրաբոն, XI, 8, 9; 11, 2): Հույն

Հետաքրքիր են նաև Կտեսիասի տեղեկությունները բակտրիացիների և հարևան ժողովուրդների մասին: Համաձայն Կտեսիասի՝ Կյուրոս Մեծը Կամբյուսեսին նշանակում է իր հաջորդը, իսկ կրտսեր որդուն՝ Թանիոքսարկեսին՝ բակտրիացիների, քորամնանների, պարթևների, կարմանների տիրակալ, իսկ ոմն Սպտիամի որդիներից մեկին նշանակում է դերբիկների, իսկ մյուսին՝ բարկանների սատրապ<sup>87</sup>: Դերբիկները, կարմանները, քորամնանները, բորկանները, պարթևները հիշատակվում են առասպելական Նինոսի կողմից նվաճված ժողովուրդների թվում<sup>88</sup>: Բակտրիացիները դրանց շարքում չեն նշվում և Կտեսիասի կողմից բազմիցս հիշատակվում են որպես հզոր և անկախ ժողովուրդ: Նինոսն առանձին արշավանք է կազմակերպում Բակտրիայի դեմ և համառ դիմադրությունից հետո նվաճում երկիրը՝ տիրանալով մայրաքաղաք Բակտրայի գանձերին<sup>89</sup>:

---

աշխարհագետի Դարապասն, Ադրապասն (անդ. XI, 11, 2; XV, 2, 10), հավանաբար, Դրապասկն է: Վերջինիս նույնանուն է նաև Ամմիանոս Մարկելինոսի հիշատակած Դրեպասն (տե՛ս Ammianus Marcellinus, XXIII, 6, 59):

<sup>87</sup> Пьянков И., Средняя Азия в известиях античного историка Ктесия, с. 93. Նշենք նաև, որ Քսենոփոնի այն տեղեկությունը, թե Կյուրոսն իր Տանաոքսարես (իմա՝«մարմնով հզոր») որդուն կարգում է մեղացիների, արմենների և կադուսիների սատրապ (տե՛ս Xenophon, Cyropaedia (with an English translation by Walter Miller), vol. II, Cambridge-Massachusetts-London, 1960, vol. II, pp. 428-429), չի համապատասխանում իրականությանը, քանի որ Տանաոքսարեսի՝ Բարդիայի տիրույթները գտնվել են Միջին Ասիայում, և Քսենոփոնը փոխել է Կտեսիասի մոտ հիշատակվող երկրների անունները (տե՛ս Пьянков И., Сведения Ктесия о владениях Бардии на востоке Ирана, Вестник древней истории, 1961, 4, с. 98-103, հմմտ. Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, с. 66): Քսենոքսեսի մահից հետո նրա որդիներից մեկը՝ Հյուստասպեսը, ապստամբում է Արտաքսերքսես Ա-ի դեմ Բակտրիայում և պարտվում (տե՛ս Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. II, Lipsiae, 1826, XI, 69, p. 71; Rawlinson H., The Bactrian Empire under the Greek Dynasties, Bombay, 1909, pp. 21-22; Olmstead A., History of the Persian Empire, Third impression, Chicago, 1960, p. 290; Попов А., Греко-бактрийское царство, с. 36):

<sup>88</sup> Пьянков И., Средняя Азия в известиях..., с. 49. Հմմտ. Քսենոփոն, Կյուրոպեդիա, էջ 35: Ասորեստանյան զորքերը արևելյան ուղղությամբ չեն անցել մարական շրջաններից այն կողմ (տե՛ս Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, с. 28-29):

<sup>89</sup> Пьянков И., Средняя Азия в известиях..., с. 55-61. Նիկողայոս Դամասկոսցին գրում է, որ Մեդիային հաղթելուց հետո Կյուրոս Բ-ին են ներկայանում հյուրկանների, պարթևների, սակերի, բակտրիացիների և մյուս ժողովուրդների սատրապները՝ հայտնելով իրենց հպատակությունը (տե՛ս Müller C., Fragmenta historicorum graecorum, vol. III, Parisiis, 1849, p. 406, fr. 66):

Կտեսիասի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Բակտրիան հյուսիսում տարածվել է մինչև Թանախս-Սիր-Դարյա գետը, իսկ արևելքում սահմանակցել է հնդիկներին՝ նրանցից բաժանված լինելով Ինդոս գետով<sup>90</sup>:

Կտեսիասը աշխարհագրական առումով Բակտրիային ընդարձակ տարածք է հատկացնում՝ նրա կազմում ներառելով սոգդերին, գանդարիներին, դադիկներին<sup>91</sup>, այն դեպքում, երբ սոգդերը, ըստ Հերոդոտոսի, մտել են XVI սատրապության, իսկ գանդարիները և դադիկները՝ VII սատրապության կազմի մեջ<sup>92</sup>:

Ի. Պյանկովը, քննելով Բակտրիայի և հարևան ժողովուրդների մասին Կտեսիասի տեղեկությունները, ենթադրում է, որ պատմիչը, թվարկելով Նինոսին ենթակա ժողովուրդներին՝ բակտրիացիներ, քորամներ (իմա՝ խորասմներ), պարթևներ, կարմաններ, դերբիկներ, բարկաններ (իմա՝ հյուրկաններ), նկատի ունի այն հանգամանքը, որ նշված ժողովուրդները վարչական միավորներ են՝ սատրապություններ, այսինքն՝ հույն հեղինակը ներկայացնում է Արտաքսերքսես Բ-ի սատրապությունների ցուցակը: Ի վերջո, ուսումնասիրողը եզրակացնում է, որ Կտեսիասի բակտրիացիները ոչ թե հենց բակտրիական ժողովուրդն է, այլ Կտեսիասին ժամանակակից բակտրիական սատրապության բնակչությունը<sup>93</sup>: Ընդ որում, Ի.

---

<sup>90</sup> Пьянков И., Средняя Азия в известиях..., с. 63, 67. Տե՛ս նաև Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 39. Ըստ Ստրաբոնի՝ սկյութները գտնվել են բակտրիացիներից այն կողմ և սահմանակցել են նաև հնդիկներին ու բակտրիացիներին (տե՛ս Տրաբոն, II, 1, 17; 5, 14; XVII, 3, 24):

<sup>91</sup> Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 39-40. Ավելի ուշ Ալեքսանդր Մակեդոնացին Բակտրիայի կազմից կրկին առանձնացնում է Ինդոսից արևմուտք ընկած տարածքը, ի մեջ առյալ նաև Քարուլի հովիտը, և դարձնում առանձին սատրապություն, որը հետո կրկին միացնում է Բակտրիայի սատրապությանը (տե՛ս Արիանոս, էջ 158, 222; Ռուփոս, էջ 455): Այս սատրապությունը համապատասխանում է գանդարիների կամ պարոպամիսադների բնակչության տարածքին: Պարոպամիսադները նույնացվել են պակտյուացիներին (տե՛ս Herzfeld E., The Persian Empire, p. 337):

<sup>92</sup> Հերոդոտոս, III, 91; 93; VII, 64; 66:

<sup>93</sup> Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 38, 40.

Պյանկովի կարծիքով, Բակտրիան եղել է թուրքաբնակ, որի մեջ մտնում էին բակտրիացիները, քորամները և պարթևները<sup>94</sup>:

Ինչ վերաբերում է Այգլերի երկրին, ապա Ի. Պյանկովն այն նույնացնում է Պտղոմեոսի *Αὐγαλοί-ին*<sup>95</sup>, որը Բակտրիայից բաժանված էր սոգդերով<sup>96</sup>: Սակայն մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ խոսքը Բակտրիայի մեջ մտնող Մարգիանայի մասին է<sup>97</sup>: Ինչևէ, «բակտրիացիներից մինչև Այգլերի» ցույց է տալիս, որ այս երկրները անմիջական հարևաններ են եղել: Եթե ինչ-որ տեղ կարծենք, որ Այգլերի երկիրը գտնվել է Մարգիանայում, ապա Մարգիանայում ապստամբությունն արյան մեջ խեղդելուց հետո Դարեհը, հավանաբար, քաղաքական նպատակներով վարչական կացությունը տեղում ձևավորել էր նոր, հավատարիմ ցեղի, թերևս սկյութական, շուրջ<sup>98</sup>: Չի բացառվում, որ Այգլերի երկիրը գտնվել է XII սատրապության ծայր հյուսիսում, որտեղ սկյութական տարրի առկայությունն ակնհայտ էր:

Այսպիսով, XII և XVI սատրապությունների էթնիկական կազմի և տարածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս Աքեմենյանների կարևոր վարչական միավորներից էին, որոնք ձևավորվել էին իրանական էթնիկական տարրի հիմքի վրա:

---

<sup>94</sup> Անդ., էջ 48: Ի. Պյանկովը ենթադրում է նաև Արտաքսերքսես Բ-ի ժամանակ մարահայկական թուրքաբնակ գոյության մասին (անդ., էջ 49), ինչը, մեր կարծիքով, հավանական չէ: Ելնելով մեր ուսումնասիրություններից՝ ենթադրում ենք, որ Հայաստանի սատրապությունը թուրքաբնակ կարող էր կազմել XVIII և XIX սատրապությունների հետ, հետևաբար, եթե ընդհանրապես հավանական է նման թուրքաբնակ գոյությունը, ապա վերջինս ճիշտ կլինի անվանել հայկական թուրքաբնակ: Պարթևքի՝ Բակտրիական թուրքաբնակ կազմում գտնվելու մասին հաղորդում է Արիանոսը, երբ գրում է, որ Դարեհ Գ-ն ձերբակալվեց Բեսի կողմից վերջինիս սատրապությունում, այսինքն՝ Պարթևքում (Արիանոս, III, 21, 5; էջ 115: Հմմտ. անդ., IV, 7, 1):

<sup>95</sup> Claudii Ptolemaei Geographia, VI, 12, 4.

<sup>96</sup> Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии..., с. 43-44, прим. 68.

<sup>97</sup> St' u Sarre F., Herzfeld E., Iranische Felsreliefe, Berlin, 1910, S. 26.

<sup>98</sup> Հմմտ. Массон В., Древнеземледельческая культура Маргианы, с. 149; Junge J., Orthokorybantioi, Pauly's Real-Encyclopädie der classischen Altertumswissenschaft, Stuttgart, 1942, S. 1486.

HOVHANNES KHORIKYAN

**ON THE SOME PROBLEMS OF THE SATRAPIC DIVISION OF THE MIDDLE ASIA IN THE VI-IV CENTURIES B.C.**

In the following article a few problems of the satrapic division of the Middle Asia are discussed and the clarification of which has a great importance from the point of view of studying the administrative and political division system of Achaemenid Persia. The study of the ethnical structure and the territory of the XII and XVI Satrapies shows that they are important Achaemenid administrative units, which have been developed into the base of the Iranian ethnical component.

## ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

### ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ Ք.Ա. V-III ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հայաստանի պատմության առավել ուշագրավ ժամանակամիջոցներից մեկն, անշուշտ, Ք.ա. V-III դարերն են: Այդ շրջանում է Հայաստանը հարաբերվում Հին Աշխարհի հզորագույն երեք՝ Աքեմենյան, Մակեդոնական և Սելևկյան տերությունների հետ, թողնում իր զգալի հետքը ողջ տարածաշրջանի պատմության մեջ: Չնայած այդ հանգամանքին, նշված հարյուրամյակների պատմությունը բավարար չափով լուսաբանված չէ, ինչը պայմանավորված է նաև սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների սակավությամբ:

Ներկայացվող աշխատանքով նպատակ ունենք գրավոր աղբյուրների ընձեռած հնարավորության սահմաններում ուրվագծելու Հայաստանի Ք.ա. V-III դարերի քաղաքական պատմության ընդհանուր պատկերը՝ անդրադառնալով ժամանակաշրջանի պատմության որոշ հարցերի հստակեցմանը: Անդրադարձը սկսենք նշված դարաշրջանին նախորդած իրադարձություններից:

#### ***Աքեմենյան տերությունը և Հայաստանը Ք.ա. 522-521 թվականներին (Բեհիսպունյան արձանագրությունը Հայաստանի և հայերի մասին)***

Ինչպես հայտնի է, Ք.ա. 522 թ. Աքեմենյան տերության մեջ սկսվեցին գահակալական կոիվներ, որոնք, ի վերջո, ավարտվեցին Դարեհ Ա-ի հաղթանակով<sup>1</sup>: Դարեհը ստիպված էր իր իշխանության առաջին տարիներն անցկացնել ապստամբություններ ճնշելով և

---

<sup>1</sup> Աքեմենյան տերության մասին ամփոփ տե՛ս Olmstead A.T., History of the Persian Empire, Chicago, 1948; Cook J.M., The Persian Empire, London, 1983; Frye R.N., The History of Ancient Iran, Berlin, 1984; Cambridge History of Iran, vol. 2, The Median and Achaemenian Periods, London, 1985; Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, Москва, 1985; Dandamaev M., A Political History of the Achaemenid Empire, Leiden, 1989; Briant P., From Cyrus to Alexander: A History of the Persian Empire, Winona Lake, 2002 և այլն:



հակառակորդներին ոչնչացնելով: Այդ իրադարձությունների մասին է պատմում նրա թողած Բեհիստունյան (Բիսեթունյան, Բագաստանյան) եռալեզու արձանագրությունը, որը Հին Արևելքի հնագույն պատմության կարևոր սկզբնաղբյուրներից է<sup>2</sup>:

Երեք լեզուներով (հին պարսկերեն, էլամերեն և բաբելերեն) Դարեհն արձանագրել է տվել Կյուրոս Մեծի մահից հետո Պարսկաստանում սկսված խառնաշփոթ վիճակի, գահակալական կռիվների և պարսից տիրակալության դեմ ոտքի ելած երկրների ու ժողովուրդների ապստամբությունների ճնշման պատմությունը: Արձանագրության պարսկերեն մասում Հայաստանը կոչվում է Արմինա, էլամերենում՝ Հարմինույա, բաբելերենում՝ Ուրարտու, ինչը Հայաստան-Արմենիա-Ուրարտու նույնությունը վկայող փաստարկներից է<sup>3</sup>:

Ք.ա. 522-521 թթ. Դարեհը բազմաթիվ արշավանքներ ձեռնարկեց՝ հնազանդեցնելու իր իշխանությունը չընդունող երկրները: Բեհիստունյան արձանագրության սկզբում Հայաստանը չի հիշատակվում ապստամբած երկրների շարքում, ինչը ցույց է տալիս, որ վերջինս մինչ այդ նվաճված չէր: Հետագա իրադարձությունների մասին հաղորդումներից ակնհայտ է, որ Հայաստանն ուներ կարևոր դերակատարում տարածաշրջանում և բավական մեծ ռազմական ուժ: Ամենամեծ փորձությունները Դարեհ Ա-ին սպասում էին

---

<sup>2</sup> Բեհիստունյան արձանագրությունն ամբողջությամբ տե՛ս Kent R.G., Old Persian Grammar, Texts, Lexicon, Parts I-III, New Hawen, 1953, pp. 116-135; Նալբանդյան Գ., Դարեհ Վշնասպի Բիսեթունյան արձանագրությունը, Երևան, 1964: Հայաստանին և հայերին են վերաբերում արձանագրության 26-30 և 49-52 բաժինները (միայն Հայաստանի դեմ ուղղված հինգ արշավանքների հատվածները՝ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 153-156: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 236-240):

<sup>3</sup> Հայաստանը շարունակում է «Ուրարտու» կոչվել նաև ավելի ուշ՝ Ք.ա. V-IV դարերում Արեմենյան տերության բաբելերեն արձանագրություններում (Kent R.G., Old Persian..., pp. 121-124, 126-131; 171; Նալբանդյան Գ., Դարեհ Վշնասպի Բիսեթունյան արձանագրությունը..., էջ 8, 14-15: Дандамаев М., Клинописные данные об армянах, Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей, Ереван, 1990, с. 102-106; Wartke R.B., Das Reich am Ararat, Mainz, 1993, S. 171-177), ինչը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ լիովին սխալ է ժամանակին տարածված այն կարծիքը, թե «Ուրարտուն» ինչ-որ ոչ հայկական պետության անվանում է:

Հայաստանում: Եթե մյուս երկրները նա կարողանում էր նվաճել յուրաքանչյուրը մեկ արշավանքով, ապա դեպի Հայաստան պահանջվեց կատարել հինգ արշավանք:

Նույն արձանագրության 49-52 բաժինները հաղորդում են չափազանց հետաքրքիր մի իրադարձության մասին ևս: Դրա համաձայն՝ Դարեհի դեմ Բաբելոնում բարձրացած ապստամբությունը ղեկավարում էր «հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին»: Դա մի կողմից ցույց է տալիս, որ Ք.ա. 520-ական թթ. վերջին հայոց մեջ շարունակվում էր Խալդի աստծո պաշտամունքը, մյուս կողմից վկայում Բաբելոն-Հայաստան կապի մասին: Դա նաև մղում է մտածելու, որ Բաբելոնի ապստամբությունը կարող էր ուղղորդված լինել Հայաստանից, ինչը վերջինիս տարածաշրջանային ազդեցության վկայություն կարող է լինել:

Ք.ա. 522-521 թթ. հինգ արշավանքներից հետո Հայաստանը ճանաչում է Աքեմենյանների գերիշխանությունը: Դատելով փաստերից, Աքեմենյանները ևս իրենց հերթին գնացին զիջումների: Հայաստանում շարունակեցին իշխել Երվանդականները, որոնք վայելում էին լիակատար ներքին ինքնավարություն:

### ***Աքեմենյան տերությունը և Հայաստանը Ք.ա. 520-331 թվականներին***

Ք.ա. 520 թ. Աքեմենյան տերությունը բաժանվեց քսան մեծ վարչական միավորների՝ սատրապությունների: Հայաստանը կազմեց XIII սատրապությունը<sup>4</sup>: Հայաստանը որպես սատրապություն Աքեմենյան տերության կազմում մնաց մինչև Ք.ա. 331 թ.:

Այս ժամանակաշրջանի մասին մեր տեղեկությունները խիստ կցկտուր են: Էպիզոդիկ մի հաղորդում է պահպանվել Դարեհ Բ-ի

---

<sup>4</sup> Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, գիրք III, 93: Տևական ժամանակ համընդհանուր ընդունելություն էր վայելում այն կարծիքը, որ Հայաստանը բաժանված էր XIII և XVIII սատրապությունների մեջ, ինչի պատճառը XVIII սատրապության մեջ ալարոդների հիշատակությունն է (Հերոդոտոս, գիրք III, 94): «Ալարոդ» ցեղանվան մեջ առաջարկվում էր տեսնել «ուրարտացիներին»: Սակայն համոզիչ կերպով ցույց տրվեց, որ դա վերաբերում է հետագա Աղվանքի տարածքին (Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, Հանդես Ամսորեայ, 1999, 1-12, էջ 46-113):

թագավորության վեցերորդ տարով (Ք.ա. 418 թ.) թվագրվող վարչատնտեսական մի բնագրում, որում հիշատակվում են «ուրարտացիները և մելիդցիները»: Նրանք զինվորական պարտավորություն էին կատարում Միջագետքի հարավում գտնվող (երբեմնի շումերական պաշտամունքային գլխավոր կենտրոն) Նիպպուր քաղաքի շրջանում<sup>5</sup>:

Հայաստանի Ք.ա. V դարավերջի պատմության մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հույն զորավար և պատմիչ Քսենոֆոնն «Անաբասիս» («Նահանջ բյուրոց») երկում<sup>6</sup>, որը ներկայացնում է Ք.ա. 401 թ. Հայաստանի տարածքով նահանջած հունական բանակի ճանապարհը: Նույն դեպքերի մասին համառոտ տեղեկացնում է նաև Դիոդորոս Սիկիլիացին<sup>7</sup>:

Քսենոֆոնը հայտնում է, որ այդ ժամանակ Հայաստանի սատրապն էր Երվանդ (Օրոնտես) Բ-ն, որն ամուսնացած էր Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես Բ-ի դստեր հետ և բարձր դիրք էր զբաղում տերության մեջ: Նույն տեղեկությունը ստանում ենք նրա ժառանգներից Անտիոքոս Ա Կոմմագենացու (Ք.ա. 70-34 թթ.) Նեմրուֆ լեռան սրբավայրում թողած արձանագրություններից, որոնցում նշվում է նաև Երվանդ Բ-ի (բնագրում՝ Արոանդես) հոր անունը՝ Արտասուրա (Արտաշիր)<sup>8</sup>: Նեմրուֆ լեռան արձանագրություններից մեկում Արտասուրան հիշատակվում է որպես Արոանդեսի (Երվանդի) որդի<sup>9</sup>: Ովքե՞ր էին այս Երվանդը և

---

<sup>5</sup> Дандамаев М., Клинописные данные об армянах..., с. 104-106, 115 (հնարավոր մեկնաբանությունը տե՛ս ստորև).

<sup>6</sup> Քսենոֆոնի «Անաբասիսի» հայերին վերաբերող հատվածները տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 371-383: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 161-173: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 243-255 (երկն ամբողջական հայերեն թարգմանությամբ՝ Քսենոֆոն, Անաբասիս, Երևան, 1970):

<sup>7</sup> Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, Երևան, 1985, գիրք XIV, գլ. 27-30: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 174-177: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 255-258:

<sup>8</sup> Hümann K. und Puschtein O., Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, S. 283, 304-305; Toumanoff C., Studies in Christian Caucasian History, Washington, 1963, p. 279.

<sup>9</sup> Hümann K. und Puschtein O., Reisen in Kleinasien und Nordsyrien..., S. 304; Toumanoff C., Studies in Christian Caucasian History..., p. 279.

Արտասուրան՝ Երվանդ Բ-ի պապն ու հայրը. եղե՛լ են նրանք Հայաստանի կառավարիչներ, թե ոչ, մենք ոչինչ չգիտենք<sup>10</sup>:

Երվանդ Բ-ն հատել է սեփական պատկերով ոսկյա, արծաթե և պղնձե դրամներ, որոնք հասել են մեզ<sup>11</sup>: Երվանդ Բ-ի՝ որպես Հայաստանի սատրապի մասին վերջին տեղեկությունները վերաբերում են Ք.ա. 360-ական թվերին, որոնց համաձայն՝ նա գլխավորել էր Աքեմենյանների դեմ բարձրացած մի քանի սատրապների ապստամբությունը, բայց անհաջողություն կրելով՝ ապաստանել է Հունաստանում և մինչև Ք.ա. 344 թ. այնտեղ անցկացրել կյանքի վերջին տարիները<sup>12</sup>:

Ք.ա. V դարավերջին հույն պատմիչ Քսենոֆոնը սատրապական Հայաստանի կազմում հիշատակում է առանձին ուրվագծվող, սակայն կենտրոնական իշխանությանը ենթակա Արևմտյան Հայաստանը<sup>13</sup>: Չի բացառվում, որ միևնույն բաժանումն արտահայտվել է Ք.ա. 418 թ. վերոհիշյալ բնագրում, որում հիշատակվում են «ուրարտացիները և մելիդցիները»<sup>14</sup>: Մելիդը Մալաթիայի հնագույն անվանումն է, որն էլ, հնարավոր է, որ եղած լինի Արևմտյան Հայաստանի վարչական կենտրոնն այդ շրջանում: Ամենայն հավանականությամբ, հենց

---

<sup>10</sup> Եթե պարզվի, որ նրանք եղել են Հայաստանում իշխած կառավարիչներ, հարկ կլինի փոխել Ք.ա. V-III դարերում «Երվանդ» անունը կրած հայոց սատրապների ու արքաների համարակալումը՝ Երվանդ Բ-ին, Երվանդ Գ-ին և Երվանդ Դ-ին, համապատասխանաբար, համարելով Երվանդ Գ, Երվանդ Դ և Երվանդ Ե, իսկ Արտասուրայի հայր Երվանդին՝ Երվանդ Բ:

<sup>11</sup> Աքեմենյան շրջանի Հայաստանի սատրապներ Երվանդ Բ-ի և Տիրիբազուսի դրամների մասին տե՛ս Մուշեղյան Խ., Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ.-մ.թ. XIV դ.), Երևան, 1983, էջ 16-25:

<sup>12</sup> Պոմպեոս Տրոգոս, նախաբան, X: Քսենոֆոն, Անաբասիս, գիրք III, գլ. V, 17, գիրք IV, գլ. III, 1-5, IV, 1-22: Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, գիրք XV, գլ. 1-4, 8-11, 90-91: Պլուտարքոս, Երկեր, Երևան, 1987, Արտաքսերքսես, XXII: Տիրացյան Գ., Երվանդունիները Հայաստանում, Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան, 1958, 6, էջ 61-65: Toumanoff C., Studies in Christian Caucasian History..., p. 279; Wilkinson R.D., Orontes, son of Artasura, Revue des Etudes Armeniennes, 1970, 7, pp. 445-450; Osborne M.J., Orontes, Historia, 1973, v. 22, pp. 515-551.

<sup>13</sup> Օրոնտասին (Երվանդ Բ), իսկ արևմտյան մասի հյուպարքոս՝ Տիրիբազուսին: Մինչդեռ Դիոդորոս Սիկիլիացու երկում Ք.ա. 401 թ. Հայաստանի սատրապ է նշվում Տիրիբազուր (Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, գիրք XIV, գլ. 27-30):

<sup>14</sup> Дандамаев М., Клинописные данные об армянах..., с. 104-106, 115.

Արևմտյան Հայաստանի հիմքի վրա էլ տեղծվեց Փոքր Հայքը, որն առաջին անգամ հիշատակվում է Ք.ա. IV դարում՝ Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ:

Երվանդ Բ-ից հետո մեր տեղեկությունները կրկին խիստ սակավաթիվ են դառնում: Հայտնի է, որ Աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ Գ Կողոմանոսը նախքան Աքեմենյան տիրակալ դառնալը եղել է Հայաստանի սատրապը<sup>15</sup> և հայոց գահի վրա կրել «Արտաշատ» անվանումը<sup>16</sup>: Ք.ա. 336 թ. նա դարձավ ողջ Աքեմենյան տերության տիրակալը, իսկ Հայաստանի սատրապ դարձավ, հավանաբար, Հայկազուն-Երվանականների տոհմի ներկայացուցիչ Երվանդ (Օրոնտաս) Գ-ն, որին էլ վիճակված էր վերականգնելու Հայաստանի անկախությունը Ք.ա. 331 թ.: Չի բացառվում, որ Երվանդ Գ-ից առաջ՝ Ք.ա. 336-333 թթ., Հայաստանի կառավարիչ եղած լինի Վահե Հայկազունին, որն ըստ Մովսես Խորենացու տեղեկության՝ զոհվել է Ալեքսանդր Մակեդոնացու դեմ պատերազմում (հնարավոր է, որ դա տեղի ունեցած լինի Իսսոսի ճակատամարտում, տե՛ս ստորև):

### ***Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանի անկախության վերականգնումը***

Հունական անջատ պետությունները միավորելով՝ Մակեդոնիայի արքա Ֆիլիպ Բ-ն Ք.ա. 336 թ. պատրաստվում էր մեծ պատերազմ սկսել ընդդեմ Աքեմենյան աշխարհակալության: Սակայն նա դավադրաբար սպանվեց, որից հետո Մակեդոնիայում գահ բարձրացավ որդին՝ քսանամյա Ալեքսանդրը (Ալեքսանդր Ա Մեծ կամ Ալեքսանդր Մակեդոնացի, Ք.ա. 336-323 թթ.), որին վիճակված էր դառնալու համաշխարհային պատմության ամենանշանավոր և ամենաառեղծվածային դեմքերից մեկը<sup>17</sup>:

---

<sup>15</sup> Justin, գիրք X, 3 (ըստ Պոմպեոս Տրոգոսի):

<sup>16</sup> Sachs J.A., Pinches T.G., Strassmaier J.N., Late Babylonian astronomical and related texts, Providence, 1965, 193-194; Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, Москва, 1985, с. 254, 275.

<sup>17</sup> Ալեքսանդր Մակեդոնացու և նրա արևելյան արշավանքի մասին կա հսկայաճավ գրականություն: Առավել ամբողջականներից տե՛ս Tarn W.W., Alexander the Great, v. I-II, London, 1948; Schachermeyr F., Alexander der Grosse, Wien, 1973; Шофман А., Восточная политика Александра Македонского, Казань, 1976; Гафуров Б., Цибукидис Д., Александр

Ք.ա. 334 թ. մակեդոնա-հունական զորքերը Ալեքսանդրի գլխավորությամբ անցնում են Հելլեսպոնտոսը և սկսում նշանավոր արևելյան արշավանքը: Շուտով նրանք Գրանիկոս գետի ափին պարտության են մատնում պարսից փոքրասիական սատրապների միացյալ ուժերին:

Դարեհ Գ-ն բազմահազար զորքերով ընդառաջ է գնում Ալեքսանդրին: Ք.ա. 333 թ. գարնանը Կիլիկիայի Իսոսի դաշտում տեղի է ունենում մեծ ճակատամարտ: Չնայած թվական գերակշռությանը՝ պարսից զորքը Իսոսի մոտ ծանր պարտություն է կրում: Դատելով փաստերից՝ պարտության պատճառը մարերի առաջնորդությամբ կռվող ձախ թևի փախուստն էր, որին հաջորդած խուճապից հետո սկսում է նահանջել ամբողջ բանակը: Դարեհը փախչում է՝ գերի թողնելով մորը, կնոջը և զավակներին:

Պատմահայր Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու դեմ մարտնչել է Վահե Հայկազունին, որը զոհվել է «նրա ձեռքով»<sup>18</sup>: Անտիկ պատմագրությունից հայտնի է, որ հայերն աքեմենյան զորքի կազմում մասնակցել են Մակեդոնացու դեմ մղված երկու՝ Իսոսի և Գավգամելայի ճակատամարտերին: Հայտնի է, որ Գավգամելայի ճակատամարտում հայկական զորքերը ղեկավարել են Օրոնտես-Երվանդ Գ-ն ու Միթրաուատեսը (Միհրվահիշտ)<sup>19</sup>: Մնում է եզրակացնել, որ Վահե Հայկազունին Իսոսի ճակատամարտին մասնակցած 47 հազարանոց հայկական բանակն է առաջնորդել և

---

Македонский и Восток, Москва, 1980; Шахермайр Ф., Александр Македонский, Москва, 1986; Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987: Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ. Հայկական խմբագրություններ (աշխատասիրությամբ Հ. Միմոնյանի), Երևան, 1989: Օհանյան Մ., Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Երևան, 2003 և այլն:

<sup>18</sup> Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ա. Յարութիւնեան), Տիփլիս, 1913 (նմանահանութիւն, լրացումները Ա.Բ. Սարգսեանի, Երևան, 1991), գիրք Ա, գլ. ԼԱ:

<sup>19</sup> Իսոսի և Գավգամելայի ճակատամարտերին հայերի մասնակցության մասին տե՛ս Քվինտոս Կուրտիոս Ռուֆոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987 գրքում), գիրք III, II, 4-6; XII, 10, 12-13; գիրք IV, XVI, 1-6: Արրիանոս Փլավիոս, Ալեքսանդրի արշավանքը (տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987 գրքում), գիրք III, III, 5-6; XI, 7: Օհանյան Մ., Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը..., էջ 21-62:

գրիվել է այդ ճակատամարտում: Եթե այս ենթադրությունը հետագայում հաստատվի նորահայտ փաստերով, կարող ենք եզրակացնել, որ Դարեհ-Արտաշատից հետո՝ Ք.ա. 336-333 թթ., Հայաստանի սատրապ-կառավարիչն է եղել Վահե Հայկագունին, որին էլ Ք.ա. 333 թ. հաջորդել է Երվանդ Գ-ն:

Ալեքսանդրի և Դարեհ Գ-ի հիմնական ուժերի միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ք.ա. 331 թ. հոկտեմբերի 1-ին Արբելայից ոչ հեռու, Գավգամելայի մոտ: Ինչպես Իսսոսում, այս ճակատամարտում ևս հայերը կազմում էին աջ թևի հիմնական ուժը:

Ճակատամարտում, չդիմանալով մակեդոնական զորքի ճնշմանը, աքեմենյան զորքերը սկսում են անկազմակերպ նահանջը, որը վերածվում է կենտրոնի և ձախ թևի խուճապահար փախուստի: Դարեհը կրկին փախչում է: Մակեդոնացին սկսում է հետապնդել Դարեհին, ինչը, սակայն, ձախողվում է աքեմենյան բանակի աջ թևի հերոսական գործողությունների հետևանքով (ինչպես նշվել է, աջ թևի հիմնական ուժը հայկական զորքն էր): Հունա-մակեդոնական զորքի ձախ թևի հրամանատար Պարմենիոնը, ընկրկելով աքեմենյան բանակի աջ թևի դիմաց, օգնություն է խնդրում Ալեքսանդրից, որը հարկադրված է լինում դադարեցնել Դարեհի հետապնդումը և թիկունքից հարձակվում հակառակորդի վրա: Այդ ժամանակ աջ թևի զորամասերին առաջնորդող հայոց այրուձին «արագ երթով նահանջի» հրաման է ստանում և դուրս գալով ճակատամարտից՝ վերադառնում է Հայաստան:

Հայկական զորքերի հերոսական մասնակցությունը Գավգամելայի ճակատամարտում, փաստորեն, ձախողում է Ալեքսանդրի ծրագրերը՝ այդ ճակատամարտով գերելու Դարեհ Գ-ին և վերջ դնելու Աքեմենյան տերությանը: Այն գոյատևում է ևս որոշ ժամանակ:

Ներսաբար մարտնչած և արժանապատվորեն հայրենիք վերադարձած հայկական զորքերը Գավգամելայի ճակատամարտից հետո Ք.ա. 331 թ. վերականգնում են Հայաստանի անկախությունը՝ Օրոնտա-Երվանդ Գ-ն<sup>20</sup> Մեծ Հայքում, իսկ Միթրաուստեր՝ Փոքր

---

<sup>20</sup> Երվանդ Գ-ն «Արուսեյ» անվանաձևով հիշատակվում է նաև Կոմմագենեի Նեմրուս լեռան սրբավայրում և, ի տարբերություն Երվանդ Բ-ի կրում է «արքա» տիտղոսը (Hümann K. und Puschtein O., Reisen in Kleinasien und Nordsyrien..., S. 286, 307; Тирацян

Հայքում: Հայերի օրինակին են հետևում և իրենց երկրներն անկախ հայտարարում Բակտրիայի կառավարիչ Բեսսուրը, Փոքր Մարաստանի աստրապ Ատրոպատեսը և ուրիշներ:

Գավգամելայի ճակատամարտից որոշ ժամանակ անց, մտնելով Բաբելոն, Ալեքսանդր Մակեդոնացին համարեց, որ արդեն հասել է հաջողության և կատարեց նշանակումներ, այդ թվում՝ Հայաստանի կառավարիչ կարգեց Սարգեսի բերդը դավաճանաբար իրեն հանձնած պարսիկ Միթրենեին (Միհրանին)<sup>21</sup>: Սակայն, դատելով փաստերից, հայերը նրան անգամ թույլ չտվեցին ոտք դնել Հայաստան<sup>22</sup>:

Մակեդոնական և հայկական զորքերի հաջորդ բախումը տեղի ունեցավ Գավգամելայի ճակատամարտից 2-3 տարի անց, երբ Ալեքսանդրի զորաբանակներից մեկը՝ Մենոն զորավարի գլխավորությամբ ուղարկվեց գրավելու Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը, որը ոսկու արդյունահանմամբ հռչակավոր էր դեռևս Ք.ա. III հազարամյակից: Ինչպես վկայում է հույն մատենագիր Ստրաբոնը, հայերը ոչնչացրեցին նրա բանակը, իսկ զորավարին «խեղդամահ արեցին»<sup>23</sup>: Դրանից հետո Ալեքսանդրը փորձ անգամ չարեց Հայաստան զորք ուղարկելու, ինչը նշանակում էր, որ նա հաշվի էր նստում Գավգամելայում բացառիկ հերոսությամբ աչքի ընկած և Մենոնի զորաբանակը ոչնչացրած հայկական զինուժի հետ<sup>24</sup>:

---

Г., Страна Коммагена и Армения, Стелыкафир хасарական գիտությունների, 1956, 3, էջ 70-73: Տիրացյան Գ., Երվանդունիները Հայաստանում..., էջ 65-67: Toumanoff C., Studies in Christian Caucasian History..., pp. 279-280):

<sup>21</sup> Արիանոս Փլավիոս, Ալեքսանդրի արշավանքը, գիրք III, 16, 5: Քվինտոս Կուրտիս Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, գիրք V, 1, 44: Դիոդորոս Սիկիլիացի, գիրք XVII, գլ. LXIV:

<sup>22</sup> Տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հ. Դ, Երևան, 2009, էջ 435-436: Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 96-100:

<sup>23</sup> Ստրաբոն (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան), Ոտար աղբյուրները հայերի մասին, 1, Հունական աղբյուրներ, Յերևան, 1940, XI, 14, 9: Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 95-97: Օհանյան Մ., Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը..., էջ 74-75:

<sup>24</sup> Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների և դրանց հաջորդած ժամանակաշրջանում Հայաստանի պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հատոր Դ, էջ 431-445: Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, էջ 90-103: Օհանյան Մ., Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը...:



Թե մինչև երբ է իշխել Երվանդ Գ-ն, հայտնի չէ: Նեմրուփ սրբավայրի արձանագրություններում պահպանվել է միայն նրան հաջորդած արքայի անվան երկրորդ հատվածը՝ «...անես», որի ինքնությունը մնում է չբացահայտված<sup>25</sup>:

### ***Մակեդոնացու ժառանգորդները և Հայաստանը***

Հույն պատմիչ Արիանոս Փլավիոսը, որ առանց միջնորդի օգտվել է Մակեդոնացու օրագրերից և արշավի անմիջական մասնակիցների աշխատություններից, բազմիցս խոսելով Ալեքսանդրի նվաճումների մասին և մանրամասն թվարկելով հպատակեցված երկրները, Հայաստանի անունը չի հիշատակում դրանց շարքում: Հայաստանն աննվաճ մնաց նաև Մակեդոնացու մահվանից հետո, երբ նրա զորավարների միջև սկսեց ավելի քան երկու տասնամյակ տևած պատերազմների շղթան (դրանք հայտնի են որպես դիադոխների («ժառանգորդների») պատերազմներ), որն ավարտվեց Ք.ա. 301 թվին՝ Մակեդոնացու աշխարհակալության մասնատումով: Տերությունը բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակցող Սելևկյան տերությունն էր:

Մեզ է հասել չափազանց ուշագրավ մի հաղորդում Դիոդորոս Սիկիլիացու (Սիցիլիացու) «Պատմական գրադարան» երկի էջերում, որի համաձայն՝ մակեդոնացիների կողմից գահընկեց արված Կապադովկիայի արքա Արիարաթեսը կարողացել է վերականգնվել հայրական գահին՝ շնորհիվ Մեծ Հայքի արքա Արդուատեսի տրամադրած զորքերի. «Արիարաթեսը պարտվելով ճակատամարտում՝ ընկավ, որից հետո թե՛ Կապադովկիան և թե՛ նրան սահմանակից երկրներն ընկան մակեդոնացիների

---

<sup>25</sup> Hümann K. und Puschstein O., Reisen in Kleinasien und Nordsyrien..., S. 307; Тирация Г., Страна Коммагена и Армения..., с. 71; Toumanoff C., Studies in Christian Caucasian History..., p. 280. Հայտնվել է կարծիք, թե «...անես» անունը պետք է վերականգնել «Միթրանես» և նրան նույնացնել Սարդեսի աքեմենյան կառավարչին, որը Դարեհ Գ-ին դավաճանելով անցավ Ալեքսանդր Մակեդոնացու կողմը և նրանից ձևականորեն ստացավ Հայաստանի կառավարչի պաշտոնը: Մեր կարծիքով, նման մեկնությունը լիովին անհավանական է, քանի որ Միթրանեսը (Միթրենես) պարսիկ էր, բացի այդ, նա Երվանդ Գ-ի որդին չէր և չէր կարող հաջորդել նրան (առավել ևս, որ նա չի իշխել Հայաստանում):

տիրապետության տակ: Իսկ Արիարաթեւը՝ նախորդ թագավորի որդին, հուսահատվելով այդ ժամանակ ստեղծված դրությունից, քչերի հետ ապաստանում է Հայաստանում: Ոչ շատ ժամանակ անց... Արիարաթեւը հայերի թագավոր Արդոատեսից զորք ստանալով, սպանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտապին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և վերանվաճեց իր հայրենի իշխանությունը»<sup>26</sup>: Դա տեղի է ունեցել Ք.ա. 322 կամ 301-300 թվականներին<sup>27</sup>: Փաստն ինքնին շատ խոսուն է. նորանկախ Հայաստանն արդեն վճռորոշ ուժ էր տարածաշրջանում:

Նույն իրականության վկայությունն է Մեմնոն Հերակլեացու տեղեկությունը, որի համաձայն՝ Բյուզանդիայի Նիկոմեդես արքայի որդի Զիաեվասը նախ ապաստան է գտնում Հայաստանի թագավորի մոտ (որի անունը չի նշվում), ապա արտաքին ուժերի օգնությամբ վերականգնում է թագավորությունը: Նա թագավորում է Ք.ա. 250-228 թվականներին<sup>28</sup>:

### ***Մեծ Հայքի թագավորությունը Ք.ա. III դարում***

Հայաստանի Ք.ա. III դարի պատմության վերականգնմանը մեծապես օգնում են Կոմմագենեի Նեմրուօ լեռան սրբավայրի արձանագրությունները, որոնք թողել է Երվանդական արքայատան շառավիղ Անտիոքոս Ա Կոմմագենացին: Հայրական գծով նրա նախնիների ոչ լրիվ պահպանված շարքում Արտասուրայի որդի Արոանդես-Երվանդ Բ-ից և Արոանդես-Երվանդ Գ արքայից հետո

---

<sup>26</sup> Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, գիրք XXXI, գլ. XIX, 4-5: Ադոնց Ն., Երկեր, հատոր Դ, էջ 441: Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, էջ 100-103:

<sup>27</sup> Իրադարձության թվականի հարցի քննարկումը տես Ադոնց Ն., Երկեր, հատոր Դ, էջ 435-441: Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, էջ 97-103: Քննարկման առարկա է եղել նաև հարցը՝ արդյո՞ք «Արդոատեսը» ճշգրիտ արքայանունն է, թե դա «Արտավազդ» կամ «Արոանդես» (այսինքն՝ «Երվանդ») անվան աղճատված ձևն է: Եթե ճիշտ է վերջին ենթադրությունը, կստանանք, որ Մեծ Հայքի անկախության հիմնադիր Երվանդ Գ-ն թագավորել է Ք.ա. 331 թվականից մինչև Ք.ա. IV դարի վերջը կամ III դարի սկիզբը: Սակայն, քանի որ այսօրվա մեր ունեցած փաստերը թույլ չեն տալիս որոշակի պատասխան տալու Արդոատեսի նույնացման հարցին, նախընտրում ենք մեր շարադրանքում պահպանել Դիոդորոս Սիկիլիացու բնագրային ձևը:

<sup>28</sup> Memnonis, 22-23; Ադոնց Ն., Երկեր, հատոր Դ, էջ 442: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 512: Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, էջ 111:

կարդում ենք Սամոս (Շամ) և Արսամես (Արշամ) արքաների անունները<sup>29</sup>:

Ք.ա. մոտ 260-240-ական թթ. իշխած հայոց արքա Սամոս (Շամ) Երվանդականը կառուցեց Կոմմագենեի կենտրոն Սամոսատ (Շամշատ) քաղաքը<sup>30</sup> և հատեց դրամներ, որոնք մեզ հասած առաջին հայկական արքայական դրամներն են<sup>31</sup> (մինչ այդ դրամներ հատել են Օրոնտաս-Երվանդ Բ-ն և Տիրիբագոսը, որոնք եղել են Աքեմենյան շրջանի Հայաստանի աստրապներ):

Ք.ա. մոտ 240 թ. Շամին հաջորդեց նրա որդի Արշամը, որը կառուցեց Արշամաշատ քաղաքը Ծոփքում և Արսամես անունով երկու քաղաք Կոմմագենեում: Արշամի մասին տեղեկանում ենք, որ նա այնքան հզոր էր, որ կարողացել էր Ք.ա. 220-ական թթ. ապաստան տալ Սելևկյան տիրակալ Սելևկոս Բ Կալլինիկոսի դեմ ապստամբած նրա եղբորը՝ Անտիոքոս Հիերաքսին<sup>32</sup>:

Հայագիտության մեջ XX դարի երկրորդ կեսին տարածում գտավ մի տեսակետ, ըստ որի Ք.ա. մոտ 260 թ. Մեծ Հայքից անջատվել են Ծոփք և Կոմմագենե երկրամասերը՝ կազմելով ինքնուրույն միացյալ թագավորություն՝ Շամ (Սամոս) Երվանդականի գլխավորությամբ<sup>33</sup>:

Հարկավոր է նշել, որ սկզբնաղբյուրներում Ք.ա. III դարում Մեծ Հայքից անջատված «Ծոփքի և Կոմմագենեի միացյալ թագավորության» մասին որևէ հիշատակություն չկա: Իսկ այն

---

<sup>29</sup> Hümann K. und Puschtein O., Reisen in Kleinasien und Nordsyrien..., S. 286, 308-309; Toumanoff C., Studies in Christian Caucasian History..., pp. 280-283; Тирация Г., Страна Коммагена и Армения..., с. 71-74.

<sup>30</sup> Կարծիքը, թե Սամոսատ մայրաքաղաքի կառուցողը եղել է ոչ թե այս Սամոսը, այլ Կոմմագենեի արքա Սամոս Դիկեյոս Թեոսեբիոսը (Ք.ա. մոտ 130-109 թթ.), անհավանական է, քանի որ Սամոսատը հիշատակվում է դեռևս Ք.ա. 245 թվականին (Toumanoff C., Studies in Christian Caucasian History, pp. 280-281; Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 512): Վաղ բյուզանդական աղբյուրներում Ծոփքում հիշատակվում է Սամոկերտ բնակավայրը, որը ևս, ամենայն հավանականությամբ, հիմնել է Սամոսը Ք.ա. III դարում:

<sup>31</sup> Մուշեղյան Խ., Դրամական շրջանառությունը Հայաստանում..., էջ 38-43:

<sup>32</sup> Պոլիեոս, IV, 17; Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, էջ 115-116: Էջիբեկյան Ժ., Հայաստանը և Սելևկյանները, Երևան, 1979, էջ 42: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 512-513:

<sup>33</sup> Տե՛ս, օրինակ, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 512-513: «Ծոփք» և «Կոմմագենե» հոդվածները Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, 1979, էջ 139-141, 543-544:

փաստը, որ «Հայաստանի արքա» տիտղոսով հիշատակվող Արշամը ապաստան է տվել Անտիոքոս Հիերաքսին, թույլ է տալիս եզրակացնելու, որ նրա իշխանության տակ միավորված է եղել ողջ Մեծ Հայքը՝ Ծովքով ու Կոմմագենեով հանդերձ, այլապես հազիվ թե փոքրիկ մի թագավորություն հանդգներ ապաստան տալ հարևան հսկա տերության տիրակալի գլխավոր թշնամուն:

Որ Մեծ Հայքը բաժանվել է միայն արքա Երվանդ Դ Վերջինից հետո, պարզորոշ վկայում է Ստրաբոնը՝ նշելով, որ Հայաստանը (իմա՝ Մեծ Հայքը) բաժանվել է Անտիոքոս Գ Մեծի ստրատեգոսներ Արտաշեսի և Զարեհի միջև. «Հայաստանի վերջին իշխողն էր Օրոնտեսը... Այնուհետև Արտաքսիասը և Զարիադրեսը՝ Անտիոքոս Մեծի զորավարները, երկիրը բաժանեցին երկու մասի: Նրանք կառավարում էին արքայի իշխանության ներքո»<sup>34</sup>:

Ք.ա. III դարի վերջին Սելևկյան արքա Անտիոքոս Գ-ն քայլեր ձեռնարկեց Մեծ Հայքի նվաճման ուղղությամբ, ինչում նրան օգնեց հայերի ներքին երկպառակտությունը: Նրա զորքերը հայազգի զորավարներ Արտաշեսի և Զարեհի գլխավորությամբ Ք.ա. 201 թ. արշավեցին Մեծ Հայքի դեմ: Մեծ Հայքի արքա Երվանդ Դ-ն զոհվեց մայրաքաղաք Երվանդաշատի պաշտպանության ժամանակ<sup>35</sup>:

---

<sup>34</sup> Ստրաբոն, XI, 14, 15:

<sup>35</sup> Հակոբ Մանանդյանի կարծիքով, այս դրվագն է ներկայացված Արմավիրից հայտնաբերված ողբերգությունների հատվածներից մեկում, որտեղ պատգամաբերը հայտնում է արքայի քրոջը, որ արքան զոհվեց մայրաքաղաքը պաշտպանելիս: Մեկ այլ հատվածում ընթերցվում են Օրոնտ և Միթրա անունները: Արմավիրի հունարեն արձանագրությունների մասին տե՛ս Տեր-Հակոբյան Ս., Արմավիրի յերկրորդ նորագյուտ արձանագրությունը, Նյութեր Հին Հայաստանի պատմության մասին, ՀԽՍՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ, հ. I, Երևան, 1935, էջ 143-150: Тер-Аветисян С., Археологическое обследование городища и крепости «Древний Армавир», Գիտական ժողովածու Արմֆանի, նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին, Երևան, 1941, էջ 61-62: Болтунова А., Греческие надписи Армавира, Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1942, 1-2, էջ 35-61: Մանանդյան Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 6-30: Гоян Г., 2000 лет армянского театра, т. I, Театр древней Армении, Москва, 1952, с. 138-161; Тревер К., Очерки по истории и культуры древней Армении (II в. до н.э.-IV в. н.э.), Москва-Ленинград, 1953, с. 104-156; Саркисян Г.Х., Тигранакерт, Москва, 1960, с. 33-41; Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970, էջ

Այնուհետև գրավվեց Մեծ Հայքի հոգևոր կենտրոն Բագարանը, որտեղ սպանվեց երկրի գերագույն քուրմ Երվազը, որը Երվանդ արքայի եղբայրն էր: Դրանով Ք.ա. 201 թ. Մեծ Հայքում անկում ապրեց Հայկազուն-Երվանդականների թագավորությունը<sup>36</sup>:

Արտաշեսը Մեծ Հայքի մեծ մասում, իսկ Զարեհը Ծոփքում Ք.ա. 201 թ. նշանակվեցին սելևկյան կառավարիչներ (ստրատեգոսներ): Այդ վիճակը շարունակվեց մինչև Ք.ա. 190 թ., երբ Փոքր Ասիայի Մագնեսիա քաղաքի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտ Սելևկյանների և Հռոմի միջև: Այն ավարտվեց Անտիոքոս Գ-ի ծանր պարտությամբ: Օգտվելով ստեղծված իրադրությունից՝ հայերը վերականգնեցին անկախությունը:

### **Փոքր Հայքը Ք.ա. III դարում**

Գավգամելայի ճակատամարտից հետո, ինչպես նշվեց, Միթրաուատեսի առաջնորդությամբ անկախացավ Փոքր Հայքի թագավորությունը: Դրանից հետո, մինչև Ք.ա. II դարի առաջին կեսը Փոքր Հայքի մասին պահպանվել է միայն մեկ արձանագրություն:

Ժամանակակից Աղջակալե հնավայրից (պատմական Փոքր Հայք) գտնվել է Ք.ա. III դարով թվագրվող երկլեզու (հունարեն և արամեերեն) մի արձանագրություն, որը պարունակում է չափազանց կարևոր տեղեկություններ: Արձանագրության արամեերեն բաժնում ասվում է՝ «Այս պարիսպների մեջ հիմնվեց դամբարանը Օրոմանայի՝ Արիաուկայի որդու: Որպես [մնայուն հիշատակ] կառուցեց այն Արիաուկան՝ որդին Օրոմանայի, սատրապը Արյմենիայի»: Հունարեն բաժինն ունի որոշ տարբերություն՝ «Օրինավոր սատրապների մեջ

---

134-139, 145-148: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 912-913: Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 124-138:

<sup>36</sup> Հայագիտության մեջ տարածում գտած մեկ այլ տեսակետ, թե նույն այդ ժամանակ Ծոփքում դավադրաբար սպանվեց Քսերքսես Երվանդականը, հիմնված է թյուրիմացության վրա: Ծոփքի արքա Քսերքսեսը եղել է ոչ թե Անտիոքոս Գ-ի, այլ Անտիոքոս Դ-ի ժամանակակիցը և դարձել է նրա ու նրա քույր Անտիոքիսի դավադրության զոհը Ք.ա. 164 թ. (տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հատոր Դ, էջ 446-453): Այդ փաստի վրա ուշադրություն է հրավիրվել դեռևս 1890 թ. (Babelon E., Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890, pp. CXCIV-CXCVII): Որ Անտիոքիսը Անտիոքոս Գ Մեծի դուստրն էր և Անտիոքոս Դ-ի քույրը, պարզորոշ վկայում է Դիոդորոս Սիկիլիացին (գիրք XXXI, գլ. XIX, 7):

անմահ հիշատակ կլինի Օրոմանեսին՝ [որդուն] Արիակեսի, և Արիակեսին՝ [նրա] սիրելի որդուն, Արանդայի [Անդոմոնի] համար, որ [նա] կառուցեց գեղեցիկ բնակավայրի շքեղ պարիսպներն ամայի տեղում»<sup>37</sup>:

Արձանագրությունը վկայում է, որ Փոքր Հայքում իշխել են Արիակեսը (Արիաուկա), որը Գավգամելայի ճակատամարտում ղեկավարում էր հայերի կողքին մարտնչող կապադովկիացիների զորքը, ապա նրա որդի Օրոմանեսը (Օրոմանա, թերևս՝ Արամանյակ), որին հաջորդել է նրա թոռ Արիակեսը: Ավագ Արիակեսը, հավանաբար, Փոքր Հայքում իշխել է Միթրաուստեսից հետո:

### **Ամփոփում**

Ամփոփելով համառոտ այս քննությունը՝ տեսնում ենք, որ Հայաստանի Ք.ա. V-III դարերի քաղաքական պատմությունը ներկայանում է հետևյալ պատկերով: Հայաստանը Ք.ա. 520 թ. վերածվում է Աքեմենյան տերության XIII սատրապության և այդ կարգավիճակով մուտք է գործում Ք.ա. V դար: Հայաստանի սատրապության արևմտյան մասում Ք.ա. V դարի վերջին (ինարավոր է՝ վերջին քառորդում) ստեղծվում է հյուպարքոսություն, որի ղեկավարը ենթարկվում էր ողջ Հայաստանի սատրապին: Հավանաբար, այդ հիմքի վրա էլ Ք.ա. IV դարում ստեղծվում են Մեծ Հայք և Փոքր Հայք վարչական միավորները:

Ք.ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտից հետո անկախ հռչակվեցին երկու հայկական թագավորություններ՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը: Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքից հետո հայկական աշխարհում ստեղծված վիճակը պահպանվեց մինչև Ք.ա. III դարի վերջը (Ք.ա. 201 թ.):

Հայագիտության մեջ XX դարի երկրորդ կեսին առաջ քաշված տեսակետը, որ Ք.ա. մոտ 260-220 թթ. Մեծ Հայքի թագավորությունից անջատ մեկ միասնական թագավորություն են կազմել Ծոփքն ու Կոմմագենեն, բավարար չափով հիմնավորված չէ սկզբնաղբյուրներով:

---

<sup>37</sup> Մանրամասն տե՛ս Lipinski E., *Studies in aramaic inscriptions and onomastics*, Leuven, 1975, pp. 197-208; Էլչիբեկյան Ժ., *Հայաստանը և Սելևկյանները...*, էջ 43-44: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 266:

Շամ (Սամոս) և Արշամ Երվանդունիներն եղել են Մեծ Հայքի արքաներ: Առկա փաստերը ցույց են տալիս, որ Ք.ա. III դարի վերջին կար երկու հայկական թագավորություն՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը:

Ք.ա. 201 թ. Սելևկյանները, օգտագործելով հայերի ներքին երկպառակությունը, կարողացան նվաճել Մեծ Հայքը՝ Հայկազուն-Երվանդականների թագավորությունը, սակայն կարճ ժամանակ անց՝ Ք.ա. 190-163 թթ. ընթացքում, օգտվելով նպաստավոր քաղաքական պայմաններից, անկախացան հայկական չորս առանձին թագավորություններ՝ Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Ծոփքն ու Կոմմագենեն:

Վերջում փորձենք տալ Հայաստանի Ք.ա. V-III դարերի մեզ հայտնի գահակալների ժամանակագրական ցանկը, ինչպես որ այսօր հնարավոր է վերականգնել:

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ Ք.Ա. V-III ԴԱՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ**

#### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆ**

Երվանդ (Արոանդես) - (°)

Արտասուրա (Արտաշիր) - (°)

Երվանդ (Արոանդես, Օրոնտես) Բ - Ք.ա. V դարի վերջ - 360-ական թթ.,

Դարեհ-Արտաշատ (հետագայում՝ Դարեհ Գ Կողոմանոս) - (°) - 336 թ.,

Վահե Հայկազունի - Ք.ա. 336-333 թթ. (°),

Երվանդ (Արոանդես, Օրոնտես) Գ - Ք.ա. 336 կամ 333 - 331 թթ.:

#### **ՄԵՏ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

Երվանդ (Արոանդես, Օրոնտես) Գ - Ք.ա. 331 - (°) թթ.,

Արդուատես - 322 կամ 301-300 թթ. (Արդուատես - Արոանդես նույնության պարագայում Երվանդ Գ-ի թագավորությունը պետք է թվագրել Ք.ա. 331 թ. - Ք.ա. IV դարավերջ կամ III դ. սկիզբ),

...անես - (°)

Շամ (Սամոս) - Ք.ա. մոտ 260-240 թթ.,

Արշամ (Արսամես) - Ք.ա. մոտ 240-220 թթ.,

Երվանդ (Օրոնտես) Դ - Ք.ա. մոտ 220-201 թթ.:

#### **ՓՈՔՐ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

Միթրաուստես (Միհրվահիշտ) - Ք.ա. 331 թ. - (°),

Արիակես (Արիաուկա) Ա - Ք.ա. IV վերջին տասնամյակներ,

Օրոմանես (Օրոմանա, Արամանյակ) - Ք.ա. IV դարավերջ և/կամ III դ.  
առաջին կես,  
Արիակես (Արիաուկա) Բ - Ք.ա. III դար:

ARTAK MOVSISYAN

### **REMARKS ON THE HISTORY OF ARMENIA OF THE V-III CENTURIES B.C.**

The author tries to give general characteristics of the history of Armenia of the V-III cc. B.C. according to written sources. It was the period when Armenia has relations with the three great empires of the world - Achaemenid, Macedonian and Seleucid.

Armenia entered to this period as the Achaemenid satrapy (since the 521 B.C.). In 331 BC two Armenian kingdoms - Greater Armenia and Lesser Armenia - were proclaimed independents. In article is given the history of those two Armenian kingdoms till the 201 BC.



## ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

### ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Հայ աստվածաբանական միտքն ունի 1600 տարվա պատմություն, և այն ընդամենը մեկ դարով է երիտասարդ Հայաստանում քրիստոնեության որպես պետական կրոնի պատմությունից: Արդեն 5-րդ դարի առաջին կեսում, հայոց այբուբենի և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից անմիջապես հետո, թարգմանվել են Եկեղեցու Հայրերի երկերը, որ հետագայում հայ հոգևոր ավանդության անբաժանելի մասն են դարձել, խթանելով ինքնուրույն աստվածաբանական երկերի ստեղծումը: Այս հզոր մշակութային շարժումը, որի ռահվիրաներն էին Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևն ու նրանց աշակերտները, անկասկած, մեծապես պայմանավորված էր պատմական ու քաղաքական պատճառներով: Հայաստանի՝ Հռոմեական կայսրության և Իրանի միջև 387 թ. բաժանումը, և Հայոց Արշակունյաց թագավորության վերացումը 428 թ. հրատապ խնդիր են դարձրել ազգային ինքնագիտակցության ամրապնդումը, ինչը միջնադարում անհնարին էր առանց կրոնական ինքնագիտակցության ամրապնդման: Դա, իր հերթին, հնարավոր չէր առանց քրիստոնեությունը ժողովրդին մայրենի լեզվով քարոզելուց, որի անհրաժեշտ նախադրյալներից մեկը ինքնուրույն աստվածաբանական գրականության ստեղծումն էր: Սակայն անթույլատրելի պարզեցում կլիներ այդ շարժման առաջացումը բացատրել լոկ այս կամ այն քաղաքական գործոնների ազդեցությամբ: Պետք չէ մոռանալ, որ միջնադարյան մտածելակերպի տեսակետից քաղաքական ոլորտը ամենևին էլ ինքնաբավ ու կրոնական ոլորտից կտրված չէր, իսկ վերջինը դիտվում էր որպես գերագույն արժեք, քանի որ անհրաժեշտ էր հոգու փրկության ու հավիտենական երանության հասնելու համար: Ուստի սխալ կլիներ բացատրել հայ աստվածաբանական մտքի առաջացումը միայն զանազան քաղաքական պատճառների ու շարժառիթների առկայությամբ, քանի

որ այս դարաշրջանի քաղաքականության մեջ կրոնական գործոնը խիստ կարևոր դերակատարություն ուներ:

Ինչպես հայտնի է, Քրիստոս չի հեղինակել Իր վարդապետությունը պարունակող որևէ գրական հուշարձան, և այն ամենն, ինչ մեզ հայտնի է Նրա վարդապետության մասին, մենք գիտենք ուրիշների խոսքերից: Ավետարանները գրվել են Նրա երկրային ուղու ավարտից մի քանի տասնամյակ անց, ու դրանց մեջ պարունակվում է Քրիստոսի վարդապետության լոկ մի մասը: Մնացածը պահպանվել է առաքյալներից եկող բանավոր ավանդության շնորհիվ, և առաջին հերթին՝ Հայտնության ճշմարիտ ըմբռնումը, որ հետագայում ուղղափառ աստվածաբանության հիմքն է դարձել: Եթե տուրք չտանք հարանվանական կանխակալությանն, ապա պիտի խոստովանենք, որ աստվածաբանական որևէ հայեցակարգի ուղղափառության միակ չափանիշը նրա համապատասխանությունն է առաքելական ավանդության սկզբունքներին: Դա այդպես է, քանզի առաքյալների կողմից Ճշմարտության Հոգու ներընդունումը վկայված է Նոր Կտակարանում, որի հեղինակությունը ճանաչվում է բոլոր քրիստոնեական եկեղեցիների կողմից, մինչդեռ այս կամ այն եկեղեցական ժողովի սահմանումների, և առավել ևս առանձին աստվածաբանների երկերի ի վերուստ ներշնչված լինելու փաստի ընդունումը կամ մերժումը լիովին պայմանավորված է հարանվանական պատկանելիությամբ: Հետևաբար, ոչ մի աստվածաբանական հայեցակարգ, որ հակասում է առաքելական ավանդությանը, չպիտի ունենա ճշմարիտ լինելու հավակնություն, որքան էլ մեծ լինի նրա հեղինակությունը նույնիսկ ամենաբազմանդամ քրիստոնեական եկեղեցիներում:

Խոսելով առաքելական ավանդության մասին, հարկ է ընդգծել, որ այն ունի անփոփոխ և մեկընդմիջտ տրված բովանդակություն: Ս. Հոգին առաքյալներին շնորհեց քրիստոնեական ճմարտության ողջ լիությունը, և եկեղեցու հետագա պատմության ընթացքում տեղի է ունեցել լոկ այդ ճշմարտության բացահայտումը և ավելի խոր ըմբռնումը, բայց ոչ զարգացումը կամ փոփոխությունը: Իրականում, քրիստոնեական վարդապետության որևէ էվոլյուցիա չի եղել, ու լինել չէր կարող, քանի որ էվոլյուցիոն գործընթացը ենթադրում է, որ

գոյություն ունի աստիճանական կատարելագործում, մինչդեռ Եկեղեցու պատմության մեջ չի եղել որևէ մեկը, ով ունենար քրիստոնեության ավելի ճիշտ ու կատարյալ իմացություն, քան Քրիստոսի անմիջական աշակերտները, որոնք Պենտեկոստեի օրը ներընդունել են Ճշմարտության Հոգու հրեղեն շնորհը: Ուստի բոլոր աստվածաբանական նորամուծությունները, որ ի հայտ են եկել Եկեղեցու պատմության ընթացքում, պիտի դիտվեն որպես հերձված և մոլորություն, եթե անգամ դրանք սրբագործված են եկեղեցական հեղինակության կողմից: Ճշմարիտ վարդապետությունը պատմական զարգացման արդյունք չէ, հետևաբար այս կամ այն աստվածաբանների հայացքների ուղղափառության աստիճանը որոշելու միակ չափանիշը դրանց համապատասխանությունն է առաքելական ավանդությանը, ընդ որում նրանք իրավունք ունեն այդ ավանդությունը բացահայտելու և պարզաբանելու, բայց ոչ՝ փոփոխելու և զարգացնելու: Նույնը պիտի ասվի նաև եկեղեցական ժողովների մասին: Իրապես տիեզերական կարող են լինել լոկ այն ժողովները, որոնց սահմանումները չեն հակասում առաքելական ավանդությանը: Հարանվանական կողմնակալությունից զերծ վերլուծությունը ցույց է տալիս, որ այս չափանիշին համապատասխանում են ոչ բոլոր ժողովները, որոնք տիեզերական են համարվում անգամ ամենաբազմաճյուղ Եկեղեցիների կողմից:

Հայոց Եկեղեցու վարդապետության կարևորագույն առանձնահատկություններից մեկը նրա խիստ համապատասխանությունն է Ս. Գրքին և առաքելական ավանդությանը: Անշուշտ, նույն բանն են ասում իրենց մասին նաև այլ, մասնավորապես՝ քաղկեդոնական եկեղեցիները, սակայն նրանց հավակնություններն անհիմն են: Ժողովական սահմանումները, որոնց վրա է հիմնված նրանց դավանական աստվածաբանությունը, ձևականորեն արտաձվում են աստվածաշնչական բնագրերից, սակայն դրանց մեկնությունը հաճախ կատարվում է անտիկ իմաստասիրությունից ժառանգված փիլիսոփայական կատեգորիաների միջոցով, որոնք խորթ են աստվածաշնչական Հայտնության ոգուն: Այս կապակցությամբ բավական է հիշել էության, բնության և անձնավորության կատեգորիաների օգտագործումը

երրորդաբանական և քրիստոսաբանական դավանանքները սահմանելու ժամանակ: Այս ամենը չէր կարող չհանգեցնել հավատքի խորհուրդների որոշակի ռացիոնալացմանը, երբ դավանական բանաձևերի տրամաբանական հստակությունը և իմաստային թափանցիկությունը սկսեց ընկալվել որպես այս բանաձևերի կողմից սահմանվող անդրանցական իրականության ճշգրիտ արտացոլում: Հենց այստեղից է բխում այն մոլեռանդ համոզվածությունը, որ եկեղեցական հեղինակության կողմից ընդունված դավանական բանաձևերի հետ յուրաքանչյուր անհամաձայնությունը հերժված է և հավատուրացություն: Սույն տեսակետի կողմնակիցները չեն գիտակցում, որ ոչ մի դավանական բանաձև, որքան էլ այն կատարյալ թվա, չի կարող լինել ի վերուստ հայտնված աստվածաբանական ճշմարտության սպառնիչ սահմանումը, ու հետևաբար նման բանաձևերի մերժումը բուն ճշմարտության մերժում համարվել չի կարող: Ի տարբերություն բյուզանդացիների, հայերը երբեք չէին բացարձակացնում դավանական բանաձևերի կարևորությունը, քանի որ քաջ գիտակցում էին մարդկային լեզվի անհամապատասխանությունն այն անդրանցական էությանը, որ աստվածաբանության առարկան է հանդիսանում: Առաջին հայացքից, այս պնդումը կարող է վիճելի թվալ, քանի որ բյուզանդացիները նույնպես նախապատվություն էին տալիս անճառելի աստվածաբանությանը, չվիճարկելով աստվածային էության բացարձակ անճանաչելիությունը: Սակայն բյուզանդացի աստվածաբանների երկերի առավել ուշադիր դիտարկումը ցույց է տալիս, որ այդ նախապատվությունը նրանց համար, ըստ էության, ձևական բնույթ ուներ: Դրա մասին է վկայում բազմադարյան դավանաբանական բանավեճերը, որ վարում էին բյուզանդացիները բոլոր այն եկեղեցիների դեմ, որոնք գեթ նվազագույն չափով շեղվում էին կայսերական եկեղեցու վարդապետությունից: Բոլոր «հերժվածողները», և առաջին հերթին՝ հայերը մեղադրվում էին ուղղափառությունից շեղվելու մեջ, թեև այդ «շեղումը» կայանում էր միայն որոշ առավել քան կասկածելի դավանական բանաձևերը չընդունելու մեջ: Իրականում ստացվում էր, որ չնայած անճառելի աստվածաբանության նկատմամբ իրենց ունեցած ձևական

հավատարմությանը, բյուզանդացի աստվածաբանները փաստորեն համոզված էին դավանական ճշմարտություններին սպառիչ բանավոր սահմանումներ տալու հնարավորության մեջ, այնպես որ այս կամ այն դավանական բանաձևի մերժումը նրանց համար հավասարազոր էր բուն ճշմարտության մերժմանը: Ի պատիվ Հայոց Եկեղեցու պիտի նշել, որ հավատքի խորհուրդների նման ռացիոնալացումը միշտ խորթ է մնացել նրա համար, և նա այս կամ այն դավանական բանաձևի ընդունումը չի համարել հոգու փրկության նախապայման:

Մինչև արևմտաեվրոպական սխոլաստիկայի ազդեցության տակ գրված Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գիրք»-ը հայ աստվածաբանները խուսափում էին Թովմա Աբվինացու «Աստվածաբանության գումարի» նման ռացիոնալիստական աստվածաբանական համակարգեր ստեղծելուց, քանի որ քրիստոնեական ճշմարտությունը վերապրվում էր նրանց կողմից որպես հոգևոր փորձի անմիջական իրողություն, ինչն ավելորդ էր դարձնում ամեն տեսակի վերացական մտակառույցները: Նրանք դիմում էին դատողականության օգնությանը լոկ այն դեպքում, երբ դա անհրաժեշտ էր առաքելական հավատքի պաշտպանության համար, ընդորոմ դա արվում էր հիմնականում այն պատճառով, որ տրամաբանական փաստարկներին դիմում էին նրանց գաղափարական հակառակորդները, և առաջին հերթին՝ բյուզանդական քաղկեդոնականները: Հավատքի խորհուրդների ռացիոնալացման նկատմամբ այս հակակրանքը հանդիսանում է հայ աստվածաբանական մտքի առանձնահատկությունը, որով նա տարբերվում է բյուզանդական աստվածաբանությունից:

Հայոց Եկեղեցին իրեն առաքելական է անվանում ոչ միայն ս. Թադևոս և ս. Բարդուղիմեոս առաքյալների կողմից հիմնադրված լինելու, այլև իր վարդապետության առաքելական ավանդությանը լիովին համապատասխանելու պատճառով: Հարկ է նշել, որ Եկեղեցու համար առաքելական ավանդությունը երբեք չի եղել զուտ մարդկային վկայություն հավատքի մասին: Առաքյալները խոսում ու քարոզում էին ոչ թե իրենց, այլ Ս. Հոգու անունից, որ բնակվում էր նրանց մեջ Պենտեկոստի օրվանից ի վեր: Հետևաբար, առաքելական ավանդությունն իր մեջ բացարձակ ճշմարտություն է պարունակում,

քանի որ բխում է ոչ թե մարդկային իմաստությունից, որ միշտ սահմանփակ է և հարաբերական, այլ Ճշմարտության Հոգուց, որն, Աստված լինելով, չի կարող սխալվել կամ մոլորվել:

Բարեբախտաբար, մեզ է հասել մի երկ, որում պարունակվում է առաքելական ավանդությունն այն տեսքով, որով նա գոյություն է ունեցել 2-րդ դարում: Խոսքը Իրենեոս Լուզդոնացու «Տրյոք առաքելական քարոզության» երկի մասին է, որ պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ: Ս. Իրենեոսը ծնվել է Փոքր Ասիայում ու եղել է Պողիկարպոս Զմյուռնիացու աշակերտը, որն, իր հերթին, ս. Հովհաննես առաքյալի աշակերտն էր: Այսպիսով նա, ժամանակագրական առումով, առաքյալներին ամենամոտ հեղինակն է, ինչը նրա հայտնած տեղեկություններին բացառիկ արժեք է հաղորդում: Եկեղեցու պատմության մեջ ս. Իրենեոսը հայտնի է գլխավորապես որպես «Ընդդեմ հերձվածոց» երկի հեղինակ, որում նա ջախջախիչ քննադատության է ենթարկել հերձվածողական գնոստիկությունը, որ լայն տարածում էր ստացել 2-րդ դարում: Հատկանշական է, որ գնոստիկների դեմ ս. Իրենեոսի բերած հիմնական փաստարկը նրանց ուսմունքի և առաքելական ավանդության անհամապատասխանությունն է: Առաքելական քարոզի հիմքում ընկած է Աստծո մասին վարդապետությունը. «Աստված, Հայր, չառաջացած, անտեսանելի, Արարիչ ամենայն ինչի, որից վեր և որից վար չկա այլ Աստված, ու քանի որ Աստված բանական էակ է, ապա Նա իր Բանով արարեց այն, ինչ եղել է, և քանզի Աստված Հոգի է, ապա նա Հոգով զարդարեց ամեն ինչ, ինչպես և ասում է մարգարեն. «Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը, և իր բերանի շնչով՝ նրա բոլոր զորությունները» (Սաղմ. 32,6): Եվ քանի որ խոսքը հաստատում է, այսինքն՝ առաջացնում է մարմինը, և բխմանը էություն է տալիս, իսկ Հոգին կազմավորում ու կարգավորում է զորությունների զանազանությունը, ապա ըստ ամենայն արդարության Բանը՝ Որդի, իսկ Հոգին՝ Աստծո արդարություն է անվանվել: Այս դեպքի համար վայել է ասում նաև Պողոսը՝ Նրա առաքյալը. «Մեկ Աստուած, Հայր բոլորի, որ է բոլորի վրա, բոլորի հետ և մեր բոլորի մեջ» (Եփես. 4,6): Քանզի բոլորի վրա՝ Հայրը, բոլորի հետ՝ Բանը, քանի որ Նրանով է ամեն ինչ առաջացել Հորից, իսկ մեր բոլորի մեջ՝ Հոգին, որ

աղաղակում է՝ Աբբա, Հայր, (Գաղ. 4,6) և մարդուն պատրաստում է աստվածանմանությանը: Հոգին ցույց է տալիս Բանը, ուստի մարգարեներն ազդարարում էին Աստծո Որդուն, բայց Բանը կերպար է տալիս Հոգուն, ուստի Ինքն է ներշնչում մարգարեներին, և մարդկանց բերում Հոր մոտ»<sup>1</sup>:

Դժվար չէ նկատել, որ Իրենեսոսի կողմից շարադրված առաքելական վարդապետությունն Աստծո մասին ամբողջապես հիմնված է աստվածաշնչական Հայտնության վրա: Քրիստոնեական Աստված՝ դա Հին Կտակարանի միեղեն անձնական Աստվածն է, որ Նոր Կտակարանում հայտնել է Իր 3 Դեմքերի մասին: Քրիստոնեական վարդապետության քսիոմներից մեկն այն է, որ աստվածային Դեմքերի եռակիությունը բնավ չի հակասում բոլոր աբրահամական կրոնների համար հիմնակազմ միաստվածության սկզբունքին: Այս սկզբունքն ամենայն աներկբայությամբ հաստատվում է հենց Քրիստոսի կողմից. «Եվ Հիսուս ասաց նրան. «բոլոր պատվիրաններից առաջինն է՝ լսիր, Իսրայել, մեր Տեր Աստվածը միակ Տերն է» (Մկ. 12,29) Քրիստոնեական դավանաբանության հիմքում ընկած է այն դրույթը, որի համաձայն Հիսուս Քրիստոս մարմին դարձած Բանն է՝ Ս. Երրորդության երկրորդ Դեմքը: Նրան լիովին վերագրելի է Աստծո հինկտակարանային ինքնանվանումը՝ Ես եմ որ էն: Քրիստոս Ինքն է Իրեն այդպես անվանում (տես Հովհ. 8,58): Քրիստոնեության մեջ Աստված բացարձակ անդրանցական Անձ է, որ վեր է ամեն տեսակի սահմանումներից և որակումներից: Աստծո անդրանցականությունն առկա է արդեն Հին Կտակարանում, որի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Աստծո սրբության գաղափարը: Անշուշտ, այս սրբությունը չպիտի հասկացվի որպես մեղքերի բացակայություն, քանի որ մեղքը որպես հասկացություն անհամատեղելի է Աստծո հասկացության հետ: «Սուրբ» բառին Հին Կտակարանում համապատասխանում է եբրայերեն "qodesh" բառը, որ նշանակում է «զատված»: Դրանով շեշտվում է գոյաբանական տարբերությունը, որ գոյություն ունի Արարչի և արարածի միջև:

Իրենեսոսը վճռականորեն հաստատում է միաստվածության սկզբունքը, մերժելով որևէ այլ Աստծո գոյությունը, բացի Հայր-

---

<sup>1</sup> [http://krotov.info/acts/02/iriney\\_lionsky/iriney\\_ap\\_prop.html](http://krotov.info/acts/02/iriney_lionsky/iriney_ap_prop.html)

Աստծուց, որը նրա համար գերագույն, անդրանցական և անձնական էակ է, երկնքի և երկրի Արարիչը: Նա նշում է Աստծո անտեսանելիությունը, ինչը վկայում է Նրա աննյութական լինելու մասին: Աստծո անտեսանելիությունը խոսում է նաև Նրա անճանաչելիության մասին: Աստծո մասին կարելի է ասել, որ Նա կա, սակայն Նրա իսկությունը ոչ մեկին հայտնի չէ: Իրենեոսը անճանաչելի աստվածաբանության կողմնակից է, ու երբ նա խոսում է Որդու Հորից ծնված լինելու մասին, նա հրաժարվում է սահմանել, թե ինչպես է կատարվում այդ ծնունդը: Նրա համոզմամբ, դա աստվածային կեցության անճանաչելի և անճանաչելի խորհուրդ է, որ սկզբունքորեն անմատչելի է արարածների իմացության համար, ընդ որում ոչ միայն մարդկանց, այլև հրեշտակների: Ոչ մի դավանաբանական սահմանում, որքան էլ այն ճշգրիտ լինի, երբեք չի կարող լիովին համապատասխանել իր առարկային, քանզի մարդկային լեզվի բառերը, որոնք ծառայում են եղական գոյերը նշելու համար, ի զորու չեն ճշգրտորեն սահմանելու անեղ աստվածային գոյը: Արարչի բնությունը սկզբունքորեն տարբերվում է արարածների բնությունից, ու թեև Իրենեոսը, հետևելով Ավետարանին, Աստծուն Հայր է անվանում, սակայն այս անվանումը սահմանում չէ բառիս բուն իմաստով, քանզի որևէ բանին սահմանում տալը նշանակում է որոշել այն սեռն ու տեսակը, որոնց պատկանում է տվյալ երևույթը, իսկ Աստծուն, որպես անդրանցական էակին սույն տրամաբանական կատեգորիաները վերագրելի չեն:

Իրենեոսն Աստծուն անվանում է նաև չառաջացած, այսինքն՝ հավերժական: Աստծո կեցությունն, աստվածային բնության աննյութական լինելու պատճառով, գտնվում է նյութի գոյության ձևեր հանդիսացող ժամանակից ու տարածությունից դուրս: Ի տարբերություն արարածներից, Արարիչը չունի ոչ անցյալ, ոչ ապագա, այլ միայն ներկա. «Ի սկզբանե, Տեր, երկրի հիմքերն հաստատեցիր, և երկինքն էլ գործն է քո ձեռքերի: Կանցնեն դրանք, բայց դու կաս և կմնաս հավիտյան. Դու վերարկուի պես կփոխես դրանք, ու դրանք կփոխվեն: Բայց դու նույնը կմնաս, և քո տարիները չեն անցնի» (Սաղմ 101, 25-27): Աստծո հավերժությունը չափսի նույնացվի անմահության հետ, որ ունեն եղական գոյերը՝ հրեշտակներն ու մարդկային



հոգիները: Հավերժությունը սկիզբ չունենալու և անփոփոխ լինելու հոմանիշ է, մինչդեռ եղական աննյութական էակներն օժտված են միայն անմահությամբ, քանի որ նրանք ունեն սկիզբ, որի պատճառն է Աստծո արարչագործությունը: Բացի դրանից, նրանք ենթակա են փոփոխությունների, ինչի մասին են վկայում հրեշտակների մի մասի մեղսագործությունը, և մարդկանց հոգեկան կյանքի փոփոխական բնույթը, որը չի կարելի պատկերացնել առանց ժամանակի ընթացքում մեկը մյուսին հաջորդող զանազան հոգեվիճակների: Այսպիսով, Աստծո հավերժությունը բխում է Նրա ինքնաբավ և ինքնակա բնությունից: Այն որևէ ընդհանրություն չունի անսահմանափակ ժամանակային տևողության հետ, լինելով կատարյալ և մշտնջենավոր կյանքի լիություն, որին հաղորդակից լինելու շնորհիվ են ապրում բոլոր արարածները, «...քանի որ նրանով ապրում ենք և շարժվում ենք և կանք» (Գործք 11,28):

Ահա Իրենեոսի երրորդաբանական վարդապետության ևս մեկ բանաձևում. «Այս է մեր հավատի կանոնը, և շինության հիմքը, և ընթացքի զորությունը. Աստված, Հայր, չառաջացած, անպարագիր, անտեսանելի, միեղեն Աստված, Արարիչ ամենայնի՝ դա է մեր հավատի ամենաառաջին դրույթը: Երկրորդ դրույթը՝ Բանն Աստծո, Որդի Աստծո, Տեր մեր Քրիստոս Հիսուս, որը հայտնվել է մարգարեներին Նրանց մարգարեության կերպին համապատասխան, և հետևելով Հոր սահմանումին, Որով ամեն ինչ առաջացավ, և Որը նաև ժամանակների վերջում, որպեսզի ամեն ինչ կատարելության բերի և միավորի, մարդ դարձավ մարդկանց միջև՝ տեսանելի և շոշափելի, որպեսզի վերացնի մահը, և ցույց տա կյանքը, և միավորման շփում առաջացնի Աստծո և մարդու միջև: Եվ երրորդ դրույթը՝ Սուրբ Հոգին, Որով մարգարեները մարգարեանում էին, հայրերը սովորել են աստվածայինը, և արդարներն արդարության ճանապարհն են բերվել, և Որը ժամանակների վերջում հեղվել է մարդկության վրա ամբողջ երկրով մեկ, նորոգելով մարդուն Աստծո համար»<sup>2</sup>: Հայր-Աստծո գաղափարը պատկանում է Նոր Կտակարանին, թեև Հին Կտարարանում արդեն կային դրա սաղմերը (Սաղմ. 2,7): Ավետարանն ազդարարում է, որ Աստված հիրավի Հայր

---

<sup>2</sup> Նույն տեղում:

է, քանի որ Նա հավերժության մեջ ծնում է Իրեն էակից Որդուն: Դա զուտ հոգևոր հայրություն է, քանզի Որդին, ծնված է եղել Հոր կողմից ոչ թե ժամանակի, այլ հավերժության մեջ: Իսուսելով Հայր-Աստծո մասին, Իրենեոսը շեշտում է, որ Նա, նախ և առաջ, Արարիչն է ամենայնի: Այստեղ նա հավատարմորեն հետևում է առաքելական ավանդությանը, որն, իր հերթին, հիմնված է Ս.Գրքի վրա, իսկ ամբողջ Աստվածաշունչը սկզբից մինչև վերջ, տոգորված է արարչապաշտության գաղափարով: Միաժամանակ Իրենեոսը նշում է, որ արարչագործությունը ոչ միայն Հոր, այլև ամբողջ ս. Երրորդության, և առաջին հերթին՝ Որդու գործն էր: Դա նշվում է արդեն Հին Կտակարանում. «Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը, և Իր բերանի շնչով՝ նրա բոլոր գործությունները» (Սաղմ. 32,6), իսկ Հովհաննեսի Ավետարանի նախաբանում աստվածային Բանի աշխարհաստեղծ դերը հաստատվում է ամենայն աներկյիմաստությամբ (տե՛ս Հովհ. 1,1-10): Ըստ Իրենեոսի, աշխարհն արարվեց Հոր կողմից Որդու միջնորդությամբ, որպեսզի ժամանակների վերջում այն քավվի և վերադարձվի Արարչին մարմնացած Բանի կողմից, օծվելով Ս.Հոգով: Սա է առաքելական աստվածաբանության, տիեզերաբանության ու փրկչաբանության գաղափարական ուղնուղծուծը, որը կարող է ծառայել որպես այս կամ այն աստվածաբանական տեսության ուղղափառության չափանիշ:

Համեմատենք Իրենեոսի վարդապետությունը հայ աստվածաբանական մտքի կարևորագույն հուշարձաններից մեկի՝ «Հաճախապատում ճառեր»-ի հետ: «Մի է բնութիւն և գոյութիւն ամենասուրբ Երրորդութեանն. և իւր է ինքնութիւնն, և ոչ յայլմէ գոյութենէն: Զանսկիզբն ունի զպատճառսն Հայր զՈրդոյ և զՀոգոյ: Իսկութիւն անծին և էութիւն անսկիզբն, մշտնջենասորութիւն անսահման և ճշմարտութիւն անխախտելի, կեանք և կեցուցիչ ամենայն կենդանեաց: Հայր է Որդոյ, և բոլխումն Հոգոյ. Աստուած է և արարիչ արարածոց երևելեաց և աներևութից»<sup>3</sup>: Այս հատվածում զգացվում է հեղինակի կապն առաքելական ավանդության հետ, քանի որ նա Աստված և արարիչ է համարում Հորը, ինչով շեշտվում է նրա

---

<sup>3</sup> Գրիգորի Հայոց Լուսավորչի ասացեալ ճառս Յաճախապատումս, Վենետիկ, 1954, էջ 9:

հավատարմությունը միաստվածության հիմնակազմ սկզբունքին: Իրենեոս Լուգդոնացու վարդապետության հետ նմանությունը միանգամայն ակնհայտ է:

Իրենեոս Լուգդոնացու վարդապետության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում քրիստոսաբանությունը: «Այստեղ Աստծո կողմից ուղարկվել են մարգարեները, որոնք Սուրբ Հոգով խրատում էին ժողովրդին, ու վերադարձնում էին նրան հայրերի ամենազոր Աստծուն: Նրանք Տեր մեր Հիսուս Քրիստոսի, Աստծո Որդու նախակարապետներն էին, ազդարարելով, որ մարմինը Նրա աճելու է Դավթի տնից, ինչի հետևանքով սերունդների երկար շարքից հետո Նա մարմնով լինելու է Դավթի որդին, որը որդին է Աբրահամի, սակայն Հոգով Նա Աստծո որդին է, (համ. Հռոմ 1,3) քանի որ առաջ նա Հոր մոտ էր, ծնված լինելով նախքան աշխարհի արարումը, և ժամանակների վերջում ի հայտ եկավ համայն աշխարհին մարդկային կերպարանքով: Դրա շնորհիվ Բան Աստված իր մեջ ի կատար ածեց այն ամենն, ինչ երկնքում է և երկրի վրա է»<sup>4</sup>: Ուշադրություն դարձնենք այն վճռականության վրա, որով Իրենեոսը պնդում է, որ Բանը ծնված է եղել հավերժության մեջ բոլոր արարածներից առաջ: Դա վկայում է այն մասին, որ Իրենեոսի կյանքի տարիներից մեկ դար անց ի հայտ եկած արիստականությունը արմատապես հակասում էր առաքելական ավանդությանը: Իրենեոսն ամենայն աներկիմաստությամբ շեշտում է մարմին եղած Բան-Աստծո անեղ բնությունը, և հստակորեն զատորոշում է արարումն ու ծնունդը: Կարելի է ասել, որ նա նիկեական ուղղափառության կողմնակից էր Նիկիայի ժողովից 100 տարի առաջ: Նրա մոտ կարելի է գտնել Քրիստոսի տնօրինության միանգամայն ուղղափառ ըմբռնումը. «Նա միավորեց մարդկանց Աստծո հետ, և խաղաղություն ու համաձայնություն հաստատեց մարդու և Աստծո միջև, քանզի մենք ի զորու չէինք այլ կերպ հաղորդակից դառնալու անապականությանը, եթե Նա չգար մեզ մոտ: Քանզի քանի դեռ անապականությունն անտեսանելի էր և ի հայտ չէր եկել, այն ամենևին էլ օգտակար չէր մեզ համար, իսկ հիմա այն տեսանելի դարձավ, որպեսզի մենք բոլոր առումներով կարողանանք հաղորդակից լինել անապականությանը: Ու քանի որ մենք բոլորս նախաստեղծ Ադամի

<sup>4</sup> [http://krotov.info/acts/02/iriney\\_lionsky/iriney\\_ap\\_prop.html](http://krotov.info/acts/02/iriney_lionsky/iriney_ap_prop.html)

անհնազանդության պատճառով ամուր կապված էինք մահվան հետ, ապա հարկ էր, որ մահն ավերվի հնազանդությամբ Նրա, Ով հանուն մեզ մարդ դարձավ: Բայց քանի որ մահն իշխում էր մարմնի վրա, ապա հարկ էր, որպեսզի այն ազատի մարդուն իր ճնշումից, վերացված լինելով մարմնի միջոցով: Բանը մարմին եղավ, որպեսզի այն նույն մարմնի միջոցով, որի շնորհիվ մեղքը հաստատվել ու իշխել է, այն վերացվի և այլևս չլինի մեր մեջ»<sup>5</sup> (տե՛ս Հռոմ. 8,3):

Այստեղ շատ էական է հետևյալ հանգամանքը: Իրենետուը, գրելով մարմնի մասին, նկատի ունի մարմնի աստվածաշնչական ըմբռնումը: Ս. Գրքում մարմին բառը նշանակում է ոչ միայն մարդու ֆիզիկական բնությունը, ինչպես այժմ, այլ մարդու անձնավորությունը ինչպես մի ամբողջականություն, իր հոգեկան ոլորտը ներառյալ: Համատեքստից պարզ երևում է, որ Իրենետոսի համար մարդ և մարմին եզրույթները հոմանիշներ են: Դրանից բխում է, որ քաղկեդոնական քրիստոսաբանությունը, որի համաձայն Քրիստոսի մարդկային բնությունը զուրկ էր իրեն համապատասխանող մարդկային անձից, և անձնավորված էր Բան-Աստծո անձի կողմից, հակասում է առաքելական ավանդությանը: Այս թյուր վարդապետության հեղինակներն էին VI դարի աստվածաբաններ Ղևոնդիոս Բյուզանդացին և Հովհաննես Քերական Կեսարացին: Նրանք առաջ են քաշել այդպես կոչված «անձնավորման» գաղափարը, որի համաձայն Քրիստոս չուներ մարդկային անձ, և նրա մարդկային բնությունը անձնավորվում էր Բանի աստվածային Անձի կողմից: Ղևոնդիոս Բյուզանդացու խոսքերով. «Քրիստոս չունի մարդկային անձ, որ առանձնացված է մեր անձի նման: Սակայն Բանի Անձն ընդհանուր է, անբաժանելի լինելով ինչպես Նրա մարդկային, այնպես էլ Նրա աստվածային բնությունից»<sup>6</sup>: Սույն գաղափարի ի հայտ գալը պայմանավորված էր այն դժվարություններով, որոնց առաջ են կանգնել քաղկեդոնականները, քանի որ Քաղկեդոնի ժողովը, սահմանելով առանձին մարդկային բնության գոյությունն ի Քրիստոս, չբացատրեց, թե ինչպես կարող է կատարյալ համարվել Փրկչի մարդկային բնությունը, եթե այն չունի անձ: Անձնավորման

---

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> <http://azbyka.ru/dictionary/03/voipostazirovanie-all.shtml>

գաղափարը, քաղկեդոնականների կարծիքով, քրիստոսաբանական այս կնճռոտ հարցի համոզիչ բացատրություն է տալիս: Ինչպես ասում է Հովհաննես Դամասկացին. «Արդ, Բան Աստված մարդացավ, ընդունելով Աստվածածնից մեր կազմի առաջին պտուղը՝ մարմինը, որ կենդանացված է մտածող ու բանավոր հոգով, այնպես որ Բան Աստծո բուն Անձը անձ դարձավ մարմնի համար»<sup>7</sup>: Այս դրվագում պարզ երևում է, որ Հովհաննես Դամասկացին, որին կարելի է բյուզանդական աստվածաբանական մտքի խոշորագույն համակարգողը համարել, մարմին ասելիս, հասկանում է մի այլ բան, քան Ս. Գրքին և առաքելական ավանդությանը հավատարիմ Իրենեոս Լուզոնացին: Նրա համար մարմինը ոչ թե մարդու ամբողջական անձնավորության հոմանիշ է, այլ նշանակում է մարդու ֆիզիկական կազմ, և ուրիշ ոչինչ: Առավել ուշագրավ է այստեղ այն հանգամանքը, որ Դամասկացին, Քաղկեդոնի ժողովի սահմանումների ջերմեռանդ ջատագովը լինելով հանդերձ չի նկատում, որ նրա հայացքները հակասում են հենց Քաղկեդոնի ժողովի դավանական բանաձևին, որի համաձայն Քրիստոս «ճշմարիտ Աստված է և ճշմարիտ մարդ»: Նա, ասես, չի գիտակցում, որ անիմաստ է խոսել ճշմարիտ մարդ լինելու մասին, եթե բացակայում է մարդ արարածի կարևորագույն բաղադրիչը՝ անձը: Այս ակնհայտ հակասությունը քաղկեդոնական աստվածաբանները չեն ցանկանում նկատել մինչև այսօր:

Հայ աստվածաբանների տեսակետը բոլորովին այլ է: Ի տարբերություն քաղկեդոնականների ու հետևելով առաքելական ավանդությանը, նրանք պնդում էին, որ ի Քրիստոս, բացի Բանի աստվածային անձից, կար նաև զուտ մարդկային անձ, որ անձնավորում էր Նրա մարդկային բնությունը: Ընդ որում այստեղ էականն այն է, որ այդ երկու բնություններն ու անձերը գտնվում են անճառելի միավորության մեջ: Ինչպես գրում է ս. Հովհան Օձնեցին. «Ապա ուրեմն մի բնութիւն եւ մի դէմ Քրիստոսի, եթէ պարտ է համառօտագգոյնս ասել, ոչ է ըստ նոյնութեան բնութեան կամ ըստ միանձնականութեան. զի այս երկուսին ի միասին գրեթէ զրկեսցէ, զԱստուած ի մարդն լինելոյ եւ զմարդն աստուածանալոյ. այլ է, որպէս բազում անգամ ասացի, ըստ անճառ միաւորութեան Բանին ընդ

---

<sup>7</sup> [http://azbyka.ru/hristianstvo/dogmaty/damaskin\\_izlozhenie\\_pravoslavnoy\\_very\\_052-all.shtml](http://azbyka.ru/hristianstvo/dogmaty/damaskin_izlozhenie_pravoslavnoy_very_052-all.shtml)

Իրում մարմնի»<sup>8</sup>: Այս հատվածից պարզ երևում է, որ ս. Հովհան Օձնեցի, Իրենեոս Լուզդոնացու նման, և ի տարբերություն Հովհաննես Դամասկացու, մարմին ասելիս, հասկանում է մարդու ամբողջական անձնավորությունը, այլ ոչ միայն ֆիզիկական մարմինը, ու ելնելով այս ըմբռնումից, նա չի կարող ընդունել քաղկեդոնական այն տեսակետը, որ Քրիստոս չուներ մարդկային անձ, և Նրա մարդկային բնությունն անձնավորվում էր Բան-Աստծո Անձի կողմից:

Ամփոփելով, նշենք հետևյալը: Հայոց եկեղեցին իրեն ավանդաբար առաքելական ծագում է վերագրում, սակայն գիտական շրջանակներում այս հավակնության նկատմամբ գոյություն ունի սկեպտիկական վերաբերմունք, որի հիմնական պատճառը Հայոց եկեղեցու առաքելական ծագման ավանդական պատկերացումները հաստատող հավաստի պատմական աղբյուրների բացակայությունն է: Սակայն այդ պատկերացումների իսկությունը հաստատելու համար նման աղբյուրների առկայությունը պարտադիր չէ, քանի որ պահպանվել է աստվածաբանական մտքի հուշարձաններ, որում ճշգրտորեն վերարտադրված է առաքելական ավանդությունն իրեն բնորոշ դավանաբանական պատկերացումները՝ դա Իրենեոս Լուզդոնացու երկերն են: Վերջիններիս համեմատությունը հայ վաղմիջնադարյան աստվածաբանական մտքի հուշարձանների հետ ցույց է տալիս, որ Հայոց եկեղեցու դավանությունը բոլոր հիմնական կետերում համապատասխանում է առաքելական ավանդությանը, ինչը վկայում է իր առաքելական եկեղեցի լինելու ավանդական պատկերացումների ճշմարտացիության մասին:

ARTHUR MATEVOSYAN

## THE APOSTOLIC SOURCES OF DOCTRINE OF THE ARMENIAN CHURCH

The Armenian theological thought is 1600 years old, and it is only a century younger than the Christianity as official religion in Armenia. Its emergence, being one of manifestations of the mighty cultural movement of 5th century which founders were Mesrop Mashtots and Sahak Partev, was in many respects caused

---

<sup>8</sup> Ընդդեմ երևութականաց, «Յովհաննու Իմաստասիրի Աւնեցոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 52:

by the historical and political reasons - the partition of Armenia between Rome and Persia in 387AD, and final elimination of the Armenian statehood in 428AD that made very actual the task of strengthening of national self-consciousness, which in the Middle Ages was impossible without strengthening of the religious identity, and which, in turn, was impossible without creation of own theological tradition. However it would be inadmissible simplification to explain emergence of the Armenian theology exclusively by these reasons. One should remember that from the point of view of medieval mentality the political sphere wasn't self-sufficing, and it was subordinated to the spiritual sphere on which were depended the salvation of soul and the eternal bliss. In the course of formation of the Armenian theological thought the important role was played by apostolic tradition. There is a literary monument of the 2nd century that contains the exposition of this Tradition. It is "The proof of the apostolic sermon" by Irenaeus of Lugdunum, who was a hearer of st. Polycarp, who in turn was a disciple of st. John the Evangelist, and in his works remained the primary and most authentic form of Christianity. The comparison of theological doctrine of Irenaeus of Lugdunum with the corresponding ideas containing in works of the Armenian theologians of early Middle Ages shows that the Armenian theology of this period kept all basic dogmatic principles of the apostolic tradition that one cannot say about the Byzantian theology of the same historical period. Owing to this fact it is possible to assert that traditional idea of the Armenian Church of its apostolic sources is entirely well-founded.

## ԳՈՌ ՄԱՐԳԱՐՅԱՆ

### ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (XVI դ.)

XVI դ. Վրաստանը մասնատված էր Քարթլիի, Կախեթի, Իմերեթի թագավորությունների և Սամցխեի կիսանկախ աթաբեկության: Բացի քաղաքական մասնատվածությունից Վրաստանում երկճեղքված էր նաև հոգևոր իշխանությունը՝ ստեղծվել էին երկու կաթողիկոսություններ: Արևելյան Վրաստանի վրա տարածվում էր Մցխեթի կաթողիկոսության իշխանությունը՝ Քարթլիի, Կախեթի և Թիֆլիսի կաթողիկոս-պատրիարքի առաջնորդությամբ, իսկ Արևմտյան Վրաստանի՝ Իմերեթի և Աբխազիայի վրա՝ Բիչվինտյան կաթողիկոսության իշխանությունը: Այն Մցխեթի կաթողիկոսությունից անկախացել և կաթողիկոսության կարգավիճակ էր ստացել XIV դ.<sup>1</sup>: Վրաստանում, ինչպես և ավատատիրական մյուս երկրներում, աշխարհիկ իշխանության ներկայացուցիչներից բացի խոշոր ավատատեր էր նաև հոգևոր իշխանությունը: Նրան էին պատկանում ճորտեր, գյուղեր, խոշոր կալվածքներ, կրպակներ և նյութական տարբեր հարստություններ: Կալվածքներ և ունեցվածք եկեղեցին ձեռք էր բերում աշխարհիկ իշխանության կողմից ստացված նվիրատվությունների, իր կողմից նախաձեռնված գնումների, ինչպես նաև բռնագրավումների միջոցով՝ հանդես գալով որպես դատաիրավական գործառույթ իրականացնող ինստիտուտ<sup>2</sup>: Վանքապատկան կալվածքները ունեին կարևոր մի առանձնահատկություն՝ դրանց շնորհիվում էր ապահարկության՝ թարխանության իրավունք: Այդ դեպքում եկեղեցու կալվածքները

---

<sup>1</sup> Բիչվինտյան անկախ կաթողիկոսության առաջացման թվագրումը XIV դարով պայմանավորված է բիչվինտյան առաջին կաթողիկոս Արսենի կաթողիկոսության առաջին՝ 1390 թ. տարեթվով: Տե՛ս Иосселиани П., Краткая история грузинской церкви, С. Петербург, 1843, с. 151.

<sup>2</sup> Какабадзе С., Грузинские документы IX-XV вв., Москва, 1982, с. 177.



հայտնվում էին արտոնյալ վիճակում՝ լիովին կամ որոշ դեպքերում մասամբ ազատվելով արքունական հարկերից:

Վրաց եկեղեցու տնտեսական կարողության, ապահարկության իրավունքի, հոգևոր և աշխարհիկ իշխանության փոխհարաբերությունների արժեքավոր աղբյուրներ են նվիրատվությունների և ապահարկության վերաբերյալ այն հրովարտականները, որոնք տվել են վրաց արքաները եկեղեցուն: Ստորև քննության են ենթարկվում XVI դ. թվագրվող Արևելյան Վրաստանում վանական կալվածատիրության և ապահարկության մի շարք հրովարտականեր: Առաջին վավերագիրը ներկայացնում է սույն ժամանակաշրջանում Մցխեթի կաթողիկոսության կալվածքների տեսակները և դրանց ապահարկության իրավունքը:

**Քարթլիի կաթողիկոսական կալվածքների ապահարկության  
հրովարտակ<sup>3</sup>  
(1559 թ. դեկտեմբերի 1)**

*Բարաթաշվիլիից...[երկու-երեք բառ պակասում է] ...Բերկաձենն իր կալվածքով<sup>4</sup>, Թանգուլաշվիլին իր կալվածքով...[երկու-երեք բառ պակասում է]... [Ու]ղաշվիլին իր կալվածքով:*

*Սխալդիդի գյուղն իր արդարացի սահմաններով,*

*[Ծինու]բանի<sup>5</sup> գյուղն իր սահմաններով,*

*Ձաղիսխեվի գյուղատեղին իր սահմաններով,*

*Շուազոմնի գյուղատեղին իր սահմաններով,*

*Սաթալզմենի գյուղատեղին իր սահմաններով,*

*Քուաբնի գյուղն իր սահմաններով,*

*Ուպիտին՝ իր սահմաններով,*

*Թելովանին՝ իր սահմաններով,*

---

<sup>3</sup> Памятники грузинского права (այսուհետ՝ ПГП), тексты издал, примечаниями и указателями снабдил И. Долидзе, Тбилиси, 1970, с. 263.

<sup>4</sup> Կալվածքների ցանկը տրված է բնագրին համահունչ:

<sup>5</sup> Ծինուբանի կամ Ծուանբանի՝ բնակավայր Վերին Քարթլիում, Փոքր Լիախվի գետի ձախ ափին: Տե՛ս Гильденштедт И.А., Путешествие по Кавказу в 1770-1773 гг., С.-Петербург, 2002, с. 110, 139, Географическое и статистическое описание Грузии и Кавказа из путешествия г-на Академика И.А. Гильденштедта через Россию и по Кавказским горам, в 1770, 71, 72 и 73 годах, Санктпетербург, 1809, с. 310.

Կարսանին՝ իր սահմաններով,  
 Նաքուբաքեվնին իր սահմաններով,  
 Մուխադգուերդին իր սահմաններով,  
 Արմազի<sup>6</sup> ամրոցը իր վանքով և իր մաքսով և եկամուրներով,  
 Յիխեդդիդին՝ իր սահմաններով,  
 Ձեգուին իր սահմաններով,  
 Մլախոտրին իր սահմաններով և իր հաստատված կալվածքներով,  
 Քավթիսիսեվում Գագեվիշվիլին պարկանած կալվածքները,  
 Իվանիաձեուվով և վանքով<sup>7</sup>, իր հաստատված կալվածքներով,  
 Նիաբին՝ իր սահմաններով,  
 Գոմին՝ իր սահմաններով,  
 Մեթեխին<sup>8</sup> իր սահմաններով,  
 Չոչեթին՝ իր սահմաններով,  
 Աթենիում<sup>9</sup> Ծիուրնեցիները, Գորեցիները և Թբիլեաշվիլին իրենց  
 կալվածքներով և Գագանաուրայի խաղողի մեծ այգիները:  
 Խուեդուրեթիում, ինչ-որ հնուց ի վեր Մցխեթին նվիրված  
 գյուղացիներ և կալվածքներ կան, իր օրինական սահմաններով,  
 Տանձիեցիները<sup>10</sup> իրենց կալվածքով,  
 Իմերիսեվիում Մաջանիսձեն և ամրոցը,  
 Քորազնայի [ամրոցի] խաղողի այգին,  
 Սարկեն<sup>11</sup> իր եկամուրներով,  
 Դիդգորիի Մոխիսի գյուղը,  
 Դիդուամիում խաղողի այգիները,

<sup>6</sup> Ամրոց և մաքսակետ Քարթլիում, Մցխեթից արևմուտք: Տե՛ս ԿաԿաԲաԴԶԵ Շ., նշվ. աշխ., էջ 228:

<sup>7</sup> Հավանաբար խոսքը Քվաթախեվիլի վանքի մասին է, որը գտնվում է Կավտիսիսեվի գյուղի մոտ:

<sup>8</sup> Ամրոց և վանք Թբիլիսիում: Բագրատիոնի Վ., *История царства грузинского*, Тбилиси, 1976, с. 320.

<sup>9</sup> Քաղաք և ամրոց Քարթլիում, Գորի քաղաքի մոտ: Տե՛ն Բագրատիոնի Վ., *История царства грузинского*, с. 315.

<sup>10</sup> Գյուղ Քարթլիում, Խոամի գետի հովտում: Տե՛ս *Description géographique de la Géorgie, par le Tsarevitch Wakhoucht, par M. Brosset, S.-Petersbourg*, p. 155.

<sup>11</sup> Սարկե կամ Սարկինե անապատ. Շիո-Մղուիմյան վանական համալիրը 14-րդ դարի վերջերից սկսել է անվանվել Սարկե անապատ, գտնվում է Մցխեթի մոտ: Շ. ԿաԿաԲաԴԶԵ, նշվ. աշխ., էջ 113, 12, 244:

*Թրիալեթում(Թոեդք) Էձանի գյուղը և Ներքին Բեշքենաշենին իր սահմաններով,*

*Ախոսի գյուղատեղիները և Յեցխլաձենները իրենց կալվածքներով,*

*Գորիում, ինչ-որ հնուց ի վեր Մցխեթին նվիրված գյուղացիներ ու վաճառականներ կան, իրենց տունուտեղով, կրպակներով, կալվածքներով, Գորիի դիմաց Վերին Ախալդաբա [գյուղը], Փալավանդիշվիլու կողմից նվիրաբերված տասնութ կալվածքները իրենց օրինական սահմաններով,*

*Տիրձնի [գյուղում] Գելդիաշվիլին, Գուդաձեն, Ուրիձեն և Փիլիպաշվիլիները իրենց կալվածքներով,*

*Վերին Մեղուրեկիում մեկ լրիվ գյուղացիական կալվածք[սագլեխո]<sup>12</sup>, Փոքր<sup>13</sup> Մեղուրեկի գյուղատեղին իր օրինական սահմաններով,*

*Էրեթիում<sup>14</sup> երկու ծովս, Գաբրիել անձը և նրա մասնաբաժինը իր կալվածքով,*

*Քուրդի գյուղն իր սահմաններով,*

*Ջակուին՝ իր սահմաններով,*

*Սաթիխարին՝ իր սահմաններով,*

*Դիսելի գյուղը և վանքը իր եկամուտներով, իր սահմաններով:*

*Փլավում Մրովլիսշվիլին իր վանքով և կալվածքով, Ճինճվելիձեն իր կալվածքով, Ճարեբելիձեն իր կալվածքով, Յալկուերիձեն իր կալվածքով,*

*Կուլքիտում երեք գյուղական ունեցվածք՝ Գեգելիշվիլի, Լիպարիտաշվիլի և Միքլուրաուրի,*

*Վիրշան<sup>15</sup> իր եկամուտներով,*

*Ծխածկալթա իշխանից նվիրատվություն ստացված Արշվաձենները իրենց ունեցվածքով,*

*Ռուխում Մրովելաշվիլին իր ունեցվածքով Թավերիձեի փոխարեն,*

*Քուեշին իր սահմաններով,*

*Ջերթին իր սահմաններով,*

---

<sup>12</sup> სავლევბო՝ սագլեխո՝ գյուղացիական ունեցվածք: Какабадазе С., նշվ. աշխ., էջ 264:

<sup>13</sup> Բնագրում ցոտա՝ քիչ, թարգմանված է փոքր:

<sup>14</sup> Հավանաբար խոսքը Քարթլիում գտնվող Էրեդի կամ Էրեդլի բնակավայրի, և ոչ Էրեթի երկրամասի մասին է: Նույն տեղում, էջ 104, 249:

<sup>15</sup> Վանք Քարթլիում: Նույն տեղում, էջ 231:

Ծառա և կալվածք են<sup>16</sup>՝ Վեղորի գյուղն իր սահմաններով,  
 Ռեխիսխեսվիում երեք գյուղական ծուխ իրենց ունեցվածքով,  
 Նիկոզանին իր սահմաններով, Քարցիծեները և Տաիրիշվիլիները  
 իրենց ունեցվածքով,  
 Ալախանին՝ իր սահմաններով,  
 Ագարան՝ իր սահմաններով,  
 Տուրաթան՝ իր սահմաններով,  
 Քսանի Կոնին անվիճելի իր գետափերով,  
 Չքունուրի գյուղն իր սահմաններով,  
 Մուխանի գյուղն իր սահմաններով,  
 Ծկալաբարոանա գյուղաբերդին իր սահմաններով,  
 Ծերովանին և Գորովանին իրենց սահմաններով, Մակուճաճեները  
 իրենց կալվածքով,  
 Շարափխանա գյուղաբերդին իր սահմաններով,  
 Թեկենան իր սահմաններով,  
 Կասպիում գյուղերը իրենց կալվածքներով,  
 Յիխեբդավին իր սահմաններով,  
 Կուլենելի գյուղն իր սահմաններով, նաև Միսաքցիելյան  
 դամբարանը, ինչպես հրովարտակի<sup>17</sup> մեջ գրված է,  
 Նավազա գյուղն իր սահմաններով,  
 Աշի Օդիշելիճեները իրենց ունեցվածքով և Կոպինաշվիլին<sup>18</sup>,  
 Պոնթխելյան իր սահմաններով,  
 Եվ ինչ-որ մցխեթական [կաթողիկոսության] կալվածք է  
 Քինճարայում<sup>19</sup> իր սահմաններով,

<sup>16</sup> [Ն/Շոյեծո՛] թարգմանված է ծառա (Գ. Մ.):

<sup>17</sup> Խոսքը 1447 թ. «Քարթլիի և Կախեթի կաթողիկոսական կալվածքների ապահարկության հրովարտակի» մասին է, որտեղ ի տարբերություն 1392 թ. «Քարթլիի, Կախեթիի, Մեսխեթի կաթողիկոսական կալվածքների ապահարկության հրովարտակի» Միսաքցիելի գյուղի փոխարեն 1447 թ. հրովարտակում գրված է Միսաքցիելյան դամբարան, իսկ 1392 թ. հրովարտակում հիշատակվող Կուլենի գյուղը հետագայում՝ 1559 թ. նշված է որպես Կուլենելի գյուղ: ПГП, т. III, с. 187-193, 176-181; Какабадзе С., նշվ. աշխ., էջ 158-161, 101-107:

<sup>18</sup> Բնագրում գրված է տողի վերևում:

<sup>19</sup> Գյուղ Քարթլիում, Մցխեթից հյուսիս: Багратиони В, նշվ. աշխ., էջ 319:

Ուլումբա<sup>20</sup> [վանքը] իր եկամուտներով, Սագուդեն իր սահմաններով,

Կողմանին<sup>21</sup> իր սահմաններով,

Սավանթի գյուղատեղին իր սահմաններով,

Շուա Մուխնարին, որ հնուց է արարված, իր ջրով...

Մրանցից, որոնց կավածքները և երկրամասերը մեր նախորդ արքայից արքա ողորմած հոգի մեր հայրերը և պապերը թարխանություն՝ ապահարկություն են գրել, և շնորհել ազատություն և անձեռնմխելիություն հաստատել, այժմ մենք այս հրովարտակով նորից ապահարկեցինք և ազատեցինք բոլոր պահանջներից և տուրքերից:

Այլևս ոչինչ չպահանջվի և չհաշվառվի ո՛չ մի տեղ և ո՛չ մի ժամանակ ո՛չ թաթարական ուլուփա, ո՛չ փոքր հաշվառվող մշտական ուլուփա<sup>22</sup>, [չպահանջել հոգուր] ձիապանի, բազիերի<sup>23</sup>, ախոռսալարի, շնապահի, ո՛չ գրաստ պահանջել, ո՛չ մորթի ենթակա անասուն, ո՛չ խոհանոցի փայտ կրող, ո՛չ խոհանոցի ջրկիր և ինչ նոր մարդու[գրագրի՝ մծիգնոբարի] կողմից հորինվի[հարկ կամ տուրք], երբեք ո՛չ ոքից չպահանջվի, ո՛չ ոք չհաշվառվի[որպես արքունական հարկատու] և ոչ մի պահանջ չլինի...

Գրվեց այս հրովարտակը մեր թագավորության ինդիկտիոնի<sup>24</sup> չորրորդ տարում, քրոնիկոնի<sup>25</sup> ՆԹՖ (1559 թ.<sup>26</sup>), դեկտեմբեր ամսի

---

<sup>20</sup> Ուլումբայի Աստվածամոր վանք, գտնվում է Շերաթետի գետի հովտում: St'us Description géographique de la Géorgie, par le Tsarevitch Wakhoucht, par Brosset M., S.-Pétersbourg, p. 267.

<sup>21</sup> Գյուղ Մցխեթի մերձակայքում: Նույն տեղում, էջ 237:

<sup>22</sup> Մեծ թաթարական ուլուփա՝ (დიდი სათათრო ულუფა), փոքր մշտական հաշվառվող ուլուփա (წვრილი საწვრიო მუდამი ულუფა)՝ բնամթերքով գանձվող հարկատեսակներ: Brosset M., Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu' au XIX<sup>e</sup> siècle, Introduction et tables des matières. St.-Pétersbourg, 1858, pp. CLXX- CLXXVI. Какабадзе С., նշվ. աշխ., էջ 268:

<sup>23</sup> (ზაზიერი) բազիերի՝ բազեապահ, ախոռսալարի (ახორსალარი) ախոռապետ, Кაკაбадзе С., նշվ. աշխ., էջ 251:

<sup>24</sup> Վրացական ինդիկտիոնով նշվում էին վրաց արքաների կառավարման տարիները: Кაკაбадзе С., նշվ. աշխ., էջ 255:

<sup>25</sup> Վրաց միջնադարյան իրականության մեջ կիրառվող թվագրության ձև, որը ներկայացնում էր 532 տարի ներառող և կրկնվող շրջան և հիմնվում էր աշխարհի արարումից սկսած 5604 տարվա դարաշրջանի վրա: Сумбат Давитисдзе, История и повествование о Багратионах, пер. и прим. Лордкипанидзе М. Д., Тбилиси, 1979, с. 9.

մեկին, Քվաթախեվի վանքի վանահոր Բարաթաշվիլի Փիլիպպեի ձեռքով:

Այլ ձեռագրով գրված է.

Երբ գրեցինք այս հրովարտակը, այդ ժամանակ Ջանճվելիձեի, Ճարեբելիձեի, Ցակլուերիձեի և Տանձիեցիները կավածքները չկային: Ասրված անի և [եթե] այնպիսի ժամի պատահի, որ նրանց ունեցվածքը մնա մեզ, ուխտադրության մեջ մեզ չմեղադրեք:

Ատորագրություն՝ Ես՝ Ալեքսանդրս, հաստատում եմ<sup>27</sup> Ասրծու հրամանով

Կնիք՝ Ասրծու ծառա Ալեքսանդրե

Կնիք՝ Գիորգի<sup>28</sup>

Հակառակ այն հանգամանքին, որ վավերագիրը թվագրվում է 1559 թ.-ով, վավերագրի ստորագրություններից և կնիքներից ակնհայտ է, որ այն գրվել է դեռ Ալեքսանդր արքայի օրոք (1412-1442 թթ.), սակայն արտագրվել և վերահաստատվել է 1559 թ. Սիմոն արքայի կողմից: Այդ մասին վկայում է վավերագրի հետևյալ տողը՝ «գրվեց այս հրովարտակը մեր թագավորության ինդիկտիոնի չորրորդ տարում»: Այդ տարին՝ 1559 թ. վերջը, համընկնում է Սիմոն<sup>29</sup> արքայի

---

<sup>26</sup> Վավերագրի տեքստի մեջ՝ քրոնիկոնի ԵՅԾ (247)՝ 1559 (քրոնիկոնի սկիզբը հաշվվում էր 1312 թ.):

<sup>27</sup> Վրաց Գիորգի VII արքայի որդին, որի կառավարման տարիներին՝ 1412/1413-1442 թթ., արդեն սկսվել էր Արևելյան Վրաստանի երկու մասերի՝ Քարթլիի և Կախեթի մասնատման գործընթացը: Հայտնի էր շինարարական աշխատանքներով: История Грузии, ч. 1, под. ред. Джанашиа С., Тбилиси, 1946, с. 300-303. «Акты собранные Кавказскою археологическою комиссией» (АКАК), ред. Берже А., Тифлиси, 1886, с. 8.

<sup>28</sup> Գիորգի VIII-ը Ալեքսանդր արքայի որդին և Վախթանգ IV արքայի եղբայրն էր: Նույն տեղում: Մցխեթի կաթողիկոսությանը 1447 թ. ապահարկության նման մեկ այլ հրովարտակ է շնորհել Գիորգի արքան, որն ի տարբերություն 1559 թ. Վավերագրի, ներկայացնում է ապահարկվող ունեցվածքներ նաև Կախեթի տարածքում՝ բխելով այն հանգամանքից, որ XV դ. առաջին կեսին Արևելյան Վրաստանը դեռ մասնատված չէր Քարթլիի և Կախեթի առանձին թագավորությունների: ПГП, т. III, с. 187; Какабадзе С., նշվ. աշխ., էջ 158-164:

<sup>29</sup> Վախուշտի Բագրատիոնին Լուարսաբ արքայի կառավարման վերջին տարեթիվը համարում է 1558 թ., որը սակայն չի համապատասխանում իրականությանը, քանի որ 1556 թ. Լուարսաբի և Ղարաբաղի սեֆյան կառավարիչ (բեկլարբեկ) Շահվերդի խանի միջև Գարիսիում տեղի ունեցած ճակատամարտում Լուարսաբը ծանր վիրավորվում և

կառավարման (1556-1569, 1578-1600/1601 թթ.) չորրորդ տարվա հետ: Այն փաստը, որ վավերագիրը տրվել է 1559 թ.-ին, հաստատվում է նաև տեքստի մեջ Դոմենտի կաթողիկոսի հիշատակությամբ<sup>30</sup>:

Սիմոն արքայի այս հրովարտակը ապահարկության իրավունքը տարածում էր 49 վանքապատկան գյուղերի և գյուղատեղերի, 8 վանքերի, 2 ամրոցի, Գորիի վանքապատկան կրպակների, խաղողի 3 մեծ այգիների, վանքապատկան թվարկված ծխերի վրա: 1559 թ. ապահարկության հրովարտակում տեղ գտած վանքապատկան ապահարկվող կալվածքների զգալի հատվածի անվանումները հիշատակվում են նաև 1392 թ. և 1447 թ. ապահարկության վավերագրերում<sup>31</sup>, որից կարելի է եզրահանգել, որ Մցխեթի կաթողիկոսության կալվածքների մի զգալի մասը դարձել էր անօտարելի սեփականություն և հետագա վավերագրերով միայն հաստատվում էր կաթողիկոսության անվերապահ իրավունքը դրանց վրա:

Դրանք հետևյալ կալվածքներն են՝

| 1559 թ.-ի<br>Հրովարտակ      | 1447 թ.-ի<br>հրովարտակ | 1392 թ.-ի<br>հրովարտակ |
|-----------------------------|------------------------|------------------------|
| Մեթելիսի                    | +                      | +                      |
| Ծինուբանի                   | -                      | +                      |
| Թելովանի                    | +                      | +                      |
| Արմազի ամրոցը, վանքը        | +                      | +                      |
| Ձեգուի, Սասխորի, Ցիխեղիղի   | +                      | +                      |
| Մոխիսի, Նիաբի, Չոչեթի, Գոմի | +                      | +                      |
| Կալվածքներ Աթենիում         | +                      | +                      |
| Նավազա, Թեքենա              | -                      | +                      |

մահանում է: Եվ ուրեմն Սիմոն արքայի կառավարման առաջին տարին 1556 թ.-ն է, և ոչ Վ. Բագրատիոնիի նշած 1559 թ.՝ քրոնիկոնի 247 թ.: Ա. Բերժեն ևս սխալմամբ Լուարսաբի կառավարման վերջին տարեթիվը 1558 թ.-ն է համարում: Տե՛ս ԱԿԱԿ, Կ. Ի, Կ. 9; Багратиони В., История царства грузинского, Тбилиси, 1976, с. 39; საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ.4, თბილისი, 1973, էջ 114:

<sup>30</sup> 1559 թվականը Պ. Իոսսելիանին նշում է որպես Դոմենտի կաթողիկոսի հովվության առաջին տարի: Տե՛ս Иосселиани П., նշվ. աշխ., էջ 150:

<sup>31</sup> Տե՛ս Какабадзе С., նշվ. աշխ., էջ 101-117, 158-164; ПГП, Կ. III, Կ. 176-181, 187-193.

|   |               |   |
|---|---------------|---|
| Ծկալշատրոանի, Կողմանի, Ծերովանի, Գորովանի <sup>32</sup> | +             | + |
| Կասաի, Ագարա, Տուրաթա                                   | +             | + |
| Սարկե կամ Սարկինե անապատ                                | +             | + |
| Էձանի, Բեշքենաշենի                                      | -             | + |
| Կավաձքներ Գորիում                                       | +             | + |
| Քունշի, Դիսելի, Սաթիխարի <sup>33</sup> , Փլավի          | բացառ. Փլավիի | + |
| Չերթի, Քուրդի, Փոքր Մեղուրեկի, Մեղուրեկի                |               | + |
| Կավաձքներ Քավտիսխեվիում, Ախտի,                          | +             | - |
| Խուեղուրեթի   | +             | + |
| Խաղողի այգիներ Քորագնա ամրոցում                         | +             | - |
| Կարսանի, Մուխատգուերդի, Նաքուլբաքեվնի                   | +             | + |
| Սաթալգմենի, Տիխեբդավի <sup>34</sup>                     | +             | - |
| Կուլենի կամ Կուլենելի գյուղը                            | +             | + |

Մյուս վավերագիրը՝ «[Մցխեթի] կաթողիկոսության վանքապատկան ճորտերի պարտականությունների ցուցակն» է<sup>35</sup>, որը թվագրվում է XVI դ. վերջով: Վավերագրում թվարկվող կաթողիկոսությանը պատկանող 10 ծխերից (Մկերվաշվիլի, Գամկրելաշվիլի, 5 ծուխ Գիորգորիաններ, Նանուաշվիլի, Սուլաձե),

<sup>32</sup> Վավերագրերում միասին թվարկվող տեղանունները աղյուսակում ևս միասին են ներկայացվում:

<sup>33</sup> Սատիխարի, Չոչեթի, Տուրաթա, Ծկալշատրոանա գյուղերը 1447 թ. հրովարտակի մեջ հիշատակվում են որպես գյուղատեղիներ: Գյուղերի վերածումը լքված գյուղատեղիների կարող էր լինել Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքերի հետևանքը, իսկ 1559 թ. հրովարտակի մեջ միայն Ծկալշատրոանան է հիշատակվում որպես գյուղատեղի, որն իր հերթին կարող է խոսել Չոչեթի, Սատիխարի և Տուրաթա գյուղերի վերածնան մասին: Տե՛ս Կառաձաճե Շ., նշվ. աշխ., էջ 111; ՈՒՄ, Կ. III, Կ. 264-266.

<sup>34</sup> 1447 թ. հրովարտակի տեքստի մեջ Տիխեբդավի: Տե՛ս ՈՒՄ, Կ. III, Կ. 191.

<sup>35</sup> Նշխնա Նաչատալոշոսո ճղեյեջոն Յեջրոնա (XVI և. Յոլոլո): ՈՒՄ, Կ. III, Կ. 381.



գանձվող բնահարկի ընդհանուր քանակը կազմում էր 120 պարկ<sup>36</sup> ցորեն, 134 տակառ գինի, 36 կոտ գարի, 60 մորթի ենթակա, մսացու կենդանի, 67 հավ, 256 ձու, 10 սայլ վարսակ և 10 սայլ փայտ: Վավերագրի տեքստի մի մասը բացակայում է:

Ստորև ներկայացվող վավերագրերը Քարթլիի արքաների ապահարկության և նվիրատվական հրովարտականեր են, որ տրվել են Մցխեթի կաթողիկոսության կազմում ընդգրկված Սվետիցխովելի, Սիոնի, Քվաթախեվի վանքերին:

ա. Քվաթախեվի վանքի գյուղացիներին՝ բնամթերքով հարկվող մալի և ուլուփա, ցորենի բերքից հարկվող դալա, սաջինեբո (ծիահարկ), դրամով գանձվող սաուրի հարկերից ազատելուն և վանքի կալվածքներին թարխանություն՝ ապահարկություն շնորհելու<sup>37</sup> հրովարտակն է՝ տրված Քարթլիի Լուարսաբ թագավորի կողմից քրոնիկոնի 238՝ 1550 թ.:

բ. Մցխեթի Սվետիցխովելի վանքին ապահարկություն շնորհելու հրովարտակն է, որով Սվետիցխովելի վանքապատկան ճորտերը ազատվում են դալա, մեծ ուլուփա, մշտական փոքր ուլուփա և այլ հարկերից՝ բացառությամբ թաթարական սաուրի հարկից: Հրովարտակը տրված է Լուարսաբին հաջորդած Սիմոն թագավորի կողմից քրոնիկոնի 271՝ 1583 թ.<sup>38</sup>:

գ. 1552 թ. Լուարսաբ թագավորի կողմից Սիոնի վանքին շնորհած ապահարկության հրովարտակն է, որի մեջ թվարկվում է Թբիլիսիում Սիոնի վանքին պատկանող այն ամբողջ ունեցվածքը, որի վրա տարածվելու էր ապահարկության իրավունքը, դրանք էին՝ 6 կրպակներ, 2 տուն, մեկը՝ պարսպապատ, 1 շինություն, 1 հողակտոր՝ իր վրա գտնվող կրպակով հանդերձ, 1-ական ծուփա Քալանթարաշվիլի, Ամբրոսիշվիլի, Մղելիաշվիլի և 2 ծուփա Բեգիքաշվիլի, ինչպես նաև գյուղեր, այգիներ, վանքեր, աղբյուրներ, որոնց անվանումները չեն հիշատակվում<sup>39</sup>:

---

<sup>36</sup> Վրացերեն տեքստում՝ *ցխվարի*, թարգմանությունն անհայտ է, թարգմանված է պարկ՝ ընկալվելով որպես տարա (Գ. Մ.):

<sup>37</sup> АКАК т. I, с. 9.

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>39</sup> Пурцеладзе Д., Грузинские церковные гуджары, Тифлис, 1881, с. 54.

դ. 1589 թ. Սիմոն թագավորի կողմից տրված հրովարտական է, որտեղ խոսվում է Սիոնի վանքի և Սիմոն թագավորի միջև մանր և մեծ եղջերավոր կենդանիների հոտերից սաքալախո<sup>40</sup> գանձվող հարկատեսակի գանձման ձևի մասին: Այնտեղ վկայվում է, որ Սիոնի վանքին են պատկանել մանր և մեծ եղջերավոր կենդանիների հոտեր, որոնք որպես վանքապատկան ունեցվածք ենթակա էին ապահարկման միայն այն դեպքում, եթե արածելիս գտնվեին վանքապատկան հողերում, հակառակ դեպքում սաքալախո հարկը գանձվելու էր ոչ թե հօգուտ վանքի, այլ արքունական գանձարանի<sup>41</sup>:

Մցխեթի կաթողիկոսության իրավասությունների շրջանակները ներառում էին նաև Արևելյան Վրաստանի կախեթական հատվածը: Կախեթական եպիսկոպոսները և թեմերը գտնվում էին Մցխեթի կաթողիկոսության կազմում և ուղղակի կախման մեջ էին կաթողիկոսությունից: Դա հաստատում են այն հավատարմության գրերը, որոնք գրվել են կախեթական եպիսկոպոսների կողմից և ուղղված են Դոմենտի և Նիկոլոզ<sup>42</sup> կաթողիկոսներին՝

**Կախեթի եպիսկոպոսների հավատարմության գիրը Դոմենտի  
կաթողիկոսին.  
(1556-1560 թթ.)**

*Հայր Աստծու, որդու և սուրբ հոգու կամքով և օգնությամբ, օժանդակությամբ ամենայն սրբություն Հայր Աստծու և հավերժ կույս Մարիամի, Սվեթիցխոսվելիի, Տիրոջ գերեզմանին և սուրբ մյուռոնի, ամենայն սրբություն երկնքի և երկրի տեր Աստծու.*

*Մենք՝ Ալավերդու թեմի արքա Փիլիպպե, Բողբիի թեմի եպիսկոպոս Զաքարիա, Նինոծմինդայի եպիսկոպոս Մալաքիա, Ռուսթավլիի թեմի եպիսկոպոս Իոսեբ, Նեկրեսի եպիսկոպոս Բասիլի, Կածարի թեմի եպիսկոպոս Էզնապի, Ճերեմի թեմի եպիսկոպոս Անտոնի, Խարճաշոյի եպիսկոպոս Կլիմի՝*

---

<sup>40</sup> Բառացի՝ խոտի հարկ, վրացերեն *ბლაზბო* խոտ, հարդ բառից: Обзорение российских владений за Кавказомъ, ч. 4, Санктпетербургъ, 1836, с. 394.

<sup>41</sup> Пурцеладзе Д., նշվ. աշխ., էջ 55:

<sup>42</sup> ერთგულების წიგნი კახთ ეპისკოპოსებისა ნიკოლას კათალიკოზისადმი.[1562-1588 წწ], ПГП, т. III, с. 343-344.

Այս ժամին հիշեցնում ենք ձեզ, ո՛վ կաթողիկե առաքելական եկեղեցի Սվեդիսցիոսկայի և կաթողիկոս-պատրիարք Դոմենտի:

Տաճարի նշանի կամ հավաքքի գործի վերաբերյալ [հարցերում], ում դուք կանտեսեք և կարտաքսեք, կանտեսենք և մենք և չենք վստահի, քանի դեռ դուք չեք վստահել՝ ի կատարումն դրա [հավատարմության]:

Վկա է Աստված և բոլոր սրբերը:

Ստորագրություն- Փիլիպպե, Մալաքիա<sup>43</sup>:

Կախերթական թագավորության տարածքում գտնվող Մցխեթի կաթողիկոսության կախերթական եպիսկոպոսությունների կալվածքներին վերաբերող հրովարտակները զետեղված են Դ. Փուրծելաձեի «Грузинские церковные гуджары (грамоты)» ժողովածուի մեջ, որոնք շնորհված են Ալավերդու, Նինոծմինդայի, Դավիթ-Գարեջիի և Շուամթինյան վանքերին:

**Ալավերդու վանք.** 1522 թ. հրովարտակով Ալեքսանդր թագավորը եպիսկոպոս Եվֆիմեի օրոք նվիրում է գյուղ(հայտնի չէ որ գյուղը) գյուղացիներով հանդերձ, վերակառուցում է երկրաշարժից վնասված վանքի ճախ հատվածը, 1547 թ. հրովարտակով Ալեքսանդր արքան վերակառուցում է Ալավերդու վանքը, այնտեղ հաստատում Փիլիպպ արքեպիսկոպոսին, նվիրում Մարիլիսիի<sup>44</sup> գյուղերը: Այս վանքին Ալեքսանդրի հաջորդ հրովարտակով նվիրվում են Կոնդուլի գյուղի բնակիչները՝ ի սպաս եկեղեցուն, և քանի որ ճորտերը ամրագրված էին հողին<sup>45</sup>, ստացվում է, որ այդ հրամանով վանքին է նվիրվել Կոնդուլի գյուղը<sup>46</sup>:

**Նինոծմինդայի վանք.** 1553 թ. Լևան թագավորի հրովարտակով, Զաքարիա վանահոր հովվության օրոք, վանքին շնորհվում է Ազամբուրի գյուղից ղալա (ցորենի բերքի) հարկի գանձման իրավունքը, 1597 թ. Ալեքսանդր թագավորի հրովարտակը վկայում է,

---

<sup>43</sup> ერთგულებիս წიგნი ვახთ ეპისკოპოსებისა დომენტი კათალიკოზისადმი.[1556-1560 წწ], ПГП, т. III, с. 268.

<sup>44</sup> Գյուղ Կախերթում, Թելավիից հյուսիս-արևմուտք: Багратиони В., նշվ. աշխ., էջ 320:

<sup>45</sup> Թուշեթի՝ լեռնային շրջան Քարթլիի և Կախեթի սահմանին: Նույն տեղում, էջ 322:

<sup>46</sup> Пурцеладзе Д., Грузинские церковные гуджары, Тифлис, 1881, с. 13.

որ Լևան արքան վերակառուցել է Նինոծմինդայի վանքը և նվիրել Օրկոշինի գյուղը այնտեղ բնակվող հայ և վրացի բնակչությանը հանդերձ: Նույն 1597 թ. մյուս հրովարտակով Ալեքսանդր թագավորը վանքին նվիրում է Թուշբասամարխիսա սարը<sup>47</sup>:

**Դավիթ Գարեջիի վանական համալիր.** Դավիթ-Գարեջի վանական համալիրին վերաբերող ևս 3 հրովարտականներ են պահպանվել<sup>48</sup>, որոնցից 1566 թ. հրովարտակով Լևան արքան վանքին է նվիրաբերում 3 ծուխ գյուղացիներ իրենց ունեցվածքով, 1571 թ. հրովարտակով նվիրում է ևս 4 ծուխ իրենց ունեցվածքով, 1590թ. հրովարտակով Ալեքսանդր արքան իր կողակից Թինաթի թագուհու հետ վանքին են նվիրում Ժատի (տեղն անհայտ է) բնակավայրը, 2 պահակ, 2 հովիվ, այգի՝ այգեպանի հետ, լեռան մի լանջից սաբալախ և կուլուխի հարկերի գանձումը, մյուս լանջից դալայի՝ և 40 կաբիցի<sup>49</sup> ցորենի գանձման իրավունքը:

**Շուամթինյան Աստվածամոր տաճար.** 1576 թ. Ալեքսանդր արքան Խախուլյան սրբապատկերի Աստվածամոր տաճարին է ընծայում Կանդախիում<sup>50</sup> 12 ծուխ իրենց ունեցվածքով և որսորդության համար նախատեսված պուրակ: 1597 թ. հրովարտակով Ալեքսանդր արքան տաճարին է նվիրում գյուղացիներ Իկալտոյում և Ռուխսպիրիում<sup>51</sup>: Նույն թվականի 2 այլ հրովարտականներով Ալեքսանդրի քույրը՝ Թեկլան՝ Լևան արքայի դուստրը, տաճարին մեկական ծուխ է նվիրում<sup>52</sup>:

Այս վավերագրերի քննությունը թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել վանական ունեցվածքի մասին և ներկայացվում է հետևյալ դասակարգմամբ.

- որպես կալվածքներ եկեղեցին ուներ գյուղեր, ընդ որում, հիմնականում դրանք գտնվում էին կա՛մ վանական կառույցների, կա՛մ

---

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>48</sup> Пурцеладзе Д., նշվ. աշխ., էջ 67-69:

<sup>49</sup> კაბოჭი՝ կաբիցին հավասար էր 3 կողայի, իսկ կողան իր հերթին մոտավորապես 2 փութ էր: Տե՛ս Пурцеладзе Д., նշվ. աշխ., էջ 48:

<sup>50</sup> Գյուղ Կախեթում: Տե՛ս Зубарев Д., Поездка в Кахетию, Тушетию, Пшавию, Хевсурию и Джаро-Белоканскую область, Русский вестник, том 2, С. Петербург, 1841, с. 553.

<sup>51</sup> Իկալտո (იკალთო), Կոնդոլի (კონდოლი), Ռուխսպիրի (რუხსპირი)՝ գյուղեր Կախեթում, Թեկալի քաղաքի մերձակայքում: Зубарев Д., նշվ. աշխ., էջ 537:

<sup>52</sup> Пурцеладзе Д., նշվ. աշխ., էջ 85:

խոշոր քաղաք-կենտրոնների՝ Թբիլիսիի, Աթենիի, Գորիի, Մցխեթի, Թելավիի մերձակայքում,

- վանքապատկան ունեցվածքի մի մասն էին կազմում առանձին հողակտորներ՝ խաղողի այգիներ, պարտեզներ, այգիներ, աղբյուրներ, կալվածքներ և այլն,

- վանքերն ունեին իրենց անասնահոտերը, որոնց վրա որպես վանքապատկան ունեցվածք ևս տարածվում էր ապահարկության իրավունքը<sup>53</sup>,

- վանական ունեցվածքի մի տեսակ էր հարկերի, ամբողջությամբ կամ մասնակի, գանձման իրավունքի ընձեռումը եկեղեցուն, որի դեպքում հարկերից ստացված եկամուտը արքունական գանձարանի փոխարեն գնում էր վանքի գանձարան,

- վանքապատկան սեփականության մյուս կարևոր բաղադրիչը ճորտերն էին: Ինչպես նաև եկեղեցու ենթակայության տակ ուներ ազնվականներ<sup>54</sup>, որոնք եկեղեցու հովանին օգտագործում էին պետական պարտականություններից, հարկերից<sup>55</sup> խուսափելու համար,

- վանական ունեցվածքը, ինչպես նշվեց, ուներ ապահարկման իրավունք (լրիվ կամ մասնակի), որի դեպքում արքունական հարկերը կամ չէին գանձվում և գանձման իրավունքը սեփականում էր վանքը, կամ գանձվում էր մասամբ՝ հաճախ դրամով գանձվող հարկերի տեսքով:

Աշխարհիկ իշխանության կողմից ցուցաբերվող օժանդակությունը և պաշտպանությունը միայն խթանում էին եկեղեցու հզորացման գործընթացը, և Վրաց եկեղեցին, իր ենթակայության տակ ունենալով նյութական և մարդկային խոշոր ներուժ, դարձել էր երկրի առաջին ավատատերերից մեկը: Եվ այդպիսով, տնտեսական հզորությունը թույլ էր տալիս ոչ միայն պահպանել եկեղեցու ամբողջականությունը և գրաված դիրքը, այլ միջամտել աշխարհիկ խնդիրների լուծմանը:

---

<sup>53</sup> Տե՛ս Սիմոն արքայի 1589 թ. հրովարտակը: Пурцеладзе Д., նշվ. աշխ., էջ 55:

<sup>54</sup> «Կաթողիկոսության հովվության իշխաններն ու գյուղերը Սամցխե-Սապթաբազոյում (XVI դ.)»՝ კათალიკოზის სამწკსობნი თავადნი და სოფელები სამცხე-საათაბაგოში (XVI ს.) ПГП, т. III, с. 242.

<sup>55</sup> Зубов П., Шесть писем о Грузии и Кавказе, Москва, 1834, с. 102.

GOR MARGARYAN

**THE QUESTION OF MONASTERY LANDHOLDING IN EASTERN GEORGIA  
(XVI CENTURY)**

In East Georgia the Orthodox Georgian Church was one of the biggest feudal. It had the large estates, villages, orchards, shops, workshops, serves. As the Orthodox Georgian Church was feudal it had privileged position as its estates were exempted regularly from taxes (tarkhnoba) by the secular authority. The Orthodox Georgian Church was exempted either from some taxes or completely. For research the exempt from taxes of the church in the period (XV s.) in which we are interested many documents were studied: «Edict of exempt from taxes of the Kartli catholicos estates (1559)», edicts given to the Qvatakhevi, Sioni, David-Gareji, Sveticxoveli, Alaverdi, Ninotsminda monasteries. The exempt from taxes promoted the economic power of the church and it was be able to interfere in the solutions of the secular problems.

---

---

# ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

---

---

ՌՈՒԲԵՆ ՍԱՆՈՅԱՆ

## ԱՐԱՔ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ (1819-1850 ԹԹ.)

Լիբանանի Հանրապետությունն արաբական այլ երկրներից առանձնանում է իր ուրույն պետական-քաղաքական համակարգով, որը հիմնված է կրոնադավանական սկզբունքի վրա՝ երկրում առկա են մի շարք իսլամադավան և քրիստոնեական համայնքներ, որոնցից են նաև ավետարանական համայնքները: Ի տարբերություն մարոնի, հույն ուղղափառ, հույն կաթոլիկ և այլ համայնքների, արաբ ավետարանական համայնքը ձևավորվեց XIX դ. սկզբներին միայն, այն էլ շնորհիվ ամերիկյան միսիոներների<sup>1</sup>:

Արաբ ավետարանական համայնքի պատմության պարբերացումը մի տեսակ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից: Մեր կարծիքով, համայնքի պատմության մեջ հարկ է առանձնացնել երկու մեծ շրջան: Առաջին շրջանը՝ ձևավորումից մինչև Առաջին աշխարհամարտը, երբ Լիբանանը որպես պատմաաշխարագրական Սիրիայի մաս Օսմանյան կայսրության կազմում էր, իր հերթին ունեցել է երկու փուլ՝ մինչև բողոքական միլլեթի ստեղծումը 1840-ականներին և միլլեթի ստեղծումից մինչև Օսմանյան կայսրության փլուզումը:

Ամերիկացի պատմաբան Ք. Բ. Լինդներսն իր հոդվածներից մեկում համայնքի պատմության առաջին փուլի սկիզբն է համարում 1823 թ. նոյեմբերը, երբ Լիբանանում կատարվեց առաջին ավետարանական պաշտամունքը և ավարտում է 1860 թ.՝ դրուզ-մարոնի պատերազմով<sup>2</sup>: Այդ պատերազմի զոհերին փրկելու համար Լիբանանն եկան տարբեր,

---

<sup>1</sup> Լիբանանում հայ ավետարանական համայնքը ձևավորվել է Առաջին աշխարհամարտից հետո:

<sup>2</sup> Lindner C.B., "Making a way into the heart of the people": Women of the Early Protestant Church in Beirut, NEST, Theological Review, 32, 2011, pp. 71-96.

այդ թվում նաև բողոքական, եկեղեցիների միսիոներներ, ինչի արդյունքում ավարտվեց ամերիկյան միսիոներների բողոքականության «մենաշնորհը»: Նման մոտեցման դեպքում, սակայն, մի կողմից անտեսվում է ամերիկյան միսիոներների գործունեությունը, սկսած 1818 թ., իսկ մյուս կողմից՝ թերագնահատվում է բողոքական միլլեթի ստեղծման կարևորությունը համայնքի կայացման ու ծավալման գործում:

XIX դ. սկզբին միսիոներական շարժումը ԱՄՆ-ում արդեն բավականին ձևավորված էր, ուներ իր գործունեության համար անհրաժեշտ լծակներն ու գլխավորվում էր այդ երկրի երկու մեծագույն բողոքական եկեղեցիների կողմից՝ Երիցական (Presbyterian) ու Ժողովական (Congregational): 1803 թ. Բոստոնում հրատարակվում էր «Միսիոներական բանբեր» (Missionary Herald) ամսագիրը, իսկ 1807 թ. այդտեղ գործում էր նաև միսիոներներ պատրաստելու համար հատուկ ստեղծված Անդոլերի աստվածաբանական ճեմարանը, ուր ընդունում էին բարձրագույն կրթությամբ ու միսիոներական նախանձախնդրությամբ և ունակություններով օժտված երիտասարդներին: 1812 թ. ճեմարանի մի շարք հեղինակավոր դասախոսներ, առաջին հերթին վերապատվելի Հենրի Օթիս Դուայթը, նախաձեռնեցին «Միսիոներների արտասահմանյան առաքելությունների ամերիկյան խորհուրդի» (ՄԱԱԼԽ, American Board of Commissioners for Foreign Missions) ստեղծումը՝ տարբեր երկրներում ամերիկացի միսիոներների գործունեությունը կազմակերպելու և ղեկավարելու նպատակով: Երիցական ու ժողովական եկեղեցիներից բացի, այդ խորհրդի մեջ մտան մի շարք այլ բողոքական եկեղեցիների ներկայացուցիչներ՝ Դանիական բարեկարգյալները (Dutch Reformed) և այլն: Արդյունքում առաջացավ XIX դ. ամենախոշոր ավետարանական միսիոներական կազմակերպությունը, որին հովանավորում էին միլիոնավոր ամերիկացիներ՝ սկսած եկեղեցու անդամներից ու վերջացրած ԱՄՆ-ի նախագահներով: Ըստ Ս. Իսլաֆի, Ամերիկայի հասարակական կարծիքը Մերձավոր Արևելքի վերաբերյալ մինչև Առաջին աշխարհամարտի բռնկումը ձևավորում էին հենց ՄԱԱԼԽ-ի միսիոներները<sup>3</sup>:

---

<sup>3</sup> Habib Badr, Mission to "Nominal Christians": The Policy and Practice of the American Board of Commissioners for Foreign Missions and its Missionaries Concerning Eastern



XIX դ. սկզբին Մերձավոր Արևելքը գրեթե ամբողջությամբ ընդգրկված էր Օսմանյան կայսրության կազմի մեջ, ուստի պատահական չէ, որ հենց այստեղ սկիզբ առավ ամերիկյան միսիոներների գործունեությունը Արևելքում: Արդեն 1818 թ. Մերձավոր Արևելք եկան ՄԱԱԱԽ-ի առաջին միսիոներները՝ Պլինի Ֆիսկը ու Լեվի Պարսոնսը, որոնց 1820-22 թթ. միացան ևս չորս միսիոներներ<sup>4</sup>: Այդ պահին նրանց նպատակը ոչ թե առանձին ավետարանական եկեղեցիների հիմնումն էր, այլ ավետարանական շարժման, իրենց բառերով ասած՝ «թախմորի» ստեղծումն էր տեղի հրեաների, մուսուլմանների, բայց նաև քրիստոնյաների շրջանում: Միսիոներները հույս ունեին, որ հենց այդ կողմնակիցների շնորհիվ հնարավոր կլինի տարածել բողոքականությունը և «բարեփոխել» ավանդական համայնքները: Սակայն շատ շուտով պարզ դարձավ, որ հրեաների ու մուսուլմանների դավանափոխությունը դատապարտված է անհաջողության, և միսիոներները որոշեցին իրենց ուսմունքը տարածել քրիստոնյաների՝ նախ և առաջ մարոնիների<sup>5</sup> և Հայ առաքելական եկեղեցու հետևորդների շրջանում:

1822 թ. միսիոներներ Ի. Բրոդը և Ու. Գուդելը Բեյրութում գնեցին առաջին երկու տները, որտեղ էլ ԱՄՆ-ից բերվեց տպագրական մեքենան: 1816 թ. Մերձավոր Արևելքում սկսեց գործել Բրիտանական Աստվածաշնչային Ընկերությունը, որի օգնությամբ ամերիկացիները սկսեցին իրենց հրատարակչական գործունեությունը, իսկ 1836 թ. Աստվածաշունչը տարածաշրջանում տարածելու գործին միացավ նաև Ամերիկյան Աստվածաշնչային Ընկերությունը: Միայն 1822-31 թթ.

---

Churches, Which Led to the Organization of a Protestant Church in Beirut, 1819-1848, Ph.D., 1992, Princeton Theological Seminary, The Library of Near East School of Theology, pp. 21-63; Khalaf S., Cultural resistance: Global and local encounters in the Middle East, London, 2001, p. 105.

<sup>4</sup> Harris P., Denominationalism and democracy, North American foreign missions, 1810-1914: theology, theory, and policy, Michigan, 2004, pp. 70-72.

<sup>5</sup> Մարոնի համայնքը հիմնվել էր IV դ. սիրիացի ճգնավոր Ս. Մարոնի հետևորդների կողմից: VII դ. հալածանքներից փրկվելու համար, մարոնիները հիմնավորվեցին Լիբանանի ու Սիրիայի լեռներում, իսկ XII դ. դաշինք կնքեցին Վատիկանի հետ, որի (ինչպես նաև Ֆրանսիայի) հովանավորության շնորհիվ դարձան Լիբանանի գերիշխող կրոնադավանական խումբը: Տե՛ս Նաջարյան Ե., Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, Երևան, 1985, էջ 25-27:

ընթացքում ավետարանական միսիոներները հրատարակեցին 350.000 հատոր գիրք հուններեն, իտալերեն ու հայատառ թուրքերեն: Նրանց ամենակարևոր ձեռնարկն Աստվածաշնչի ժամանակակից արաբերենի թարգմանությունն էր (այն մինչ այսօր արաբախոս աշխարհում մնում է ամենատարածվածը), ինչպես նաև դրա անվճար տարածումն ու մեկնաբանումը բոլոր ցանկացողների համար (հարկ է նշել, որ մինչ այդ Աստվածաշունչը հասու էր միայն կղերականներին): Բացի Աստվածաշնչից ու կրոնական այլ գրականությունից, միսիոներներն իրենց դպրոցների համար թարգմանեցին ու հրատարակեցին դասագրքեր, բժշկական ու գիտահանրամատչելի գրքույկներ, իսկ երեխաների համար՝ արևմտյան հեքիաթների ժողովածուներ<sup>6</sup>:

Միսիոներներն իրենց դասերն ու կրոնական հավաքույթներն անցկացնում էին իրենց սեփական կամ վարձած տներում, իսկ բժշկական ծառայությունները սկզբնական շրջանում մատուցում էին հիվանդներին այցելելով: Միսիոներների գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված էր նրանով, որ նրանք պարտադիր կերպով սովորում էին տեղի ժողովուրդների լեզուները՝ արաբերեն, թուրքերեն, հայերեն և այլն:

Երբ Լ. Պարսոնսը ու Պ. Ֆիսկը նոր եկան Արևելք, ՄԱՄԱԽ-ի բյուջեն կազմում էր ընդամենը 10.000 դոլար, դարակեսին այն կազմում արդեն շուրջ 250.000 դոլար, իսկ աշխատողների քանակը կրկնապատվել էր<sup>7</sup>: Չնայած նման մեծ ֆինանսական ներդրումներին, միսիոներների աշխատանքն ընթանում էր դժվարությամբ, քանի որ թե՛ տեղի ավանդական եկեղեցիները և թե՛ բնակչության մեծամասնությունը նրանց գործունեությունը դիտում էին որպես հոգեորսություն: Առաջին միսիոներներից Պ. Ֆիսկը մի քանի տարվա ընթացքում բանտարկվեց Պաղեստինի իշխանությունների կողմից, ենթարկվեց կողոպուտի ու ծեծի և մահացավ ստացած վերքերից

---

<sup>6</sup> Habib Badr, նշվ. աշխ., էջ 88-116: Cagri Erhan, Ottoman official attitudes towards American missionaries, <http://www.tallarmeniante.com/missionary-ottom-attitudes.htm>

<sup>7</sup> Kennedy J., American Missionaries in Turkey & Northern Syria and the Development of Central Turkey and Aleppo Colleges, 1874–1967, Williamsburg, 2008, p. 23.

<https://digitalarchive.wm.edu/bitstream/handle/10288/590/AmericanMissionariesinTurkeyNorthernSyriaandtheDevelopmentofCentralTurkeyandAleppoColleges.pdf?sequence=4>

երեսուներեք տարեկան հասակում: Նույն ձևով վաղաժամ մահացան Օսմանյան կայսրությունում գործունեություն ծավալող բոլոր ամերիկյան միսիոներների մոտ մեկ երրորդը<sup>8</sup>:

Նման պայմաններում միսիոներների քարոզչությունը Լիբանանում շոշափելի արդյունք չէր բերում: Ձգտելով խուսափել հոգեորսության մեղադրանքներից, բողոքականները հետևեցին կաթոլիկ միսիոներների օրինակին և որդեգրեցին «ավետարանչություն՝ կրթության միջոցով» գործելակերպը: 1824 թ. հուլիսին Բեյրութում բացվեց ՄԱԱԽ-ի առաջին դպրոցը, իսկ արդեն 1846 թ. ՄԱԱԽ-ը «կարող էր պարծենալ իր 30 դպրոցներով Օսմանյան Սիրիայում, որոնցում սովորում էր 900 ուսանող, սակայն նրանցից միայն 75 դավանափոխ էին, և չկար ոչ մի տեղացի հովիվ»<sup>9</sup>:

Այնուամենայնիվ, աստիճանաբար, իրենց բուն գործունեության շնորհիվ, ՄԱԱԽ-ի միսիոներները կարողացան ստեղծել ավետարանական մի «շրջանակ» (circle), որում սկսած 1823 թ. ամերիկյան երիցական եկեղեցու կարգով կազմակերպվում էին կիրակնօրյա պաշտամունքներ, այն էլ միայն անգլերենով: Այդ շրջանակի մեջ էին մտնում արևմտյան միսիոներները, դիվանագետները ու գործարարները, ինչպես նաև տեղացի տարբեր ազգությունների, կրոնադավանական խմբերի ու հասարակական խավերի ներկայացուցիչները:

ՄԱԱԽ-ի աշխատանքը համակարգվում էր այսպես կոչված կայանների (station կամ mission) միջոցով, որոնք հիմնվեցին Բեյրութում (1822 թ.), Կոստանդնուպոլսում (1831 թ.), Երուսաղեմում (1833 թ.), Իզմիրում (1834 թ.), Տրիպոլիում (1848 թ.) և Սայդայում (1851 թ.): Գործում էին նաև 63 դաշտային ու բազմաթիվ ենթակայաններ Ջահլեում, Սուլ-Ալ-Նարբում, Համայում, Դեյր-Ալ-Չորում, Լաթակիայում և այլուր: Բեյրութի կայանը դարձավ կարևորագույնն արաբների

---

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 3, 21:

<sup>9</sup> Lindner C., “In this religion I will live, and in this religion I will die”, էջ 10: [http://www.academia.edu/489736/In\\_this\\_religion\\_I\\_will\\_live\\_and\\_in\\_this\\_religion\\_I\\_will\\_die\\_Performativity\\_and\\_the\\_Protestant\\_Identity\\_in\\_Late-Ottoman\\_Syria](http://www.academia.edu/489736/In_this_religion_I_will_live_and_in_this_religion_I_will_die_Performativity_and_the_Protestant_Identity_in_Late-Ottoman_Syria)

շրջանում գործելու համար, իսկ Ստամբուլի կայանը՝ հայերի շրջանում<sup>10</sup>:

Տեղի ավանդական եկեղեցիները խիստ վրդովմունքով էին հետևում միսիոներների գործունեության աշխուժացմանը, և արդեն 1823 թ. մարտի պատրիարք Յ. Հոբայշը նզովքի ենթարկեց ու վտարեց ավետարանականներին եկեղեցուց, ինչպես նաև անիծեց նրանց Աստվածաշնչի թարգմանությունը ու նրանց բոլոր տեղացի օգնականներին: Քրիստոնյաների համար նզովքը նշանակում էր հայտնվել համապատասխան միլլեթներից դուրս և գրկվել ամուսնանալու, երեխաներին կնքելու, հանգուցյալներին թաղելու, ինչպես նաև տուն վարձելու, շուկայում գործելու ու օրենքի պաշտպանությանը դիմելու իրավունքներից: Ավետարանականների վիճակն ավելի վատթարացավ 1830 թ., երբ կնքվեց ԱՄՆ - Օսմանյան կայսրություն առևտրական պայմանագիրը, ինչի հետևանքով ամերիկացիները գրկվեցին անգլիական դեսպանատան պաշտպանությունից՝ այդ տարիներին ԱՄՆ-ի քաղաքական ու տնտեսական դերն ու ազդեցությունը Մերձավոր Արևելքում անհամեմատելի էին Մեծ Բրիտանիայի ազդեցության հետ:

Լիբանանի միակ էթնոգավանական համայնքը, որը գրկաբաց ընդունեց միսիոներներին, դա Լեռնային Լիբանանի շուրջ 120 գյուղերում բնակվող դրուզներն էին<sup>11</sup>: Դա նախ և առաջ բացատրվում էր նրանով, որ ամերիկյան միսիոներները ու դրուզներն ունեին ընդհանուր հակառակորդ՝ մարոնիներին, որոնց պատրիարքն ու ամիրաները չէին ցանկանում զիջել դրուզներին իրենց իշխող դիրքերը Լեռնային Լիբանանում: Օգտվելով դրանից միսիոներները սկսեցին քարոզել ու դպրոցներ հիմնել դրուզների գյուղերում, բայց որոշ ժամանակ անց (1840-ականներին) հասկացան, որ դրուզներին հետաքրքրում էին ոչ թե բողոքականությունը, այլ միսիոներների նյութական օգնությունը, ռազմական ծառայությունից ազատվելն ու

---

<sup>10</sup> Evangelism and the Syria-Lebanon mission: correspondence of the Board of Foreign Missions, 1869-1910, <http://gdc.gale.com/archivesunbound/archives-unbound-evangelism-and-the-syria-lebanon-mission/>

<sup>11</sup> Ֆաթիմյան Եգիպտոսում XI դ. իսմաիլականությունից առանձնացած այս կրոնական ուղղությունը ստացել է իր անվանումը ուսմունքի առաջին քարոզիչներից մեկի՝ Ալ-Դարազիի անունից: Մանրամասն տե՛ս Betts R., The Druze, Yale, 1988.

Բարձր դասն պաշտպանողական նամակները, որոնք կարող էին ստանալ արևմտյան գործիչների օգնականները: Միսիոներներից մեկը՝ Ա. Լ. Տիբավը գրում էր, որ «դրուզները խաբեբա ու կովարար են, որոնք պայմանների փոփոխման դեպքում կարող են ներկայանալ որպես մուսուլմաններ, իսկ հետո նույն պատրաստակամությամբ՝ ավետարանականներ»: Դրուզները դարերով հետևում էին իրենց հիմնադիրներից մեկի սկզբունքին՝ առերես ընդունել իշխողի կրոնը, բայց հավատարիմ մնալ ներքուստ դրուզականությանը<sup>12</sup>:

1830 թ., Բեյրութում, ՄԱԱԼԽ-ը հիմնեց աղջիկների համար առաջին դպրոցը Օսմանյան կայսրության տարածքում, որի տնօրեն էր ամենահայտնի միսիոներուհի Սառա Սմիթը: Այդ դպրոցի օրինակով 1830-ականներին երկրի տարբեր շրջաններում հիմնվեցին այլ նմանատիպ դպրոցներ: Մեծ հետք թողեց 1847-54 թթ. Դե Ֆորեստ ամուսինների տանը գործող գիշերօթիկ դպրոցը: Այստեղ աշակերտների թիվը մեծ չէր՝ 1850 թ. սովորում էր 17 աղջիկ, սակայն հետագայում՝ դառնալով ուսուցիչ ու ավետարանիչ, նրանք մեծ ազդեցություն ձեռք բերեցին արաբ կանանց շրջանում: 1876 թ. ավետարանական դպրոցների շրջանավարտ աղջիկների թիվը հասել էր 819-ի, իսկ Մեծ Սիրիայի (ներառյալ Լիբանան) բոլոր ավետարանական համայնքներում կանանց թիվը շուրջ 1300 էր<sup>13</sup>:

Միսիոներների դպրոցներում դասավանդում էին անգլերեն ու արաբերեն լեզուներ, մաթեմատիկա, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, գրականություն և այլ առարկաներ, ինչպես նաև սովորեցնում տարբեր արհեստներ՝ խոհարարություն, կար ու ձև, ատաղձագործություն, երկաթագործություն, կոշկակարություն, և այլն: Դպրոցներում օգտագործվում էին դասագրքեր, որոնք միսիոներները գրել էին անձամբ, կամ բերել էին ԱՄՆ-ից, իսկ թարգմանությունը կատարել էին տեղի ավետարանական համայնքի անդամները: Միսիոներների

---

<sup>12</sup> Nisan M., Minorities in the Middle East: A History of Struggle and Self-Expression, McFarland & Co, USA, 2002, p. 99.

<sup>13</sup> Jessup H., Fifty-Three Years in Syria, vol. 2, Lebanon, 2002, p. 814; Lindner C., նշվ. աշխ., էջ 54, 87-90, 150, 170, 181-2, 222, 228, 247: Educational foundation stones - Dr. H.A. De Forest, <http://www.arabicbible.com/for-christians/the-bible/148-fifty-three-years-in-syria/1451-educational-foundation-stones.html?start=1>

վկայությամբ, այդ դպրոցներն իրենց կրթական որակով չէին զիջում ԱՄՆ-ում գործող նմանատիպ դպրոցներին:

Խոսելով ավետարանական շրջանակում ընդգրկված արաբ կանանց մասին, հարկ է նշել, որ մարոնի պատրիարքի վերոհիշյալ նզովքը մի տեսակ շրջանցեց նրանց, քանի որ տեղացիները կանանց չէին ընկալում որպես կրոնական գործիչների: Օգտվելով դրանից, ամերիկուիկներն ազատ շփվում էին լիբանանցի կանանց հետ, պատմում նրանց ու նրանց երեխաներին ավետարանական հավատքի մասին: Միսիոներուիկներից շատերն իրենց տուն էին վերցնում տեղացի աղջիկներին, խնամում և սովորեցնում նրանց կատարել տարբեր աշխատանքներ (ձեռագործություն, կար և այլն), հետևել անձնական հիգիենայի նորմերին, ինչպես նաև ֆինանսապես օժանդակում էին նրանց ամուսնությանը: Հարկ է նշել, որ միսիոներ կանանց տներում սովորաբար ապրում էին խնամակալած երեխաներ, ծերեր, ծառաներ ու իրենց դպրոցների աշակերտները: Տեղացի կանանց համար հատկապես կարևոր էր միսիոներուիկների օգնությունը ծննդաբերության և հիվանդ երեխաների բուժելու ընթացքում: Բժիշկ միսիոներներից մեկի կնոջ՝ Ռեբեկա Հեբարդի վկայությամբ, իր «ձեռքերը ու տունը միշտ զբաղված էին հիվանդներով:»<sup>14</sup>

Գիտակցելով միսիոներ կանանց կարևոր դերն ավետարանական շարժման ընդլայնելու գործում, ՄԱԱՄՆ-ը փոփոխության ենթարկեց իր գործելակերպը: Արևելքում իր գործունեության առաջին տարիներին նա ուղարկում էր միայն տղամարդ միսիոներների կանանց, զգուշացնելով, որ նրանց առաջին և միակ պարտականություն է ամուսիններին խնամելը: Հետագայում, սակայն, ՄԱԱՄՆ-ը սկսեց ուղարկել նաև մեծ թվով միսիոներուիկներ, և արդեն 1870 թ. կանայք կազմում էին ավետարանական շրջանակի մոտ 60%<sup>15</sup>:

---

<sup>14</sup> Lindner C., "Making a way into the heart of the people": Women of the Early Protestant Church in Beirut, NEST, Theological Review, 2011, 32, pp. 90-91.

<sup>15</sup> Gülbadi Alan, Gökhan Bolat, The American Board And The Ottoman Women's Education, History Studies, International Journal of History, Relationships of the USA and the Great Middle East, Special Issue 2011, pp. 106-117, <http://www.historystudies.net/DergiTamDetay.aspx?ID=368>

Ավետարանական կանանց կազմը միատարր չէր, նրանց մեջ կարելի է առանձնացնել հյուպատոսների կանանց ու ամերիկացի միսիոներուհիներին, տեղացի վարձատրվող պաշտոնյաներին (ուսուցիչներ, թարգմանիչներ ու կայանների աշխատողներ), վերջապես՝ շարքային տեղացի անդամներին: Միսիոներուհիները տեղացիներին մի նոր տեսակի կնոջ պատկեր ներկայացրին: Նրանք լավ կրթված էին (միսիոներուհիների թվում կային բանաստեղծուհիներ), նրանք ազատ շփվում ու կապեր էին հաստատում իրենց ընտանիքից դուրս, նրանց համար կյանքի իմաստը չէր սահմանափակվում ամուսնու ու երեխաների խնամքով<sup>16</sup>: Խոսելով ավետարանական համայնքի կայացման գործում միսիոներ կանանց դերի մասին, այդ հարցի ուսումնասիրողներից մեկի՝ Ժ. Ս. Մակդիսի խոստովանությամբ «առանց նրանց տղամարդ միսիոներները ոչ մի արդյունքի չէին հասնի:»<sup>17</sup>

Ավետարանական շարժման հետզհետե ընդլայնումը, նորանոր դպրոցների ստեղծումն ու հսկայական քանակությամբ գրականության տարածումն Օսմանյան կայսրության ողջ տարածքում էլ ավելի ուժեղացրեց պայքարը նրանց դեմ, որը գլխավորում էին ավանդական քրիստոնեական եկեղեցիները: Ելնելով ստեղծված իրավիճակից, ՄԱԱԼԽ-ի քարտուղար Ռ. Անդերսոնը 1843-44 թթ. Մերձավոր Արևելք իր կատարած այցի ժամանակ, ստիպված էր ընդունել, որ անհույս է «բարեփոխել» ավանդական եկեղեցիները, ուստի կարգադրեց միսիոներներին ամենուրեք հիմնել ավետարանական եկեղեցիներ<sup>18</sup>:

Արդեն 1846 թ. միսիոներների հիմնած շրջանակի անգլախոս եկեղեցու հիման վրա բացվեց արաբախոս «Բեյրութի ազգային ավետարանական եկեղեցին» (այն այսօր էլ Սիրիայի ու Լիբանանի ամենանշանավոր ավետարանական եկեղեցին է): «Ազգային» բառը նշանակում էր, որ եկեղեցին արաբական է, այլ ոչ թե ամերիկյան, և որ ամերիկյան միսիոներներն այլևս չպետք է թելադրեին իրենց կամքը:

---

<sup>16</sup> Ավելին, նրանք անընդունելի էին համարում տեղացիների համար սովորական և բնական դիտվող այնպիսի երևույթները, ինչպես, օրինակ, հարեմների կանանց դաջվածքները, երեխաներին տարին մեկ անգամ լողացնելը, և այլն:

<sup>17</sup> Lindner C., "Making a way into the heart of the people": Women of the Early Protestant Church in Beirut, NEST, Theological Review, 32, 2011, p. 96.

<sup>18</sup> Kennedy J., նշվ. աշխ., էջ 20:

Իրականությունը սակայն այլ էր: Լիբանանցիները ցանկանում էին, որ եկեղեցու հովիվը լինի ամենանշանավոր արաբ ավետարանական գործիչ Բուտրոս Ալ-Բուստանին<sup>19</sup>, բայց ամերիկացիները նշանակեցին Է. Սմիթին: Միայն 1870 թ. նրանք համաձայնվեցին, որպեսզի լիբանանցին առաջնորդի այդ եկեղեցին և վերապատվելի Յուսուֆ Բադրը դարձավ Բեյրութի ազգային ավետարանական եկեղեցու հովիվը: Բուտրոս Ալ Բուստանին նաև պատրաստել էր այդ եկեղեցու սահմանադրության նախագիծը, որում պահպանել էր մարոնի եկեղեցու որոշ դրույթները, բայց միսիոներները մերժեցին այն, համաձայնվելով միայն, որ պաշտամունքը մատուցվի արաբերեն լեզվով<sup>20</sup>:

XIX դ. կեսերին ավետարանական շարժումն այնքան էր ընդլայնվել, որ միշտ չէ, որ վերահսկվում էր միսիոներների կողմից: Այդ է վկայում նրանց շրջանակից դուրս ինքնաբուխ առաջացած մի շարք ավետարանական համայնքների փաստը: Այսպես, 1844 թ. Հասբայա քաղաքում հույն ուղղափառ եկեղեցու մի քանի տասնյակ անդամներ առանձնացան ու փետրվարի 26-ին իրենց խումբը հայտարարեցին որպես ավետարանական եկեղեցի: Այն, փաստորեն, դարձավ բնիկ լիբանանցիների կողմից հիմնած առաջին ավետարանական համայնքը: Բայց քանի որ Լիբանանում այդ ժամանակ ավետարանական եկեղեցու կանոնավոր կարգի մասին պատկերացում ունեին միայն միսիոներները, նորահայտ ավետարանականները խնդրեցին իրենց ընդունել ՄԱԱԱԽ-ի շրջանակի մեջ: Ամերիկացիները չհամաձայնվեցին, հիմնավորելով դա ավետարանական հավատքի մասին նրանց թերի գիտելիքներով: Արդյունքում, Հասբայաի ավետարանականները հույն ուղղափառ եկեղեցուց դուրս մնացին, միևնույն ժամանակ չստացան ավետարանական եկեղեցու լիարժեք անդամի կարգավիճակը: Միայն

---

<sup>19</sup> Բուտրոս Ալ-Բուստանի արաբական վերածննդի՝ «Նահդայի» ամենակառկառուն դեմքերից մեկն է: Նրա մասին տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Երևան, 2004, հ. 2, էջ 345-346:

<sup>20</sup> Badr H., նշվ. աշխ., էջ 269-303:



տարիներ անց Հասբայահի դավանափոխները կարողացան մերվել ավետարանական համայնքի հետ<sup>21</sup>:

Ավետարանականների դեմ ծավալված պայքարը տալիս էր իր արդյունքը: Մասնավորապես, 1840-ին միսիոներները կորցրեցին մի շարք դպրոցներ Լեռնային Լիբանանում, որոնք մարոնիները այրեցին դրուզների տների հետ միասին: Արդյունքում 1850 թ. միսիոներները Օսմանյան կայսրության տարածքում ունեին ընդամենը 7 եկեղեցի ու 7 դպրոց, այն ժամանակ, որ 1827 թ. դպրոցների թիվը հասնում էր 13-ի<sup>22</sup>: Էլ ավելի ծանր հալածանքների ենթարկվեցին թուրքաբնակ հայ ավետարանականները, որոնք ամենամեծ ավետարանական համայնքն էին կազմում Մերձավոր Արևելքում: Հայոց պատրիարք Մատթեոս Չուհաջյանի 1846 թ. նզովքի հետևանքով միայն Ստամբուլի հայ ավետարանական համայնքի թիվը 8000-ից նվազեց մինչև 800<sup>23</sup>: Օսմանյան իշխանությունները հյուպատոս Դ. Պորտերից պահանջեցին, որպեսզի միսիոներները հեռանան երկրից, բայց վերջինը հայտարարեց, որ ԱՄՆ-ի օրենսդրությունը թույլ չի տալիս ո՛չ սատարել, ո՛չ էլ խոչնդոտել կրոնական գործունեությանը<sup>24</sup>: Այդպիսի պայմաններում ավետարանական համայնքի հովանավորները՝ որոշակի քաղաքական և տնտեսական նպատակներ հետապնդող Մեծ Բրիտանիան, Պրուսիան և ԱՄՆ դիմեցին վճռական քայլերի<sup>25</sup>: 1847 թ. նոյեմբերի 15-ին այդ երկրների դեսպանների պահանջով «Բարձրագույն Դուռը օսմանյան հպատակ բոլոր բողոքականներին ճանաչեց որպես ուրույն համայնք ... 1850 թ. նոյեմբերի 14-ին «բողոքական դարձածներին» իրավունք տրվեց համայնքային գործերը վարելու համար ընտրել «ազգապետ», որը հաշվետու էր ոստիկանապետին»<sup>26</sup>: Դրանով իսկ բողոքական միլլեթը համարեց արդեն գոյություն ունեցող հունական, հայկական, հրեական և

---

<sup>21</sup> Lindner C., “In this religion I will live, and in this religion I will die”: Performativity and the protestant identity in late Ottoman Syria.

<sup>22</sup> Cargin Erhan, նշվ. աշխ.:

<sup>23</sup> Քասունի Ե., Լուսաշահիդ, Բեյրութ, 1947, էջ 44:

<sup>24</sup> Cargin Erhan, նշվ. աշխ.:

<sup>25</sup> Այդ մասին մանրամասնորեն տե՛ս Թոփուզյան Հ., Սիրիայի ու Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 75-79:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 78:

կաթոլիկ միլլեթների շարքը<sup>27</sup>: Այդուհետ կղերականները կարող էին խոչընդոտներ ստեղծել ավետարանականների առջև միայն իրենց սեփական հեղինակությամբ, այլ ոչ թե օրենքի ուժով:

Բողոքական միլլեթի ստեղծումից հետո Լիբանանի շրջաններում շուտով ձևավորվեցին մի շարք նոր ավետարանական տեղական համայնքներ՝ 1851 թ. Հասբայահում, 1852 թ.՝ Սայդայում, ապա նաև՝ Տրիպոլիում, Ջահլեյում և Լեռնային Լիբանանի գյուղերում:

Այսպիսին էր ընդհանուր գծերով Լիբանանի ավետարանական համայնքի ստեղծման պատմությունը: Հետագա տասնամյակների ընթացքում այն դարձավ երկրի հարգված համայնքներից մեկը՝ նախ և առաջ կրթամշակութային զարգացման գործում իր մեծ ավանդի շնորհիվ: Սկսվում էր Լիբանանի ավետարանական եկեղեցու պատմության նոր շրջանը՝ ավետարանական միլլեթի գոյության պայմաններում:

RUBEN SANOYAN

### THE FORMATION OF ARAB EVANGELICAL COMMUNITY IN LEBANON (1819-1850)

Trying to spread their faith among local population, American protestant missionaries began in 1818 their activity in Lebanon. They founded their first English-speaking church in Beirut in 1823 and the Arabic-speaking one in 1846. Despite the resistance of local clergy, the evangelical churches were formed also in Tripoli, Saida, Zahle, Suk-al-Garbe and some other places, where missionaries developed their intensive educational, publishing, ecclesiastical, benevolent, and other activities. Finally, under the pressure of some western powers, the Ottoman government created “Protestant millet” in 1848-50.

---

<sup>27</sup> Միլլեթի մասին տե՛ս Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 78-79: Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007, էջ 125-60: Նույնի, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XVIII դարի սկիզբ-1923 թ.), [http://hpj.asj-oa.am/2687/1/2009-2-3\(23\).pdf](http://hpj.asj-oa.am/2687/1/2009-2-3(23).pdf); Орешкова С., Османская империя: проблемы межконфессиональных отношений, Восток, 2008, 6, нояб.-дек., с. 33-44.

## ԱՍՏՂԻԿ ԵՂՈՅԱՆ

### ԼԻՔԱՆԱՆԻ ՄՈՒԹԱՍԱՐԻՖՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1861-1868 թթ.)

Լիբանանի ինքնավարության ավադոյթները սկսել են ձևավորվել դեռևս Մասն և Շիհաբ տոհմերի ամիրների կառավարման շրջանում (1516-1842 թթ.)<sup>1</sup>: Լիբանանի ամիրները հանդիսանում էին սուլթանի անմիջական և կիսանկախ վասալները, սակայն իրականում նրանք իրենց տիրույթների սահմաններում գրեթե ինքնիշխան էին<sup>2</sup>:

Լիբանանյան կիսանկախ ամիրայության ձևավորման հենց սկզբից օսմանյան իշխանությունները մշտապես միջամտում էին նրա ներքին գործերին՝ լիբանանյան ամիրայությունը վերացնելու և օսմանյան անմիջական կառավարում հաստատելու համար: Ամիրայության ներքին գործերին միջամտելու հարցում պակաս դերակատարություն չունեցան նաև եվրոպական տերությունները: Հատկապես Ֆրանսիայի և Անգլիայի միջև թեժ պայքար սկսվեց կայսրության արաբական տիրույթների համար: Նրանք հետզհետե ամրապնդեցին իրենց քաղաքական ու տնտեսական դիրքերը կայսրության տարածքում: Օսմանյան իշխանությունների, ինչպես նաև Անգլիայի և Ֆրանսիայի միջամտությունն անկայունացնում էր կրոնական բազմազանությամբ աչքի ընկնող Լիբանանյան ամիրայությունում տիրող իրավիճակը: Ի վերջո այս ամենը հանգեցրեց դաժան արյունահեղության քրիստոնեական և մուսուլմանական համայնքների՝ հիմնականում մարոնիների և դրուզների միջև:

19-րդ դարի ընթացքում Լեռնալիբանանի համայնքային խնդիրները սերտորեն միահյուսվեցին եվրոպական տերությունների քաղաքականության հետ: Ֆրանսիան, որ ձգտում էր ամրապնդել կաթոլիկների ազդեցությունը Օսմանյան կայսրության տարածքում,

---

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. II, Երևան, 2004, էջ 78-88, 267-292:

<sup>2</sup> Նաջարյան Ե., Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, Երևան, 1985, էջ 73:

սերտ հարաբերություններ հաստատեց մարոնիների հետ: Ի հակադրություն դրան՝ Մեծ Բրիտանիան սկսեց հովանավորել դրուզներին, Ռուսաստանը՝ հույն ուղղափառներին<sup>3</sup>:

Լիբանանի մարոնիների և դրուզների միջև կրոնական անհանդուրժողականությունը սաստկացավ նաև Մուհամմեդ Ալիի տիրապետության շրջանում քրիստոնյաներին շնորհված արտոնությունների պատճառով: Ի վերջո այդ լարվածությունը 1841 թ. հանգեցրեց միջհամայնքային արյունահեղության, որի հետևանքով էլ գահընկեց եղավ Լիբանանյան ամիրայության վերջին ամիր Բաշիր 3-րդը: 1842 թ. վերացվեց Լիբանանի կիսանկախ ամիրայությունը և մտցվեց օսմանյան ուղղակի կառավարում, որին դեմ էին եվրոպական տերությունները<sup>4</sup>:

1842 թ. մայիսի 27-ին Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարությունում տեղի ունեցած համաժողովի ընթացքում, որին մասնակցում էին հինգ տերությունների (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Պրուսիա, Ավստրիա, Ռուսաստան) ներկայացուցիչները, պայմանավորվածություն ձեռք բերվեց, Լիբանանը բաժանել երկու՝ քրիստոնեական և դրուզական կայմականությունների<sup>5</sup>:

Սոցիալական, տնտեսական և քաղաքական լարվածությունը Լեռնալիբանանի խառը բնակչությամբ շրջաններում 1840-1850-ական թվականներին ժամանակ առ ժամանակ վեր էր ածվում համայնքային բախումների, որոնք ավելի լուրջ բնույթ ստացան 1860 թ. գարնանը: Մայիսի վերջին այստեղ քաղաքացիական կռիվներ սկսվեցին: 1860 թ. մայիսի վերջից մինչև հուլիսի սկիզբը Լիբանանի տարբեր բնակավայրերում դրուզները քրիստոնյա բնակչության կոտորածներ իրականացրեցին: Լիբանանում գտնվող թուրքական ուժերը ոչինչ չձեռնարկեցին քրիստոնյա բնակչությանը պաշտպանելու համար<sup>6</sup>:

---

<sup>3</sup> Harris W., *Faces of Lebanon: sects, wars and global extensions*, Princeton, 1997, p. 34.

<sup>4</sup> Բաշիր 3-րդի կառավարման շրջանի և 1841-42 թթ. իրադարձությունների մասին մանրամասն տե՛ս Poujoulat B., *La vérité sur la Syrie et l'expédition française*, Gaume frères et Duprey, Paris, 1861, pp. 273-276.

<sup>5</sup> Spagnolo J., *France and Ottoman Lebanon 1861-1914*, London, 1977, pp. 15-16.

<sup>6</sup> Rochmonteix C. de, *Le Liban et l'expédition française en Syrie (1860-1861)*, Documents inédits du Général A. Ducrot, A. Picard, Paris, 1921, pp. 31-54.

Այս իրադարձություններն առիթ հանդիսացան Ֆրանսիայի՝ Լիբանան ներխուժման համար: Մինչ այդ օսմանյան կառավարությունը միջոցառումներ ձեռնարկեց մի քանի հանցագործների պատժելու և Եվրոպային ցույց տալու համար, որ իրավիճակն արդեն վերահսկվում է: Այդ նպատակով հուլիսի 17-ին Բ. դուռը զորք ուղարկեց Բեյրութ՝ օսմանյան նախարար, հայտնի բարեփոխիչ Ֆուադ փաշայի գլխավորությամբ: Նրան անսահմանափակ իշխանություն էր տրվել կարգ ու կանոնը վերականգնելու և մեղավորներին պատժելու համար<sup>7</sup>:

1860 թ. հոկտեմբերի 5-ին միջազգային հանձնաժողովն իր աշխատանքներն սկսեց Բեյրութում, որի ընթացքում պետք է վճիռ կայացվեր և՛ Սիրիայի, և՛ Լիբանանի ապագա կարգավիճակների վերաբերյալ: Լեռնալիբանանի կարգավիճակի վերաբերյալ հիմնական սահմանադրական փաստաթուղթն ստորագրվեց 1861 թ. հունիսի 9-ին<sup>8</sup>: «Լիբանան լեռան վերակազմավորման ռեզլամենտը» (կանոնադրություն), որով Լեռնալիբանանին տրվում էր հատուկ կարգավիճակ Օսմանյան կայսրության կազմում, պատմագրությանը հայտնի է որպես «Օրգանական ստատուտ»: Ընդհանուր առմամբ Կանոնադրությունը բաղկացած էր 17 հոդվածից<sup>9</sup>:

Տերությունները կարող էին միջամտել Լեռնալիբանանի գործերին միայն կառավարիչ նշանակելիս, այն էլ մեկը մյուսի հետ համաձայնության գալու դեպքում միայն: Կառավարչի մանդատը լրանալուց երեք ամիս առաջ Բ. դուռը և տերությունների ներկայացուցիչները պետք է համաձայնության գային հաջորդ կառավարչի թեկնածության շուրջ: Լեռնալիբանանը կառավարելու էր Բ. դռան նշանակած և ուղղակիորեն նրան ենթարկվող քրիստոնյա կառավարիչը (արաբ. մութասարիֆ), որի կառավարման ժամկետը

<sup>7</sup> Edwards R., La Syrie, Amyot, Paris, 1862, p. 206.

<sup>8</sup> Spagnolo J., նշվ. աշխ., էջ 36-41:

<sup>9</sup> 1861 թ. Կանոնադրության հոդվածները և կից արձանագրությունն ամբողջությամբ տե՛ս Archives diplomatiques: recueil de diplomatie et d'histoire, 1861/07 (T3)-1861/09, pp. 313-318, Amyot, Paris.

սահմանվեց երեք տարով: Նա օժտված էր լինելու գործադիր իշխանության բոլոր լիազորություններով. Լեռնալիբանանի ամբողջ տարածքում հսկելու էր կարգ ու կանոնի, հասարակական անվտանգության պահպանմանը, գանձելու էր տուրքերը, նրա պատասխանատվության ներքո և սուլթանից ստացած իշխանության ուժով նշանակելու էր վարչական պաշտոնյաներին, հաստատելու էր դատավորներին, հրավիրելու և նախագահելու էր Վարչական կենտրոնական խորհրդի նիստերը, հաստատելու դատարանների՝ օրենքով սահմանած բոլոր վճիռները: Լեռնալիբանանի համայնքներից յուրաքանչյուրը կառավարչի մոտ ունենալու էր իր ներկայացուցիչը, որին նշանակելու էին համապատասխան համայնքի առաջնորդները: Ստեղծվելու էր Կենտրոնական վարչական խորհուրդ՝ կազմված 12 անդամներից, որոնք ներկայացնելու էին Լեռնալիբանանի համայնքները՝ 2 մարոնի, 2 դրուզ, 2 հույն կաթոլիկ, 2 հույն ուղղափառ, 2 մթուալլի (շիա) և 2 սուննի մուսուլման, որոնց պարտականությունն էր լինելու բաշխել հարկերը, վերահսկել եկամուտների ու ծախսերի տնօրինումը և կարծիք հայտնել բոլոր այն հարցերի շուրջ, որոնք կառավարիչը կներկայացներ նրանց քննարկմանը<sup>10</sup>:

Ըստ կանոնադրության՝ Լեռնալիբանանը բաժանվելու էր 6 վարչական շրջանների, որոնք ղեկավարելու էին մութասարիֆի կողմից նշանակված մուդիրները: Կարգ ու կանոնի պահպանման համար ստեղծվելու էին ոստիկանական ուժեր, որոնք կազմվելու էին կամավորության հիմունքներով<sup>11</sup>: Կանոնադրությամբ վերացվում էին ավատատերերի վարչական և դատական իրավունքներն ու առանձնաշնորհները<sup>12</sup>:

Կանոնադրությանն առնչվող արձանագրության մեջ լրացուցիչ ընդգծվում էր, որ Բեյրութ-Դամասկոս մեծ ճանապարհի

---

<sup>10</sup> Spagnolo J., նշվ. աշխ., էջ 41-43:

<sup>11</sup> Nantet J., Histoire du Liban, Téqui, Paris, 1989, p. 199.

<sup>12</sup> Qubain F.I., Crisis in Lebanon, The Middle East Institute, Washington D.C., 1961, p. 13.

անվտանգությունն ու ազատությունը մշտապես ապահովելու համար Բ. դուռը այդ ճանապարհին հաստատելու է հսկիչ զորակայան<sup>13</sup>:

Հանձնաժողովի քննարկումների ընթացքում անհամաձայնություններ առաջացան կառավարչի նշանակման հարցի շուրջ: Ի վերջո տերությունների ներկայացուցիչները համաձայնության եկան կաթոլիկ կառավարչի թեկնածության շուրջ՝ բացառելով մարոնիներին: Լեոնալիբանանի կառավարիչ նշանակվեց հայ կաթոլիկ և օսմանյան բարձրաստիճան պաշտոնյա Դաուդ էֆենդին՝ (Կարապետ Արթին Դաուդյան), որին տրվեց մուշիրի աստիճան և փաշայի տիտղոս<sup>14</sup>:

Դաուդ փաշան 1861 թ. հուլիսի 4-ին ժամանեց Լիբանան: Լեոնալիբանանի նորանշանակ կառավարիչը սառն ընդունելության արժանացավ հատկապես քրիստոնյաների կողմից: Կաթոլիկ և ուղղափառ հույները թշնամանքով ընդունեցին Դաուդ փաշայի նշանակումը, որովհետև նա հայ էր: Հայերը հույների մշտական մրցակիցներն էին օսմանյան կառավարությունում: Լեոնալիբանանի հույները չէին կարծում, որ հայ կառավարիչը կկարողանար վերականգնել արդարությունը Լեոնալիբանանում և կարգ ու կանոն հաստատել այնտեղ: Մարոնիներն ավելի վատ էին տրամադրված Դաուդ փաշայի հանդեպ: Նրանք պահանջում էին, որ կառավարիչը լինի մարոնի: Մարոնի հոգևորականությունը, որը մեծ ազդեցություն ուներ Լեոնալիբանանում, նույնպես դժգոհ էր Դաուդ փաշայի նշանակումից: Հոգևորականներն անհանգստանում էին, որ կառավարիչը կարող էր թուլացնել իրենց դիրքերը: Այս առումով Դաուդ փաշան դժվարությունների ունեցավ հատկապես երկրի հյուսիսային մարոնիաբնակ շրջաններում, որտեղ տիրապետող դիրքեր ուներ մարոնիական եկեղեցին: Լեոնալիբանանի հյուսիսում Կանոնադրությունը չընդունեցին, և Յուսուֆ Քարամը դարձավ դժգոհ մարոնիների խոսնակը: 1860 թ. մարոնիադրուզական

<sup>13</sup> Archives diplomatiques: recueil de diplomatie et d'histoire, 1861/07 (T3)-1861/09, p. 318.

<sup>14</sup> Spagnolo J., նշվ. աշխ., էջ 41:

հակամարտության ընթացքում նա էր կազմակերպել քրիստոնյաների պաշտպանությունը և բավականին մեծ հեղինակություն էր ձեռք բերել: Քարամը լավ հարաբերություններ ուներ Ֆուադ փաշայի, Բրիտանիայի դիվանագիտական ներկայացուցիչների, ինչպես նաև Ֆրանսիական արշավախմբի որոշ սպաների հետ: Արդյունքում նա նշանակվեց հյուսիսային շրջանի ժամանակավոր կայմակամ (շրջանի կառավարիչ)<sup>15</sup>:

Չնայած իր դեմ ձևավորված ընդդիմությանը՝ Դաուդ փաշան անցավ վարչակազմի ձևավորմանը: Կառավարիչը Քարամին ևս պաշտոն առաջարկեց: Յուսուֆ Քարամը տվեց իր համաձայնությունը, սակայն մի քանի օր անց հրաժարվեց: Նա հույս ուներ, որ ի վերջո Դաուդը կձախողվի և ֆրանսիացիները կհասնեն նրան, որ մութասարիֆի պաշտոնում կնշանակվի լիբանանցի: Դաուդը գիտակցում էր, որ առանց արտաքին միջամտության չի կարող դուրս գալ ստեղծված իրավիճակից: Կառավարիչը դիմեց Ֆուադ փաշայի օգնությանը: Միջազգային հանձնաժողովը հաստատեց Ֆուադ փաշայի՝ Քարամին Կ. Պոլիս արտաքսելու որոշումը<sup>16</sup>:

Դաուդ փաշայի կառավարման եռամյա ժամկետի ավարտին՝ 1863 թ. աշնանը, տերությունները պետք է քննարկեին նրա հետագա ճակատագիրը: Դաուդ փաշան առաջարկեց փոփոխություններ կատարել Կանոնադրության մեջ, որը թույլ կտար ուժեղացնել մութասարիֆի իշխանությունը:

1864 թ. սեպտեմբերի 6-ին Դաուդ փաշան հինգ տարի ժամկետով վերանշանակվեց Լեռնալիբանանի կառավարիչ: Տերությունների դիվանագիտական ներկայացուցիչները քննարկեցին և վավերացրեցին մութասարիֆի առաջարկած փոփոխությունները: Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները թուլացրեցին

---

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 54-58:

<sup>16</sup> Nantet J., նշվ. աշխ., էջ 202-204:



տարբեր կրոնական համայնքների առաջնորդների դիրքերը և ամբողջ իշխանությունը կենտրոնացրեցին մութասարիֆի ձեռքերում<sup>17</sup>:

Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և Դաուդ փաշայի վերանշանակումը, թվում էր, կապահովեին Լիբանանի քաղաքական կայունությունը, սակայն Դաուդը դեռ ստիպված էր պայքարել մարոնի բարձրաստիճան հոգևորականության դեմ: Մարոնիների պատրիարք Մասադը մեղադրում էր Դաուդին, որ վերջինս վիրավորում էր բարձրագույն հոգևորականությանը՝ թույլ չտալով նրան մասնակցել Լեռնալիբանանի կառավարմանը: Պատրիարքը չէր ներում մութասարիֆին նաև Յուսուֆ Քարամին աքսորելու համար<sup>18</sup>:

1864 թ. աշնանը Ֆրանսիայի արտգործնախարարությունը մտադիր էր բանակցություններ սկսել Քարամին աքսորից վերադարձնելու համար: Դաուդը և Ֆրանսիայի հյուպատոս Ուտրեյը պնդում էին, որ Քարամն աքսորից պետք է վերադառնա պայմանով, որ պատասխանատու պաշտոն զբաղեցնի մութասարիֆությունում, որով հնարավոր կլիներ կանխել նրա ներքաշումը նոր խռովությունների կազմակերպման մեջ: Քարամը հրաժարվեց ընդունել այս նախապայմանը: 1864 թ. նոյեմբերին նա վերադարձավ Տրիպոլի, սակայն մերժեց մութասարիֆի հրավերը՝ Բեյթ ալ-Դին գնալու: 1865 թ. հունվարի 26-ին Դաուդ փաշան իր հրաժարականը ներկայացրեց՝ հայտարարելով, որ ցանկություն չունի գլխավորելու լիբանանյան հերթական արյունահեղությունը: Ֆրանսիան և Անգլիան պայմանավորվեցին միասին գործել կանխելու համար խռովության բռնկումը<sup>19</sup>:

1866 թ. հունվարի 2-ին տեղեկանալով, որ Յուսուֆ Քարամը իր կողմնակիցների հետ պատրաստվում է հարձակում գործել, Դաուդը

---

<sup>17</sup> Spagnolo J., նշվ. աշխ., էջ 83-91:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>19</sup> Annuaire des deux mondes: histoire générale des divers états, 1864 (T 13)-1865, Revue des Deux Mondes, Paris, p. 611.

լրացուցիչ օսմանյան զորքեր խնդրեց, որոնք դրվեցին նրա տրամադրության տակ՝ համաձայն Կանոնադրության 14-րդ հոդվածի<sup>20</sup>: Թուրքական զորքերի մուտքը Լեռնալիբանան ավելացրեց մութասարիֆի իշխանության դեմ ձևավորված դժգոհությունը: Բնակչությունը հրաժարվեց վճարել հարկերը, ձևավորվեցին զինված խմբեր: 1866 թ. փետրվարին Սիրիայում օսմանյան ուժերի հրամանատար Դարվիշ փաշայի զորքն առանց մեծ դժվարության գրավեց Քարամի գյուղը՝ Իհդինը: Քարամը և իր փոքր ջոկատը հազիվ փրկվեցին գերի ընկնելուց: Նա կարողացավ փախչել և թաքնվել: Որոշ ժամանակ անց՝ 1866 թ. վերջին, նա կրկին հայտնվեց Իհդինում և փորձեց ապստամբության դրոշ բարձրացնել: Սակայն նրա բոլոր կողմնակիցները լքեցին նրան: Այդ ամենից հետո մեկ ամսվա ընթացքում Դաուդը կարողացավ օսմանյան զորքերը դուրս բերել Լեռնալիբանանից<sup>21</sup>:

Ֆրանսիայի նոր արտգործնախարար Մուստիեն, որ փոխարինել էր Դրույեն դը Լյուիսին, հրահանգեց Ստամբուլում Ֆրանսիայի դեսպան Բուրեին համոզել Քարամին հեռանալ Ալժիր: Հունվարի 31-ին Քարամը ֆրանսիական ռազմանավով հեռացավ Ալժիր<sup>22</sup>:

Դաուդը նպատակ ուներ Լիբանանի տարածքն ընդարձակելու՝ մութասարիֆության մեջ ընդգրկելով Բիկաայի բերրի հարթավայրը: 1865 թ. Դաուդ փաշան հասավ նրան, որ Բիկաայի հարթավայրի՝ Լեռնալիբանանին սահմանակից արևմտյան մասը, որը հիմնականում բնակեցված էր քրիստոնյաներով, անջատվեց Դամասկոսի վիլայեթից և միավորվեց Լեռնալիբանանին: Այն չընդգրկվեց Լեռնալիբանանի ինքնավար նահանգի կազմում, այլ պարզապես դրվեց Դաուդ փաշայի կառավարման ներքո: Այս տարածքի կառավարումը մութասարիֆի առաջարկությամբ հանձնվեց Բ. դոան կողմից նշանակված

---

<sup>20</sup> Tarhini M. A., al-Usas al-tarikhiyya li nizam Lubnan al-taifi, Dar al-Afaq, Beirut, 1981, p. 248.

<sup>21</sup> Spagnolo J., նշվ. աշխ., էջ 105-107:

<sup>22</sup> Annuaire des deux monde: histoire générale des divers états, 1866 (T 14) - 1867, p. 564.

փոխնահանգապետին: Սա շատ կարևոր էր մութասարիֆությունը մթերքով ապահովելու համար<sup>23</sup>:

Մութասարիֆի և ֆրանսիական կառավարության միջև այս ժամանակահատվածում կար փոխադարձ վստահություն: Ֆրանսիայի դեսպան Բուրեն Ստամբուլում բանակցություններ էր սկսել Դաուդին Լեռնալիբանանի կառավարչի պաշտոնում վերանշանակելու ուղղությամբ: Սակայն 1868 թ. ապրիլի 22-ին Դաուդը վերադարձավ Ստամբուլ և երկրորդ անգամ սպառնաց հրաժարական տալ: Նա դժգոհում էր ֆինանսական դժվարություններից: Դաուդը շարունակում էր պնդել Լեռնալիբանանի մութասարիֆության սահմաններն ընդարձակելու անհրաժեշտության մասին, որը նրան ավելի կենսունակ միավոր կդարձներ<sup>24</sup>:

Օսմանյան կառավարությունը, զգուշանալով Դաուդի տարածքային հավակնություններից և լիբանանյան հարցի աշխուժացման նոր հնարավորությունից, արագացրեց նոր մութասարիֆի նշանակումը: 1868 թ. հուլիսի 27-ին դեսպանների կոնֆերանսը մութասարիֆի պաշտոնում հաստատեց Ֆրանկո Քուսային: Այս անգամ արձանագրության տակ ստորագրեց նաև Ստամբուլում Իտալիայի դեսպանը: Լիբանանի վերահսկողության հարցում Իտալիան ստացավ նույն իրավունքները, ինչ մյուս հինգ տերությունները<sup>25</sup>:

Լեռնալիբանանի մութասարիֆության կազմավորման մեջ նշանակալից դեր ունեցավ առաջին մութասարիֆը, ով, համաձայն Կանոնադրության, ոչ միայն պետք է ձևավորեր վարչական մարմիններ, ոստիկանական ուժեր, հաշտեցներ Լեռնալիբանանի թշնամացած կրոնական համայնքներին, պահպաներ հավասարակշռությունն այդ համայնքների միջև, այլև ստիպված էր բախվել տեղի ավանդական ուժերի՝ մարոնի եկեղեցու և

---

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 502:

<sup>24</sup> Spagnolo J., նշվ. աշխ., էջ 115-116:

<sup>25</sup> Affaires étrangères, documents diplomatiques (Annuel), 1869 (N 11), Imprimerie Imépriale, Paris, pp. 135-136.

ազնվականության հետ, ովքեր հրաժարվում էին ընդունել և՛, Կանոնադրությունը և՛ ոչ տեղաբնակ կառավարչին, ում ներկայությունը թուլացնում էր իրենց ազդեցությունը Լեռնալիբանանում:

1861 թ. Կանոնադրությամբ Լեռնալիբանանը լայն ինքնավարություն էր ստացել և շահեկանորեն առանձնանում էր իրեն շրջապատող մյուս նահանգներից, որոնք գտնվում էին Օսմանյան կայսրության տիրապետության ներքո: «Օրգանական ստատուտի» շնորհիվ Լեռնալիբանանը շարունակեց տևական խաղաղության մեջ գտնվել (1861-1915 թթ.): Կանոնադրությունը և 1864 թ. նրա վերափոխված տարբերակը հիմք դրեցին Լիբանանում համամասնական ներկայացուցչության ավանդույթի ձևավորմանը:

ASTGHIK YEGHOYAN

### **MUTASARIFIYYA OF MOUNT LEBANON IN FORMATIVE PERIOD, 1861-1868**

The article is devoted to the research of formative period of the autonomous regime in Mount Libanon. The regime was set up after the civil war of 1860. There are described the conditions under which it occurred.

An international protocol signed on June 9, 1861 and ratified the "Reglement for the reorganization of Mount Libanon". The Reglement of 1861 and his revised version of 1864 remained the basic document according to which Mount Libanon's autonomous government was constructed and run during the mutasarifiyya period (1861-1915).

## ՆԱԶԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

### **ՌՌԻՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ (XIX Դ. ՎԵՐՋ XX Դ. ՍԿԻԶԲ)**

Իրանը, շնորհիվ իր տնտեսական զգալի ներուժի և ուրույն ռազմավարական դիրքի, առանձնակի կարևորություն է ունեցել Ռուսական կայսրության միջինարևելյան քաղաքականության ուղեծրում: Ռուսաստանի քաղաքական և տնտեսական հետաքրքրություններն Իրանի նկատմամբ հատկապես ակտիվացան Ղրիմի պատերազմում (1853-1856 թթ.) կրած ծանր պարտությունից հետո: Հիմնավորվելով Կասպից ծովում, գրավելով միջինասիական շրջանները և կիրառելով կապիտուլյացիոն համակարգի ողջ զինանոցը՝ Ռուսաստանն ուժեղացրեց իր տնտեսական և քաղաքական ներգրավվածությունն Իրանում: Այս ժամանակաշրջանից սկսած Կայսրության միջինարևելյան քաղաքականությունը թևակոխեց որակապես նոր փուլ: Սակայն տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ձեռք բերելու Ռուսաստանի հավակնությունները բախվեցին նրա վաղեմի հակառակորդ Մեծ Բրիտանիայի հակազդեցությանը: Ռուս-բրիտանական հակամարտությունն Իրանում վերաճեց գերակայության համար մղվող երկարատև մրցապայքարի, որը դրսևորվում էր միմյանց դիմակայելու սկզբունքայնությամբ և ընթանում էր փոփոխական հաջողությամբ:

Հողվածի նպատակն է ներկայացնել Իրանի ռազմավարական դերն ու նշանակությունը Ռուսական կայսրության արտաքին քաղաքական օրակարգում: Այդ երկրում գերակայության հաստատման ճանապարհին կիրառված տնտեսական և քաղաքական լծակների ձեռք բերման գործընթացի հիմնական նշանակությունը, միտումներն ու հետևանքները:

XIX դ. առաջին կեսից սկսած Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգության ապահովման խնդիրը դարձավ կայսրության արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը, որի կենսագործման համար Ռուսաստանն անցավ տարածքային

ձեռքբերումների: Կովկասյան ամբողջ տարածաշրջանի և Միջին Ասիայի վերջնական միակցումը Ռուսաստանին՝ կայսրության արևելյան քաղաքականության ուղեծրի բաղկացուցիչներից մեկն էր, որն ընթացավ ռազմաքաղաքական բարդ և լարված իրադրության մեջ՝ մի կողմից ռուս-պարսկա-թուրքական պատերազմների, իսկ մյուս կողմից՝ ռուս-բրիտանական սուր հակամարտությունների պայմաններում<sup>1</sup>: Տևական ժամանակ Մեծ Բրիտանիան փորձում էր կասեցնել Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Մերձավոր և Միջին Արևելք, ինչի հետևանքով պարբերաբար ծագում էին ռազմաքաղաքական բնույթի ճգնաժամեր՝ անխուսափելի դարձնելով այս տերությունների անմիջական միջամտությունը Իրանի ներքին խնդիրներին: XIX դարավերջին Ռուսական կայսրությունն առաջին անգամ ընդհուպ մոտեցավ Իրանի արևմտյան սահմաններին, բրիտանական ազդեցության ոլորտում գտնվող Աֆղանստանին, դրանով իսկ հիմք դնելով Հնդկաստանի համար «ռուսական սպառնալիքին»: Այս բոլորի տրամաբանական արդյունքը եղավ ռուս-բրիտանական հարաբերությունների սրումը: Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը հայտնվեցին պատերազմ սկսելու փաստի առաջ<sup>2</sup>: Ռուսաստանը խուսափելով Մեծ Բրիտանիայի հետ քաղաքական նոր բարդություններից և խոշոր դրամական ներդրումներից՝ վերանայեց Միջին Արևելքում հետագա առաջխաղացման մարտավարությունը և նախապատվությունը սկսեց տալ տնտեսական ներթափանցման հայեցակարգին: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ XIX դ. 80-ական թվականներից ճորտատիրական իրավունքի վերացմանը հաջորդած կարճատև լճացումից հետո, ռուսական արդյունաբերությունը սկսեց զարգացման վերելք ապրել և Ռուսաստանը արտաքին քաղաքական ոլորտում տարածքային նվաճումների քաղաքականությունից հնարավորություն ստացավ անցում կատարել տնտեսական ներթափանցման

---

<sup>1</sup> Մուրադյան Մ., Մինայան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Երևան, 2005, էջ 238-240: Coene F., The Caucasus. An Introduction, London & New York, 2010, pp. 125-126.

<sup>2</sup> Жигалина О., Великобритания на Среднем Востоке начало XIX-начало XX в.. Анализ внешнеполитических концепций, Москва, 1990, с. 117-119; Мальтатули П., Внешняя политика императора Николая II (1894-1917), Москва, 2013, с. 140-141.

քաղաքականությանը: Թափ հավաքող ռուսական արդյունաբերական խոշոր բուրժուազիան, որը նոր հումքային և սպառողական շուկաների կարիք ուներ, մեծ հետաքրքրություն սկսեց ցուցաբերել Միջին Ասիայի և Իրանի նկատմամբ:

Իրանական խնդրում ռուս-բրիտանական խորացող հակամարտությունը հնարավորինս կարգավորվեց 1888 թ. ձեռք բերված պայմանավորվածությամբ, որով Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան պարտավորվեցին հարգել Իրանի տարածքային ամբողջականությունը<sup>3</sup>: Իրանը վերածվեց Ռուսաստանի և բրիտանական Հնդկաստանի միջև միջանկյալ (բուֆերային) գոտու:

Ռուսաստանի տնտեսական և քաղաքական շահերից էր բխում Իրանի ամբողջականության պահպանումը: Տնտեսապես և ռազմաքաղաքական առումով թույլ Իրանը վերածվեց միջանկյալ գոտու՝ նվազեցնելով շփման եզրերը ու տարածքային սահմանակցությունը բրիտանական Հնդկաստանի, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև: Իսկ քաղաքական կեսունակությունն կորցրած Իրանի հետ դրացիական հարաբերությունների պահպանումը նախ ապահովելու էր ռուս-իրանական սահմանի անվտանգությունը՝ ազատելով սահմանագծին մեծաքանակ զորք կենտրոնացնելու անհրաժեշտությունից, ապա հնարավորություն էր տալու ունենալ կախյալ վիճակում հարակից պետություն, որի կառավարող վերնախավի քաղաքականությունը համաձայնեցվելու էր ռուսական շահերին: Ակտիվացնելով իր ռազմաքաղաքական և ֆինանսատնտեսական ներկայությունն Իրանում՝ Ռուսաստանը մտադիր էր շահական կառավարությունից ստանալ այնպիսի մենաշնորհային իրավունքներ, որոնցից օգտվում էր Մեծ Բրիտանիան:

XIX դարի վերջին Իրանն ապրում էր խորը սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամ. վտանգված էր երկրի ռազմական համակարգը և վարչական կայունությունը: Իրանի միջնադարյան քաղաքական և կիսաավատական կարգը, խոշոր ավատատերերի անջատողական ձգտումները, անձի և գույքի անապահովությունը, օտարերկրյա տերությունների միջամտությունը ներքին խնդիրներին

<sup>3</sup> АВПРИ, ф. 44, “Персидский стол”, оп. 488, д. 603, л. 54.

բավականին լուրջ խոչընդոտներ էին, որոնք արգելակում էին այդ երկրի բնականոն զարգացումը: Իրանցիների էթնոդավանական, ցեղային, լեզվական և աշխարհագրական մասնատվածությունը, նահապետական-տոհմատիրական հարաբերությունների մակարդակի վրա գտնվող քոչվոր և կիսաքոչվոր ցեղերի առկայությունը ևս խոչընդոտում էին երկրի կենտրոնացմանը և ազգային համախմբմանը<sup>4</sup>: Չնայած իրականացվող որոշ բարեփոխումների և պետական ապարատի եվրոպականացման առանձին փորձերի՝ Իրանը մնում էր ագրարային թերզարգացած երկիր, որի տնտեսության բնորոշ գծերից էր՝ թույլ զարգացած ազգային կապիտալը: Նման պայմաններում, դաջարական կառավարությունը գրեթե ամբողջովին կորցնելով քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունը, փորձում էր իշխանությունը պահել՝ խուսանավելով առկա ռուս-բրիտանական մրցակցության և ներքին հակասությունների միջև<sup>5</sup>:

Օտարերկրյա տնտեսական ու քաղաքական ներթափանցման արդյունքում չկորցնելով դե-յուրե անկախությունը՝ Իրանը դե-ֆակտո վերածվեց կիսանկախ պետության՝ դառնալով Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի համար ինչպես էժան հումքի, գյուղատնտեսական բնամթերքի արտահանման շուկա, այնպես էլ այդ երկրների արդյունաբերական ապրանքների խոշոր սպառող: Օտարերկրյա կապիտալի ներթափանցման արդյունքում իրանական տնտեսությունն ինտենսիվորեն ներքաշվեց համաշխարհային կապիտալիստական շուկա<sup>6</sup>: Օտարերկրյա տերությունների հետ առևտրաշրջանառության աճի տեմպերին զուգընթաց փոփոխության էր ենթարկվում նաև Իրան արտահանվող և ներմուծվող ապրանքատեսակների անվանացանկը:

---

<sup>4</sup> Lambton A.K.S., Qajar Persia, Eleven Studies, London, 1987, pp. 14-32, 46-47.

<sup>5</sup> Abrahamian E., A History of Modern Iran, Cambridge, 2008, pp. 31-33; Abbas Amanat, Pivot of the Universe, Nasir-Al-Din Qajar and the Iranian Monarchy, 1831-1896, L. A., Berkley, Oxford, p. 417.

<sup>6</sup> ۱۱۴۸-۱۱۵۱ ٬ تهران، ص. ۱۱۴۸-۱۱۵۱ ; محمد تقی لسان الملک سپهر، تاریخ قاجاریه، جلد سوم ، تهران، ص. ۱۱۴۸-۱۱۵۱ ; Lambton A., Qajar Persia, pp. 48-49; Арабаджян З., Иран. Власть, реформы, революции (XIX-XX вв.), Москва, 1991, с. 7-26; Гореликов С., Иран. Экономико-географическая характеристика, Москва, 1961, с. 151-152; Годс Реза М., Иран в XX веке. Политическая история, Москва, 1994, с. 25-27.



իրանական գյուղատնտեսությունն անցավ արտաքին շուկայում բարձր պահանջարկ ունեցող գյուղատնտեսական կուլտուրաների մշակմանը (բամբակ, բրինձ, ափիոն, ծխախոտ և այլն)<sup>7</sup>:

Օտարերկրյա մրցակցությանը չդիմացող արդյունաբերության մեջ կապիտալների հազվադեպ ներդրումները դատապարտված էին անհաջողության: Սաղմնային ձևավորման փուլում գտնվող տնտեսության այս բնագավառը չէր կարող մրցակցել Ռուսաստանից և Մեծ Բրիտանիայից ներմուծվող արդյունաբերական առավել էժան և որակյալ ապրանքների հետ: Հետևաբար ուժեղանում էր նաև իրանական ներքին շուկայի կախվածությունն այդ տերություններից:

XIX դ. երկրորդ կեսից միջոցների և համապատասխան մասնագետների բացակայության պայմաններում՝ դաջարական կառավարությունը տնտեսության ենթակառուցվածքների գործունեությունը կազմակերպելու և պետական գանձարանի բացասական հաշվեկշիռը լրացնելու նպատակով՝ տնտեսության տարբեր ոլորտներում ներդրումային մենաշնորհային իրավունքներ սկսեց տրամադրել օտարերկրյա տերություններին: Նշենք, որ մենաշնորհային ներդրումներն (հեռագրային գծեր, բանկային գործ, ճանապարհների կառուցում, շահագործում և այլն) ինքնին տնտեսական և քաղաքական սպառնալիք չէին ներկայացնում երկրում բարենորոգումներ անցկացնելու ճանապարհին, եթե իշխանության գլուխ կանգնած շահը և համախոհ իշխող վերնախավը, ինչպես նաև շիա բարձրաստիճան հոգևորականությունը ավելի նախանձախնդիր լինեին երկրի բարեկեցության և զարգացման հարցում: Նրանց մեծ մասն առաջնորդվելով անձնական և ոչ պետական շահերով՝ կաշառքի դիմաց պատրաստ էին օտարերկրացիներին գործնականում տրամադրել այնպիսի արտոնություններ և իրավունքներ, որոնցով վտանգվում էր պետության կարևորագույն ոլորտների լիարժեք ձևավորման հնարավորությունները: Անիրավահավասար պայմանագրեր կնքելով օտարերկրյա տերությունների, մասնավորապես Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի հետ, իրանական

---

<sup>7</sup> Abrahamian E., նշվ. աշխ., էջ 23-24: Keddie R. Nikki, Iran, Religion, Politics & Society, Collected Essays, London, 1980, pp. 210-211.

կառավարությունն աստիճանաբար կորցրեց նաև ինքնուրույն քաղաքական որոշումներ կայացնելու իրավունքները:

Ռուսաստանի վարած ֆինանսատնտեսական քաղաքականությունն Իրանում ընդհանուր առմամբ պայմանավորված էր կայսրության ներսում անցկացվող տնտեսության արդիականացման քաղաքականությամբ, որի գաղափարական հիմքը նոր սպառողական և հումքային շուկաների նվաճումն էր: Ռուսական տնտեսությունը պատմականորեն կապված էր իրանական շուկայի հետ և նրա առևտրաարդյունաբերական շրջաններն այս երկիրը դիտարկում էին որպես ապրանքահումքային կցորդ: XIX դ. 60-ական թթ.-ից կայսրությունում անց կացվող տնտեսական բարենորոգումների արդյունքում ռուսական արդյունաբերությունը սկսել էր արագորեն զարգանալ, սակայն այն պետական հովանավորություն կարիք ուներ: Արևելյան երկրներ տնտեսական ներթափանցումն ակտիվացնելու հարցում ռուսական իշխանությունները նույնպես որդեգրեցին պետության անմիջական հովանավորության և վերահսկողության ռազմավարությունը<sup>8</sup>: Ցարական կառավարությունը գտնում էր, որ Ռուսաստանի արդյունաբերական աճը, վաղ թե ուշ նրան կդարձնի ավելի մրցունակ, ուստի անհապաղ, օտարերկրյա կապիտալի հաշվին (խոսքը գնում էր հատկապես Ֆրանսիայից վերցրած արտաքին փոխառությունների մասին), անհրաժեշտ էր առաջատար դիրքեր զբաղեցնել սահմանակից ասիական պետությունների շուկաներում<sup>9</sup>: 1892 թ. «Հարավ-արևմտյան երկաթուղիների» կառավարիչ Ս. Յ. Վիտտեն ֆինանսների նախարարի պաշտոնը զբաղեցնելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղավ «Իրանում ռուսական քաղաքական և տնտեսական հարցերին վերաբերող» Հատուկ խորհրդակցության ստեղծմանը, որին անդամակցում էին պետական գերատեսչությունների ներկայացուցիչները<sup>10</sup>:

---

<sup>8</sup> Анянич Б., Ганелин Р., Дубенцов Б., Потолов С., Кризис самодержавия в России 1895-1917, Ленинград, 1984, с. 34-37.

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> История внешней политики России конец XIX-начало XX века, (от русско-французского союза до Октябрьской революции), Москва, 1997, с. 122; Waldron P., State finances, The Cambridge History of Russia, Imperial Russia, 1689-1917, vol. II, London, 2006, pp. 468-470; Анянич Б., Ганелин Р., նշվ. աշխ., էջ 35-38:

Չնայած նրան, որ դեռևս XIX դարավերջին Ռուսաստանը Մեծ Բրիտանիայի օրինակով Իրանի տնտեսության տարբեր ենթակառուցվածքներում մենաշնորհների և այլ տնտեսական գործիքների միջոցով հաստատվելու քայլեր էր սկսել ձեռնարկել՝ Իրանի նկատմամբ վերաբեռնավորման քաղաքականությունն ավելի պաշտոնական բնույթ ստացավ 1895 թ. Թեհրան արտակարգ առաքելությամբ Անդրկասպյան շրջանի զորքերի հրամանատար Ա. Կուրոպատկինի այցելությունից հետո<sup>11</sup>: Ռուսական կառավարության անմիջական հովանավորությամբ և վերահսկողությամբ մշակված ռազմավարության մեջ կարևորագույն դերը վերապահված էր իրանական տնտեսության ենթակառուցվածքներում ներդրումների, արտաքին փոխառությունների, մենաշնորհային, մաքսային, հարկային պայմանագրերի միջոցով շարունակական ներթափանցման հայեցակարգին: Ռուսական իշխանությունների կողմից այն դիտվում էր որպես Իրանի հետ առևտրատնտեսական հարաբերություններն ընդլայնելու և Մեծ Բրիտանիային հակազդելու ամենարդյունավետ միջոց:

### ***Հիմնական մենաշնորհային ներդրումները***

1860-ական թթ. սկսած Ռուսաստանը փորձեց Մեծ Բրիտանիայի հետ մրցակցել և ձեռք բերել մենաշնորհային իրավունքներ նախ և առաջ հեռագրային ոլորտում<sup>12</sup>: 1860 թ. Ռուսաստանն իր հեռագրային ցանցին էր միացրել Թավրիզ-Թեհրան գիծը, որը հետագայում ընդլայնվեց մինչև Սպահան: 1879 թ. ռուս գործարարները ձեռք բերեցին մենաշնորհային իրավունք Իրանի հյուսիսում՝ Աստրաբադ և Չիկիշլյար քաղաքների միջև հեռագրային գծի կառուցման համար<sup>13</sup>: 1893 թ. Ռուսաստանի վերահսկողության տակ անցավ Աստրաբայի հեռագրային գիծը: Ռուսական իշխանություններն Իրանում հեռագրային գծերի կառուցման նկատմամբ առանձնակի հետաքրքրություն սկսեցին դրսևորել XX դ. սկզբին: 1907 թ. ռուսական կառավարությունը որոշում կայացրեց Իրանում հեռագրային գծերի

<sup>11</sup> История внешней политики России конец XIX-начало XX века, с. 121-122.

<sup>12</sup> St'u The Economic History of Iran 1800-1914, Chicago, London, 1971, pp. 153-154.

<sup>13</sup> Кулагина Л., Россия и Иран (XIX-начало XXв.), Москва, 2010, с. 131-132.

կառուցումը իրականացնել սեփական միջոցների հաշվին: Մինչև 1907 թ. Ռուսաստանին էր պատկանում նաև Մեշիեդ-Սիսթան հեռագրային գիծը<sup>14</sup>: Ռուսական հեռագրային գործակալներն աշխատում էին նաև Ուրմիա, Թավրիզ, Ռեշտ, Թեհրան, Աստրաբադ, Քաշան, Քերման և այլ քաղաքներում անգլիացիների կողմից շահագործվող հեռագրային կայաններում<sup>15</sup>:

1873 թ. հայազգի ռուսահպատակ խոշոր դրամատեր Ստեփան Լիանոզովը, Թեհրանի ռուսական առաքելության աջակցությամբ, իրանական կառավարությունից 20 տարի ժամկետով ստացավ Կասպից ծովի հարավային հատվածում և նրա մեջ թափվող բոլոր գետերի ձկնորսական տեղամասերում (Ասթարա գետից մինչև Աթրեկ գետն ընկած հատվածում) ձկան որս կազմակերպելու իրավունք<sup>16</sup>: Ձեռնարկությունը գտնվում էր ցարական կառավարության հատուկ հովանավորության ներքո և համարվում էր ժամանակակից սարքավորումներով հագեցած Իրանի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություններից մեկը, որտեղ իրանցի աշխատակիցների մշտական թիվն հասնում էր 4 հազարի, իսկ ռուսահպատակներինը՝ 700-ի<sup>17</sup>:

1889 թ. Լազար Պոլյակովը հիմնադրեց «Պարսկաստանի և Միջին Ասիայի արդյունաբերական և առևտրական ընկերությունը», որի մասնաճյուղերը գործում էին Թեհրանում, Ռեշտում, Մեշիեդում և այլ խոշոր քաղաքներում: 1890 թ. նա շահից ստացավ նաև 75 տարի ժամկետով ողջ Իրանի տարածքում ապահովագրական և տրանսպորտային գործի կազմակերպման մենաշնորհային իրավունք: Մենաշնորհի հիման վրա հիմնվեց «Իրանական ապահովագրական և

---

<sup>14</sup> Մաշհադ-Նասրաթաբադ (Սիսթան) հեռագրային գիծը կառուցվեց 1902 թ.: Այս գիծը 1907 թ. օգոստոսին կնքված Իրանը ազդեցության գոտիների բաժանելու մասին ռուս-անգլիական համաձայնագրից հետո, ռուսական իշխանությունները զիջեցին Մեծ Բրիտանիային՝ փոխարենը ստանալով Մեշիեդ-Թեհրան հեռագրային գիծը: АВПРИ, ф. 44, “Персидский стол”, оп. 488, д. 2293, л. 85.

<sup>15</sup> Кулагина Л., նշվ. աշխ., էջ 132:

<sup>16</sup> 1893 թ. մենաշնորհի ժամկետն լրանալուն պես այն երկարաձգվեց մինչև 1925 թ.: Новая история Ирана, Хрестоматия, Москва, с. 144-145.

<sup>17</sup> Բայրուրյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 492:

տրանսպորտային ընկերությունը»<sup>18</sup>: Այն երկրի ողջ տարածքում խճուղային ճանապարհներ կառուցելու լայն հնարավորություններ ստացավ: Ընկերությունը վարկեր տրամադրելու իրավունք ուներ, ազատվում էր հարկերից<sup>19</sup>: «Իրանական ապահովագրական և տրանսպորտային ընկերությունը» կազմակերպեց Կասպից ծովով Իրանի և Ռուսաստանի միջև շոգեանավային հաղորդակցություն՝ հիմնելով «Կովկաս և Մերկուրի», «Նադեժդա», «Արևելյան ընկերություն» և այլ ընկերություններ, որոնք հետագայում միավորվելով կազմեցին «Պարսկական տրանսպորտային բյուրո»-ն: 1902 թ. ընկերությունում առաջացած ֆինանսական ճգնաժամի հետևանքով Ռուսաստանի ֆինանսների նախարար Ս. Յ. Վիտտեի առաջարկով կազմակերպությունը իր բաժնետոմսերը զիջեց պետությանը<sup>20</sup>:

Իրանում Ռուսաստանի ֆինանսատնտեսական և քաղաքական շահերի ամրապնդման ամենաարդյունավետ գործիքը Պարսկաստանի Հաշվավարկային բանկն էր (Учетный-ссудный банк Персии), որի ստեղծման հիմնական նպատակն անգլիացիների հիմնադրած Իրանի Շահինշահական բանկի (The Imperial bank of Persia) գործունեությանը հակազդելն էր<sup>21</sup>: 1890 թ. ռուս գործարար Յակով Պոլյակովը Նասեր էդ-Դին շահից ստացել էր Իրանում 75 տարի ժամկետով բանկ հիմնադրելու մասին մենաշնորհային իրավունք: Պայմանագրի համաձայն՝ բանկն իրավունք ուներ Իրանի ողջ տարածքում վարկային գործարքներ իրականացնել արժեթղթերի, պարտատոմսերի և շարժական գույքի գրավադրման դիմաց, ինչպես նաև կազմակերպել աճուրդներ<sup>22</sup>: 1891 թ. հիմնադրված Պոլյակովի բանկը գոյատևեց

<sup>18</sup> Новая история Ирана, с. 147; Кулагина Л., նշվ. աշխ., էջ 144-146:

<sup>19</sup> Кулагина Л., նշվ. աշխ., էջ 147:

<sup>20</sup> Ананьич Б., Российское самодержавие и вывоз капиталов 1895-1914 гг. (по материалам Учетно-ссудного банка Персии), Ленинград, 1975, с. 73-74.

<sup>21</sup> Кулагина Л., Из истории закабаления Ирана английским империализмом (Шахшахский банк в последнее десятилетие XIX в.). Краткие сообщения Института Востоковедения, Москва, 1956, с. 5-7.

<sup>22</sup> Եթե սկզբնական շրջանում բանկը վարկեր էր տրամադրում միայն շարժական գույքի դիմաց, ապա հետագայում լիազորություններ ստացավ գրավի դիմաց ընդունել նաև անշարժ գույք, որի արդյունքում Իրանի հյուսիսային նահանգների ընդարձակ հողատարածքներ անցան նրա ձեռքը: Թեև շարիաթով արգելվում էր օտար

ընդամենը երեք տարի: Գիտակցելով և կարևորելով այդ կազմակերպության տնտեսական և քաղաքական նշանակությունը՝ 1894 թ. ապրիլին Ս. Վիտտեի նախաձեռնությամբ բանկը ևս գնվեց Ռուսաստանի Ֆինանսների նախարարության կողմից և անցավ Ռուսաստանի Պետական բանկի վերահսկողության տակ<sup>23</sup>: 1894 թ. Իրանի Հաշվավարկային բանկը գործնականում դարձավ Ռուսաստանի Պետական բանկի մասնաճյուղն Իրանում, որը ոչ միայն վճարեց Իրանի Վարկային ընկերության ձեռք բերման ծախսերը, այլև բանկին տրամադրեց 375 հազ. ռուբլի շրջանառության կապիտալ<sup>24</sup>: Վերակազմավորված բանկը նշանավորեց Իրանում Ռուսական կայսրության քաղաքականության որակական նոր փուլ<sup>25</sup>: Թեև բանկը համագործակցում էր Իրանում Ռուսաստանի դեսպանատան և հյուպատոսությունների հետ, սակայն գործնականում բացառապես անկախ մարմին էր և ենթարկվում էր Ռուսաստանի Ֆինանսների նախարարի հրահանգներին, իսկ նրա ղեկավարը համարվում էր ֆինանսների նախարարի գործակալը<sup>26</sup>: 1895 թ. սկսած Հաշվավարկային բանկի միջոցով ռուսական իշխանությունները սկսեցին իրականացնել ռուս-իրանական առևտրային և ֆինանսական գրեթե բոլոր գործարքները: Աշխատանքը մեկնարկելով 1890 թ. արդեն 1900 թ. բանկը պետական հովանավորության շնորհիվ՝ իր գործունեության սահմանները ընդլայնեց ոչ միայն մայրաքաղաքում, այլև ներկայացուցչական կենտրոններ հիմնեց տնտեսական կարևոր նշանակություն ունեցող կենտրոններում՝ Թավրիզում, Ռեշտում, Մեշհեդում, Էնզելիում, Ուրմիայում, Նասրաթաբադում, Ղազվինում,

---

հպատակներին անշարժ գույք ունենալ Իրանում, այդուհանդերձ Հաշվավարկային բանկը տարատեսակ միջոցներով օժանդակում էր նաև ռուս գործարարներին Իրանի հյուսիսային շրջաններում հողատարածքներ ձեռք բերելու հարցում: Տե՛ս Аnanьич Б., նշվ. աշխ., էջ 15:

<sup>23</sup> The Economic History of Iran 1800-1914, p. 139.

<sup>24</sup> Аnanьич Б., նշվ. աշխ., էջ 17:

<sup>25</sup> Պարսկաստանի Հաշվավարկային բանկը ի սկզբանե կապված չի եղել օտարերկրյա և մասնավոր կապիտալի հետ և ֆինանսավորվում էր բացառապես Ռուսաստանի պետական գանձարանի և Պետական բանկի կողմից: Այն գործել է մինչև 1917 թ.: Ananich B., The Russian economy and banking system. The Cambridge History of Russia. Imperial Russia, 1689-1917, vol. II, Cambridge, 2006, p. 405.

<sup>26</sup> Drage G., Russian Affairs, , New York, London: John Murray, 1904, p. 532.

Սպահանում: Համապատասխան մասնաճյուղեր հիմնվեցին նաև Բաքվում, Մոսկվայում, Լոճում և Աստրախանում<sup>27</sup>:

Ռուսական կառավարությունն առաջին հերթին բանկի առաջ Իրանից բրիտանական ապրանքատեսակները դուրս մղելու, տեղական շուկան գրավելու խնդիր դրեց: Այդ քաղաքականության արդյունքում (1895-1900 թթ.) Ռուսաստանն առաջատար և մենաշնորհային դիրքեր զբաղեցրեց հյուսիսային նահանգներում:

1903 թ. Ռուսաստանում կրկին պետական մակարդակի վրա բարձրացվեց Իրանում ֆինանսատնտեսական քաղաքականության հետագա ընդլայնման հարցը: Թեև 1903 թ. տնտեսական ծրագիրն իր բովանդակությամբ առանձնապես չէր տարբերվում 1895 թ. մոտեցումներից, սակայն այս անգամ խոսքը գնում էր պետական կապիտալների հաշվին ընդլայնման ավելի մեծ չափերի մասին և այդ քաղաքականության որոշիչ դերակատարումը ցարական իշխանությունը նախատեսում էր իրականացնել Պարսկաստանի Հաշվավարկային բանկի միջոցով: 1903 թ. փետրվարին Ռուսաստանի Ֆինանսների կոմիտեն Հաշվավարկային բանկի վերակազմակերպման մասին որոշում ընդունեց, ըստ որի՝ բանկը Ռուսաստանի Պետական բանկի ենթակայությունից անցավ Պետական գանձարանի վերահսկողության ներքո<sup>28</sup>: 1903 թ. բանկն իր ձեռքում կենտրոնացրեց Իրան արտահանվող ռուսական ապրանքների գրեթե բոլոր գործարքները՝ իր վրա վերցնելով ռուս արդյունաբերողների և իրանցի վաճառականների միջև միջնորդությունը: Այն նպաստավոր վարկեր էր տրամադրում նաև ռուսահպատակ և իրանցի առևտրականներին<sup>29</sup>:

Ամփոփելով վերոհիշյալ փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ ռուսական կառավարությունը աստիճանաբար իր ձեռքում սկսեց կենտրոնացնել իրանական կառավարության կողմից ռուսահպատակ մասնավոր ձեռնարկատերերին տրամադրված մենաշնորհային իրավունքները և իրանական տնտեսության մի շարք բնագավառներում պետական կապիտալների ներդրումային և

<sup>27</sup> The Economic History of Iran 1800-1914, p. 360.

<sup>28</sup> Анянич Б., նշվ. աշխ., էջ 52-56:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 55-56:

Ֆինանսատնտեսական գործընթացների նկատմամբ պետական վերահսկողության քաղաքականություն էր իրականացնում:

### ***Ֆինանսական ներդրումներ***

XX դարասկզբին Իրանում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական գերակայության հաստատման համար կարևոր էին ցարական պետական գանձարանից սնանկացման շեմին հայտնված իրանական կառավարությանը խոշոր փոխառությունների տրամադրումը, ինչը Իրանում ռուսական դիրքերն ամրապնդելու և շահական արքունիքում քաղաքական ազդեցությունն ուժեղացնելու ամենարդյունավետ միջոցներից էր:

Իրանական կառավարությանը վարկավորելու գործում ևս Ռուսաստանը մրցակցության մեջ մտավ Մեծ Բրիտանիայի հետ<sup>30</sup>: 1895-96 թթ. ընթացքում Հաշվավարկային բանկն իրանական կառավարությանը տրամադրեց կանխավճարային կարճաժամկետ վարկեր՝ շահական գանձապետարանի պարտամուրհակների (բարաթ) դիմաց<sup>31</sup>: 1898 թ. աշնանը բանկն իրանական կառավարությանը տրամադրեց ևս 1.5 մլն. ռուբլի վարկ, որը սպասարկվելու էր Իրանի հյուսիսային մաքսատների և Կասպից ծովում ձկնարդյունաբերության վարձավճարներից ստացվող եկամուտներով<sup>32</sup>: Սակայն այդ գումարը ծախսվեց Մեծ Բրիտանիայից նախկինում վերցրած փոխառությունների մասնակի մարմանը և շահական կառավարությունը ստիպված էր շարունակել գումարների հայթայթման գործընթացը:

1899 թ. աշնանը օգտվելով միջազգային ասպարեզում Մեծ Բրիտանիայի խառնակ կացությունից՝ մասամբ անգլո-ֆրանսիական քաղաքական մի շարք հակասությունների, մասամբ էլ՝ Աֆրիկայում Մեծ Բրիտանիայի ձեռնարկած լայնամասշտաբ ռազմական գործողությունների հետևանքով՝ ցարական կառավարությունը

---

<sup>30</sup> محمد تقی لسان الملك سپهر، نا سج التواريخ، تاريخ قاجاريه، جلد سوم، ص. ۷۲-۷۳-۷۱

Chirol V., The Middle Eastern Question or some Political Problems of Indian Defence, London, 1903, p. 51; Drage G., նշվ. աշխ., էջ 528:

<sup>31</sup> Анянъич Б., նշվ. աշխ., էջ 18-19:

<sup>32</sup> Նույն տեղում:



փոխառություն տրամադրելու նպատակով՝ բանակցություններ սկսեց շահական կառավարության հետ<sup>33</sup>: Արդյունքում, 1900 թ. հունվարի 29-ին Հաշվավարկային բանկի և շահական կառավարության միջև ստորագրվեց պայմանագիր, որով Ռուսաստանը 75 տարի ժամկետով, տարեկան 5% տոկոսադրույքով Իրանին տրամադրեց 22.5 մլն. փոխառություն: Այն երաշխավորվում էր իրանական մաքսակետերից (բացառությամբ Ֆարսի և Պարսից ծոցի նավահանգիստների մաքսակետերի) ստացվող եկամուտներով<sup>34</sup>: Ուշագրավ է նշել, որ պետության մաքսային ոլորտում բարենորոգումներ անցկացնելու նպատակով, շահական կառավարությունը Ռուսաստանի միջամտությամբ, մաքսային ոլորտի ղեկավարությունը հանձնեց ռուսական դրածո բելգիացի Ջոզեֆ Նաուսին: Արդյունքում, բելգիական անձնակազմի 30 մասնագետ վերահսկողություն սահմանեցին իրանական մաքսատների վրա<sup>35</sup>: Դա չափազանց կարևոր քայլ էր, որը նպատակ էր հետապնդում ապահովելու ռուսական փոխառությունների երաշխիք հանդիսացող մաքսային եկամուտները<sup>36</sup>: Մինչև տվյալ փոխառության մարումը իրանական կառավարությունն իրավասու չէր առանց Ռուսաստանի համաձայնության արտասահմանում երկարաժամկետ արտաքին փոխառություններ կնքել, այն պետք է մարեր նախկինում արված բոլոր պարտքերը, ինչպես նաև իրավունք չուներ իջեցնելու փոխառության երաշխիք հանդիսացող մաքսավճարների սակագները<sup>37</sup>: Փոխառություններ տրամադրելուն զուգընթաց ռուսական իշխանություններն Իրանում ձեռք էին բերում տարատեսակ մենաշնորհային իրավունքներ:

1901 թ. Իրանին 10 մլն. ռուբլի փոխառություն տրամադրելու դիմաց 1901 թ. սեպտեմբերին ռուսական կառավարությունն առաջադրեց

---

<sup>33</sup> Kagarlitsky B., նշվ. աշխ., էջ 236: Entner M.L., Russo-Persian Commercial relations, 1828-1914, University of Florida Monographs, Social Sciences, Gainesville, 28, 1965, Florida, p. 47.

<sup>34</sup> Справка о задолжности персидского правительства России, АВПРИ, ф. 144, “Персидский стол”, оп. 488, д. 4021, ч. 2, л. 240-247.

<sup>35</sup> Drage G., նշվ. աշխ., էջ 533:

<sup>36</sup> Keddie Nikki R., Yann Richard, Roots of Revolution: An Interpretive History of Modern Iran, New Haven, 1981, p. 70.

<sup>37</sup> Drage G., նշվ. աշխ., էջ 536: Ананьич Б., նշվ. աշխ., էջ 25-26:

հետևյալ սկզբունքային պայմանները. 1) ռուս-իրանական առևտրային (մաքսային) նոր պայմանագրի կնքում, 2) իրանական գանձապետարանի վրա Շահնշահական բանկի ազդեցության սահմանափակում, 3) շահի կողմից Թավրիզ-Ղազվին-Թեհրան խճուղային ճանապարհի և Կասպից ծովից Պարսից ծոց նավթային խողովակաշարի կառուցման համար մենաշնորհային իրավունքների տրամադրում: Թեև բանակցային գործընթացում ռուսական կառավարությունը բրիտանական ճնշումների արդյունքում ստիպված եղավ նահանջել իրանական նավթային ոլորտում մենաշնորհային դիրքեր զբաղեցնելու ծրագրերից<sup>38</sup>, սակայն 1902 թ. մարտի 15-ին ցարական իշխանությունը նախատեսվող փոխառությունից իրանական կառավարությանը տրամադրեց 1 մլն. ռուբլու վարկ, իսկ ապրիլի 2-ին թողարկվեց տարեկան 5% տոկոսադրույքով, 75 տարի ժամկետով 10 մլն. ռուբլի ընդհանուր արժողությամբ փոխառություն՝ 1900 թ. տրամադրված փոխառության պայմանագրի ընդհանուր դրույթների համաձայն<sup>39</sup>:

Այսպիսով, 1900-1902 թթ. ընթացքում շահին տրամադրված փոխառությունների արդյունքում Ռուսաստանին հաջողվեց ամբողջապես ֆինանսական կախվածության մեջ դնել իրանական կառավարությանը և գործնականում վերահսկողություն սահմանել Իրանի հյուսիսային մաքսակետերի վրա:

### ***Ռուս-իրանական ապրանքաշրջանառությունը և առևտրական հաշվեկշիռը***

Չնայած Թուրքմենչայի պայմանագրով ձեռք բերված առևտրային արտոնություններին և Իրանի հետ անմիջական հարևանությանը, մինչև XIX դ. 70-ական թթ. Ռուսաստանին չէր հաջողվում իրանական շուկայում տիրապետող դիրքեր հաստատել<sup>40</sup>: Իրանի հյուսիսային

---

<sup>38</sup> Մանրամասն տե՛ս Նավասարդյան Ն., Ռուսաստանի քաղաքականությունն Իրանում (XIX դ. վերջ XX դ. սկիզբ), ատենախոսություն, Երևան, 2013, էջ 33-34:

<sup>39</sup> Справка о задолжности персидского правительства России, АВПРИ, ф. 144, “Персидский стол”, оп. 488, д. 4021, ч. 2, л. 240-247.

<sup>40</sup> Сухоруков С., Иран между Британией и Россией, от политики до экономики, СПб, 2009, с. 93-96, 173; Русско-иранская торговля в 30-50-е годы XIX века. Сборник документов, Москва, 1984, с. 7.

նահանգներում առևտրաշրջանառությունը խթանելու նպատակով XIX դ. ընթացքում ռուսական իշխանությունները պարբերաբար արգելում էին Ռուսաստանի վրայով Իրանի հետ տարանցիկ առևտուրը<sup>41</sup>: 1883 թ. հունիսի 3-ին ռուսական կառավարությունը վերստին արգելեց անդրկովկասյան տարանցիկ առևտուրը<sup>42</sup>: Այդ արգելքը գործեց շուրջ քսան տարի՝ թույլ չտալով արտասահմանյան ապրանքատեսակների մուտքը Ռուսաստանով Իրան, ինչի արդյունքում Իրանի հյուսիս-արևելյան նահանգներում ռուսական արտահանումը մենաշնորհային բնույթ սկսեց կրել: Ռուսաստանի արդյունաբերության զարգացումը, ճանապարհային հաղորդակցության բարելավումը, մասնավորապես, անդրկասպյան և անդրկովկասյան երկաթուղիների կառուցումը, նպաստեցին Իրանում ռուսական արդյունաբերական ապրանքների մրցունակության բարձրացմանը: Բացի այդ, ցարական կառավարությունն ամեն կերպ խթանելով Իրան ռուսական ապրանքատեսակների արտահանումը՝ զգալի խրախուսադրամներ էր վճարում մաքսատուրքերի վերադարձման ձևով, հատկապես շաքարի և գործվածքեղենի արտահանման համար: XIX դ. վերջին ռուսական իշխանությունների հովանավորչական քաղաքականության շնորհիվ ռուս-իրանական առևտրաշրջանառության մեջ արձանագրվեցին համեմատաբար ավելի բարձր ցուցանիշներ:

Քննվող ժամանակաշրջանում իրանական գյուղատնտեսական ապրանքների հիմնական գնորդը Ռուսաստանն էր, որն աշխարհագրական և բեռնափոխադրումների հարմարավետության հետևանքով արտաքին առևտրի բնագավառում զբաղեցրեց Իրանի հիմնական գործընկերոջ դերը: Ռուսաստանի տնտեսական ներթափանցման ակտիվացմանը համընթաց Իրանի հյուսիսային նահանգների հումքային շուկան հարմարեցվեց ռուսական

---

<sup>41</sup> Անդրկովկասով եվրոպական ապրանքների տարանցիկ առևտուրը ընդմիջումներով գոյատևեց 1820-1883 թթ.: Թույլատրվել է 1821-1831 թթ., այնուհետև արգելվել է 12 տարով և կրկին թույլատրվել է 1846-1883 թթ.-ին: The Economic History of Iran 1800-1914, p. 143.

<sup>42</sup> Жалобова Г., Правовое обеспечение российских внешнеторговых интересов на рубеже XIX-XX вв., Провождение, 2005, 1, с. 193-207.

[http://uristy.ucoz.ru/publ/kommercheskoe\\_pravo/zholobova\\_g\\_a\\_ppravovoe\\_obespechenie\\_ros\\_sjskikh\\_vneshnetorgovykh\\_interesov\\_na\\_rubezhe\\_xix\\_xx\\_vv/22-1-0-994](http://uristy.ucoz.ru/publ/kommercheskoe_pravo/zholobova_g_a_ppravovoe_obespechenie_ros_sjskikh_vneshnetorgovykh_interesov_na_rubezhe_xix_xx_vv/22-1-0-994).

արդյունաբերության պահանջներին: Իրանից Ռուսաստանը ներմուծում էր բամբակ, բրինձ, ձուկ, չորացրած մրգեր, նուշ, կաշի, բուրդ, տնային կենդանիներ, գորգեր և այլն: Ռուսաստանն Իրան էր արտահանում հիմնականում բամբակյա գործվածքներ, շաքար, թեյ, ալյուր, թորած նավթ, երկաթ, ապակյա իրեր, մշակված կաշի և այլն: Ռուսաստանից Իրան արտահանվող ապրանքատեսակների մեծ մասը վաճառվում էին բավականին ցածր գներով<sup>43</sup>: Արդյունքում, ռուսական շաքարը, լուցկին, թորած նավթն Իրանում ավելի էժան էին քան Ռուսաստանում, ինչն էլ նպաստում էր այդ ապրանքատեսակների բարձր սպառողականությանը<sup>44</sup>:

Յոթ տարվա ընթացքում (1883-1890 թթ.) ռուսական ներմուծումն Իրան 3.6 մլն. ռուբլուց հասավ 10.9 մլն. ռուբլու: Իրանից Ռուսաստան արտահանումը 7.7 մլն. ռուբլուց՝ 10.8 մլն. ռուբլու<sup>45</sup>: Հատկանշական է, որ Ռուսաստանն այն եզակի երկրներից էր, որի հետ Իրանը մինչև XX դ. սկիզբն ուներ առևտրային դրական հաշվեկշիռ:

Թավրիզը, Ռեշտը, Էնզելին, Արդեբիլը, Աստրաբադը խոշոր առևտրական այն կենտրոններն էին, որտեղ հաստատվում էին ռուս վաճառականները: Ռուս-իրանական առևտրական գրեթե բոլոր գործարքներին օժանդակում էին Իրանում և Անդրկովկասում հիմնված տարատեսակ առևտրային տները և ընկերությունները<sup>46</sup>: Ատրպատականում, Գիլյանում, Մազանդարանում և ալյուր հիմնված հյուպատոսությունները նախանձախնդրորեն պաշտպանում էին ռուսահպատակ գործարարների և ձեռներեցների շահերն ու հետաքրքրությունները: Շատ հաճախ իրանաբնակ վաճառականները սեփական կառավարության հետապնդումներից խուսափելու

---

<sup>43</sup> Drage G., նշվ. աշխ., էջ 542:

<sup>44</sup> Бобынин Н., Персия, ее экономическое положение и внешняя торговля 1901-1923, Тифлис, 1923, с. 225.

<sup>45</sup> Entner M.L., Russo-Persian Commercial relations, 1828-1914, University of Florida Monographs, Social Sciences, 28, 1965, pp. 8-9; Бобынин Н., նշվ. աշխ., էջ 204-205:

<sup>46</sup> Whigham H.J., The Persian Problem: An Examination of the rival positions of Russia and Great Britain in Persia with Some Account of the Persian Gulf and Bagdad Realway, London, 1903, pp. 352-355.

նպատակով՝ նույնպես դիմում էին ռուսական իշխանությունների հովանավորությանը<sup>47</sup>:

Իրանի հետ Ռուսաստանի առևտրական հարաբերությունները մինչև 1901 թ. իրավաբանորեն կարգավորվում էին 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրի «Հատուկ ակտի» III հոդվածով<sup>48</sup>, որով սահմանվել էր ներմուծվող և արտահանվող ապրանքների արժեքին համապատասխան (ad valerom) 5% մաքսատուրք թե՛ ռուսական, թե՛ իրանական ապրանքների համար<sup>49</sup>: Իրանին տրամադրվող ռուսական երկրորդ խոշոր փոխառության պայմաններից մեկի համաձայն՝ 1900 թ. Թեհրանում «Հատուկ ակտի» III հոդվածով գործող մաքսային ռեժիմը վերանայելու նպատակով՝ բանակցություններ սկսվեցին Ռուսաստանի Ֆինանսների նախարարության խորհրդի անդամ Վ. Յ. Գոլուբևի և Իրանի մաքսային համակարգի ղեկավար Զ. Նաուսի միջև<sup>50</sup>:

1901 թ. նոյեմբերի 9-ին ստորագրվեց ռուս-իրանական մաքսային համաձայնագիր, որը վավերացվեց և ուժի մեջ մտավ 1903 թ.<sup>51</sup>: Նոր համաձայնագիրն Իրանի համար հաստատեց առևտրական հարաբերությունների բացառապես նոր սկզբունքներ: Նախ և առաջ չեղյալ էր հայտարարվում «Հատուկ ակտի» III հոդվածով սահմանված 5% մաքսատուրքը, ինչպես նաև սահմանափակվում էին ներմուծման ընթացքում և ներքին ճանապարհների վրա գանձվող տարատեսակ մաքսավճարների չափերը: Փոխարենը սահմանվեց մաքսատուրքի սակագների նոր համակարգ՝ արտահանվող և ներմուծվող յուրաքանչյուր ապրանքատեսակի համար հատուկ մաքսատուրքի

---

<sup>47</sup> Сеидов Р., Иранская буржуазия в конце XIX-начале XX века, Москва, 1974, с. 37.

<sup>48</sup> Մինչև Ռուսաստանում հոկտեմբերյան հեղաշրջումը Թուրքմենչայի պայմանագիրը չէր կորցրել իր ուժը, բացառությամբ «Հատուկ ակտի» III հոդվածի, որը 1901 թ. նոյեմբերի 9-ին փոխարինվեց ռուս-իրանական մաքսային համաձայնագրով:

<sup>49</sup> Зонништраль-Пискорский А., Международные торговые договоры Персии, Москва, 1931, с. 177-179; Entner M.L., Russo-Persian Commercial relations, p. 13.

<sup>50</sup> Зонништраль-Пискорский А., նշվ. աշխ., էջ 166-168:

<sup>51</sup> Համաձայնագրի տեքստը տե՛ս Сборник торговых договоров и других вытекающих из них соглашений, заключенных Россией и иностранными государствами, Петроград, 1915, с. 442-481.

չափ<sup>52</sup>: Ռուսական 30 ապրանքատեսակներից, որոնք կազմում էին Իրան արտահանվող ապրանքների 9/10 մասը, 8 ապրանքատեսակ առհասարակ չէին գանձվելու, 11 ապրանքատեսակ գանձվելու էին ընդամենը 1 դրան սակագնով: Ռուսական արտահանման հիմնական ապրանքների գրեթե մեծ մասի համար սահմանվեց 5%-ից ցածր սակագին: Օրինակ, շաքարի համար, որն Իրան ռուսական արտահանման ամենակարևոր ապրանքատեսակն էր և կազմում էր ամբողջ արտահանման ծավալի 1/3-ը, 5%-ի փոխարեն սահմանվեց 3,4% մաքսատուրք, բամբակյա գործվածքների համար՝ 3,7% և այլն<sup>53</sup>: Միաժամանակ Ռուսաստանն ազատվեց Իրանից Ռուսաստան արտահանվող և ռուսական արդյունաբերության համար առաջնային կարևորություն ունեցող այնպիսի ապրանքատեսակների մաքսատուրքերից, ինչպես բամբակը և բուրդը: Ռուսաստանին ընձեռնված առևտրային լայն արտոնություններն ամրագրվեցին համաձայնագրի գաղտնի հավելվածում, ըստ որի իրանական կառավարությանն արգելվում էր երկրի որևիցե այլ սահմանում հաստատել ավելի արտոնյալ սակագներ քան ռուս-իրանական սահմանում և առանց Ռուսաստանի համաձայնության կնքել որևիցե միջազգային պայմանագիր, որը կհակասեր 1901 թ. ռուս-իրանական համաձայնագրի դրույթներին<sup>54</sup>: Չնայած սրան, 1903 թ. փետրվարի 9-ին Մեծ Բրիտանիային նույնպես հաջողվեց նմանատիպ մաքսային պայմանագիր կնքել Իրանի հետ<sup>55</sup>:

Վերը նշված միջոցառումների արդյունքում XX դ. սկզբին Ռուսաստանը մենաշնորհային դիրք զբաղեցրեց Իրան շաքարի, թորած նավթի, երկաթի, լուցկու, շինարարական հումքի ներմուծման մեջ: Բավականին կարճ ժամանակահատվածում՝ 1903-1906 թթ. ռուս-իրանական ապրանքաշրջանառությունը աճեց 83%<sup>56</sup>: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, Իրանի արտաքին առևտրաշրջանառության մեջ Ռուսաստանի հաշվեկշիռը 1901-1902 թթ. կազմեց 50%, իսկ 1910-1911

---

<sup>52</sup> Зонништраль-Пискорский А., նշվ. աշխ., էջ 183-185: The Economic History of Iran 1800-1914, pp. 148-149.

<sup>53</sup> Зонништраль-Пискорский А., նույն տեղում:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>55</sup> Drage G., նշվ. աշխ., էջ 537:

<sup>56</sup> Entner M.L., նշվ. աշխ., էջ 8-9: Бобынин Н., նշվ. աշխ., էջ 204-205:

թթ.՝ 70%: Մեծ Բրիտանիայի և Հնդկաստանինը միասին՝ 22%<sup>57</sup>, որի արտահանումը սահմանափակվում էր երկրի հարավային շրջաններից ավելի թանկ, փոքրամասշտաբ և բեռնափոխադրման տեսանկյունից ավելի դիմացկուն ապրանքատեսակներով (ափիոնի, արծաթի, մարգարտի, ռետինի, նուշի, խուրմայի և նավթի)<sup>58</sup>: Անգլո-իրանական ապրանքաշրջանառության տեսակարար հաշվեկշռում մշտապես գերազանցում էր Մեծ Բրիտանիայի ներմուծումն Իրան<sup>59</sup>:

Եվրոպական տերությունների և Ռուսաստանի հետ անհամամասն առևտուրը բացասաբար էր անդրադառնում իրանական տնտեսության վրա: Երկրում հաճախ էին կրկնվում տնտեսական ճգնաժամերը, որոնց պայմաններում սահմանափակվում էր ազգային կապիտալների կուտակման հնարավորությունը, դժվարանում պետության կողմից օտարերկրյա փոխառությունների և վարկերի դիմաց տոկոսների մարումը: Արձանագրվում էին գնային կտրուկ աճեր և առևտրական տների սնանկացումներ: Չնայած ներմուծման նկատմամբ արտահանման աճի արագ տեմպերին՝ Իրանի առևտրային հաշվեկշիռը շարունակում էր մնալ բացասական: Բնական է, որ այս ճեղքվածքը լրացվելու էր արտաքին փոխառությունների և օտարերկրյա տերություններին երկրի ենթակառուցվածքներում մենաշնորհներ տրամադրելու միջոցով:

### **Ճանապարհաշինություն**

Իրանի կենտրոնական նահանգները կտրված էին ռուսական գերակայության տակ գտնվող կասպիական շրջաններից և բրիտանական ազդեցության գոտի՝ Պարսից ծոցից: Երկաթուղիների շնորհիվ Ռուսաստանը կարող էր թափանցել Մեծ Բրիտանիայի ազդեցության ոլորտ, իսկ Անգլիան Ռուսաստանի, ուստի և՛ Ռուսաստանը և՛ Մեծ Բրիտանիան հակազդում էին միմյանց երկաթուղային ծրագրերին Իրանում: Սակայն արհեստականորեն խոչընդոտելով Իրանում երկաթուղաշինության գործընթացին այս տերություններն Իրանի տարերային ճանապարհազրկության

<sup>57</sup> Бобынин Н., նշվ. աշխ., էջ 114-204, 233-241:

<sup>58</sup> The Economic History of Iran 1800-1914, p. 137.

<sup>59</sup> Drage G., նշվ. աշխ., էջ 542-543:

պայմաններում, անհրաժեշտ էին համարում մի շարք խճուղային և ջրային հաղորդակցության ճանապարհների ստեղծումը:

1893 թ. Պոլյակովների «Պարսկական ապահովագրական և տրանսպորտային ընկերությունը» Ղազվինից Էնզելիի ծոց անիվային ճանապարհի կառուցման իրավունք էր ստացել, իսկ 1895 թ. ձեռք էր բերել նաև վերոնշյալ ճանապարհի շարունակությունը դեպի Թեհրան և Համադան կառուցելու իրավունք: Ճանապարհի կառուցման նպատակով հիմնվեց «Էնզելի-Թեհրան ճանապարհային ընկերությունը»<sup>60</sup>: 1895 թ. ընկերությունը ձեռք բերեց Էնզելիի նավահանգստի բարեկարգման, ինչպես նաև Ղազվին-Համադան ճանապարհի շահագործման, իսկ 1903 թ. Ռեշտ-Էնզելի ճանապարհի կառուցման և շահագործման մենաշնորհային իրավունք:

Մեծ Բրիտանիան և Ռուսաստանն իրենց շահերից ելնելով Իրանը մատնում էին տարերային ճանապարհագրության: Նրանք մի կողմից խոչընդոտում էին միմյանց երկաթուղային ծրագրերին, իսկ մյուս կողմից միասնաբար հանդես էին գալիս եվրոպական մյուս պետությունների կողմից դաջարական կառավարությանն առաջարկվող երկաթուղային նախագծերի դեմ<sup>61</sup>: Այս առումով թերևս բացառություն էր կազմում 1888 թ. բելգիացիների կողմից կառուցված, ռազմավարական էական նշանակություն չունեցող, Թեհրանը Շահ Աբդ ալ-Ազիմ սրբավայրին կապող 6 մղոն (9,6 կմ) երկարություն ունեցող երկաթգիծը, որի շինարարությունն իրագործող բելգիական բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի 3/4-ը պատկանում էր ռուս գործարար Յ. Պոլյակովին<sup>62</sup>:

Տնտեսապես ավելի թույլ Ռուսաստանը, որի երկաթուղային շինարարությունն սեփական երկրում իրականացվում էր օտարերկրյա, մասնավորապես՝ ֆրանսիական կապիտալի շնորհիվ, աշխատում էր հետաձգել լայնահուն երկաթուղային շինարարության գործընթացն

---

<sup>60</sup> Новая История Ирана, с. 147.

<sup>61</sup> Firuz Kazem-Zadeh, Russian and Britain in Persia, 1864-1914. A study of Imperialism, New Haven and London, 1968, pp. 134-144: Бобынин Н., նշվ. աշխ., էջ 536: The Economic History of Iran 1800-1914, p. 183.

<sup>62</sup> Томара М., Экономическое положение в Персии, СПб., 1895, с. 102; The Economic History of Iran 1800-1914, p. 156.



Իրանում<sup>63</sup>: Ռուսական կառավարությունը ռազմավարական մեծ կարևորություն ներկայացնող անդրիրանական երկաթուղին և հատկապես նրա հյուսիսային հատվածը նպատակահարմար էր գտնում կառուցել միայն պետական միջոցների հաշվին՝ առանց մասնավոր կապիտալների մասնակցության<sup>64</sup>: Մյուս կողմից՝ ճանապարհագրության պայմաններում Ռուսաստանը կարող էր երկարաձգել հյուսիսիրանական շուկայում ձեռք բերված մենաշնորհային դիրքերը:

1890 թ. փետրվարի 4-ին Իրանում երկաթուղային շինարարության հարցը քննելու նպատակով հրավիրված Հատուկ խորհրդակցությունն արձանագրեց, որ «երկաթգծի հարավային հատվածը վերահսկելու և պաշտպանելու նպատակով Ռուսաստանին հարկավոր էր Պարսից ծոցում ռազմածովային հենակետ հիմնել, սակայն հաշվի առնելով բրիտանական ազդեցությունը Ծոցում՝ նշված հարցը պահանջում էր լուրջ քննություն և հետևողական քաղաքականություն»: Երկաթուղային հարցը քննելիս՝ ռուսական կառավարությունը նախ և առաջ պետք է ուշադրությունը սևեռեր Ատրպատականի հետ հեռահաղորդակցությանը: Այս տեսանկյունից ռազմավարական և տնտեսական լուրջ նշանակություն կունենար դեպի Թավրիզ երկաթգիծը, սակայն տվյալ փուլում քանի դեռ Այսրկովկասն ամբողջապես կապված չէր ռուսական երկաթուղային ցանցին, երկաթգծի կառուցման արդյունավետությունը նվազում էր: Ստեղծված իրավիճակում նպատակահարմար էր համարվում Զուլֆա-Թավրիզ մայրուղու շինարարությունը: Ուստի «Ռուսաստանն իր բոլոր ջանքերն պետք է կենտրոնացներ որպեսզի Պարսկաստանում երկաթուղիների կառուցումն ընդհանրապես հետաձգվեր»<sup>65</sup>:

Արդյունքում, ռուս գործարարների կողմից Իրանին առաջարկվող երկաթգծերի կառուցման գրեթե բոլոր ծրագրերը 1890 թ. փետրվարի 4-ին գումարված «Հատուկ խորհրդակցության» կողմից կայացված

---

<sup>63</sup> Մանրամասն տե՛ս Նավասարդյան Ն., նշվ. աշխ., էջ 43-46:

<sup>64</sup> Англо-русское соперничество в Персии в 1890-1906, “Красный архив”, т. 1 (56), 1933, с. 35-45.

<sup>65</sup> Англо-русское соперничество в Персии в 1890-1906, с. 44-48.

որոշմամբ հետաձգվեցին<sup>66</sup>: Նույն թվականի նոյեմբերի 12-ին կնքվեց ռուս-իրանական պայմանագիր, ըստ որի՝ Իրանը պարտավորվում էր տաս տարվա ընթացքում չկառուցել և այլ ընկերությունների ու մասնավոր անձանց չտրամադրել մենաշնորհային իրավունքներ՝ Իրանում երկաթուղային ճանապարհներ կառուցելու համար<sup>67</sup>: Տվյալ պայմանագիրը փաստացի հավասարազոր էր Իրանում երկաթուղաշինության արգելքի: 1900 թ. Իրանում երկաթուղիների կառուցման արգելքը հատուկ պայմանագրով երկարաձգվեց ևս տաս տարով<sup>68</sup>: Այսպիսով, Իրանը մինչև 1910 թ. առանց Ռուսաստանի համաձայնության իրավասու չէր սեփական երկրում երկաթուղիներ կառուցել և այդ իրավունքը տրամադրել այլ պետությունների:

XIX դ. վերջին տասնամյակներին գերտերությունների երկաթուղային ծրագրերն էլ ավելի բարձրացրեցին Իրանի տնտեսական և աշխարհաքաղաքական նշանակությունը: Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կողքին հանդես եկավ Գերմանիան, որի ծավալապաշտական ծրագրերն Իրանում սերտորեն կապվեցին Բաղդադի երկաթուղու շինարարության հարցի հետ: Նախատեսվում էր, որ այդ երկաթուղու ճյուղավորումները կառուցվելու են նաև դեպի Իրան, ինչը մեծ սպառնալիք էր ներկայացնելու և՛ ռուսական և՛ բրիտանական ռազմավարական ու առևտրատնտեսական շահերին: Օրինաչափ է, որ Իրանի երկաթուղաշինարարության նկատմամբ թե՛ Ռուսաստանը, թե՛ Մեծ Բրիտանիան իրական հետաքրքրություն սկսեցին ցուցաբերել Գերմանիայի կողմից Բաղդադի երկաթուղու շինարարությունը նախաձեռնելուն զուգընթաց<sup>69</sup>: Գերմանիայի կողմից Բաղդադի երկաթուղու կառուցման ծրագրերը նոր հարթության վրա դրեց գերտերությունների քաղաքականությունը տարածաշրջանում:

---

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> Бондаревский Г., Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток (1888-1903), Ташкент, 1955; Drage G., տշվ. աշխ., էջ 537:

<sup>68</sup> Англо-русское соперничество в Персии в 1890-1906, “Красный архив”, т. 1 (56), с. 34.

<sup>69</sup> Բաղդադի երկաթուղու շուրջ մրցապայքարի մասին մանրամասն տե՛ս Силин А., Экспазия Германии на Ближнем Востоке в конце XIX века, Москва, 1971; The Diplomacy of the Bagdad Railway 1890-1914, Göttingen, 1932; Turkey, the Great Powers, and the Bagdad Railway; a Study in Imperialism, 1894-1954, New York, 1966.

Այսպիսով, թեև ռուսական կառավարությունը հիմնվելով տնտեսական ծավալման հեռավորարևելյան փորձի վրա՝ հակված էր իրանական երկաթուղաշինության ոլորտում պետական կապիտալներ ներդնելու գաղափարին: Սակայն չկարողանալով համապատասխան միջոցներ հայթայթել՝ այն նախ կրկին երկարաձգեց Իրանում երկաթուղիների կառուցման արգելքը, ապա նոր թափ հաղորդեց Իրանում խճուղային ճանապարհների կառուցմանը: Մինչև 1902 թ. ռուսական գանձարանը գնեց նաև «Էնզելի-Թեհրան ճանապարհային ընկերության» բաժնետոմսերի 77 %-ը, ինչը թույլ տվեց Ֆինանսների նախարարությանը վերահսկել Էնզելի-Թեհրան ճանապարհային ընկերության գործունեությունը: 1902 թ. Հաշվավարկային բանկը ստացավ նաև ռուս-իրանական սահմանից (Ջուլֆա) մինչև Թավրիզ և Թավրիզից մինչև Ղազվին խճուղային ճանապարհի կառուցման և շահագործման իրավունք և հիմնեց «Թավրիզի ճանապարհային ընկերությունը»<sup>70</sup>: Ճանապարհի առաջին մասի շինարարությունը մեկնարկելու էր 1904 թ. մարտից և ավարտվելու էր 1910 թ.: Երկրորդ հատվածի շինարարությունը սկսվելու էր 1906 թ. մարտից և նախատեսվում էր ավարտին հասցնել 1912 թ.<sup>71</sup>: Այսպիսով, 1905 թ.-ից առաջ Ռուսաստանի ֆինանսների նախարարությունն իր ձեռքում կենտրոնացրեց նաև Իրանի հյուսիսը կենտրոնին կապող հիմնական խճուղային ճանապարհները, որոնք գերատեսչության վերահսկողության տակ մնացին մինչև 1917 թ.: 1895-1910 թթ. Ռուսաստանն Իրանում ճանապարհաշինության ոլորտում ներդրեց մոտավորապես 21 մլն. ռուբլի<sup>72</sup>: 1912-1913 թթ. իրանական կառավարությանը հատկացվող նոր փոխառությունների շրջանակներում Հաշվավարկային բանկը ձեռք բերեց նաև Ջուլֆա-Թավրիզ երկաթուղային ճանապարհի

---

<sup>70</sup> Էնզելի-Թեհրան ճանապարհի (333 մղոն) կառուցման համար Ռուսաստանը ծախսեց 7.564.213 ռուբլի, Ղազվին-Համադան ճանապարհի (217 մղոն)՝ 2.468.867 ռուբլի, իսկ Ջուլֆա-Թավրիզ ճանապարհի (124,4 մղոն) ծախսերը կազմեցին՝ 4.604.729 ռուբլի: Кулагина Л., նշվ. աշխ., էջ 120:

<sup>71</sup> Аняныч Б., Российское самодержавие и вывоз капиталов, 182; Drage G., նշվ. աշխ., էջ 528:

<sup>72</sup> Кулагина Л., նշվ. աշխ., էջ 149:

շինարարության մենաշնորհը, իսկ 1913 թ. գարնանը նավագնացություն կազմակերպելու իրավունք ստացավ նաև Ուրմիա լճում: Թավրիզի երկաթգծի շինարարությունը սկսվեց Առաջին աշխարհամարտի տարիներին, սակայն ավարտին չհասցվեց<sup>73</sup>: Նասր էդ-Դին շահի օրոք ծնունդ առած անդրիրանական երկաթուղի կառուցելու ծրագրերը հնարավոր դարձավ կյանքի կոչել միայն 1926 թ. Ռեզա շահ Փահլավիի կառավարման տարիներին:

Վերլուծելով XIX դարավերջին և XX դարասկզբին Իրանում Ռուսաստանի վարած ֆինանսատնտեսական քաղաքականությունը, կարելի է եզրակացնել, որ այդ քաղաքականության առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ ինչպես առևտրի, այնպես էլ կապիտալների արտահանման բնագավառում հիմնական դերակատարը պետություն էր, ինչը նախ և առաջ պայմանավորված էր Ռուսաստանի տնտեսության հետամնացությամբ և մասնավոր կապիտալի թույլ զարգացվածության գործոններով: Ի տարբերություն տնտեսապես ավելի ուժեղ և քաղաքական առումով կայուն Մեծ Բրիտանիայի, որն առավելապես առաջնորդվում էր շահութաբերության ու ազատ մրցակցության սկզբունքով, որի կապիտալներն արտահանվում էին ֆինանսական հզոր կազմակերպությունների կողմից, ինչն էլ տնտեսական կայուն բազա էր ապահովում տարբեր աշխարհամասերում պետության ծավալապաշտական ծրագրերի համար, Ռուսաստանի քաղաքականությունն Իրանում հետապնդում էր հիմնականում իր մրցակցին հակազդելու նպատակ: Այսուհանդերձ, թեև Իրանի նկատմամբ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի կենսագործած քաղաքականությունները ներթափանցման ռազմավարությունների առումով էականորեն տարբեր էին, Ռուսաստանին հաջողվեց այդ մրցակցության առաջին փուլում քաղաքական և տնտեսական տիրապետություն հաստատել Իրանում և գործնականում վերահսկողության տակ առնել իրանական տնտեսության մի շարք ոլորտներ:

---

<sup>73</sup> Ананьич Б., նշվ. աշխ., էջ 184:

**THE TRADE AND ECONOMIC INTERESTS OF RUSSIAN EMPIRE IN IRAN  
(THE END OF THE 19<sup>th</sup> - THE BEGINNING OF THE 20<sup>th</sup> CENTURIES)**

The aim of this topic is a many-sided investigation of the economic policy of Russia on Persia in the end of the 19<sup>th</sup> - beginning of the 20<sup>th</sup> centuries, as well as a comprehensive analysis of the strategy, main trends, the process of formation and implementation of the chosen political course, as well as the process of positional changes of Russian states and formation of a new coordinated political course for Iranian direction after Crimean war. Particularly, the geo-political role of Iran as a “mediate” (a buffer) state in the outskirts of the British India and Ottoman Empire, where Russia, aiming to gain both geo-political and geo-economical positions, served as a guarantee for territorial integrity and inviolability of the estates of Persian shahs. Here, the process of strengthening of both economic and political positions of Russia in Iran is considered in details, the results of an intensive development of Persian market by Russia are discussed. The aftermath of financial and economic politics of Tsar’s government is also reviewed which aiming to achieve an absolute control over the southern regions of Iran.

## ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

### **ԹՈՒՐՔ-ԵՄԵՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. 1911 Թ. ԴԱՆՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ**

Եմենը Օսմանյան կայսրության այն վիլայեթներից էր, որտեղ կենտրոնական իշխանությունները երբևէ չէին ունեցել լիարժեք և արդյունավետ վերահսկում: Չնայած այն հանգամանքին, որ Եմենը կառավարվում էր թուրքական վալիի՝ նահանգապետի կողմից, իսկ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող շրջաններում տեղակայված էին թուրքական կայազորներ, այնուամենայնիվ, Եմենի մյուս տարածքների փաստացի ղեկավարումը գտնվում էր տեղի ազդեցիկ ցեղախմբերի առաջնորդների ձեռքում:

Վիլայեթը բաժանված էր ազդեցության երկու գոտիների: Այս իրավիճակը չէր կարող բավարարել և ոչ մեկին, հատկապես Բ. Դռանը, որն ամեն կերպ ջանում էր առավելագույն չափով ամրապնդել այնտեղ իր դիրքերը: Այսպիսի իրադրությունն առիթ էր տալիս մշտական հակասությունների և թշնամանքի, որը հաճախ հանգեցնում էր հակաթուրքական զինված ելույթների և ընդվզումների:

1904-1905 թթ. տեղի ունեցած հզոր համաեմենական ապստամբությունը գրեթե վերջ դրեց օսմանյան կառավարմանը, սակայն կենտոնական իշխանություններին հաջողվեց կայսրության տարբեր շրջաններից Եմեն փոխադրած մեծաթիվ զորամիավորումների միջոցով, վերահաստատել իրենց հսկողությունը վիլայեթի կարևոր քաղաքների, այդ թվում նաև Սանաայի, ինչպես նաև ցեղերի հարձակումների մշտական թիրախ հանդիսացող կապի տարբեր միջոցների վրա: Այսուհանդերձ, մի շարք վայրերում, հատկապես Եմենի լեռնային շրջաններում, թուրքերին այդպես էլ չհաջողվեց տարածել իրենց ազդեցությունը: Այստեղ իրենց ավանդական դիրքերը շարունակում էին պահպանել տեղի ցեղային առաջնորդները, շաֆիական և զեյդական համայնքների ղեկավարները, որոնցից ամենահեղինակավորը և ազդեցիկը զեյդական իմամ Յահյա բին Մուհամմեդ Համիդ ալ-Դիին էր:

Թուրք-եմենական հարաբերությունները շարունակում էին լարված մնալ նաև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո: Չնայած Եմենում հեղաշրջումը դրական արձագանք չգտավ, այնուամենայնիվ, այդտեղի ցեղային վերնախավը և, հատկապես, իմամ Յահյան հույս ունեին, որ նոր իշխանությունները կզնան որոշ զիջումների՝ հնարավոր դարձնելու երկխոսությունը կողմերի միջև և վերջ դնելու երկարատև թշնամանքին: Իթափհադականները ևս, իրենց կառավարման առաջին տարիներին, խնդիրը խաղաղ կարգավորելու պատրաստակամություն էին ցուցաբերում: Մասնավորաբար, այս ուղղությամբ կատարվեցին լարվածության թուլացմանը միտված երկկողմանի մի շարք քայլեր, որոնք բարի կամքի արտահայտություններ էին և պետք է հիմք հանդիսանային հետագա բանակցությունների համար:

Այսպես, օրինակ, իմամ Յահյան ազատեց գերի վերցված օսմանցի սպաներին և զինվորներին, իսկ թուրքական իշխանություններն իրենց հերթին Եմենի նահանգապետի պաշտոնում նշանակեցին փոխզիջումների կողմնակից Հասան Թահսին փաշային<sup>1</sup>: Չնայած, որ Թահսին փաշայի և իմամ Յահյայի միջև հաստատված բարեկամական հարաբերությունների շնորհիվ երկու կողմերի միջև ընդհարումները համեմատաբար նվազեցին, սակայն, այդպես էլ վերջնականապես չդադարեցին:

1908 թ. վերջերին օսմանյան կառավարության հրավերով բանակցությունների անցկացման նպատակով Ստամբուլ ժամանեց Եմենի պատվիրակությունը՝ Աբդալլահ բեն Իբրահիմի<sup>2</sup> գլխավորությամբ: Հատկանշական է, որ պատվիրակությանն անձամբ ընդունեց սուլթան Աբդուլ Համիդը II-ը<sup>3</sup>: Եմենցիները հանդիպումներ ունեցան նաև մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ և վերջիններիս ներկայացրին իմամ Յահյա Համիդ ալ-Դինի պահանջները, որոնք, հիմնականում, հանգում էին հետևյալին. զեյդական շրջաններում վարչական և դատական գործառույթները հանձնել իր իրավասությանը, ինչի իրագործումը կապահովեր իր լոյալ

<sup>1</sup> الدكتور توفيق برو. العرب و التورك في عهد الدستورى العثمانى 1908- 1914 دمشق 1991ص.150.

<sup>2</sup> Յահյա Մուհամմեդ Համիդ ալ-Դինի մեծ վեզիրը:

<sup>3</sup> Котлов Л., Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914 гг., Москва, 1986, с. 108.

վերաբերմունքը կայսրության նկատմամբ<sup>4</sup>: Չնայած բանակցությունները որևէ էական արդյունք չտվեցին, այնուամենայնիվ կողմերը շարունակում էին խնդրի խաղաղ կարգավորման ուղիների որոնումը:

Ցանկանալով ցույց տալ իր բարեկամական վերաբերմունքը՝ «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությունը, Հարավային Արաբիայում իրավիճակը ուսումնասիրելու համար, 1909 թ. ստեղծեց խորհրդարանական հանձնաժողով: Վերջինս առաջ քաշեց բարեփոխումների նախագիծ, որը դրվեց Օսմանյան խորհրդարանի քննարկմանը<sup>5</sup>:

Հանձնաժողովն առաջարկում էր Եմենի վիլայեթը բաժանել երկու՝ Լեոնային և Ծովափնյա վիլայեթների: Առաջին վիլայեթում նախատեսվում էր վալիի պաշտոնում հաստատել գեյդական իմամ Յահյա Մուհամմեդ Համիդ ալ-Դինին: Նորաստեղծ վիլայեթները լայն իրավունքներ պետք է ստանային տեղական ինքնակառավարման և բավական մեծ արտոնություններ՝ վարչական, դատական և ֆինանսական հարցերում<sup>6</sup>:

Վալիները նշանակում էին դատավորներին, իրենց ենթակայության տակ գտնվող շրջանների ղեկավարներին և վարչական պաշտոնյաներին: Նրանց իրավասության տակ էին դրվում նաև պետական հարկերի գանձումն ու ծախսումը:

Կենտրոնական իշխանություններին իրավունք էր վերապահվում սուլթանական հրահանգով հաստատել իրենց պաշտոններում վիլայեթի նահանգապետին, դատավորներին, պաշտոնյաներին<sup>7</sup>:

---

<sup>4</sup> Делеша дипломатического тайного советника Зиновьева из Перы. Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 3-րդ, N 294 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):

<sup>5</sup> العرب و التورك : الدكتور توفيق برو. աշխ., էջ 152 :

<sup>6</sup> Делеша дипломатического тайного советника Зиновьева из Перы. Ակադ. Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 3-րդ, N 295 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):

<sup>7</sup> Делеша дипломатического тайного советника Зиновьева из Перы. Ակադ. Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 3-րդ N 296 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):



Օսմանյան կայսրությունն իր դիրքերի պահպանման և ամրապնդման համար երկու վիլայեթներում էլ տեղակայելու էր կայազորներ, որոնց գտնվելու ճշգրիտ վայրը չէր նշվում<sup>8</sup>, ինչը լայն հնարավորություն էր տալիս իշխանություններին իրենց անմիջական հսկողության տակ վերցնել ցանկացած շրջան:

Բարեփոխումների այս նախագիծը ընդհանուր առմամբ համապատասխանում էր իմամ Յահյայի թեկուզ և մասնակի ինքնավարության պահանջներին և հնարավոր էր դարձնում վերջինիս կողմից ծրագրի ընդունումը:

Սակայն իրադարձությունների հետագա ընթացքը անհնարին դարձրեց Եմենում բարեփոխումների իրականացումը: 1909 թ. ներքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցրած իթթիհադական, կենտրոնամետ իշխանության կողմնակից Թալեաթ բեյը պահանջեց խորհրդարանի առաջարկները փոխանցել իր նախարարությանը, և միաժամանակ Եմենը խաղաղեցնելու համար ստացավ հատուկ արտոնություններ:

Հարկ է նշել, որ բարեփոխումների ծրագրի կետերի իրագործումը դիտավորյալ ձգձգվում էր, ինչը չէր կարող բացասական արձագանք չունենալ Եմենում: Արդեն 1909 թ. գինված ընդհարումներ տեղի ունեցան օսմանյան զորքերի և իմամ Յահյայի կողմնակիցների միջև: Համոզվելով, որ թուրքական կողմից զիջումներ ակնկալելն անիմաստ է, իմամը սկսեց կապեր հաստատել Մուհամմադ ալ Իդրիսիի հետ, որը ղեկավարում և առաջնորդում էր հակաթուրքական ապստամբությունը Ասիրում, ինչը առաջ բերեց իշխանությունների անթաքույց վրդովմունքը:

Ինչպես և պետք էր սպասել, Եմենում ստեղծված նոր ռազմաքաղաքական իրադրությունը, իթթիհադականների համար բարեփոխումներից հրաժարվելու լավ հնարավորություն էր: Արդեն 1910 թ. սկզբին Թալեաթ բեյը խորհրդարանում իր ելույթի ժամանակ հայտարարեց, որ Եմենում ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը, որն ուղեկցվում է հակաթուրքական ելույթներով, անհնարին է դարձնում խնդրի խաղաղ կարգավորման հնարավորությունը և

---

<sup>8</sup> Котлов Л.Н., նշվ. աշխ., էջ 111:

«ստիպում է մեզ դիմել ուժի<sup>9</sup>»: Նման դիրքորոշումը հիմնականում պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ իշխանության եկած կենտրոնամետ կառավարման կողմնակիցները իսպառ բացառում էին ցանկացած տիպի ինքնավարություն Օսմանյան կայսրության տարածքում:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ դարձավ, որ օսմանյան իշխանություններն, պատրաստ չէին խնդրի խաղաղ, փոխզիջումային կարգավորմանը: Դրա հաստատումն էր, թերևս, այն, որ Եմենի նահանգապետ Հասան Թահսին փաշան փոխարինվեց վերոհիշյալ քաղաքականության կողմնակից Մեհմեդ Ալի փաշայով: Նորանշանակ վալին օժտված էր բացառիկ արտոնություններով թե՛ վարչական և թե՛ ռազմական խնդիրներում<sup>10</sup>:

Մեհմեդ փաշայի ղեկավարումն ուղեկցվում էր իմամի կողմնակիցների նկատմամբ տարատեսակ ճնշումներով, հետապնդումներով, բանտարկություններով, ուժի գործադրմամբ և արյունահեղությամբ: Եմենի վիլայեթի նոր վալիի վարած քաղաքականությունը, դրդեց իմամ Յահյային կրկին ապստամբել կենտրոնական իշխանությունների դեմ: «Անհավատների» դեմ պայքարում իմամին միացան շուրջ 150 հազար մարտիկներ, որոնց հաջողվեց մի քանի ամիսների ընթացքում օսմանյան բանակին դուրս մղել Ջեբելի կենտրոնական և հյուսիսային շրջանների մի շարք կարևորագույն ռազմավարական կենտրոններից և արդեն 1910 թ. դեկտեմբերին շրջափակել թուրքերի հիմնական հենակետ Սանաա քաղաքը<sup>11</sup>: Ապստամբների դեմ ուղարկված զորքը պարտություն կրեց և ունեցավ մեծաթիվ կորուստներ: Իրավիճակը թուրքերի համար դառնում էր անելանելի:

Ուժային տարբերակով Եմենը իրենց ենթարկել չկարողանալով՝ իթթիհադականները ստիպված եղան կրկին դիմել հակամարտության կարգավորելու դիվանագիտական միջոցին: Ստամբուլի մարտավարության նման փոփոխությունը պայմանավորված էր ոչ միայն զենքի օգնությամբ հարցին լուծում տալու անկարողությամբ,

<sup>9</sup> العرب و التورك. الدكتور توفيق برو. Եջվ. աշխ., էջ 155:

<sup>10</sup> Котлов Л.Н., Եջվ. աշխ., էջ 112:

<sup>11</sup> Амин Саид, Восстание арабов в XX веке, Москва, 1964, с. 205.

այլև մի շարք այլ պատճառներով: Յեմենյան ճգնաժամը հմտորեն օգտագործում էին «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության հակառակորդները և, հատկապես խորհրդարանական ընդդիմությունը, ովքեր առիթը բաց չէին թողնում հիշեցնելու խնդրի առկայության և չլուծված լինելու մասին: Ինթթիհադականների դիրքորոշման վրա անմիջականորեն ազդում էր նաև հարաբերությունների վատթարացումը մի շարք եվրոպական երկրների, հատկապես Իտալիայի հետ, որն ակտիվորեն միջամտում էր Հարավային Արաբիայի գործերին:

Այս գործոնների առկայությունը դրդեց Բ. Դռանը 1911 թ. ստեղծել Եմենի բարեփոխումներով զբաղվող հատուկ հանձնաժողով, որի կազմի մեջ բացի կառավարության և զինվորական հրամանատարության ներկայացուցիչներից, որպես խորհրդատուներ ընդգրկվեցին նաև Եմենից ընտրված խորհրդարանի պատգամավորները: Միաժամանակ Եմենի վիլայեթի նահանգապետ Մեհմեդ Ալի փաշան հեռացվեց տեղի ռազմական ուժերի հրամանատարի պաշտոնից: Նրա տեղը զբաղեցրեց փոխգիջումների և բարեփոխումների կողմնակից գեներալ Ահմեդ Իզզեթ փաշան:

Ժամանելով Եմեն, Ահմեդ Իզզեթը օգնական զորքի գլխավորությամբ<sup>12</sup> կարողացավ ծանր կորուստների գնով կարճ ժամանակում մի շարք հաղթանակներ տանել ապստամբ ցեղերի նկատմամբ և շրջափակումից ազատել Սանաան<sup>13</sup>:

Այնտեղ հաստատվելով և վերականգնելով կենտրոնական իշխանության հեղինակությունը՝ Իզզեթ փաշան սկսեց իմամ Յահյայի հետ զինադադար կնքելու ուղիներ որոնել: Այս գործում երիտթուրքական կառավարությանը աջակցեցին Արաբական թերակղզու առավել հեղինակավոր ցեղային առաջնորդները, որոնք իմամ Յահյային կոչ էին անում բարեկամել հարաբերությունները

---

<sup>12</sup> Օսմանյան օգնական զորքերի քանակի մասին մանրամասն տես. Копия донесения консула в Дамаске Б.Н. Шаховского императорскому послу в Константинополе от 7-го июля 1911 года N 186. Ակադ. Մ. Ներսիսյանի գլխավորությամբ հավաքված արխիվային նյութեր, հ. 6-րդ, N 369 (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ):

<sup>13</sup> Амин Саид, նշվ. աշխ., էջ 205-206:

Ստամբուլի հետ<sup>14</sup>: Եմենի ճգնաժամի խաղաղ կարգավորման օգտին հանդես եկան նաև արաբ ազգայնականները:

Ավելորդ չէ նշել, որ իմամ Յահյան պատրաստակամորեն ընդունեց խաղաղության առաջարկը: Նա հստակ գիտակցում էր, որ երկարատև պատերազմը կարող է վերջնականապես թուլացնել և բարոյազրկել վիլայեթի բնակչությանը: Հակամարտության երկարաձգումը, միաժամանակ, կարող է բարենպաստ վիճակ ստեղծել իմամաթի հավակնորդների համար, ինչը, իհարկե, անընդունելի էր Յահյա Համիդ ալ-Դինի կողմից: Բացի այդ իմամը մտավախություն ուներ, որ իր հսկողության տակ գտնվող ցեղերի ղեկավարները կարող էին ինքնուրույն գնալ թուրքերի հետ համագործակցության, քանի որ Իզզեթ փաշան բավական խոշոր գումարներ և թանկարժեք նվերներ էր բաժանում զեյդական առաջնորդի կողմնակիցներին, շեյխերին և այլոց:

Երիտթուրքական կառավարության և հատկապես Իզզեթ փաշայի ջանքերն ապարդյուն չանցան. 1911 թ. ամռանը երիտթուրքական կառավարությունը հավանություն տվեց դեռևս նախկինում իմամ Յահյայի կողմից առաջ քաշած պահանջների հիմնական մասին և լիազորեց Ահմեդ Իզզեթ փաշային խաղաղություն կնքել: Իմամի հետ բանակցությունների ընթացքում ակտիվ դերակատարություն ունեցան հատկապես Ահմեդ Իզզեթ փաշայի շտաբում գտնվող օսմանյան բանակի արաբ սպաներ մայոր Ազիզ Ալի ալ-Միսրիին<sup>15</sup> և կապիտան Թահա ալ-Հաշիմին<sup>16</sup>, որոնք բազմիցս հանդիպել էին Յահյայի հետ: Ազիզ ալ Միսրիին հաջողվել էր ցույց տալ իմամին կայսրության հետ խաղաղության հաստատման դրական կողմերը: Ալ Միսրիի առաջ քաշած ամենակարևոր փաստարկը, որն էապես ազդեց իմամի որոշման վրա, Եմենի հնարավոր գրավումն էր եվրոպական երկրների կողմից<sup>17</sup> հատկապես այն պարագայում, երբ Իտալիան 1911 թ.

---

<sup>14</sup> Котлов Л., նշվ. աշխ., էջ 115:

<sup>15</sup> Antonius G., The Arab Awakening. The Story of the Arab National Movement, London, 1938, p. 119.

<sup>16</sup> Амин Саид, նշվ. աշխ., էջ 206:

<sup>17</sup> الدكتور توفيق برو. العرب و التورك նշվ. աշխ., էջ 156:

սեպտեմբերին հարձակվել էր Օսմանյան կայսրության հյուսիս աֆրիկյան տարածքներ՝ Տրիպոլիի և Կիրենաիկայի (Լիբիա) վրա<sup>18</sup>:

Հոկտեմբերին զեյդական առաջնորդը հայտնեց Իզզեթ փաշային խաղաղություն հաստատելու իր համաձայնության մասին: Հանդիպման վայր ընտրվեց լեռնային Դաան բնակավայրը, որի անունով էլ հայտնի դարձավ թուրք-եմենական համաձայնագիրը: Իզզեթ փաշայի կողմից գլխավորած թուրքական պատվիրակության կազմի մեջ ընդգրկված էին Իսմեթ փաշան, որը հետագայում նշանակվեց Եմենի նահանգապետ, սիրիացի ազգայնական գործիչ Մահմուդ Նեդիմ բեյը, Ազիզ Ալի ալ Միսրին և Սելիմ ալ Ջազաիրին, ինչպես նաև քաղի Աբդալլահ ալ Ամրին, որն այդ ժամանակ թուրքական վալիի խորհրդականն էր, իսկ հետագայում դարձավ նաև իմամ Յահյայի խորհրդականը<sup>19</sup>:

Այսպիսով, 1911 թ. հոկտեմբերի 9-ին ստորագրվեց Դաանյան խաղաղության համաձայնագիրը (եմենա-թուրքական հաշտության պայմանագիր):

Ստորև բերում ենք համաձայնագրի տեքստը.

«Համաձայնագիրը կնքվեց տիեզերքի տիրոջ՝ Աստծուն ապավինող իմամ Յահյա բին Մուհամմեդ Համիդ ալ-Դինի և մեծ հրամանատար Իզզեթ փաշայի միջև Սանաայում, Ամրանում, Հաջջում, Քաուքաբանում, Հաջուրում, Անիսում, Յարիմում, Ռիդայում, Ջիմմարում, Հարազում և Թաիզում դրությունը բարելավելու համար, որտեղ ապրում են պետության (կայսրության) կառավարման տակ գտնվող զեյդիները:

1. Իմամն ընտրում է զեյդի կառավարիչներ և այդ մասին տեղեկացնում է (Սանաա վիլայեթի) վալիին, իսկ վերջինս իր հերթին նրանց ներկայացնում է Ստամբուլին՝ շեյխ ալ իսլամի հաստատմանը:

---

<sup>18</sup> Chevalier Tullio Irace, With the Italians in Tripoli, The Authentic History of the Turco Italian War, London, 1912, p. 3.

<sup>19</sup> Котлов Л., նշվ. աշխ., էջ 116: Անհրաժեշտ է նշել, որ Իզզեթ փաշայի գլխավորած պատվիրակության կազմում գերակշռում էին արաբները, ինչը, մեր կարծիքով, արված էր իմամ Յահյայի վրա դրական ազդեցություն թողնելու նպատակով:

2. Կազմվում է վճռաբեկ դատարան՝ իմամի ներկայացրած բողոքները քննելու համար:

3. Վճռաբեկ դատարանի նստավայրը լինելու է Սանաան. իմամը ընտրում է դատարանի նախագահին և անդամներին, իսկ կառավարությունը հաստատում է իմամի նշանակումը:

4. Դատավճիռն ուղարկվում է Ստամբուլ՝ Շեյխ ալ-իսլամի հաստատմանը, սուլթանական հրամանի հրապարակման համար: Դատավճիռն իրագործվում է միայն հաստատումից և հրամանի հրապարակումից հետո չորս ամսվա ընթացքում:

5. Եթե պաշտոնյաներից (կառավարիչներ և ծառայողներ) որևէ մեկը չարաշահում է իր պաշտոնը, ապա իմամին իրավունք է վերապահվում այդ մասին հայտնելու վախի՛ն:

6. Կառավարությանն իրավունք է վերապահվում կրոնական դատավորներ նշանակել երկրում բնակվող ոչ եմենցիներից, որոնք հետևում են շաֆիական և հանաֆիական ուղղություններին:

7. Կազմվում է շաֆի-գեյդի դատավորներից բաղկացած խառը դատարաններ՝ զանազան կրոնական ուղղություններին հետևող անձանց բողոքները քննելու համար:

8. Կառավարությունը նշանակում է մուհաֆիզներ (հատուկ տեսուչներ) դատավորների իրավասություններով, որոնք պետք է շրջեն գյուղերում՝ քննելու օրինական բողոքները և վերացնելու վարչական կենտրոններ գնալու ընթացքում առաջացող դժվարությունները:

9. Վակֆերի, կտակների հետ կապված հարցերը քննում է իմամը:

10. Բացառությամբ լեռնային շրջանների՝ կառավարությունը նշանակում է դատավորներ շաֆիական և հանաֆիական կրոնական ուղղությունների հետևողների համար:

11. Համաներում է հայտարարվում քաղաքական հանցագործների և պետական հարկեր չվճարող անձանց նկատմամբ:

12. Արհաբի և Խաուլանի բնակիչներից պետական հարկերի հավաքումը դադարեցվում է տասը տարով՝ հաշվի առնելով նրանց աղքատությունը և երկրի ավերվածությունը, այն պայմանով, որ նրանք պահպանեն բարեկամական կապերը կառավարության հետ:

13. Պետական հարկը հավաքվելու է ըստ շարիաթի:

14. Շարիաթի դատավորներին կամ կառավարությանը պետական հարկահավաքներից բողոքներ հասնելու դեպքում դատավորները կառավարության հետ միասին մասնակցելու են բողոքների քննարկմանը և դատավճռի գործադրմանը:

15. Ձեյդիներին իրավունք է վերապահվում նվերներ մատուցել իմամին ուղղակիորեն կամ գյուղի ավագների միջոցով:

16. Իմամը պարտավոր է իր ստացածի (եկամուտների) մեկ տասներորդը հանձնել կառավարությանը:

17. Վերացվում է պետական հարկերի հավաքումը Ջեբել ալ Շարկից տաս տարի ժամկետով:

18. Իմամը պետք է ազատի Սանայի և նրա հարևան Հարազայի ու Ամրանի բնակիչներից իր մոտ գտնվող պատանդներին:

19. Կառավարության և իմամի պաշտոնյաները կարող են ազատորեն շրջել ողջ Եմենում՝ պահպանելով երկրի հանգստությունը և անվտանգությունը:

20. Երկու կողմերը չպետք է խախտեն նշված սահմանները այս պայմանների հաստատումից և դրանց վերաբերյալ սուլթանական ֆիրմանի հրապարակումից հետո»<sup>20</sup>:

Համաձայնագրի ներածական մասում նշվում էր, որ այն կնքվում է Եմենի տարածքում «դրությունը բարելավելու համար», ինչը նշանակում էր, որ կենտրոնական իշխանություններն ընդունում էին վիլայեթի կառավարման գործերում նրա ղեկավարի արտոնություններն ընդարձակելու կարևորությունը:

Համաձայնագրի քսան կետերում հանգամանորեն ներկայացվում էին վարչական, դատական, հարկային և մյուս բնագավառներում իմամին տրամադրվող բավական լայն իրավունքները: Իմամի կարևորագույն ձեռքբերումներից կարելի է համարել նրա իրավունքների հաստատումը դատական ոլորտում, որտեղ անձամբ ինքն էր նշանակում շարիաթական դատավորներին, ինչպես նաև վճռաբեկ դատարանի նախագահին և անդամներին, որոնք պետք է հաստատվեին Ստամբուլի կողմից:

---

<sup>20</sup> تاريخ اليمن، القاهرة، 1346، ص. 236 – 239.

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում պայմանագրի այն կետերը, որոնք որոշակի փոփոխություններ էին նախատեսում հարկահանության ոլորտում: Մասնավորաբար, զեյդական շրջաններից գանձվող հարկը պետք է իրականացվեր ըստ շարիաթի օրենքների (13-րդ կետ), ինչը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրությունում ընդունված օրենքներն այս ոլորտի վրա չէին ազդում:

Սակայն այդ ամեննին էլ չէր նշանակում, որ իմամի վերահսկողության տակ գտնվող տարարածքներն ու շրջանները ազատվում էին կենտրոնական իշխանությունների վերահսկողությունից: Կառարավությունն իրեն էր վերապահում պետական տուրքերի գանձման իրավունքը: Նույնիսկ իմամը պարտավոր էր իր եկամուտների մեկ տասներորդ մասը վճարել կայսրության գանձարան:

Կարևոր էին նաև պատանդներին ազատ արձակելու մասին, ինչպես նաև համաներմանը վերաբերող կետերը (18-րդ և 11-րդ):

Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ չնայած կենտրոնական իշխանությունները շարունակում էին իրենց ազդեցության տակ պահել դատական և հարկային ոլորտները, այսուհանդերձ, առաջնորդվելու և գործելու էին շարիաթի օրենքներով:

Հարկ է նշել, որ այս խնդրին անդրադարձած պատմաբանների ու հետազոտողների մի մասը Դասնյան համաձայնագիրը համարում է իմամ Յահյայի փայլուն հաղթանակը, ով կարողացավ հասնել ինքնավարության և նույնիսկ անկախության: Գոյություն ունի է նաև հակառակ տեսակետը, առ այն, որ պայմանագիրը ոչինչ չտվեց իմամին: Որպես հաստատում, նշում են այն հանգամանքը, որ պայմանագրով իմամին տրված իրավունքներն ու արտոնություններն ունեն նաև Օսմանյան կայսրության կրոնական այլ ուղղությունների առաջնորդները: Դիրքորոշումների այս տարբերությունը, հիմնականում բացատրվում է Դասնյան համաձայնագրի կետերի ոչ հստակ ձևակերպումներով, որոնք երկու կողմերին էլ լայն հնարավորություններ էին տալիս այն մեկնաբանել և իրականացնել հոգուտ իրենց նպատակների: Հարցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օսմանյան ղեկավարների կողմից պայմանագրի կնքումը առավելապես դիվանագիտական քայլ էր՝ պարտադրված կայսրության



ներքին և արտաքին որոշակի իրադրությամբ, և լիովին չէր բավարարում Եմենի զեյդիների պահանջներն ու սպասելիքները:

Այդ պահանջների սահմանափակությունն ու պայմանագրի կետերի տարբեր մեկնաբանությունների հնարավորությունը մեծ չափով պայմանավորված էր նաև Եմենի կրոնա-ցեղային առաջնորդների՝ զիջումների գնալու ճանապարհով պատեհ հնարավորությունն օգտագործելու, ինչպես նաև սեփական դիրքերն ամեն կերպ պահպանելու շահագրգռությամբ:

Այս հանգամանքներն, այնուամենայնիվ, չեն նվազեցնում երկու կողմերի համար Դաանյան համաձայնագրի կարևորությունը: Եմենցիներն իրենց համառ և տևական պայքարի արդյունքում ձեռք բերեցին սահմանափակ ինքնավարություն, իսկ օսմանյան իշխանությունները կարողացան, թեև ոչ նպաստավոր պայմաններով, ժամանակավորապես խուսափել հետագա բարդություններից և պահպանել իրենց ներկայությունը ոչ միայն Եմենում, այլև հարակից տարածքներում:

ARAM GASPARYAN

#### **TURKISH-YEMENI RELATIONS IN THE BEGINNING OF THE 20<sup>th</sup> CENTURY: TREATY OF DAAN IN 1911**

Turkish-yemeni relations between were developing in an atmosphere of constant conflict and hostility which often led to anti-turkish armed actions and mutiny. In the beginning of the 20-th century several armed rising took place in Yemen which was led by Zaydi imam Yahya bin Muhammad Hamid Al-Din. The loss of the Turkish troops made it impossible to regain central government control over Yemen by force methods and because of that in 1911 was signed the Treaty of Daan with imam Yahya. According to the agreement Zeydi-controlled areas of Yemen got certain autonomy under the leadership of imam Yahya while the central government of Ottoman Empire had an opportunity to regain partly their positions in Zeydi-controlled areas of Yemen.

## ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

### **ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 1916-1923 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Քուրդ ժողովրդին, իր անցած պատմական զարգացման ընթացքում ոչ մի անգամ չի հաջողվել ստեղծել սեփական պետականություն: Դրան խանգարել է առավելապես քրդերի տարաբաժանումն ու ցրվածությունը տարբեր պետությունների միջև, որն անկասկած արգելք է հանդիսացել այդ ժողովրդի քաղաքական ու ազգային համախմբման (կոնսոլիդացման) համար: Նորագույն ժամանակներում այսպես կոչված «էթնիկական Քրդստանը» իր տարածական չափերով ընդգրկել է Իրանի, Իրաքի, Թուրքիայի և Սիրիայի տարածքների մի զգալի մասը: Պետականություն չունենալու հարցում ոչ պակաս կարևոր դեր է խաղացել նաև այն, որ ընդհուպ մինչև XX դ. քուրդ ժողովրդի մոտ մթազնված է եղել ազգային միասնության ու ընդհանրության գիտակցությունը: Նրանց մոտ ցեղային կազմակերպության առկայության պատճառով հավաքական անկախության գաղափարը ընդհանուր մտահոգության առարկա չի հանդիսացել և անկախության զգացումը կենտրոնացած է մնացել տվյալ ցեղի անկախության գաղափարի մեջ: Այլ կերպ ասած, վերջնական իդեալ է եղել ցեղապետական անկախությունը: Գլխավորապես հենց դրանում է թաքնված քուրդ ժողովրդի քաղաքական զարգացման առեղծվածը:

Քրդական ազգայնականությունը, որպես գաղափարական-քաղաքական հոսանք, նույնպես ձևավորվել է բավականին ուշ՝ XX դ. սկզբին, որպես վերջնական նպատակ առաջ քաշելով «էթնիկական Քրդստանի» տարածքում քրդական ազգային պետության ստեղծման պահանջը:

Կարևոր է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ դարեր շարունակ թուրքական և իրանական տիրապետող շրջանները քուրդ ժողովրդի մեջ մշտապես աշխատել են մեռցնել ազգային ինքնագիտակցության զգացումը և, իսլամն օգտագործելով որպես

լծակ, աշխատել են քրդերին դարձնել սեփական ազգային դիմագծից զուրկ մահմեդական մի համայնք:

Կասկածից վեր է, որ քրդական պետության բացակայությունը անխուսափելիորեն դանդաղեցրել է քրդերի էթնոազգային զարգացման գործընթացները, որի հետևանքով իր սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման մակարդակով քուրդ ժողովուրդը նշանակալից չափով հետ է մնացել Արևմտյան Ասիայի պետական կարգավիճակ ունեցող ազգերից ու ժողովուրդներից:

Առաջին անգամ «քրդական հարցը» քաղաքական իրողությունների մակերես բարձրացավ և սկսեց արձարծվել Անտանտի տերությունների աշխարհաքաղաքական ծրագրերում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Եռյակ համաձայնության պետությունները սկսել էին բանաձևել իրենց հետպատերազմյան քաղաքականության հարցերը<sup>1</sup>:

Դեռևս 1915 թ. նոյեմբերին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան Լոնդոնում բանակցություններ սկսեցին Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ, որի վերջնական արդյունքը հանդիսացավ 1916 թ. ստորագրված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը: Այն նախատեսում էր նաև Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի քրդաբնակ շրջանների բաժանումը դաշնակից պետությունների միջև<sup>2</sup>:

Երբ համաձայնագիրը ներկայացվեց Պետրոգրադին, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սերգեյ Սազոնովը 1916 թ. ապրիլի 13(26)-ի հուշագրով պատասխանեց, որ իր կառավարությունը պատրաստ է միանալ Սայքս-Պիկոյի համաձայնագրին միայն այն դեպքում, եթե Ռուսաստանին զիջվի Թուրքահայաստանի մի շարք տարածքներ (հուշագրում մեկ առ մեկ թվարկվում էին այդ

---

<sup>1</sup> Տե՛ս Howard H.N., The Partition of Turkey. A Diplomatic History 1913-1923, Oklahoma, 1931.

<sup>2</sup> Տե՛ս Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего министерства иностранных дел. Под редакцией Е. Адамова, Москва, 1924, с. 154-157; Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. II, от империалистической войны до снятия блокады с Советской России, Москва, 1926, 88, с. 40-41.

տարածքները - Վ. Բ.), ինչպես նաև Վանից, Բիթլիսից դեպի հարավ՝ Մուշի, Սղերդի, Ջեզիրե-իրեն Օմարի, Ամադիայի վրա իշխող լեռնագագաթների գծի և Մերգևերի միջև ընկած Քրդստանի մարզը<sup>3</sup>: Լոնդոնը և Փարիզը տվեցին իրենց համաձայնությունը և Ս. Սազոնովին ներկայացրին մի նոր քարտեզ Ռուսաստանի համար ցանկալի փոփոխություններով:

Սայքս-Պիկոյի համաձայնագիրը նախատեսում էր միայն պատերազմում պարտություն կրած Օսմանյան կայսրության տարածքների բաժանումը դաշնակիցների միջև: Սակայն օրակարգի հրատապ հարց էր մնում այն, թե պատերազմի ավարտից հետո ինչպիսի լուծում պետք է տրվի հայկական ու քրդական հարցերին: Այդ խնդրի կապակցությամբ Եռյակ համաձայնության պետությունների դիվանագիտությունը դեռևս հստակ ծրագիր չուներ: Այդ դիվանագիտությունը խարխափումների մեջ էր հատկապես այն հարցում, թե հետպատերազմյան խաղաղության վեհաժողովում ինչպիսի լուծում պետք է տրվեր անկախ Հայաստանի և անկախ կամ ինքնավար Քրդստանի հարցերին, ի՞նչ տարածքների վրա պետք է ստեղծվեին այդ պետությունները և այլն: Բնավ պատահական չէ, որ բրիտանական դիվանագետները, օրինակ, հարցի լուծումը հաճախ փնտրում էին վարչապետ Դիզրայելիի (լորդ Բիքոնսֆիլդ) ժամանակների մոտեցումներով, Արևմտյան Հայաստանը համարելով Քրդստան, կամ պարզապես քրդական հարցի լուծումը տեղափոխելով Հայաստանի տարածքը:

Այդպիսի մի առաջարկով, օրինակ, 1917 թ. դեկտեմբերի 18-ին հանդես եկավ անգլիացի դիվանագետ, բրիտանական վարչապետի քարտուղար Ֆիլիպ Հենրի Քերրը (հետագայում մարկիզ Լոտիան): Իրավացիորեն նշելով, որ թուրքական կառավարումը Հայաստանում «վերին աստիճանի անհաջող է», որ «թուրքերի կատարած սպանություններն ու դաժանությունները առաջ են բերում ամոթի խորը զգացում» և այլն, բրիտանացի դիվանագետը, սակայն հանգում էր արտառոց եզրակացության, առաջարկելով քրդերին առանձնացնել հայկական վիլայեթներից մի առանձին վիլայեթի մեջ և նրանում

---

<sup>3</sup> Տե՛ս Hurewitz J.C., *Diplomacy in the Near and Middle East: A documentary Record*, v. II, 1914-1956, Princeton, 1956, pp. 20-22.

ստեղծել քրդական անկախ կամ ինքնավար պետություն<sup>4</sup>: Որքան էլ որ անհավատալի ու հակաբնական էր այդ առաջարկությունը, այն աստիճանաբար մտցվեց շրջանառության մեջ և հետագայում նույնիսկ ընկավ Սևրի դաշնագրի հիմքում:

Ինչն էր դրդում Ֆորին օֆիսին Քրդստան ստեղծել Հայաստանի տարածքում: Պատճառները բազմաթիվ էին: Բրիտանական դիվանագետների մտայնության համաձայն, եթե Անտանտի պետությունների ջանքերով արևմտահայությանը տրվի անկախություն, ապա քրդերը, որոնք Հայոց ցեղասպանության հետևանքով հիշյալ երկրամասում ձեռք էին բերել մեծամասնություն, երբեք չէին ենթարկվի փոքրամասնություն կազմող հայերին: Նրանց կարծիքով հայերի և քրդերի համատեղ բնակությունը նույն տարածքում հանդիսանալու էր մշտական կոնֆլիկտների պատճառ: Մարկ Սայքսը նույնիսկ գտնում էր, որ եթե Արևմտյան Հայաստանում ստեղծվի հայկական պետություն, դա կլինի ոչ կենսունակ մի ծրագիր, քանի որ նրա կարծիքով «հայերն ի վիճակի չեն լինի մրցակցելու քրդերի հետ»<sup>5</sup>:

Առհասարակ բրիտանական քաղաքական շրջաններում տարածված էր այն տեսակետը, որ հայկական և քրդական հարցերը սերտորեն փոխկապակցված են: Հնդկաստանի գործերի մինիստրի օգնական Արթուր Հիրցելը իր հուշագրերից մեկում հենց այդպես էլ գրում էր. «Հայկական հարցը դա նաև քրդական հարց է»: Նրա կարծիքով այդ հարցը «աղերսում է ձևավորել կոնկրետ քաղաքականություն»: Նա գտնում էր, որ «քանի որ միանգամայն պարզ է, որ քրդերը չեն ենթարկվի հայկական կառավարմանը, հարկավոր է ստեղծել առանձին Քրդստան, որում հայկական տարրին կարելի կլինի հատկացնել ոչ համամասնական ներկայացուցչություն, հաշվի առնելով ջարդերի հետևանքով նրանց կորուստները և առաջադիմությունը կրթական բնագավառում: Իհարկե, դա հայերի մոտ առաջ կբերի ըմբոստություն... Սակայն նրանց անհրաժեշտ կլինի քրդերի հետ մասնավոր մրցակցության մեջ ցուցադրել, որ իրենք

---

<sup>4</sup> St' u Ллойд Дордж Д., Военные мемуары, т. V, Москва, 1938, с. 52.

<sup>5</sup> St' u Հայաստանը միջազգային դիվանագիտության և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 385-386:

պատկանում են բարձր ռասայի: Եթե դա իրենք կարողանան անել, ապա ոչ ոք չի կարող արգելք հանդիսանալ նրանց պահանջին փոքր Հայաստանով միանալու միացյալ Հայկական պետությանը: Եթե դա նրանց չհաջողվի, ապա նրանք չեն կարողանա դիմակայել քրդական պետություն ստեղծելու քրդերի պահանջներին<sup>6</sup>:

Բրիտանական դիվանագիտությունը հակված էր, որ քրդական պետությունը ստեղծվի Արևմտյան Հայաստանի տարածքում նաև հետևյալ պատճառով: Սայքս-Պիկոյի համաձայնագրով Միջագետքը (այդ թվում նաև նրա հյուսիսային մասը կազմող այսպես կոչված Իրաքյան Քրդստանը) անցնում էր Մեծ Բրիտանիային, հետևաբար Լոնդոնը երբեք չէր համաձայնվի, որ ենթադրյալ քրդական պետությունը կյանքի կոչվի այդ տարածքում: Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջը խոստովանում էր, որ Միջագետքից թուրքերին մեկընդմիշտ հեռացնելու համար ինքը պատրաստ էր շատ հեշտությամբ լքելու Հայաստանը, որն ինքը հրապարակապես անվանել էր «անմեղների արյունով թրջված երկիր»<sup>7</sup>: Առհասարակ փաստերը վկայում են, որ Արևմտյան Հայաստանը երբեք չէր մտնում բրիտանական տարածքային շահագրգռության շրջանակների մեջ: Անգլիայի տարածքային բաղձանքները գտնվում էին Հայաստանից հարավ, Միջագետքում, Պարսից ծոցի ավազանում և այլն: «Բրիտանիան, - գրում է սփյուռքահայ հետազոտող Ազապի Նասիբյանը, - տրամադիր չեղավ դրամ վատնելու կամ մարդ զոհելու հեռավոր և անմատչելի երկրի մը վրա, որ զինք ոչ ռազմական և ոչ ալ տնտեսական տեսակետով կը շահագրգռեր: Ամայացած երկիր մըն էր ան, որ միայն թշվառությամբ էր հարուստ: Ուրեմն պատերազմի վերջավորության Հայկական հարցը թվեցավ ըլլալ ավելորդ պարտավորություն մը Բրիտանիո պետական մարդոց համար»:

Սա, անշուշտ, չէր նշանակում, որ բրիտանական դիվանագիտությունը անտեսում կամ հրաժարվում էր «հայկական

---

<sup>6</sup> Архив внешней политики Российской империи, ф. НАИ, серия А, д. 154, л. 66 (այսուհետև АВПИ). Տե՛ս նաև Ованесян Р., Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ереван, 2007, с. 351-352; Busch Briton Cooper, Mudros to Lausanne. Britain's Frontier in West Asia, 1918-1923, Albany, New York, 1976, pp. 187-189.

<sup>7</sup> Նասիպեան Ա., Բրիտանիան և Հայկական հարցը 1913-1923 թթ., Պելրուֆ, 1994, էջ 123, 127:

խաղաքարտը» օգտագործելու հնարավորությունից: Այդ դիվանագիտության առաջին դեմքերը՝ Լլոյդ Ջորջը, արտաքին գործերի պետական քարտուղար Արթուր Ջեյմս Բալֆուրը, նրա տեղակալ Ռոբերտ Սեսիլը, լորդ Քերզընը և ուրիշներ մշտապես հավաստիացնում էին հայերին, որ Հայաստանի ազատագրումը դաշնակիցների պատերազմական նպատակներից մեկն է: Դիմելով հայերին, Լլոյդ Ջորջն, օրինակ, վերամբարձ ոճով բացականչում էր. «Նրանք, ովքեր պատասխանատու են այս երկրի կառավարման գործին՝ անտարբեր չեն ձեր մարտիրոսացած ժողովրդի նկատմամբ և այդ առնչությամբ կատարելապես գիտակցում են իրենց պատասխանատվությունը»<sup>8</sup>:

Նույն քաղաքական նկատառումներով Լոնդոնը հաճախ արձարծում էր նաև քրդական հարցը, թեև այդ առթիվ չունեի որևէ կոնկրետ ծրագիր: Ավելին, ի տարբերություն Հայկական հարցի, Ֆորին օֆիսի պաշտոնական տեսակետն այն էր, որ քրդական հարցը դա մի անլուծելի խնդիր է: Բաժանելով այդ տեսակետը, բրիտանական դիվանագիտության աչքի ընկնող դեմքերից մեկը՝ Առնոլդ Վիլսոնը, օրինակ, գտնում էր, որ քրդերի քաղաքական համախմբման և պետականություն կերտելու հարցը իրական հիմքեր չունի<sup>9</sup>: Թեև անգլիացիներն աշխատում էին խուսափել քրդական հարցի լուծմանը ուղղակի մասնակցություն ցուցաբերելուց, սակայն Ֆորին օֆիսը պնդում էր, որ չպետք է թուրքական տիրապետությունը վերականգնվի մի կողմից Հայաստանի, մյուս կողմից Միջագետքի ու Պարսկաստանի միջև ընկած ռազմավարական միջանցքում:

Անգլիացիների ծրագրած այդ նույն գործելակերպն էր որդեգրել նաև ֆրանսիական դիվանագիտությունը: 1919 թ. դեկտեմբերին ֆրանսիացիները որոշում ընդունեցին այն մասին, որ քրդերի նկատմամբ եվրոպական մանդատը և՛ հնարավոր չէ և՛ ցանկալի չէ: Սակայն բոլոր դեպքերում նրանց կարծիքով տարածաշրջանը պետք է պաշտպանվի թուրքական ագրեսիայից: Հարկ է նշել, որ աշխարհամարտի ավարտից հետո քրդական շարժման ծանրության

---

<sup>8</sup> Lloyd George D., The Truth about the Peace Treaties, London, 1938, p. 1118.

<sup>9</sup> St' u Wilson Arnold T., Mesopotamia 1917-1920. A Clash of Loyalties. A personal and Historical Record, London, 1931, pp. 84-86.

կենտրոնը գտնվում էր ոչ թե Իրաքյան կամ Իրանական Քրդստանում, այլ Արևմտյան Հայաստանում, որը դարձավ արթնացող քրդական ազգայնականության օրրանը: Քուրդ ազգայնականները, որոնք աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրության հետ էին կապել իրենց ճակատագիրը, և նրանից էին ակնկալում իրենց անկախությունը կամ ինքնավարությունը, ջախջախված էր: Ուստի պատերազմի ավարտից հետո պահի թելադրանքով նրանք վերակողմնորոշվեցին դեպի Եռյակ համաձայնության պետությունները, նրանցից սպասելով աջակցություն անկախ քրդական պետություն ստեղծելու հարցում<sup>10</sup>: Ազգայնականների մեկ այլ թևը, որն իրեն անվանում էր «երիտասարդ քրդեր», մեծ հույսեր էր կապում Վուդրո Վիլսոնի «14 կետերի» հետ: Բոլոր դեպքերում քրդերի ազգային շարժումը ղեկավարելու գործը իրենց ձեռքերում կենտրոնացրած քուրդ գործիչները համոզվել էին, որ իրենց փայփայած «Միացյալ անկախ Քրդստանի» գաղափարը, որը ենթադրում էր Իրանական, Իրաքյան և Թուրքական Քրդստանի միավորում մեկ միասնական քրդական պետական կազմավորման մեջ, տվյալ պահին անհնարին է, քանի որ այն ուղղակի բախվում էր Մերձավոր ու Միջին Արևելքում Եռյակ համաձայնության պետությունների աշխարհաքաղաքական կենսական շահերի հետ<sup>11</sup>: Ուստի նրանց թվում էր, թե «թույլ օղակը», որից կարելի էր կառչել, դա գերազանցապես Արևմտյան Հայաստանի տարածքում, քրդական պետության ստեղծման հնարավորությունն է, քանի որ այդ տարածքը չէր մտնում բրիտանական շահերի գոտու մեջ:

Քուրդ ազգայնականների կողմից Արևմտյան Հայաստանի նկատմամբ մտասևեռումը պայմանավորված էր նաև նրանով, որ իբր Թուրքիայում բնակվող քրդերի քաղաքական հասունացման մակարդակը ավելի բարձր էր, քան Իրանական կամ Իրաքյան Քրդստանում, հետևաբար պետականություն ստեղծելու օբյեկտիվ նախապայմանները ևս առկա են հենց այդ տարածքում: Ուստի քրդական առաջնորդների հեռահար ծրագրերում գլխավորապես

---

<sup>10</sup> St' u Zinnar Silopi, Doza Kurdistan, (w. u.), 1969, էջ 60:

<sup>11</sup> St' u Nader Entessar, Kurdish Ethnonationalism, London, 1992.



Արևմտյան Հայաստանին էր նախանշված դառնալու «քրդական ազգային զգացման կենտրոն»:

Տեղյակ լինելով քրդական վերնախավի նման ձգտումների հետ, բրիտանական դիվանագիտությունը առաջ քաշեց մի շարք նախագծեր, որոնք ոչնչով պարտավորեցնող չէին Լոնդոնի համար, սակայն կոչված էին քրդերին պահել իրենց քաղաքական ազդեցության շրջանակների մեջ: Այսպես, 1918 թ. դեկտեմբերին բրիտանական ռազմական մինիստրության ներկայացուցիչ Ֆ. Մաունսելի առաջարկած նախագծով հայկական պետությունը զբաղեցնելու էր Վանա լճից մինչև Սև ծով ընկած տարածքը, իսկ քրդական պետությունը նշված լճից հարավ ընկած շրջանները<sup>12</sup>: Մեկ այլ նախագծով առաջարկվում էր Քրդստան ստեղծել Խարբերդի, Բիթլիսի և Վանի վիլայեթներում<sup>13</sup>:

1919 թ. հունիսին Բաղդադում բրիտանական քաղաքական ծառայությունը Առնոլդ Վիլսոնի գլխավորությամբ առաջ քաշեց հայկական և քրդական պետությունների ստեղծման ևս մեկ նախագիծ, համաձայն որի Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթները պետք է կազմեին հայկական պետություն ամերիկյան հովանու ներքո, իսկ Դիարբեքքիր, Խարբերդ, Վան և Բիթլիս վիլայեթները՝ քրդական պետություն՝ անգլիական հովանու ներքո<sup>14</sup>: Այս առաջարկը այն աստիճանի արտառոց էր, որ նույնիսկ կտրուկ առարկության հանդիպեց բրիտանական քաղաքական շրջանների կողմից: Ծովակալ Ռիչարդ Վեբբը, օրինակ, լորդ Քերզընին ուղղված իր 1919 թ. օգոստոսի 19-ի թվակիր նամակում գրում էր, որ ինքը շատ լուրջ առարկություններ ունի գնդապետ Վիլսոնի առաջարկության կապակցությամբ: Նա պարզաբանում էր, որ գործնականում Տրապիզոնը հայ բնակչություն չունի, մինչդեռ Վանը և Մուշասուղը (այդպես էր ծովակալն անվանում Մուշը - Վ. Բ.), որոնք միշտ էլ եղել են միակ գերազանցապես հայաբնակ շրջանները Թուրքահայաստանում, պետք է թողնվեն քրդական պետությանը: «Դա կդիտվեր, - նշում է

---

<sup>12</sup> St'eu Nasibian A., Britain and the Armenian Question, 1915-1923, London, 1984, pp. 139-142.

<sup>13</sup> St'eu Précis of Affairs in Southern Kurdistan during the Great War, Baghdad, 1919, p. 7.

<sup>14</sup> АВПРИ, ф. НАИ, серия А, д. 153, л. 20.

ծովակալը, - դավաճանություն հայկական շահերին և ուղղակի կհակասեր այն հավաստիացումներին, որոնք տրվել են հայերին դաշնակից տերությունների կողմից»: Միաժամանակ ծովակալը գտնում էր, որ «բոլորովին անժամանակ և խիստ վտանգավոր կլինի փորձել ներկայումս սահմանագծել Հայաստանի և Քուրդիստանի սահմանները»<sup>15</sup>:

Գնդապետ Վիլսոնի նախագծի քննադատությամբ հանդես եկավ նաև բրիտանական մեկ այլ դիվանագետ՝ Թ. Հոլլերը, որը 1919 թ. օգոստոսի 27-ին Կ. Պոլսից գրում էր Ֆիլիպ Հենրի Քերրին, որ ինքը խիստ անհանգստացած է, քանի որ «փոքրիշատե լավատեղյակ է քրդական գործերին»: «Ես կարծում եմ, - գրում էր նա, - որ մենք կարիք չունենք մի շարան քորոցների՝ քրդերին իրար և ոչ էլ հայերին հանգուցելու համար: Չեմ կարծում, որ այս դժվարին ժամանակներում կարողանանք մեզ թույլ տալ չափից դուրս հեռուն գնալու մարդասիրության առումով: Մենք պետք է հիմնվենք առաջին հերթին բրիտանական շահերից բխող նկատառումների վրա»: Հոլլերը գտնում էր, որ Մեծ Բրիտանիան պետք է քրդական հարցին մոտենա գրեթե բացառապես Միջագետքի տեսանկյունից: Որ Հայաստանի և Քրդստանի սահմանները պետք է թողնել անորոշ վիճակում և ամենից առաջ զբաղվել «Մեր Միջագետքի սահմանը ճշտելով»<sup>16</sup>:

Ավելի պարզ ու հստակ դժվար թե հնարավոր լիներ ասել Մեծ Բրիտանիայի իրական քաղաքական շահերի մասին: Ֆորին օֆիսի դիվանագետները իրենց կառավարությանը խորհուրդ էին տալիս խուսափել խաղալ կրակի հետ մի տարածքում, որտեղ Անգլիան իրական ու հեռանկարային շահեր չուներ: Որ Լոնդոնի մտասևեռումը պետք է լինի Միջագետքը, որը Սայքս-Պիկոյի համաձայնագրով «հասնում էր» իրեն: Իսկ Կ. Պոլսում բրիտանական գերագույն կոմիսարը ցանկալի էր համարում քրդական և հայկական գոտիների որոշումը թողնել «ճիշտ նույնքան անորոշ, որքան անորոշ է մեր ներկա ծանոթությունը նրանց (հայերի ու քրդերի - Վ. Բ.) այժմյան

---

<sup>15</sup> Documents on British Foreign Policy 1919-1939. Ed. by E. L. Woodward, Rohan Butler, W. N., 1<sup>st</sup> Series, London, 1947-1986, vol. IV, pp. 735-736 (այսուհետև DBFP).

<sup>16</sup> DBFP, vol. IV, p. 742.

պահանջների իրական արժեքին, որոնք երկուսն էլ, անկասկած, հավասարապես անհեթեթ են»<sup>17</sup>:

Մեծ Բրիտանիայի հնդկական մինիստրության աստիճանավորներից մեկի՝ Ֆ. Շուքրուզի 1919 թ. օգոստոսի 1-ի նամակում, հասցեագրված արտաքին գործերի մինիստրության պաշտոնակատար լորդ Հարդինգին, այն կարծիքն էր հայտնվում, որ հայկական և քրդական հարցերի «վերջնական կարգադրությունը անհրաժեշտաբար պետք է անորոշ թողնվի մինչև Թուրքիայի հետ հաշտություն կնքելը»<sup>18</sup>: Իսկ Հնդկաստանի գործերի մինիստր Էդվին Մոնթթրյուն գտնում էր, որ քրդական պրոբլեմի լուծումը կախված է տարատեսակ գործոններից, որոնցից են հայկական պետության տարածքի վերաբերյալ հարցի անորոշությունը, քրդական պետության վերաբերյալ մանդատի հարցը և այլն: «Դժվար է հավատալ, - գրում էր նա, թե մի որևէ արևմտյան տերություն կընդունի Քուրդիստանի մանդատը կամ իր վրա կվերցնի նրա գործերը կառավարելու անշնորհակալ գործը»: Բրիտանական ռազմական ու քաղաքական պարտականություններն այդպիսի հեռավոր շրջաններում տարածելը Մոնթթրյուն համարում էր խիստ անպատակահարմար<sup>19</sup>:

Առարկելով այդ տեսակետին, անգլիացի դիվանագետ Էյրե Քրոուվը 1919 թ. նոյեմբերի 17-ին Ջորջ Ջարդին Քիդստոնին գրած նամակում ասում էր, որ ինքը հավատում է, որ «հնարավոր կլինի որևէ մեթոդ գտնել դնելու այս ամբողջ երկրամասը Ազգերի Լիգայի կամ մեկ այլ ձևի հսկողության տակ, բաժանելով այն հայկական և քրդական գոտիների»: Քրոուվի կարծիքով հնարավոր և ցանկալի էր թվում ունենալ միաժամանակ և՛ հայկական և՛ քրդական քաղաքականության հստակ ծրագիր<sup>20</sup>:

Քրոուվը նաև այն կարծիքին էր, որ սխալ կլիներ հայկական պետության տարածքների հարցը որոշելիս առաջնորդվել Արևմտյան Հայաստանում ներկա պահին եղած հայերի թվաքանակով: Նրա կարծիքով «դա կնշանակեր վավերացնել և քաջալերել հպատակ

---

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 743:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 813:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 813-815:

<sup>20</sup> DBFP, vol. IV, pp. 892-895.

ազգությունների հարցի նկատմամբ թուրքական մոտեցման մեթոդը»<sup>21</sup>: Մինչդեռ Մերձավոր Արևելքը իր գործունեության ասպարեզ դարձրած անգլիական հետախույզ մայրո Նոյելը գտնում էր, որ եթե Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծվի միայն հայկական պետություն, ապա կհաստատվեր փոքրամասնություն՝ այսինքն հայերի տիրապետություն մեծամասնության՝ քրդերի նկատմամբ, որն ինքնին կհանգեցներ վտանգավոր առճակատումների: Նրա կարծիքով գերադասելի էր, որ «ոչ թե մեկ հայը իշխի տասը քրդերի նկատմամբ, այլ մեկ քուրդը տասը հայերի նկատմամբ»: Անգլիական հետախույզը դրա մեջ տեսնում էր նաև քաղաքական իմաստ այն առումով, որ ապագայում «վերածնվող» Ռուսաստանը կգրկվեր «հայերին հովանավորելու» իր ավանդական քաղաքականությունն իրագործելու հնարավորությունից»<sup>22</sup>:

Հայկական հարցի հետ միաժամանակ քրդական պրոբլեմը ևս գտնվում էր ԱՄՆ-ի կառավարության տեսադաշտում: Այսպես, դեռևս 1918 թ. մարտի 20-ին ԱՄՆ-ի Պետդեպարտամենտը պատրաստել էր մի փաստաթուղթ, որտեղ պարունակվում էին հետևյալ հարցադրումները. ո՞ր տարածքների վրա պետք է ստեղծվեր Հայաստանը, որո՞նք էին այն տարածքները, որոնց նկատմամբ հավակնություն էր ներկայացվում քրդերի կողմից, ինչպիսի խնդիրներ գոյություն ունեին կապված քրդերի և նեստորական ասորիների հետ և այլն<sup>23</sup>:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է, որ Եռյակ համաձայնության դաշինքի անդամ պետությունները, այդ թվում նաև նրանց դաշնակիցները, հստակ ծրագրեր չունեին ոչ միայն քրդական, այլև հայկական հարցի կապակցությամբ: Նրանք ենթադրում էին, որ առաջիկայում գումարվելիք խաղաղության վեհաժողովը կառաջարկի այդ հարցերի կոնկրետ լուծումներ: Իրենց հերթին հայերը և քրդերը մեծ հույսեր էին կապում այդ վեհաժողովի հետ:

---

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 912-914:

<sup>22</sup> St' u Noel E.W.C., major, Note on the Kurdish Situation, July 1919, Baghdad, 1919, p. 11.

<sup>23</sup> St' u Papers relating to the Foreign Relations of the United States, 1919, The Paris Peace Conference, Washington, 1942 vol. I, p. 69.

1919 թ. հունվարի 18-ին Փարիզում իր աշխատանքները սկսեց խաղաղության միջազգային վեհաժողովը: Վեհաժողովի առաջին ամիսներին քրդական հարցի նկատմամբ ուշադրությունը չնչին էր: Կոստանդնուպոլսում, Կահիրեյում և եվրոպական մի շարք մայրաքաղաքներում բնակվող քրդական վերնախավի այն պահանջը, որ իրենց ժողովուրդը իրավունք ունի առանձին գոյության այն հսկայական տարածքների վրա, որոնք ընդգրկում են Իրանի, Միջագետքի, Սիրիայի և Անատոլիայի մեծ մասը, ընդհուպ մինչև Կիլիկիան և Էրզրումը, դաշնակիցների կողմից լուրջ չէին ընդունվում<sup>24</sup>: Սակայն քրդական աջքի ընկնող ավատատերերը, օրինակ, Բաղդիսանների հայտնի ընտանիքը, անվիաստ կերպով աշխատում էին, որ դաշնակիցները քրդերին դիտեն ոչ թե որպես ջախջախված թշնամական ազգի բաղկացուցիչ մաս, այլ թուրքերի լծի տակ գտնվող մի ժողովուրդ, որը ձգտում է ազատվել նրանցից: Այդ առաջնորդներն աշխատում էին վերին աստիճանի զգույշ, իրենց նվիրվածությունը դրսևորելով սուլթան-խալիֆի նկատմամբ նույնիսկ այն ժամանակ, երբ գաղտնի կերպով դիմումներ էին կատարում Դաշնակիցների ներկայացուցիչներին քրդական ինքնավարության կամ անկախության վերաբերյալ: Միաժամանակ նրանք թուրք պաշտոնատար անձանց հավաստիացնում էին, որ ինքնավար Քրդստանի ստեղծումը լավագույն միջոց է նվազեցնելու օսմանյան տարածքային կորուստները հօգուտ հայերի<sup>25</sup>:

Քրդերը հատուկ պատվիրակություն չէին ուղարկել Փարիզի վեհաժողովին մասնակցելու համար: Այդ դերը իր վրա ստանձնեց թուրքական բանակի գեներալ, ծագումով քուրդ Շերիֆ-Փաշան, որը տարված էր իր ժողովրդի անկախության գաղափարներով: Նա հայտարարեց, որ դադարեցնում է իր ծառայությունը թուրքական բանակում և իրեն ամբողջապես նվիրելու է իր ժողովրդի անկախության գործին: Թեև նա ուներ մի շարք քուրդ ղեկավարների համաձայնությունը վարելու քրդական դատը Փարիզում, սակայն այդ գործի համար լիազորված չէր իր ժողովրդի, կամ ծայրահեղ ղեպքում

<sup>24</sup> Տե՛ս Ованнисян Р., Международные отношения Республики Армения 1918-1920 гг., Ереван, 2007, с. 349.

<sup>25</sup> DFPF, vol. IV, pp. 695-696.

նրա մի մասի, կամ ազդեցիկ քրդական ցեղերի կողմից: Քանի որ Փարիզում քրդական հարցը ներկայացնող այլ մարմին գոյություն չուներ, վեհաժողովը տվեց իր համաձայնությունը, որ Շերիֆ-Փաշան ներկայացնի այդ հարցը:

Շերիֆ-Փաշայի առաքելությունը չափազանց բարդ էր այն առումով, որ նա վեհաժողովին էր ներկայացնելու մի խնդիր, որի վերաբերյալ քուրդ ժողովուրդը չուներ միասնական տեսակետ: Իսկապես, իրականության մեջ շատ հեռու էր, որ «էթնիկական Քրդստանի», այսինքն Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Սիրիայի տարածքում ապրող բոլոր քրդերը փափագեին ունենալու անկախ պետություն: Միանգամայն իրավացի էր Բաղդադում Բրիտանական գլխավոր քաղաքական պաշտոնյա Առնոլդ Վիլսոնը, որն ասում էր, որ քրդական առաջնորդներից ոչ մեկը իրավասու չէ խոսելու մեկ ցեղից կամ մեկ հովտից ավելի ապրող քրդերի անունից<sup>26</sup>: Իսկ լրդ Քերզընը այդ առթիվ գրում էր. «Անկարելի է գտնել ներկայացուցչական մի քուրդ: Ոչ մի քուրդ չի ներկայացնում իր ցեղից ավելին: Շերիֆ-Փաշան գալիս է իբրև քրդերի ներկայացուցիչ, բայց քրդերը իբրև այդպիսին չեն ընդունում նրան»<sup>27</sup>:

Քրդական հարցի վերաբերյալ Փարիզի վեհաժողովում առաջին անգամ խոսակցություն գնաց 1919 թ. հունվարի 29-ին: Այդ օրը այսպես կոչված «Տասի խորհրդին» ներկայացվեց բրիտանական պատվիրակության անդամ, հարավաֆրիկյան ականավոր ռազմական ու քաղաքական գործիչ, գեներալ Յան-Քրիստիան Սմեթսի (Սմաթս) կողմից մշակված նախագիծը, որտեղ ասվում էր, որ իրենց ողջ պատմության ընթացքում թուրքերը չափազանց վատ են կառավարել իրենց իշխանության ներքո գտնվող ժողովուրդներին, իսկ ոչ վաղուցվա անցյալում նրանք սհավոր կոտորածների ենթարկեցին հայերին և այլ ժողովուրդների: Ուստի «դաշնակից ու չմիացված պետությունները եկան համաձայնության, որ Հայաստանը, Սիրիան,

---

<sup>26</sup> St'u Bush Briton Cooper, *Mudros to Lausanne. Britain's Frontier in West Asia, 1918-1923*, Albany, New York, 1976, pp. 181-192.

<sup>27</sup> Wilson N. Howell, *The Soviet Union and the Kurds. A Study of National Minority Problems in Soviet Policy*, University of Virginia, 1965, p. 143.

Միջազգետքը, Քրդստանը, Պաղեստինը և Արաբիան պետք է կատարելապես անջատվեն թուրքական կայսրությունից»<sup>28</sup>:

1919 թ. հունվարի 30-ին հիշյալ նախագծի քննարկման ժամանակ Լլոյդ Ջորջը խոստովանեց, որ նախնական բանաձևում «Քրդստան» բառը չի եղել, այն հետո ինքն է մտցրել բանաձևի մեջ: Միաժամանակ նա քննարկման մասնակիցներին ներկայացրեց Քրդստանի գտնվելու վայրը: Բրիտանական վարչապետը այն տեղավորում էր «Միջազգետքի և Հայաստանի միջև», այսինքն Վանա լճի և Մոսուլի վիլայեթի արանքում: Վերջում Լլոյդ Ջորջը դիմելով նիստի մասնակիցներին ասում է, որ եթե առարկություններ չկան, նախագծի մեջ կմտցվի նաև Քրդստանը<sup>29</sup>: Իր ելույթում Իտալիայի վարչապետ Վիտտորիո Օռլանդոն հայտնում է այն կարծիքը, որ բանաձևի մեջ Հայաստանի և Քրդստանի մասին հիշատակումը կարող է տեղիք տալ մեծ բարդությունների ու դժվարությունների<sup>30</sup>: Քննարկման արդյունքները ընդհանրացրեց պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը: Նրա առաջարկով նիստը ընդունեց որոշում այն մասին, որ Թուրքիայի կազմից անջատվում են Հայաստանը, Քրդստանը, Սիրիան, Միջազգետքը, Պաղեստինը և Արաբիան:

Այսպիսով քրդական հարցը մտցվում էր միջազգային վեհաժողովի օրակարգ:

1919 թ. մարտի 22-ին խաղաղության վեհաժողովը թույլատրեց Շերիֆ-Փաշային ներկայացնել քրդերի պահանջները: Վերջինս այդ առթիվ ներկայացրեց մի հուշագիր և տարբեր փաստաթղթեր քրդական բաղձանքների վերաբերյալ<sup>31</sup>: Հուշագրում շարադրված էին «քուրդ ազգի օրինական պահանջները» «Միացյալ և Անկախ քրդական պետության» ստեղծման վերաբերյալ Վուդրո Վիլսոնի հռչակած «14 կետերի» սկզբունքներին համապատասխան: Ընդ որում, Շերիֆ-Փաշան աշխատում էր հերքել «Մեծ Հայաստան» ստեղծելու վերաբերյալ փաստարկները: Նա առաջարկում էր ստեղծել

---

<sup>28</sup> St' u Miller David Hunter, The Drafting of the Covenant. New York-London, 1928, vol. II, pp. 109-110.

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 220:

<sup>30</sup> Նույն տեղում, հ. I, էջ 186:

<sup>31</sup> St' u General Shérif Pasha, Memorandum on the Claims of the Kurd people, Paris, 1919.

միջազգային մի հանձնաժողով, որի խնդիրն էր լինելու գծել Քրդստանի սահմանները «ազգության» սկզբունքի հիման վրա՝ նրա մեջ ներառելով բոլոր այն տարածքները, որտեղ տվյալ պահին քրդերը կազմում էին բնակչության մեծամասնությունը: Իբրև ապագա Քրդստանի տարածք, Շերիֆ-Փաշան առաջարկում էր համարյա ողջ Թուրքահայաստանի տարածքը՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթները, ինչպես նաև Էրզրումի վիլայեթի կեսը: Սակայն դա մինիմում պահանջ էր, որը գեներալն անվանում էր «անկատար Քրդստան»: Նա գտնում էր, որ եթե աշխարհի ուժեղները «ցանկանային արդարացիորեն կիրառել «ազգության սկզբունքը», ապա երկիրը, որտեղ քրդերը մեծամասնություն են կազմում, կտարածվեր շատ հեռուները»: Ըստ այնմ, նա պահանջում էր Քրդստանի մեջ ընդգրկել մի հսկայական տարածք, որի մեջ մտնելու էին Կիլիկիան, Արևմտյան Հայաստանը, Հյուսիսային Միջագետքը, Հյուսիսային Սիրիան, Իրանական Քրդստանը, Լուրիսթանի նահանգը, այսինքն մինչև Սպահան ընկած տարածքները<sup>32</sup>:

Դա Շերիֆ-Փաշան անվանում էր «մաքսիմում ծրագիր»: Նա պահանջում էր բացառել հայ փախստականների վերադարձը Արևմտյան Հայաստան: Փաշան չէր խորշում դիմելու նաև քաղաքական շանտաժի մեթոդներին, զարգացնելով այն միտքը, որ եթե Հայաստանի մեջ ընդգրկվեն այնպիսի տարածքներ, որտեղ քրդերը կազմում են մեծամասնություն, ապա անկասկած ռազմատենչ ու իրենց ազգային անկախության նախանձախնդիր քրդական ցեղերը չեն հանդուրժի այդ բանը, որի հետևանքով ապագա Հայաստանում անկարգությունը կթագավորի անընդմեջ, եթե, իհարկե, դաշնակիցները այնտեղ մշտապես ուժեղ բանակ չպահեն, որն իր հերթին կենթարկվի պարտիզանական պատերազմին բնորոշ հարձակումների: Միաժամանակ քրդական պետության ստեղծումը Շերիֆ-Փաշան աշխատում էր ներկայացնել որպես Անտանտի պետությունների շահերի համար միանգամայն ձեռնտու գործ: Այսպես, «Ասիայի բոլոր ժողովուրդներից միակը քուրդ ժողովուրդն է, - ասվում էր նրա հեղինակած հուշագրում, - որն ի վիճակի է ձևավորել

<sup>32</sup> St'ou General Shérif Pasha, Memorandum...: St'ou նաև "L'Asie française", 1919, février-juillet, pp. 192-193.



առաջնակարգ բուֆերային պետություն բուլղարիայի հեղեղի առջև ճանապարհը փակելու համար, նկատի ունենալով, որ հայերը ուժգնորեն վարակված են այդ վտանգավոր գաղափարներով և նրանց քաղաքական կուսակցությունների միջև գոյություն ունեցող անտագոնիզմի ու դրանց հեղափոխական կոմիտեների մրցակցության պատճառով երբեք չեն կարող նույն երաշխիքները տալ իրենց հարևաններին: Բուլղարիայի գաղափարները կայծակնային արագությամբ ներթափանցում են հայերի մեջ և չկա այդ սոսկալի վարակը կանգնեցնելու կարող սահման: Միայն մահմեդական երկրներն են դիմացկունակ և չեն վախենում այդ ահեղ վարակից»<sup>33</sup>:

Դժվար չէ նկատել, որ նախ Շերիֆ-Փաշայի հուշագիրը աչքի էր ընկնում իր անսանձ մաքսիմալիզմով: Այնուհետև, նա ուներ բացահայտ հակահայկական ուղղվածություն և վճռականորեն մերժում էր հայ ժողովրդի իրավունքները Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Երբ Դաշնակիցների համար պարզ դարձավ, որ Միացյալ Նահանգները «դուրս են գալիս խաղից», այսինքն չեն վերցնելու Հայաստանի, կամ ողջ Անատոլիայի նկատմամբ «միասնական մանդատը» Փարիզի խաղաղության վեհաժողովի բրիտանական պատվիրակությունը սկսեց ճնշում գործադրել Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարի նկատմամբ, որպեսզի նա միանա Շերիֆ-Փաշային, նախ կանխելու համար թուրքական տիրապետության վերականգնումը Արևմտյան Հայաստանում, և ապա իրավարարության (արբիտրաժի) միջոցով կարգավորելու վիճելի տարածքային խնդիրները ապագա անկախ հայկական և քրդական պետությունների միջև: Բրիտանական դիվանագետների կարծիքով Արևմտյան Հայաստանի բաժանումը հայկական և քրդական գոտիների կիեշտացնելու խաղաղ կարգավորումը, միաժամանակ նվազեցնելով թուրքական սադրանքների հնարավորությունը<sup>34</sup>: Կասկածներ ունենալով, որ «հայկական գործը վտանգված է», Նուբարը որոշեց ընդառաջել անգլիացիների պահանջին և համագործակցության մեջ մտնել Շերիֆ-Փաշայի հետ, պայմանով, որ սահմանային հարցերը թողնվի ապագային:

<sup>33</sup> St' u General Shérif Pasha, Memorandum...

<sup>34</sup> Ованнисян Р., Международные отношения ..., с. 351-352.

Իր հերթին փաշան Փարիզում համոզվել էր, թե որքան թույլ են քրդերի քաղաքական դիրքերը վեհաժողովում: Նա միաժամանակ չափազանց գոհ էր, որ քրդական հարցը վեհաժողովում բարձրացվել է այն նույն մակարդակի, ինչպես վաղուց ճանաչված հայկական հարցը: Ուստի նա ևս որոշեց ընդառաջ գնալ անգլիացիների պահանջին: Այդ բոլորի հետևանքը հանդիսացավ այն, որ 1919 թ. նոյեմբերի 20-ին Նուբարի և այսպես կոչված «Քրդական ազգային պատվիրակության նախագահ» Շերիֆի կողմից ստորագրվեց մի փաստաթուղթ<sup>35</sup>, որը ճանաչվեց նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակության փոխնախագահ Համո Օհանջանյանի կողմից: Այդ փաստաթուղթը, որը կազմված էր համատեղ դիմում-հուշագրի ձևով ներկայացվեց Փարիզի վեհաժողովին: Նրանում ասվում էր, որ «երկու արիական ժողովուրդները»՝ հայերը և քրդերը ունեն նույն շահերը և հետապնդում են նույն նպատակները, որն է՝ նրանց ազատագրումն ու անկախությունը, որ թուրքական լուծը կործանիչ է եղել երկու ժողովուրդների համար: Ուստի միասնաբար խնդրում են խաղաղության վեհաժողովից նպաստել ստեղծելու Միացյալ Անկախ Հայաստան և անկախ Քրդստան: Փաստաթղթում այնուհետև առաջարկվում էր, որ որևէ մեծ պետություն հանձն առնի երկու երկրներին ցուցաբերելու տեխնիկա-տնտեսական օգնություն նրանց վերականգնման շրջանում: Ինչ վերաբերվում է տարածքային հարցերի վերաբերյալ հայ-քրդական վեճին, ապա փաստաթղթում ասվում էր, որ կողմերը պաշտոնապես հայտարարում են, որ իրենք նրա լուծումը ամբողջապես թողնում են Խաղաղության վեհաժողովի որոշմանը, կանխավ վստահ լինելով, որ այն իր լուծումը կստանա իրավունքի և արդարության հիմքի վրա: Կողմերը հավաստիացնում էին նաև, որ իրենք կատարելապես համաձայն են հարգելու փոքրամասնությունների օրինական իրավունքները ապագա հայկական և քրդական պետությունների մեջ<sup>36</sup>:

---

<sup>35</sup> St' u Rambout R., Les Kurdes et le droit. Des textes, des faits, Paris, 1947, p. 24; A History of the Peace Conference of Paris, vol. VI, London, 1924; St' u Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերությունները (Ժե դարեն մինչև մեր օրերը), Պեյրուֆ, 1969, էջ 235:

<sup>36</sup> Նույն տեղում: St' u նաև British documents, vol. IV, p. 928.

Նույն օրը կողմերը իրենց վրա պարտավորություն էին վերցնում դադարեցնել փոխադարձ վիրավորական հայտարարությունների հրապարակումը, ինչպես նաև փոխադարձ հարաբերություններում պահպանել «հաշտության, բարեկամության և լրջալության ոգին»:

Նուբար-Շերիֆի դիմում-հուշագիրը կամ համաձայնագիրն առաջին պահին շժմեցնող ներգործություն ունեցավ եվրոպական դիվանագետների վրա, որովհետև մինչ այդ հայ-քրդական հարաբերություններում նրանց համար բնական ու սովորական երևույթ էր երկու ժողովուրդներին միմյանցից բաժանող անվստահությունն ու թշնամանքը<sup>37</sup>: Թուրքիայում Անգլիայի գերագույն կոմիսար ծովակալ դե Ռոբերը նույնիսկ համաձայնագիրն անվանեց «երջանիկ նախանշան»<sup>38</sup>: Իսկ 1919 թ. դեկտեմբերի 20-ի իր հեռագրով լորդ Քերզընը հրահանգում էր Թուրքիայում գերագույն կոմիսարի գերատեսչությանը ամեն կերպ աջակցել այդ «շարժմանը», թեև Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանի հետ զրույցի ժամանակ նա ասել էր, որ ինքը «չի հավատում ու չի վստահում Շերիֆ-Փաշային»<sup>39</sup>:

Համաձայնագրի առաջին արձագանքները հայկական շրջանակներում ևս, ընդհանուր առմամբ, դրական էին: Կ. Պոլսի պատրիարք Զավեն Եղիայանը Բրիտանական Բարձրագույն կոմիսարիատի անդամներից մեկի հետ հանդիպման ժամանակ նշեց, որ թեև քրդերը Աբդուլ-Համիդի թագավորության շրջանից սկսած խրախուսվում էին հայերի կողոպուտների ու ջարդերի համար, սակայն նրանք նորից հայերի հետ կապեն խաղաղության ու համաձայնության մեջ, եթե նրանց հանգիստ թողնեն<sup>40</sup>: Թերթերի առաջնորդող հոդվածներում գրվում էր երկու ժողովուրդների բնական կապերի մասին: Նույնիսկ նրանց հաշտեցմանը նպաստելու միտումով կազմակերպվեց Հայ-քրդական ընկերություն: Կոստանդնուպոլսում բնակվող բարդխանների հայտնի տոհմի ներկայացուցիչները,

---

<sup>37</sup> St' u Safrastian A., Kurds and Kurdistan, London, 1948, p. 77.

<sup>38</sup> British documents, vol. IV, p. 928.

<sup>39</sup> St' u Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան: Քաղաքական օրագիր 1919-1927, Երևան, 2001, էջ 41-42:

<sup>40</sup> Ованнисян Р., Международные отношения ..., с. 353.

օրինակ, սեյիդ Աբդուլ-Ղադերը և ուրիշներ նույնպես հայտնեցին իրենց գոհունակությունը հատկապես այն բանի համար, որ վերոհիշյալ համաձայնագիրը հանդիսանում էր քրդերի իրավունքների ճանաչման առաջին ակտը<sup>41</sup>:

Սակայն, այնուամենայնիվ, երբ հրապարակվեց համաձայնագրի բառացի տեքստը՝ տարբեր կողմերից Նուբարի և Շերիֆի վրա թափվեց քննադատության կրակը: Արևելյան Միջերկրածովյան ավազանում բրիտանական ռազմա-ծովային ուժերի հրամանատար ծովակալ Ռիչարդ Վեբբը 1920 թ. հունվարի 20-ի իր զեկուցագրում նշում էր, որ չնայած այդ համաձայնագրի ցանկալիությանը, այն ոչինչ չտվեց գլխավորապես այն պատճառով, որ Շերիֆ-Փաշան անտեղյակ է երկրում գոյություն ունեցող իրական վիճակից և չի պատկերացնում «քուրդ ժողովրդի իրական ձգտումներն ու զգացումները»<sup>42</sup>: Իսկ Ֆորին օֆիսի պաշտոնատար անձինք Փարիզի վեհաժողովի բրիտանական պատվիրակությանը հարցումներ արեցին Շերիֆ-Փաշայի լիազորությունների մասին: Նրան մեղադրեցին նաև երկերեսանիության մեջ, քանի որ նա գրել էր Կոստանդնուպոլսի Քրդական ակումբին, որ իր գլխավոր նպատակն է հայկական մեծ պետության ձևավորման կանխարգելումը: Միջնորդների միջոցով Շերիֆը տեղեկատվություն փոխանցեց թուրքական մամուլին, որ իրեն մղում է օսմանյան նվիրվածության ուժգին զգացումը: Որ բարձրացնելով քրդական հարցը, ինքը չեզոքացրել է հայկական պահանջները և ստիպել Պողոս Նուբարին գնալու մեծ զիջումների: Որ քրդերը թեև արժանի են վարչական ինքնավարության, սակայն հաճույքով կմնան Թուրքիայի հետ քաղաքական դաշինքի մեջ<sup>43</sup>:

Շերիֆ-Փաշայի այդ ինքնախոստովանությունները ըմբռնումով ու գոհունակությամբ ընդունվեց Կոստանդնուպոլսի Քրդական ակումբի մի շարք անդամների կողմից: Այդ ժամանակ Քրդական ակումբը պառակտվել և ծվատվում էր ներքին հակասություններից:

---

<sup>41</sup> DBFP, vol. IV, pp. 925-927; «Երկիր», 31.12.1919, էջ 1 և 1920, 2.01, էջ 1, 3.01, էջ 2 և 8.01, էջ 1:

<sup>42</sup> Documents on British Foreign Policy 1919-1939, 1<sup>st</sup> Series, vol. IV, London, 1952, N 621, p. 928.

<sup>43</sup> Ованнисян Р., Международные отношения ..., с. 353.

Պանիսլամիստները մեղադրում էին անջատողականներին, որ նրանք չափազանց հեռուն են գնացել և արտահայտում էին իրենց նվիրվածությունը սուլթան-խալիֆին: Նույնիսկ ազդեցիկ Աբդուլ-Ղադերը, որը հանդիսանում էր քրդական լրիվ ինքնավարության կողմնակից, տեսնելով, որ այդ գաղափարը չի արժանանում բրիտանական ուժգին աջակցությանը, նահանջել էր իր նախկին դիրքերից և հայտարարել, որ ինքնակառավարվող Քրդստանը գերադասում է մնալ «օտտոմանիզմի միասնական գրկում»<sup>44</sup>:

Համաձայնագիրը առաջ բերեց հայկական քաղաքական շրջանների զայրույթը: Որպես բողոք Վաշինգտոնում Հայաստանի Հանրապետության դեսպանորդ Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյան) հրաժարական տվեց և դուրս եկավ Հայկական Ազգային պատվիրակության կազմից և մի բողոք-հայտարարություն հրապարակեց Պողոս Նուբարի և Համո Օհանջանյանի դեմ, նրանց մեղադրելով ծայրահեղ անփութության և իրենց լիազորությունների զայրացուցիչ խախտման մեջ: Իր բողոքի մեջ Արմեն Գարոն գրում էր, որ «այդ անիծյալ թուղթը» սպառնալիքի տակ է դնում Թուրքահայաստանի երեք քառորդը և որ նրանից «բուրում է Բարձր Դռան» հոտը: Նա պարզաբանում էր, որ Շերիֆ-Փաշան պլանավորել է այսպես կոչված Քրդստանի անվան տակ Հայաստանի մեծ մասը թողնել Թուրքիայի հետ կապված վիճակում<sup>45</sup>: Մեկնաբանելով Արմեն Գարոյի քայլը, Կարո Սասունին գրում էր. «Իհարկե այս բողոքին տոն կուտար այն տիրական մտայնությունը, որ այդ ժամանակ հայ քաղաքական մտքի ղեկավարները ունեին և կը կարծեին, թե ծովե-ծով մեր հողային իրավունքները անվիճելի էին»<sup>46</sup>:

Խնդիրը վեճի նյութ դարձավ նաև հայկական մամուլում: Դաշնակցական և հնչակյան մամուլը հարձակումներ էր գործում Պողոս Նուբարի վրա, նրան մեղադրելով, որ նա անընդունակ գտնվեց Կիլիկիայի հարցում պայմանավորվելու ֆրանսիացիների հետ, իսկ այժմ նրա թեթև ձեռքով հայկական նահանգները միացվում են Քրդստանին: Մամուլը զարմանք էր հայտնում նաև, որ Հայաստանի

<sup>44</sup> «Հայրենիք», 6.04.1920, էջ 1:

<sup>45</sup> «Հայրենիք», 17.01.1920, էջ 1: Տե՛ս նաև Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 235:

<sup>46</sup> Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 236:

Հանրապետության պատվիրակության անդամը նույնպես իր ստորագրությունը դրել է այդ համաձայնագրի տակ, և անկասկած դրա համար նա կենթարկվի պատասխանատվության, թեև դա չի թեթևացնի գլխավոր հեղինակի՝ Նուբար-փաշայի մեղքը: Թերթերը գրում էին, որ Շերիֆ-Փաշայի պահանջները հայկական չորս վիլայեթների նկատմամբ արձագանք չգտան Դաշնակիցների մոտ, մինչդեռ «գրչի մեկ շարժումով» Նուբարը ի չիք դարձրեց ողջ Հայկական գործը: Թերթերը միաբերան գտնում էին, որ Պողոս Նուբար փաշան պիտանի չէ այն գործի համար, որ վերցրել է իր վրա<sup>47</sup>:

Ամբողջական Հայաստանի պատվիրակությունը, այսինքն Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակությունը միացյալ ձևով անհրաժեշտ համարեցին տալ հրապարակային մի բացատրություն: Ըստ այնմ, Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի ստորագրությամբ Փարիզից 1920 թ. հունվարի 29-ի թվակիր մի հեռագիր ուղարկվեց ԱՄՆ՝ մամուլում հրապարակելու համար: Այնտեղ ասվում էր. «Վերջին ծայր ցավալի կը գտնենք, որ մամուլի մեջ վեճ հարուցած ըլլան հայ-քրդական համաձայնության մասին: Այդ համաձայնությունը, որ ստորագրված է Ազգային պատվիրակությունեն, ոչ մեկ կերպով չի վտանգեր հայկական շահերն ու պահանջները»<sup>48</sup>:

Ի արդարացումն իրեն Նուբարը պարզաբանում էր, որ ինքը Դաշնակիցների խորհրդով ստորագրեց այդ համաձայնագիրը, որը քրդերին ներքաշում է Թուրքիայից անկախության բացահայտ պահանջի մեջ: Այդ հաջող ռազմավարությունը պաշտպանում էր հայկական շահերը և քրդական հարցը թողնում էր անորոշության մեջ՝ մինչև Խաղաղության վեհաժողովի կողմից որոշում ընդունելը<sup>49</sup>:

Համաձայնագրի հրապարակումից հետո ոչ շատ ժամանակ անց Երևան հետ կանչված Համո Օհանջանյանը իր տված պարզաբանումներում խոսում էր ձեռք բերված երկու դրական

---

<sup>47</sup> Տե՛ս «Կոչնակ Հայաստանի», հ. XX, 1920, 24.01, էջ 100-103, 31.01, էջ 143-144, 14.02, էջ 198-202, 21.02, էջ 230, 6.03, էջ 306-308: Տե՛ս նաև «Հայրենիք»-ի և «Երիտասարդ Հայաստան»-ի 1920 թ. հունվար-փետրվար ամիսների նյութերը:

<sup>48</sup> Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 236:

<sup>49</sup> «Հայրենիք», 26.02.1920, էջ 1, «Կոչնակ Հայաստանի», հ. XX, 28.02, 1920, էջ 276:

արդյունքների մասին. Առաջին՝ թուրքերից անջատվելու վերաբերյալ քրդական ձևական հռչակագրի մասին, որի նշանակությունը կայանում էր նաև նրանում, որ քրդերը այլևս չէին կարող վկայակոչել Անատոլիայի ողջ մահմեդական բնակչության կարծիքը և երկրորդ, քրդերը հիշյալ համաձայնագրով ճանաչում էին Հայաստանի իրավունքը գոյություն ունենալու որպես անկախ պետություն: Ավելին, երիտթուրքական ճնշումից ազատվելու վերաբերյալ հիշատակումը, որի վերաբերյալ Շերիֆ-Փաշան պնդեց անձնական նկատառումներով, չէր ենթադրում, որ ինչպես քրդերին, այնպես էլ հայերին կարելի է ենթարկել թուրքական կառավարման որևէ այլ ձևի: Երկու կողմերն էլ պահանջում էին լրիվ անկախություն, Գերագույն խորհրդին թողնելով նրանց մշտական սահմանների ճշտման հարցը<sup>50</sup>:

Ամբողջական Հայաստանի պատվիրակությունը կոչ էր անում նաև վերջ տալ հայկական մամուլի պառակտում սերմանող քննարկումներին:

Փարիզի վեհաժողովը որևէ դրական տեղաշարժ չարձանագրեց ինչպես հայկական, այնպես էլ քրդական հարցի լուծման գործում: Պողոս Նուբարի կողմից առաջ քաշված «ծովից ծով Հայաստան» ստեղծելու մաքսիմալիստական նախագիծը և նրանից ոչ պակաս Շերիֆ-Փաշայի ծավալապաշտական առաջարկներն, անկասկած, վատ ծառայություն մատուցեցին և՛ հայկական և՛ քրդական հարցերին:

1920 թ. փետրվարին Լոնդոնում գումարվեց Եռյակ համաձայնության դաշինքի անդամ պետությունների կոնֆերանս, որի օրակարգում Թուրքիայի հարցն էր: Դաշնակիցների միջև համաձայնություն ձեռք բերվեց այն մասին, որ Թուրքիայից անջատվող ինքնավար Քրդստանը պետք է գոյություն ունենա, սակայն այն չպետք է գտնվի եվրոպական հովանավորության ներքո<sup>51</sup>:

Քրդական հարցը քննարկման ենթարկվեց նաև 1920 թ. ապրիլի 13-ին գումարված բրիտանական միջգերատեսչական նիստի ժամանակ: Լորդ Քերզընը որոշում ընդունեց քրդական հարցը «կանգնեցնել» մեկ տարով, մինչև որ քրդերը որոշեն, ցանկանո՞ւմ են արդյոք անջատվել

<sup>50</sup> «Հայրենիք», 7.04.1920, էջ 1, «Կոչնակ Հայաստանի», հ. XX, 17.04, 1920, էջ 510-511:

<sup>51</sup> St' u Helmreich P.C., From Paris to Sévres. The Partition of the Ottoman Empire at the Peace Conference of 1919-1920. Columbus, Ohio, 1974, pp. 300-302.

Թուրքիայից, թե ոչ: Քերզընը մտահոգություն հայտնեց այն մասին, որ եթե տարածաշրջանը թողնվի թուրքական տիրապետության ներքո, նրանք հաստատապես անախորժություններ կստեղծեն Հայաստանի հարավային սահմանների երկայնքով:

1920 թ. ապրիլի 18-26-ը Սան-Ռեմոյում տեղի ունեցած միջդաշնակցային կոնֆերանսում, որտեղ մշակվեց Թուրքիայի հետ Անտանտի խաղաղության պայմանագրի կնքման հարցը, քրդական խնդիրը կրկին հանդիսացավ քննարկումների առարկա: Այն հատուկ քննարկման դրվեց ապրիլի 19-ի նիստում: Հարցի հանգամանալից վերլուծությամբ հանդես եկավ լորդ Քերզընը: Նա նշեց, որ դա դժվարին ու բարդ խնդիր է: Հարավային Քրդստանի, այսինքն Միջագետքի հյուսիսային շրջաններում գտնվող քրդաբնակ տարածքի (ներկայիս Իրաքյան Քրդստանի) հարցը Քերզընի համար միանգամայն հստակ էր, քանի որ այն հանդիսանում էր նախառատ Մոսուլ վիլայեթի մի մասը, որի նկատմամբ հավակնություններ ուներ Անգլիան, հետևաբար «այն ցանկալի էր հանձնել Մեծ Բրիտանիայի մանդատային հսկողությանը»:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանում բնակվող քրդերի ստատուսին, ապա լորդ Քերզընը առաջարկեց մի քանի տարբերակ, որոնցից ինքը նախապատվությունը տալիս էր հետևյալին. Քրդստանը անջատել Թուրքիայից և նրան հատկացնել ինքնավարություն: Իր իսկ առաջարկած այս տարբերակի նկատմամբ լորդը տրամադրված էր թերահավատորեն, քանի որ կասկած էր հայտնում, թե արդյո՞ք քրդերը իրենք կդրսևորեն հավաքական կամք Քրդստան ստեղծելու հարցում, քանի որ նրանց մտադրությունները խիստ անորոշ ու մշուշապատ են և բացի այդ դժվար է քրդական իրականության մեջ գտնել «ներկայացուցչական մի քրդի», որը ընդունելի լիներ բոլորի համար: Նրա ասելով «յուրաքանչյուր քուրդ ներկայացնում էր միայն իր կլանը»:

Լորդ Քերզընի առաջադրած հաջորդ տարբերակը այն էր, որ եթե անկախությունը քրդերի համար անհասանելի լինի և կամ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան չհամաձայնվեն Քրդստանի նկատմամբ հաստատելու իրենց հովանավորությունը, լավագույնը կլինի այն, որ



քրդերը թողնվեն թուրքական կառավարման ներքո, որին նրանք «վարժվել են»<sup>52</sup>:

1920 թ. մայիսի 11-ին Եռյակ համաձայնության պետությունները թուրքական կառավարությանը հանձնեցին Սան-Ռեմոյում մշակված խաղաղության պայմանները: Բ. Դուռը անհապաղ ստեղծեց մի հանձնաժողով հակաառաջարկներ ներկայացնելու համար: Քրդական հարցի կապակցությամբ թուրքերը պահանջ էին ներկայացնում Քրդստանը թողնել Օսմանյան կայսրության կազմում:

1920 թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագրի մեջ ընդգրկված էր նաև քրդական հարցը (Երրորդ բաժին, «Քրդստան», հոդվածներ 62-64): Այդ հոդվածներում պարունակվում էին այն պայմանները, որոնց հիմքի վրա ենթադրվում էր լուծել քուրդ ժողովրդի նշանակալից մասի ազգային ինքնորոշման խնդիրը:

62-րդ հոդվածում ասվում էր. «Կոստանդնուպոլսում գտնվող Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կողմից նշանակված երեք հոգոց բաղկացած հանձնաժողովը վեց ամսվա ընթացքում կպատրաստի մի կանոնակարգ գերակշիռ քուրդ բնակչություն ունեցող այն շրջանների ինքնավարության վերաբերյալ, որոնք ընկած են Եփրատից արևելք և Հայաստանի հարավային սահմանից հարավ: Հանձնաժողովի ներսում անհամաձայնություն ծագելու դեպքում հարցը լուծում են իրենք՝ համապատասխան կառավարությունները: Միաժամանակ պետք է մշակվեն կատարյալ երաշխիքներ վերոհիշյալ շրջանների ասորի-քաղդեական և այլ էթնիկական ու կրոնական փոքրամասնությունների պաշտպանության համար: Այդ նպատակով հատուկ հանձնաժողովը, որի մեջ բացի բրիտանական, ֆրանսիական և իտալական ներկայացուցիչներից պետք է մտնեն նաև պարսկական և քրդական ներկայացուցիչները, կուսումնասիրեն և անհրաժեշտության դեպքում կճշտեն թուրք-պարսկական սահմանը:

63-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր երեք ամսյա ժամկետում ընդունել և իրագործել այդ զույգ հանձնաժողովների որոշումները:

64-րդ հոդվածը ազդարարում էր, որ եթե մեկ տարի անց 62-րդ հոդվածում նշված շրջանների քուրդ բնակչությունը դիմի Ազգերի

---

<sup>52</sup> DBFP, vol. VII, pp. 43-45.

Լիգայի Խորհրդին նշելով, որ նրանց բնակչության մեծամասնությունը ցանկանում է Թուրքիայից անկախ լինել, իսկ Լիգայի խորհուրդը վերջիններիս կհամարի անկախություն ունենալու ընդունակ, ապա Թուրքիան պարտավոր է հրաժարվել այդ շրջանների նկատմամբ իր իրավունքներից: Եթե քրդական պետության կազմի մեջ ցանկություն կունենան մտնելու նաև Մոսուլի վիլայեթի քրդերը, ապա դաշնակիցները չեն առարկի դրա դեմ<sup>53</sup>:

Սակայն հայտնի պատճառներով Սևրի պայմանագիրը չմտավ գործողության մեջ: 1921 թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցած Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարությունների ղեկավարների և արտաքին գործերի մինիստրների խորհրդաժողովում վկայակոչելով Սևրի պայմանագիրը, բրիտանական պատվիրակության ղեկավար լորդ Քերզընը հայտարարեց, որ թուրքերը պետք է ինքնավարություն տրամադրեն քրդերին: Ի պատասխան դրա, թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամիբեյը հայտարարեց, որ «քրդերը ոչինչ չեն ցանկանում, բացի նրանից, որ թուրքերի հետ ապրեն ինչպես եղբայրներ»<sup>54</sup>: Միաժամանակ նա հասկացրեց, որ քրդական հարցը իրենք դիտում են որպես Թուրքիայի ներքին հարց<sup>55</sup>: Բեքիր Սամին փորձում էր համոզել իր ընդդիմախոսներին, որ քրդերը միշտ հայտարարել են, որ իրենք «Մշտապես Թուրքիայի հետ կազմել են անբաժան մաս, որ երկու ռասաները միավորված են ընդհանուր զգացումներով, ընդհանուր մշակույթով և ընդհանուր կրոնով» և որ թուրքերի ու քրդերի միջև տարբերությունը մեծ չէ, քան անգլիացիների և շոտլանդացիների միջև»<sup>56</sup>:

Թուրքական պատվիրակության նման անզիջում գործելակերպը անկասկած վկայում էր այն մասին, որ Լոնդոնում փորձված թուրք դիվանագետները եկել էին այն համոզման, որ Եռյակ

---

<sup>53</sup> St'а Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III, Москва, 1929, с. 33-34; Ключников Ю., Севр и Лозанна, К дипломатической истории договоров. Северский мирный договор и акты, подписанные в Лозанне, Москва, 1927, с. 24-25.

<sup>54</sup> DBFP, vol. XV, International Conferences and Conversations 1921, N 26, pp. 213-214.

<sup>55</sup> Նույն տեղում, N 24, էջ 194, 197-198:

<sup>56</sup> Նույն տեղում, N 26, էջ 213-214:

համաձայնության պետությունները արդեն նախապատրաստված են Թուրքիայի նկատմամբ զիջումների գնալու հայկական և քրդական հարցերի կապակցությամբ: 1921 թ. մարտի 11-ին դաշնակիցները հայտարարեցին, որ իրենք պատրաստ են ընդունելու Սևրի պայմանագրի փոփոխությունները այն «գոյություն ունեցող իրադրության փաստերին հարմարեցնելու իմաստով»:

Վերին աստիճանի ուշագրավ է Լլոյդ Ջորջի և Բեքիր Սամի-բեյի միջև տեղի ունեցած զրույցը, որը կայացավ Լոնդոնի խորհրդաժողովի աշխատանքների ավարտից անմիջապես հետո, մարտի 16-ին, բրիտանական համայնքների պալատի շենքում: Անգլիական վարչապետը, խոսելով այն զիջումների մասին, որ Լոնդոնը կարող է անել Թուրքիային, հիշատակեց Հայաստանի և Քրդստանի անունները: Բեքիր Սամի-բեյը պատասխանեց, որ Միջագետքը «թանկ գին չէ հանուն բրիտանական բարեկամության»<sup>57</sup>: Միանգամայն ակնհայտ է, որ քաղաքական այդ սակարկությունը (Միջագետքը ձեզ, Հայաստանը և Քրդստանը՝ մեզ) գնում էր հայ և քուրդ ժողովուրդների հաշվին:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի և քեմալական Թուրքիայի միջև կնքված Ֆրանկլեն-Բույոնի պայմանագիրը հանդիսացավ Մերձավոր Արևելքում Սևրի համակարգի կործանման կարևոր էտապներից մեկը: Եռյակ համաձայնության անդամ կենտրոնական պետություններից մեկը դուրս էր գալիս Սևրի համակարգից, դրանով իսկ Սևրի պայմանագիրը դատապարտելով չգոյության: Արտահայտելով ֆրանսիական կառավարող շրջանների այդ տրամադրությունները, Փարիզի քաղաքական շրջաններում մեծ հեղինակություն վայելող հրապարակախոս Մորիս Պերնոն գրեց. «Այլևս մենք չպետք է փորձարկումների ենթարկենք ոչ ինքնավար Քրդստանի և ոչ էլ անկախ Հայաստանի հարցերը»<sup>58</sup>:

1922 թ. նոյեմբերից մինչև 1923 թ. հուլիսը տեղի ունեցած Լոզանի կոնֆերանսը վերջնականապես փակեց քրդական հարցը: Կոնֆերանսի բացման օրվանից սկսած քեմալական կառավարությունը կտրականապես պահանջեց քրդական հարցը չընդգրկել օրակարգում,

---

<sup>57</sup> Նույն տեղում, N 65, էջ 441:

<sup>58</sup> Sté u Pernot Maurice, La Question Turque, Paris, 1923, p. 253.

դա հիմնավորելով նրանով, որ Թուրքիայի բոլոր մահմեդական փոքրամասնությունները, լինեն դրանք քրդեր, արաբներ, լազեր, չերքեզներ և այլն, դրանք Թուրքիայի քաղաքացիներ են, հետևաբար նրանց խնդիրը ներքին հարց է<sup>59</sup>: Կոնֆերանսում թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինենյուն հայտարարեց, որ քրդերը չեն ցանկանում բաժանվել Թուրքիայից, ինչպես որ նախատեսվում էր Սևրի պայմանագրով: Անատոլիայի քրդերը պատրաստ են թուրքերի հետ կողք-կողքի, զենքը ձեռքին պայքարելու Քրդստանը Թուրքիայից անջատելու ամեն մի փորձի դեմ<sup>60</sup>:

Որպես պատասխան անգլիացիները հայտարարեցին, որ այդ բոլորը իրենք կցանկանային լսել ոչ թե թուրքական պատվիրակության անդամների, այլ հենց քրդերի բերանից, ավելացնելով, որ խնդրին իրավասու են պատասխանելու միայն Թուրքական Ազգային Մեծ Ժողովի քուրդ պատգամավորները: Պահանջվեց, որ վերջիններս հանդես գան պաշտոնական հայտարարությամբ: Այդ կապակցությամբ Անկարայում գումարվեց մեջլիսի արտակարգ նիստ: Թատերականացված այդ ներկայացումը կոչված էր ոչ միայն անգլիացիներին, այլև ամբողջ աշխարհին ցուցադրել «քրդերի նվիրվածությունը թուրք-քրդական հայրենիքին»:

Ստանալով ԹԱՄԺ-ի քուրդ պատգամավորների «դրական» պատասխանը, ԹԱՄԺ-ը անմիջապես հեռագրեց Լոզան, որտեղ ասվում էր, որ «քրդերը երբեք չեն բաժանվի Թուրքիայից»<sup>61</sup>:

Քրդական հարցը այդպիսով հանվեց կոնֆերանսի օրակարգից: Լորդ Քերզընը հայտարարեց, որ «այլևս գոյություն չունի Թուրքիայում քրդական պետության կամ քրդական ինքնավար նահանգի ստեղծման հարց՝ ինչպես ենթադրվում էր Սևրի պայմանագրում»<sup>62</sup>: Միանգամայն իրավացի է Արշակ Սաֆրաստյանը, երբ դառնությամբ գրում է, որ չնայած իրենց տված բազում խոստումներին և Սևրի դաշնագրի տակ

---

<sup>59</sup> St' u Mустафа Кемаль, путь новой Турции, 1919-1927, т. 1, Москва, 1929, с. 140.

<sup>60</sup> АВПРИ, ф. НАИ, серия А, д. 26, л. 86-93.

<sup>61</sup> St' u Dersimi M.N., Kurdistan Tarihinde Dersim, Halep, 1952, s. 189.

<sup>62</sup> DBFP, vol. XIII, N 289, p. 405.

դրված ստորագրությանը, դաշնակցային տերությունները Լոզանում «ծախեցին և՛ Քրդստանը և՛ Հայաստանը»<sup>63</sup>:

VAHAN BAYBURDYAN

### **KURDISH ISSUE DISCUSSIONS BY THE INTERNATIONAL DIPLOMACY IN 1916-1923**

During World War I, the Kurdish issue became the subject of the serious discussions of international diplomacy. 1906 Sykes-Picot secret treaty provided separation of the Ottoman Empire between the Triple Entente if should succeed in defeating during World War I the Ottoman Empire. But neither England nor France had clear plans for the Kurdish issue. The same can be stated about U.S. diplomacy. Although at the Paris Peace Conference in 1919 the issues concerning Kurds were discussed but no specific decision was adopted. The Kurdish issue was the object of the discussion between the Entente countries in February of the 1920 convened in London conference and also took up in April of the same year at San-Remo conference.

By the Treaty of Sevres signed in August 10 of 1920 was intended to create an autonomous Kurdish state in Turkey, which could later become an independent state. But in the 1922-1923 period the Lausanne Conference rejected both Armenians and Kurds aspirations for independence.

---

<sup>63</sup> Safrastian A., Kurds and Kurdistan, p. 78.

## ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԽԼՅԱՆ

### ԱԶԱՐԻԱՅԻ ԵՎ ՍԱՄՑԻԵ-ՄԵՍԻԵԹԻԱՅԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1918-1921 ԹԹ.)

Վերջին տարիներին ակնհայտ դարձավ, որ Վրաստանի պատմության նորագույն շրջանի մի շարք բազմակուտակ և խճճված հիմնախնդիրներ վրաց պատմագիտության կողմից պատշաճ ձևով չեն ուսումնասիրվել, հատկապես երկրի ազգային և կրոնական փոքրամասնությունների կացության տեսակետից: Ավելի ճիշտ կլինի ասել, որ այդ խնդիրները գիտական ասպարեզում նաև ներկայացվել են թերի, միակողմանի, հաճախ՝ խեղաթյուրված: Պետք է փաստել, որ վրաց պատմագիտության մեջ շատ հիմնահարցեր, որոնք ունեն գիտա-քաղաքական արդիական նշանակություն, ոչ միայն չեն գտել իրենց հայեցակարգային լուծումները, այլև շարունակում են մնալ տակավին չլուսաբանված:

Վրաց պատմաբանները, կարծես թե, աշխատում են շրջանցել և քողարկել նաև այն սուր անկյունները և կնճռոտ խնդիրները, որոնք ժամանակին առաջացել էին Աջարիայի (Աճարա) և Սամցխե-Մեսխեթիայի\* պարագայում<sup>1</sup>: Նրանք միաբերան պնդում են, որ սույն տարածքների ընդգրկմանը Վրաստանի Հանրապետության մեջ խոչընդոտում էին միմիայն արտաքին «չար» ուժերը, իսկ տեղի բնակչությունն իբր երազում էր ժամ առաջ վերամիավորվել «մայր հայրենիքի» հետ<sup>1</sup>: Այս չափազանց պարզեցված տեսակետը, մեղմ

---

\* Պատմական մարզ, որը ժամանակին ընդգրկում էր Ախալցխայի գավառը և Արդահանի շրջանի հյուսիս-արևմտյան հատվածը:

<sup>11</sup> Այդ մարզերը նաև ամբողջացվում էին «մահմեդական Վրաստան» դարձվածքի միջոցով: Զաքաթալայի շրջանը (Ճար-Բելոքանի, Սայինգիլո, պատմ. Եխնի-Խենի), որտեղ նույնպես բնակվում են իսլամադավան վրացիներ (ինգիլոյներ), այնուամենայնիվ, ավանդաբար չի դասվել հիշյալ եզրը կրող տարածքներին:

<sup>1</sup> saqarTvel os istoria. XX saukune. (saxel mZRvanel o istoriis fakul tetis studentebisTvis.) Tbil isis universitetis gamomceml oba, Tbil isi, 2003, g. 70.

ասած, չի դիմանում որևէ լուրջ քննադատության և իսկույն քանդվում է ժամանակի բազմազան տեղեկությունների և նյութերի վրա թեկուզ թռուցիկ հայացք նետելու ցանկության պարագայում: Ինչևէ, թեման մեծ ընդգրկում ունի: Մենք, հետևաբար, անհրաժեշտ գտանք անդրադառնալ այն փաստերին և երևույթներին, որոնք, դիտմամբ թե ոչ, սակայն տակավին մնում են վրացի ուսումնասիրողների շարադրանքի ստվերում: Գիտական գրականության մեջ դեռ չամփոփված նյութերի քննությունը՝ թույլ կտա կազմել նաև ավելի ամբողջական պատկերացում խնդրի վերաբերյալ:

Վրաստանը, որն Աջարիայի և Սամցխե-Մեսխեթիայի նկատմամբ մեծ հավակնություններ ուներ, այնուամենայնիվ, Բաթումի վեհաժողովում տեղի տվեց թուրքական ճնշումներին և պարտադրված եղավ 1918 թ. հունիսի 4-ին կնքել տխրահոշակ «հաշտությունը», որի համաձայն նորաստեղծ Վրաստանը, ինչպես հայտնի է, ևս ճանաչում էր այդ մարզերը Օսմանյան կայսրության գերակայության ոլորտում<sup>2</sup>: Ըստ վրացական լրատվամիջոցների պնդման, «միայն բեգերը և խոշոր հողատերերն են շահագրգռված նրանում, որ մահմեդական վրացիներով բնակեցված տարածքները ենթարկվեն Թուրքիային, քանզի վերջինս կպահպանի կալվածատերերի [ձեռքերում եղած]

---

<sup>2</sup> Սույն շրջանների ապագա ճակատագրի հարցն արծարծվել էր Առաջին աշխարհամարտի դեռ սկզբում: Ոչ անհայտ «դոկտոր [Խոսրով բեգ] Սուլթանովը բարեգործութեան դիմակի տակ համաթիւրքական ազիտացիա էր մղում Բաթումի և Ախալցխայի շրջաններում: Միա ազիտատորներն են [Ահմեդ] Պեսպինով, Օմար Ֆայիկ էֆենդի [Կիփիանի] <...> նրանց նպատակն է Բաթումի, Ղարսի, Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններն իբր ավտոնոմ միացնել Տաճկաստանին: 1917 թ. աշնանն Ախալցխայում կայացաւ Կովկասի մահմեդականների համագումար՝ մասնակցութեամբ [իյուսիսկովկասյան] լեռնականների: Համագումարը վճռապէս պահանջեց ամեն մի կովտուրական ու քաղաքական կապ խզել Վրաստանի հետ»: Տե՛ս Վրաստանի Սահմանադիր ժողով, «Աշխատար» (Թիֆլիս), 8 ապրիլի 1919: Միևնույն հարցին նվիրված մեկ այլ կարևոր վկայությունը հաղորդում է, թե «ինչպես կասկածվում է, Թուրքիայից եկած էմիսարները վաղուց գործում են Ախալցխայի իրենց հայրենակիցների մեջ, նրանք այն պրոպագանդան են մղել, թե Ախալցխան իր շրջաններով ոչ թե վրացական երկիր է, այլ՝ մուսուլմանական, հետևաբար, սահմանաբաժանումի ժամանակ այն պետք է մտնի մուսուլմանական ինքնավար միության մեջ...»: Տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 31 դեկտեմբերի 1917, մեջք. ըստ Սանոսյան Ա. Ս. Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918-ի ինքնապաշտպանությունը, Երևան, 1992, էջ 7:

հողերը»<sup>3</sup>: Թուրքական տիրապետության առաջին իսկ օրից, սակայն, Աջարիայում հաստատվել էր ռազմակալման այնպիսի խիստ ռեժիմ, որ նրանից, առանց չափազանցության, սկսեցին տառապել նույնիսկ տեղի վրացի մահմեդականները: Աջարացիների միջավայրում մեծ իրարանցում էր առաջ բերել նրանց զորահավաքի մասին թուրք զինվորական հրամանատարության խիստ կարգադրությունը<sup>4</sup>: Հրաժարվելով մտնել օսմանյան գնդերի շարքերը՝ զգալի թվով անհնազանդ աջարացիներ, կազմելով զորախմբեր՝ «չետաներ», բարձրացել էին լեռները<sup>5</sup>: Հարկ է առանձնահատուկ նշել, որ միաժամանակ տարածում ստացավ նաև երկրամասի ինքնավարության մասին պահանջը<sup>6</sup>:

Գերմանիան խանդով էր նայում, թե ինչպես Բաթումի վեհաժողովում Թուրքիան ձեռք բերեց միակողմանի առավելություններ և պնդեց, որ հրավիրվի մի նոր կոնֆերանս: Նախատեսվում էր, որ Կ. Պոլսում այժմ պիտի բանակցեին Քաոյակ միության և կովկասյան նորակազմ հանրապետությունների ներկայացուցիչները: Ենթադրվում էր, որ մինչև նոր խորհրդաժողովը, վիճելի տարածքների հարցը մնալու է առկախ: Վրացիներն իրենց շահերի թելադրանքով, ինչպես հայտնի է, հակվեցին դեպի Գերմանիան: Տեղի ունեցավ վրաց-գերմանական հարաբերությունների սերտացում: Վրաց կառավարությունը որոշակի հույսեր էր փայփայում, թե նրան կհաջողվի Բեռլինի աջակցությամբ ազատել Աջարիան և Սամցխե-Մեսխեթիան թուրք նվաճողների ճիրաններից: Օսմանյան կայսրության մայրաքաղաք ժամանած վրաց պատվիրակությունն առանձնապես չէր թաքցնում այդ մտադրությունը: Դա համընկնում էր նաև Գերմանիայի շահերին:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրում պահանջ էր որդեգրված, ըստ որի օսմանցիների կողմից նվաճված, սակայն դեռ փաստացի վիճելի

---

<sup>3</sup> «er-Toba» («Միասնություն») թերթից արտատպված հոդվածը տե՛ս Օ возвращении грузин-мусульман, «Кавказское слово» (Тифлис), 14. 11. 1918.

<sup>4</sup> Աջարիայում, «Հորիզոն» (Թիֆլիս), 6 հունիսի 1918:

<sup>5</sup> Աջարացիների անհնազանդությունը, «Հորիզոն», 14 հուլիսի 1918: Նման իրադարձություն էր տեղի ունեցել նաև 1875 թ., երբ աջարացիները հանդուգն կերպով հրաժարվեցին ենթարկվել զորահավաքի մասին սուլթանի կարգադրությանը:

<sup>6</sup> Хроника: Мятаж в Аджарии, «Кавказское слово», 14 июля 1918.



Բաթումի մարզի<sup>7</sup> տարածքում պետք է հանրաքվե անցկացվեր: Ուստի թուրքերը 1918 թ. հուլիսին շտապեցին կազմակերպել այդ «հանրաքվեն», որպեսզի զրկեն վրացիներին մարզի նկատմամբ պահանջներ առաջ քաշելու հեռանկարից:

Եթե 1918 թ.-ի գարնանն Աջարիայի մահմեդական բնակչությունը խանդավառությամբ էր ողջունում օսմանյան զորքերի հաղթական մուտքը երկրամաս, ապա որոշ ժամանակ անց թուրքերի «ազատարար» վարկը զգալիորեն մարեց, ինչից և չհապաղեցին օգտվել վրացիների համախմբվածությանը ձգտող թիֆլիսսամետ տեղի ուժերը: Մի խումբ աջարացի ազնվականների անունից էնվերին և Բաթում ժամանած այլ երիտթուրքական պարագլուխներին դիմեց Մեմեդ բեգ Աբաշիձեն<sup>8</sup>: «Մենք կդիմավորենք ձեզ իբրև հյուրերի, սակայն վրաց ժողովուրդը ո՛չ մեկին չի զիջի Բաթումը»<sup>8</sup>, - ի միջի այլոց ասաց նա: Նման համարձակ ելույթները և առհասարակ ընդդիմադիր կեցվածքը, բնականաբար, շուտով դարձան Մ. Աբաշիձեի, ինչպես և նրա այն համակիրների ձերբակալման պատճառը<sup>9</sup>, որոնք բողոքի թուցիկ էին պատրաստել Աջարիայում թուրքերի ունեցած կոշտ և անհարգալից գործելակերպի դեմ<sup>10</sup>: Քանզի համավրացական միասնության գաղափարին համակրող տարրերին

---

<sup>7</sup> Մարզը բաղկացած էր երկու՝ Բաթումի և Արդվինի շրջաններից: Առաջինը՝ բուն Աջարիան ուներ վրացի (63.9 %), ռուս (10.1 %), հայ (8.1 %), հույն (5.3 %) և թուրք (3.6 %) ազգաբնակչություն: Տե՛ս Батумский округ, Энциклопедический словарь русского библиографического института «Гранат», т. 5-й, с. 99. Երկրամասի հարավը՝ Կղարջքը (Արդվին) և Շավշեթը (Արտանուջ) բնակեցված էր թուրք (73.9 %), հայ (14 %), վրացի (9.8 %) և ռուս (2 %) ազգություններով: Տե՛ս Артвинский округ, там же, т. 3-й, с. 572. Հայերը, որոնք մինչև Առաջին աշխարհամարտը կազմում էին մարզի բնակչության 10.3 տոկոսը, 1914 թ. Արդվինի շրջանում կոտորածի ենթարկվեցին: Այսպիսով՝ մարզն ուներ երկու՝ վրացի (42.9 %) և թուրք (30.9 %) առավելապես մեծաթիվ ազգություններ: Տե՛ս Батумская область, там же, т. 5-й, с. 93.

<sup>8</sup> Աջարիայի մուսուլմանադավան զանգվածների մեջ մեծ համբավ վայելող Մ. Աբաշիձեն, 1905 թ. կանխեց ցարական իշխանությունների կողմից Բաթումի հայերի ծրագրավորվող ջարդերը: Տե՛ս Мемед Абашидзе и Армения. Сост. и авт. предисловия Ф. Бахчинян. Ереван, 2010.

<sup>9</sup> Տե՛ս Борьба за победу советской власти в Аджарии, документы и материалы (1917-1921), Батуми, 1961, с. 17.

<sup>9</sup> Хроника, «Кавказское слово», 26 июля 1918.

<sup>10</sup> Բաթումում, «Հորիզոն», 23 հունիսի 1918:

տեղում չհաջողվեց ձախողել «հանրաքվե» կոչված թուրքական կատակերգությունը, ապա պաշտոնական Թիֆլիսին այլընտրանք էլ չէր մնում, քան Վրաստանում գերմանական բարձրաստիճան ներկայացուցիչների առջև բողոքարկել նրա ընթացքում տեղ գտած բազմաթիվ կոպիտ չարաշահումները և լկտի կեղծարարությունները<sup>11</sup>: Շուտով վրա հասած Օսմանյան կայսրության պարտությունն Առաջին աշխարհամարտում՝ սահմանափակեց նրա ծավալապաշտական ախորժակները Այսրկովկասում:

Բրիտանական զինված ուժերը, ստիպելով հեռանալ թուրք զավթիչներին, 1918 թ. դեկտեմբերին, ինչպես հայտնի է, իսկույն զինագրավեցին ռազմավարական չափազանց մեծ նշանակություն ունեցող Բաթումի նավահանգիստը: Վրացական կողմը դարձյալ պարտադրված էր համաձայնել, որ այդ տարածքը «առժամանակ» գտնվի Մեծ Բրիտանիայի զորքերի վերահսկման ներքո: Լոնդոնում, հավանաբար, նախապես էին որոշել, որ Բաթումի և նրա մարզի հետագա ճակատագիրը պետք է վճռվեր Փարիզի խաղարարար վեհաժողովում: «Ֆորին-օֆիսը», սակայն, վերապահումներով էր վերաբերվում Բաթումի մարզը Վրաստանի կազմի մեջ մտնելու հեռանկարին: Ուստի Վրաստանի ԱԳ նախարար Ե. Պ. Գեգեճկորին պարբերաբար հիշեցնում էր անգլիացիներին (1919 թ. հունվարի 18-ի և փետրվարի 15-ի դիվանագիտական նոտաները), որ սույն տարածքը հանդիսանում է Վրաստանի անբաժանելի հատվածը<sup>12</sup>: Ըստ նրա պնդման, քանզի Բաթումի «նկատմամբ Վրաստանի իրավունքները չեն կարող կասկած հարուցել ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական, ո՛չ բարոյական տեսակետից», ուստի վրաց «կառավարությունը հույս ունի, որ Վրաստանի և Թուրքիայի միջև կվերականգնվի «status quo ante bellum», և որ Բաթումի մարզը <...> դարձյալ կվերամիավորվի» մայր հայրենիքի հետ<sup>13</sup>:

---

<sup>11</sup> Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, [под ред. В.С. Войтинского], Тифлис, 1919, с. 370-371.

<sup>12</sup> Учредительное собрание Грузии, «Кавказское слово», 20 июня 1919.

<sup>13</sup> Нота МИД Е.П. Гегечкори верховному комиссару Закавказья О.О. Уордропу, «Борьба» (Тифлис), 10 октября 1919.

Վրաստանի կառավարության և, ընդհանրապես, ողջ հասարակության մշտական ուշադրության կիզակետում էր գտնվում Բաթումի մարզի կնճռոտ հարցը: Վարչապետ Ն. Ն. Ժորդանիան հատուկ ուղերձով էր դիմել սույն մարզի մահմեդական վրացիներին, որի միջոցով հորդորում էր նրանց միանալ Վրաստանի Հանրապետությանը: Նա միաժամանակ նաև խոստանում էր, որ երկրամասին տրվելու է ինքնավար կարգավիճակ<sup>14</sup>: «Մահմեդական Վրաստանի ազատագրման կոմիտե»-ի (որի նախագահը Մ. Աբաշիձեն էր) անդամները լրջորեն էին ընդունել Թիֆլիսից այժմ շատ հաճախ հնչող այս հորդորները և ծրագրում էին ենթադրվող «ինքնավարության» մեջ ընդգրկել նույնիսկ Ախալցխայի և Ախալքալաքի գավառները<sup>15</sup>:

Հարցի համատեքստում ուրույն տեղ է գրավում սուլթանական կառավարության նախկին անդամ Մահմուդ Թավդզիրիձեի, ինչպես նաև այլ վրացագզի փաշաների խորհրդավոր ուղերձը: Նրանք միաբերան հորդորում և հարկադրաբար խորհուրդ էին տալիս իսլամադավան ցեղակիցներին, զերծ մնալ Վրաստանին միանալու գործնական քայլերից, խոստանալով մոտ ապագայում այլ կերպ վճռել Աջարիայի և Սամցխե-Մեսխեթիայի ինքնորոշման խնդիրը: Մահմեդական վրացիների, առանձնապես քրքրվեթցիների

---

<sup>14</sup> Մահմեդական Վրաստանի ինքնավարութունը, «Յառաջ» (Թիֆլիս), 17 հունվարի 1919: «Մահմեդական Վրաստանի» հնարավոր ինքնավարության մասին միտքը՝ առաջին անգամ արծարծվեց դեռ 1917 թ. ամռանը՝ վրաց ազգային դեմոկրատների (լիբերալներ) կուսակցության անդրանիկ համագումարում: Տե՛ս «saqarTvel o» («Սաքարթվելո», Թիֆլիս), 22 *ivnisi* 1917. Սակայն, երբ բուն քարթվելների հետ պատմականորեն սերտ և չափազանց ամուր մշակությամբ կապեր ունեցող մեզրեյները՝ բարձրաձայնեցին սեփական վարչա-մշակութային ինքնավարություն ունենալու ցանկության մասին, ապա վրացական վերնախավի կողմից դա իսկույն դիտվեց իբրև «արկածախնդրություն»: «saqarTvel o» («Սաքարթվելո», 1919, 144) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Սամեգրելոի ինքնավարութեան հարցը, «Նոր Աշխատատոր», 9 հուլիսի 1919: Այսպիսով՝ կարելի է դատել, որ «մահմեդական Վրաստանի» ինքնավարության մասին քաղցրահամ խոսքերը՝ ծառայում էին այլադավան ցեղակիցներին միմիայն սիրաշահելու և թուրքերի ազդեցության ոլորտից նրանց դուրս բերելու համար:

<sup>15</sup> «saqarTvel os respubi ika» («Սաքարթվելու ռեսպուբլիկա», 1918, 105, Թիֆլիս) պաշտոնաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Կոչ վրացի մահմեդականներին, «Նոր Հորիզոն» (Թիֆլիս), 4 դեկտեմբերի 1918:

տրամադրությունները, որոնք մինչ այդ իրենց հայացքը դեպի Թիֆլիս էին հառում՝ Կ. Պոլսից նրանց հասցեագրված հիշյալ կարևոր նամակի հետևանքով՝ արմատապես փոխվեցին<sup>16</sup>:

«Մահմեդական Վրաստանի» ճակատագրին անդրադարձավ նաև Բաթումիի քաղաքային վարչության գրասենյակում գումարված բազմամարդ խորհրդակցությունը: Նիստը վարում էր «վրացասեր» թևին հարող Ջիա բեգ Աբաշիձեն: Նրա առաջարկությամբ թեժ քննարկման առարկա դարձավ Վրաստանին միանալու հարցը, որը, սակայն, ի վերջո, կտրականապես մերժվեց: Ներկաների գերակշիռ հատվածը արտահայտվեց մարզում անգլիական ժամանակավոր կառավարման օգտին<sup>17</sup>: Այսպիսով՝ վրացամետ ուժերը՝ դարձյալ ձախողվեցին:

Ախալցխայից օսմանյան զորքերի հեռանալուց անմիջապես հետո, Օմար Ֆայիկ Կիփիանիի նախագահությամբ գումարված Մեսխեթիայի մահմեդականների «ազգային կոմիտե»-ն՝ շտապել էր ճանաչել Վրաստանի կառավարության գերակայության հաստատումը շրջանում: Գավառը զինագրաված վրաց զորքերից պահանջվում էր ձեռնարկել զգույշ և ողջամիտ քայլեր, սակայն, նրանք սանձարձակ անկարգությունների դիմեցին: Դրա հետևանքով տեղի մահմեդականները 1919 թ.-ի հունվարին նախընտրեցին «Հարավարևմտյան Կովկասի ժամանակավոր կառավարության» (կամ՝ Կարսի «Շուրա») իշխանությունը<sup>18</sup>: Վերջինս ուներ օսմանյան սվինի օգնությամբ ստեղծված արհեստածին կազմավորման բնույթ, որի գոյությունը նշանակում էր նախկին ռազմակալված շրջաններում դարձյալ թուրք-օսմանների ազդեցության քողարկված օջախի

---

<sup>16</sup> Попов А. Из эпохи английской интервенции в Закавказье, «Пролетарская революция», 1923, 6-7 (18-19), с. 256, 265.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 260-261:

<sup>18</sup> Տե՛ս «Азербайджан» (Баку), 19 марта 1919. Ըստ պանթուրքիստական այս օրաթերթում հնչած վարկածի, Սամցխեի մահմեդականների ելույթը պայմանավորված էր միմիայն վրաց զինվորականության այլանդակ պահվածքով: Ի դեմս հիշյալ տեղեկության, վրացի քաղաքագետները ապակայունացնող տարր էին նկատում գերազանցապես բեզակյան կալվածատեր խավը: Առանձնացնելով մահմեդական շարքային գյուղացիությունը՝ բեգերին էին վերագրում բոլոր չարիքները՝ մեղադրելով նրանց գլխավորապես կենտրոնախույս ձգտումների մեջ:

պահպանում<sup>19</sup>: Շուտով սկսվեց նաև Կարսի «Շուրային» ենթակա զինուժի հարձակումը Սամցխե-Մեսխեթիայի վրա<sup>20</sup>:

Վրաստանի կառավարությունը մտցրեց Ախալցխայի, ինչպես նաև հարևան Ախալքալաքի գավառներում ռազմական դրություն և զորավար Ա. Մաղաշվիլու (Բալո Մակաև)<sup>21</sup> փոխարեն զինվորական նոր զեներալ-նահանգապետ նշանակեց Գ. Ի. Մազնիաշվիլուն<sup>22</sup>: Սակայն նրա գլխավորած զորախումբը 1919 թ. փետրվարին լուրջ անհաջողություն կրեց, զիջելով Ախալցխան հարևան Փոցխովի տեղամասից (Արդահանի շրջան) ներխուժած թուրքական ուժերին<sup>23</sup>: Գավառը, որտեղից դուրս մղվեցին վրացական կայազորները, շուրջ 26 օր գտնվում էր խոշորագույն տեղի կավվածատեր Սերվեր բեգ Աթաբեգ Քոբլիանելիի (գրվում է նաև՝ Կոպլիանսկի) ղեկավարած «կոմիսարիատ»-ին ենթակա զինված ջոկատների վերահսկողության ներքո<sup>24</sup>: Այդ ընթացքում մեծ վնասներ կրեց Մեսխեթիայի վրաց

---

<sup>19</sup> Ըստ Ե.Պ. Գեգեճկորու, վրացական կողմն այն ժամանակ իսկ ազդարարեց երկրում տեղակայված բրիտանական զորքերի հրամանատարությանը, որ «Կարսի կառավարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ տաճկական կազմակերպություն: Մենք փաստացի ապացուցեցինք նրանց, որ այդ ամբողջ կառավարությունը կազմած է տաճիկ կոմիսարների և զործակալների կողմից»: Տե՛ս Վրաստանի Սահմանադիր ժողով, «Աշխատատր» (Թիֆլիս), 13 մայիսի 1919: Անգլիացիները, սակայն, որևէ կերպ չարձագանքեցին և անհետևանք թողեցին վրաց նախարարների նման դիմումները:

<sup>20</sup> Хроника: В Ахалцихском уезде и Ардаганском округе, «Закавказское слово», 28 января 1919.

<sup>21</sup> *sai TiZe gel a, general i abel (bal o) mayaSvil i da mesxeT-j avaxeTis sakiTxi (1918 w), qarTul i dipl omatia, wel iwdeul i, tomi 6, Tbil isi, 1999, g. 306-324.*

<sup>22</sup> Хроника, «Закавказское слово», 1 февраля 1919.

<sup>23</sup> К отступлению от Ахалциха, «Закавказское слово», 20 февраля 1919.

<sup>24</sup> Աթաբեգ Քոբլիանելին առաջարկում էր տեղի հայերին լիազորել իրենց թեկնածուներին իր «կառավարության» մեջ որոշ պաշտոններ վարելու համար, այդ թվում լուսավորության և ֆինանսների «նախարարների»: Սակայն գավառի հայության ընդհանուր ժողովը իսկույն մերժեց այդ առաջարկը: Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան Վրաստանի II ռայոնական ժողով, Բ նիստ, «Աշխատատր», 30 մարտի 1919: Հայերի հետ մերձենալու թուրք-մեսխեթցիների ցանկության իրական դրդապատճառների մասին մանրամասն տե՛ս Կնյազյան Դ., Արդբեջանական դեմոկրատական հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008, էջ 69:

քրիստոնյա բնակչությունը<sup>25</sup>: Լեզգիտիմություն հաղորդելու համար սույն «կոմիսարիատ»-ի ստեղծման հիմքում դրվում էր ինքնորոշման սկզբունքը: «Ախալցխայի դէպքերը ոչ թէ ժողովրդի, այլ բէկերի ինքնորոշման հետևանքն են»<sup>26</sup>, - փորձում էր «պարզաբանել» վրացալեզու մամուլը: Երկու պնդման միջև, սակայն, պետք չէ որոնել որևէ հակասություն: Թուրք գյուղացիությունը, պարզ պատճառներով, հասարակական-քաղաքական ինքնագիտակցության ցածր մակարդակ ուներ և ինքնորոշման գաղափարի տակ էր հասկանում սոսկ բեգերի ամբողջական իշխանության հաստատումը:

Ինչ վերաբերում է Սամցխե-Մեսխեթիայում վրացական կողմի ձախողման պատճառներին, ապա ըստ Թիֆլիսի մահմեդական «ազգային կոմիտե»-ի, «եթէ կառավարութիւնն Ախալցխան գրաւելուց ետոյ մերձեցում առաջացնէր բեգերի ու իր միջև և հողային հարցն առժամանակ յետաձգէր, ակներև էր, որ ապստամբութիւնը չձագէր»<sup>27</sup>: Այդ «կոմիտե»-ն նաև պատվիրակություն ուղարկեց վրաց վարչապետի մոտ, զորքերի և վարչակազմի անվայել արարքների դեմ իր բողոքի ձայնը պարզելու համար<sup>28</sup>: Վրացի մի շարք գործիչներ նույնպես

---

<sup>25</sup> События в Ахалцихском уезде, «Кавказское слово», 10 апреля 1919. Գավառում թուրքերը ասպատակել, կողպատել և ավերել էին 12 վրացական գյուղ (Անդրիաձմինդա, Ղրել, Ջուբարեթ, Միքելձմինդա և այլն): Տե՛ս Ախալցխայի գաւառի վնասած գիւղերը, «Աշխատաւոր», 13 ապրիլի 1919: Բորժոմի կիրճում կուտակվել էր շուրջ 1500 վրացի գաղթական Ախալցխայի գավառից: «saqar Tvel o» («Սաքարթվելո», 1919, 77) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Վրացի փախստականներ, «Աշխատաւոր», 11 ապրիլի 1919:

<sup>26</sup> «erToba» («Միասնություն», 1919, N 59) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Ախալցխան և Ադրբեջանը, «Աշխատաւոր», 19 մարտի 1919:

<sup>27</sup> Տե՛ս «Հումմէթի» տեսակետը Ախալցխայի դէպքերի մասին, «Աշխատաւոր», 5 ապրիլի 1919: Վրաստանում 1919-1920 թթ. իրականացված հողային վերափոխումների իրական պատճառների և նրանց հակասական հետևանքների մասին տե՛ս Մախլյան Բ., Վրաստանի Հանրապետության կազմավորման և ներքին քաղաքականության հիմնական սկզբունքները (1918-1921 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2011, XXVIII, էջ 151-155:

<sup>28</sup> «Թիւրք գիւղացիութիւնը ահաբեկած է», «ոչ մի կառավարչական հիմնարկութեան մօտենալ չի կարելի առանց կաշառքի», «ամբողջ Քօպլեանի և Փոցխովի ազգաբնակութիւնը, նոյնիսկ վրացիները, զզւել են իշխանութիւնից»: Տե՛ս Վրաց իշխանութիւնն Ախալցխայում, «Աշխատաւոր», 28 հունիսի 1919: «Այն օրանից, երբ վրացական զօրքերը մտել են Ախալցխայի գաւառը, ամենօրեայ թալանն ու կողոպուտը

նեցուկ կանգնեցին այդ բողոքին: «Տեղական մահմեդականների վրդովմունքը առաջացաւ վրացական աղմինիստրացիայի անպէտքութիւնից և նրա աւագակային բնոյթից»<sup>29</sup>, - պնդում էր վրաց արմատական ազգայնականների այն թւը, որը 1914 թ. համաձայնության էր եկել երիտթուրքերի հետ<sup>30</sup>: Այժմ նրանք մերձեցման եզրեր էին փնտրում Ադրբեջանի մուսավաթական պարագլուխների հետ, հակառուսական և հակահայկական ամուր դաշինք կնքելու համար: Այդ խմբի ամենակարկառուն դեմքը՝ մուլեգին

---

գինորների կողմից սովորական երևոյթ են դարձել», «մեր շրջանում այժմ կատարում է այն, ինչ մեր գիւղացին չի տեսել նոյնիսկ օսմանեան կարճատև տիրապետութեան օրով»: Տե՛ս Դրութիւնը Ախալցխայի գաւառում, «Աշխատաւոր», 22 մայիսի 1919: Պարզ պատճառներով հայերը չէին կարող աջակից լինել հակամարտ կողմերից և ոչ մեկին: Հայերը, հետևաբար, աշխատում էին ոչ մի պարագայում թույլ չտալ ներքաշել իրենց վրաց-թուրքական գինաբախման մեջ: Քանզի Մեսխեթիայի հայ բնակչութիւնը չէր տուժել «Շուրայի» տիրապետության օրերին, ապա այդ հանգամանքը բորբոքեց ոմանց երևակայութիւնն ու մտածելու առիթ տվեց, թե նրանց և թուրք-մեսխեթցիների միջև գոյություն ունի գաղտնի համաձայնություն: Ուտի վրաց գինվորականության հետապնդումներից անմասն չմնաց և հալածվեց նաև տեղի հայ ազգաբնակչութիւնը: «Վրաց զօրքերը գաւառի հայկական գիւղերում սոսկալի խժժութիւններ են կատարում», «այսպիսի բան չի կատարել թուրքերի գալու ժամանակ»: Տե՛ս Վրաց զօրքերի սխրագործութիւնները Ախալցխայի հայկական գիւղերում, «Աշխատաւոր», 30 մարտի 1919: Դեպքերի մեկ այլ ականատեսը գրում էր, որ «թուրքերին հաջորդող վրաց մենշկիկների իշխանութիւնն էլ մխիթարական չէր. դարձյալ իրար հետևից եկան դառն օրեր, անիշխանութիւն, խռովութիւն, ավեր ու բռնութիւն: <...> Կաշառքը, ազգային խտրականութիւնը, ծեծը, կողոպուտը, սպանութիւնները՝ ահռելի չափերի էր հասել»: Տե՛ս Սիմոնյան Ե., Ախալցխան կրակե օղակում 1917-1921 թթ. դեպքերի հուշագրութիւն, Երևան, 2000, էջ 111, 115:

<sup>29</sup> «kl de» («ժայռ», 1919, 53, Թիֆլիս) շաբաթաթերթից արտատպված հոդվածը տե՛ս Դարձեալ Ախալքալաքի գաւառի մասին, «Նոր Աշխատաւոր», 8 հուլիսի 1919: Վարչակազմի ոչ կանոնավոր, տարբեր չարաշահումներով լի աշխատանքը՝ նախատում էին նաև վրաց կուսակցութիւններին պատկանող այլ պարբերականները: «Մեր վարչութեան ներկայացուցիչները անսահման կամայականութիւն են ցոյց տալիս ամեն տեղ և ամեն ժամանակ» «saqarTvel o» («Սաքարթվելո», 1919, 205, Թիֆլիս) օրաթերթից արտատպված հոդվածը (տե՛ս Վրաց կեսնք՝ անսահման կամայականութիւն, «Աշխատաւոր», 1 հոկտեմբերի 1919): «Մեր աղմինիստրացիան ընկած է: Նա քաղաքացիների աչքում ոչ մի հեղինակութիւն չունի»: «Sroma» («Աշխատանք», 1919, 8, Թիֆլիս) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Աղմինիստրացիան ներկայ մոմենտում, «Աշխատաւոր», 24 հոկտեմբերի 1919:

<sup>30</sup> Закарян А., Малоизвестный исторический документ (грузино-турецкое соглашение 1914 г.), Պատմաբանասիրական հանդես, 2005, 3, էջ 254-257:

հայատյաց Գ. Վեշապելին խորհրդարանի բարձր ամբիոնից հորդորում էր իր վրացագրի գործընկերներին, թե «դաշնակցության կապենք Ադրբեջանի ու [հյուսիսկովկասյան] լեռնականների հետ և մի անգամ ու ընդմիջտ ջախջախենք հայ քաղաքականության գլուխը. անողոք կերպով մաքրենք մեր մայրաքաղաքը այստեղ բոյն դրած հայերից և Վրաստանի տերրիտորիայի վրայ գտնուող հայ կոլոնիստներին էլ քշենք դէպի Սևանայ լիճը»<sup>31</sup>: Սամցխե-Մեսխեթիայում տեղի ունեցած ընդհարումը, ըստ իրենց, խոչընդոտում և մեծապես խանգարում էր նշված ծրագրի իրականացմանը:

Վրաստանի կառավարության ներքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից էր նաև իր իշխանության տարածումը և ամրապնդումը վիճելի և ըմբոստ գավառներում: Վրաց իշխանությունները օգտվելով գանազան միջոցներից, չխորշելով նաև ուժային լծակներ գործադրելուց, տևական պայքարից հետո կարողացան հաստատել պաշտոնական Թիֆլիսի գերակայությունը մի շարք խռովարար շրջաններում, այդ թվում նաև Սամցխե-Մեսխեթիայում:

Գ. Ի. Կվինիտաձեի հրամանատարության տակ գործող զորքերը 1919 թ. մարտ ամսին վերագրավեցին Ախալցխան, իսկ ապրիլին մտան Արդահան<sup>32</sup>: Վրաստանի կողմից ծավալված ռազմական գործողություններն առաջացրին Ադրբեջանի ԱԳԽ-ի արագ արձագանքը, որը պատրվակ բռնելով արյունակցական և կրոնական կապը, փորձեց նախատել և սանձահարել պաշտոնական Թիֆլիսին<sup>33</sup>:

---

<sup>31</sup> «kl de» («Ժայռ», 1918, 7) պարբերականից արտատպված հոդվածը (տե՛ս Պատերազմ հայերի դեմ, «Հորիզոն», 3 նոյեմբերի 1918):

<sup>32</sup> Տե՛ս Взятие Ардагана, «Кавказское слово», 24 апреля 1919.

<sup>33</sup> Արյունարբու բարբարոսությամբ աչքի ընկած Ադրբեջանի մուսավաթական կառավարությունն այժմ փարիսեցիական կեցվածք ընդունելով՝ փորձում էր կիրթ քաղաքականության և մարդասիրության դասեր տալ իր հարևան պետությանը, որի առաջնորդները «ինտերնացիոնալի» մասին իրենց կեղծ ճարտասանությամբ՝ դժվար թե զիջեին որևէ մեկին: «Վրաց կառավարությունը միջոցներ է ձեռք առել ճնշելու Ախալցխայի գաւառի և Նրան հարևան շրջանների մուսուլման բնակչության ինքնօրէն և անկախ քաղաքական գոյութեան ձգտումները, - մասնավորաբար ասված է Ադրբեջանի ԱԳ փոխնախարար Աղի խան Զիադխանովի հեռագրի մեջ: Գտնելով, որ ինքնորոշման սկզբունքով բոլոր ժողովուրդներն իրատու են ունեն որոշելու իրենց վիճակը իրենց ազատ կամքով և ժողովուրդների կամքի վրայ բռնանալը այս դէպքում չպիտի թյուլատրի,



Բաքուն նաև լուրջ (200 հազ. ռուբլի) նյութական նպաստ հատկացրեց թուրք-մեսխեթցիների կարիքները հոգալու համար<sup>34</sup>: Վրացական կողմը միանշանակ գնահատեց այս ամենն իբրև կոպիտ միջամտություն իր երկրի ներքին գործերի մեջ<sup>35</sup>: «Միմիայն բացահայտ թշնամիները կցանկանան պոկված տեսնել այդ վայրերը մեզանից»<sup>36</sup>, - գայրացած խոսում էր վարչապետ Ն. Ն. Ժորդանիան Ախալցխայի դեպքերին նվիրված խորհրդարանի արտահերթ նիստում:

Աշխատելով վերջ տալ Ադրբեջանի նման ելույթներին, նրա միջամտությունը չեզոքացնելու, ինչպես նաև ժամանակ շահելու համար՝ պաշտոնական Թիֆլիսը շտապեց Ախալցխայում գումարել գավառի գյուղացիության լիազորների համագումարը: Օգտագործելով ամբոխավարության բոլոր ընդունելի և անընդունելի եղանակները՝ երկրի մայրաքաղաքից ժամանած բանագնացները, ի վերջո, համոզեցին տեղացիներին իրենց հավատարմությունը հայտնել վրաց հանրապետությանը՝ ճանաչելով նաև Սամցխե-Մեսխեթիան որպես Վրաստանի անբաժան մաս<sup>37</sup>: Ժողովականները, անշուշտ, աչքի առաջ

---

Ադրբեջանի կառավարությունն իր բարոյական պարտքն է համարում բարեկամաբար խնդրել վրաց կառավարութանը, դադարեցնելով ամեն մի զինված գործողություն Ադրբեջանին ցեղակից և հաւատակից այդ ժողովրդի դէմ, ձեռք առնելու բոլոր միջոցները՝ ծագած բոլոր վիճելի խնդիրները վճռելու համար խաղաղ կերպով փոխադարձ համաձայնութեամբ կամ՝ միջնորդ դատարանով»: Տե՛ս Ադրբեջան և Վրաստան, «Աշխատատուր», 15 մարտի 1919: Վրացական քաղաքական վերնախավն այս դեմարշի առթիվ չէր էլ թաքցնում իր ծայրաստիճան գայրույթը: Ադրբեջանն «ուզում է լոկ խաղալ դեմոկրատական այն սկզբունքներով, որոնց հետ ինքը ոչ մի ընդհանուր բան չունի», - իրավացիորեն մատնանշվել էր վրացալեզու մամուլի էջերում: «erToba» («Միասնություն», 1919, 59) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Ախալցխան և Ադրբեջանը, «Աշխատատուր», 19 մարտի 1919:

<sup>34</sup> Попов А., նշվ. աշխ., էջ 267:

<sup>35</sup> Տե՛ս Азербейджан и Грузия об Ахалцихском уезде, «Закавказское слово», 15 марта 1919.

<sup>36</sup> «Մշակ», 22 փետրվարի 1919:

<sup>37</sup> «Борьба», 23 марта 1919. Գավառը հիմնականում բնակեցված էր թուրք-սունի (35.1 %), հայ (22 %), թաթար-շիա (18 %), վրացի (17.7 %) և ռուս (3.3 %) ազգություններով: Տե՛ս Ахалцихский уезд, Энциклопедический словарь русского библиографического института «Гранат», т. 4-й, с. 335. Արդի վրաց պատմագիտությունը ջանում է Սամցխեի իսլամադավան և հայ-կաթոլիկ բնակչությունը ներկայացնել որպես վրացիների, սակայն, միաժամանակ ստիպված է ակամայից խոստովանել և ճանաչել նաև նրանց ճնշող մեծամասնության միջավայրում վրաց էթնիկական ինքնագիտակցության իսպառ

ունեին նաև վրաց կառավարության այն հավաստիացումը, որ Ախալցխան օրոշվել է դարձնել «մահմեդական Վրաստանի» վարչական կենտրոնը<sup>38</sup>, որը, սակայն, մնաց լույ դատարկ հայտարարություն: Տեղի վարչակազմը գերազանցապես համարվեց մահմեդականներով, որի գլուխ կարգվեց գավառական կոմիսար Հայդար բեգ Աբաշիձեն<sup>39</sup>: Տեղում գումարվեց նաև մահմեդականներից բաղկացած հեծյալ մի զորախումբ (դիվիզիոն), Բախշի բեգ Մաչաբելու հրամատարությամբ, որը, ի դեպ, Արդահանում 1918 թ.-ին հայկական կոտորածների ակտիվ մասնակիցներից էր: Այսպիսով, Սամցխե-Մեսխեթիայի իսլամադավան բնակչության մի մասը միանգամայն դեմ չէր Վրաստանին միանալու գաղափարին՝ պահանջելով միայն ստեղծել իր համար տանելի գոյատևման պայմաններ: Լարվածությունը հետզհետե տեղի տվեց, և գավառում այնուհետև հաստատվեց, շատ թե քիչ, փոխհարաբերությունների ընդունելի եղանակ:

Սամցխեի հիշյալ իրադարձությունները, անշուշտ, ազդեցություն ունեցան և իրենց ուրույն հետքը թողեցին նաև Աջարիայում ծավալված խմորումների պարագայում: Նրանց համատեքստում զգալի ազդեցություն էր ձեռք բերել նաև Ալի Հայդար Ջափարիձեի

---

բացակայության փաստը: Տե՛ս Джапаридзе А., Месхети: мусульманизация грузин, Тбилиси, 2008. «Դեմոկրատական հանրապետության» կառավարությունը կանգ չառավ այնպիսի մի միջոցի առջև, ինչպիսին ազգաձուլումն էր: Սկսվեց մի արշավ կաթոլիկ հայերին «վրացացնելու» ուղղությամբ: Սամցխեի երկրամասում հայ կաթոլիկների ճնշող մեծամասնությունը չընկրկեց վրացական իշխանությունների այդ ազգայնամուլ ձեռնարկումների առջև և կտրականապես հրաժարվեց ազգափոխվել (տե՛ս Մելքոնյան Ա., Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 318): Մեսխեթիայի մի քանի գյուղերի (Ուղե, Վալե, Արա) բնակիչները մի ժամանակ իրենց հայ էին համարում, սակայն 1919 թ. ընդունեցին վրացական դավանանք և եկեղեցիներում դադարեցրին հայերեն ժամերգությունները: Տե՛ս Ղաֆաղարյան Կ., Ախալցխայի 1917-1918 թթ. ինքնապաշտպանական կոիվները, Բանբեր Հայաստանի արխիվների, 1988, 1, էջ 143:

<sup>38</sup> Учредительное собрание Грузии: Декларация правительства, «Закавказское слово», 23 марта 1919.

<sup>39</sup> «*saxal xo saqmē*» («Համաժողովրդական գործ», Թիֆլիս), 21 Teberveli 1919. Ինչ վերաբերում է գավառական զեմստվային ժողովին, ապա նրա իրավասուների գերակշիռ հատվածը պատկանում էր կառավարամետ ուժերին, քանզի նրանք «երկու վազոն եգիպտացորեն են բաժանում և պայման դնում, որ ձայները իրենց տան»: Տե՛ս Ախալցխա, «Աշխատատր», 1 հուլիսի 1919:

զլխավորած «Բաթումի մարզի համախմբված մահմեդական ցեղերի ազգային խորհուրդ»-ը (կամ՝ «Ջամիեթ իսլամ»): Այդ կառույցին, ի դեպ, Թիֆլիսի իշխանամետ մամուլը վերագրում էր ընդգծված թուրքամետ կողմնորոշում<sup>40</sup>: «Ջամիեթ իսլամ»-ի զլխավոր ատյանն էր Թիֆլիսից առատորեն ֆինանսավորվող Մ. Աբաշիձեի կազմակերպությունը<sup>41</sup>: Նրան հաջողվեց 1919 թ. օգոստոսի 31-ին հրավիրել Բաթումում վրացի մահմեդականների՝ աջարացիների և շավշեթցիների «համագումարը»: Մ. Աբաշիձեի համակիրների կողմից գործադրված եռանդուն ջանքերի շնորհիվ՝ պատվիրակների մի մասը, ի վերջո, հանդես եկավ Վրաստանին միանալու առաջարկի օգտին<sup>42</sup>: Ժողովականները շտապեցին ստեղծել նաև ներկայացուցչական մարմին՝ «մեջլիս», որի գլուխ կարգվեցին Մ. Աբաշիձեն և նրա հավատարիմ զինակիցն ու ընկերը Ռեջեպի բեգ Նիժարաձեն<sup>43</sup>: Թիֆլիս մեկնած «մեջլիս»-ի լիազոր ներկայացուցիչների խումբը՝ հանդիսավոր կերպով վարչապետ Ն. Ն. Ժորդանիային հանձնեց «համագումարի» վրացանպաստ վճիռը<sup>44</sup>: «Աջարիայի իրական ցավոտ զգացմունքներից անտեղյակ են միմիայն Թիֆլիսում, ինչն առաջացել է Վրաստանի Հանրապետությունում մամուլի և կարծիքների յուրահատուկ ազատությունից<sup>45</sup>, - հեզնում էր

---

<sup>40</sup> В Батуме, «Борьба», 13, 25 февраля 1920.

<sup>41</sup> Մ. Աբաշիձեն հաճախ այցելում էր Վրաստանի մայրաքաղաք, հանդիպումներ և բանակցություններ ունենալով բարձրաստիճան պետական այրերի հետ: Այցելություններից մեկի ժամանակ, նա ստացել էր կառավարությունից 1 մլն. ռուբլի նպաստ: St' u Adjara and The British Empire 1918-1921, Second Edition (Selections from The British National Archives on Adjara), London, 2008, doc. 239, p. 620.

<sup>42</sup> Կովկաս՝ Վրացի մահմեդականների համագումարը, «Նոր Աշխատատըր» (Թիֆլիս), 3 սեպտեմբերի 1919: Վրաց պատմագիտությունն աջարացիների «համագումարի» թիֆլիսամետ այդ բանաձևը դիտարկում է իբրև առանցքային նշանակություն ունեցող մի երևույթ և մնում է նրանից կառչված Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության պատմությանը նվիրված ցանկացած շարադրանքի պարագայում: St' u Vachnadze M., Гурули В., История Грузии (XIX-XX века), учебник, Тбилиси, 2004, с. 90. Նաև՝ saqarTvel os istoria. XX saukune. Tbil isi, 2003, g. 70.

<sup>43</sup> Батум, «Борьба», 2 сентября 1919.

<sup>44</sup> Լրատու՝ Աջարացիների ներկայացուցիչները Ն. Ժորդանիայի մօտ, «Նոր Աշխատատըր», 10 սեպտեմբերի 1919:

<sup>45</sup> Վրաստանում տիրող «ազատական» յուրահատուկ բարքերի մասին կիսաբերան խոստովանում էր նաև վրացալեզու մամուլը: «Մեր դեմոկրատական հանրապետութեան մէջ ազատ ապրել չեն կարող այն մարդիկ, որոնք չեն մտածում ու գործում այնպէս,

բրիտանացի մի իրազեկ սպա: Դա լավ հայտնի է Բաթումում, որի բնակչությունը խորապես վիրավորված է Թիֆլիս մեկնած «աջարական պատվիրակությունից»: Այս առաքելությունը Մուսուլմանական Ազգային Խորհրդի (խոսքը «Ջամիեթ իսլամ»-ի մասին է - Բ.Մ.) կողմից որակավորվել է իբրև «կաշառված» և «նողկալի»<sup>46</sup>:

Քեդայի, Խուլոյի և Քոբուլեթիի շրջանները, սակայն, չէին ներկայացված հիշյալ «համագումարում»<sup>47</sup>: Արդվինի պատվիրակները՝ մի քանի աղա, ի դեպ, հրաժարվեցին քվեարկել Վրաստանին միանալու Մ. Աբաշիձեի առաջարկին և ցուցադրաբար լքեցին միջոցառման դահլիճը: «Համագումարի» աշխատանքները շարունակվեցին նաև 1919 թ. սեպտեմբերի 1-ին, երբ ընդունվեց ևս մեկ բանաձև: Չի բացառվում, որ այդ քայլը պահանջվեց իսլամադավան ազգաբնակչության բորբոքված կրքերը հանգստացնելու համար: Ժողովականները այժմ հայցում էին Աջարիայի համար սեփական կառավարության, օրենսդիր մարմնի և դատարանի իրավունք, որոնք պետք է լինեին միանգամայն անկախ ինքնավարության ներքին գործերի մեջ: Որոշվեց բանակցություններ վարել նաև բրիտանացիների հետ, աջարական «մեջլիս»-ին իշխանական բոլոր լծակները երկրամասում հանձնելու հարցի շուրջ<sup>48</sup>: Այս բանաձևը, սակայն, դարձյալ չգոհացրեց «համագումարում»

---

ինչպես պահանջում են կառավարող կուսակցության շահն ու տրամաբանությունը: <...> Վտանգաւոր է խօսելը, վտանգաւոր է գրելը: Գոյութիւն չունի երաշխատրութիւն քաղաքացիական ազատութեան համար»: «saqar Tvel օ» («Սաքարթվել», 1919, N 161) պարբերականից արտատպված հոդվածը տե՛ս Վրաց կեանք՝ ճնշումներ մամուլի և խօսքի ազատութեան դէմ, «Նոր Աշխատար», 5 օգոստոսի 1919:

<sup>46</sup> Տե՛ս Adjara and The British Empire 1918-1921, doc. 27, pp. 157-158.

<sup>47</sup> Թիլքբաց մամուլ, «Նոր Աշխատար», 12 սեպտեմբերի 1919:

<sup>48</sup> Տե՛ս Adjara and The British Empire 1918-1921, doc. 232, p. 606. Այսպիսով, սույն նախագիծը կյանքի կոչելու դեպքում, Աջարիան ձեռք էր բերում իր ենթադրյալ ինքնավարության լեգիտիմությունը: Եվ դա կլինեի Վրաստանի իշխանություններից զատ, ավելի զորեղ ուժի հայեցողությամբ, որի վճիռն այլևս բեկման ենթակա չէր: Վերջին հանգամանքը չէր կարող հաճելի լինել պաշտոնական Թիֆլիսի համար, քանզի աջարացիների սույն երազանքի իրականացման պարագայում՝ սահմանում էր Բաթումում ինքնուրույն իշխանություն, որի հետ, այդուհանդերձ, նա ստիպված կլինեի հաշվի նստել:

իրարանցում առաջ բերած և թիֆլիսամետոներին ձեռնոց նետած աղաներին: Նրանք հանդես եկան հակիրճ հայտարարությամբ, թե «մեր ժողովրդի գլխատր ցանկությունն է՝ սուլթանի հովանաւորութեան տակ անկախութեան [ձեռք բերելն է] և բոլոր դպրոցներում թիրքերէնի դասաւանդումը», ինչպես նաև «մենք անկախութիւն ձեռք բերելուց յետոյ կարող ենք զինակցութիւն կնքել Ադրբէջանի և Վրաստանի միջև, այնպէս, ինչպէս արդէն գոյութիւն ունի այդ երկուսի միջև»<sup>49</sup>: Խոսքը, անշուշտ, 1919 թ. հունիսի 16-ին Թիֆլիսում կնքված վրաց-ադրբէջանական հակառուսական դաշինքի մասին է: Ինչպէս տեսնում ենք, իսլամադավան վրացիների միջավայրում արդէն հասունացել էր նաև սեփական «պետութիւն» ունենալու գաղափարը: Չի բացառված նաև, որ սույն գաղափարը, հավանաբար, միտված էր ձախողված Հարավ-արևմտյան Կովկասի «հանրապետության» վերակենդանացմանը, ինչը դարձյալ թուրք-ադրբէջանական շահերից էր բխում:

«Ջամիէթ իսլամ»-ը չհապաղեց բողոքարկել քաղաքական իր մրցակցի Վրաստանին միանալու միտված համարձակ քայլը և ցասումով արտահայտվեց Մ. Աբաշիձեի խմբի «ստոր» արարքի դէմ: «Դուրս է ամեն մի կասկածից, որ վերոյիշեալ <...> անձինք ամենևին Բաթումի շրջանի մահմեդականների տենչերի արտայայտիչը չեն, - համառ այնդում էին Ա. Հ. Ջափարիձեն և նրա թիմակիցները: Ինքնակոչ կերպով իրենց ժողովրդի ներկայացուցիչներն անանող այդ անձինք գտնուում են Թիֆլիսի վարիչների լայն պրոպագանդայի ուժեղ ազդեցութեան տակ և ոչ պակաս չափով կովկասեան բոների գայթակղման ու ազդեցութեան ենթակայ»: «Ջամիէթ իսլամ»-ը կոչ էր անում երկրամասը ռազմակալած անգլիացի զինվորական կառավարիչներին մարզում հանրաքվե անցկացնել, նրա ճակատագիրը իբր արդար կերպով որոշելու համար: Ըստ Թիֆլիսին ընդդիմադիր ուժերի՝ «Բաթումի շրջանի մահմեդականները երբէք կամովին չեն ցանկանայ իրենց բախտը կապելու, այսպէս կոչւած, վրաց հանրապետութեան հետ, որի ինքնուրույն գոյութիւնն այնքան

---

<sup>49</sup> Մի այլ բողոքագիր, «Նոր Աշխատար», 11 սեպտեմբերի 1919:

պորբլեմատիկ է»<sup>50</sup>: Վերջին հանգամանքը, անշուշտ, լավ էին հասկանում նաև Թիֆլիսում: Ըստ վրացական առաջին հանրապետության կարկառուն գործիչ Ա. Ի. Չխենկելու պնդման՝ Վրաստանի անկախության «de jure» ճանաչման հեռանկարը սերտորեն կապված էր «Բաթումի հարցի» կարգավորման հետ<sup>51</sup>:

Թրքասեր «Սադայը Միլլեթ» («Ազգի ծայն») պարբերականը, որի խմբագիրն էր, ի դեպ, Ադրբեջանի խորհրդարանի անդամ Ահմեդ Համզի բեյը՝ շահարկելով դավանանքի խնդիրը՝ աշխատում էր դեմ առ դեմ հանել մահմեդական և քրիստոնյա վրացիներին: Այդ «լրագիրը» փորձում էր հանդես գալ նաև Բաթումի «սանջակում» բնակվող թուրքերի, լազերի, աբխազների, չերքեզների և հեմշիլների անունից, որոնք իբր արտահայտվել էին Թուրքիայի հետ «վերամիավորվելու» մտքի օգտին: «Մենք մահմեդականներս անպատուօին ենք համարում անձնատուր լինել քրիստոնեայ Վրաստանի կառավարութեանը՝ ազգութիւնը պատուակ բռնելով, և փառք ենք համարում մեռնել մեր կրօնի համար»<sup>52</sup>, - պնդում էր Աջարիայի ինքնակոչ «պաշտպանը»:

Աջարիայի և Սամցխե-Մեսխեթիայի պարագայում ադրբեջանական կառավարության կողմից կազմակերպված դավերը՝ ունեն առանձնակի ուշադրության և լուսաբանման կարիքը: Ինչպես տեսանք, Բաքուն ամեն կերպ ջանում էր ծախողել Սամցխե-Մեսխեթիայի և Բաթումի մարզի ընդգրկումը հարևան Վրաստանի սահմանների մեջ: Այդ միտքը հնչում է բրիտանական զորավար Ու. Մ. Թոմսոնին հղած Ադրբեջանի ԱԳՆ-ի պաշտոնական նամակում<sup>53</sup>: Ադրբեջանի հյուպատոսարանը Բաթումում նմանվել էր իսկական կրետի բույնի, որն առատ ձեռքով ֆինանսավորում էր Բաքուն՝ մարզում հակավրացական քարոզչությունն էլ ավելի ծավալելու և փութացնելու համար<sup>54</sup>: «Դաշնակից» երկրի այս անբարյացակամ,

---

<sup>50</sup> Բաթումի շրջանի մահմեդականների բողոքը, «Նոր Աշխատաւոր», 10 սեպտեմբերի 1919:

<sup>51</sup> Батумский вопрос в Учредительном собрании, «Слово» (Тифлис), 26 марта 1920.

<sup>52</sup> Կովկաս՝ Բողոք «վրաց ազատագրման ընկերութեան» բանաձևի դէմ, «Նոր Աշխատաւոր», 11 սեպտեմբերի 1919:

<sup>53</sup> Попов А., նշվ. աշխ., էջ 258:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 264:

ակնառու կեղծ ու դավադիր պահվածքը, բնականաբար, չափազանց ցասկոտ արծագանք էր գտնում Թիֆլիսում: «Մեր «բարեկամ» Ադրբեջանն՝ այդ «թիվ երկրորդ Թուրքիան» <...> [Աջարիայում] սանձարձակ քարոզչություն է ծավալում Վրաստանի դեմ»<sup>55</sup>, - բարձրաձայնում էին վրացի քաղաքագետները: Վրդովմունքով լցված նման խոսքերը պակաս չէին վրացական ժամանակի մամուլի էջերում<sup>56</sup>: Այս առթիվ իր բողոքի ձայնը չհապաղեց արտահայտել նաև աջարական «մեջլիս»-ը, որը խորը «ցասումի զգացմունքով շեշտում է ադրբեջանական կառավարության անընդունելի անհավատարմությունը Վրաստանի նկատմամբ, ինչը արտահայտվում է Բաթումում նրա պաշտոնական և ոչ պաշտոնական գործակալների աշխատանքի միջոցով»<sup>57</sup>: Այսպիսով, վրացական կողմը չարաչար սխալվեց, երբ վրաց-ադրբեջանական «դաշինքի» շրջանակներում՝ սեփական զինանոցներից առատորեն զենք և զինամթերք մատակարարեց հարևան երկրի բանակին<sup>58</sup>, որը, ի դեպ, նվեր ստացված այդ սպառազինությունը չհապաղեց անմիջապես շրջել Արցախի և Սյունիքի հայ խաղաղ ազգաբնակչության դեմ<sup>59</sup>: Ադրբեջանական պարագլուխների նենգ պահվածքը, պետք է որ «արդարացի» զայրույթ և ցասում առաջացներ վրաց նախարարների մոտ, որոնք աջակից լինելով հայկական տարածքները նվաճելու Բաքվի նպատակասլաց քաղաքականությանը՝ երևակայում էին, թե միայն նրանով իսկ կարող են շահել Ադրբեջանի խոնարհ «հավատարմությունը»:

1920 թ. մարտին տեղի ունեցան Բաթումի քաղաքային ինքնավարության ընտրություններ: Քվեարկության արդյունքում վրացազգի թեկնածուները շահեցին ձայների առավելապես մեծ հատվածը<sup>60</sup>: Սա հզոր ազդակ հանդիսացավ Վրաստանի

---

<sup>55</sup> «saxal xo saqme» («Համաժողովրդական գործ») թերթից արտատպված հոդվածը տե՛ս Продают Батум, «Слово», 21 марта 1920.

<sup>56</sup> Նոյնանուն թերթից արտատպված հոդվածը տե՛ս Опять о Батуме, «Слово», 4 апреля 1920.

<sup>57</sup> «Борьба», 27 апреля 1920.

<sup>58</sup> Волхонский М., Муханов В., По следам Азербайджанской демократической республики, Москва, 2007, с. 141.

<sup>59</sup> События в Азербайджане, «Слово», 4 мая 1920.

<sup>60</sup> Батум, «Слово», 3 марта 1920.

քաղաքական կյանքում Աջարիայի ճակատագրի հանդեպ վրաց հասարակայնության ողջ ուշադրության դարձյալ բևեռացման և Բաթումի հարցը երկրի խորհրդարանում առաջնային դարձնելու համար: Վրաց անվանի գործիչները (Ե. Պ. Գեգեճկորի, Ա. Ի. Չխենկելի և այլք) ջանք չէին խնայում՝ ապացուցելով, թե Բաթումում իրենց ցեղակիցների ձեռք բերած հաջողությունը հավասարազոր է Վրաստանին միանալու օգտին տված քվեին<sup>61</sup>:

«Ջամիեթ իսլամ»-ի և ռուսական ազգային տեղի խորհրդի նախագահները՝ Ա. Հ. Ջափարիձեն և Ռ. Տերմենը՝ համատեղ հայտարարությամբ պահանջում էին Բաթումի մարզի տարածքում ստեղծել առանձին պետություն<sup>62</sup>: Ըստ նրանց տեսակետի, անկախ «Աջարստանը» պետք է բազմազգ կառավարություն և սեփական բանակ ունենար<sup>62</sup>: Այդ նախագիծն աջարական երկրամասի իսլամադավան բնակչության զանգվածներում դրական արձագանք գտավ: Մեծ թվով կողմնակիցներ հիշյալ գաղափարը ձեռք բերեց Քոբուլեթիի շրջանում: Մանավանդ, որ նրա բնակիչները Վրաստանին միանալու պաշտոնական Թիֆլիսի պնդած ծրագրի իրականացմանը կտրականապես դեմ էին: Քոբուլեթցիները անվերապահորեն արտահայտվում էին «Աջարստան» ինքնուրույն պետության կազմավորման օգտին<sup>63</sup>: Նրանց քաջալերում էր նաև երկրամասում գտնվող ֆրանսիական զինվորական առաքելությունը, որի անդամները «դրդում էին աջարացիներին դիմադրել Վրաստանին՝ խոստանալով, որ Ֆրանսիան պաշտպան կկանգնի իրենց անկախությանը»<sup>64</sup>: Միևնույն ժամանակ հայտնի դարձավ Ազգերի Լիգայի բարձր հովանու ներքո Բաթումի նավահանգստին «porto-

---

<sup>61</sup> Учредительное собрание: вопрос о Батуме, «Слово», 4 марта 1920.

\* Բաթումում Աշոտ Մնդոյանի գլխավորությամբ գործում էր նաև հայոց ազգային խորհուրդը: Ջբաղվելով հայկական սուկ ներհամայնքային խնդիրներով, նրա անդամները աշխատում էին հեռու մնալ «մեծ» քաղաքականությունից:

<sup>62</sup> Adjara and the British Empire 1918-1921, doc. 149, pp. 440-442.

<sup>63</sup> В Батуме и Аджарии, «Слово», 16 марта 1920.

<sup>64</sup> Adjara and the British Empire 1918-1921, doc. 250, p. 674.



franco» միջազգային կարգավիճակ տալու մասին Անտանտի ԳԽ-ի 1920 թ. փետրվարի 24-ի որոշումը<sup>65</sup>:

Թիֆլիսը, սակայն, ուշիուշով հետևում էր Աջարիայում առաջ եկող խմորումներին: Վրաց կառավարության անդամները պարբերաբար կոչ էին անում երկրամասի ազգաբնակչությանը զգոն լինել և հեռու մնալ տարբեր տեսակի արկածախնդիր ծրագրերից: ԱԳ նախարար Ե. Պ. Գեգեճկորին առավել համարձակներին հիշեցնում էր, որ «Վրաստանին բավական է փակել իր սահմանները, որ Աջարստան կոչված «պետությունից» մնա միայն անախորժ հիշողություն»<sup>66</sup>:

Ադրբեջանի ԱԳ նախարար Ֆ. Խան Խոյսկին, իր հերթին, անմասն չմնաց Բաթումի ապագա ճակատագրի վճռման հարցում: Նա ևս պաշտոնապես կողմ արտահայտվեց Անտանտի ԳԽ-ի նախաձեռնությանը, քանզի մինչ այդ էլ Բաքուն բարձրաձայն բողոքարկում էր և ոչ մի պարագայում չէր ուզում համակերպվել Բաթումը և Ախալցխան<sup>67</sup> Վրաստանի կազմում տեսնելու մտքի հետ, ինչը տարավ վրաց-ադրբեջանական դիվանագիտական սուր բախման: Ֆ. Խան Խոյսկին պահանջում էր նաև Բաթումի նավահանգստի նկատմամբ իր երկրի համար սահմանել բացառիկ իրավունքներ, ինչը նա հիմնավորում էր նավթամուղը իբր անխափան սպասարկելու անհրաժեշտությամբ: Ըստ այդ «անվանի» պանթյուրքիստական գործչի՝ Բաթումը «չի կարող լինել որևէ մեկ ուժի բացառիկ և անվերապահ տիրության մեջ»<sup>68</sup>: Բացի այդ, Ադրբեջանի նախկին վարչապետը նաև պնդում էր, թե «Բաթումի տնտեսական ապագան պետք է որոշվի քաղաքական նրա պատկանելությանը զատ»<sup>69</sup>: Ադրբեջանցի ոչ անհայտ բարձրաստիճան այս քաղաքագետի

<sup>65</sup> Дипломатическая переписка по батумскому вопросу, «Слово», 23 марта 1920. Ըստ բարձրաստիճան դիվանագետ Ջ. Դ. Ավալիշվիլու վկայության՝ չէր բացառվում նաև ապագայում Աջարիայի հյուսիս-արևմտյան հատվածը Վրաստանին հանձնելու տարբերակը, իսկ Արդվինի շրջանը՝ Հայաստանին կցելու հնարավորությունը: Տե՛ս Ավալով Յ., Независимость Грузии в международной политике (1918-1921 гг.), Париж, 1924, с. 257.

<sup>66</sup> Батумский вопрос в Учредительном собрании, «Слово», 24 марта 1920.

<sup>67</sup> Տե՛ս Азербейджан и Грузия об Ахалцихском уезде, «Закавказское слово», 15 марта 1919.

<sup>68</sup> Ф.-х. Хойский о Батуме, «Слово», 4 марта 1920.

<sup>69</sup> Министр иностранных дел Азербайджана о Батуме, «Борьба», 4 марта 1920.

քողարկված և հեռահար նպատակներ ունեցող սույն հայտարարությունները Թիֆլիսում միանշանակ ընկալվեցին որպես հակավրացական: «Ադրբեջանի կառավարությունը չի խորհում Բաթումն իբրև վրացական նավահանգիստ, [հետևաբար] պարզ է, որ Բաթումի հարցում՝ նրա քաղաքականությունը թշնամական է վրաց ժողովրդի շահերին և ձգտումների»<sup>70</sup>, - վրդովմուքով էր արտահայտվում Բաքվի հասցեին վրաց պաշտոնական մամուլը: Բացի այդ, հարևան Խոփայում քեմալական զորք էր կուտակված, որոնք անհամբեր սպասում էին «երանելի» այն օրվան, երբ բրիտանացիները վերջնականապես կհեռանան Բաթումից, պատրաստ լինելով ժամ առաջ զինագրավել քաղաքը<sup>71</sup>:

Այսպիսով, վրաց կառավարության կենսական շահերի համար այս երկրամասում, կարծես, մի անելանելի, խճճված դրություն էր ստեղծվել: Սակայն նրա անդամները որոշեցին չհապաղել և ճակատագրական այս պահին վճռական կեցվածք հանդես բերեցին: Կառավարությունը 1920 թ. մարտի 10-ին հրահանգեց իրեն ենթակա զինուժին երեք ուղղություններով իսկույն մուտք գործել Բաթումի մարզի տարածքը<sup>72</sup>: Անգլիացիները, սակայն, վարպետորեն օգտվեցին աջարացիների միջավայրում լայն տարածում ստացած կենտրոնախոյս տրամադրություններից և դարձյալ շահարկեցին «անկախ Աջարստանի» կարգախոսը: Այդ խորամանկ քայլը հնարավորություն տվեց «ըմբոստ աջարացիներից ստեղծել բավականաչափ պատկառելի Քոբուլթթիի ռազմաճակատը, ինչն իրենց օգտին անհապաղ գործադրեցին թուրք ազգայնականները և աջարացիների շարքերը համալրվեցին թուրքական բազմաթիվ սպաներով»<sup>73</sup>: Վրացական զինվորական շարասյունը, որը գրեթե հասել էր մարզկենտրոնի մատույցներին՝ ետ կանչվեց:

Որոշակի բանակցություններից հետո<sup>74</sup>, ձեռք բերվեց վրաց-անգլիական ոչ պաշտոնական փոխհամաձայնություն, ըստ որի

---

<sup>70</sup> Редакционная, «Борьба», 5 марта 1920.

<sup>71</sup> Батуму грозит анархия, «Борьба», 22 февраля 1920.

<sup>72</sup> Adjara and the British Empire 1918-1921, doc. 164, p. 483.

<sup>73</sup> «Жизнь национальностей» (Москва), 1 октября 1920.

<sup>74</sup> St'u Adjara and the British Empire 1918-1921, doc. 165-169, pp. 484-494.

ճանաչվեց վրացական զինուժի գտնվելու փաստը վերին Աջարիայի (Խուլո) և Շավշեթիայի (Արտանուջ) շրջաններում<sup>75</sup>, իսկ մայիս ամսին նրանց գումարվեց նաև Արդվինը<sup>76</sup>: Բաթումի ուղղությամբ ամենակարճ ճանապարհին անցնում էր Քոբուլեթիի տարածքով: Սակայն, երբ վրաց զորքերը 1920 թ. մայիսին կրկին հատեցին այս ըմբոստ շրջանի սահմանը<sup>77</sup>, նրանք դարձյալ արժանացան ոչ հյուրասեր ընդունելության: Քոբուլեթիի մզկիթում շատ արագ գումարվեց հոժ բազմություն, որը բարկացած բարձրաձայնել էր Բաթումի մարզը Վրաստանին բռնակցելու վրաց կառավարության անօրեն ձգտման դեմ: «Մահմեդական Վրաստանի ազատագրման կոմիտե»-ի տեղական հատվածի թիֆլիսամետ անդամները, որոնք պատրաստ էին աջակցել ներխուժած վրացական զինուժին, ձերբակալվեցին կամ էլ վտարվեցին շրջանից<sup>78</sup>: Փորձելով հեռու մնալ Վրաստանից, նրա տեղի հակառակորդները դիմեցին ակտիվ և վճռական քայլերի: Վրաց զորքերի և աջարացիների միջև 1920 թ. մայիսի 11-16-ին տեղի ունեցան զինված ընդհարումներ: Այդ ընթացքում միջադեպ եղավ նաև բրիտանական զորավար Ջ. Միլնի հետ, որն իր սպայակույտով հայտնվել էր վրացական հրետանու կրակի տակ: Պաշտոնական Թիֆլիսը համառորեն անտեսեց իր զինուժը Քոբուլեթիից հեռացնելու մասին բրիտանացիների պահանջը<sup>79</sup>: Սակայն, ոտքի ելած քոբուլեթցիները վրաց զորագնդին դարձյալ ստիպեցին անփառունակ լքել իրենց շրջանի տարածքը: Նրանց հաջողությանը, հավանաբար, նպաստեց վրաց-ադրբեջանական սահմանագլխին կատարած ռուսական «կարմիր» զորքերի հարձակումը<sup>80</sup>, ինչպես նաև Հարավային Օսիայում միաժամանակ բռնկված ապստամբությունը:

Դեռ 1919 թ.-ի սեպտեմբերին բրիտանական ստորաբաժանումները հեռացան Թիֆլիսից: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո Բաթումի նավահանգիստը, նավթի արտահանման կասեցման պատճառով,

---

<sup>75</sup> «er-Toba» («Միասնություն»), 21 marti 1920.

<sup>76</sup> Оперативная сводка генерального штаба, «Слово», 6 мая 1920.

<sup>77</sup> Батумская область: вступление войск Грузии, «Слово», 4 мая 1920.

<sup>78</sup> «Голос труда» (Батум), 4 мая 1920.

<sup>79</sup> Adjara and the British Empire 1918-1921, doc. 181, 187, pp. 509, 515.

<sup>80</sup> Редакционная, «Борьба», 8 июня 1920.

կորցրեց իր նախկին կարևորությունը Միացյալ Թագավորության համար<sup>81</sup>: 1920 թ. հուլիսի 7-ին բրիտանացիները, ինչպես հայտնի է, զիջեցին նրա վերահսկման գործը վրացական կառավարությանը: Վերջինիս օգտին հիմնահարցը վճռվեց նաև Մոսկվայում 1920 թ. մայիսի 7-ին կնքված ռուս-վրացական պայմանագրի շնորհիվ, որը ճանաչեց Բաթումը որպես Վրաստանին ենթակա շրջան: Պետք է խոստովանել նաև, որ Կրեմլը Բաթումի հարցում երկերեսանի խաղ էր տանում: Քեմալականների հետ բանակցելիս Գ. Վ. Չիչերինը, այդուհանդերձ, շարունակում էր բնութագրել Բաթումի մարզի խնդիրը որպես վիճելի և, ըստ ԱԳ ժողովոմի, նրա ապագա ճակատագիրը իբր դեռ պետք է որոշվեր հանրաքվեի միջոցով<sup>82</sup>:

Բաթումում, այնուամենայնիվ, հաստատվեց վրացական վարչակազմ, իսկ «մահմեդական Վրաստանի» ինքնավարության հիմնահարցի լուծումն «առժամանակ» հետաձգվեց և, ըստ հավաստիացումների, ապագայում ևս պետք է կարգավորվեր համապետական օրենսդրությամբ<sup>83</sup>: Աջարիայի մահմեդական ազգաբնակչությունը, զգալով իրեն խաբված, սկսեց ցուցաբերել անհնազանդություն նորանշանակ վրաց իշխանություններին, ընդհուպ մինչև զինված դիմադրության դեպքերը<sup>84</sup>: Բեգերը, որոնց մինչ այդ պատկանում էին տեղական իշխանության իրական լծակները, թշնամաբար դիմավորեցին գավառական կոմիսարների և այլ վրաց հանձնակատարների նշանակման մասին որոշումն, ինչը դարձյալ նպաստեց մթնոլորտի շիկացմանը: Ըստ լրատվամիջոցների՝ «Աջարիայում հայտնվել են բազմաթիվ թուրք սպաներ, որոնք բնակչությանն առատորեն մատակարարում են զենքով <...>, բացի այդ, նրանք ամբողջ եռանդով ջանում են ամեն տեսակի վրացականության հանդեպ առաջացնել չարություն և ատելություն աջարացիների մեջ»<sup>85</sup>: Հակավրացական պայքար մղող զորախմբերը հայտնի էին իբրև «Սադայը Միլլեթ» շարժում, որի գլուխ էր կանգնած

---

<sup>81</sup> Lang D.M., A modern history of Georgia, London, 1962, p. 222.

<sup>82</sup> «Правда» (Москва), 9 июня 1920.

<sup>83</sup> Adjara and the British Empire 1918-1921, doc. 268, p. 706.

<sup>84</sup> Նույն տեղում, վավ. 262, էջ 693:

<sup>85</sup> В Аджарии, «Борьба», 9 июня 1920.

իրեն «Աջարստանի գլխավոր հրամանատար» հռչակած ոմն Մամեդ Քեսկին զադեն<sup>86</sup>: 1920 թ. ամռանը թուրք-աջարական «չետաները» մեկուսացրին Խուլո բարձրավայր ավանի վրացական կայազորը: Ընդվզողները գրավեցին նաև ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Գողերձի լեռնանցքը<sup>87</sup>:

Վրաց կառավարությունը որոշել էր ամուր ոտքով կանգնել Աջարիայում և լրացուցիչ զորք երկրամաս մտցնելով, իսկույն տվեց բնակչությանը զանգվածաբար զինաթափելու հրահանգը: Բաթումիին հարակից գյուղերում (Խուցուբանի, Կոխի, Աչկվիսթանի, Յիսեմլովակե, Չախաթի, Խինո, Տղեմալ-Քվերե և այլն), որոնք գրեթե առանձին պետության էին նմանվել<sup>88</sup>, կառավարական զորքերը մի շարք ընդհարումներից հետո «կարգ ու անդորր հաստատեցին»<sup>89</sup>: Բացի այդ, անհնազանդ բնակավայրերը զինվորականները տուգանում և նրանցից պատանդ էին վերցնում<sup>90</sup>: Փորձելով կանխել Թիֆլիսի համար ոչ նպաստավոր հետագա զարգացումները աջարական երկրամասում՝ զորավար Գ. Ի. Կվինիտաձեն դիմել էր կոշտ և վճռական քայլերի: Նրա կարգադրությամբ ամենուրեք մի թռուցիկ էր փակցվել, որը խոստանում էր մահապատժի ենթարկել բոլոր նրանց, ովքեր կդիմադրեն զորքին: Ըմբոստների մերձավորները, ի ցույց ամենքի, ահ ու սարսափն էլ ավելի տարածելու համար, պետք է անողորք կերպով վտարվեին Բաթումի մարզից, կորցնելով իրենց ողջ ունեցվածքը պետական գանձարանի օգտին<sup>91</sup>: Նման ռազմատենչ վերաբերմունքը, բնականաբար, չէր ավելացնում աջակիցների թիվը վրաց կառավարությանն աջարացիների միջավայրում:

Ինչպես տեսնում ենք, վրացական կառավարությունը ռազմակալման կոշտ ռեժիմ էր մտցրել Աջարիայում, որը զգալի տառապանք էր պատճառում իսլամադավան ողջ բնակչությանը: Դրա հետևանքով աջարական երկրամասի տրամադրությունները անկայուն

---

<sup>86</sup> «Борьба», 8 июня 1920.

<sup>87</sup> Оперативная сводка генерального штаба, «Слово», 10 июня 1920.

<sup>88</sup> St'u Борьба за победу..., док. 209.

<sup>89</sup> Adjara and the British Empire 1918-1921, doc. 262, p. 693.

<sup>90</sup> Положение в Батумском округе, «Борьба», 13 октября 1920.

<sup>91</sup> Kazemzadeh F., The struggle for Transcaucasia (1917-1921), New York, Oxford, 1951, pp. 202-203.

էին, չափազանց լարված և շատ մոտ համատարած ապստամբությանը: Վրաց մահմեդականների միջավայրում, հետևաբար, դարձյալ լայն տարածում ստացավ ինքնավարության մասին կարգախոսը, ինչպես նաև վերսկսվեց ուժեղ ձգողությունը դեպի Թուրքիա<sup>92</sup>:

Ամփոփելով քննության արդյունքները՝ նշենք, որ «թուրքական գործոնը», ինչպես նաև տեղական վարչակազմի անկատար աշխատանքը և ապիկարությունը, մեծապես խանգարում ու խոչընդոտում էին «մահմեդական Վրաստանի» շրջաններում կայուն իրավիճակ հաստատելուն միտված վրաց կենտրոնական կառավարության ջանքերին:

1920 թ. աշնանն աջարական երկրամաս էր ժամանել երկրագործության փոխնախարար Պետրե Գելեյվիլին: Սույն այցելության մասին նա հուսաբեկ բովանդակությամբ մի տեղեկություն է թողել, որի մեջ մասնավորապես ասված է, թե «այս մարզում, բացառությամբ [թերևս] Բաթումի, մենք ձեռք չենք բերել ոչ մի նոր կողմնակից և, նույնիսկ, նրանց վանեցինք, ովքեր [մինչ այժմ էլ] մեզ հետ էին <...> մեր օգտին կողմնորոշում ունեցող տաս հոգի էլ չես հանդիպի ամբողջ մարզում <...> ժողովուրդը պարզապես բոյկոտում է մեր վարչակազմը <...> այստեղ հաղթանակ են տոնում թուրք գործակալները: <...> Առաջինն, ինչ դուք այստեղ կլսեք՝ դա ինքնավարություն [բառն է]: Մեծ թե՛ փոքր, գյուղացի թե՛ բեզ, գիտակ թե՛ տգետ, ձեր երեսին իսկույն ինքնավարության մասին [խոսքն են] նետում: Նրանով կսկսեն և նրանով էլ կավարտեն զրույցը ձեզ հետ»<sup>93</sup>: Աջարացիների պահանջը կիսում էր նաև վրաց հանրության մի մասը, որն առաջարկում էր «անհապաղ հրապարակել մահմեդական

---

<sup>92</sup> Ըստ ժամանակի իրազեկ մարդկանց «в Аджарском крае среди грузин-мусульман очень сильное тяготение к Турции и стремление к автономии. Поэтому настроение Аджарского края очень беспокойно, близкое к восстанию», ինչպես նաև «в Аджарии в последнее время создалось кошмарное положение - состояние гражданской войны». Տե՛ս Мещеряков Н., В меньшевистском раю (Из впечатлений поездки в Грузию), Москва, 1921, с. 44-45. Նաև՝ Махарадзе Ф., Диктатура меньшевистской партии в Грузии, Москва, 1921, с. 74.

<sup>93</sup> Տե՛ս Борьба за победу..., док. 209.

Վրաստանի ինքնավարության մասին ակտը և ինքնավար իշխանությունն առժամանակ այնտեղ հանձնել մեջլիսին»<sup>94</sup>:

Աջարիայի մահմեդականները, անշուշտ, աչքի առաջ ունեին նաև ՆԳ նախարար Ն.Վ. Ռամիշվիլու բարձրաձայն պնդումը, թե «Ախալցխը ստացել է այդ ինքնավարությունը, դրա մասին մենք վճռականապես հայտնել ենք ժողովրդին»<sup>95</sup>: Երկրի խորհրդարանի բարձր ամբիոնից՝ ի ցույց ամենքի կատարած այս ամպագոգոտ հայտարարությունը, սակայն, չստացավ իր օրենսդրական շարունակությունը և շուտով մոռացության մատնվեց Թիֆլիսում, նախ և առաջ քաղաքական իշխող ընտրախավի կողմից: Իսլամադավան ցեղակիցների ենթադրյալ ինքնավարության հարցում վրաց նախարարները առաջնորդվում էին գլխավորապես մարտավարական նկատառումներով: Հետագա զարգացումները բացահայտեցին, որ այդ գաղափարը իրականում չէր մտնում հեռու գնացող նրանց ռազմավարական հաշվարկների մեջ:

1921 թ. փետրվարին Վրաստանի Սահմանադիր ժողովը վավերացրեց երկրի առաջին՝ «ղեմոկրատական» սահմանադրությունը: Այն ամրագրեց «ունիտար պետության» գաղափարը<sup>96</sup>: Դրա հետ մեկտեղ երկրի յուրաքանչյուր գավառ օժտվում էր ինքնակառավարման իրավունքով, հետևաբար վերաձվելով տեղական («զեմստվային») ինքնավարության: Ըստ վրաց պետական այրերի, ազգային փոքրամասնությունների իրավունքները պիտի յուրացվեին տեղական մարմինների մակարդակով: Ընտրովի գավառային խորհրդի («սակրեբուլո») գոյության հանգամանքը՝ նրանց

---

<sup>94</sup> Տե՛ս «mi wa» («Հող», Թիֆլիս), 4 noemberi 1920. Խորհրդարանի «Սխիվի» (Ճառագայթ) խմբակցության անդամները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որի մեջ, ի թիվս այլ պահանջների, նրանք նշում էին, որ «ծայրավայրերի ժողովուրդների (մահմեդական վրացիների, արխազների և այլն) կենսական շահերը պետք է բաարարուն և պետք է ապահովվի փոքրամասնությունների իրաական դրությունը»: Տե՛ս Պառակտում Վրաստանի սոց.-դեմոկրատ կուսակցութեան մէջ, «Մշակ», 15 փետրվարի 1921:

<sup>95</sup> Чрезвычайное заседание Парламента Грузии, «Закавказское слово», 22 февраля 1919.

<sup>96</sup> Տե՛ս Silogava V. & Shengelia K., History of Georgia: from the ancient times through the «Rose revolution», Tbilisi, 2007, p. 222.

կողմից արդեն ինքնավարությանը հավասարազոր էր դիտվում<sup>97</sup>: Այս ամենն արվում էր նաև երկրի այլ ազգություններին մոլորեցնելու և նրանց նկատմամբ առավել շահեկան վիճակում հայտնվելու նպատակով: Վրաց կառավարական շրջանակները հետևողականորեն երբեք չեն պաշտպանել ինքնավարության սկզբունքը և այդ հարցում խուսանավող քայլերով միշտ փորձել են հնարավորինս ավելի շատ սահմանափակել երկրի այլ ազգությունների իրավունքները: Իրականությունն այն է, որ սոցիալիստական պատմուճան հագած Վրաստանի «դեմոկրատական» առաջնորդները ինքնավարության սկզբունքի մասին, այդ թվում նաև մշակութային, խոսում էին միմիայն քաղաքական դաշտում ժողովրդավար երևալու և երկրի մյուս ազգությունների հետ առերես համերաշխվելու նպատակով: Ծայրագավառների ինքնավարության մասին վրաց նախարարների բերանով նախապես հնչեցրած «փարթամ» խոստումները՝ ունեին լոկ դատարկ խայծի նշանակություն: Դրա փոխարեն, այդուհանդերձ, ազգային փոքրամասնություններին առաջարկվեց բավարարվել միայն լայն ժողովրդավարացման մասին «ցնցող» և «շլացուցիչ» կարգախոսով<sup>98</sup>: Ինչևէ, «դեմոկրատական հանրապետության»

---

<sup>97</sup> Ինչպես դա աշխատեց, օրինակ, Ջավախքի պարագայում՝ կարելի է դատել վարչակազմի անվանացանկից. «սակրեբուլո»-ի նախագահ՝ Փաշուլիա, գործադիր մարմնի ղեկավար՝ Վ. Ռամիշվիլի, հաշտարար դատավոր՝ Ս. Լ. Փիրալիշվիլի: Տե՛ս Ахалкалак, «Борьба», 31 августа 1920.

<sup>98</sup> Հարցի կապակցությամբ, ի դեպ, չափազանց դիպուկ գնահատական է հնչել ժամանակի մամուլում: Թիֆլիսահայ օրաթերթի էջերում մի իրազեկ անձնավորություն վրաց ընտրախափի մասին գրում էր, որ «ինքնահաասն ու ինքնագոհ, նրանք կարծում են, որ Աստծու ողորմութեամբ Վրաստանը մի այնպիսի Արկադիա է, որ ոչ մի քաղաքացի կամ ազգութիւն ոչինչ պահանջելու իրաւունք չունի: Մոռանալով [ցարական Ռուսաստանի դեմ] իրենց անցեալ պայքարի ամենատարրական լոզունգները, նրանք յամառօրէն պնդում են, որ մեր երկրում գոյութիւն ունեն միայն այն իրաւունքները, որոնք շնորհած են մենշևկի մինիստրներից: Այդ մինիստրական հայեցողութիւնից դուրս ամեն մի պահանջ ու իրաւունք պետական դաւաճանութեան համագօր է յայտարարած» (տե՛ս Ազատ բիւրոկրատիզմ, «Նոր Աշխատատը», 3 օգոստոսի 1919): Շատ ավելի անհրապույր գնահատական է տվել, սակայն, մի անգլիացի լրագրող, որը շրջայցով էր ժամանել «դեմոկրատական հանրապետություն»: «Ազատ և անկախ սոցիալ-դեմոկրատական Վրաստանի պետությունը, - գրում է նա, - կմնա ընդմիշտ իմ հիշողության մեջ, իբրև իմպերիալիստական «փոքր ազգի» դասական օրինակ: Տարածքների զավթումը դրսում, թե բյուրոկրատական բռնապետությունը ներսում՝ միևնույն է, նրա շովինիզմը որևէ



գոյության ժամանակ Վրաստանում ազգային հարցի լուսաբանումը, անշուշտ, պահանջում է կատարել շատ ավելի լայն ընդգրկում ունեցող և համապարփակ ուսումնասիրություն, ինչը չի ներում, բնականաբար, սույն հոդվածի ձևաչափը:

Այսպիսով՝ հանրագումարի բերելով վերը շարադրած նյութը, կարելի է հանգել այն եզրակացության, որ.

- «մահմեդական Վրաստան» կոչված շրջաններում բախվում էին տարատեսակ և տարամերժ կողմնորոշումներ, որոնց հակադիր քաղաքական բևեռներում էին գտնվում և անզիջում պայքար էին մղում միմիանց դեմ. վրացամետները, թրքասերները և այդ շրջաններում անջատ պետության կազմավորման գաղափարի կողմնակիցները,

- «մահմեդական Վրաստանը» բուֆերային պետության վերածելու գաղափարը, սակայն, ձախողվեց, քանզի արտաքին ազդեցիկ ուժերից դրան հակված էր, թերևս, միմիայն Ֆրանսիան, իսկ Թուրքիայի համար դա միայն հարմար պատրվակ էր ծառայում, պետք եղած ժամանակ տարածքը գրավելու համար: Թուրքիայի հետ ձեռք ձեռքի տված Ադրբեջանի կառավարությունն այստեղ նույնպես գործում էր Վրաստանի կենսական շահերի դեմ,

- վրաց քաղաքական վերնախավը, կուսակցական պատկանելությունից զատ, շահարկելով միասնական պատմական անցյալը՝ վճռական էր տրամադրված Աջարիան և Սամցխե-Մեսխեթիան իր հարազատ երկրի կազմում տեսնելու ցանկության մեջ: Պաշտոնական Թիֆլիսը հիշյալ շրջանների պետական ենթակայության հարցը որոշելիս՝ հարկ եղած պարագայում դիմում էր զինված ուժին և չէր խորշում նաև բռնի ճնշումներից,

- Աջարիան և Սամցխե-Մեսխեթիան բռնակցվեցին Վրաստանին, առանց ճշտելու այդ շրջանների ազգաբնակչության իրական կամքը: Վրաց կառավարությունը, փաստորեն, պարտադրված էր նաև կոշտ և կոպիտ քաղաքականություն դրսևորել «մահմեդական Վրաստանի» ճակատագրի վճռման հարցում, քանզի հակառակ պարագայում բացվում էր նրա՝ Թուրքիայի ձեռքն հավերժ անցնելու իրական հեռանկարը,

---

սահման չի ճանաչում»: St' u Bechhofer C.E., In Denikin's Russia and the Caucasus, 1919-1920, London, 1921, p. 14.

- վրաց մեծամասնության թվային գերակշռությունն այնքան վճռորոշ չէր, որպեսզի նրան թույլ տար ամբողջովին և մշտապես անտեսել երկրի ազգային ու կրոնական փոքրամասնությունների օրինական ձգտումները: Պաշտոնական Թիֆլիսը տարբեր տեսակի մեքենայություններով և խուսանավող հնարքներով ամեն կերպ ջանում էր թմրեցնել նրանց զգոնությունը: Ընկնելով նեղ կացության մեջ, վրաց նախարարները, հետևաբար, չէին խորշում կեղծ խոստումներ հնչեցնել նաև Աջարիայի և Սամցխե-Մեսխեթիայի «լիակատար» ինքնավարության մասին: Այս ամենն արվում էր սույն շրջանների իսլամադավան ազգաբնակչությանը մոլորեցնելու, նրա համակրանքը շահելու և, այնուհետև, նույնադավան Թուրքիայից հեռացնելու համար: Այսպիսով՝ Սամցխե-Մեսխեթիան օրենսդրորեն չստացավ խոստացված, թեկուզ և անվանական «ինքնավարությունը», ինչպես դա եղավ, թերևս, Աջարիայի<sup>99</sup> պարագայում:

---

<sup>99</sup> Ինչպես հայտնի է, Մոսկվայում 1921 թ. մարտին կնքված ռուս-թուրքական պայմանագիրը նախատեսում էր Աջարիայի տարածքում վարչական (տեղական) ինքնավարության կազմավորումը: ՌԽՖՍՀ-ի կառավարությունը պատասխանատվություն էր ստանձնում՝ ապահովելու ինքնավարության մահմեդական ազգաբնակչության կրոնական իրավունքները (տե՛ս Документы внешней политики СССР, т. 3-й, Москва, 1959, с. 598): Այդ օրերին դադարեց գոյություն ունենալ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը: Հավատարիմ մնալով իր գիշատիչ էությանը և օգտվելով Վրաստանի ծանր կացությունից, թուրքական կողմն ընթացք տվեց իր նախօրոք մշակած զավթողական ծրագրերին: Թուրք պարագլուխները, տեսնելով, որ Վրաստանը կոչ է գնում ՌԽՖՍՀ-ին, վեջին պահին որոշեցին ճանկել մի խոշոր պատահ: Քյազըմ Քարաբեքիրի բանակի շտաբը հայտարարեց Աջարիան և Սամցխեն բռնազավթելու մասին («Вступление в Батум турецкого отряда местным мусульманским населением было встречено с большим энтузиазмом». տե՛ս Шафир Я. Тайны меньшевистского царства, Тифлис, 1921, с. 125): Վրացի զինվորականները դիմադրություն կազմակերպեցին՝ թուրք զավթիչների արկածախնդրությունը կանխելու համար: Բաթումի ամրոցում և փողոցներում բռնկվեցին թեժ մարտեր: Թուրքերը ընկրկեցին և հեռացան քաղաքից: Թուրքական ագրեսիայի հետևանքով երկրամասում առաջացած անկայուն և երկիմաստ կացությունը՝ որոշ ժամանակ դեռ շարունակվում էր («Кемалисты оставили город, но еще находятся <...> в Аджарии, они <...> призывают мусульманское население Аджарии вооружиться и не пускать сюда грузин. Они говорили массам, что автономия дарована аджарцам Кемалем <...> кемалисты скоро займут Батум обратно». Տե՛ս Борьба за победу..., док. 269.): Խորհրդային Ռուսաստանի գործոնը, սակայն, հետագա պայքարի ընթացքն ի վերջո վճեց Վրաստանի օգտին: Աջարիայի ինքնավար հանրապետության ստեղծման մասին որոշումը՝ գործնականում կայացրեց

**THE PROBLEM OF ADJARA AND SAMTSKHE-MESKHETI IN THE CONTEXT  
POLICY OF INTEGRATION OF THE GOVERNMENT OF GEORGIA (1918-1921)**

Against a background of a chaotic disintegration of the Russian Empire, the Georgian political elite launched a determined and uncompromising struggle for integration with their country of Adjara and Samtskhe-Meskheti. The Georgian side has always believed, above all, of the famous thesis of its «indisputable» historical rights to these territories. Among some of the Muslim Georgians were also extended the ideas of creating a buffer state here, in particular, independent Adjaristan. The predominant Muslim population in these border areas was in the orbit of the interests of the neighboring Ottoman Empire. Adjara and Samtskhe-Meskheti became the scene of the sharp battles between the militant pan-Islamism and gaining power pan-Georgian doctrine. Turkish agents spared no effort and resources to prevent the integration of Adjara and Samtskhe-Meskheti in Georgia. Against the interests and intentions of the official Tbilisi in these regions acted as the government of Azerbaijan. Wish to neutralize the machinations of the Turkish and Azeri intrigues; the Georgian government has resorted to the direct occupation of the disputed Adjara and Samtskhe-Meskheti. These regions were annexed to Georgia brute force of arms, without finding out the true intentions of the local population. Wish to confuse and appease the indignant Ajarians and Meskhetians, Georgian ministers not keep away from giving false promises of autonomy. Thus, Tbilisi tried to win over the local Muslim population and detach them from the same faith in Turkey. The leaders of the Georgian Democratic Republic had never been strong supporters of the autonomy of Adjara and Samtskhe-Meskheti and talked about it only to the external rapprochement and solidarity with their Muslim population.

---

արդեն Վրացիեղկումը՝ 1921 թ. հուլիսի 16-ին: Վրաց մտավորականությունը, որի ձեռքերում են մշտապես գտնվել իր ժողովրդի հասարակական-քաղաքական տրամադրությունների վրա ազդելու հզոր լծակները, այդպես էլ չհամակերպվեց Վրաստանում «խորհրդային» ինքնավարությունների գոյության փաստի հետ: Քննադատական նետերի թիրախում էր հայտնվել նաև օջարական ինքնավարությունը («Существование отдельной Аджарской автономной республики <...> является анахронизмом, ибо нет отдельной аджарской нации, культуры, языка». Տե՛ս Մენტешավիլի Ա., Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии (1917-1921 гг.), Тбилиси, 1987, с. 195):

Georgian historical thought is prone to easy generalizations, simplifying and leveling of the intricate political situation that prevailed in some time around the question of the nationality of Adjara and Samtskhe-Meskheti. Georgian historians without adequate theoretical and methodological basis, with some a priori, are doing their best to prove that a sufficiently heterogeneous population of these regions only dreams of «the reunification with his native land of Georgia».

This article was written on the basis of historical evidence, archival material and a wide range of primary sources, published by the periodical press in the investigated period of time, much of which is introduced into scientific circulation for the first time.

## ԱՆՈՒՇ ՍՏԱՄԲՈԼՅԱՆ

### **ԲԱՆԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՔՈՐՈՇՈՒՄԸ ՈՐՊԵՍ 1978-1979 ԹԹ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԽՈՐՈՇՈՂ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ. ՀԵՏԱՀԱՅԱՑ ԴԻՏԱՐԿՈՒՄ**

1978 թ. դեկտեմբերի 31-ին պաշտոնապես հայտարարվեց, որ Շահփուր Բախթիարն ընդունել է կառավարություն կազմելու շահի առաջարկը, և շահը պետք է երկրից մեկնի՝ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով<sup>1</sup>: 1979 թ. հունվարի 3-ին Սպիտակ տանը Ազգային անվտանգության խորհրդի նիստում բանակի գեներալ Ազհարիի՝ վարչապետի պաշտոնից հրաժարականից հետո Իրանում ճգնաժամի քննարկման ժամանակ Միացյալ Նահանգների պաշտպանության փոխնախարար Չ. Դունքանն առաջարկեց Եվրոպայում ՆԱՏՕ-ի միացյալ ռազմական ուժերի փոխհրամանատար գեներալ Ռ. Հայզերին գործուղել Իրան՝ բանակի հրամանատարների հետ արդեն իսկ ունեցած կապերն ամրապնդելու, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից իրանական բանակին ցուցաբերվող աջակցության շարունակումը հավաստելու համար<sup>2</sup>: Իրանի զինված ուժերի նկատմամբ այդ արտակարգ ուշադրությունը պատահական չէր. միանգամայն կանխատեսելի էր շահի իշխանությունը պահպանելու համար վերջիններիս կողմից զինված հեղաշրջում իրականացնելու հավանականությունը, ինչը պետք է անհապաղ կասեցվեր՝ հետագա բարդություններից խուսափելու համար:

Շահին իշխանությունից հեռացնելու մտահղացումն, ի դեպ, ամերիկյան ղեկավար շրջաններում ծագել էր դեռևս ավելի վաղ: Այն առավել ամրապնդվեց 1979 թ. հունվարի 4-7-ին Գվադելուպայում ԱՄՆ-ի նախագահ Զ. Քարտերի, Ֆրանսիայի նախագահ Վ. ժիսկար

<sup>1</sup> «Էթթեխ'աթ», 31.XII.1979 (պարսկ.):

<sup>2</sup> Նեջաթի Ղ., Թարիխ-ե սիասի-ե բիսթ օ փանջ սալե-ե Իրան, Թեհրան, 1992, հ. II, էջ 252 (պարսկ.):

դ'Էստենի, Մեծ Բրիտանիայի վարչապետ Զ. Կալլագենի և Գերմանիայի կանցլեր Հ. Շմիդտի մասնակցությամբ ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ, որտեղ այլ հարցերի թվում քննարկվեց նաև այդ երկրների համար կարևորություն ներկայացնող՝ իրանական հեղափոխության և, մասնավորաբար, շահի ճակատագրի հարցը<sup>3</sup>: Չնայած մոտեցումներում առկա տարբերություններին՝ նրանք բոլորը համամիտ էին, որ այդ պահին երկրից շահի հեռանալը, թերևս, անխուսափելի է և անհրաժեշտ: Մանավանդ այն պարագայում, երբ ԱՄՆ-ի պաշտոնական շրջաններում շահին իշխանությունից հեռացնելու հարցում առկա էին լուրջ տարաձայնություններ, պետությունների այսպիսի դիրքորոշումը (այն է՝ համաձայնությունը ԱՄՆ-ի նախաձեռնությանը), ոգևորիչ էր և կարևոր նշանակություն ունեցավ ԱՄՆ-ի ղեկավարության կողմից վերջնական վճիռ կայացնելու համար:

Անշուշտ, ԱՄՆ-ի ղեկավարների համար նույնքան կարևոր էր նաև այդ ժամանակ Իրանում Միացյալ Նահանգների դեսպան Ու. Սալլիվենի կարծիքը, որը, բնականաբար, լավատեղյակ էր Իրանի ներքաղաքական գործընթացներին և գրեթե չէր կասկածում շահի, նաև ԱՄՆ-ի համար իրադարձությունների անցանկալի զարգացման հնարավորությանը: Հայտնի է, որ դեռևս ավելի վաղ նա հորդորում էր Միացյալ Նահանգների ղեկավարությանը, սեփական պետության շահերից ելնելով, անհապաղ հրաժարվել շահի նկատմամբ լրյալության պարտավորությունից, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև նրան երբևէ Իրան վերադարձնելու և իշխանությունը վերագրավելուն աջակցելու գաղափարից<sup>4</sup>:

Եվ այսպես, 1979 թ. հունվարի սկզբին Ռ. Հայզերը գաղտնի ժամանեց Իրան<sup>5</sup>: Այդ մասին տեղեկացված չէր նույնիսկ ՆԱՏՕ-ի միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատար և Ռ. Հայզերի անմիջական ղեկավար գեներալ Ա. Հեյզր: Վերջինիս համար դա բոլոր առումներով վրդովեցուցիչ անակնկալ էր: Հայտնի է, որ նա

---

<sup>3</sup> Նեջաթի Ղ., նշվ. աշխ., էջ 214:

<sup>4</sup> Sullivan W.H., Mission to Iran, New York, London, 1981, p. 233.

<sup>5</sup> Heikal M., The Return of the Ayatollah. The Iranian Revolution from Mossadeq to Khomeini, London, 1981, p. 170.

կտրականապես դեմ էր Իրանից շահին հեռացնելու գաղափարին, համոզված, որ դա նախ և առաջ կկազմալուծի Իրանի զինված ուժերը, և շատերի կարծիքով՝ ԱՄՆ-ի ղեկավարության կողմից դրա իրականացման փորձն այն գործոններից էր, որոնք նպաստեցին այդ բարձր պաշտոնից նրա հրաժարականին<sup>6</sup>:

Արդեն հունվարի 4-ին ԱՄՆ-ի Պետդեպարտամենտը հայտարարեց, որ Ռ. Հայզերի առաքելության նպատակը Շ. Բախթիարի քաղաքացիական կառավարությանը պաշտպանելն ու աջակցելն էր<sup>7</sup>: Շ. Բախթիարի կառավարությունը, որի հետ ԱՄՆ-ի ղեկավարությունը մեծ հույսեր էր կապում և որին աջակցելու պատրաստակամություն էր հայտնել<sup>8</sup>, իրոք, կարիք ուներ պաշտպանության: Խոսակցություններ էին գնում այն մասին, որ ռազմաօդային ուժերի հրամանատար, շահի նկատմամբ ջերմեռանդ և անկեղծ հավատարմությամբ տոգորված գեներալ Խոսրովդադը և մի քանի բարձրաստիճան սպաներ ծրագրել էին շահի մեկնումից հետո պաշտոնանկ անել Շ. Բախթիարին և զավթել իշխանությունը՝ հույսը հիմնականում դնելով իրանական բանակի և, մասնավորաբար, շահական գվարդիայի վրա: Այս լուրերը լրջորեն անհանգստացնում էին Միացյալ Նահանգների ղեկավարներին, և վերջիններս այդ մտադրության իրականացումը կասեցնելու հնարավորություններ էին որոնում: Հասկանալի էր, որ բարձրաստիճան զինվորականների այդ խումբը, որն այդպես էլ չէր կարողանալու ներել ԱՄՆ-ին երկրից շահին հեռացնելու նախաձեռնության համար, առանց վարանելու անհապաղ գործողություններ կսկսեր իր այդ դիտավորությունն իրականացնելու ուղղությամբ:

Ի հաստատումն դրա՝ 1979 թ. հունվարի 12-ին գեներալ Խոսրովդադը հանդես եկավ հայտարարությամբ, որով սպառնալից տոնով զգուշացնում էր Շ. Բախթիարին, որ եթե նրա կառավարությունը չխոչընդոտի Իրանից շահի մեկնումը,

---

<sup>6</sup> Sullivan W.H., նշվ. աշխ., էջ 229:

<sup>7</sup> Ramazani R.K., The United States and Iran. The Patterns of Influence, New York, 1982, p. 134.

<sup>8</sup> The United States and Iran. A Documentary History, New York, 1987, p. 479.

«զինվորականները ձեռքերը ծալած չեն նստի<sup>9</sup>»: Գեներալ Խոսրովդադը, որի փաստացի հսկողության տակ էին գտնվում Իրանի հատուկ նշանակության դեսանտային զորքերը, իրականում, արտահայտում էր իրանական բանակի բարձրագույն հրամանատարական կազմի գերակշիռ մասի տրամադրությունները:

Ավելորդ չէ նշել, որ նրանց այդպիսի քայլից ետ չէր պահի նույնիսկ այն հանգամանքը, որ շահն ինքն այդ պահին մեծ հույսեր էր կապում Շ. Բախթիարի կառավարության հետ: Երկրից մեկնելիս՝ օդանավակայանում, շահը, դիմելով Շ. Բախթիարին, ասաց. «Ձեր կառավարությունը վայելում է իմ լիակատար վստահությունը, և հուսով եմ, որ կառավարության անդամների հայրենասիրությունը նրանցից յուրաքանչյուրին հնարավորություն կտա ավարտին հասցնել այդ բարդ առաջադրանքը<sup>10</sup>»: Դժվար չէ ենթադրել, որ այդ առաջադրանքը միապետության վերականգնումն ու փրկությունն էր, ինչին ապավինում էր շահը: Համաձայն լրատվամիջոցների տեղեկատվության՝ շահը մեկնելուց առաջ ստեղծել էր հեղինակավոր գեներալներից բաղկացած գաղտնի կազմակերպություն, որի առջև խնդիր էր դրված ցանկացած պահի, երբ դա կպահանջեր իրադրությունը, ապահովել իր վերադարձի հնարավորությունը: Այսպիսով, Իրանի զինված ուժերի միասնականության պահպանումը և՛ շահի, և՛ Միացյալ Նահանգների համար դառնում էր առաջնահերթ:

Այս պարագայում Ռ. Հայզերին տրված՝ Շ. Բախթիարին աջակցելու հրահանգը ինքնին ենթադրում էր նաև այդ նպատակի համար նախ և առաջ բանակի միասնականության և ամբողջականության պահպանում, ինչի մասին բացահայտորեն տեղեկացնում էր ամերիկյան մամուլը: «Նյու Յորք Թայմս»-ի քաղաքական մեկնաբան Դ. Ռեստոնը, օրինակ, հաստատելով Միացյալ Նահանգների այդ մտադրությունը, ուղղակի նշում էր. «...Քարտերն Իրան ուղարկեց գեներալ Ռ. Հայզերին՝ հուսալով խուսափել Իրանի սպայական կորպուսում պառակտումից<sup>11</sup>»: Դրա լավագույն ապացույցն էր, թերևս, այն, որ, ըստ տեղեկությունների, նրան հանձնարարված էր ուղղակի

<sup>9</sup> «Քեյհան», 12.1.1979 (պարսկ.):

<sup>10</sup> Hoveyda F., The Fall of the Shah, New York, 1980, p. 200.

<sup>11</sup> «The New York Times», 6.1.1979.



իր ձեռքը վերցնել զինված ուժերի շտաբի պետի՝ գեներալ Ղարաբաղիի պարտականությունները և օգտագործել բոլոր հնարավորությունները՝ շահին նվիրված և հավատարիմ բարձրաստիճան զինվորականներին հարկադրելու շահի մեկնելուց հետո նույնպիսի նվիրվածություն և հավատարմություն ցուցաբերել Շ. Բախթիարի նկատմամբ<sup>12</sup>:

Իրադրության ուսումնասիրությունը թույլ է տալիս հավաստել, որ արդեն իսկ բարձրաստիճան զինվորականների միասնականության պահպանման գերխնդիրը, որն ընդհանուր էր շահի և Միացյալ Նահանգների համար, իրականում, նրանց կողմից միանգամայն տարբեր նպատակներ էր հետապնդում: Եթե շահի նպատակը անհրաժեշտ պահին նրանց համարժեք գործողությունների միջոցով գահի պահպանումն էր, ապա ամերիկյան ղեկավարների համար՝ Շ. Բախթիարի կառավարության պահպանումը, որի միջոցով միայն Վաշինգտոնը հույս ուներ անձեռնմխելի պահել Իրանում ԱՄՆ-ի դիրքերը:

Այսպիսով, հասկանալի է, որ ստեղծված իրադրության պայմաններում ամեն ինչ կախված էր բարձրաստիճան զինվորականների դիրքորոշումից: Հետևաբար, ժամանելով Թեհրան, Ռ. Հայզերը չհապաղեց հանդիպումներ ունենալ բարձրաստիճան զինվորականների հետ և հորդորել ու համոզել նրանց՝ աջակցել ճգնաժամի սահմանադրական լուծմանը, այսինքն, Շ. Բախթիարի՝ շահի կողմից նշանակված օրինական համարվող կառավարությանը<sup>13</sup>:

Սակայն վերջիններիս հետ բանակցությունների արդյունքներն այդքան էլ հուսադրող չէին, քանի որ դրանց բովանդակությունը ոչ բոլորի համար էր ընդունելի: Նախ, բարձրաստիճան զինվորականները նվիրված էին անձամբ շահին և միայն շահին և, հետևաբար, նրան Շ. Բախթիարով փոխարինելն արդեն իսկ անբնական էր և անհնարին: Ինքնըստինքյան հասկանալի էր նաև, որ շահի՝ թեկուզ ժամանակավորապես հեռանալու դեպքում նրանք կգրկվեին իրենց բարձր կարգավիճակից և կկորցնեին ապագայի հույսը: Եվ, վերջապես, նրանք նաև հոգեբանորեն որևէ չափով

---

<sup>12</sup> «The New York Times», 5.1.1972.

<sup>13</sup> Hayzer R.S., Mission to Iran, New York, 1986, p. 24.

պատրաստ չէին (և երբեք էլ պատրաստ չէին լինի) հավատարմության երդում տալ քաղաքական մի գործչի՝ Շ. Բախթիարին, և ենթարկվել նրան: Պատահական չէ, որ բարձրաստիճան զինվորականներից մի քանիսը, որոնց թվում էին ազդեցիկ գեներալներ Օվեյսին, Խոսրովդադը, Ռաբիին, Ջամը և այլք սկզբից ևեթ մերժեցին համագործակցության առաջարկը<sup>14</sup>, ոմանք էլ ուղղակի հեռացան երկրից:

Այս պարագայում ավելի քան լավատեսական էր հնչում Ռ. Հայգերի այն վստահությունը, որ Իրանի զինված ուժերը կհամակերպվեն և միասնաբար կպաշտպանեն Շ. Բախթիարի կառավարությանը<sup>15</sup>: Ամենայն հավանականությամբ՝ Իրանում իր գործունեության սկզբում Ռ. Հայգերը չափից ավելի վստահ էր իր ուժերին, ինչպես նաև ապավինում էր շահին վերադարձնելու նրանց բուռն ցանկությանը:

Ավելորդ չէ նշել, որ այս հարցում միանգամայն հակառակ կարծիքի էր Իրանում ԱՄՆ-ի դեսպան Ու. Սալլիվենը. նա, մասնավորաբար, չէր թաքցնում իշխանությունը պահպանելու Շ. Բախթիարի հնարավորության նկատմամբ իր թերահավատությունը: Միաժամանակ, սկզբից ևեթ որևէ չափով չկասկածելով շահի, նաև ԱՄՆ-ի համար իրադարձությունների անցանկալի զարգացման հավանականությանը, համոզմունք էր հայտնում, որ զինված ուժերը վստահելի գործիք չեն հեղափոխության դեմ, և որ այաթոլլահ Խոմեյնու հետ առաջին իսկ հանդիպման դեպքում կպառակտվեն և կկազմալուծվեն<sup>16</sup>: Իր այս անվստահության մասին Ու. Սալլիվենը տեղեկացրել էր նաև ամերիկյան համապատասխան ծառայություններին: Ի պատասխան՝ նրան հայտնել էին, որ դա (զինվորականության կողմից Շ. Բախթիարին պաշտպանելը - Ա.Ս.) Միացյալ Նահանգների պաշտոնական տեսակետն է և փոփոխման ենթակա չէ<sup>17</sup>:

Իրողությունն այն էր, որ գեներալներից շատերը լուրջ մտադրություն ունեին երկրից շահի հեռանալու դեպքում տապալել Շ.

---

<sup>14</sup> Ziring L., Iran, Turkey and Afghanistan: A Political Chronology, New York, 1981, p. 216.

<sup>15</sup> Heikal M., նշվ. աշխ., էջ 170:

<sup>16</sup> Sullivan W.H., նշվ. աշխ., էջ 236:

<sup>17</sup> Նույն տեղում:

Բախթիարի իշխանությունը և զինվորական կառավարություն ստեղծել, ինչը այժմ արդեն որոշակիորեն պաշտպանում էր և Վաշինգտոնը: Հայտնի է, որ ռազմական հեղաշրջման տարբերակը սկզբից ևեթ քննարկվում էր նաև ամերիկյան ղեկավար շրջաններում. այն նախատեսվում էր կազմակերպել, եթե Շ. Բախթիարը չկարողանար իրականացնել իր վրա դրված պարտականությունները: Ենթադրվում էր, որ անմիջապես այդ նպատակով հունվարի 4-ին ԱՄՆ էր մեկնել Իրանի ցամաքային զորքերի հրամանատար և Թեհրանի ռազմական վարչության ղեկավար գեներալ Օվեյսին, որը դիտարկվում էր որպես ապագա զինվորական կառավարության հնարավոր ղեկավար<sup>18</sup>:

Փարիզում գտնվող Խոմեյնին չհապաղեց իր մտահոգությունը հայտնել այդ կապակցությամբ՝ չբացառելով, որ իր կողմնակիցները կարող են զինված պայքար սկսել բանակի դեմ՝ նրանց կողմից ռազմական հեղաշրջման փորձի դեպքում<sup>19</sup>:

Այսուհանդերձ, ըստ ամերիկյան տեղեկատվական գործակալության հաղորդած լուրերի, ԱՄՆ-ում մշակվում էր ռազմական հեղաշրջման կոնկրետ պլան, որը կարող էր հետևել Շ. Բախթիարի կառավարության տապալմանը: Որպես դրա հաստատում՝ ամերիկյան մամուլը հայտնում էր, որ ներկայումս Թեհրան են փոխադրվում շահի վարչակարգին հավատարիմ զորամասեր՝ գեներալ Խոսրովդադի գլխավորությամբ<sup>20</sup>: Ի դեպ՝ այդ պլանի մշակման մեջ կարևոր դեր ուներ ԱՄՆ-ում գտնվող գեներալ Օվեյսին:

Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, հեղաշրջումն այդպես էլ տեղի չունեցավ: Եվ պատճառն ամենևին էլ բարձրաստիճան զինվորականների կողմից դրա հետևանքները ճշգրիտ կանխատեսելու անհնարինությունն ու վստահության բացակայությունը չէր միայն: Հեղափոխության խորացմանն ու ընդարձակմանը զուգընթաց ավելի ու ավելի սպառնալից էր դառնում հեղափոխական ուժերի դիրքորոշումը, և գնալով նվազում էր շահին երբևէ Իրան վերադարձնելու հավանականությունը: Հունվարի 19-ին

---

<sup>18</sup> “Правда”, 6.1.1979.

<sup>19</sup> «The New York Times», 27.1.1979.

<sup>20</sup> «Washington Post», 12.1.1979.

այաթոլլահ Թալեղանին ուղղակի նախազգուշացնում էր, որ «Իրանական ժողովուրդը սրբազան պատերազմի դուրս կգա բանակի դեմ, եթե վերջինս հեղաշրջման փորձ անի»<sup>21</sup>։ Բարձրաստիճան զինվորականների համար առավել մտահոգիչ էր դառնում սեփական ճակատագրի, միասնականության և դիրքերի պահպանման հարցը։ Նրանցից շատերն արդեն չէին թաքցնում իրենց կասկածը հեղաշրջման նպատակահարմարության հանդեպ և հակված էին այդ մտքից ընդհանրապես հրաժարվել։

Բարձրաստիճան զինվորականության դիրքորոշման այս ակնհայտ փոփոխությունը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ ԱՄՆ-ի ղեկավար շրջաններում ևս կասկածներ էին ծագել նույնիսկ հեղաշրջման փորձի հաջողության դեպքում Իրանում ԱՄՆ-ի նպատակների իրականացման համար բարենպաստ իրադրության ձևավորման հնարավորության նկատմամբ։ Քաղաքական սրընթաց զարգացումները հերթական անգամ ԱՄՆ-ի համար հրատապ ու անհետաձգելի էին դարձնում իրադրությանը համապատասխան նոր որոշումների կայացումն ու իրականացումը։ Այս պարագայում, թերևս, առավել նպատակահարմար էր դիտվում ընդդիմադիր ուժերի հետ կապեր հաստատելու և փոխհամաձայնության գալու միջոցով ճգնաժամի խաղաղ կարգավորման՝ ամերիկյան ղեկավարների կողմից դեռևս ավելի վաղ մշակված ծրագրի իրականացումը՝ ԱՄՆ-Իրան հարաբերությունները պահպանելու ակնկալությամբ։

Բարձրաստիճան զինվորականության այդ հարկադրված վերակողմնորոշման լավագույն արտահայտությունն էր, թերևս, բանակի շտաբի պետ գեներալ Ղարաբաղիի՝ մեկը մյուսին հաջորդող և առաջին հայացքից տարօրինակ թվացող հայտարարությունները։ Մասնավորաբար, եթե հունվարի 16-ին նա հավաստիացնում էր, որ ոչ մի հեղաշրջում տեղի չի ունենա, և որ դրա հնարավորությունն ուղղակի աներևակայելի է<sup>22</sup>, իսկ մի քանի օր անց նույնպիսի համոզվածությամբ պնդում էր, որ զինվորականներն աջակցելու են սահմանադրական (այսինքն՝ Շ. Բախթիարի - Ա.Ս.)

---

<sup>21</sup> «The New York Times», 19.1.1979.

<sup>22</sup> «Քեյհան», 16.1.1979 (այսրսկ.)։

կառավարությանը<sup>23</sup>, ապա գրեթե նույն ժամանակ վստահություն էր հայտնում, որ բանակը պահպանելու է իր միասնականությունը և չի խառնվելու քաղաքականությանը<sup>24</sup>: Անկասկած, հատկապես այս վերջին հայտարարությունը, որը հաստատում էր քաղաքական զարգացումներում զինվորականության կողմից չեզոքություն պահպանելու մտադրությունը, արված էր ոչ առանց ԱՄՆ-ի, նաև Խոմեյնու կողմնակիցների միջամտության:

Բանակի չեզոքության պահպանումն այն կարևորագույն նախապայմանն էր, որը պետք է ապահովեր կողմերի միջև սկսված բանակցությունների շարունակումը, ուղղվածությունն ու ակնկալվող արդյունքները: Եվ մինչ ԱՄՆ-ի ներկայացուցիչները Փարիզում Քարիմ Յազդիի միջոցով բանակցում էին այաթոլլահ Խոմեյնու հետ, դեսպան Սալլիվենը և գեներալ Ռ. Հայզերը հատկապես երկրից շահի հեռանալուց հետո ակտիվորեն ձեռնամուխ եղան ոչ միայն Իրանի ընդդիմադիր ուժերի հետ իրենց կապերի ամրապնդմանը, այլև բարձրաստիճան զինվորականներին աշխարհիկ և հոգևոր ընդդիմության հետ բանակցությունների հակելու հնարավորությունների որոնմանն ու հանդիպումների կազմակերպմանը, որոնց նպատակն էր լինելու կոնֆլիկտի՝ բոլոր կողմերին շահագրգռող խաղաղ լուծում գտնելը: Դա, ի դեպ, Ու. Սալլիվենի սեփական նախաձեռնությունն էր, որի իրականացումն սկսել էր դեռևս նախքան ԱՄՆ-ից համապատասխան հրահանգ ստանալը:

Ու. Սալլիվենը կարևոր է համարում նաև այն, որ իրեն հաջողվել էր հաշտության եզրեր գտնել բարձրաստիճան զինվորականության և հոգևորականության միջև: Նա գրում է, որ դա ևս իր նախաձեռնությունն էր, և որ իրեն հաջողվել էր համոզել ԱՄՆ-ի ղեկավարությանը, մասնավորաբար, նախագահ Ջ. Քարտերին, որ ԱՄՆ-ի ազգային շահերը պահանջում են փորձել մոդուս վիվենդի ստեղծել Խորհրդային Միության հանդեպ ընդհանուր հակակրանք տաժող զինվորականության ու հոգևորականության միջև՝ հակազդելու

---

<sup>23</sup> «The New York Times», 23.1.1979.

<sup>24</sup> Balta P., Rulleau Cl., L'Iran Insurge: 1979 en Islam? Un Tournant du Monde, Paris, 1979, p. 90.

Թուղերին և կասեցնելու Իրանի նկատմամբ ԽՍՀՄ-ի նկրտումներն ու դրանց իրականացմանն ուղղված ամենաակտիվ գործողությունները<sup>25</sup>:

Ստանալով ԱՄՆ-ի ղեկավարության հավանությունն ու համապատասխան հրահանգը՝ Ու. Սալլիվենն անհապաղ հանդիպեց ընդդիմադիր այաթոլլահ Մուսավի Արդաբիլիի և Մեհդի Բազարգանի հետ: Վերջիններս պատրաստ էին բանակցությունների, պայմանով, որ բանակը զերծ մնա միջամտությունից և ապագա կառավարության հետ համագործակցի: Մ. Բազարգանը խոստացավ, որ ինքը կխոսի իր գլխավորած Ազատության ճակատի անդամների, իսկ Արդաբիլին՝ հեղափոխության հոգևոր առաջնորդների հետ<sup>26</sup>: Այնուհետև հանդիպումներ տեղի ունեցան ՍԱՎԱԲ-ի ղեկավար գեներալ Մ. Մոդադդամի և Մ. Բազարգանի ներկայացուցիչների միջև: Բանակցություններին մասնակցում էին նաև Ամիր Էնթեզամը, այաթոլլահ Շարիաթադարիի մտերիմ դոկտոր Նասեր Մինաջին, այաթոլլահ Բեհեշթին և այաթոլլահ Թալեղանին:

Հանդիպումների ու բանակցությունների այս գործընթացը, սակայն, ԱՄՆ-ի ջանքերի արդյունքը չէր միայն: Իրադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ պահին կոնֆլիկտի մեջ ներգրավված առանց բացառության բոլոր կողմերի համար էլ դա դարձել էր անհրաժեշտություն, քանի որ քննարկվում էին կողմերից յուրաքանչյուրի համար առաջնահերթ կարևորություն ներկայացնող խնդիրներ:

Մեհդի Բազարգանն, օրինակ, ակտիվացրեց գինվորականների հետ իր հանդիպումները՝ նրանց հեղափոխության կողմը գրավելու նպատակով: Նա ցանկություն հայտնեց անձամբ հանդիպել Ղարաբաղիին և Մոդադդամին:

Հունվարի 16-ին շահը վերջապես երկրից մեկնեց: Այաթոլլահ Խոմեյնու ներկայացուցիչներն ու իրանական գեներալները անմիջապես գաղտնի բանակցություններ սկսեցին՝ քննարկելու փոփոխված իրադրության պայմաններում երկրի ապագայի հարցը: Եվ երբ Խոմեյնին հունվարի 20-ին հայտարարեց շուտով Իրան վերադառնալու իր մտադրությունը<sup>27</sup>, հեղափոխականների համար

---

<sup>25</sup> Sullivan W.H., նշվ. աշխ., էջ 233:

<sup>26</sup> Նուն տեղում, էջ 236-237:

<sup>27</sup> «Էթթեյա'աթ», 20.1.1979 (պարսկ.):

ավելի քան կարևոր դարձավ նրա վերադարձի նկատմամբ բարձրաստիճան զինվորականության դիրքորոշման ճշգրտումը, իսկ զինվորականության համար՝ դրա հետևանքները:

Արդեն հունվարի 22-ին Նասեր Մինաջին հանդիպեց գեներալ Ղարաբաղիի հետ՝ համոզվելու համար, թե արդյոք Խոմեյնին կարող է վերադառնալ Իրան՝ առանց բախվելու զինվորականության դիմադրությանը<sup>28</sup>: Հարկ է նշել, որ Ղարաբաղիի պատասխանն անորոշ էր. բանակի ղեկավարությունը թեև հայտարարել էր բանակի չեզոքության մասին, սակայն դեռևս պատրաստ չէր վերջնական վճիռ կայացնել: Վերջիններիս կողմնորոշումն ավելի հստակ դարձավ, երբ գեներալներ Մոդադդամի և Ղարաբաղիի հետ բանակցությունների ժամանակ Բազարգանն առաջին անգամ բացահայտորեն խոստովանեց, որ իրենք շահագրգռված են բանակի միասնականության պահպանմամբ<sup>29</sup>, ինչն արդեն հուսադրող էր: Դրան հաջորդեց Խոմեյնու այն հավաստիացումը, որ հեղափոխականների պահանջը բանակի կազմալուծումը չէ, այլ նրա պահպանումը<sup>30</sup>: Միաժամանակ, ժխտելով հեղափոխականների կողմից բանակի ժամանակակից գեներլ ոչնչացնելու մասին տարածված լուրերը, Խոմեյնին շտապեց հայտարարել, որ այդ գեներլ պատկանում է Իրանի ժողովրդին, և բանակը նրան պետք է պաշտպանի<sup>31</sup>: Բոլոր դեպքերում, իր անվտանգությունն ապահովելու նպատակով Խոմեյնին իր ներկայացուցիչներին նաև հանձնարարել էր բանակին վստահեցնել, որ նրա վիճակը շատ լավ է լինելու, միաժամանակ զգուշացնելով, որ չտան այնպիսի խոստումներ, որոնք չեն կատարվելու<sup>32</sup>:

Հեղափոխության առաջնորդների այս հավաստիացումների նպատակը զինված ուժերին հանդարտեցնելն ու վճռական պահին նրանց ծայրահեղ գործողություններից ետ պահելը չէր միայն: Եթե մինչ այդ Խոմեյնին և նրա կողմնակիցները պատրաստակամություն էին ցուցաբերում փոխզիջումների գնալ բանակի հետ՝ կասեցնելու համար նրա ընդդիմությունը և ապահովելու Խոմեյնու վերադարձը

---

<sup>28</sup> Stempel J.D., Inside the Iranian Revolution, Bloomington, 1981, p. 170.

<sup>29</sup> Sullivan W.H., նշվ. աշխ., էջ 244:

<sup>30</sup> Նեջաթի Ղ., նշվ. աշխ., էջ 295:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 280:

<sup>32</sup> Նեջաթի Ղ., նշվ. աշխ., էջ 293:

երկիր, ապա այժմ չէին թաքցնում նաև բանակի միասնականությունը պահպանելու իրենց շահագրգռությունը՝ հետագայում այն նորաստեղծ Իսլամական Հանրապետության նկատմամբ ընդդիմադիր ուժերի հավանական ոտնձգություններին դիմակայելու և պետության պաշտպանությունն ու նրա կայունությունն ապահովելու համար:

Ըստ տեղեկությունների՝ Խոմեյնու վերադարձի նախօրյակին բանակում ստեղծվել էր տագնապի ու լարվածության մթնոլորտ, և դարձյալ հրատապ էր դառնում հեղաշրջման հարցը: Բարձրաստիճան զինվորականներին, մասնավորաբար, անհանգստացնում էր Խոմեյնու վերադարձի դեպքում բանակի տրոհման և ընդվզելու հավանականությունը, ինչը վերահսկելը, առավել ևս՝ կասեցնելը անհնարին կլիներ: Բարձրաստիճան զինվորականները չէին կարող նաև ձերբազատվել այն մտավախությունից, որ, վերադառնալով Իրան, Խոմեյնին իրենց հետ հաշվեհարդար կտեսնի:

Այս պարագայում բանակի ղեկավարները Ռ. Հայզերի առջև խնդիր էին դրել Խոմեյնու վերադարձի դեպքում երաշխավորել բանակի անվտանգությունն ու անձեռնմխելիությունը: Նրանք, մասնավորաբար, պահանջում էին, որ նա Խոմեյնու կողմնակիցներին ներկայացնի հետևյալ պայմանները. Խոմեյնին պետք է հետաձգի իր վերադարձը Թեհրան՝ մինչև նրա ներկայացուցիչների հետ բանակցությունների ավարտը, պետք է դադարեցնի իրանցիներին ուղղված իր սադրիչ հրահանգներն ու կոչերը, և, վերջապես, Բի Բի Սի-ին պետք է համոզեն, որ Խոմեյնուն եթեր չտրամադրի հաղորդակցվելու Իրանի ժողովրդի հետ<sup>33</sup>:

Ի վերջո, բանակի ղեկավարությունը տվեց Խոմեյնուն չընդդիմանալու իր համաձայնությունը: Այժմ արդեն ԱՄՆ-ը կարող էր վերադարձնել Խոմեյնուն, առանց վախենալու, որ բանակը կընդվզի: Նրան, իհարկե, պետք էր նաև պահպանել բանակի միասնականությունն ու ամբողջականությունը՝ իրադարձությունների ոչ ցանկալի զարգացման դեպքում նրա հնարավորություններն օգտագործելու համար:

Փետրվարի 1-ին Խոմեյնին Փարիզյան աքսորից վերադարձավ Իրան և արդեն փետրվարի 5-ին Մեհդի Բազարգանին նշանակեց իր

---

<sup>33</sup> Zabih S., *Iran Since the Revolution*, London, 1982, pp. 12-13.



հռչակած ժամանակավոր հեղափոխական կառավարության վարչապետ: Մինչդեռ Շ. Բախթիարը համառորեն չէր պատրաստվում հրաժարվել վարչապետի պաշտոնից: Փաստորեն, երկրում ստեղծվել էր երկիշխանություն: Այս պարագայում փետրվարի 9-ին Թեհրանի մոտ գտնվող ռազմաօդային բազայի ավազ և կրտսեր սպաների (հոմաֆարների) միջև տեղի ունեցավ ընդհարում, որտեղ ազգաբնակչությունը հանդես եկավ հակաշահական ուժերի կողմից: Այն արագ վերածվեց համաժողովրդական ապստամբության, ինչը հերթական անգամ փորձեցին օգտագործել հակահեղափոխական ուժերը, որոնք այդպես էլ մինչև վերջ չէին հրաժարվել ռազմական միջամտությամբ իրադրությունը փոխելու մտադրությունից: Տեղեկություններ կան այն մասին, որ այս բախումը նախապես կազմակերպված էր բանակի որոշ ղեկավարների կողմից՝ այն ապստամբության վերածելու նպատակով: Գեներալ Ռաբիին վկայում էր, որ այդ ծրագիրը համատեղ քննարկվել էր բանակի շտաբի հրամանատարների և վարչապետ Շ. Բախթիարի միջև: Գեներալ Բադրին և շահական գվարդիայի հրամանատար գեներալ Նեշաթը պայմանավորվել էին իրենց գորքը դնել Թեհրանի ռազմական դրության պատասխանատու գեներալ Ռահիմիի տրամադրության տակ<sup>34</sup>: Ի դեպ՝ այդ ծրագրին ընդդիմացել էր գեներալ Ղարաբաղին, որը վերջիններիս ներշնչել էր այն միտքը, որ հարկավոր չէ վաղաժամ գործողություններ իրականացնել, քանի դեռ Խոմեյնու ներկայացուցիչների հետ բանակցություններն ընթացքի մեջ են: Համաձայն շրջանավոր լուրերի՝ Բազարգանը, Բախթիարը և գեներալ Ղարաբաղին հանդիպեցին շահական գվարդիայի հրամանատար գեներալ Բադրիի և օդային ուժերի հրամանատար գեներալ Ռաբիիի հետ և վերջին պահին կարողացան համոզել նրանց միանալ հեղափոխությանը<sup>35</sup>:

Փետրվարի 11-ին իրանական բանակի ցամաքային, օդային և ծովային զորամիավորումների հրամանատարական կազմի մասնակցությամբ կայացավ խորհրդակցություն, որտեղ որոշում ընդունվեց տեղի ունեցող

---

<sup>34</sup> Zabih S., նշվ. աշխ., էջ 13:

<sup>35</sup> Ramazani R.K., նշվ. աշխ., էջ 122:

բախումներում բանակի չեզոքության մասին<sup>36</sup>: Տեղեկություններ կան, որ այդ որոշումը կայացվել էր Ղարաբաղի վրա Խոմեյնու ճնշումների ու հարկադրանքի հետևանքով: Իսկ պատճառաբանություններ գտնելը դժվար չէր: Միանգամայն հավաստի էր հնչում բանակի ղեկավարության այն հայտարարությունը, որ բանակը կատարել է Բախթարի սահմանադրական կառավարությանը պաշտպանելու շահի հանձնարարությունն այնքան ժամանակ, քանի դեռ վարչապետը սահմանադրության պահպանը կլինի: Եվ քանի որ Բախթարը դրժել է այդ պայմանը և հակվել է երկրում հանրապետություն հաստատելու կողմը, ապա բանակն այլևս իրեն պարտավորված չի զգում իրականացնել վերջինիս պաշտպանությունը: Բանակի ղեկավարությունը Իրանի բռուն գործընթացներին իր չեզոքությունը հիմնավորում էր նաև ստեղծված իրադրության պայմաններում ներքին արյունահեղ պատերազմից խուսափելու շահի հրահանգը կատարելու նպատակով<sup>37</sup>: Հատկանշական է, որ գեներալներից ոմանք տարբեր պատրվակներով խորհրդակցությանը չմասնակցեցին, հանգամանք, որն ավելորդ անգամ վկայում էր այն մասին, որ այդպես էլ տարբեր պատճառներով հնարավոր չէր եղել պահպանել բանակի միասնականությունը:

Փետրվարի 11-ին, այսպիսով, շահական բանակը դադարեց գոյություն ունենալ: Փահլավիների վարչակարգը տապալվել էր: Նույն օրը Բախթարը հարկադրված եղավ հրաժարական տալ, իսկ վեց օր անց Ռ. Հայգերը հեռացավ Իրանից:

Ինչ վերաբերում է բարձրաստիճան գինվորականության հետագա ճակատագրին, ապա վերջիններս այդպես էլ չխուսափեցին հաշվեհարդարից: Եվ այդ դեպքում արդեն կարևոր չէր, թե վճռորոշ պահին նրանցից ով որ ճամբարում էր հայտնվել: Նրանց մեծ մասը մահապատժի ենթարկվեց, ձերբակալվեց կամ երկրից արտաքսվեց՝ առանց նոր վարչակարգի դեմ գործելու վերաբերյալ որևէ իրական ապացույցի: Արդեն փետրվարին, երբ սկսվեց իրանական բանակի բարեփոխումը, մոտ 200 գեներալ մահապատժի ենթարկվեց<sup>38</sup>: Այս գործընթացն ունեցավ իր շարունակությունը:

---

<sup>36</sup> Նեջաթի Ղ., նշվ. աշխ., էջ 391:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 390:

<sup>38</sup> Ziring L., նշվ. աշխ., էջ 182:

Բարձրաստիճան գինվորականության նկատմամբ Խոմեյնու դիրքորոշման այս կտրուկ փոփոխությունը ևս ուներ իր ծանրակշիռ հիմնավորումը: Հատկապես վերջին իրադարձություններում նրանց ծայրահեղ ակտիվության անթաքույց դրսևորումն ավելի էր ամրապնդել Խոմեյնու այն վստահությունը, որ երկրի գինված ուժերը վաղ թե ուշ դուրս կգան նոր վարչակարգի դեմ և հետագա վտանգներից խուսափելու համար նրանցից ժամանակին պետք էր ազատվել, մանավանդ, որ նրանք իրենց ամենակարևոր գործն արդեն ավարտել էին:

Հիասթափված և վիրավորված շահը իր «Պատասխան պատմությանը» գրքում գրում է. «Հայզերին հաջողվեց իր կողմը գրավել իմ գինված ուժերի շտաբի վերջին պետ գեներալ Ղարաբաղիին: Հետագայում նրա պահվածքը վերլուծելով՝ համոզվեցի, որ նա դավաճան է եղել... Ղարաբաղին, օգտագոծելով իր ազդեցությունը, խոչընդոտել է, որ բանակը Խոմեյնու դեմ դուրս գար... Բացի Ղարաբաղիից, իմ բոլոր գեներալները գնդակահարվեցին...<sup>39</sup>»:

Ղարաբաղիին դավաճան անվանելը, ակնհայտորեն, շահի կողմից առավելապես զգացմունքային բնորոշում էր: Բարձրաստիճան գինվորականների, ինչպես և Ղարաբաղիի համար վերջնականապես պարզ էր դարձել ստեղծված իրադրության պայմաններում շահին Իրան վերադարձնելու այլևս միանգամայն անիրագործելի լինելը, և այդ պահին բանակի միասնականությունը պահպանելու և փլուզումից զերծ պահելու միակ ուղին կոնֆլիկտի խաղաղ կարգավորումն էր:

Ի դեպ՝ Ղարաբաղիի կյանքը ևս մեծ վտանգի տակ էր: Նա մեղադրվում էր բանակի չեզոքության որոշման մասին ռադիոյով հայտարարությունն ուշացնելու համար (ռադիոն գտնվում էր գինվորականների հսկողության տակ), մինչդեռ անտեղյակ շահական գվարդիան և մյուս զորամիավորումները շարունակում էին ավելի վաղ սկսած դիմադրությունը՝ մեծ կորուստներ պատճառելով: Սակայն Ղարաբաղիի նկատմամբ որևէ պատժամիջոց չիրականացվեց շնորհիվ այն բանի, որ նա կարողացել էր ժամանակին ետ պահել բարձրաստիճան գինվորականությանը Շ. Բախթիարին լոյալություն ցուցաբերելուց:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, փաստորեն, Միացյալ Նահանգների ղեկավարության դիվանագիտությունն իր նպատակին

<sup>39</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, New York, 1980, pp. 172-173.

չհասավ: Չնայած գործադրած ջանքերին՝ նրան այդպես էլ չհաջողվեց վերականգնել, առավել ևս պահպանել Իրանում ԱՄՆ-ի դիրքերը:

Արդեն իսկ երկրից շահին հեռացնելու մասին որոշման ընդունումից և, մանավանդ, դրա իրականացումից հետո երկրում ստեղծված նոր, ծայրահեղ բարդ իրադրության պայմաններում զինված ուժերի հրամանատարությունը ևս չկարողացավ լուծում տալ իր առջև դրված խնդիրներից և ոչ մեկին. նա չկարողացավ խոչընդոտել շահի հեռանալը երկրից, չկարողացավ պահպանել իր միասնականությունը և նրան ետ վերադարձնել, և, վերջապես, հարկադրված եղավ ոչ միայն հրաժարվել զինված հեղաշրջում իրականացնելու և զինվորական կառավարություն ստեղծելու մտադրությունից, այլև իր համերաշխությունը հայտնել հեղափոխական ուժերին: Հատկապես բանակի ղեկավարության այս դիրքորոշումը, որքան էլ առաջին հայացքից անսպասելի թվա, ավելի քան նպաստավոր եղավ հեղափոխականների նպատակների իրականացման համար, քանի որ հնարավոր դարձրեց երկրից շահի հեռանալը և ապահովեց Խոմեյնու անարգել վերադարձն ու դրան հաջորդող գործընթացները:

ANUSH STAMBOLTSYAN

### **THE POSITION OF ARMY LEADERSHIP AS AN IMPORTANT FACTOR FOR DESTINING THE END AND THE CONSEQUENCES OF IRANIAN REVOLUTION IN 1978-1979: RETROSPECTIVE LOOKOUT**

In the current article we present and discuss the main factors which not only supported the success of the revolution, but also conditioned the further processes in the crucial period of the revolution within the frameworks of complicated and contradictory political developments.

As dominant factors, the author emphasizes the forced transformation of high-ranking military towards the shah which was connected with the new tactics of the USA as well as the pragmatic and purposeful circumstances of it used by the revolution forces.

## ԵՎԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### **ՃԱՊՈՆԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՊԱՐՄԻՑ ԾՈՑԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ «ԾՈՎԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԻ» ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 2001 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԴԵՊՔԵՐԻՑ ՀԵՏՈ**

Ճապոնիան Սառը պատերազմի տարիներին երկրում գործող «խաղաղ» սահմանադրության հիմնադրույթները չխախտելու նպատակով, փորձում էր իր միջազգային անվտանգությունն ապահովել երկրում առկա ԱՄՆ-ի ռազմական բազաների միջոցով<sup>1</sup>: Սակայն հետսառըպատերազմյան շրջանում ստեղծված աշխարհաքաղաքական իրադրության փոփոխման, մասնավորապես՝ երկբևեռ համակարգի փլուզման և բազմաբևեռ համակարգի ձևավորման, ասիական մի շարք երկրների տնտեսական կտրուկ աճի և բնական հանածոների ձեռքբերման համար վերջիններիս միջև ծավալվող մրցակցության մեծացման, ինչպես նաև Ճապոնիայում տեղի ունեցող ներքին քաղաքական խմորումների արդյունքում<sup>2</sup> սկիզբ դրվեց պաշտոնական Տոկիոյի նոր քաղաքականության ձևավորմանը: Այն արտահայտվեց Ճապոնիայի ռազմաքաղաքական դերի ակտիվացմամբ թե՛ ասիա-խաղաղովկիանոսյան և մերձավորարևելյան տարածաշրջանների, թե՛ միջազգային հանգուցային հիմնախնդիրների կարգավորման գործընթացներում<sup>3</sup>: Այսպես՝ արդեն 1997 թ. Ճապոնիայի ռազմական հայեցակարգում հայտնվեցին նոր միտումներ, որոնք, առաջին հերթին, ուղղված էին Ճապոնիայի

---

<sup>1</sup> Кадзухико Того, 50 лет японской дипломатии (1945-1995), Москва, 1996, с. 12.

<sup>2</sup> 1955-1993 թթ. երկիրը կառավարվում էր Լիբերալ-դեմոկրատական կուսակցության (ԼԴԿ) կողմից: 1994 թ. հունիսին իշխանության եկավ Ճապոնիայի Նոր կուսակցությունը (ՃՆԿ): Այս մասին տե՛ս Молодяков В., Молодякова Э., Маркарян С., История Японии, XX век, Москва, 2007, с. 431-440; McKibbin W.J., The Macroeconomic Experience of Japan since 1990: An Empirical Investigation, Washington DC, November 1996, p. 18.

<sup>3</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Հարությունյան Ե., Ճապոնիայի մերձավորարևելյան նոր քաղաքականության ձևավորումը հետսառըպատերազմյան շրջանում (1991-2001 թթ.), Մերձավոր Արևելք, 2012, VIII, էջ 238-248:

ինքնապաշտպանական ուժերը (ՃԻՈԻ) տարածաշրջանային ռազմական ուժի վերածելու մտադրության հետ: Հարկ է նշել, որ Ճապոնիայի ռազմաքաղաքական դերի ակտիվացման գործում մեծ խթան հանդիսացավ տարածաշրջանում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) ծավալապաշտական քաղաքականությունը, ինչպես նաև էներգակիրների ոլորտում մի շարք ասիական երկրների, հատկապես՝ ՉԺՀ-ի և Հնդկաստանի կողմից վառելանյութի ձեռքբերման համար ներկայացված մրցակցության հայտը<sup>4</sup>: Նշենք, որ Չինաստանը դեռ 1993 թ. էներգակիրների ներկրման ոլորտում լուրջ մրցակցության հայտ ներկայացրեց միջազգային հանրությանը՝ դառնալով մերձավորարևելյան նավթի ցանցային ներկրող, իսկ արդեն 2003 թ. զբաղեցրեց երկրորդ տեղն իր նավթային ներկրումների քանակով՝ ետևում թողնելով Ճապոնիային և զիջելով միայն ԱՄՆ-ին<sup>5</sup>: 2000 թ.-ի դրությամբ՝ Մերձավոր Արևելքից Չինաստանը ներկրել է իր նավթային պահանջարկի մոտ 54%-ը և ըստ կանխատեսումների՝ 2020 թ. Չինաստան արտահանվող նավթի քանակը կհասնի 3.65 միլիոն բարելի մեկ օրում, որը կբավարարի վերջինիս էներգիայի պահանջարկի 60%-ը<sup>6</sup>: Ուստի Չինաստանի թե՛ էներգակիրների ոլորտում լուրջ մրցակցության հայտը, թե՛ ծավալապաշտական քաղաքականությունը, որն առաջնորդվում էր ռազմաքաղաքական դերի ակտիվացմամբ, մեծ վտանգ են ներկայացնում ինչպես Ճապոնիայի տնտեսությանը, այնպես էլ տարածաշրջանում վերջինիս դիրքերին, որը, ինքնաբերաբար, նպաստեց ռազմածովային ուժերի մրցավազքի զարգացմանը<sup>7</sup>: ՉԺՀ-ի աստիճանաբար ծավալվող

---

<sup>4</sup> Ըստ կանխատեսումների՝ 2035 թ. դրությամբ ասիական երկրների էներգիայի պահանջարկը կաճի, որի ապահովման համար անհրաժեշտ կլինի 7.375 միլիոն տոննա նավթ, որից 2.700 միլիոն տոննա նավթը կբավարարի միայն Չինաստանի և Հնդկաստանի էներգիայի պահանջարկը՝ կազմելով աշխարհում արտահանվող նավթի 46%-ը: Այս մասին տե՛ս Handbook of Energy and Economic Statistics in Japan, Tokyo, 2011, p. 248.

<sup>5</sup> International Energy Agency (IEA), Oil Market Report, March 11, 2004, p. 12.

<sup>6</sup> Jin Liangxiang, Energy First. China and the Middle East, Middle East Quarterly, vol. XII/2, Spring, 2005, pp. 3-10; [http://www.meforum.org/694/energy-first#\\_ftn2](http://www.meforum.org/694/energy-first#_ftn2)

<sup>7</sup> Նշենք, որ Ճապոնիայի ռազմական բյուջեն կազմում է 59 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ ՉԺՀ-ի բյուջեն, որը վերջին 5 տարիների ընթացքում համարյա կրկնապատկվել է, կազմում է 102 մլրդ ԱՄՆ դոլար: Այս մասին տե՛ս Factbox: Japan's Military: Well-Armed

ազդեցության զսպման հարցում շահագրգռված է ոչ միայն Ճապոնիան, այլև մի շարք տարածաշրջանային երկրներ՝ Սինգապուրը, Ավստրալիան, Ֆիլիպինները, Մալայզիան, Ինդոնեզիան և ԱՄՆ-ը: Այս երկրները մեծապես աջակցում են Ճապոնիային՝ տարածաշրջանում ՉԺՀ-ին հակազդող ուժ դառնալու հարցում<sup>8</sup>:

Ծագող արևի երկրի ռազմաքաղաքական դերի, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության համակարգում դերակատարության ակտիվացման վառ օրինակ է 1999 թ. ԱՄՆ-ի կողմից Գուամում անցկացվող զորավարժություններին մասնակցելը և այնտեղ իր ռազմական օդանավերից մեկի տեղակայումը: Նույն թվականին ՃԻՈՒ-ն օդային ուժերի հնարավորությունները բարելավելու նպատակով ձեռք բերեց չորս “Boeing 767” վերահսկողական օդանավ: Ավելին՝ 2000 թ. Տոկիոն պայմանագիր ստորագրեց Սինգապուրի հետ՝ վերջինիս ռազմական բազաները հարկ եղած ժամանակ օգտագործելու վերաբերյալ<sup>9</sup>: Նշենք, որ չնայած երկրում գործող «խաղաղ» սահմանադրությանը՝ ՃԻՈՒ-ն արդեն վաղուց դարձել է աշխարհի ամենազարգացած ռազմաարդյունաբերական համալիրներից մեկը<sup>10</sup>՝ իր տրամադրության

---

but Untested in Battle, July 30, 2012, <http://www.reuters.com/article/2012/07/31/us-japan-defence-factbox-idUSBRE86U03Q20120731>

<sup>8</sup> Ted Galen Carpenter, Japan Takes a Modest Step Toward Global Security, January 8, 2002, <http://www.cato.org/publications/commentary/japan-takes-modest-step-toward-global-security>

<sup>9</sup> Will Japan Rearm, May 28, 2001, <http://www.stratfor.com/search/site/Will%20Japan%20rearm>

<sup>10</sup> Ճապոնիայի զորքերի թվաքանակը կազմում էր 227.000 զինվոր (46.000 պահեստային): Ցամաքային «ինքնապաշտպանական ուժերը» կազմված են 13 դիվիզիաներից, որոնք իրենց մեջ ներառում են 136.000 զինվոր, ունեն 950 զրահատեխնիկա, 463 ուղղաթիռ, 800 միավոր հրետանային տեխնիկա: Ծովային ուժերը բաղկացած են՝ 44.000 անձնակազմից, ունեն 148 նավ, որից 16-ը սուզանավեր են, 58-ը՝ վերջոյա նավեր, 35-ը՝ ակննազերծող նավեր, նաև ունեն 110 օդանավ, 99 ուղղաթիռ: Օդային ուժերը բաղկացած են 45.000 անձնակազմից, ունեն 368 կործանիչ, 42 տրանսպորտային և 182 այլ օդանավեր: Այս մասին տե՛ս Կարապետյան Ռ., Իրաքում Ճապոնիայի ռազմական ներկայության վերաբերյալ, Արևելասիական ուսումնասիրություններ, 2009, I, էջ 48: Ministry of Defense Japan. Japan’s Defense White Paper [http://www.clearing.mod.go.jp/hakusho\\_data/2009/2009/datindex.html](http://www.clearing.mod.go.jp/hakusho_data/2009/2009/datindex.html)

տակ ունենալով խաղաղովկիանոսյան տարածաշրջանում ամենամեծ նավատորմն ԱՄՆ-ից հետո<sup>11</sup>, իսկ նրա ցամաքային ուժերն իրենց թվաքանակով գերազանցում են Բրիտանական թագավորական բանակն ու նավատորմն իրար հետ գումարած, սակայն զիջում են Չինաստանին 10 անգամ և Հյուսիսային Կորեային՝ 5 անգամ<sup>12</sup>:

2001 թ.-ից հետո Ճապոնիայի կողմից «Աէգիս» («Aegis») տիպի կործանիչների ձեռքբերումը շեշտակիորեն բարելավեց երկրի զինված ուժերը, որոնք ի վիճակի են բարձր մակարդակով փոխգործակցել ԱՄՆ-ի տեխնոլոգիապես առաջատար ռազմական ուժերի հետ<sup>13</sup>:

Արդեն 2001 թ. ապրիլին, երբ Ճապոնիայում իշխանության եկավ վարչապետ Կոիզումի Ջունիչիրոն, երկրում բարձրացվեց սահմանադրական դրույթների վերանայման հարցը, հատկապես հրատապ էր զենքերի տեխնոլոգիայի և սպառազինությունների արտահանումն արգելող օրինագծերի վերանայման խնդիրը<sup>14</sup>:

Ճապոնիայի ռազմաքաղաքական դերի ակտիվացումը խթանող սահմանադրական մի շարք բարեփոխումներ հնարավոր դարձավ կյանքի կոչել 2001 թ. սեպտեմբերի 11-ին Նյու-Յորքում տեղի ունեցած դեպքերից հետո, երբ միջազգային անվտանգության համակարգին սպառնացող վտանգը ստիպեց Ճապոնիային կոնկրետ քայլեր

---

Նշենք, որ 2002 թ.-ի դրությամբ ՃԻՈՒ-ին հատկացվել է երկրի բյուջեի շուրջ 6.1%-ը (մոտ 50 մլրդ. ԱՄՆ դոլար), որը կազմում է Ճապոնիայի ՀՆԱ-ի 0.995%-ը: Այս մասին տե՛ս Japan Almanac 2003, Defence Spending, Tokyo, 2003, p. 47.

<sup>11</sup> Ներկայումս Ճապոնիայի նավատորմը ներառում է իր մեջ 8 պաշտպանական նավեր, 47 ժամանակակից ականակիր նավեր և ավելի քան 150 ծովային ինքնաթիռներ: Ճապոնիայի պաշտպանության գործակալությունը ցանկանում է ձեռք բերել նաև 2 ուղղաթիռակիրներ (13500 տոննա տարողունակությամբ), որոնք կլինեն ամենահզոր նավերը տարածաշրջանում: Այս մասին տե՛ս National Institute for Defense Studies, East Asian Strategic Review 2005, p. 215.

<sup>12</sup> Factbox: Japan's Military: Well-Armed but Untested in Battle, July 30, 2012, <http://www.reuters.com/article/2012/07/31/us-japan-defence-factbox-idUSBRE86U03Q20120731>

<sup>13</sup> Will Japan Rearm, February 2001, <http://www.stratfor.com/search/site/Will%20japan%20rearm>

<sup>14</sup> Raquel Shaoul, Japan's Changing Defense Policy: Military Deployment in the Persian Gulf, Japanese Studies, vol. 27, N. 3, December 2007, p. 235; Corey Wallace, Japan's New Approach to the Export of Arms, January 11, 2012, <http://asw.newpacificinstitute.org/?p=9885>; <http://jsw.newpacificinstitute.org/?p=9568>



ձեռնարկել<sup>15</sup>: Այսպես՝ 2001 թ. հոկտեմբերին Ճապոնիան ընդունեց հակահարձակական հատուկ օրենք 2 տարի ժամկետով, համաձայն որի՝ Ճապոնիան իրավունք ստացավ ինքնապաշտպանական զորքեր ուղարկել Աֆղանստան՝ ահաբեկչության դեմ պայքարելու և Միացյալ Նահանգներին աջակցություն ցուցաբերելու նպատակով<sup>16</sup>: 2001 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Ճապոնիան երեք ականակիր նավեր ուղարկեց Հնդկական օվկիանոս<sup>17</sup>: Ավելին՝ 2001 թ. նոյեմբերին Ճապոնիան մասնակցեց Գուամում և Սան Դիեգոյում տեղակայված ԱՄՆ-ի նավատորմի կողմից իրականացվող ռազմական գործողություններին:

2002 թ. վարչապետ Ջ. Կոիձումին առաջ քաշեց «Հարավարևմտյան կղզիների պաշտպանության» ծրագիրը<sup>18</sup>՝ ծովափնյա կղզիների պաշտպանության համար զինված ուժեր ստեղծելու վերաբերյալ, որոնք նախատեսվում էր, որ պիտի համագործակցեին ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի հետ:

2003 թ. մայիսի 15-ին Ճապոնիայի խորհրդարանն ընդունեց երեք օրինագիծ, որոնք հայտնի են «Հնարավոր պատերազմների օրենք» անվանմամբ: Այս օրինագծերի շնորհիվ իշխանությունը ստացավ լիազորություններ մոբիլիզացնելու ինքնապաշտպանական զորքերը Ճապոնիայի դեմ հնարավոր ռազմական հարձակում իրականացնելու դեպքում: Օրենքը թույլ էր տալիս երկրի վարչապետին արտակարգ իրավիճակներում հրամաններ արձակել<sup>19</sup>, որը բավական մեծ առաջընթաց էր երկրի ռազմաքաղաքական դերի ակտիվացման տեսանկյունից:

2003 թ. հուլիսի 26-ին Ճապոնիայի խորհրդարանում վարչապետ Ջ. Կոիձումիի կողմից ներկայացված հակահարձակական օրենքի նախագծի ընդունմամբ՝ կառավարությանն իրավունք տրվեց «ինքնապաշտպանական ուժեր» (մոտ 1.000 զինվորական) ուղարկել

---

<sup>15</sup> Japan Echo, v. 32, 2, April 2004, <http://www.japanecho.com>

<sup>16</sup> Takao Sebata, Japan's Defence Policy and Bureaucratic Politics, 1976-2007, New York, 2010, p. 1.

<sup>17</sup> Raquel Shaoul, նշվ. աշխ., էջ 239:

<sup>18</sup> Liu Jianguo, Armed Intervention by Japan over Diaoyu Islands: Intentions and Legal Constraints, China International Studies, September/October 2012, pp. 24-25.

<sup>19</sup> Raquel Shaoul, նշվ. աշխ., էջ 234:

Իրաք՝ վերակառուցողական աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու նպատակով<sup>20</sup>: Նշենք, որ ինքնապաշտպանական ուժերն Իրաք ուղարկվեցին արդեն 2003 թ. դեկտեմբերի 15-ին և այնտեղ մնացին մոտ մեկ տարի<sup>21</sup>: Ավելին՝ Ճապոնիան 2004 թ. փետրվարին հումանիտար և խաղաղապահ գործողություններ իրականացնելու նպատակով Իրաք ուղարկեց ճապոնական ցամաքային փորձագիտահետազոտական զինվորական խումբ, իսկ արդեն նույն թվականի մարտի վերջերին 550 հոգուց բաղկացած հետևակային ինքնապաշտպանական զորքեր: Փաստորեն, Ճապոնիան, զորքեր տեղակայելով Իրաքում, հնարավորություն էր ստանում նախ՝ իր միջազգային ներդրումն ունենալ հակամարտության լուծման հարցում, երկրորդ հերթին՝ ամրապնդում էր իր ռազմավարական կապերն ԱՄՆ-ի հետ և ամենակարևորը՝ նպաստում էր հետհումանիտար Իրաքի վարչակարգի հետ հարաբերությունների զարգացմանը, ինչը, անկասկած, նավթային ներկրումների անխափան հոսքի երաշխիք էր<sup>22</sup>: Այսպիսով Իրաքում ճապոնացի զինվորների ներկայությունը վկայում է միջազգային անվտանգության համակարգում Ճապոնիայի դերի ակնհայտ ակտիվացման մասին, ինչն ավետեց որակապես նոր դարաշրջանի սկիզբ Տոկիոյի համար և հաստատեց Ճապոնիայի կենսական կարևոր շահերը Պարսից ծոցի տարածաշրջանում<sup>23</sup>:

Երկրի ռազմաքաղաքական դերի ակտիվացում նկատվեց նաև հետագա տարիներին: Այսպես՝ 2007 թ. հունվարի 9-ին պաշտոնական Տոկիոն որոշում ընդունեց Ճապոնիայի Պաշտպանության գործակալությունը Պաշտպանության նախարարության վերածելու վերաբերյալ, ինչն իրավասություն տվեց երկրի իշխանությանն

---

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 239:

<sup>21</sup> Statement by Prime Minister Junichiro Koizumi Concerning the Establishment of the Law Concerning the Special Measures on Humanitarian and Reconstruction Assistance in Iraq, 26 July 2003, [http://www.kantei.go.jp/foreign/koizumispeech/2003/07/26danwa\\_e.html](http://www.kantei.go.jp/foreign/koizumispeech/2003/07/26danwa_e.html)

<sup>22</sup> Իրաքի միայն հետազոտված նավթահանքերում կա շուրջ 112 մլրդ. բարել նավթ: Ճապոնիան առաքում է Իրաքից 120000 բարել նավթ 1 օրում, որը կազմում է իր նավթային ներկրումների 3.2%-ը: Այս մասին տե՛ս Hisane Masaki, Japan in Iraq: Goodbye troops, hello aid, Asia times, July 26, 2006, <http://www.atimes.com/atimes/Japan/HG26Dh01.html>

<sup>23</sup> Political handbook of the Middle East 2008, Washington, 2008, p. 12; Raquel Shaoul, նշվ. աշխ., էջ 240:

արտակարգ իրավիճակներում գործելու ավելի կտրուկ՝ մեծացնելով վերջինիս դերն արտաքին քաղաքականության որոշումների վրա ազդելու հարցում<sup>24</sup>:

Հետագայում Սինձո Աբեի կառավարությունը նույնպես շարունակեց իր նախորդի քաղաքականությունը սահմանադրական փոփոխությունների իրականացման հարցում՝ գնահատելով այն՝ որպես Ճապոնիայի քաղաքականությունը դարաշրջանի նոր միտումներին ավելի համահունչ դարձնելու հիմնական միջոց<sup>25</sup>: 2007 թ. ապրիլին Ճապոնիայի կառավարությունը ստեղծեց մասնագետներից բաղկացած մի խումբ՝ ԱՄՆ-ում Ճապոնիայի նախկին դեսպան Յանաի Շունջիի ղեկավարությամբ: Այդ խմբին լիազորվեց դիտարկել սցենարներ որևիցե երկրի կողմից Ճապոնիայի վրա հարձակման հավանակության և նման իրավիճակի առկայության դեպքում հնարավորինս արագ զինված ուժերը մոբիլիզացնելու շուրջ<sup>26</sup>: Նշենք, որ հարձակում չի նշանակում միայն Ճապոնիայի տարածքի վրա ֆիզիկական հարձակման փորձի կիրառում, այլև հնարավոր ռազմական գործողությունների իրականացում, որոնք կարող են վնաս հասցնել Ճապոնիայի տնտեսական շահերին: Դրա վառ օրինակ կարող է ծառայել Պարսից ծոցի տարածաշրջանից Ճապոնիա առաքվող նավթի և բնական գազի ծովային ուղիների հնարավոր վնասումը, ինչը պատճառ կհանդիսանա կենսական կարևորություն ներկայացնող վառելանյութի ներկրման ընդհատման համար<sup>27</sup>: Նշենք, որ «Ծովային ուղիների» հայեցակարգն ի հայտ է եկել որպես գաղափար դեռևս 1981 թ. ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի և վարչապետ Սուժուկի Ջենկոյի միջև ռազմական համագործակցության շուրջ խորհրդակցության ժամանակ: Համաձայն այդ հայեցակարգի՝ Ճապոնիայի կառավարությունը ցանկանում էր ընդլայնել իր

---

<sup>24</sup> <http://www.mod.go.jp/e/about/index.html>

<sup>25</sup> Exclusive Interview: Shinzo Abe, October 31, 2006, <http://www.ft.com/cms/s/0/ba65e892-68f6-11db-b4c2-0000779e2340.html#axzz2HNxcl8XE>

<sup>26</sup> Նշենք, որ խումբը բաղկացած էր 13 հոգուց: Խմբի ստեղծման գլխավոր նպատակն էր չորս հիմնական սցենարների դիտարկումը, որոնց իրականացման դեպքում Ճապոնիան պետք է մոբիլիզացնեի իր ռազմական ուժերը: Այս մասին տե՛ս Daisuke Sekine, *Seapower and Japan's Maritime Coalition Building*, Australia, 2011, p. 205.

<sup>27</sup> Raquel Shaoul, նշվ. աշխ., էջ 238:

ռազմական գործողությունների տարածքը՝ հասցնելով երկրի ավերից մինչև 1000 մղոն հեռավորության վրա, ինչը հնարավորություն կընձեռներ ապահովելու նավթի անվտանգ առաքումը Ճապոնիա: Հայեցակարգը հնարավոր եղավ կյանքի կոչել միայն 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո: Նշենք, որ Ճապոնիայի տնտեսության համար կենսական կարևորություն ներկայացնող էներգակիրների առաքումը Պարսից ծոցի տարածաշրջանից մինչև Ճապոնիայի մաքրագտման գործարաններն անցնում են հետևյալ ծովային ուղիներով՝ Հորմուզի նեղուցով<sup>28</sup>, Հնդկական օվկիանոսով, Մալակկա, Լոմբոկ, Սունդա և Մակասարյան նեղուցներով, Հարավչինական և Արևելաչինական ծովերով: Հետսառըպատերազմյան շրջանում բազմաթիվ համակարգի ձևավորման և բազմազան շահերի բախումների հավանականության մեծացման պայմաններում վերոնշյալ տարածքներով անցնող ծովային ուղիները դարձել են ավելի խոցելի և վերջիններիս անվտանգության ապահովումը բավական բարդացել է: Նշենք, որ ծովային ուղիների անվտանգության ապահովման հարցում բավական մեծ է ԱՄՆ-ի դերը, որն Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կենտրոնացրել է իր զորքերի 100.000-անոց անձնակազմ՝ դրանով իսկ վերահսկելով նավթի ծովային ուղիների մոտ 1/3-ը<sup>29</sup>:

Ծովային ուղիների անվտանգության ապահովման հարցում Ճապոնիայի մտավախությունը լիովին հիմնավորված է, քանի որ ամեն վայրկյան տարածաշրջանում առկա տարածքային ցանկացած խնդրի սրման արդյունքում կարող են վտանգի տակ դրվել Ճապոնիա առաքվող նավթի և բնական գազի հոսքը, որը լուրջ վնաս կհասցնի երկրի տնտեսությանը: Նամանավանդ, որ վերոնշյալ ծովային ուղիներն անցնում են այնպիսի տարածքներով, որտեղ բավական մեծ է տարածքային խնդիրների շուրջ առկա տարածայնությունները: Այսպես՝ խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում տարածքային խնդիրներ կան ոչ միայն Ճապոնիայի և Չինաստանի միջև՝ կապված

---

<sup>28</sup> Նշենք, որ Հորմուզի նեղուցով է առաքվում Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Կատարի և ԱՄԷ-ի նավթային մատակարարումները: Այս մասին տե՛ս Строительство новых нефтепроводов, ТАСС, Атлас N 27 (1409), 06.07.1984, с. 44.

<sup>29</sup> Raquel Shaoul, նշվ. աշխ., էջ 242:

Սենկակու (Դիաոյու) կղզիների հետ<sup>30</sup>, ՉժՀ-ի և Թայվանի, այլ նաև ՉժՀ-ի և տարածաշրջանի մի շարք երկրների՝ Վիետնամի, Մալայզիայի, Ինդոնեզիայի, Ֆիլիպինների միջև: Նշենք, որ վերջիններիս միջև առկա տարածայնությունները Սփրաթի և Պարասելյան կղզիների վրա գերիշխանություն հաստատելու հարցի շուրջ է: Վերոնշյալ կղզիների գրավչությունը պայմանավորված է նավթի և բնական գազի հսկայական պաշարների առկայությամբ<sup>31</sup>: Ճապոնիան պատրաստակամություն է հայտնել աջակցելու Ֆիլիպիններին՝ Չինաստանի հետ առկա տարածայնությունները լուծելու հարցում: Ավելին՝ 2013 թ. փետրվարին Ֆիլիպինների արտաքին գործերի նախարար Ալբերտ դել Ռոզարիոն հայտարարել է, որ Ճապոնիան 1,5 տարվա ընթացքում իրենց երկրին կտրամադրի 10 նոր պարեկային նավեր<sup>32</sup>:

Փաստորեն, Ծագող արևի երկիրն անհանգստացած է Հարավչինական ծովում կամ որևիցե այլ ծովային ուղիներում առկա տարածքային խնդիրների հնարավոր լարվածության ուժեղացմամբ,

---

<sup>30</sup> Սենկակուն՝ կղզիախմբի ճապոնական, իսկ Դիաոյուն՝ չինական անվանումն է: Սենկակուն բաղկացած է 5 խոշոր կղզիներից: 1960-ականների կեսերից մինչև 1970-ականների սկզբները ՉժՀ-ն, Թայվանը և Ճապոնիան հաշվում էին, որ այդ կղզիները գտնվում են իրենց իրավասության տակ: 1972 թ. չին-ճապոնական դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր՝ Ճապոնիայի կառավարությունը հայտարարեց, որ Սենկակու կղզիները այսուհետ գտնվելու են Ճապոնիայի իշխանության ներքո: Այնուամենայնիվ, Ճապոնիայի և ՉժՀ-ի միջև հաստատված երկկողմանի համաձայնության շնորհիվ՝ Ճապոնիան համաձայնվեց թույլ չտալ ինչպես օտարերկրացիներին, այնպես էլ Ճապոնիայի քաղաքացիներին մուտք գործել վերոնշյալ կղզիներ մինչև վերջնականապես չլուծվի այս խնդրի շուրջ առկա չին-ճապոնական տարածայնությունները: Սակայն վերջերս Ճապոնիան հարց է բարձրացրել վերոնշյալ կղզիներն ազգայնացնելու վերաբերյալ, քանի որ Սենկակու կղզիների նկատմամբ Չինաստանի կողմից ծավալապաշտական քաղաքականության ընդլայնման փորձեր են նկատվել: Այս մասին տե՛ս Zhai Xin. Motives of the Japanese Democratic Government's "Nationalization" of the Diaoyu Islands, China International Studies, September/October 2012, pp. 36-50.

<sup>31</sup> Սփրաթի կղզիների շղթան, որը տեղակայված է Հարավ-Չինական ծովում, բաղկացած է ավելի քան 100 կղզիներից (պատկանում են Վիետնամին, Թայվանին, ՉժՀ-ին, Մալայզիային, Բրունեյին և Ֆիլիպիններին): Այստեղ հաճախ Չինաստանի ծավալապաշտական քաղաքականության արդյունքում տեղի են ունենում բախումներ: Այս մասին տե՛ս <http://www.globalsecurity.org/military/world/war/spratly-claims.htm>

<sup>32</sup> <http://www.interfax.ru/news.asp?id=315197>

քանի որ ցանկացած միջադեպ կարող է անարխորժության պատճառ դառնալ նավթ առաքող նավերի համար: Նման միջադեպեր արդեն գրանցվել են: 2004 թ. մարտին Ճապոնիայի և Չինաստանի միջև բախումներ տեղի ունեցան այն բանից հետո, երբ չինական և թայվանական ակտիվիստները փորձ ձեռնարկեցին ընդլայնելու իրենց իրավասությունները Սենկակու կղզիների վրա, սակայն Ճապոնիայի պահակախմբի զինվորներին հաջողվեց խոչընդոտել վերջիններիս կողմից դիրքերի ամրապնդման փորձը<sup>33</sup>: Նշենք, որ նմանատիպ մի շարք միջադեպերի պատճառով Ճապոնիայի կառավարությունն այժմ քննարկում է Սենկակու կղզիներում ՃՌՌԻ-ի տեղակայման հարցը<sup>34</sup>: Ավելին՝ Ճապոնիայի կառավարությունն իր մտադրությունն է հայտնել ռազմական ծախսերը 2%-ով ավելացնելու վերաբերյալ, որը կկազմի ավելի քան 4.7 տրիլիոն իեն (53,4 մլրդ ԱՄՆ դոլար): Այդ գումարը նախատեսվում է ծախսել ցամաքային ինքնապաշտպանական ուժերի անձնակազմը մեծացնելու, ինչպես նաև ծովային, ցամաքային և օդային սպառազինությունները բարելավելու համար: Ճապոնիայի Պաշտպանության նախարարությունը հարց է բարձրացրել սեփական բալիստիկ հրթիռների մշակման վերաբերյալ, որը հնարավորություն կտա կանխելու Սենկակու կղզիների վրա հնարավոր հարձակումը: Վերոնշյալ հրթիռները նախատեսվում է տեղակայել Ճապոնիայի Օկինավա կղզում, որը հնարավորություն կտա սահմանել վերահսկողության 400-500 կմ հեռավորության վրա<sup>35</sup>:

Մյուս կարևոր գործոնը, որը մեծ վտանգ է ներկայացնում Ճապոնիայի նավթի ծովային ուղիների համար՝ ծովահենների և

---

<sup>33</sup> Senkaku belong to Japan: Panel, March 31, 2004, <http://www.japantimes.co.jp/text/nn20040331a9.html>

<sup>34</sup> Ճապոնիայի կառավարությունը 2012 թ. սեպտեմբերի 11-ին գնեց մասնավոր սեփականատերերից Սենկակու կղզիներից 3-ը՝ դրանով իսկ սկիզբ դնելով Չինաստանում հակաճապոնական բողոքների ակցիային: Այս մասին տե՛ս Japan likely to increase defense spending due to territorial disputes, JapanToday, 06.01.2013, [http://www.japantoday.com/category/politics/view/japan-likely-to-increase-defense-spending-due-to-territorialdisputes?utm\\_campaign=jt\\_newsletter&utm\\_medium=email&utm\\_source=jt\\_newsletter\\_2013-01-06\\_AM](http://www.japantoday.com/category/politics/view/japan-likely-to-increase-defense-spending-due-to-territorialdisputes?utm_campaign=jt_newsletter&utm_medium=email&utm_source=jt_newsletter_2013-01-06_AM)

<sup>35</sup> <http://topwar.ru/30029-yaponiya-mozhet-sozdat-sobstvennye-rakety-dlya-oborony-spornyh-ostrovov.html>

ահաբեկիչների խնդիրն է: Ծովահենների թիվը վերջին տասնամյակների ընթացքում բավական մեծացել է, որը պայմանավորված է մի շարք գործոնների առկայությամբ: Նախ մեծացել է ծովի դերը՝ որպես ապրանքատեղափոխման միջոց: Նշենք, որ որոշ տվյալների համաձայն՝ ապրանքների մոտ 90%-ն առաքվում է ծովով<sup>36</sup>: Երկրորդ գործոնը՝ ծովային ուղիներով առաքվող էներգակիրներն են, որոնք, բնականաբար, գայթակղիչ են ծովահենների համար: Նշենք, որ ծովահենների հարձակումների վտանգը Ճապոնիայի նավթի ծովային ուղիներին սպառնում է ինչպես Պարսից ծոցի, այնպես էլ խաղաղօվկիանոսյան տարածաշրջաններում, որը, անշուշտ, ստիպում է Ճապոնիային ուժեղացնել իր ռազմաքաղաքական դերը՝ երկրի տնտեսական շահերի ապահովման նկատառումներից ելնելով: Ըստ Միջազգային ծովային բյուրոյի (International Maritime Bureau) տվյալների՝ ծովահենների կողմից իրականացվող հանցագործությունների թիվը գնալով աճում է<sup>37</sup>: Այսպես՝ 2003 թ. գրանցվել է ծովային հարձակումների 445 դեպք նախորդ տարվա 370-ի փոխարեն, որոնցից 121 միջադեպը տեղի է ունեցել Մալակկայի, Սունդայի և Լոմբոկի նեղուցներում: Հարկ է նշել, որ ծովահենների հարձակումների 25%-ը 2006 թ.-ի դրությամբ գրանցել են Հարավ-Արևելյան Ասիայում, մասնավորապես՝ Ինդոնեզիայի արքիպելագոմ, Մալակկայի նեղուցում, Հարավ-Չինական և Արևելաչինական ծովերում<sup>38</sup>, որտեղով անցնում են աշխարհի նավարկությունների կեսից ավելին: Բարձր ռիսկային գոտիների շարքում են նաև Հորմուզի նեղուցը, Սոմալիի և Ադենի ծոցերը, Պերույի, Բանգլադեշի և Մալայզիայի ծովային տարածքները, որտեղ գրանցվել են տարեկան հարձակումների մոտ կեսը<sup>39</sup>: Նշենք, որ միայն Հորմուզի նեղուցով օրական առաքվում է 15.5 մլն բարել նավթ, որը կազմում է ընդհանուր նավթային արտահանումների 73%-

<sup>36</sup>

<http://www.globalsecurity.org/military/world/war/spratly.htm>;

<http://www.imo.org/About/Pages/Default.aspx>

<sup>37</sup> Halloran R., A Maritime Nightmare in the Making, The Japan Times, March 6, 2004, <http://www.japantimes.co.jp/text/eo20040306a2.html>

<sup>38</sup> Chalk P., The Maritime Dimension of International Security Terrorism, Piracy, and Challenges for the United States, California, 2008, p. 8.

<sup>39</sup> International Maritime Bureau, 2007, p. 5, <http://www.icc-ccs.org>

ը<sup>40</sup>, իսկ Մալակկայի նեղուցով՝ 10.3 մլն բարել նավթ<sup>41</sup>: Հորմուզի նեղուցով առաքվող նավթի 7%-ը ներկրվում է ԱՄՆ, 25%-ը՝ Արևմտյան Եվրոպայի երկրներ և 55-60%-ը՝ Ճապոնիա<sup>42</sup>: Հետևաբար նավթի արտահանումը խոչընդոտող ցանկացած միջադեպ կարող է մեծ վնաս հասցնել վերոնշյալ երկրների տնտեսություններին:

Պարսից ծոցի տարածաշրջանում նավթի ծովային ուղիների անվտանգությանը հատկապես մեծ վտանգ են ներկայացնում Սոմալիի ծովահենները<sup>43</sup>: Ըստ տվյալների՝ Ճապոնիայի ներկրումների 92%-ն անցնում են Ադենի ծոցով, և ծովահենների կողմից հարձակումների պատճառով մեծ վնաս է հասցվել երկրի տնտեսությանը<sup>44</sup>: Այդ պատճառով 2009 թ. մարտին Ճապոնիան Ադենի ծոց ուղարկեց Ծովային ինքնապաշտպանական զորքեր՝ Սոմալիի ծովահեններին հակահարված տալու նպատակով: Սակայն դա չկանգնեցրեց ծովահեններին, որոնք շարունակում են մինչ օրս ընդլայնել իրենց ազդեցության գոտիները: Այժմ Սոմալիի ծովահենների նպատակն է իրենց ազդեցությունը հաստատել Եմենի փոքր կղզիների, Հնդկական օվկիանոսի արևմտյան ափերի, ինչպես նաև Ադենի ծոցի և Օմանի ափամերձ շրջանների վրա: Միայն 2011 թ. ճապոնական նավերը կողոպտվել են ծովահենների կողմից ավելի քան 10 անգամ, ինչը մեծ սպառնալիք է Ճապոնիայի տնտեսության համար: Հարկ է նշել, որ Ճապոնիայի էներգետիկ անվտանգությանը, բացի ծովահեններից, մեծ վտանգ է սպառնում նաև ահաբեկչական կազմակերպությունների, հատկապես՝ իսլամական «Ալ-Շաբաբ» խմբավորման<sup>45</sup> և «Աբդուլ

---

<sup>40</sup> «Kyodo News Service», May 18, 1984.

<sup>41</sup> Lehr P., Violence at Sea: Piracy in the Age of Global Terrorism, New York, 2007, p. 23.

<sup>42</sup> «The Japan Times», 07.06.1987.

<sup>43</sup> Նշենք, որ Սոմալիի ծովահենների թիվն անհամեմատ մեծացավ 1990-ականների սկզբին, ինչին մեծապես նպաստեց Սոմալիում սկսված քաղաքացիական պատերազմը, որի պատճառով ստեղծվել էր ծանր տնտեսական պայմաններ և մեծացել էր երկրում գործազրկության ցուցանիշը: Այս մասին տե՛ս Lehr P., նշվ. աշխ., էջ 2:

<sup>44</sup> [http://www.upi.com/Business\\_News/Security-Industry/2010/05/11/Japan-to-build-navy-base-in-Gulf-of-Aden/ UPI-60511273596816/](http://www.upi.com/Business_News/Security-Industry/2010/05/11/Japan-to-build-navy-base-in-Gulf-of-Aden/ UPI-60511273596816/)

<sup>45</sup> Այս ծայրահեղական ահաբեկչական խմբավորումն առաջացել է Սոմալիում տիրող անկայուն քաղաքական և սոցիալական իրավիճակների արդյունքում: Այս մասին տե՛ս [http://www.leadership.ng/nga/articles/16139/2012/02/12/au\\_says\\_alshaab\\_driven\\_global\\_terrorist\\_agenda.html](http://www.leadership.ng/nga/articles/16139/2012/02/12/au_says_alshaab_driven_global_terrorist_agenda.html)



Ազգամ Բրիգադ»-ի կողմից<sup>46</sup>: Վերոնշյալ խմբավորումները, ըստ պաշտոնական տվյալների՝ կապված են «Ալ-Քաիդա» ահաբեկչական կազմակերպության հետ<sup>47</sup>: 2010 թ. օգոստոսի 3-ին «Աբդուլ Ազգամ Բրիգադ»-ի ահաբեկչական գործողությունների զոհ դարձավ Հորմուզի նեղուցով Կատարից Ճապոնիա ուղևորվող նավթային տանկերը՝ «Մ. Սթարը» («M. Star»)<sup>48</sup>, ինչը լուրջ մտահոգություն առաջացրեց Ճապոնիայի կառավարության և նրա բիզնես հասարակության շրջանակներում: Այդ է պատճառը, որ Ճապոնիայի կառավարությունը, ելնելով իր տնտեսական շահերից, որոշեց 2011 թ. հուլիսին Ադենի ծոցում գտնվող Զիբուֆի նավահանգստում տեղակայել ռազմածովային բազա, որը Ճապոնիայի առաջին ծովային ռազմական բազան է Երկրորդ աշխարհամարտից հետո<sup>49</sup>:

Ծովահենների և ահաբեկչական կազմակերպությունների կողմից իրականացվող գործողությունների արդյունքում տուժում է ոչ միայն Ճապոնիան, այլև միջազգային հանրության մյուս անդամները: Այդ պատճառով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ստեղծվել է Միջազգային ծովային կազմակերպությունը (International Maritime organization)<sup>50</sup>, որի հիմնական գործառույթներից մեկն է կասեցնել ծովահենների և ահաբեկիչների կողմից իրականացվող գործողությունները և ապահովել նավերի անվտանգ երթևեկությունը:

---

<sup>46</sup> Նշենք, որ «Աբդուլ Ազգամ բրիգադ»-ն անվանվել է հայտնի իսլամական քարոզիչ, շեյխ Աբդուլ Ազամի անունից, ով 1980-ականներին ոգեշնչել է «Աֆղան արաբներին»: «Աբդուլ Ազգամ բրիգադը» սուննի իսլամական ռազմական խմբավորում է, որը ստեղծվել է 2009 թ. Սալեհ Ալ-Քարաավիի կողմից: Այս խմբավորումն ունի զանազան ճյուղեր մի շարք երկրներում, ինչպիսին են Լիբանանը, Պակիստանը, Սիրիան, Հորդանանը:

<sup>47</sup> Lehr P., նշվ. աշխ., էջ 19: Bronwyn E. Bruton, Somalia: A New Approach, New York, 2010, p. 3.

<sup>48</sup> Նշենք, որ տանկերը Կատարից ճապոնիա էր առաքում 2 միլիոն բարել նավթ: Այս մասին տե՛ս [http://www.nytimes.com/2010/08/07/world/middleeast/07tanker.html?\\_r=0](http://www.nytimes.com/2010/08/07/world/middleeast/07tanker.html?_r=0)

<sup>49</sup> <http://www.asahi.com/politics/update/0601/TKY201106010577.html>;  
<http://www.guardian.co.uk/world/2011/jan/21/south-korea-rescue-somali-pirates>

<sup>50</sup> Միջազգային ծովային կազմակերպությունը (ՄԾԿ) ստեղծվել է 1948 թ. Ժնևում ընդունած կոնվենցիայի համաձայն, որն ուժի մեջ է մտել 1958 թ.: ՄԾԿ-ն 1998 թ. հուլիսի 1-ին ընդունեց օրենք, համաձայն որի՝ կազմակերպությունը պետք է վերահսկողություն սահմանի ծովային ուղիներով տեղափոխվող էներգակիրների անվտանգ առաքման և ծովահենների գործողությունների կասեցման ուղղությամբ: Այս մասին տե՛ս <http://www.imo.org/About/HistoryOfIMO/Pages/Default.aspx>

**THE ACTIVATION OF JAPAN'S MILITARY ROLE IN THE PERSIAN GULF  
AND THE ISSUE OF SECURITY OF "SEA LINES" AFTER THE EVENTS  
OF SEPTEMBER 11, 2001**

After the Post-Cold War, the geopolitical situation in the world has transformed, which propel Japan to activate its military role not only in Asia-Pacific region but also in the Middle East. One of the reasons of enhancing Japan's military role is the competitiveness of Asian countries such as China and India in the sphere of energy imports. Noteworthy to mention that since 1993 China has become the oil net importer and in 2003 occupied the second place in the quantity of oil imports. Thus, the competitiveness of China in energy sphere enhances also the competition between two states in the sphere of the regional navy. Not only Japan is interested in deterring China's influence, but also some other countries of the region such as Singapore, Australia, Philippines, Malaysia, Indonesia and the USA. Japan round up support receiving from them to become countermeasure force in the region against China.

It is important to note that Japan's self-defense forces become one of the most developed military-industrial complexes in the region, having the second biggest navy after the USA.

In April 2001 Japan's parliament suggested to review the constitutional provisions for expanding the military role. It became possible to bring in life after the terrorist attacks in September 11, 2001, when the threat made Japan do concrete steps. Thus on January 9<sup>th</sup> 2007, Tokyo made a decision to alter Defense Agency to Defense Ministry which gave the jurisdiction to the government for acting more drastically in emergency situation and enhancing its influence on making decisions of Foreign policy. Later Shinzō Abe's government continued the policy of his predecessor-Junichiro Koizumi. He added the provisions that no longer fit the times should be reviewed.

Japan's economy depends on energy imports from Persian Gulf so the safety of the territory through which are passing oil and natural gas is very important. Any incident or any territorial dispute can be a reason of damage of the security of the oil sea lines.

The main threats for the security of the sea lines come not only from territorial disputes that available between Japan and China related to Senkaku (Diaoyu) islands or between China and other countries of Pacific Ocean such as Taiwan,

Philippines, Malaysia, Vietnam and Indonesia, but also from the pirates and the terrorists. It is noteworthy to mention that 25% of pirates' attacks are registered in Southeast Asia, particularly in the Strait of Malacca, in the seas of South China and East China, through which are passing the half of shipping of the world. The great treats for the oil sea lines of the Persian Gulf region come from Somali pirates the bases of which are situated in the state of Somali near Africa horn, in Hormus and Aden straits. Since the early 1990s, the number of Somali pirates has increased after the central Somali government collapsed and civil war broke out. The Somali pirates now are expanding their territory to Yemen's small islands, which have become bases for the pirates, who threaten the ships sailing in and out of the Persian Gulf. They most frequently ply the waters between western Indian Ocean and the Gulf of Aden, particularly off the coast of Oman near the Persian Gulf. Against this backdrop, I should note that Japan's energy security is depend on unimpeded shipping in the Persian Gulf as through this territory is passing 92% of Japan's imports. In March, 2009 Japan's government sent to the Gulf of Aden the maritime Self-defense forces for rebuting the Solami pirates. By 2011, Japanese ships had been attacked ten times by Somali pirates near the Persian Gulf, demonstrating the grave threat to the Japanese economy.

The threats of oil sea lines come also from the terrorists – “Abdullah Azzam Brigades” and islamists “Al-Shaab group”. Both call themselves the branches of “Al-Qaeda”. In August, 2010 when a Japanese tanker- M.Star, was attacked in the Strait of Hormuz by an Islamic extremist group - the Abdullah Azzam Brigades, it horrified the Japanese government and its business community. Thus Japan in July of 2011 mounted in Djibuti port in the Gulf of Aden its naval base which was Japanese first base after the Second World War.

The issue of the security of the sea lines put to trouble not only Japan but also the other members of International Community. For ensuring the safety of ships' traffic, the Security Council of the United Nation established International Maritime organization.

## ԿԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆ

### ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (2010-2013 թթ.)

Իրադրությունը Մերձավոր Արևելքում իր աշխարհաքաղաքական ընդգրկումներով տարբեր ժամանակահատվածներում առավել ցայտուն է դառնում, գծագրվում և իր ազդեցությունն է թելադրում տարածաշրջանի որոշակի երկրների միջազգային հարաբերությունների համատեքստում, նաև թափանցելով հասարակական քաղաքական գործընթացների ոլորտ, անսպասելի հետևանքներով: Լարված անկայուն իրադրությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում 2010-2013 թթ. որքան էլ շարունակական է, անավարտ և հարցականներ կրող, այնուամենայնիվ գիտական վերլուծությունների և քաղաքական մեկնաբանությունների կիզակետից դուրս չէ:

Այս առումով հետաքրքրական են որոշ մասնագիտական գնահատականներ և կանխատեսումներ, որոնք առանձնակի ուշադրության են արժանի: Նշված ժամանակահատվածում առաջնային է իրադրությունը Սիրիայում, սակայն ստեղծված կացությունը դարձյալ քաղաքագետների և վերլուծաբանների ուշադրությունը ուղղում է Իրաքին՝ ոչ միայն վերջին տարիների հայտնի իրադարձությունների, այլ նաև զուգահեռներ գծում հետևանքների և հենց նույն 2010-2013 թթ. Իրաքում հասարակական քաղաքական գործընթացների պատկերը ներկայացնելու նպատակով:

«Ռուսաստանը կոչ է անում չփլուզել իշխանության ինստիտուտները Սիրիայում», քանի որ «Ասադի հեռանալը չի կասեցնի սպանդը»<sup>1</sup>: Այս վերտառություններով վերլուծականները նաև վերաբերում են Իրաքին, դառնալով զգոնության նախազգուշացում:

«Մոսկվան հասկացնել է տալիս, որ չի ցանկանում Արևմուտքի հետ կիսել Սիրիայում ապագա քառսի համար պատասխանատվություն և

<sup>1</sup> “Независимая газета”, 24 декабрь, 2012.

առավել կտրուկ պահանջում է ճգնաժամի մնացած արտաքին մասնակիցներից ճշում գործադրել ընդդիմության վրա, որպեսզի ընդդիմությունը Դամասկոսում նստի բանակցությունների սեղանի շուրջ: Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ) նախագգուշացնում է, որ նախագահ Բաշար Ասադի տապալումը չի կասեցնի արյունահեղությունը, քանի որ դրան կհաջորդի միջկրոնական միջկոնֆեսիոնալ հակամարտություն իրաքյանի նման»: Հոդվածագիրը մեջբերում է կատարում ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովի ելույթից Բրյուսելում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, ուր նա հատուկ ընդգծել էր, որպես նախագգուշացում՝ Սիրիայում Բ. Ասադի տապալման դեպքում «նոր ուժով կթեժանա պայքարը սուննիների, շիաների, ալավիների, դրուզների, քրիստոնյաների և քրդերի միջև»<sup>2</sup>: Տվյալ իրադրության գնահատականը հաստատում է, թե որքան սերտ փոխազդեցություն է առկա տարածաշրջանում՝ արաբական երկրների օրինակով: «Ռուսաստանը համառորեն կոչ է անում չփլուզել Սիրիայում իշխանության ինստիտուտները, հիշեցնելով 2003 թվականին Իրաք ներխուժման տխրահոջակ փորձը և լիբիական իրադարձությունների ոչ միանշանակ հետևանքների մասին»<sup>3</sup>:

Իրաքը ամերիկյան ներխուժումից հետո, դրա բոլոր կործանարար հետևանքներով, դեռ երկար կմնա միջազգային քաղաքագիտության տեսադաշտում, քանի որ քառսային իրադրությունը երկրում շարունակվում է: Դա տեսանելի է նաև ԱՄՆ-ում, քանի որ այստեղ նույնպես սիրիական խնդրի շուրջ տեսակետները հակասական են: Քաղաքագետները վերստին անդրադառնում են, նորովի դիտարկում Իրաքում Սադամ Հուսեյնի տապալումից հետո ստեղծված իրադրությունը, ընդգծելով, որ այդ ժամանակահատվածում մարդկային զոհերի թիվը առնվազն 100 հազարի է հասնում<sup>4</sup>:

Այս ընդհանրացումներից ելնելով պարզորոշ է դառնում, որ «Ասադի կառավարության հրաժարականը չի նշանակում Սիրիայի խնդիրների

---

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

ավարտ: Կարևոր է ոչ միայն այն, թե երբ նա կհեռանա իշխանությունից, այլ նաև այն թե ինչպես դա կիրականանա»<sup>5</sup>:

Այս հարցադրումը հատկանշական է և ուղղված է նաև «հեղափոխական» ալիքը որդեգրած արաբական երկրներից յուրաքանչյուրին, ստեղծելով որոշակի տեսադաշտ, գնահատական և ապագային ուղղված մտահոգություն հնարավոր զարգացումների ընթացքով:

«2011 թ. սկսված «հեղափոխությունների» առաջին փուլը ավարտված» համարելը դեռևս չի նշանակում որևէ առաջխաղացման դիտարկում ժողովրդավարացման ճանապարհին, քանի որ գործընթացները հակառակն են ապացուցում: Լիբիան «պետությունից վեր է ածվել «տարածքի», ուր կան էներգակիրների պաշարներ և տարբեր հոսանքների շուրջ միավորված և միմյանց միջև հակամարտող բնակչության խմբեր»<sup>6</sup>:

Եգիպտոսում ղեկավարում է ոչ լեգիտիմ զինվորական «խունտան» և համաձայն ժողովրդավարական չափանիշների ընտրություններում անվիճելի առավելության հասած իսլամիստները՝ այդպիսի սինթեզը նվազագույնը մոտ ապագայում փաստորեն այդ երկիրը գրկում է ժամանակակից զարգացման հեռանկարից»<sup>7</sup>: Հույս չի ներշնչում նաև սահմանադրական բարեփոխումների ընթացքը Եգիպտոսում և երկրի նոր նախագահի շուրջ ստեղծված հակասական վերաբերմունքը: Այն ինչ կատարվում է Եգիպտոսում 2012 թ. դրությամբ, հաստատում է վերը նշված մեջբերման հեղինակի կանխատեսման իրավացիությունը:

«Այս իրողությունները անկախ ձևավորման հնարքներից, իրենց բովանդակությամբ և տրամաբանությամբ համընկնում են Իրաքում ամերիկյան ներխուժումից հետո ստեղծված կացությանը՝ այդ երկիրը և նրա բնակչությունը բաժանվեցին էթնիկ և մասնագիտական հատկանիշների տվյալներով, պետական համակարգը փաստորեն չի

---

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Арутюнян Г., Новый Ближний Восток: реалии и перспективы, Стратегия развития, 2012, с. 57.

<sup>7</sup> Նույն տեղում:

գործում, իսկ միջկրոնական ընդհարումները և ահաբեկչությունները դարձել են սովորական երևույթ»<sup>8</sup>:

Ինչ վերաբերվում է Իրաքին, ապա այդ երկիրը նույնպես դիտարկվում է ավերածությունների ենթարկված «տարածքների» շարքում: «Իրաքը ավելի շուտ ձեռք բերեց «տարածքի» կարգավիճակ, և նրա զարգացման հեռանկարների մասին խոսակցությունները նույնքան վիճելի են, ինչպես Լիբիայի կամ Եգիպտոսի դեպքում: Այսօր արվում է գրեթե ամեն ինչ, որպեսզի նման իրադրության մեջ, հայտնվի Սիրիան, իսկ որոշակի սցենարներով մինչև իսկ Իրանը»<sup>9</sup>:

Նման դիտարկումները ստեղծված իրավիճակների և անցյալի փորձի վրա հիմնված մտահոգություններ են, միտված տարածաշրջանում խաղաղության պահպանմանը և ապահովմանը: Սրանք երկրներ են, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը բարեկամական սերտ կապերով է խարսխված, հայկական համայնքների ապագայի, գոյապահպանման և իհարկե արաբ ժողովրդի և այդ տարածքներում բնակվող ազգային փոքրամասնությունների հանդեպ հումանիստական մղումներով: Անգամ եթե Մերձավոր Արևելքում ստեղծված քաղաքական իրադրության և որոշ արաբական երկրների զարգացման առաջիկա հեռանկարների շուրջ գնահատականները չափազանցված համարենք, լավատեսության համար կանխադրյալներ են անհրաժեշտ, ինչը սթափ մոտեցումներ, դիվանագիտական հեռատես քաղաքականություն և մեծ ջանքեր է պահանջում:

2011 թ. «հեղափոխությունների» ալիքը որոշ արաբական երկրներում, ուր «ժողովրդավարություն» կոչվածը մարդկանց կյանքեր է խլում և ավեր տարածում, ստիպում է անդրադառնալ տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրի անցած ուղուն և այս համատեքստում նաև Իրաքին<sup>10</sup>:

---

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>10</sup> Տե՛ս Սամվելյան Կ., Արաբский регион, проблемы демократии (1960-1970-ые годы), Ереван, 2009; նույնի, Հասարակական քաղաքական իրադրությունը Իրաքում, 1980-2010 թթ., Երևան, 2012:

Ընդունված է կարծել, որ 2011 թ. վերջին Իրաքից ամերիկյան զորքերի դուրս բերումով երկրում խնդիրները լուծվում են: Այնինչ այդ միտումը հարցականի տակ է: Իրաքի բարձրաստիճան զինվորականության շրջանում նույնպես այդ հարցի պատասխանը պարզ էր ու հստակ: Այսպես գեներալ-լեյտենանտ Բաբակիր Ջեբարին գտնում էր, որ այդ որոշումը ժամանակից շուտ է՝ քանի, որ Իրաքի ազգային բանակին անհրաժեշտ կլինի ևս մոտավորապես տաս տարի, մինչ բանակը կկարողանա ինքնուրույն վերահսկել իրադրությունը երկրում: Ըստ այդ նույն վկայության՝ միայն 2010 թ. օգոստոսի սկզբից Իրաքի տարբեր շրջաններում զինյալների հարձակումների հետևանքով հարյուրից ավելի մարդ է զոհվել, իսկ հուլիսը ամենաարյունալի ամիսն էր սկսած 2008 թվականից<sup>11</sup>: Այս այն դեպքում, երբ օգոստոսի դեռ կեսն էլ չէր անցել: 2011 թ. սվյալներով՝ նշվում են 10 հազար ամերիկյան զինծառայող, այնինչ կառավարության պահանջով անհրաժեշտ էր 3 հազար:

Հայտնի է, որ «2010 թ. օգոստոսին, երբ ԱՄՆ-ը Իրաքից դուրս բերեց իր վերջին մարտական ստորաբաժանումը, դեռևս 45 հազար զինծառայողներ մնացին երկրում Իրաքի անվտանգության ծառայության աշխատակիցներին մարզելու նպատակով: Ուշագրավ է, որ Իրաքի վարչապետ Նուրի Մալիքին կողմ էր ամերիկյան ներկայության պահպանմանը»:

Սադամ Հուսեյնի տապալումից հետո շիա իրաքցիների հոգևոր առաջնորդ Մուքթադա ալ Սադրը ամերիկյան զորքերի դեմ պայքարում է 2003 թվականից: Նրա ղեկավարությամբ «Մահդիի բանակ» արմատական զինվորական կազմակերպությունը Սադամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո Իրաքում ծավալված պարտիզանական շարժման գլխավոր շարժիչ ուժերից մեկն էր: Դեռևս 2008 թ. նա դիմեց զենքը վայր դնելու մարտավարությանը, հնարավորություն տալով օտարերկրյա զորքերին հեռանալ Իրաքից, սակայն պահպանելով իր ստեղծած բանակի մարտունակ ստորաբաժանումները:

2011 թ. ընթացքում նման փոփոխական մարտավարությունը հատուկ է դիմակայման գործողություններում: Այսպես, 2011 թ.

---

<sup>11</sup> “Независимая газета”, 13 август, 2010.



հունվարին նա վերստին հայտարարել էր «զավթիչներին դիմակայելու» անհրաժեշտության մասին, իսկ նույն տարվա սեպտեմբերին շիա իրաքցիների հոգևոր առաջնորդ Մուքթաֆա ալ Սադրը իր կողմնակիցներին կոչ արեց դադարեցնել հարձակումները ամերիկացի զինծառայողների վրա, թույլ տալով նրանց Իրաքից հեռանալ: Սա բացատրվում է նրանով, որ նման գործողությունները ձգձգում են զորքերի դուրսբերումը երկրից<sup>12</sup>:

Իրաքից օտարերկրյա զինծառայողների հեռանալու խնդիրը հանգեցնում է երկրում ստեղծված անկայուն իրադրության, պարբերական մարտական բախումների, որի արդյունքում մարդկային անմեղ զոհերի և ավերածությունների թիվն ավելանում է:

Լշենք, որ Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքիի հետ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման հարցը բավական ձգձգվող բանակցությունների առիթ էր:

«Նախագահ Բարաք Օբաման 2011 թ. հոկտեմբերի 21-ին հայտարարել էր, թե մինչև տարեվերջ ամերիկացի բոլոր 39 հազար զինվորները դուրս կբերվեն Իրաքից: Ավելի վաղ ձեռք բերված երկկողմ համաձայնությամբ նախատեսվում էր երկրում ամերիկյան փոքրիկ զորաբաժին թողնել իրաքյան բանակի կազմավորմանն օժանդակելու համար: Սակայն Օբաման հոկտեմբերին որոշել էր ամբողջ զորքը դուրս բերել, քանի որ վարչապետ Նուրի ալ Մալիքիի հետ չէր կարողացել հստակեցնել ամերիկյան զորքերի կարգավիճակը 2011 թվականից հետո<sup>13</sup>: Վաշինգտոնը իր զինծառայողների համար պահանջում էր դատական անձեռնմխելիություն, մինչդեռ Մալիքին դեմ էր դրան»<sup>14</sup>:

Այնուամենայնիվ նախատեսված վերջնաժամկետը 2011 թ. դեկտեմբերի 31-ն էր, որից հետո Իրաքում 4-5 հազար ամերիկացի զինծառայող պետք է մնար<sup>15</sup>:

---

<sup>12</sup> «Ազգ», 14 սեպտեմբեր, 2011:

<sup>13</sup> Տե՛ս Սամվելյան Կ., Հասարակական քաղաքական իրադրությունն Իրաքում 2008 թվականին և ամերիկյան զորքերի երկրից դուրսբերման խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2009, XXVII, էջ 123-134:

<sup>14</sup> «Ազգ», 12 նոյեմբեր, 2011:

<sup>15</sup> Նույն տեղում:

2011 թ. հոկտեմբերի 21-ին Օբաման հայտարարեց, որ ամերիկյան բոլոր զորքերը մինչև տարեվերջ Իրաքից դուրս կբերվեն: Հայտնի է, որ Օբամայի այդ և Աֆղանստանում ռազմական ներկայությունը փոքրացնելու մասին որոշումները առաջ էին բերել նրա շուրջ լուրջ քննադատություն ԱՄՆ-ի հանրապետականների կողմից:

Փաստորեն Պարսից ծոցի շրջանում ԱՄՆ-ի ռազմական ներկայության ուժեղացումը շատ հստակ նախանշվում էր մինչ Իրաքից ամերիկացի զինծառայողների վերջնական դուրսբերումը: Այդ նպատակով օգտագործվում էր Քուվեյթի տարածքը: 2011 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների դրությամբ Քուվեյթում ամերիկացի զինծառայողների թիվը 23 հազար էր:

Համաձայն մամուլի տվյալների «ԱՄՆ-ը կուժեղացնի ռազմական ներկայությունը Պարսից ծոցի շրջանում» կանխատեսումով՝ «սպասվում է, որ ամերիկյան հավելյալ զորքեր կտեղաբաշխվեն Քուվեյթում: Այստեղից ամերիկացիները կկարողանան վերահսկել Իրաքի անցուդարձը և արագորեն արձագանքել Իրանի հետ հակամարտության ծագման դեպքում»: «Տվյալ ծրագիրը մշակվեց այն բանից հետո, երբ Վաշինգտոնին չհաջողվեց Իրաքի հետ համաձայնության գալ ամերիկյան զորքի մի մասը երկրում թողնելու հարցի շուրջ»<sup>16</sup>:

Ինչպես պարզորոշ նկատելի է, ԱՄՆ-ը Իրաքից վերջնականորեն հեռանալու և իրադրությունը երկրում տեսադաշտից անտեսելու նպատակ և վճռականություն չի ցուցաբերում նաև նշված ժամանակահատվածում: Աֆղանստանում և Իրաքում ԱՄՆ-ի ձախողումը թելադրում է նոր մարտավարություն:

Իրաքի նոր և նորագույն պատմության էջերը՝ անգլիական մանդատ (1920 թ.), անգլո-իրաքյան կաբալային պայմանագիր (1930 թ.) վկայում են, որ ժամանակի հետ անցյալի ծավալապաշտական գաղութատիրական մղումները դարձյալ ակտիվանալու տենդենցներ են ի հայտ բերում, հավակնություններ արտահայտում, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ միջազգային իրադրությունը շատ է փոխվել, և Իրաքը 1958 թ. հուլիսի 14-ից անկախ հանրապետություն է:

---

<sup>16</sup> «Ազգ», 1 նոյեմբեր, 2011:

Լարված և պայթյունավտանգ իրադրությունը ցավոք շարունակական դարձավ երկրում նաև հետագա ամիսներին: Մինչ մարդկային զոհերի թիվը գնալով ավելանում էր, և ավերված երկրի վերականգնման հարցը նորանոր խնդիրներ էր առաջադրում, «տխրահոռակ» կոալիցիայի անդամ երկրների ներկայացուցիչներից Թ. Բլերն իր գրքում պատմում է, որ «Սադամ Հուսեյնի տապալումից հետո ինքը չէր սպասում, թե Իրաքում նման «մղձավանջային» իրավիճակ կստեղծվի: Այս կապակցությամբ նա ափսոսանք է արտահայտում և ներողություն խնդրում Իրաքում սպանված բրիտանացի զինվորականների հարազատներից»<sup>17</sup>:

Տարածաշրջանի խնդիրներին մասնակից գործիչների հուշագրությունների պակաս չի զգացվում, եթե դրան ավելացնենք նաև սպասվող «անկեղծությունների» գալիք դրսևորումները, սակայն դրանով իրադրությունը չի կարող կայունանալ: Վերը նշված մեջբերմանը ավելացնենք նաև անհամոզիչ փաստարկները, որոնք պարզապես ենթադրություններ են Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության և հնարավոր ավելի մեծ վտանգների մասին, քան այդ պատերազմն էր: Այդուհանդերձ Թ. Բլերը պնդում է, որ Իրաքի պատերազմին մասնակցելու իր որոշումը ճիշտ է եղել:

2011-2013 թթ. իր գործունեությունը արաբական խնդիրների շուրջ տարածաշրջանում ակտիվացրել է ոչ միայն ՄԱԿ-ը, այլ նաև Արաբական պետությունների լիգան: «Ատոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ արաբական որևէ երկրի նկատմամբ պատժամիջոցների ձեռնարկումը բացառիկ դեպք է Արաբական լիգայի պատմության մեջ: Այդ քայլերը կապված են քաղաքական ճգնաժամը խաղաղ միջոցներով լուծելու Ասադի անկարողության հետ»<sup>18</sup>:

2011 թ. նոյեմբերի 12-ին Սիրիայում շարունակվող բռնարարքների պայմաններում և դրանց վերջնալուծմանը հանգեցնելու նպատակով

---

<sup>17</sup> «Ազգ», 4 սեպտեմբեր, 2010:

<sup>18</sup> «Ազգ», 29 նոյեմբեր, 2011:

Արաբական պետությունների լիզան կասեցրեց Սիրիայի անդամակցությունը այդ կազմակերպությանը: Միաժամանակ վերջնագրային կարգով Լիզան Դամասկոսից պահանջեց թույլատրել արաբ դիտորդների ազատ մուտքն ու տեղաշարժերը Սիրիայում: Ասադի կառավարությունը մերժեց նոյեմբերի 25-ին ավարտված վերջնագրի պահանջը<sup>19</sup>:

Արաբական պետությունների լիզայի ընդունած պատժամիջոցների փաթեթը Սիրիայի կենտրոնական բանկի հետ գործառնությունները արգելելուց բացի նախատեսում էր նաև երկրում տարատեսակ նախագծերի ֆինանսավորման դադարեցում, մի շարք պաշտոնյաների հանդեպ արաբական այլ երկրներ մուտք գործելուն արգելք, Սիրիայի պաշտոնատար անձանց հաշիվների սառեցում Լիզայի անդամ երկրների բանկերում և այլն<sup>20</sup>: Բնական է, որ այս գործելակերպը բողոքի և ցասման ալիք էր բարձրացրել Սիրիայում, քանի որ դրանով իրադրությունը ոչ թե բարելավվում էր, այլ երկիրը հայտնվում էր մեկուսացման մեջ: «Պատժամիջոցների ձեռնարկման օգտին քվեարկել են Լիզայի անդամ 22 երկրներից 19-ի ներկայացուցիչները: Ֆրանսսպրեսի տվյալներով՝ ձեռնպահ են մնացել մասնավորապես Լիբանանը և Իրաքը: Լիբանանի իշխանությունները «սահմանազատվել» են Լիզայի որոշումից, իսկ Իրաքը նույնիսկ հրաժարվել է կատարել կազմակերպության հակասիրիական պահանջները: Պատժամիջոցների դեմ հանդես է եկել նաև Հորդանանը»<sup>21</sup>:

Իրադրությունը Սիրիայում չի սահմանափակվում միայն այդ երկրի առջև ծառայած խնդիրներով: Նպատակը խաղաղության և կայունության ապահովումն է տարածաշրջանում: «Խաղաղասիրական ծրագիրը նախապատրաստված էր ՌԴ և ԱՄՆ-ի ինտենսիվ խորհրդակցությունների արդյունքում, որոնք ծավալվել էին վերջին

---

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> «Ազգ», 29 նոյեմբեր, 2011:

<sup>21</sup> Նույն տեղում:

շաբաթներում: Չի բացառվում, որ ինչ որ դետալներ քննարկվել են նաև Պարսից ծոցի երկրների հետ ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովի նույնքեր ամսին Էռ-Ռիյադ կատարած այցելության ընթացքում»: Սակայն ըստ նույն աղբյուրի տեղեկությունների՝ խաղաղասիրական նշված ծրագրի իրագործումը հարցականի տակ է: Ծրագիրը հիմնված է Ժնևյան կոմյունիկեի վրա և ընդունված է 2012 թ. հունիսի 30-ին, համաձայն որի նախատեսվում է «անցումային կառավարության ստեղծում այն գործիչներից, որոնք սիրիական հակամարտության երկու կողմերին էլ կընդգրկեն: Այդ դեպքում Բ. Ասադը կարող է մնալ պետության միանձնյա ղեկավար մինչև 2014 թ., այդ ժամանակ լրանում է նրա նախագահական իրավասությունների ժամկետը»<sup>22</sup>: Համաձայն նշված ծրագրի՝ Ասադը 2014 թ. նախագահական ընտրություններին չի մասնակցի:

«Ասադը չի համաձայնվել միայն այդ վերջին պայմանի հետ. նա պատրաստ է հրաժարվել իր պարտավորություններից, սակայն մտադիր է 2014 թ. ընտրություններին մասնակցել», սա «Ալ-Ջազիրա» հեռուստաալիքից է, բանակցություններին մոտ կանգնած դիվանագիտական աղբյուրներից քաղված լրատվության կարգով:

Սիրիական ազգային կոալիցիայի բարձրաստիճան ներկայացուցիչ Ադիբ աշ-Շիշակլին ներկայացրել է Ասադի ընտրության երկու տարբերակները՝ կամ նա մասնակցում է իշխանությունը հանձնելուն և փոխարենը ստանում է անվտանգության միջազգային նախապայմաններ, կամ անցումային ժամանակահատվածի պարամետրերը համաձայնեցվում են առանց նրա և ոչ մի իմունիտետի մասին խոսք չի գնում: Աշ-Շիշակլին «Շարկ ալ-Ասուաթ» թերթի լրագրողներին հայտնել է, որ սիրիական առաջնորդը պահանջել է, որ անվտանգությունը և քրեական հետապնդումներից պաշտպանվելու իմունիտետը վերաբերվի նաև իր ընտանիքի 142 անդամներին և մերձավորագույն շրջապատին»<sup>23</sup>: Ռուս-ամերիկյան

<sup>22</sup> “Независимая газета”, 25 декабрь, 2012.

<sup>23</sup> “Независимая газета”, 25 декабрь, 2012.

խաղաղասիրական ծրագիրը կամ առաջարկվող գործողությունների պլանը Բաշար Ասադին է հանձնել ՄԱԿ-ի և Արաբական երկրների լիգայի հատուկ ներկայացուցիչ Լահդար Բրահիմին 2012 թ. դեկտեմբերի 24-ին<sup>24</sup>:

Ակնհայտ է, որ «ժողովրդավարություն» անվան տակ շարունակվող «արաբական գարունը» ծառայում է և վեր է ածվել «անհարմար վարչակարգերի հետ հաշիվ մաքրելու» գործընթացի: ՄԱԿ-ի տվյալներով միայն Սիրիայում զոհերի թիվը 40 հազարից ավելի է, իսկ փախստականների և երկրի ներսում վերաբնակվածների, թե բնակության վայրից տեղաշարժվածների թիվը հասել է 3 միլիոնի<sup>25</sup>:

Որոշ լրատվամիջոցների կողմից Սիրիայում հակամարտության զոհերի թիվը արձանագրվում է մինչև 60 հազար մարդ, քանի որ նշված ժամանակահատվածում իրադարձությունների ելքը չի նշմարվում, սրան ավելացրած նաև Իսրայելի օդուժի ռմբակոծումները Սիրիայի տարածքին, ներառյալ՝ Դամասկոսը: Իսկ Հալեպում ծավալված մարտերը մարդկային կորուստների ցնցող հետևանքներով երկիրը ջլատող անհեռանկար եղբայրասպան պատերազմի դաշտ են ստեղծում:

Մարդկային կորուստներից անմասն չէ նաև Սիրիայի հայկական համայնքը: ՀՀ արտգործնախարարության, Սփյուռքի և այլ նախարարությունների ջանքերով արվում է հնարավորը ժամանակավորապես կամ լիովին Հայաստան ներգաղթած հայրենակիցների կենսապահովման հիմնական խնդիրների լուծման, աջակցության, սատարման և հյուրընկալման պատշաճ մակարդակ ապահովելու, նաև դպրոցականների և երիտասարդության ուսման հարցերը հայրենիքում կազմակերպելու ուղղությամբ: Ներգաղթածների թիվը նույնպես աճի միտում ունի:

Հռոմի պապ Բենեդիկտոս 16-րդը 2012 թ. դեկտեմբերի 26-ին ամենամյա պատարագի ժամանակ հակամարտության գոտիներում

---

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> “Независимая газета”, 29 декабрь, 2012.

խաղաղության մաղթանքներ հղեց, մեկ առ մեկ նշելով մարդկանց ապրելակերպի համար վտանգավոր իրադարձություններով հայտնի երկրները՝ Պաղեստին, Լիբիա, Իրաք, Սիրիա:

Դիվանագիտական և միջպետական փոխհարաբերությունների ակտիվացման ողջունելի ընթացքն է դրսևորում Հայաստան - Իրաք միջխորհրդարանական համագործակցությունը: 2012 թ. դեկտեմբերի վերջին կայացավ ՀՀ փոխվարչապետ Արմեն Գևորգյանի ղեկավարությամբ ՀՀ խորհրդարանական պատվիրակության այցը Իրաք<sup>26</sup>:

Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում նշված ժամանակահատվածում ստեղծված է այնպիսի իրավիճակ, երբ տարածաշրջանի յուրաքանչյուր երկիր, կամ անկայուն երկրների հետ սահմանամերձ պետությունները ստիպված են մշակել որոշակի ռազմավարություն, ելնելով հնարավոր մարտահրավերների զարգացումներից, հետևանքներից, առկա հնարավորություններից:

Ուշադրության է արժանի նաև Իրանի արտաքին քաղաքականությունը տնտեսական կապերի ոլորտում: Փոքր ինչ առաջ անցնելով հիշենք, որ Իրանը Սիրիայի վարչապետ Վալի ալ Խալիկ Թեիրան կատարած այցելության ընթացքում կնքված համաձայնագրի պայմաններով 1 մլրդ դոլար արժողության վարկ է տրամադրել Սիրիային: Ավելի մեծ ուշադրության կենտրոնում է էներգետիկայի ոլորտը: Յոթ համաձայնագրերի հիման վրա սպասվում է բավական լայն աջակցություն Սիրիային: Այնտեղ նախատեսվում է Իրանի ֆինանսավորմամբ կառուցել էլեկտրակայան, ինչպես նաև երկիրը ապահովել էլեկտրական հոսանքով: Այդ նախագիծը իրականացվելու է Իրաքի հետ համատեղ: Սիրիայի էլեկտրաէներգետիկայի նախարարի ներկայացրած տվյալներով փաստորեն Իրանի Սիրիային հատկացված վարկի կեսը

---

<sup>26</sup> «Հայաստանի Հանրապետություն», 29 դեկտեմբեր, 2012 թ.:

նախատեսված է էլեկտրաէներգետիկ ոլորտի զարգացման նպատակին<sup>27</sup>:

Նման քաղաքականություն է որդեգրել Իրանը նաև Եգիպտոսի նկատմամբ:

Մերձավոր Արևելքի որոշ երկրներ հայտնվել են նոր իրականության պայմաններում: Հեռանկարը ցույց կտա իրադարձությունների հետագա ընթացքը:

KARINE SAMVELYAN

### **THE SOCIAL-POLITICAL SITUATION IN IRAQ IN THE CONTEXT OF THE EVENTS IN THE COUNTRIES OF THE NEAR AND MIDDLE EAST (2010-2013)**

The process of the “Revolutions” in some Arab countries: “Struggle for the Democracy” is in mirage of the ruins, victims of thousands persons and destructions.

The social-political situation in Iraq is in the relations from the events in this region. Characteristic for the period 2010-2013 years is the active role of United Nations Organization and Ligaue of Arab Governments.

The majority problem for Iraq in 2011 year was the final evacuation american troops from the country. The furter and the steady development of Iraq and some Arab countries intact are very important for peace and for safety of the population.

---

<sup>27</sup> “Независимая газета”, 18 январь, 2013.



---

---

# ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

---

---

ԵՐՎԱՆԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՀԵԼԼԵՆԻԶՄԸ ԵՎ ԶԵԼՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երկրորդ աշխարհամարտից հետո անտիկ դարաշրջանի վերաբերյալ բրիտանական հետազոտական միտքը հայտնվել էր ճգնաժամի մեջ<sup>1</sup>: Եվ դա հատկապես նկատելի էր հելլենիստական ուսումնասիրությունների բնագավառում, ուր մինչև XX դ. վերջին տասնամյակը գրեթե չեն արտահայտվել նոր մտքեր և գաղափարներ, չեն ստեղծվել նոր դպրոցներ, իսկ հետազոտողները գլխավորապես կենտրոնացել էին հունա-հռոմեական աղբյուրների մանրախույզ ուսումնասիրությունների և պատմագիտական հանրագիտարանների հրապարակումների վրա: Մեթոդաբանության մեջ ևս ակնհայտ էր որոշակի նահանջ. բրիտանացի պատմաբանները ավելի հաճախ քան նախկինում դիմում էին XIX դ. գերմանական պատմականության մեթոդին, որը XX դ. երկրորդ կեսում ընկալվում էր որպես անախրոնիզմ: Բացի այդ բրիտանացի հետազոտողները (ինչպես և արևմտաեվրոպական գրեթե բոլոր ազգային պատմագիտական դպրոցների ներկայացուցիչները) հելլենիզմի պատմությունը ավանդաբար շարունակում էին դիտարկել եվրոպակենտրոն տեսանկյունից<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Դրան հակառակ, հատկապես Ֆրանսիայում և Իտալիայում վերելք ապրեց միջնադարագիտությունը, մշակութաբանությունը և մի շարք հարակից գիտություններ, Գերմանիայում՝ հնագիտությունը, արևելագիտությունը և այլն:

<sup>2</sup> Սակայն վերջին երեք տասնամյակներում տեղի ունեցավ անսպասելի շրջադարձ, ասպարեզ իջան նոր ուսումնասիրողներ, որոնք մշակեցին նոր մոտեցումներ Հին Արևելքի և հելլենիզմի պատմության խնդիրների վերաբերյալ: Այսպես, 1987 թ. լույս տեսավ «Հելլենիզմն Արևելքում» գիտական աշխատությունների ժողովածուն (Kuhrt A.,

Դրան հակառակ շատ դինամիկ էր զարգանում հրեական հելլենիստագիտությունը: Արևելքում հունա-մակեդոնական տարրի և հրեաների փոխհարաբերությունների խնդիրն արդեն վաղուց էր հայտնվել (ազգությամբ հիմնականում հրեա) հետազոտողների ուշադրության կենտրոնում<sup>3</sup>: Հրեական հելլենիստագիտությունը արևմտյան ազգային պատմագիտական դպրոցներից թերևս առաջինն

---

Sherwin-White S. (Ed.), *Hellenism in the East: The Interaction of Greek and non-Greek Civilizations from Syria to Central Asia after Alexander*, London, 1987), որտեղ մի խումբ համախոհներ հանդես եկան նոր, իսկ առանձին դեպքերում լավ մոտացված հին գաղափարներով: Տարբեր բնագավառների վեց մասնագետներ (ներառյալ երկու խմբագիր) իրենց համատեղ աշխատության մեջ արտահայտեցին այն միտքը, որ Սելևկյան թագավորության համար Ատրեստանի, Բաբելոնի և Աքեմենյանների տերության ժառանգությունն ուներ ավելի մեծ նշանակություն, քան ենթադրվում էր մինչ այդ: Ուստի այդ և ուրիշ հելլենիստական թագավորությունների բնույթը հասկանալու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել նախևառաջ հին արևելյան քաղաքակրթությունների համատեքստում: Այդ գաղափարներն իրենց հետագա զարգացումը ստացան գիտական խմբի ղեկավարներ՝ Սյուզեն Շերուին-Ուայթի և Էմիլի Քյուրթի աշխատանքներում (տե՛ս Kuhrt A., Sherwin-White S., *Aspects of Seleucid Royal Ideology: The Cylinder of Antiochus I from Borsippa*, *Journal of Hellenic Studies*, 1991, 111, pp. 71-86: Նոյնը, *From Samarkhand to Sardis: A New Approach to the Seleucid Empire*, pp. ix + 261, Berkeley, 1993; Kuhrt A., Sancisi-Weerdenburg H. (ed.), *Achaemenid History*, 8, pp. XV + 446, Leiden, 1994, pp. 283-310):

<sup>3</sup> Moor G., *Judaism in the First Centuries of the Christian Era: The age of the Tannaim*, Cambridge, 1927, v. 1, p. 114; Box G.H., *Judaism in the Greek Period, from the Rise of Alexander the Great to the Intervention of Rome (333-63 B.C.)*, Oxford, 1932, p. 256; Tcherikover V., *Hellenistic Civilization and the Jews*, Philadelphia, 1966; O'Connell K.G., *Review of Judentum und Hellenismus*, *Journal of Biblical Literature*, 1971, v. 90, pp. 228-231; Jeremias J., *Jerusalem in the Time of Jesus*, London, 1976; Goodenough E., *Jewish Symbols in the Greco-Roman Period*, New York, 1953-1968, v. 1; *The Jewish People in the First Century: Hist. Geography, Political History and Religious Life and Institutions*, Amsterdam, 1976, v. 2; Bar-Kochva B., *Judas Maccabaeus: The Jewish Struggle Against the Seleucids*, Cambridge, 1989; Harrison R., *Hellenization in Syria-Palestine: The case of Judea in the third century BCE*, *Biblical Archaeologist*, 1994, v. 57, pp. 98-108; B.C.E. to 640 C.E. Princeton, Oxford, 2001; Choon-Leong S., *Ecclesiastes*, Anchor Bible, 18 c., New York, 1997; Cohen S.J.D., *The Beginnings of Jewishness. Boundaries, Varieties, Uncertainties*, Berkeley & Los Angeles, 1999. Reviews: D. Wilson, *CW* 94, 2000/01, pp. 299-300; Hoover O., *The Seleucid Coinage of John Hyrcanus I: The Transformation of a Dynastic Symbol in Hellenistic Judaea*, *American Journal of Numismatics*, 2003, 15, pp. 29-39; Hayes J., Mandell S., *The Jewish people in classical antiquity: from Alexander to Bar Kochba*, Louisville, 1998; Millard A., *Reading and writing in the time of Jesus, The biblical seminar*, 69, Sheffield, 2000.

էր, որ փորձեց հելլենիստական դարաշրջանը դիտարկել ոչ միայն հունա-մակեդոնական ընկալման տեսանկյունից:

Հրեական հելլենիստագիտության կայացման հարցում գործուն դեր ունեցավ XX դ. հիբրավի խոշորագույն անգլիական պատմաբան Արնոլդ Ջոզեֆ Թոյնբին (1889-1975 թթ.): Նա ծնվել է Լոնդոնում վիկտորիական «Ոսկեդարի» մայրամուտին և երիտասարդ տարիներին ականատես է եղել Բրիտանական կայսրության աստիճանական մարմանը: Դա չէր կարող ազդեցություն չթողնել Ա. Թոյնբիի պատմափոհական հայացքների վրա: Ա. Թոյնբին ապրել է երկար կյանք, մի բան որ շատ օգտակար է պատմաբանի համար: Ի տարբերություն մաթեմատիկոսների և ֆիզիկոսների, որոնք իրենց հայտնագործությունները հիմնականում կատարում են երիտասարդ տարիքում, փիլիսոփայող պատմաբանին կայացման համար ժամանակ է պետք: Ա. Թոյնբին տեսել է անհանգիստ 20-րդ դարի երեք քառորդ: Սակայն փոթորկոտ քսաներորդ դարը չշեղեց Ա. Թոյնբիին ընտրված ուղուց: Ավելին, դինամիկ և անհանգիստ դարաշրջանն օգնեց պատմաբանին նորովի նայել անտիկ պատմությանը:

Իր տարբեր աշխատանքներում և հատկապես տասներկուհատորանոց «Պատմության ուսումնասիրություն» աշխատության մեջ Ա. Թոյնբին մշակել և շրջանառության մեջ է դրել հելլենիզմի սկզբունքորեն նոր՝ իսկապես քաղաքակրթական հղացք<sup>4</sup>: Այդ ընկալման հիմքում ընկած է պատմական ժամանակի շրջափոխային ընկալումները: Պատմաբանի աշխատությունների մեջ հելլենիզմը ներկայացված է որպես ինքնուրույն ու ինքնարժեք քաղաքակրթություն և ոչ թե անտիկ Հունաստանի քաղաքակրթական աղոտ ստվեր՝ կարծես պատահաբար ընկած Արևելքի վրա: Մյուս կողմից Ա. Թոյնբին զգալի ներդրում ունեցավ անտիկ աշխարհի ուսումնասիրության գործում: Նա իմի բերեց և արժևորեց մեծ քանակությամբ էմպիրիկ նյութեր, տվեց անտիկ քաղաքակրթության բացառիկ պատմական բնութագիր, ի տարբերություն Օ. Շպենգլերի՝ այն դիտարկելով որպես հասարակական կատեգորիա:

---

<sup>4</sup> Toynbee A., Hellenism: The history of civilization, London, 1959.

Իր «Պատմության ուսումնասիրությունը» հիմնարար աշխատության մեջ Ա. Թոյնբին բազմիցս անդրադարձել է հելլենիստական քաղաքակրթության և հրեա ժողովրդի փոխհարաբերությունների հիմնախնդրին: Պատմության տեսաբանը հելլենիզմը ներկայացնում էր որպես ավանդական եբրայական քաղաքակրթությանը նետված մարտահրավեր: Ըստ նրա, Հուդայի հրեությունն առաջ էր քաշել այդ մարտահրավերի երկու պատասխան՝ զելոտություն և հերովդություն<sup>5</sup>: Անվանումները խիստ պայմանական են և տրվել են ըստ հռոմեական տիրապետության տակ գտնվող հուդայական կրոնա-հասարակական խմբերի անվանումների: «Ջելոտները» ագրեսիվ և խիստ պահպանողական խմբավորում էր, որը մերժում էր դինամիկ արևմտյան քաղաքակրթության արժեքները, վերջիններիս մեջ տեսնելով վտանգ իր կարծրացած ներփակ, ինքնամփոփ և շատ յուրօրինակ քաղաքակրթության համար: «Հերովդականներին» Ա. Թոյնբին անվանել է ըստ Հուդայի Հերովդես Մեծ արքայի, որը դարձավ արտաքին աշխարհին բաց հրեության սակավ մասի մարմնավորումը<sup>6</sup>: Անզիջում և մոլեռանդ զելոտներն իրենց շարքերը համալրում էին գլխավորապես քաղաքաբնակ (ավելի հազվադեպ գյուղաբնակ) ստորին խավերի հաշվին, թեև նրանց առաջնորդները գրեթե ամբողջությամբ կազմված էին քրմական դասի ներկայացուցիչներից և սնանկ, բայց փառամոլ ու իշխանատենչ ազնվականներից: Դրան հակառակ «հերովդականներին»

---

<sup>5</sup> Тойнби А., Постигание истории, ч. 6, Героические века. Психологические последствия контактов между современными друг другу цивилизациями, Москва, 1991, с. 587-589.

<sup>6</sup> Այդ թեկի թերևս ամենաճանաչված ներկայացուցիչը հելլենիստական շրջանի հրեա պատմիչ և մատենագիր Հովսեպոս Փլավիոսն էր (հայտնի է նաև որպես Հովսեփ Բեն Մաթաֆիա, իսկ հռոմեական քաղաքացի դառնալուց հետո՝ Տիտոս Փլավիոս Հովսեպոս, Ք.հ. 37-մոտ 100 թթ.): Լինելով զելոտ, հրեական պատերազմի ժամանակ (66-71 թթ.) նա անցել է հռոմեացիների կողմը, դառնալով Փլավիոսների կայսերական ընտանիքի կլիենտ: Գրել է «Հրեական պատերազմի մասին», «Հրեական հնախոսություն», «Ընդդեմ Ապինի», «Կյանքը» աշխատությունները, որոնցում նա ձգտում էր հունա-հռոմեական աշխարհը ծանոթացնել հրեաների մշակույթի և պատմության հետ, փարատել հրեաների դեմ կանխակալ վերաբերմունքը, բացատրել հրեական սրբազան տեքստերը արևմտյան փիլիսոփայության լեզվով, իրականացնել մի տեսակ քաղաքակրթական թարգմանություն: Թեև հրեական պատմության մեջ դա առաջին օրինակը չէ: Նման փորձ ավելի վաղ կատարել է Փիլոն Ալեքսանդրացին:

մեծամասնությունը ծագում էր տեղական և հելլենիստական քաղաքակրթական արժեքների համաչափությանը միտված ընտրախափ ներկայացուցիչներից և նրանց սպասավորներից: Պատահական չէ, որ «հերովդականության» գլխավոր կենտրոնը դարձավ թագավորական պալատը: Ի տարբերություն հնապաշտ «զելոտների», «հերովդականները», բաց էին արտաքին աշխարհի համար և միտված նորարարությանը<sup>7</sup>, սակայն (թե՛ հնում, թե՛ այսօր) ավանդապաշտ հրեությունը մերժում էր նրանց, ընկալելով իբրև օտարամոլ և կոլլաբորանտ<sup>8</sup>:

Այդ երկու հոսանքներից Ա. Թոյնբին նախապատվություն էր տալիս «հերովդությանը»<sup>9</sup>: Դրա մեջ տեսնելով որոշակի արատներ, նա այնուամենայնիվ համարում է, որ հրեության առջև ծառացած մարտահրավերի միակ պատասխանը «խաչաձևումն» է, նորի և ավանդականի ներդաշնակ համադրականությամբ: Սակայն, ըստ Ա. Թոյնբիի, ոչ բոլոր քաղաքակրթություններն են ունակ խաչաձևման:

---

<sup>7</sup> «Հերովդական» մոդեռնիզացման վառ օրինակը Ա. Թոյնբին համարում է Ռուսաստանի վեստերնացումը Պյոտր I-ի և Թուրքիայի մոդեռնիզացումը Մ. Քեմալի օրոք:

<sup>8</sup> Суюнбаев М., Что такое геокультура. Иродианство и зелотизм. 21 октября 2004 г., "JR-Анналы", Сообщество имени Шимона бар Кохбы, 40. <http://www.centrasia.ru/newsA.php?st=1098821760> 11 Май, 2010 at 12:59 pm.

<sup>9</sup> Ուսումնասիրողները վաղուց նկատել են, որ Ա. Թոյնբիի կուռ պատմիմաստասիրական կառույցի հիմքում ընկած է անտիկ քաղաքակրթության մոդելը: Հուանդացի պատմաբան դեն Վոյեզը, քննադատելով Ա. Թոյնբիի մոտեցումները գրում էր, որ վերջինս շատ է տարված անտիկայով և իր պատմագիտական սխեմաները գծելիս տարբեր քաղաքակրթությունները դիտարկում է հելլենիստական քաղաքակրթության հետ համադրության մեջ: Ինքը՝ Ա. Թոյնբին առանց վարանելու ընդունում էր, որ դասական քաղաքակրթությունն իր համար չափանիշ է և մյուս քաղաքակրթությունները նա իրոք երբեմն դիտարկում է անտիկ քաղաքակրթության հետ համեմատության մեջ (Сергеев А., Эллинская цивилизация в научном творчестве Арнольда Тойнби. Автореферат диссертации на соискание степени кандидата исторических наук, Казань, 1983, 219 с., 19.11.2008.

<http://www.dissercat.com/content/ellinskaya-tsvivilizatsiya-v-nauchnom-tvorchestve-arnolda-toinbi>): Սակայն ի տարբերություն Օ. Շպենգլերի, Ա. Թոյնբին քաղաքակրթություններն ընկալում էր ոչ թե իբրև «մաքուր» և քարացած, այլ բարդ և համադրական երևույթ: Ըստ Ա. Թոյնբիի քաղաքակրթությունն ինքնարարվող օրգանիզմ է, որը կարող է անվերջ հարստանալ նոր տարրերի հաշվին: Այդ գործընթացի դադարը հանգեցնում է քաղաքակրթության լճացմանն և աստիճանական մարմանը:

Նա համարում է, որ հրեության մեծամասնությունն անընկալունակ գտնվեց հելլենիստական քաղաքակրթական արժեքների ընկալմանը և կորցրեց պատմության կողմից տրված համակողմանի զարգացման եզակի հնարավորությունը: Հարդյունս դրա, հրեաները, Ա. Թոյնբիի պատկերավոր արտահայտությամբ, վերածվեցին «քարացած հանածոների»<sup>10</sup>, ավերվեց Երուսաղեմի տաճարը, իսկ հրեության մեծ մասը հայրենիքում իր համար հեռանկար չտեսնելով սփռվեց աշխարհով մեկ, դառնալով պանդուխտ և թափառական: Ըստ էության հրեությունը, ամփոփվելով յուր մեջ, չկամեցավ ինտեգրվել աշխարհին մնալով իր հայրենիքում, ուստի առանձին անհատները ստիպված եղան լքել հայրենի հողը և օտարության մեջ սովորելով այն, ինչն իրենց նախնիները չցանկացան սովորել սեփական հարկի տակ:

Հակառակ դրան հելլենիստական քաղաքակրթությունն ավելի ճկուն էր, այն մշտապես խաչաձևվում էր, համալրվելով այլազան քաղաքակրթական տարրերով, ինչի շնորհիվ անընդհատ նորացվում և հարատևում (օրինակ՝ հռոմեական իրավունք, հունական գնոստիցիզմ, միհրականություն և հուդայական կրոն, որի համադրությունից ծնվեց քրիստոնեությունը, իսկ ավելի ուշ նոր տարրերի ոչ մեխանիկական գումարմամբ՝ նաև իսլամը)<sup>11</sup>: *«Սփռված ենք եզրակացնել, - գրում է Ժոզեֆ Արթյուր դը Գոբինոն, - որ մարդկության որոշ մասն ի սկզբանե զուրկ է նույնիսկ աննշան ինքնաքաղաքակրթման ունակությունից, քանի որ ի վիճակի չէ իր մեջ ճնշել խաչաձևման հանդեպ բնական*

---

<sup>10</sup> Тойнби А., Статьи из книги «Цивилизация перед судом истории», Москва, 2002, с. 122. Բ. Մուսուխին մի առիթով նկատել է, որ կան ոչ միայն պրոլետարական դասակարգեր, այլև պրոլետարական ազգեր. այդ ազգերի թվին են պատկանում արդի աշխարհի ոչ արևմտյան ժողովուրդներ, անգամ եթե «հերովդականների» հերոսական ճիգերի շնորհիվ երբեմն հաջողվում է արտաքուստ փոխել երկրի դիմապատկերը, ներքուստ դրանք միևնույն է մնում են «զելոտական»:

<sup>11</sup> «Ասորական և հելլենական տարրերն անհնար է տարանջատել ոչ միայն քրիստոնեությունից և իսլամից, այլև քրիստոնեական և իսլամական քաղաքակրթություններից, որոնց համար դրանք կատարել են տիկնիկների դեր: Այդ երկու կրոններն ունեցել են իրենց նախորդները՝ ասորական և հելլենական, ինչն ունի սկզբունքային կարևորություն: Իսլամը, քրիստոնեությունը և մի շարք քաղաքակրթություններ՝ աճեցրած այդ երկու կրոններով, նույն մշակութային շերտի պտուղներն էին, կազմված ինչպես ասորական, այնպես էլ հելլենական տարրերից» (Тойнби А., Постигание истории..., с. 163):

նողկանքը, որը մարդիկ և կենդանիները զգում են խաչաձևման հանդեպ»<sup>12</sup>: Խաչաձևումն անբնական երևույթ է, սակայն առանց դրա չի կարող գոյանալ քաղաքակրթությունը, որն ինքն էլ «անբնական» է: Քաղաքակրթությունը կարող է ի հայտ գալ միայն այն ժամանակ, երբ մարդկային համակեցությունը ձերբազատվում է իր նախնական «մաքուր» և «բնական» վիճակից և դառնում բարդ և համադրական:

Անշուշտ հրեությունը վաղուց դասեր է քաղել իր հելլենիստական անցյալից և արդի Իսրայել պետությունը, ավելի քան որևէ մեկը, հավատարիմ մնալով ավանդական հրեական արժեքներին, միևնույն ժամանակ բաց է աշխարհին և բոլոր տեսակի քաղաքակրթական ազդեցություններին: Սակայն հին եբրայական քաղաքակրթության և հատկապես դրա հոգևոր առանցքը կազմող արժեքների մեկնաբանությունը ոչ միանշանակորեն ընդունվեց օրթոդոքս հրեության կողմից: Հատկապես ցավազին ընդունվեց «հրեական ապագայնամետության» (ֆուտուրիզմ) վնասակար ազդեցության գաղափարը: «Ապագայնամետությունը», պատմագետի տերմինաբանությամբ, «... կենսակերպ է, որը տանջում է նրան, ով տենդագին որոնում է նոր ուղիներ, դրդված առաջխաղացման ներքին անորոշ մղմամբ»: Ուստի դրա «... բնորոշ հատկանիշներից է փրկության և երկրային թագավորության մեջ հանգիստ գտնելու հույսը: Դա բնորոշ է հրեական ֆուտուրիզմին: Քանի որ հրեաների պատմությունը լավ է արտացոլված վավերագրերում, մենք հնարավորություն ունենք այդ երևույթը դիտարկել երկար ժամանակահատվածում»: Այնուհետև Ա. Թոյնբին շարունակում է. «Հրեաները չբուժվեցին նոր աշխարհիկ պեպոություն ունենալու ֆուտուրիստական հույսից իրենց պատմության նոր փուլերի ժամանակ», «...հրեաներին պետք եղավ ավելի քան վեցուկես դար, որպեսզի փորձերի և սխալների մեթոդի շնորհիվ հասկանան, որ ֆուտուրիզմը ոչ ճիշտ ուղի է»<sup>13</sup>:

Այդ և մի քանի նմանատիպ արտահայտություններից հետո, մեր օրերի մարգարեն համարվող Ա. Թոյնբին, անսպասելիորեն մերժվեց

---

<sup>12</sup> Де Гобино Ж., Опыт о неравенстве человеческих рас, Москва, 2001 (2000).

<sup>13</sup> Тойнби А., Футуризм, с. 404-405.

Արևմուտքում<sup>14</sup>: Բացի այդ, հրեա պատմաբանները քննադատում են Ա. Թոյնբիին հելլենիստական դարաշրջանի հրեությունը ոչ թե իբրև ինքնուրույն, այլ ավելի մեծ և նշանակալից ասորական քաղաքակրթության բաղադրամասը դիտարկելու համար: Այդ «սխալմունքի» պատճառը հրեա պատմաբաններն ուզում են տեսնել ոչ թե քաղաքակրթական, այլ քաղաքական գործոնների մեջ: Բանն այն է, որ մակաբեացիների ապստամբության պարտությունից և Տաճարի խորտակումից հետո, հռոմեացիները Հուդայի և Սամարիայի տարածքը կցեցին պրովինցիա Սիրիային, ինչը, նրանց կարծիքով, մոլորության մեջ մտցրեց բրիտանացի պատմաբանին<sup>15</sup>: Սակայն շատ տարօրինակ է մեղադրել քաղաքակրթագետ պատմաբան Ա. Թոյնբիին պատմության քաղաքագիտական և ոչ թե քաղաքակրթական ընկալումների և մեկնաբանությունների համար: Առաջ են քաշվում նաև այլ բնույթի մեղադրանքներ, այսպես հրեաների Աստծուն Թոյնբին անվանում է «Յահվե» (օրթոդոքս հրեական միջավայրում դա պատժելի զանցանք է), մինչդեռ քրիստոնեական Աստվածը նրա համար անանուն է և այլն: Սակայն, Ա. Թոյնբիի մոտեցումների մեջ եբրայագետների համար թերևս ամենատհաճն այն էր, որ պատմաբանը անուղղակի կերպով եբրայությանը հակադրում է քրիստոնեությունը: Ըստ նրա երկու հազարամյակների սահմանագլխին հրեությունը հայտնվել էր քառուղու առջև՝ ընտրել «զելոտությունը», որն ըստ պատմաբանի նեղ ազգայնական, անգամ ռասիստական կրոնա-գաղափարական ուղղություն էր, կամ քրիստոնեությունը, որը պատմաբանը համարում է հելլենիզմի կվինտ-էսենցիան և դեպի վաղվա օրը տանող դուռ: Հրեությունն ընտրեց պատմության կողմից առաջադրված առաջին ճանապարհը:

---

<sup>14</sup> Նրա տեղը Արևմուտքի հասարակագիտական մտքի երկնակամարում գրավեցին թոյնբիական «պատմության վերջն» ազդարարած Ֆ. Ֆուկույաման (Фукуяма Ф., Конец истории и последний человек, Москва, 2004 (Fukuyama F., The End of History and the Last Man, 1992)), կամ Ս. Հանտինգտոնը (տե՛ս Хантингтон С., Столкновение цивилизаций, Москва, 2003) և Յու. Հաբերմասը (տե՛ս Хабермас Ю., Расколотый Запад, Москва, 2008), որոնք իրենց քաղաքագիտական վերլուծություններում հենվում են թոյնբիյան հղացքների վրա, առանց հեղինակին վկայակոչելու:

<sup>15</sup> Гарбар Д., Арнольд Джозеф Тойнби и еврейская цивилизация. <http://www.berkovich-zametki.com/Nomer18 /Garbar2.htm>



Իրականում հրեա պատմաբանների կողմից Ա. Թոյնբիի հասցեին ներկայացված մեղադրանքներն անհիմն են: Նա ոչ միայն չի «նսեմացնում» հրեա ժողովրդին, կամ «անտեսում» և «աղճատում» վերջինիս դերը մարդկային պատմության մեջ, այլ հակառակը՝ հետհելլենիստական հրեության մեջ տեսնում է ինքնարարման և ինքնահաստատման մեծ ներուժ: Բացի այդ, Ա. Թոյնբին հրեական հելլենիզմի շատ վառ և հատկանշային օրինակի վրա ընդամենը ձգտել է ցույց տալ հելլենիստական դարաշրջանի կարևոր երևույթներից մեկը՝ այն, որ Ռոստովցևն անվանում էր «արևելյան ռեակցիա», «արևելյան հակազդեցություն»: Երևույթ, որը շատ կամ քիչ արտահայտված ձևով, հանդիպում ենք գրեթե բոլոր արևելյան երկրներում, այդ թվում Իրանում և Հայաստանում<sup>16</sup>:

Սակայն անկախ նրանից, թե ինչ գնահատական են տալիս հրեա ուսումնասիրողները Ա. Թոյնբիի հղացքներին, վերջիններս լուրջ խթան հաղիսացան հրեական ազգային հելլենիստական դպրոցի կայացման գործում: Պատմաբանի հետ ակնհայտ և թաքնված բանավեճի ժամանակ լույս տեսան բազմաթիվ «եբրայագիտական» աշխատանքներ: Ի տարբերություն դասական հելլենիստագետների, եբրայագետների մեծ մասը բացահայտորեն պաշտպանում է «զելոտական» թևը<sup>17</sup>: Նրանք Հասմոնեյան ապստամբության և

---

<sup>16</sup> Հիշենք Տիգրանի Բ-ի, Արտավազդ Բ-ի և Արտաշիսյան այլ «հերովդական» արքաների պայքարը հայկական «զելոտության» դեմ, որի դրսևորումներն էին՝ հայ մեծատոհմիկների և ժողովրդի պարթևական կողմնորոշումը և Արշակունիներին գահին հրավիրելը և այլք: «Արաքսը՝ կամուրջներ չէր հանդուրժում»՝ Արևմուտքը Արևելքի հետ կապող կամուրջներ:

<sup>17</sup> St' u Hengel M., Die Zeloten. Untersuchungen zur jüdischen Freiheitsbewegung in der Zeit von Herodes 1. bis 70 n. Chr., Leiden-Köln, 1961; նույնի, Judentum und Hellenismus, Wissenschaftliche Untersuchungen zum Neuen Testament, 10, Tübingen, 1969, 2nd edn., 1973; նույնի, Judaism and Hellenism. In 2 vols., Philadelphia, 1974; նույնի, Judaism and Hellenism: studies in their encounter in Palestine during the Early Hellenistic Period, London, 1974; նույնի, The Pre-Christian Paul, Philadelphia, 1991, esp. pp. 54-62; նույնի, The interpenetration of Judaism and Hellenism in the pre-Maccabean period, in The Cambridge History of Judaism, 1991; նույնի, Judaism and hellenism revisited, in Collins, John J. and Sterling, Gregory E. (ed.), Hellenism in the land of Israel, Christianity and Judaism in antiquity series, 13, Notre Dame, 2001, pp. 6-37; Aitken J.K., Hengel's Judentum und Hellenismus, Journal of Biblical Literature, 123 (2), pp. 331-341; Herr M.D., Hellenism and Judaism in Eretz Israel, Eshkolot new series, 2-3, 1977-78, pp. 20-27; Bichler R.,

Հուդայում նրանց գերիշխանության գլխավոր նվաճումը համարում են հելլենիստական «մշակութային էքսպանսիայի սաստում»: Բացի այդ, նրանց համոզմամբ, շարժման կարևոր ձեռքբերումներն էին «Էրեց-Իսրայելի» ներքին շրջաններում հելլենիստական քաղաքների և

---

“Hellenismus”: Geschichte und Problematik eines Epochenbegriffs, Darmstadt, 1983; Gregory E., Jews, Greeks and Barbarians: Aspects of the Hellenization of Judaism in the pre-Christian Period. Transl. from German of Juden, Griechen und Barbaren: Aspekte der Hellenisierung des Judentums in vorchristlicher Zeit, London, 1980; նյւնի, The “Hellenization” of Judaea in the First Century after Christ, London/Philadelphia, 1989; Feldman L.H., Hengel’s Judaism and Hellenism in Retrospect, Journal of Biblical Literature, 1977, 96, pp. 371–82; նյւնի, How much Hellenism in Jewish Palestine?, Historic Union Cemetery Association, 1986, 57, pp. 83–111; նյւնի, Jew and gentile in the ancient world. Attitudes and interactions from Alexander to Justinian, Princeton, pp. 3–83 (esp. pp. 42–44; 416–22); նյւնի, How much hellenism in the land of Israel?, Journal for the Study of Judaism, 1993, 33 (2002), pp. 290–313; Lieberman S., Greek in Jewish Palestine: Studies in the Life and Manners of Jewish Palestine in the II–IV Centuries C.E., New York: Jewish theological seminary of America, 1942; նյւնի, Hellenism in Jewish Palestine: studies in the literary transmission, beliefs and manners of Palestine in the I century BCE–IV century CE. 2<sup>nd</sup> edn., New York, [1950] 1962; Brandon S.G.F., Jesus and the Zealots: A Study of the Political Factor in Primitive Christianity, Manchester, 1967, p. 29 ff.; Barr J., Hebrew, Aramaic and Greek in the Hellenistic age, The Cambridge History of Judaism. Eds. W. D. Davies and L. Finkelstein, Cambridge, 1989. Cambridge Histories Online. 28 January 2012; Collins J., Cult and culture. The limits of hellenization in Judea, Christianity and Judaism in Antiquity, 13, Notre Dame, 2001, pp. 38–61; Goldstein J., Jewish acceptance and rejection of Hellenism’, in Sanders E.P., Baumgarten A.I., and Mendelson Alan (ed.), Jewish and Christian Self-Definition, vol. 2, Aspects of Judaism in the Graeco-Roman Period, London, 1981, pp. 64–87; Goodman M., Jewish attitudes to Greek culture in the period of the Second Temple, in G. Abramson & T. Parfitt (eds), Jewish Education and Learning: published in honour of Dr. David Patterson on the occasion of his seventieth birthday. Chur/Reading, 1994, pp. 167–74; Gruen S.E., Heritage and Hellenism: the reinvention of Jewish tradition, Berkeley, London, 1998; Goldhill S., Who needs Greek?: contests in the cultural history of Hellenism, Cambridge, 2002 [opposition to Greek in renaissance; M. Arnold on Greek and Hebraism]; Schwartz S., Israel and the nations roundabout. Maccabees and the Hasmonean expansion, Journal for the Study of Judaism, Iss. 1, vol. 42, 1991, pp. 16–38; նյւնի, The Hellenization of Jerusalem and Shechem’, in M. Goodman (ed.), Jews in a Graeco-Roman World, Oxford, 1998, pp. 37–45; նյւնի, Imperialism and Jewish Society B.C.E. to 640 C.E., Princeton, 2001; Grimal P. et al. Hellenism and the rise of Rome, London, 1968 [p. 5: creating the “mixed” Graeco-barbarian civilization]; Mendels D., Jewish historical writings between Judaism and Hellenism. New methods of research, in Lichtenberger, Hermann and Oegema, Gerbern S. (ed.), Jüdische Schriften in ihrem antik-jüdischen und urchristlichen Kontext, Studien zu den jüdischen Schriften aus hellenistisch-römischer Zeit, 1, Gütersloh, 2002, S. 35–42.

նրանցում հելլենականացված սեմական շրջանների ոչնչացումը, հրեական ցարսրցրիվ ցեղերի, այդ թվում ոչ հրեական սեմական ժողովուրդների կրոնական-մշակութային տարածույում (ասիմիլյացիա), վարչա-քաղաքական միասնության վերականգնումն ու համախմբումը<sup>18</sup>: Հետագայում հենց այս, ոչ հելլենիստական բնակչությունը համառ դիմադրություն ցույց տվեց հռոմեական զավթողականությանը և հակազդեց քրիստոնեության տարածմանը հրեական միջավայրում: Սակայն եբրայագետների համոզմամբ, սկզբում հունա-մակեդոնական, իսկ ավելի ուշ՝ հռոմեական հելլենիզմը Պաղեստինում, այնուամենայնիվ, հրեաների համար ունեցավ որոշ դրական դերակատարություն, քանի որ ակամայից նպաստեց հրեա ազգի միավորմանը, խթանեց վերջինիս ինքնության վերջնական կայացմանը:

Դրան հակառակ դասական հելլենիստագիտության ազգությամբ հրեա և ոչ հրեա հետևորդները, հելլենիզմն ինքնին համարում են մեծագույն արժեք և գտնում են, որ վերջինիս պատմական նշանակությունը ոչ միայն համաշխարհային այլև հրեական պատմության մեջ ավելի մեծ է քան փորձում են ներկայացնել արդի եբրայագետները: Նրանց համոզմամբ ժամանակն է հրաժարվել հազարավոր տարիների ավանդույթից համաշխարհային պատմությունը դիտարկել արևմտյան և հրեական քաղաքակրթությունների հակադրման մեջ, փոխարենը հրեական պատմությունը պետք է ուսումնասիրել համաշխարհային պատմության համատեքստի ներքո<sup>19</sup>: Եբրայագետների ծայրահեղական

---

<sup>18</sup> Хасмонеи. Краткая еврейская энциклопедия. Иерусалим, 1976-2005, т. 9, кол. 707–714. История еврейского народа. Эпоха Второго храма. <http://www.eleven.co.il/?mode=article&id=14465&query=>

<sup>19</sup> Sevenster J., Do you know Greek? How much Greek could the first Jewish Christians have known?, Supplements to Novum Testamentum, 19; Leiden, 1968. [knowledge of Greek even by Jesus]; Smith M., Palestinian parties and politics that shaped the Old Testament, New York, 1971; Rappaport U., Hellenization of the Hasmoneans, in Menachem Mor (ed.), Jewish Assimilation, Acculturation and Accommodation: Past Traditions, Current Issues and Future Prospects. (Proceedings of the Second Annual Symposium of the Philip M. and Ethel Klutznick Chair in Jewish Civilization held on Sunday–Monday, September 24–25, 1989), New York and London, 1991, pp. 1–13; Shavit Y., Athens in Jerusalem: classical antiquity and Hellenism in the making of the modern secular Jew, London: Littman Library of Jewish

ազգայնական հայացքներն այսօր լուրջ քննադատության են ենթարկվում գիտական հանրության տարբեր շրջանակներում<sup>20</sup>:

Այդ խնդրին է հատկապես նվիրված Քեմբրիջի քառահատոր «Հուդայականության պատմության» Բ հատորը<sup>21</sup>, որն ըղգրկում է հրեության պատմությունը աքեմենյան շրջանից մինչև Տանայան (Tannaitic) դարաշրջանը, որի բարձրակետն դարձավ Միշնայի կողավորումը (մոտավորապես 250 թ.): Պրակի հեղինակների համոզմամբ հռոմեական տիրապետության դարաշրջանում հելլենիստական և հուդայական մշակույթները դարձան իշխող գրեթե ողջ Միջերկրականում, ինչն անխուսափելիորեն պետք է հանգեցնե՞ր այդ երկու հզոր և իրարամերժ քաղաքակրթությունների բախմանը: Գրքում քննության է առնված հելլենիզմի միաժամանակյա մերժման և յուրացման խնդիրն աշխարհասփյուռ հրեության կողմից: Հելլենիզմի հետևողական մերժումը քաղաքական ասպարեզում հանգեցրեց Մակաբեացիների ապստամբությանը և Ք.ա. 142–63 թթ. Հասոնեյան պետության ստեղծմանը: Միևնույն ժամանակ հելլենիզմի ընդունման և նրա հետ ադապտացման արդյունքում ծնվեցին զանազան

---

Civilization, 1997; Lee I., Levine Judaism and Hellenism in antiquity: conflict or confluence, Washington, 1999; Gerdmar A., Rethinking the Judaism-Hellenism dichotomy: a historiographical case study of Second Peter and Jude, Stockholm, 2001; Martin D., Paul, Hellenism, and Judaism: Toward a Social History of the Question, in Troels Engberg-Pedersen (ed.), Paul Beyond the Judaism, Hellenism Divide, Westminster, 2001, pp. 29-61; Alexander P., Hellenism and hellenization as problematic historiographical categories in T. Engberg-Pedersen (ed.), Paul Beyond the Judaism/Hellenism Divide. Louisville, ondon, eiden, pp. 63-80; Kaufmann Y., Christianity and Judaism: Two covenants. Jerusalem, 1988, pp. 82-83; Rajak T., The Hasmonians and the Uses of Hellenism, in P.R. Davies (ed.), A tribute to Geza Vermes, Journal for the study of the Old Testament, Supplement series 100, Sheffield, 1990, pp. 261-280; նույնի, Jews and Greeks: The invention and exploitation of polarities in the nineteenth century. In The Jewish dialogue with Greece and Rome. Studies in cultural and social interaction, Arbeiten zur Geschichte des antiken Judentums und des Urchristentums, 48, Leiden, 2001, pp. 535-557.

<sup>20</sup> Grabbe L., The Jews and Hellenization: Hengel And His Critics, in Second Temple studies III: studies in politics, class, and material culture, ed. by Philip R. Davies, John M. Halligan, v. 2, University of Hull England, 2002; Millar F., The background to the Maccabean revolution: Reflections on Martin Hengel's "Judaism and Hellenism", Journal of Jewish Studies, 29, 1978, pp. 1-21.

<sup>21</sup> Davies W.D., Finkelstein L., The Cambridge History of Judaism, v. 2: The Hellenistic Age, Cambridge, 1989.

մշակութային արժեքներ՝ առաջին հերթին նշանակալից հելլենիստական հունա-եբրայական, արամեական և զուտ եբրայական գրականություն: Բացի այդ, հելլենիզմի քաղաքակրթական ճնշման պատճառով, հրեության կրոնական, մտավոր, հասարակական և քաղաքական կյանքում անընդմեջ աճող լարվածությունը սուբլիմացվեց կատարածաբանական մտքի և դրան համապատասխան գրականությանը: Ասվածի լույսի ներքո գրքի հեղինակները որոշակի հետևություններ են անում հրեության հուդա-հելլենիստական դիքրոտոմիայի, այլ կերպ ասած՝ երկփեղկվածության մասին:

Այսպիսով, հրեական հելլենիստագիտական հետազոտություններն այսօր կարելի է դասել երկու խմբի: Առաջինը պայմանականորեն անվանենք *ոչ ազգային*: Այն ձևավորվել և զարգացել է հիմնականում ազգությամբ հրեա պատմաբանների ջանքերի շնորհիվ, բայց արևմտյան և խորհրդային հելլենիստագիտական դպրոցների շրջանակներում: Երկրորդը՝ վերջին կես դարում ձևավորված *խորանայան պատմագիտական* դպրոցն է, որը, հենվելով արևմտյան հելլենիստագիտության նվաճումների վրա և գտնվելով սերտ համագործակցության մեջ տարբեր արտասահմանյան դպրոցների հետ, վերապրում է քանակական և որակական զարգացման ակտիվ շրջան: Անշուշտ այդ երկու՝ արևմտյան և ազգային հետազոտական դպրոցները չի կարելի հակադրել իրար, հակառակը, փոխազդելով՝ դրանք հարստացնում և լրացուցիչ լիցք են հաղորդում միմյանց:

Այդ երկու դպրոցների միավորման օրինակը կարելի է համարել Էլիաս Ջոզեֆ Բիկերմանին (1897-1981 թթ.), որի կենսագրությունն ըստ էության հրեական հելլենիստագիտության անցած ուղու ցայտուն դրսևորումն է: Բիկերմանը ծագումով ռուսաստանցի էր (իսկական անունը Իլյա Իոսիֆովիչ Բիկերման), ծնվել է Քիշնևում, մանկությունն անցկացրել է Օդեսայում, իսկ ուսումը ստացել Ս. Պետերբուրգի գիմնազիայում, այնուհետև համալսարանում: Այստեղ նրան ուսուցանել է Մ. Ռոստովցևը, որի ազդեցությունը նա կրել է ողջ կյանքում: 1922 թ. Բիկերմանը ծնողների հետ լքում է Խորհրդային Ռուսաստանը և հաստատվում Գերմանիայում: Այստեղ նա շարունակում է ուսումը Բեռլինի Հումբոլդտի համալսարանում և հրատարակում իր առաջին

երեք մենագրությունները, այդ թվում մակաբեացիների ապստամբության վերաբերյալ հետազոտություն: Նացիստների իշխանության գլուխ գալուց հետո նա ստիպված է լինում գաղթել Ֆրանսիա, որտեղ հրատարակեց իր հայտնի «Սելևկյանների պետությունը» (*Institutions des Séleucides*, 1938) մենագրությունը, իսկ Երկրորդ աշխարհամարտի տարիներին տեղափոխվեց ԱՄՆ (1942 թ.)<sup>22</sup>: Այստեղ նա դասավանդում էր Նյու Յորքի Հասարակական հետազոտության նոր դպրոցում (*The New School for Social Research*), Լոս Անջելեսի Հուդայականության համալսարանում, 1952-1967 թթ. նա դառնում է Նյու Յորքի Կոլումբիական համալսարանի և Հրեական աստվածաբանության ճեմարանի (1967 թ.) պրոֆեսոր: Կյանքի վերջին տարիներն անցկացրել է Իսրայելում, որտեղ վայելում էր մեծ հարգանք:

Հրեական թեմային Է. Բիկերմանն անդրադարձել է իր ողջ գիտական կարիերայի ընթացքում: Հրեական ուսումնասիրություններին նվիրված նրա առավել հայտնի աշխատություններն են. «Մակաբեացիներ. նրանց պատմությունը սկզբից մինչև Խասմոնյան հարստության անկումը»<sup>23</sup>: Այդ մենագրությունը Է. Բիկերմանին միանգամից ճանաչում բերեց գիտական հանրության լայն շրջանակներում, ինչը դրդեց նրան շարունակել այդ թեման և ընդամենը երկու տարի անց լույս տեսավ նրա «Մակաբեացիների աստված»<sup>24</sup> աշխատությունը: Նույն ոգով էին գրված «Աստվածաշնչի տարօրինակ գրքեր. Հովնան, Դանիել, Սաղմոս, Եսթեր»<sup>25</sup>, «Կրոնը և քաղաքականությունը հելլենիստական և

---

<sup>22</sup> Петров Е., Научно-педагогическая деятельность русских историков-эмигрантов в США в первой половине XX века. Диссертация на соиск. уч. ст. доктора ист. н. СПбУ, 2001, 499 с.

<sup>23</sup> Bickerman E.J., *Die Makkabäer; eine darstellung ihrer geschichte von den anfängen bis zum untergang des Hasmonäerhauses*, 1935 (ընդլայնված անգլիական հրատարակությունը լույս տեսավ 1947 թ.). (Idem. *The Maccabees; an account of their history from the beginnings to the fall of the House of the Hasmoneans*, New-York, 1947 (3-րդ վերահրատարակում).

<sup>24</sup> Նույնի, *Der Gott der Makkabäer: Untersuchungen über Sinn und Ursprung der makkabäischen Erhebung*, Berlin, 1937.

<sup>25</sup> Նույնի, *Four strange books of the Bible: Jonah, Daniel, Koheleth, Esther*, New-York, 1968.

հռոմեական շրջանում»<sup>26</sup>, «Եզրասից մինչև վերջին մակաբեացին. հետաստվածաշնչյան հուդայականության հիմքերը»<sup>27</sup> և ուրիշ աշխատությունները<sup>28</sup>: Հուդայականության և քրիստոնեության պատմությանն են նվիրված նաև Է. Բիկերմանի անգլերեն և ֆրանսերեն լեզուներով գիտական հոդվածների եռահատոր ժողովածուն, որը հրատարակվել է 1976-1986 թթ.<sup>29</sup>: Է. Բիկերմանի վերջին աշխատանքը «Հրեաները հելլենիստական շրջանում»<sup>30</sup> մենագրությունն է, որը լույս տեսավ հետմահու և նվիրված է հրեական պատմությանը և նրանց փոխազդեցությանը հելլենիստական աշխարհի հետ՝ Ալեքսանդրից մինչև Մակաբեացիները: Լինելով եվրոպական գիտնական՝ նա իր ստեղծագործական ներկայակերպ մշտապես հարստացրել է ռուսական, գերմանական, ֆրանսիական և ամերիկյան անտիկագիտության ավանդույթներով: Սակայն դրա հետ մեկտեղ է. Բիկերմանը, այնուամենայնիվ, իր ստեղծագործական ուղին ավարտեց իբրև եբրայագետ, դառնալով, ըստ էության, հրեական հելլենիստագիտության ազգային դպրոցի հիմնադիրներից մեկը: Ասվածից կարելի եզրակացնել, որ Ա. Թոյնբին ու Է. Բիկերմանը կարող են համարվել մի դեպքում հրեական հելլենիստագիտության և մյուս դեպքում՝ հելլենիստական եբրայագիտության նահապետները:

Սակայն ոչ բոլոր հրեա հետազոտողները Է. Բիկերմանի պես ապրեցին արմատական փոխակերպումներ: Ասվածի վառ օրինակը Արնալդո Մոմիլյանոն է (1908-1987 թթ.): Կարելի է զուգահեռներ անցկացնել Ա. Մոմիլյանոյի, Մ. Ռոստովցևի և Է. Բիկերմանի կենսագրությունների միջև: Վերջիններիս պես Ա. Մոմիլյանոն իր գիտական գործունեությունը սկսել է որպես դասական անտիկ

---

<sup>26</sup> Նոյնի, Religions and politics in the Hellenistic and Roman periods (c Emilio Gabba и Morton Smith), Komo, 1985.

<sup>27</sup> Նոյնի, From Ezra to the last of the Maccabees; foundations of post-Biblical Judaism, New York, 1962.

<sup>28</sup> Նոյնի, The altars of Gentiles: A note on the Jewish «ius sacrum», Revue Internationale des Droits de l'Antiquité, Paris, 1958; նոյնի, Les deux erreurs du prophète Jonas, Paris, 1965.

<sup>29</sup> Նոյնի, Studies in Jewish and Christian History: A New Edition in English Including the God of the Maccabees, New York, 2007.

<sup>30</sup> Бикерман Э., Евреи в эпоху эллинизма, Москва, Мосты культуры; Иерусалим: Gesharim, 2000 (Серия Современные исследования: Bibliotheca Judaica), 154; (Bickerman E.J., The Jews in the Greek Age. L., Cambridge, Mass., 1988).

պատմության ուսումնասիրող: 1936 թ. երիտասարդ, բայց շատ խոստումնալից անտիկագետը դառնում է Թուրինի համալսարանի պրոֆեսոր, սակայն շուտով ֆաշիստական Իտալիայում հակահրեական հալածանքների սաստկացման պատճառով նա ստիպված էին լքել Իտալիան և 1938 թ. հաստատվել Լոնդոնում: Անգլիական պրոֆեսուրան (հիմնականում հրեական ծագմամբ) բավականին սառն է ընդունում օտարականին և հայտնի չէ ինչպես կդասավորվեր երիտասարդ գիտնականի ճակատագիրը եթե նրան օգնության ձեռք չմեկներ Մ. Ռոստովցևը, որի ազդեցությունը նա կրում էր ողջ կյանքում: Ա. Մոմիլյանոյի պրոֆեսիոնալ աճին նաև զգալիորեն նպաստեց նրա հին ընկեր Ֆ. Ուոլբանքը<sup>31</sup>: Այսպես ճակատագրի հեղիեղուկության և անակնկալ ծանոթությունները հետաքրքրությունների նոր դաշտ բացեցին Ա. Մոմիլյանոյի առջև և բերեցին նրան հելլենիստագիտության<sup>32</sup> և երբայագիտության ոլորտը<sup>33</sup>: Օքսֆորդի համալսարանում երկար ժամանակ երկրորդական դերերում մնալուց հետո նա տեղափոխվում է Լոնդոնի համալսարանի քոլեջ, որտեղ զբաղեցնում է պրոֆեսորի պաշտոն (1951-1975 թթ.): Այդ նույն ժամանակ նա հաճախ հրավիրվում է Չիկագոյի համալսարան դասախոսություններ կարդալու համար: Այստեղ նրան ճանաչում էին իբրև հումանիտար գիտությունների պրոֆեսոր Ալեքսանդր Ուայթ: Թեև իր կյանքի վերջին տարիներին Մոմիլյանոն երբեմն այցելում էր Իտալիա և նույնիսկ դասախոսում Պիզայի բարձրագույն դպրոցում (Scuola Normale Superiore di Pisa), նա այլևս չէր զբաղվում Հռոմի պատմությամբ և իրեն համարելով բրիտանացի պատմաբան և գրեթե չէր հրապարակվում իտալերեն: Սակայն, դրա հետ մեկտեղ, ճակատագրի բերումով դառնալով երբայագետ, Ա. Մոմիլյանոն երբեք տուրք չտվեց

---

<sup>31</sup> Murray O., Arnaldo Momigliano in England, History and Theory, vol. 30, 4, Beiheft 30: The Presence of the Historian: Essays in Memory of Arnaldo Momigliano (Dec., 1991), pp. 49-64.

<sup>32</sup> Momigliano A., Alien wisdom: the limits of Hellenization, Cambridge; New York, 1975.

<sup>33</sup> Նույնի, Greek Culture and the Jews. In M. Finley (ed.), The Legacy of Greece: a New Appraisal, Oxford, 1981, pp. 325-436; նույնի, Jews and Greeks, in Momigliano A. Essays on Ancient and Modern Judaism, Chicago / London, 1994.



ազգայնականությանը և հիմնականում կիսում էր թոյնբիական մոտեցումները հրեական պատմության վերաբերյալ:

Նման հայացքների տեր գիտնական էր նաև Երուսաղեմի համալսարանի պրոֆեսոր Միշել Էվի-Ջոնահը, լինելով հայտնի եբրայագետ<sup>34</sup>, մինևույն ժամանակ, հելլենիզմին նվիրված իր մենագրության մեջ, ոչ միայն այն չի համարում Արևելքի ժողովուրդների և մասնավորապես հրեաների համար վնասաբեր, այլև հիանում հունա-մակեդոնական մշակույթով<sup>35</sup>: Ավելին, տուրք տալով արևմտյան պատմագիտական ավանդույթներին, նա հելլենիզմը բանաձևում է իբրև հունական պատմության անբաժանելի մաս: Մ. Էվի-Ջոնահի պնդմամբ հելլենիզմը նախևառաջ մշակութային երևույթ է, որը Ալեքսանդրի և նրա հաջորդների շնորհիվ տարածվել է Արևելքում՝ Միջերկրականից մինչև Ինդոս<sup>36</sup>: Հրեա պատմաբանը միստիկական ակնածանք է տածում Ալեքսանդրի նկատմամբ, արդեն պատանի տարիներից նրա մեջ տեսնելով ապագա մեծ գործչին<sup>37</sup>: Նա անվանում է Ալեքսանդրին «Նոր Դիոնիսոս», «աստվածաման անձնավորություն», «նշանավոր վարչարար և ստրատեգոս»<sup>38</sup>, մի բան, որ շատ բնորոշ է XX դարի առաջին կեսի ֆրանսիական և գերմանական անտիկագետներին, բայց ոչ օրթոդոքս հրեաներին, որոնց նշանային համակարգում հելլենիստական շրջանի հունա-մակեդոնական արքաները մոտավորապես նույն տեղն են գրավում, ինչ հայկական կոլեկտիվ գիտակցության համար պարսից Սասանյանները: Եվս մեկ բնորոշ հանգամանք՝ Մ. Էվի-Ջոնահը հատուկ շեշտադրում է Ալեքսանդրի հակվածությունը ժողովրդավարական արժեքներին, որը նա համարում է «մեծ քաղաքակրթողի» քաղաքականության հիմնական բովանդակությունը:

Հրեական հելլենիստագիտությունը նոր լիցք ստացավ 1990-ականներին, երբ Խորհրդային Միության անկումից հետո,

---

<sup>34</sup> Տե՛ս Avi-Yonah M., The Second Temple. A History of the Holy Land, Jerusalem, 1969.

<sup>35</sup> Avi-Jonah M., Hellenism and the East. Contacts and interrelations from Alexander to the Roman conquest, Jerusalem, 1978.

<sup>36</sup> Նշվ. աշխ., էջ 3:

<sup>37</sup> Նշվ. աշխ., էջ 11:

<sup>38</sup> Նշվ. աշխ., էջ 7:

ազգությամբ հրեա մի քանի խոշոր պատմաբաններ<sup>39</sup> հնարավորություն ստացան բնակություն հաստատել Իսրայելում և Միացյալ Նահանգներում<sup>40</sup>: Նրանք արագ ինտեգրվեցին իսրայելյան և ամերիկյան գիտության մեջ՝ արևմտյան եբրայագիտությանն ու հելլենիստագիտությանը նոր որակ տալով: Նրանց աշխատությունների մեջ հրեական մշակույթը դիտարկվում է երկակի, մի կողմից՝ որպես հելլենիստական համադրականության դրսևորում, մյուս կողմից՝ իբրև

---

<sup>39</sup> Խորհրդային Միությունում ձևավորվել էր հելլենիստական-եբրայական խնդիրներով զբաղվող հիմնարար դպրոց, որի ավանդույթներն իրենց հետագա զարգացումը ստացան հրեաների հայրենադարձությունից հետո (Ранович А., Очерки истории древнееврейской религии, Москва, 1937. Նոյնի, Иудейская война, Исторический журнал, 1938, 11. Նոյնի, Очерки истории раннехристианской церкви, Москва, 1941; նոյնի, Восточные провинции Римской империи в I-III вв., Москва-Ленинград, 1949; Амусин И., Кумранская община, Москва, 1983; Ковельман А., Риторика в тени пирамид: Массовое сознание римского Египта, Москва, 1988; նոյնի, Рождение толпы: от Ветхого к Новому Завету, Образ "другого" в культуре. Одиссей. Человек в истории, Москва, 1994, с. 123-137).

<sup>40</sup> Kovelman A.B., From Logos to Myth. Egyptian Petitions of the 5<sup>th</sup>-7<sup>th</sup> Centuries, Bulletin of the American Society of Papyrologists, 28, 3-4, 1991, pp. 135-152; նոյնի, Еврейская толпа в Палестине I в., Одиссей: Человек в истории. 5, 1994, с. 214-241 (The Masses in the Literature of the Sages, (in Hebrew) Jewish Studies. Forum of the World Union of Jewish Studies, 36. Jerusalem, 1996, pp. 111-132; նոյնի, Толпа и мудрецы в ранней раввинистической литературе, Москва, 1996; Ковельман А., Гершович У., Бегство от логоса: к пониманию раввинистической герменевтики. Толпа и мудрецы в ранней раввинистической литературе, Москва, 1996; Ковельман А., Вавилонский Талмуд: Антология агады, т. 1-2, Иерусалим, Москва, 2001-2004. Նոյնի, Farce in the Talmud, The Review of Rabbinic Judaism Ancient, Medieval and Modern. 5, 1, Leiden, Boston, Köln, 2002, pp. 86-92. Նոյնի, A Symmetrical Teleological Construction in the Treatises of Philo and in the Talmud (with Uri Gershowitz as a co-author), The Review of Rabbinic Judaism Ancient, Medieval and Modern 5, 2. Leiden, Boston, Köln, 2002, pp. 86-92. Նոյնի, Jerusalem Overcrowded: The Dream of Ideal Urbanity in Midrash, Jews and Slavs 10, Semiotics of Pilgrimage, Jerusalem, 2003, pp. 13-18. Նոյնի, Continuity and Change in Hellenistic Jewish Exegesis and in Early Rabbinic Literature, The Review of Rabbinic Judaism Ancient, Medieval and Modern 5, 2. Leiden, Boston, Köln, 2004, pp. 123-146. Նոյնի, A Clarification of the Hypothesis, The Review of Rabbinic Judaism Ancient, Medieval and Modern. 5, 2. Leiden, Boston, Köln, 2004, pp. 162-168. Նոյնի, Александр Македонский и еврейские мудрецы. В соавторстве с Ури Гершовичем, Восточная коллекция: Журнал для всех, кому интересен Восток, 2 (17) (лето 2004), с. 42-51. Նոյնի, Typology and Peshet in the Letter of Aristeas, Ancient Israel, Judaism, and Christianity in Contemporary Perspective: Essays in Memory of Carl-Johan Illman, Lanham, 2006, pp. 153-182.

հելլենիստական քաղաքակրթությանը ներհակ, ինքնամփոփ և ինքնարժեք երևույթ: Այդ մշակույթի մի բևեռում գտնվում է Փիլոն Ալեքսանդրացին և Հովսեփոսը, իսկ մյուս բևեռում Թալմուդն ու Հնգամատյանը<sup>41</sup>:

Այսպիսով, հրեական հելլենիստագիտությունը, սկիզբ առնելով արևմտյան և խորհրդային հելլենիստագիտության շրջանակներում, վերջին մի քանի տասնամյակներում այն տեղափոխվեց արագ կայացող Իսրայելի հումանիտար հետազոտությունների դաշտ, որտեղ, ի թիվս այլոց, ճևարվել է հելլենիստագիտության ինքնուրույն դպրոց: Այդ դպրոցը խարսխված է միաժամանակ արևմտյան անտիկ ուսումնասիրությունների և եբրայագիտության նվաճումների վրա: Չնայած երիտասարդ տարիքին՝ Իսրայելի արդի հելլենիստագիտությունը միանգամայն կարելի է համարել կայացած:

Այն ունի որոշակի առավելություն արևմտյան անտիկագիտության նկատմամբ: Չզիջելով արևմտյան ուսումնասիրողներին ակադեմիական չափանիշներով, այն ունակ գտնվեց հելլենիստական դարաշրջանը դիտարկել ոչ եվրոպակենտրոն տեսանկյունից, հաշվի առնելով մի կողմից հունա-մակեդոնական և հռոմեական, իսկ մյուս կողմից՝ ընդհանուր արևելյան և զուտ տեղական ընկալումները: Այսօր նման խնդիր է ծառայել նաև հայ պատմագիտության առջև: Առաջին քայլերն արված են, մնում է չհայտնվել ծայրահեղական «զելոտության» կամ ստրկամիտ արևմտական «հերովդականության» ծիրում:

ERVAND MARGARYAN

## HELLENISM AND ZEALOTISM IN MODERN HELLENISTIC STUDIES

The article deals with the attitude of Jewish historians of modern times to one of the key aspects of Jewish history, the confrontation of fanatical "Zealotism" and comprador "Herodianism", which became a kind of civilizational response to the challenges of aggressive Hellenistic-Roman culture. Arnold Toynbee, the one who

---

<sup>41</sup> Նույնի, *Between Alexandria and Jerusalem: the Dynamic of Hellenistic and Jewish Culture*. Leiden, Boston, 2005. Նույնի, *Jeremiah 9:22-23 in Philo and Paul, The Review of Rabbinic Judaism Ancient, Medieval and Modern*, 10, 2, Leiden, Boston, Köln, 2007, pp. 162-175. Նույնի, *Эллинизм и еврейская культура*, Москва, Иерусалим, 2007.

introduced the concepts of "Zealotism" and "Herodianism", thought that they are universal civilizational models. However, according to the historian, dating back to the historical experience of the Syriac world strategy, both were pure blind and destructive. Proof of this is the loss of the Hebrew state, the destruction of the Temple and the dispersion of the Jews. Part of the Jewish nationalist historians reacted negatively to the ideas of Toynbee, considering them incorrect and unscientific. However, most historians, including the Jews, agree with Toynbee, that if the traditional Jewish community was to show more flexibility, tolerance, and openness to the Hellenistic ideas, the history of the Jewish people would not be so tragic. Awareness of the need of the proportionate combination of "Herodianism" and "zealotism" came to the Jews only in the XIX-XX centuries, which was one of the reasons for the success of the Jewish nation and the revival of the Jewish state in modern times.

**ՄԱՏԹԵՆՍ ՈՒՌՎԱՅԵՑՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ 961 ԹՈՒԱԿԱՆԻՆ  
ԱՆԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՀՌՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(ՆՈՐ ԱՂԲԻՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ)\***

Մատթեոս Ուռհայեցու եզակի վկայութիւնը Անին Բագրատունեաց պետութեան մայրաքաղաք հռչակելու մասին յարում է նրա էապէս հակասական տեղեկութիւններին Աղուանքի մի հատուածի՝ «Դարբանդ» կամ «Կապանք» երկրի հայ թագաւորների մասին: Այստեղ պատմիչը թուարկում է նրանցից վեցին՝ *Վաշազան, Գոշակտակ* (կամ *Գոշազգակ*), *Փիլիպպէ, Սեադայ, Սենեքարիմ* եւ *Գրիգոր*: Բնագիրն է. «Էին եւ այլ թագաւորք Հայոց ի *Դարբանդ աշխարհին*, որ ասի *Կապանք*, սահմանակից Օզաց եւ Աղուանից [*resp. Ալանից*], որք էին թագաւորք անարատք եւ սրբակրօնք, որք յիշատակին ի սուրբ պատարագն ընդ այլ աստուածաւէր սուրբ թագաւորքն, որք էին անուանք այսոքիկ՝ *Վաջազան* [*resp. Վաշազան*], եւ *Գոշակտակն* [*միւս հասկումով՝ Գոշազգակն*]՝ նորին որդին, *Փիլիպպէ* [*resp. Փիլիպպէ*] որդի *Գոշակտակին*, *Սեադայ* որդին *Փիլիպպէի*, *Սենեքարիմ* որդի *Սեադայի*, *Գրիգոր* որդի *Սենեքարիմայ*, որ դեռ եւս կենդանի էր՝ մինչեւ գրէաք զայս մատենագրութիւնս մեր»<sup>1</sup>:

Այս թագաւորներից երրորդին՝ *Փիլիպպէին*, Ուռհայեցին պատուաւոր մասնակից է համարում (Աղուանից աշխարհի կաթողիկոս Տէր Յովհաննէսի հետ միասին) կենտրոնական Հայաստանում իբրեւ թէ միաժամանակ՝ 961/962 թ. տեղի ունեցած երկու տօնական իրադարձութեան՝ Անին մայրաքաղաք հռչակելուն (ընագիրն է. «Յամի թուականութեանս Հայոց ի Նժ [410=961/962 թ.]... Յայսմ ամի... յայնմ

\* Յօդուածի հիմքում դրուած է Անիի մայրաքաղաք հռչակուելու 1050-ամեակին նուիրուած գիտաժողովում ընթերցուած զեկուցումը (հմմտ. Միշազգային գիտաժողով՝ «Անին միջնադարեան Հայաստանի քաղաքական եւ քաղաքակրթական կենտրոն», Երեւան, 15-17 նոյեմբերի, 2011 թ., Զեկուցումների դրոյթներ, Երեւան, 2011, էջ 53-58):

<sup>1</sup> Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Պատրաստեցին՝ Ս. վրդ. Մէլիք-Աղամեան, Ն. սրկ. Տէր Միքայէլեան, Վաղարշապատ, 1898, էջ 231: Բնագրերում այստեղ եւ ստորեւ ընդգծումները մերն են:

աուր եղեւ ժողով ահագին եւ մեծ ի քաղաքն յԱնի, որ եղեւ այժմիկ թագաւորանիսր քաղաք Հայոց») եւ Անանիա Մոկացի կաթողիկոսի ձեռքով (941-967 թթ.) Աշոտի որդի Գագիկ թագաւորի (989/990-1017/1018 թթ.) թագի օժման արարողութեան (բնագիրն է. «Եւ ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօժումն թագաւորութեան որդւոյն Աշոտի Գագկայ ըստ առաջին օժման հարցն իւրոց, վասն զի չեւ եւս [իմաստն է՝ վաղուց ինչ - Ա. Յ.] էր նստեալ յաթոռ թագաւորութեան տանն Հայոց եւ ոչ էր եղեալ թագ ի վերայ գլխոյ իւրոյ»<sup>2</sup>): Դրան անմիջապէս յաւելում է. «Հարկաւորեալ կոչեցին զամենագովելին զՏէր Յովհաննէս կաթողիկոսն Աղուանից աշխարհին, եւ քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա, եւ մեծաշուք իշխանութեամբ կոչեցին զՓիլիպպոս՝ զթագաւորն Աղուանից, զայր աստուածային եւ զսուրբ, զորդին Գոշազգակայ որդւոյ Վաչագանայ, որք էին թագաւորք Աղուանից աշխարհաց»: Քիչ յետոյ ասարտելով պարբերութիւնը՝ պատմիչը նշում է Փիլիպպէին ու Աղուանից կաթողիկոսին մեծ հանդիսաւորութեամբ ճանապարհելու մասին. «Եւ յայնժամ զթագաւորն Աղուանից զՓիլիպպէ եւ զկաթողիկոսն զՏէր Յովհաննէսն, զեպիսկոպոսունսն եւ զզօրսն, որ եկին զհետ թագաւորին եւ հայրապետին, եւ յուղարկեցին մեծամեծ տրօք եւ սիրով յաշխարհն Աղուանից, որ էր աթոռ սուրբ առաքելոցն Թադէոսի եւ Բարդղղիմէոսի, որք են նահապետք առաջինք Հայոց Մեծաց»<sup>3</sup>:

Սակայն իրականում՝ նշուած երկրորդ իրադարձութիւնը կարող էր տեղի ունենալ 989/990 թուից ոչ վաղ, երբ գահ բարձրացաւ Գագիկ Ա

---

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 3-4: Քիչ յետոյ շարունակում է. «Եւ յայսմ ամի օժաւ որդի Աշոտի Գագիկ արքայ յօժումն հարց իւրոց եւ նստաւ ի գահոյս առաջին թագաւորացն Հայոց ազգիս, եւ ինէր ուրախութիւն մեծ ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ թագաւորութեան աշխարհիս Հայոց՝ ըստ առաջին հարցն... Եւ յայնմ աուր լինէր հանդէս զօրաց նորա հարիւր հազարաց վառելոց ընտիր արանց ի մարտ պատերազմաց անուանեաց եւ քաջ կորովեաց... Եւ լուեալ զայս ամենայն շուրջակայք եւ ամենայն թագաւորք ազգաց՝ Ափխազաց եւ Յունաց, Բաբելացոց եւ Պարսից, տուրս եւ սէրս հանդերձ պատուական ընծայիք յուղարկէին ի փառաւորութիւն Հայոց թագաւորութեանն»:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 4: Մատթէոս Ուռհայեցու երկի այս ամբողջ հատուածը նրանից գրեթէ բառացի քաղում է Սմբատ Գունդստաբլը (տե՛ս Սմբատայ Սպարապետի Տարեգիրք [իրատարակեց Հ. Ս. վրդ. Ազըլեան], Վենետիկ-Ս. Ղազար, 1956, էջ 2):

արքան: Շեշտենք, որ պատմիչի արձանագրած տեղեկատուութիւնը նկատի ունի հէնց նրա «զօծումն»-ը (հակառակ որոշ չաջողուած նախկին ենթադրութիւնների<sup>4</sup>), քանի որ երկու էջ անց յիշատակում է նոյն Գագիկ Ա Շահնշահի նաեւ վախճանը, ընդ որում՝ նոյնչափ վրիպեալ թուագրմամբ («Իսկ ի վերանալ թուականութեանս Հայոց ի ԴՃԻ [420=971/972 թ.] մեռանէր Գագիկ արքայն խաղաղական մահուամբ: Եւ եղև հակառակութիւն եւ աղմուկ մեծ ի մէջ երկու որոյոց թագաւորին Գագկայ՝ ընդ Յովհաննէս-Սմբատ] եւ ընդ Աշոտ...»)<sup>5</sup>: Տեղին նշենք, որ ըստ Ստեփաննոս Ասողիկի վկայութեան<sup>6</sup> 989/990 թ. ծնունդ գահակալած Գագիկ Ա արքայի մահուան տարին, հետեւելով Միքայէլ Չամչեանին, ասանդաբար համարում է 1020 թ.<sup>7</sup>: Սակայն Կարէն Իւզբաշեանն արդէն ցոյց է տուել, որ 29 տարի տեւած նրա գահակալութիւնն, անկասկած, աւարտուել է 1017/1018 թ.-ին, քանի որ Արիստակէս Լաստիվերոցին 1018-1019 թթ. երկու դէպք վերագրում է Գագիկի որդի Աշոտի ժամանակին, իսկ Տեկորի 1018/1019 թ. մի վիճազիր յիշատակում է «թագաւորն Յէվանէս»-ին, այսինքն՝ Յովհաննէս-Սմբատին<sup>8</sup>:

<sup>4</sup> Նկատի ունենք Մ. արք. Օրմանեանի առաջ քաշած (Ազգապատում, հ. Ա, սիւն. 1107) եւ Հր. Աճառեանի ու Հր. Բարթիկեանի կողմից թերթւորէն ընդունուած վարկածն, ըստ որի՝ Ուռհայեցու տուեալներն իրօք կարելի է վերագրել Աշոտ Ողորմածին (953-977 թթ.), որն իբրեւ թէ կարող էր կրկնակի՝ Աշոտ-Գագիկ անունն ունենալ (տե՛ս Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, Երեւան, 1942, էջ 188: Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Աշխարհաբար թարգմ. եւ ծանօթագրութիւնները Հ. Բարթիկեանի, Երեւան, 1991, էջ 484, ծնթ. 11): Նորերս այդ վարկածը կրկնեց Կարէն Մաթետոսեանը՝ յայտելով, որ Մատենադարանի՝ Սամուէլ Անեցու ժամանակագրութեան լրացումները պարունակող երկու գրչագրում այսպիսի նշում կայ. «Հայոց ՆԺԱ [=962 թ.]. Գագիկ թագաւոր օծաւ Հայոց, որ է նոյն Աշոտ որդի Աբասայ» (Մաթետոսեան Կ., Անի-Շիրակի պատմութեան էջեր, Յօդուածների ժողովածոյ, Երեւան, 2010, էջ 10): Իրականում պարզ է, որ Սամուէլի անանուն խմբագիրն ընդամենը ոչ բարդ տրամաբանական տեսքի է բերել Մատթէոս Ուռհայեցու ասածը:

<sup>5</sup> Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 7:

<sup>6</sup> Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, գլ. Գ.Լ, էջ 255:

<sup>7</sup> Տե՛ս, օր.՝ Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. III, Երեւան, 1976, էջ 134, 144:

<sup>8</sup> Юзбашян К., К хронологии правления Гагика I Багратуни. - Античная древность и средние века, 10, Свердловск, 1973, с. 195-197. Հմմտ. Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերոցոյ, Աշխատասիրութեամբ Կ. Իւզբաշեանի, Երեւան, 1963, էջ 26-27: Հ.Ղ. վրդ. Ալիշան, Շիրակ. Տեղագրութիւն-պատկերացոյց, Վենետիկ-Ս. Ղազար, 1881, էջ 134:

Փորձելով հասկանալ Մատթեոս Ուռհայեցու բերուած տեղեկութիւնների ժամանակագրական ակնյայտ հակասականութեան պատճառները՝ նկատում ենք, որ դա հնարատր է անել միմիայն հետեւեալ դէպքում. ուշադիր քննութեան լոյսի ներքոյ անհրաժեշտ է ընդունել, որ Բաբելոնի քան մէկուկէս դար յետոյ գրող պատմիչի նկարագրած երկու իրադարձութիւնները (Անիի հռչակուելը մայրաքաղաք եւ Գագիկ Ա-ի հանդիսատր թագադրումը), լինելով տարածամանակեայ, կարող էին պարզապէս միախառնուել հէնց իր՝ շարադրող հեղինակի երեակայական պատկերացումներում: Ըստ այդմ, աղբիւրագետի հայեացքով պարզ է, որ Մատթեոս Ուռհայեցու կողմից «մշակուած»՝ առկայ բնագրի ինչ-ինչ մանրամասներ իրենց հիմքում պիտի վերագրուեն առաջին իրադարձութեանը (Անիի օծուելը «թագաւորանիստ քաղաք», ընդ որում՝ Անանիա Մոկացի «սուրբ հայրապետի» ձեռք, ինչպէս եւ ընդունուած է պատմագրութեան մէջ), իսկ միւսները՝ երկրորդին: Կարելի է, որ պատմիչի պատկերացմամբ՝ երկրորդ իրադարձութիւնը՝ Գագիկ Ա-ի «զօծումն թագաւորութեան»-ը, տեղի է ունեցել նրա մահուանից ուղիղ 10 տարի առաջ (Հայոց «ՆԻ» թուից հանած «ՆԺ» թիւը): Այսինքն՝ եթէ ենթադրենք, թէ տարիների հէնց այդ քանակն է Ուռհայեցին իմացել (իսկ գուցէ եւ հիւրերի անունները) որեւէ լաւ տեղեկացուած աղբիւրից (գուցէ եւ գրաւոր), ապա հնարատր է թուում մտածել՝ գոնէ իբրեւ վարկած, որ 1007 կամ 1008 թ. (1017/1018-ից հանած 10 տարի) իրօք տեղի է ունեցել այլ աղբիւրներին անյայտ մնացած մի իրադարձութիւն՝ Գագիկ Ա-ի թագադրում-օծումը: Ընդ որում՝ պարզ է, որ այդ օծման արարողութիւնը պիտի կատարած լինէր Սարգիս Ա Սեւանցի Հայոց կաթողիկոսը (992-1019 թթ.) եւ, իհարկէ՝ շատ ուրիշների ներկայութեամբ ու այս կամ այն չափով մասնակցութեամբ:

Երկրորդ անգամ պատմիչը *Փիլիպպէ* թագաւորին առանձին յիշատակում է Յովհաննէս Չմշկիկ կայսեր («թագաւորին Չմշկանն», «Չմշկիկ, որ ասէին Կիւռժանն» – 969-976 թթ.) զօրքերի՝ իր թուագրմամբ (անհամեմատ՝ Բաբելոնի իրական)՝ «ի Հայոց թուականութեանն՝ յամին ՆԻԱ [421=972/973 թ.]... Եւ յետ սակաւ ատուրց... ի նոյն

---

Ի դէպ, այս թուագրումն արդէն ընդունում է նորագոյն գրականութեան մէջ (տե՛ս Մաթեոսեան Կ., Անի-Շիրակի պատմութեան էջեր, էջ 22-25):



ամին...»<sup>9</sup> դէպի Հայաստան եւ Հիւսիսային Միջագետք արշաւանքի մասին պատմելիս: Բնագիրն է. «Յայնժամ ամենայն թագաւորագունքն Հայոց՝ ազատքն եւ իշխանքն եւ ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն Արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի [=Ողորմած - 953-977 թթ.]. թագաւորն *Կապանին Փիլիպպէ* եւ թագաւորն Աղուանից Գուրգէն [=Տաշիր-Ձորագետի - մօտ 957-996 թթ., թագաւոր՝ 978-ից], Աբաս Կարուց տէրն [984-1029 թթ.] եւ Սենեքերիմ Վասպուրականիս տէրն [990-1021 թթ.] եւ Գուրգէն Անձեացեաց տէրն [977-1003 թթ.] եւ բովանդակ ամենայն տունն Սասլախնու<sup>10</sup>. եւ բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրեւ ութսուն հազար»<sup>11</sup>: Նոյնը հմնտ. Մատթէոս Ուռհայեցոց օգտուած Սմբատ Գունդստաբլի մօտ. «Յայնժամ ժողովեցան առ արքայն Հայոց Աշոտ Կապանին թագաւորն Փիլիպպէ, եւ թագաւորն Աղվանից Գեորգի [*Գուրգէն*], եւ Աբաս՝ Կարուց տէրն, եւ Սենեքերիմ՝ Վասպուրականի տէրն, եւ Գուրգէն՝ Անձեացեաց տէրն, եւ ամէն տուն Հայոց...»<sup>12</sup>:

Փակագծերում մեր ծանօթագրած թուականներից (գրականութեան մէջ առկայ վերջին ճշգրտումներով) երեւում է, որ չնայած հիմնական հաղորդման՝ ընդհանուր առմամբ հաւաստիութեանը (ժամանակով հանդերձ), ինչը յուշում է հեղինակի կողմից գրաւոր աղբիւրի օգտագործման հաւանականութիւնը՝ Աշոտ Գ Ողորմածի զօրաժողովի կոնկրետ մասնակիցների առումով լիովին կարելի է ենթադրել պատմագիր Ուռհայեցու էական «ստեղծագործական աշխատանքը»՝ ենթադրեալ աղբիւրի պարունակած հաւաստի, բայց, հաւանաբար՝

<sup>9</sup> Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 14, 15, 17: Նշելի է, որ պատմիչն ինչ-որ աղբիւրից ճշգրիտ քաղում-դնում է Չմշկիկի գահակալելու, այսինքն՝ Նիկեոսի Բ Փոկասին սպանելու տարին (թէկուզ եւ Գագիկ Շահնշահի մահուան մասին պատմող պարբերութեանը նախորդողում). «Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՆժԸ [418=969/970 թ.] ոմն մահապարտ... որում անունն կոչէին Չմշկիկ... անխնայ գազանաբար խողխողէր գամենաբարի արքայն... եւ նստաւ յարթո թագաւորութեանն Յունաց...» (էջ 6-7):

<sup>10</sup> Այս տեղանունան վերականգնման համար տե՛ս նշուած էջի տողատակ 6 եւ Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն (1991), էջ 486, ծնթ. 41 («Բնագրում՝ «Սասանոս»: Առանձին ձեռագրեր տալիս են «Սասնո» ընթերցումը, այսինքն՝ Սասուն, որ ճիշտ է»):

<sup>11</sup> Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 17:

<sup>12</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 9:

աւելի համառօտ տեղեկատւութեան համեմատ: Նրա այդ աշխատանքի շնորհիւ ցուցակում յայտնուել են, ինչպէս տեսնում ենք, պարզապէս Ժ դ. վերջերի առաւել յայտնի թագակիր անձինք: Սակայն հարկ է նշել, որ բերուած երկու դէպքերում էլ, թէպէտ բնագրերում նկատուում են մեծ կամ փոքր ժամանակավրէպ փաստեր ու անհամապատասխանութիւններ, առկա վկայութիւնների իւրաքանչիւր առանձին մանրամասնի հաւաստիութեան խնդիրը պէտք է քննարկով յատուկ ուշադրութեամբ, քանի որ, ինչպէս արդէն պարզաբանել է Լեւոն Խաչիկեանը, Մատթէոս Ուռհայեցին իր «Ժամանակագրութեան» երեք մասերից առաջինում (ընդգրկում է 951-1051 թթ. ժամանակահատուածը) իբրեւ աղբիւր, ամենայն հաւանականութեամբ, զգալի չափով օգտագործել է իր աւագ ժամանակակից, Հայաստանի եւ յատկապէս նրա հիւսիս-արեւելեան երկրամասերի իրողոյթներին (ռէալիաներին) քաջածանօթ ու մի շարք կարեւոր իրադարձութիւնների անմիջական մասնակից Յակոբոս Սանահնեցի վարդապետի (նաեւ՝ *Քարաքնեցի*, *Քարափնեցի*, *Քարահարայ որդի*, *Մեծքարեցի*) կորսուած ժամանակագրական երկը<sup>13</sup>: Պատմիչը մի քանի անգամ է յիշատակում Յակոբոսին<sup>14</sup>, իսկ

---

<sup>13</sup> Տե՛ս Խաչիկեան Լ., Յակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, Բանբեր Երեւանի համալսարանի, 1971, 1, էջ 22-48 (վերահրատ.՝ Խաչիկեան Լ., Աշխատութիւններ, Կ. Ա, Երեւան, 1995, էջ 128-155): Հմմտ. Բարթիկեան Հ., Մատթէոս Ուռհայեցի, Հայ մշակոյթի նշանաւոր գործիչները. V-XVIII դարեր, Երեւան, 1976, էջ 237-238; Մաթեոսեան Ռ., Տաշիր-Ձորագետ (X դար - XII դարի սկիզբ), Երեւան, 1982, էջ 72: Մուրադեան Պ., ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դաւանական խնդիրները եւ Մխիթար Գօշի «Առ վրացիսն» թուղթը (Աղբիւրագիտական քննութիւն եւ բնագրեր), Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 2011, էջ 23-25: Յակոբոսի երկի մի հատուած պահպանուել է Մաշտոցի ան. Մատենադարանի (այսուհետեւ՝ ՄՄ) ձեռ. թիւ 9832 ժողովածոյում (ԺԷ դար)՝ «Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագրով (թ. 25բ-27ա. համապատասխանում է Ուռհայեցու վաղարշապատեան հրատարակութեան էջ 49-50 եւ 52-55-ի բովանդակութեանը): Լ. Խաչիկեանն այն հրատարակել է իր յօդուածի վերջում (էջ 40-44, վերահրատ.՝ 146-150)՝ զուգադիր համեմատելով 3 հատուածներ. ա) Յովհաննէս Կոզեռնի «Տեսիլքից» (ՄՄ, ձեռ. թիւ 1324-ից, ժամանակը՝ 1281 թ., խորագիրը՝ «Պատմութիւն նշանաց, որ եղեն ի գուշակս առաջիկայ]] աուրցն, որ կատարեցաւ, ասացեալ սուրբ վարդապետին Յոհաննիսի Կոզռան՝ Հայոց վարդապետի»), որն անմիջակասօրէն յանգում է Յակոբոս Սանահնեցուն (դա 1320 թ. մի պակաս ընտիր գրչագրից հրատարակել է նաեւ Նիկ. Մաղը՝ Мapp Н., Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне (Из материалов для истории средневековой армянской литературы), С. Петербург, 1895 (Восточные за-

վերջին դրուագում մանրամասն նկարագրում է իր հայրենի Ուռհա քաղաքում 1085 թ. տեղի ունեցած նրա մահուան հանգամանքները («Դարձեալ ի թուականութեանս Հայոց ի յամի ՇԼԴ [534=1085/1086 թթ.] մեռաւ Հայոց վարդապետն Յակոբոս Քարաբնեցին, որ յորջորջեալ կոչէր Սանահնեցին, այր հօգր եւ կորովի») <sup>15</sup>:

Արդ՝ շատ ուսումնասիրողներ նկատել են վերելում բերուած «Դարբանդ»-«Կապան»-«Աղուանքի» մեծ արքայացանկի հակասականութիւնը, ընդ որում՝ այդ պատճառով, որպէս կանոն, խուսափել են նրա առանձին տարրերի հաւաստիութեան խնդրի քննարկումից: Փոխարէնը՝ մի դէպքում Սեդրակ Բարխուդարեանը, եւ միւս դէպքում Կիրիլ Թումանովը, ինչ-որ կերպ լուծելով ակնյայտ հակասութիւնները, փորձել են այդ ցուցակն *ամբողջութեամբ* համարել՝

---

метки: сборник факультета восточных языков), с. 9-26, թարգմանութիւնը՝ էջ 26-34, խորագիրը՝ «Տեպիլ սուրբ վարդապետին Յոհաննիսի, որ մականուն Կոզեոն կոչի»), բ) Մատթէոս Ուռհայեցուց, որը եւս անմիջականօրէն քաղել է Յակոբոսից, գ) Սմբատից, որն օգտագործել է Ուռհայեցու երկի մի վաղ տարբերակ:

<sup>14</sup> Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 161 («...առեալ ընդ ինքեանս գՅակոբոս վարդապետն ըստ աւելի անուանն՝ Քարափնեցի, այր գիտնական գրոց բանից, եւ գնացին ի Կոստանդնուպօլիս... եւ Յակոբոս վարդապետն, որ ասի Սանահնեցի»), էջ 179 («եւ այս են անուանք վարդապետացն. Տիրանն Կապանեցին, եւ Սայլահանն եւ կամ Լասդիվերցին, եւ Ատոմ Անձաւացին, Անանէ եւ Գրիգոր Նարեկացիքն, Սարգիս Սեանեցին, Յովսէփ Ընծայեցին, Գէորգ Ուծեցին, Դէոսկորոս Սանահնեցին, Անանէ Հաղբատացին, Յակոբոս Քարահատայ որդին, Անտօն եւ Տիմոթէոս, Յովհաննէս՝ որ անուանեցաւ Կոզեոն, Պօղոս եւ Յովսէփ, Գէորգ դպրապետ Թամռեցին [տպ. վարդապետ, եւ Թամռեցին], եւ Պարկճակ եւ այլք այսպիսիք անյաղթք, որք կային լցեալք աստուածային շնորհօքն, որք երեւեցան յաշխարհս Հայոց յայսմ ժամանակիս»):

<sup>15</sup> Նոյն տեղում, էջ 226: Շարունակութեան մէջ. «Սորա հասեալ ի վերայ հին եւ նոր Կոտակարանացն Աստուծոյ, ուսեալ եւ հասեալ սորա ի վերայ հռետորական իմաստութեանցն եւ տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանցն. սա էր յաշակերտաց մեծին Դէոսկորոսի հօրն Սանահնին. եւ այս Յակոբոս էր, որ խօսեցաւ ի Կոստանդնուպօլիս ընդ իմաստասէրսն Հռոմոնց ի յաւուրն թագաւորին Տուկծին [Կոստանդին Դուկաս - 1057-1067 թթ.], յորժամ գնաց զհետ Սենեքարիմայ որդւոցն. սորա խօսեալ վասն հաւատոցս Հայաստանեայցս, եւ հաճեալ ի բանս նորա ամենայն տունն Յունաց: Եւ յայսմ ժամանակիս էր ի քաղաքն յՈւռհա, եւ ծերութեամբ քաղաքավարեալ զկեանս իւր. եւ դաւով նենգութեամբ լուծեալ եղեւ ի կենացս, վասն զի գտանէին զնա մեռեալ ի մահիճս իւր առանց հեծութեան եւ ցաւոց... եւ մեծաւ հանդիսիւ թաղեցին զնա ի դուռն սուրբ եկեղեցոյ իւրոյ՝ ի հիսիսեան կողմն քաղաքին, իբրեւ նետընկէց մի հեռի ի պարսպէն»:

առաջինը՝ Դերբենդում գոյատևած «Հայ-աղուանական թագաւորութեան» 6 տիրակալների ցանկ<sup>16</sup>, իսկ երկրորդը՝ «Հարանդի» (որից էլ՝ իբրեւ թէ > *Դարբանդ*), այսինքն՝ Գորոզուի<sup>17</sup>: Նրանց փաստարկների աւելի մանրամասն արծարծումը թողնելով հետագայ աշխատանքներին՝ այստեղ ուղղակի անցնենք սկզբնաղբիւրի քննութեանը եւ նշենք, որ իրականում Մատթէոս Ուռհայեցու ցանկը ճիշտ է թում դիտարկել պարզապէս իբրեւ տարբեր, այդ թում՝ բանաւոր աղբիւրների հիման վրայ հէնց պատմիչի կողմից ի մի բերուած-մշակուած հաւաքածոյ: Ըստ այդմ՝ աղբիւրագէտի

---

<sup>16</sup> Տե՛ս Բարխուդարեան Ա., Դերբենդի հայ-աղուանական թագաւորութիւնը, Պատմա-բանասիրական հանդէս, 1969, 3, էջ 125-148: Бархударян С., Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений (научн. редакторы А. Асоян и К. Асатрян), Ереван, 2011, с. 97-148. Իբրեւ հիմք մատնանշում են Սամուր գետից հարաւ՝ Խաչմասս գիւղի գերեզմանոցի 3 քարերի վրայ՝ «Այս է տապան Սենեքերիմ արքայի», «Գրիգոր կրեյսար» եւ «Յովհաննէս կրեյսար» հայերէն տապանագրերը. ԺԹ դարում դրանք ընթերցած երկրագիրները յիշուած Սենեքերիմին ու Գրիգորին համադրել են Ուռհայեցու ցանկի վերջին 2 թագաւորների հետ (տե՛ս Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Աշխատութեամբ տեսնո՞ւ Սարգսի Սանահնեցոյ Ջալալեանց, մասն Բ, Տփիսիս, 1858, էջ 420: Մ. արքեպ. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւ եւ քաղաքացն եւ գիւղօրէից՝ որք ի Շամախոյ թեմի, Տփիսիս, 1896, էջ 544: Մ. ծ. վրդ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 134: Նոյնի՝ Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 195): Տուեալ համադրումը, թերեւս, իրաւացի է, սակայն աւելի հաւանական է մտածել, որ Խաչմասի տապանագրերում այդ արքայանունների յայտնուելու հիմքն էլ զուտ գրական է: Այսինքն՝ ենթադրելի է, որ հասարակական ինչ-որ վերելքի պահին տեղի հայութիւնը, Մատթէոս Ուռհայեցի պատմիչի տեղեկութիւնների ոչ բարդ մեկնութեամբ «պարզելով» իր երկրի հին արքաների անունները («թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին... սահմանակից Օզաց եւ Ալանից»), «վերականգնել» է նրանց տապանաքարերը յարմար, գուցէ՝ հին ասանդութիւնների հետ կապուած մի վայրում (եթէ մեր վարկածը ճիշտ է, ապա տեղում պիտի լինէին նաեւ ցանկի միս 4 արքաների կենտօնաքաները): Նման հաւանական պահ կարող էր լինել ամբողջ ԺԵ դարը, երբ Աղուանից կաթողիկոսութիւնը ծախսափնեայ Ճալէթում էր (թերեւս՝ հակաթոռ կարգավիճակով)՝ Վարդաշէնից քիչ արեւմուտք, այսինքն՝ հաստատապէս ուղիական միջավայրում (եւ ուղիների էթնո-մշակութային վերելքի նշաններով), կամ՝ ԺՁ դ. երկրորդ կէտը, երբ Սեֆեան պետութեան ամրապնդումն Արեւելեան Այսրկովկասում, ինչպէս երեւում է բազմաթիւ վիմագրերից ու յիշատակարաններից, նպաստեց տնտեսութեան, խաղաղ շինարարութեան եւ հայ գրաւոր մշակոյթի զարգացմանը:

<sup>17</sup> Տե՛ս Toumanoff C., Aranshikides ou Haykides? Derniers rois de Siounie, Հանդէս ասորեայ, 1965, XC տարի, Վիեննա, սիւն. 169-176:

խնդիրը պէտք է լինի՝ պարզել իւրաքանչիւր անուան կամ դրանց խմբերի համար նրա ծեռքի տակ եղած բուն աղբիւրի գոնէ բնութագրիչները (պարամետրերը), իսկ դրա հիման վրայ՝ տուեալ անուան ու նրա տեղի հաւաստիութեան աստիճանը: Նման մօտեցմամբ առաւել մեծ հաւանականութեամբ պարզաբանում է, որ.

ա) առաջին երկու անունների համար (*Վաչագան* եւ *Գոշագակ*)<sup>18</sup> պատմիչին հիմք է ծառայել ինչ-որ խիստ հետաքրքրական բնագրական կտոր (բայց գուցէ՝ արդէն խաթարուած), մօտաւորապէս՝ «Վաչագանի որդի եւ իշխան Գորոգ[ուի] Գագիկ» բովանդակութեամբ, որի՝ մեր կողմից ձեւաւոր փակագծերի մէջ վերցուած հատուածների կորստով եւ ընդգծուած 2 տառերի այլափոխումով (*րո* → *շա*) Ուռհայեցու մօտ ստացուել է՝ «Վաչագան, եւ Գոշագակն՝ նորին որդին» շարքը: Այս տարբերակը ենթադրում է, որ Գորոգուի՝ ըստ ամենայնի, առաջին թագաւորը՝ «Մուսէի որդի Գագիկ»-ը (յիշուած 997 եւ 1000 թթ.)<sup>19</sup> նոյնանուն պապ է ունեցել, որի մասին ենթադրելի գրաւոր վկայութիւն մեզ չի հասել, սակայն այդ թագաւորապապ «\*Գագիկ»-ի հայր *Վաչագանի* անունը վկայում են իր ժամանակակից 2 հեղինակներ՝ 955 թուականին արաբ աշխարհագէտ Իբն Հաուքայը («ալ-Ջուրդի [*իմա՛* Գորոգուի] տէր Վաշական Իբն Մուսան [*իմա՛* Մովսէսի որդի Վաչագանը]՝ 200 հազ. դիրհեմ [*հարկ վճարի*]»)՝<sup>20</sup> եւ 958-ին՝ Անանիա Մոկացի Հայոց կաթողիկոսը («...եւ տեառն Վաչագանայ՝

<sup>18</sup> Մասնագէտներին աւելորդ է յիշեցնել, որ *Գոշագակ* (կամ *Գոշակտակ*) անձնանուն չկայ ոչ հայերի մօտ, ոչ էլ հարեան ժողովուրդների անձնանունանցանկերում. Հր. Աճառեանն էլ ձեռնպահ է մնացել այդ անունն իր «Հայոց անձնանունների բառարան»-ում ընդգրկելուց (հմմտ. հտ. Ա, էջ 488):

<sup>19</sup> Դիզակի Տումի գիւղի մօտ Կարմիր եղու եւ Թաղավարդ գիւղի մօտ Ջոխտ Պըռաւածառ վանքի վիմագրերում (Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 173, N 604, էջ 169, N 587): Հմմտ. Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 61-63; նոյնի՝ Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնները Թ-Ժ դարերում, Հանդէս Ամսօրեայ, ՃԻԵ տարի, Վիեննա-Երեւան, 2011, սիւն. 228-229: Бархударян С., Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, с. 52-55. Եղիազարեան Ա., Հայոց Արեւելից կողմանց իշխանութիւնները IX-X դարերում, Բանբեր Երեւանի համալսարանի, (Հայագիտութիւն), 2010, 1, էջ 31-33:

<sup>20</sup> Minorsky V., *Caucasica IV: II. The Caucasian Vassals of Marzubān*, BSOAS, 1953, XV/3, pp. 519, 521-522. Տէր-Ղեւոնդեան Ա., Հայաստանի բնահարկը արաբական ժամանակաշրջանում, Լրաբեր հասարակական գիտութիւնների, 1969, 2, էջ 58:

Գորոզուաց իշխանի»)<sup>21</sup>, իսկ գուցե նաեւ՝ ենթադրաբար, Շապուհ Բագրատունի պատմիչի խմբագրողը (Անանուն զրուցագիր), որի մօտ իշխանի անունը վերածուել է «Վասակ»-ի («իշխան Գորոզվալ] Վասակ բազում հեծելաք»)<sup>22</sup>:

բ) Երրորդ անուան համար (Փիլիպպե) Մատթէոս Ուռհայեցուն հիմք է ծառայել՝ ամենայն հաւանականութեամբ, Յակոբոս Սանահնեցու երկում *Աղուանից* (իմա՝ *Փառիսոսի*) թագաւոր *Փիլիպպէին* յիշատակող մի հատուած, որը վերաբերուել է այդ թագաւորի՝ Յովհաննէս Աղուանից կաթողիկոսի ընկերակցութեամբ, բայց ոչ թէ 961 թուակա-նին, այլ մի քանի տասնամեակ անց տեղի ունեցած ոչ պակաս կարեւոր ինչ-որ իրադարձութեան առիթով Անի գալուն (գուցե եւ՝ վերելում մեր ենթադրած վարկածով՝ Գագիկ Ա-ին 1007/1008 թ. թագադրելու-օծելու), սակայն պատմիչի մօտ դա սխալմամբ տարուել է շատ առաջ: Ուռհայեցին եւս երկու անգամ յիշատակում է նշուած Յովհաննէս կաթողիկոսին (բաւականին շփոթեալ եւ խառնակ մանրամասներով) որպէս՝ իբրեւ թէ 976 եւ 983 թթ. Անիում տեղի ունեցած եկեղեցական ժողովների մասնակից-նախագահողի: Ընդ որում առաջին դէպքում դա իբրեւ թէ եղել է՝ «հրամանաւ Անանիայի [=Մոկացու - 941-967 թթ.], Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց թագաւորացն [1017/1018-1041 թթ.], իսկ երկրորդ դէպքում՝ «ընդ ժամանակս Վասլին՝ Յունաց թագաւորին [976-1025 թթ.], եւ Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց արքայից [1017/1018-1041 թթ.], եւ Սե-

---

<sup>21</sup> Տեանն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից..., Արարատ, 1897, էջ 144: Վաչագան իշխանի մասին առաւել մանրամասն տե՛ս Ոլոյբաբեան Բ., Խաչէնի իշխանութիւնը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 83-84: Ter-Levondyan A., Notes sur le Šakē-Kambečan (I<sup>er</sup>-XIV<sup>e</sup> s.), Revue des études Arméniennes, Nouvelle serie, t. XXI, Paris, 1988-1989, pp. 326-327, n. 32; Zuckerman C., À propos du Livre des cérémonies, II, 48, Travaux et Mémoires, T. 13, Paris, 2000, p. 571; Бархударян С., Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений, с. 53-55. Յակոբեան Ա., Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնները Թ-Ժ դարերում, սին. 222-223, 234-235:

<sup>22</sup> Շապուհ Բագրատունոյ Պատմութիւն, Էջմիածին, 1921, էջ 81: Մանրամասն հմմտ. Յակոբեան Ա., Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնները Թ-Ժ դարերում, սին. 229-236: Այլ կարծիք տե՛ս Եղիազարեան Ա., Հայոց Արեւելից կողմանց իշխանութիւնները IX-X դարերում, էջ 31-33:

նեքերիմայ [990-1021 թթ.!]...»<sup>23</sup>: Թում է, թէ Աղուանից կաթողիկոսների շարքում Յովհաննէսն, անկախ անգամ այս ակնյայտ ժամանակավրէպ նշումներից, չէր կարող լինել անելի վաղ, քան Մովսէս Դասխուրանցու օրերում իշխած վերջին՝ Տէր Մովսէս կաթողիկոսը, որի աթոռակալութեան 6 տարիներն, ըստ առկայ թուերի՝ ընկնում են 982-988 թթ. («Տէր Դաւիթ՝ ամս 2 [6]... սա *ան ձեռնադրութիւն յԱնանիայէ՛* Հայոց կաթողիկոսէ [իմա՛ 958 թ. - Ա. Յ.]: Տէր Պետրոս՝ ամս ԺԸ<sup>24</sup> [18]. յեպիսկոպոսութենէն Գարդմանայ: Տէր Մովսէս՝ ամս 2 [6]. յառաջնորդութենէն Փառիսոսայ վանաց»)՝<sup>25</sup>: ԺԲ դարի վերջերին Աղուանից կաթողիկոսացանկի լրացմանը ձեռնամուխ

---

<sup>23</sup> Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 33 («Իսկ ի շարժել յաւելմամբ թուականս Հայկազունեաց ազգիս ի յամս ՆԻԵ [425=976/977 թ.] եղև ի կոչումն յԱստուծոյ սրբոյ հայրապետին Հայոց Անանիայի [941-967 թթ.]. եւ ձեռնադրեցին հանդերձ բազմութեամբ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց զլան ի բնալիցս զերանելին զՎահան [967-969 թթ.]. որ էր զլուխ ժողովոյն կաթողիկոսն Աղուանից տէր Յովհաննէս: Արդ՝ ի յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեան տանն Հայոց տէր Վահան ի մեծն Արզիւնայ] հրամանաւ Անանիայի, Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց թագաւորացն [1017/1018-1041 թթ.!]», էջ 34 («Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՆԼԲ [432=983/984 թ.] մեռանէր սուրբ հայրապետն Հայոց Վահան, կացեալ զամս հինգ ի յաթոռ սրբոյն Գրիգորի. եւ ձեռնադրեցին յաթոռ կաթողիկոսութեան Հայոց զտէր Ստեփանոս [իմա՛ գահընկէց արուած Վահան Ա Սիւնեցու հակառակորդը - 969-971 թթ.!]՝ զայր աստուածազգեաց... նստոցանեն զնա հայրապետ Հայոց հրամանաւ եւ օրհնութեամբ տեսնոն Վահանայ [!]. որ էր իսկ զլուխ ժողովոյն կաթողիկոսն Աղուանից տէր Յովհաննէս, ընդ ժամանակս Վասիլն՝ Յունաց թագաւորին [976-1025 թթ.], եւ Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց արքայից [1017/1018-1041 թթ.], եւ Սենեքերիմայ [990-1021 թթ.!]՝ որդոյ Ապուսահիլի, որդոյ Աշոտոյ, որդոյ Դերենկանն, որդոյ Գագկայ Արծրունեաց՝ յազգէն Սարասարայ»): Հմմտ. նաեւ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 15 («Ի թուին Հայոց ՆԻԷ փոխեցաւ յաշխարհէ սուրբ հայրապետն Անանիա. եւ հրամանաւ Բ թագաւորացն Հայոց Յովհաննիսի եւ Աշոտոյ ձեռնադրեցաւ ի տեղի նորա Վահան...») եւ էջ 16 («Ի թուին Հայոց ՆԼԲ մեռանի սուրբ հայրապետն Վահան, եւ ձեռնադրի ի տեղի նորա ի Յովհաննիսէ Աղվանից կաթողիկոսէ Ստեփաննոս, այր բարի եւ հեզ, հրամանաւ Բ թագաւորացն՝ Յովհաննիսի եւ Աշոտոյ...»):

<sup>24</sup> Մխիթար Գօշի ցուցակում այս թիւը «ԺԲ» է (12), թէպէտ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի երկու ձեռագրախմբերում էլ՝ «ԺԸ» (18):

<sup>25</sup> Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի (Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983 (մեր կազմած նոր գիտա-քննական բնագրի որոշ սրբագրումներով. այսուհետեւ՝ ՊԱ), գիրք Գ, գլ. ԻԳ, էջ 347: Հմմտ. Акопян А. А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 215-216, 277.

եղած Մխիթար Գօշը, որի տեղեկացուածութիւնը Ժ դ. երկրորդ կէսի իրողութիւնների մասին, իհարկէ, զիջում էր հէնց այդ ժամանակ ապրած Մովսէս Դասխուրանցուն, Տէր Մովսէսից յետոյ դնում է Տէր Մարկոսին (առանց նշելու նրանց ժամանակները), ապա Տէր Յովսէփին<sup>26</sup>: Վերջինս, ըստ Ուռհայեցու տեղեկութեան (մեծ հաւանականութեամբ՝ նոյն Յակոբոս Սանահնեցուն յանգող)՝ մասնակցել է եւ նախագահել Անիի 1038 թ. եկեղեցական ժողովին, որտեղ Դէոսկորոս Սանահնեցու կարճատեւ աթոռակալութեամբ (1037-1038 թթ.) ընդմիջուելուց յետոյ Պետրոս Գետադարձը (1019-1054 թթ.) կրկին գրաւեց Հայոց հայրապետական գահը («Եւ եղև ի թուականութեանս Հայոց ՆՁԷ [487=1038/1039 թ.] լինէր մեծ ժողով ի քաղաքն յԱնի եպիսկոպոսաց, հայրապետաց, կրօնաւորաց եւ վարդապետաց, ազատաց եւ իշխանաց իբրև չորք հազարաց. որ էր գլուխ ժողովոյն ծերունին Յովսէփ՝ կաթողիկոսն Աղուանից. եւ սուգ մեծ հասուցանէին Դէոսկորոսի եւ յոյժ պարտաւորեցին զնա եւ մերժեցին ի պատուոյ եւ ընկեցին յաթոռոյ հայրապետութեան... եւ հաստատեցին զՏէր Պետրոսն յաթոռ հայրապետութեան իւրոյ, եւ եղև խաղաղութիւն սուրբ եկեղեցւոյն Հայաստան աշխարհին»)<sup>27</sup>:

---

<sup>26</sup> Տե՛ս Ալիշան Հ. Ղ., Հայապատում, հ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1901, էջ 385: ՊԱ, Յաւելում Ք, էջ 351: Dowsett C., The Albanian Chronicle of Mxit'ar Goš, BSOAS, XXI/3, London, 1958, p. 479 («տէր Դաւիթ՝ ամս 2, տէր Պետրոս՝ ամս ԺԲ, սորա ի կենդանութեանն իրաժարեալ յաթոռոյն, յաջորդէ յաթոռ իւր զտէր Մովսէս՝ վանական ի Փառիսոսոյ: Իսկ զկնի տեանն Մովսիսի կալաւ զաթոռ հայրապետութեան այրն Աստուծոյ տէր Մարկոս: Եւ յետ նորա տէր Յովսէփ...»): Տուեալ տեղեկատութիւնը Գօշից քաղել են Կիրակոս պատմիչը (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կ. Մէլիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, գլ. Ժ, էջ 199. «Տէր Դաւիթ՝ ամս վեց. սա առ ձեռնադրութիւն յԱնանիայէ՝ Հայոց կաթողիկոսէ: Տէր Պետրոս, ամս վեշտասան: Տէր Մովսէս, ամս վեց, յառաջնորդութենէն Փառիսոսոյ վանացն: Ապա տէր Մարկոս, այրն Աստուծոյ, եւ յետ նորա Յովսէփ...») եւ հետագայ ցուցակագիրները:

<sup>27</sup> Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 77-78: Պատմիչն ունի եւս մի նմանատիպ տեղեկութիւն, որը վերաբերում է Աղուանից կաթողիկոսի կողմից արդէն Բարսեղ Անեցու ձեռնադրմանը (1081-1113 թթ., մինչեւ 1105 թ.-ը՝ Գրիգոր Վկայասէրին հակաթոռ). «Դարձեալ ի թուականութեանն Հայոց ի յամի ՇԼ [530=1081/1082 թթ.] արքեպիսկոպոսն Շիրակայ, որ էր ի քաղաքն Անի, որոյ անուն ասէին Տէր Բարսեղ, յարուցեալ գնայր յաշխարհն Հայոց ի յԱղուան գաւառի, ի Լօռէ քաղաք՝ առ թագաւորն Հայոց Կիւրիկէ՝ որդի Անհողինին Դաւթի. եւ խնդրէր Բարսեղ առնել ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Հայոց: Զոր ժողովեալ թագաւորն Կիւրիկէ զեպիսկոպոսունս



Այսպիսով, փորձելով լուծել խնդիրը՝ առաել մեծ հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ Յովհաննէս Աղուանից կաթողիկոսն իրականում աթոռակալել է Մարկոսի (հաստատապէս՝ 980-990-ական թթ.) եւ Յովսէփի (հաստատապէս՝ 1030-ական թթ.) միջեւ, սակայն նրա անունն ուղղակի ինչ-որ պատահականութեամբ դուրս է մնացել ատելի քան 150 տարի անց Մխիթար Գօշի կազմած կաթողիկոսացանկից: Ինչ վերաբերում է Մատթէոս Ուռհայեցու պնդումներին՝ 960-970-ական թթ. Անիի եւս երկու եկեղեցական ժողովների՝ իբրեւ թէ Յովհաննէսի մասնակցութեամբ կայացած լինելու վերաբերեալ, ապա կարելի է ենթադրել, որ պատմիչն իր երեւակայութեամբ է լրացրել-ծեւաւորել դրանք. ընդ որում՝ նա յենուել է կա՛մ պարզապէս Գագիկ Ա-ի թագադրման արարողութեանը Փիլիպպէ արքայի ու Յովհաննէս կաթողիկոսի մասնակցելու մասին իր աղբիւրի՝ Յակոբոս Սանահնեցու հաղորդման վրայ (որը եւ սխալմամբ միախառնել է Անին թագաւորանիստ հռչակած 961 թ. արարողութեան հետ), կա՛մ, որ թում է ատելի հաւանական՝ ունենալով այդ աղբիւրի եւս գոնէ մէկ տեղեկութիւն (գուցէ՛ ինչ-որ չափով խաթարուած բնագրով)՝ Յովհաննէսի իրական մասնակցութեան մասին Անիի մի ուրիշ եկեղեցական ժողովի՝ հրաւիրուած Հայոց կաթողիկոսի ընտրութեան առիթով<sup>28</sup>: Իհարկէ, նկատի ունենք Սարգիս Սեւանցուն 1019 թ.

---

Աղուանից աշխարհին եւ բերեալ զՏէր Ստեփանոս կաթողիկոսն Աղուանից ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զՏէր Բարսեղ կաթողիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի ի վերայ ամենայն աշխարհին Հայոց՝ հրամանաւ Կիւրիկէ թագաւորին եւ Տեառն Ստեփանոսի, որ ունէր զաթոռ սրբոյ առաքելոյն Թաղէոսի» (էջ 220-221):

<sup>28</sup> «Հայաստանի եւ Աղուանքի թագաւորութիւններն ու Բիզանդական կայսրութիւնը ժ դարում» հայ-ֆրանսիական գիտաժողովում (Երեւան, 20-22 Սեպտեմբեր, 2010) ընթերցած «Հայ-աղուանից կաթողիկոսութիւնը ժ դարի երկրորդ կէտին» գեկուցման մէջ Մելանիա Բալայեանը փորձեց նորովի հիմնաւորել՝ ըստ Մատթէոս Ուռհայեցու տունալների՝ Աղուանից Յովհաննէս կաթողիկոսի աթոռակալութիւնը 960-970-ական թթ. վերագրելու հնարաւորութիւնը (Դաւիթ եւ Պետրոս կաթողիկոսների միջեւ, ինչպէս ենթադրում էին դեռ Մակար Բարխուդարեանցը եւ Հր. Աճառեանը, տե՛ս Մ. եպ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 170-172: Աճառեան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երեւան, 1946, էջ 560): Սակայն թում է, թէ վերը ներկայացուած մեր վարկածը թոյլ է տալիս ատելի ամբողջականօրէն մեկնաբանել Աղուանից (Փառիսոսի) Փիլիպպէ արքայի ու Յովհաննէս կաթողիկոսի հետ կապուած պատմական իրողութիւնների եւ դրանց մասին ժԲ դարի պատմիչի պատկերացումների գոնէ մեծ մասի անհամապատասխանութեան խնդիրը:

յաջորդած Պետրոս Գետադարձի ընտրութիւնը, որի մասին Ուռհայեցի պատմագիրն ունի զարմանալիօրէն յակիրճ գրառում, այն էլ՝ արդէն կաթողիկոսացած Պետրոսի ու Վասիլ կայսեր հանդիպմանը վերաբերող ծաւալուն պարբերութիւնից յետոյ (ընդ որում՝ այդ պարբերութեամբ սկսում է Յակոբոսի «Ժամանակագրութեան» մեզ հասած բնագրական պատառիկը) եւ իրականից 3 տարի շեղուող թուագրումով. «Ի թուականութեանս Հայոց ՆՀԱ [471=1022/1023 թթ.] մեռաւ Տէր Սարգիս կաթողիկոսն Հայոց [992-1019 թթ.] եւ հաստատեաց յաթոռ իւր հայրապետ զՏէր Պետրոս»<sup>29</sup>: Այնինչ՝ Սանահնեցու կորսուած բնագրում այդ նշանակալի իրադարձութեան՝ նմանատիպ ուրիշներից ոչ պակաս հանգամանակից ներկայացուած լինելը պիտի աւելի քան սպասելի լինէր:

գ) «Դարբանդ-Կապանքի» արքայացանկի չորրորդ անուան համար (Սեւադայ) Մատթէոս Ուռհայեցուն հիմք է ծառայել, ամենայն հաւանականութեամբ՝ «[Բաղք-] Կապանի» արքայ Սենեքերիմի (մեր բնագրում՝ *Սենեքարիմ*) հօր՝ Սեւադայ Խաչէնցի իշխանի մասին ինչ-որ մի գրաւոր կամ բանաւոր լիովին իրական տեղեկատուութիւն, որում նա ներկայացուած է եղել իբրեւ «Աղուանից թագաւոր»: Այս տարբերակով պարզում է, թէ ինչ հանգամանք է պատճառ դարձել Ուռհայեցի պատմագրի համար՝ վրիպմամբ միախառնելու «Աղուանից» եւ «Կապանք»-ի Հայոց արքայատոհմերը, որից յետոյ նա այդ «Կապանք»-ը նաեւ թեթեւօրէն կապել է «Դարբանդ աշխարհի» հետ («սահմանակից Օզաց եւ Ալանից»):

դ) Ուռհայեցու ցուցակի վերջին երկու՝ իրականում Սիւնեաց (Կապանի) արքաներ *Սենեքերիմի* ու նրա որդի *Գրիգորի* անունների համար հիմք է ծառայել, ինչպէս նշեցինք նախորդ կէտում, Սենեքերիմի՝ «Աղուանից թագաւոր» Սեւադայի որդին լինելու վերաբերեալ լիովին սպասելի ու հաւաստի տեղեկատուութիւնը, որը մեր պատմիչն, իհարկէ, կարող էր ունենալ՝ գոնէ, իբրեւ դէպքերի

---

<sup>29</sup> Եթէ մեր վարկածը հաստատուի, ապա եւս մի լրացուցիչ փաստարկով կ'ապացուցուի Կարէն Իզբաշեանի ճշգրտումը, ըստ որի Գագիկ Ա-ի մահը պէտք է թուագրել 1017/1018 թուականով, այլ ոչ թէ՛ աւանդական 1020-ով, քանի որ աւանդականը յաջորդում է Պետրոս Գետադարձի ընտրութեանը (1019 թ.)՝ կայացած, ինչպէս վեր է հանում Ուռհայեցու (=Յակոբոս Սանահնեցու) նշումներից, «իրամանա... Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց թագաւորացն»:

ժամանակակից: Գրիգոր Բ-ի մասին նա հենց այդպիսի՝ ժամանակակցի յատուկ նշում ունի. «որ դեռ ես կենդանի էր՝ մինչեւ գրեաք զայս մատենագրութիւնս մեր»: Եւ այդ նշումը ճիշտ է, քանի որ Գրիգոր արքայի երկարատեւ իշխանութիւնն սկսուել էր սելջուկների կողմից նրա հօր (Սենեքերիմի) ուխտադրութ սպանութիւնից յետոյ (1094 կամ 1096 թ.), իսկ Ուռհայեցու երկն, ըստ ժամանակագրական վերջին ճշգրտման՝ աւարտուած է 1128 կամ 1131/1132 թուականով<sup>30</sup> (մեզ հասած ձեռագրում այն մինչեւ 1162/1163 թ. շարունակել է Գրիգոր Քեսունցի երէցը): Ի դէպ, անզուարէ Գրիգոր Բ-ի իշխանութեան աւարտն աւանդաբար դրուած է 1066 թ.՝ ըստ Ստեփաննոս Օրբէլեանի գլ. Կ-ի (միւս տարբերակում՝ ԿԱ) մատուցած ժամանակագրութեան<sup>31</sup>. նրա վախճանից յետոյ Խաչէնից բերուեց եւ 4 տարի Կապանում թագաւորեց Բաղաս վերջին արքայ Հասանը (անուանուած նաեւ՝ *Գեոսքարեցի*, աւանդաբար՝ մինչեւ 1170 թ.): Սակայն մեր վերջին աշխատանքում փորձել ենք ցոյց տալ, որ հաշուի առնելով հետագայ խաչէնեան իրողութիւնները (այդ թում՝ վիմագրական նորայայտ եւ դժուար հերքելի տուեալները)՝ նշուած թուերն անհրաժեշտ է սրբագրել՝ յետ տանելով շուրջ 15 տարով<sup>32</sup>:

Եւ յաւարտս կարելի է յատուկ անդրադառնալ այն խիստ ուշագրաւ իրողութեանը, որը շօշափուեց քիչ վերետում, Փիլիպպէ Աղուանից (Փառիսոսի) թագաւորի մասին Մատթէոս Ուռհայեցու հաղորդումների քննութեան առիթով: Ինչպէս տեսանք, դէպքերին փաստօրէն ժամանակակից Յակոբոս Սանահնեցու վկայութիւնների հիման վրայ (թէկուզ եւ՝ մեզ առանձին չհասած) ժԲ դարի պատմիչի կողմից արձանագրուած են փաստեր՝ ԺԱ դ. առաջին տասնամեակների Աղուանից կաթողիկոսների՝ Յովհաննէսի եւ Յովսէփի ձեռքով (աւելի ճշգրիտ լինելու համար՝ Անի մայրաքաղաքում նրանց գլխաւորութեամբ

---

<sup>30</sup> Տե՛ս Բոգոյեան Ա., Բիզանդիայի արեւելեան քաղաքականութիւնը եւ Կիլիկեան Հայաստանը ժԲ դարի 30-70-ական թուականներին, Երեւան, 1988, էջ 28-30 (նախորդ հետազօտողների մօտ աւանդաբար նշուած էր 1136/1137 թուականը):

<sup>31</sup> Տե՛ս Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկուա, 1861, էջ 247; Պատմութիւն նահանգին Սիսական, Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սինեաց, Թիֆլիս, 1910, էջ 337:

<sup>32</sup> Տե՛ս Յակոբեան Ա., Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատունը Թ-ԺԳ դարերում, Հանդէս ամսօրեայ, 2010, ՃԻԴ տարի, Կիեննա-Երեւան, սիւն. 115-124:

անցկացուած ժողովներում) Հայոց հայրապետների, ըստ ամենայնի՝ փոխադարձութեան սկզբունքով ձեռնադրուելու մասին (մի նոյնաման տեղեկութիւն ունենք նաեւ 1081 թ. Տէր Ստեփանոսի կողմից Բարսեղ Անեցուն Հաղբաթի ժողովում ձեռնադրելու վերաբերեալ): Ըստ էութեան, դա հէնց այն պահանջն էր, որ Ժ դ. վերջերին մեծ եռանդով առաջ էին քաշում Աղուանից եկեղեցական (եւ ենթադրաբար, նաեւ՝ աւատական աշխարհիկ) շրջանակները՝ ի պատասխան Հայոց կաթողիկոսութեան փորձերի (յանձին, օր.՝ Անանիա Մոկացու ջանքերի)՝ վերականգնելու Թ դ. վերջից - Ժ դ. կէսերի ժամանակաշրջանում խաթարուած աւանդական կարգը, ըստ որի Աղուանից եկեղեցու ղեկավարի օրինական ձեռնադրութիւնը պիտի կատարուէր «հաւասարների մէջ առաջինի» (primus inter pares) գերակայ կարգավիճակ ունեցող Հայոց հայրապետի կողմից: Նախորդ դարերի բազմատեսակ աղբիւրներն առանց բացառութեան արձանագրում են միմիայն այդ աւանդական կարգը: Այն սկսում էր հէնց քրիստոնէութեան պաշտօնական ընդունումից, որը Հայաստանում իրագործուեց Գալերիոս կայսեր՝ 311 թ. Ապրիլի 30-ին (իր մահուանից 5 օր առաջ) Սարդիկէում հրապարակած «Հանդուրժողութեան մասին» էղիկտից մօտ 2 ամիս անց (Գրիգոր Լուսատրչի՝ «Ելն ի վիրապէն», որը 311-ին ընկնում էր Յունիսի 24-ին). դրան 311-312 թթ. ծնունդը, ըստ Եւսեբիոս Կեսարացու՝ հետեւեց արեւելեան պրովինցիաներին տիրող կայսերակից Մաքսիմինոս Դայայի «ամոթալի» պատերազմը Հռոմի «դաշնակից եւ բարեկամ» քրիստոնէայ «հայերի» (իմա՝ Հայաստանի) դէմ, նշուած պրովինցիաների քրիստոնէաների դէմ նրա վերսկսած հալածանքների ընթացքում<sup>33</sup>: Իսկ Աղուանքի դարձը վերագրում է 315

<sup>33</sup> Մանրամասն տե՛ս Chaumont M.-L., Recherches sur l'histoire d'Arménie de l'avènement des Sassanides à la conversion du royaume, Paris, 1969, pp. 159-161; Mahé J.-P., Die Bekehrung Transkaukasiens: eine Historiographie mit doppeltem Boden, Die Christianisierung des Kaukasus (Armenia, Georgia, Albania). Referate des Internationalen Symposions (Wien, 9-12 Dezember 1999), S. 111; Mardrossian A., Le Synode de Vagarshapat (491) et la date de la conversion au christianisme du royaume de Grande Arménie (311), Revue des études Arméniennes, Nouvelle serie, T. 28, Paris, 2001-2002, pp. 249-260. Իւզբաշեան Կ., Հայագիտութեան ներածութիւն, Երեւան, 2006, էջ 12: Շօմոն Մ.-Լ., Գրիգոր Լուսատրչի ձեռնադրութիւնը Կեսարիայում եւ մկրտութիւնը Բագաւանում [թարգմ. եւ ծանօթագրումները Ն. Ղարիբեանի եւ Ա. Յակոբեանի], Հանդէս ամսօրեայ, ՃԻԷ տարի, Վիեննա-Երեւան, 2013, էջ 1-34: Պէտք է նշել, որ գրականութեան մէջ շարու-

թ. սկզբին, երբ Կապադովկիական Կեսարիայի Ղեւոնդիոս արքեպիսկոպոսի նստոցում անցկացուած 20 եպիսկոպոսների ժողովում (314 թ. Սեպտեմբեր, արդէն 313 թ. Միլանի եղիկոսից յետոյ, որով Կոստանդին Մեծը եւ Լիկինիոսը քրիստոնէութիւնը պաշտօնապէս հռչակեցին կայսրութիւնում ընդունելի կրօն) Մեծ Հայքի քահանայապետ ձեռնադրուած Լուսաւորիչն, ըստ յունարէն եւ այլ թարգմանութիւններով մեզ հասած «Գրիգորի Վարք»-ի արժանահաւատ տեղեկութիւնների՝ այդ երկիր ուղարկեց Թովմա Սատաղեցի եպիսկոպոսին՝ Տրդատ Մեծի կանչով Հայաստան ժամանած, Գրիգորին ձեռնադրութեան ճանապարհած, ապա դիմաւորած ու նրա կողմից Արածանիում մկրտուած (Մեծ Հայքի, Վիրքի եւ Եգերք-Լազիկայի արքաների, բազմաբար ժողովրդի ու զօրքերի հետ միասին) Աղուանից թագաւորի ուղեկցութեամբ<sup>34</sup>

նակում է նաեւ Հայոց դարձի ինչպէս աւանդական թուականի շրջանառութիւնը (301-302 թթ., պէտք է յիշել, որ այն ոչ թէ նոր ժամանակի գրականութիւնից է գալիս, այլ թէկուզ եւ վրիպմամբ՝ հաշուարկուել ու սրբագործուել է, ըստ ամենայնի՝ Է դ. սկզբներին), այնպէս էլ Հ. Պօղոս Անանեանի տեսակէտի կրկնութիւնը, ըստ որի Լուսաւորիչը Վիրապից ազատուել է Կեսարիայում ձեռնադրուելուց ոչ շատ առաջ, նոյն 314-ին (Անանեան Հ., Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, Վենետիկ - Ս. Ղազար, 1960, վերահրատ.՝ 1998): Շարունակում են յայտնուել նաեւ փորձեր՝ փաստարկելու այլ թուագրութիւնների հնարաւորութիւնը, տե՛ս, օր.՝ Մանասէրեան Ռ., Հայաստանը Արտաւազդից մինչեւ Տրդատ Մեծ, Երեւան, 1997, էջ 197-201: Յարութիւնեան Բ., Ե՛րբ է քրիստոնէութիւնը Հայաստանում հռչակուել պետական կրօն, Հանդէս ամսօրեայ, ՃԺԷ տարի, Վիեննա, 2003, սիւն. 85-195 (դնում են 305-306 թթ.): Yevadian M., Christianisation de l'Arménie, Retour aux sources, vol. II, L'oeuvre de saint Grégoire l'Illuminateur, Lion, 2008, pp. 365-370 (դնում է 294-296 թթ.): Սակայն վերջին հեղինակները փաստօրէն խուսափել են Մարի-Լուիզ Շօմոնի փաստարկումների քննարկումից, ըստ որոնց՝ Հայոց դարձը (սկսելով Վիրապից Գրիգորի ելքից) տեղի է ունեցել այսօրուանից ուղիղ 1703 տարի առաջ:

<sup>34</sup> Տե՛ս Garitte G., Documents pour l'étude du livre d'Agathanghe, Rome, 1946, pp. 70-72, 97-99, 101-102, § 92, 98, 159, 163, 164, 170 (աշխարհաբար թարգմանութիւնը տե՛ս Ազաթանզեղոսի պատմութեան յունական նորայայտ խմբագրութիւնը /Վարք/, թարգմ. յունարէն բնագրից՝ Հ. Բարթիկեանի, Առաջաբան եւ ծանօթագրութիւններ՝ Ա. Տէր-Ղեւոնդեանի, - Էջմիածին, 1966, է, էջ 28-34, Ը, էջ 46-51, Թ-Ժ, էջ 79-87, յատկ. տե՛ս էջ 51, 79, 84-85): Հմմտ. Акопян А. А., Албания-Алуанк, с. 124-126: Նիկ. Մառն աւելի վաղ յայտնաբերել եւ հրատարակել էր «Գրիգորի Վարք»-ի արաբերէն թարգմանութիւնը (Март Н., Крещение Армян, Грузин, Абхазов и Аланов святым Григорием (Арабская версия), С. Петербург, 1905, հմմտ. Տէր-Ղեւոնդեան Ա., Ազաթանզեղոսի արաբական խմբագրութեան նորայայտ ամբողջական բնագիրը, Պատմա-բանասիրական հանդէս,

(վերջինս, ըստ ամենայնի՝ մօտ 298-318 թթ. իշխած Վաչագան Ա Քաջ Արշակունին էր, այլ ոչ թե՛ շուրջ 338-374 թթ. գահակալած Ուոնայրը, որին վրիպմամբ Աղուանից դարձի իրագործող է հռչակել ուշ՝ Է դարում ծնունդ առած ասանդոյթ<sup>35</sup>): Դրանից յետոյ յայտնի են Լուսաուրչի Գրիգորիս թոռան՝ Աղուանից (եւ Վրաց) «կաթողիկոս» ուղարկելը (մօտ 330 թ.), Զ դարի կէտերի ասորի պատմիչ Զաքարիա Հոետորի վկայութիւնը այսրկովկասեան երկրների եկեղեցիների՝ Դուինի Հայոց կաթողիկոսի ենթակայութեան տակ գտնուելու մասին, Է դ. սկզբին Հայոց հայրապետութեան նուիրապետութեան մէջ Աղուանից եկեղեցու համար արքեպիսկոպոսութեան կարգավիճակի սահմանումը (ճիշտ է, այս տեղեկատուութիւնն արձանագրուած է լոկ Ը դ. կէտերին), Ը դ. սկզբում Եղիա Արճիշեցու հետեւողական ու յաջողուած պայքարը Աղուանից ինքնընծայ կաթողիկոս Ներսէս Բակուրի դէմ եւ աղբիւրագիտական նմանատիպ այլ փաստեր<sup>36</sup>:

Անանիա Մոկացու յայտնի թղթում ներկայացուած պատկերից երեւում է, որ ասանդական կարգը չի վիճարկուել նաեւ Թ դ. վերջի Ժ դ. առաջին տասնամեակների շրջանում, երբ քաղաքական խառնակ իրավիճակից դրդուած՝ Աղուանից չորս կաթողիկոսներ ձեռնադրուել էին սեփական եպիսկոպոսների կողմից, առանց Հայոց հայրապետների համաձայնութեան: Բայց արդէն կարճ ժամանակ անց Մովսէս Դասխուրանցի պատմագիրն այնքան ոգեշնչուած էր Ժ դ. վերջերի՝

---

1973, 1, էջ 209-236 (Жамкочян А., Житие св. Григория Просветителя Армении по арабской синайской рукописи 455, Ереван-Москва, 2009). պահպանուել են նաեւ երկի ասորական եւ քարշունի տարբերակները (Van Esbroeck M., Le résumé syriaque de l'Agathange, Analecta Bollandiana, T. 95, fasc. 3-4, 1977, pp. 291-358; նոյնի՝ Un nouveau témoin du livre d'Agathange, Revue des études Arméniennes, Nouvelle serie, T. VIII, Paris, 1971, pp. 13-171): 460-ական թթ. սկզբին Գիւտ Արահեզացի կաթողիկոսը (դեռ կոչուած՝ եպիսկոպոս) իր թղթում չի տալիս Աղուանից այս առաջին եպիսկոպոս Թովմա Սատաղեցու անունը, սակայն կոչում է նրան «այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն, ի Հոռվմ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքային» (ՊԱ, գլ. Ա.ժա, էջ 20). երկի նոր հրատարակութիւնը տե՛ս Գիւտ Արահեզացի, Թուրթ առ սուրբն Վաչէ, Գիտա-քննական բնագիրը եւ առաջաբանը Ա. Յակոբեանի, Մատենագիրք Հայոց, հ. Ա, Ե դար, Անթիլիաս, 2003, էջ 1075-1089 (հատուածը՝ էջ 1081):

<sup>35</sup> Մանրամասն տե՛ս Յակոբեան Ա., «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում, Հանդէս ամսօրեայ, 2003, ՃԺԷ տարի, Վիեննա, սին. 70-84:

<sup>36</sup> Մանրամասն տե՛ս, օր.՝ Акопян А. А., Албания-Алуанк, с. 127-142.

վերը նշուած գաղափարով (կաթողիկոսների փոխադարձ ձեռնադրութիւն), որ չէր խորշում անգամ իր աղբիւրի բնագիրը կեղծելուց. ՊԱ, Գ.է գլխում նա արտագրել է 704 թ. Պարտաւի ժողովի ընդունած մի փաստաթղթից («Ձեռնարկ, զոր խնդրեաց Եղիա՝ Հայոց կաթողիկոս ի ժողովոյն Աղուանից վասն միաբանութեան եւ ուխտի հաստատութեան Հայոց եւ Աղուանից». այն պահպանուել է նաեւ առանձին, այսպէս կոչուած «Էջմիածնական Գիրք թղթոց»-ի երկու գրչագրերում՝ ՄՄ, թիւ 2966, 3062 եւ նորերս գիտա-քննական բնագրով վերահրատարակուել մեր կողմից<sup>37)</sup>՝ «պայմանեցաք առաջի Աստուծոյ եւ ձերոյ հայրութեանդ, եթէ ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սուրբ Գրիգորի աթոռոյն լիցի՝ միաբանութեամբ աշխարհիս», որին յաջորդող բնագրի փոխարէն իր կողմից շարադրել է. «եւ Հայոց աթոռոյն ձեռնադրութիւն յԱղուանից աթոռակալէն լիցի, զի այս երիցագոյն է քան զՀայոցդ»<sup>38)</sup> (ի դէպ, անկասկած՝ Դասխուրանցու հեղինակած այս կտորը պահպանուել է «Պատմութիւն Աղուանից»-ի միայն Բ խմբի *bclrv* ձեռագրերում եւ Ա խմբի միակ վաղ՝ 1730 թ. ընդօրինակութիւն *h*-ում, քանի որ ԺԸ դ. երկրորդ կէտում Ղունկիանոս դպիրը երկի հնագոյն՝ ԺԳ դարի *a* գրչագրում պարզամիտ «բնագրագիտական» վերականգնում է կատարել՝ քերելով իր կարծիքով՝ «յետնանոյժը» եւ փոխարէնը վերը նշուած «Գիրք թղթոց»-ի գրչագրերից դնելով Ը դարի սկզբնաղբիւր-փաստաթղթի բնագիրը. «որպէս եւ էրն ի սրբոյն Գրիգորայ անտի, զի անդ ընկալաք զլուսաւորութիւն եւ ճշմարտութեամբ գիտեմք, թէ զոր դուք ընտրեք՝ հաճոյ Աստուծոյ է եւ մեզ»<sup>39)</sup>:

Սակայն մեզ համար տուեալ դէպքում կարելոր է ոչ այնքան Ժ դարի Աղուանքի եկեղեցական ու աշխարհիկ շրջանակների պատասխան պահանջի պատմական հիմնաւորուածութիւնը (թէեւ վերջինի խախուտ

<sup>37)</sup> Յակոբեան Ա., Եղիա Արճիշեցի կաթողիկոսի թղթերը (Ը դար), Հանդէս ամսօրեայ, ՃԻԶ տարի, Վիեննա-Երեւան, 2012, սիւն. 1-24:

<sup>38)</sup> Տե՛ս ՊԱ, էջ 302, տողատակ 7-9:

<sup>39)</sup> Մանրամասն հմմտ. մեր նախորդ աշխատանքներում. Յակոբեան Ա. Յ., Եղիա Արճիշեցի կաթողիկոսի նորայայտ թուղթը, Պատմաբանասափրական հանդէս, 1981, 4, էջ 142-148: Յակոբեան Ա., Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը, Բանբեր Մատենադարանի, 1986, 15, էջ 112-113: Акопян А. А., Албания-Алуанк, с. 152-154, 206-207, 262-263.

լինելը եւս կարեւոր ցուցիչ է, որպէսզի վստահութեամբ վերաբերուենք նախորդող դարերի ասանդոյթի հաաստիութեանը), որքան այն, որ այդ՝ թէկուզ եւ հիմնազուրկ պայմանը փաստօրէն ընդունուել է: Եւ դա, կարծես թէ, ակնյայտօրէն ցոյց է տալիս ոչ այլ ինչ, քան այն օրինակելի խնամքն ու խորաթափանցութիւնը, որոնցով ժամանակի ընտրախաւի պատասխանատու ներկայացուցիչները մօտենում էին աւատական մասնատուածութեան խորացման պայմաններում էթնիկ համախմբուածութեան համար վտանգ ներկայացնող հասարակական միտումներին եւ անհրաժեշտութեան դէպքում չէին խորշում ընդհուպ ամենալուրջ փոխզիջումների դիմելուց: Այստեղ տեսնում ենք, որ փոխզիջումն արուել է անգամ այնպիսի նրբանկատ ոլորտում, ինչպիսին եկեղեցական կառոյցի աստիճանակարգն էր (իսկ նմանատիպ մի լուրջ իրողութիւն ունենք նաեւ աշխարհիկ ոլորտում, երբ կենտրոնական Բագրատունեաց իշխանութիւնն ինքն սկսեց ճանաչել եւ հաստատել ու ինվեստիտուրայով ապահովել տեղական մանր թագաւորութիւններին. աղբիւրները նկարագրում են այդպիսի հաստատումը Լօռու եւ Կարսի թագաւորութիւնների համար<sup>40</sup>):

Ի դէպ, ինչպէս արդէն նկատուած է գրականութեան մէջ, հէնց Մատթէոս Ուտայեցու՝ ԺԲ դարի առաջին կէտում շարադրուած «Ժամանակագրութեան» արձանագրումների բովանդակութիւնից ու ոճից է ամենից լաւ երեւում (այդպէս նաեւ՝ Մխիթար Գօշի երկերից, ով հիմնականում ստեղծագործել է ԺԲ դ. երկրորդ կէտում), որ Ժ դ. վերջին իր՝ ըստ ամենայնի, բարձրակէտին հասած էթնոմասնատմանը միտուած ճգնաժամային գործընթացը (այդ պահին Հայոց Արեւելից կողմանքում կարող էր անգամ ձեւաւորուել հայ էթնոսից անջատուած դուստր էթնիկ միաւոր՝ «աղուաններ» կամ «արեւելցիներ» նոր ինքնանուանում-էթնոնիմով<sup>41</sup>) ԺԱ դարում թուլացել էր ու մարել<sup>42</sup>:

---

<sup>40</sup> Տե՛ս Մաթեոսեան Ռ., Տաշիր-Ձորագետ (X դար - XII դարի սկիզբ), էջ 74-75, 120-123:

<sup>41</sup> Մանրամասն տե՛ս Акопян А. А., Албания-Алуанк, с. 267-272; Акопян А. А., Мурадян П. М., Юзбашян К. Н., К изучению истории Кавказской Албании (по поводу книги Ф. Мамедовой "Политическая история и историческая география Кавказской Албании"), Պատմա-բանասիրական հանդէս, 1987, 3, էջ 169-175; Akopyan A., Galstyan H., Concerning the Study of ethnic Processes in the Caucasian Albania (Antiquity and Early Middle Ages), 12<sup>th</sup> International Congress of Anthropological and Ethnological Sciences, Zagreb, 1988 (USSR Academy of Sciences, N. Mikloukho-Maklay Institute of Ethnography),



Ուռհայեցի պատմիչը պարբերաբար առիթ է գտնում՝ բազմազան ձեւերով նշելու «Աղուանք»-ի պատկանելութիւնը «Հայոց աշխարհին» (գրելով, օր.՝ «յաշխարհին Աղուանից, որ ասի Խորին աշխարհ Հայոց, որ է աթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի»<sup>43</sup>), ընդ որում՝ փաստօրէն ոչինչ չիմանալով Կորի՝ էթնիկապէս բուն աղուանական ծախսափնեակի մասին (որտեղ, ի դէպ, աղուանական հաւաքական ընդհանրութեան՝ քրիստոնէութիւնը պահպանած հատուածի էթնոհամախմբման ճանապարհով արդէն տեղի էր ունեցել նոր՝ «ուրիներ» ինքնանուանմամբ էթնոսի ձեւաւորումը<sup>44</sup>): Բայց նոյնը տեսնում ենք արդէն ԺԱ դ. երկրորդ կէսին, Գրիգոր Մագիստրոս Պառիալունու խօսքում. «ի մերում սեփհականին իսկ յԱղուանեանն աշխարհի ասանն՝ կոչեցեալ Ծար...»<sup>45</sup>:

---

Moscow, 1988, pp. 10-12 (վերահրատ.՝ Գալստեան Հ., Յօդուածներ, յուշագրութիւններ, հարցազրոյցներ..., Երեւան, 2002, էջ 154-155):

<sup>42</sup> Տե՛ս, օր.՝ Մնացականեան Ա., Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը, Երեւան, 1965, էջ 221-233:

<sup>43</sup> Մատթոն Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 230: Տե՛ս նաեւ Դաւիթ Անհողինի (մօտ՝ 996-1048 թթ.) յայտնի կոչը Աղուանից Յովսէփ կաթողիկոսին. «Արդ՝ ժողովեա՛ զամենայն եպիսկոպոսոսնդ Հայոց աշխարհիդ, որ յԱղուանսն են եւ ի բանակ այսր հասի՛ր» (էջ 81), կամ՝ Բարսեղ Անեցու ձեռնադրման նկարագրութեան մէջ. «գնայր յաշխարհն Հայոց ի յԱղուան գաառի...» (էջ 221): Հայոց Արեւելից կողմանքում ծնուած եւ ստեղծագործած Մխիթար Գօշի մօտ եւ «Վկայաբանութիւն Խոսրովու Գանձակեցոյ» երկում) հմնտ., օր.՝ «Ի ժամանակս բռնակալութեանն Ղեմացոց, յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց ի սպառսպոտ եւ անտերուցք շրջէին մնացորդք իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհիս վարատեալք՝ ոչ հնազանդելով միմիանց, մանաւանդ այնտիկ, որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ» (տե՛ս Հայոց նոր վկաները, Աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 23): Հմնտ. Акопян А. А., Албания-Алуанк, с. 271-272.

<sup>44</sup> Այդ էթնոսն առաջինը յիշատակում է Յովհաննէս պատմիչը (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 258). «քանզի դրացիք մեր եւ ազգք, որ շուրջ զմեաք են՝ Յունականք եւ Եգերացիք եւ Գուգարացիք եւ Ուրէացիք, հիախական ազգք՝ բնակեալք առ ոտամբն Կովկասու...»: Տեղին նշենք, որ նախորդող՝ «Գուգարացիք» անուամբ պատմիչը կոչում էր կախէթցիներին (ծանարներին ու վրացիներին հարեան):

<sup>45</sup> Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Բնագիրն առաջաբանով եւ ծանօթութիւններով... լոյս ընծայեց Կ. Կոստանեան, Ալեքսանդրապոլ, 1890, էջ 221: Նոյնն է նաեւ Վանական Վարդապետ Տաուրեցու մօտ (ԺԳ դ. առաջին կէս. նրա ձեռագրական ժառանգութեան մեծ մասը դեռեւս հրատարակուած չէ), ինչպէս նաեւ վերջինիս աշակերտ Կիրակոս

**THE TESTIMONIAL OF MATTHĒOS URHAYETSI ON PROCLAMATION OF ANI THE CAPITAL CITY IN 961 (A NEW STUDY OF THE SOURCE)**

The problem of authenticity of the single testimonial of Matthēos Urhayetsi about the proclamation in year 961 of Ani the capital city is closely linked to the problems of correct time of lives of "Albanian" king Philippē and catholicos Yovhannēs both indicated in the same source. It has been shown that while describing a solemn ceremony Matthēos Urhayetsi has mixed different data of two different sources the latest of which is about the coronation ceremony of the Armenian king Gagik I (989/990-1017/1018) in 1007/1008. The Albanian catholicos Yovhannēs, who accompanied the king P<sup>h</sup>arisos Philippē, an attendant of that ceremony, had probably participated in the Ani council of 1019 too, which has elected the Armenian catholicos Petros Getadardz.

Matthēos Urhayetsi was mistaken by presenting Vachagan and Gagik (the princes of Gorozu, the mid 10<sup>th</sup> century) as ancestors of king Philippē, and Sevada (the king of Khachēn, the mid 11<sup>th</sup> century) as well as the kings of Bałq-Kapan Seneqerim (1072-1094/1096) and Grigor II (1094/1096-1166) as descendants of Philippē.

This study focuses on four episodes in the chronicle of Matthēos Urhayetsi, which go back to his source, Yakob Sanahinetsi, a contemporary of the events described. It follows from these testimonies that in the early 11<sup>th</sup> century, the Armenian Church acquiesced to the demand of the Albanian Church that its catholicos should ordain his Armenian counterpart, just as the latter had the right to ordain the catholicos of Albania (Ałuank). This procedure marked a sharp departure from the old order, which emerged in the 4<sup>th</sup> century, when Christianity was adopted in Armenia (June 311) and, through Armenian intermediary, in Albania (early 315). In fact, this old order had been violated in the late 9<sup>th</sup> century, when political instability in Armenia prompted the Albanian bishops to appoint their catholicos independently. The efforts of the Armenian catholicos Anania Mokatsi (941-967, who blessed, in 961, the inauguration of Ani as the capital of Bagratid Armenia) to restore the old order had only a partial success.

---

Գանձակեցու (ԺԳ դ. կէս) եւ հետագայ մատենագիրների երկերում (մանրամասն տե՛ս Մնացականյան Ա., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, էջ 229-233):

This "Albanian trend" (as expressed by Moses Daskhurantsi and other writers) was supported by the separatist aspirations of the elite, both lay and spiritual, of the Armenian-inhabited right bank of the Kur river (provinces of Artsakh and Utik). This trend, if developed, could split the Armenian people and provoke the emergence of a new Armenian-speaking ethnos with its own self-consciousness and self-designation, "Atuanians" or "Easterners". However, the evidence of Mattheos Urhayetsi, showing that on three or four occasions the Armenian catholicos was ordained at a council chaired by his Albanian counterpart (in Ani and in Hag<sup>h</sup>bat), demonstrates that the Armenian spiritual elite found a way to suppress these separatist tendencies. It devised compromise solutions in contested matters just as the lay elite did in the late 10<sup>th</sup> century by investing local kings in exchange of their recognition of the Bagratid "shahanshah" as superior ruler. Due to this policy of mutual concessions but also to external threats, the separatist trends could be overcome during the next, 11<sup>th</sup> century, as shown by the authors who lived at that time or later (Grigor Magistros, Yakob Sanahinetsi, Mattheos Urhayetsi, Mkhithar Gosh and others).

## ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏՅԱԼ

### «ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՐԵՎԵԼՔ» ՀԱՆԴԵՍԸ ԵՎ ՀՈՎԱՅՓ ՕՐԲԵԼԻՆ

Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի և նրա ղեկավար ականավոր արաբագետ, բյուզանդագետ ակադեմիկոս Վ. Ռոզենի շուրջ համախմբված գիտնականների ջանքերի շնորհիվ Պետերբուրգը 19-րդ դարի վերջերից դարձել էր արևելագիտության միջազգային կենտրոններից մեկը: Բնութագրելով արևելագիտության անցած ուղին և հիմնավորելով նոր պայմաններով թելադրված «Քրիստոնեայ Արևելք» հանդեսի հիմնադրման անհրաժեշտությունը՝ Ն. Մառը, Վ. Բենեշևիչը և Բ. Տուրանը գրում էին. «Անցել են անդարձ այն ժամանակները, երբ գործը առաջ էր գնում առանձին հեռուսական անհատների շնորհիվ, որոնք ստեղծում էին անանց նշանակության աշխատություններ կամ էլ անհրաժեշտ տեղեկությունները հավաքվում էին մահմեդական աշխարհի մասին եղած ուսումնասիրություններից: Այժմ արևմտաեվրոպական գիտությունը շարունակում է 17-18-րդ դդ. փայլուն կերպով սկսած գործը, բայց տարբեր պայմաններում և այլ մեթոդներով՝ հիմնվել են հարուստ ընկերություններ, որոնք կազմակերպում են հնագիտական արշավախմբեր-պեղումներ, գնում են ձեռագրեր և հնագիտական այլ առարկաներ, հրատարակում են ուսումնասիրություններ, համալսարաններում բացել են ոչ միայն Քրիստոնյա Արևելքի պատմության ու գրականության ուսումնասիրման ամբիոններ, այլև միանգամայն նոր գիտական հաստատություններ: Նախաձեռնել են քրիստոնեական շրջանի մատենագրության հուշարձանների շարքի հրատարակություն: Գոյություն ունեն մի քանի պարբերական հրատարակություններ, որոնք միավորում և ղեկավարում են այդ հսկայական աշխատանքը: Ընդ որում, գլխավորն այդտեղ միայն զուտ գիտական հետաքրքրությունները չեն (հատկապես Բյուզանդիայի հանդեպ), այլև պրակտիկ ձգտումները՝ հասնելու կրոնական, քաղաքական և տնտեսական գերակայության Արևելքում. կաթոլիկ

հոգևորականությունը չափազանց ուժեղ է ներկայացված Քրիստոնյա Արևելքը հետազոտող եվրոպացիների շարքերում»<sup>1</sup>:

Քրիստոնյա Արևելքի ժողովուրդների մշակույթի ուսումնասիրման ասպարեզում համեմատաբար քիչ բան էր արված, քանի որ նախապատվությունը ավանդաբար տրվում էր մահմեդական Արևելքի ուսումնասիրությանը, որ վաղուց էր սկսված և նշանակալի հաջողությունների էր հասել Ա. Շմիդտի, Վ. Բարթոլդի, Վ. Սմիռնովի, Վ. Ժուկովսկու և ուրիշ շատերի ուսումնասիրությունների շնորհիվ:

Արևելքի ժողովուրդները պատմա-մշակութային կապերով էին կապված միմյանց հետ, ընդհանրապես բոլոր հարցերում, բացի կրոնականից: Առաջ քաշելով և զարգացնելով մշակութային բազմաթիվ ընդհանրությունների գոյությունը Արևելքի քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների միջև, Հ. Օրբելին գրում է. «Մահմեդական Արևելք» և «Քրիստոնյա Արևելք» տերմինների գոյակցությունը, որը մինչև այսօր էլ մեր սկադեմիական կենցաղից (բառապաշարից) վերացված չէ, սահմանել է նաև գիտական տեսակետների համապատասխան զարգացումը ու հանգեցրել այն մտքին, որ վրացիները, հայերը, ասորիները, դպտիները և եթովպացիները որպես մեկ ամբողջություն հակադրվում են մեկ ուրիշ ամբողջության՝ պարսիկներին, թուրքերին, քրդերին և արաբներին ոչ թե դավանական, այլ պատմամշակութային առումով: Լրիվ մոռացության է տրվում այն, որ եթովպացիների շփումը հայերի հետ, անկասկած, տեղի է ունեցել, բայց միայն եկեղեցական ժողովներում և, զուգե, առանձին դեպքերում՝ մեկերկու վանքերի կենցաղում, իսկ ամբողջ մնացած հայության կյանքն ու պատմական ճակատագիրը իր հիմնական տարածքում անբաժան է ընթացել պարսիկների, (հետագայում նաև) թուրքերի և քրդերի կյանքից, միավորվելով նրա հետ այն բոլոր հարցերում, որոնք չեն վերաբերել կրոնական հավատալիքներին և ծեսերին...»<sup>2</sup>:

Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրությունը ուղղակի թելադրված էր ժամանակի գիտական պահանջներով: Դա անհրաժեշտ էր նաև հստակեցնելու համար մահմեդական աշխարհի մշակութային առանձնահատկությունները, անտիկ աշխարհի և Քրիստոնյա արևելքի

<sup>1</sup> Бенешевич В., Март Н., Тураев Б., Записка о значении и задачах журнала “Христианский Восток”, Христианский Восток, 1912, т. 1, вып. 1, с. 1-2.

<sup>2</sup> Յուզբաշյան Կ., Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի, Երևան, 1987, էջ 81-82:

հետ նրա ընդհանրությունները և փոխհարաբերությունները<sup>3</sup>: Անհրաժեշտություն էր առաջացել միավորելու ռուս գիտնականների աշխատանքները Քրիստոնյա Արևելքի ուսումնասիրման ասպարեզում: Այլապես տարբեր՝ հաճախ ամենամասնագետի տեղերում ցրված և այդ պատճառով էլ անհասանելի նյութերը պետք է հավաքել, մեկտեղել մատչելի դարձնել մասնագետներին: Իսկ դրա համար միակ հնարավոր և իրագործելի միջոցը կարող էր լինել գիտական հատուկ ամսագրի ստեղծումը: Այդ նպատակով 1911 թ. մայիսի 11-ին Ն. Մառը Գիտությունների ակադեմիայի պատմա-բանասիրական բաժանմունքին է ներկայացնում Վ. Բենեշևիչի և Բ. Տուրակի մասնակցությամբ կազմած ծրագիր Ասիայի և Աֆրիկայի քրիստոնյա ժողովուրդների մշակույթների ուսումնասիրության հարցերին նվիրված աշխատանքների հրատարակման համար:

Մի քանի քննարկումներից հետո բաժանմունքը 1912 թ. հունվարի 11-ին որոշում է ընդունում հրատարակել աշխատանքներ Ն. Մառի խմբագրությամբ<sup>4</sup>: Նոր հրատարակությունը, որ կոչվում էր «Քրիստոնեայ Արևելք», պետք է հրատարակեր Արևելքի բոլոր քրիստոնյաների մշակույթի վերաբերյալ ուսումնասիրություններ: Հանդեսի խմբագրակազմը հավասարապես հետաքրքրված էր Արևելքի քրիստոնյաների մշակույթային հարցերով, նրանց հոգևոր

---

<sup>3</sup> Վ. Բարթոլդը գրում է մահմեդականների՝ որպես հույների ժառանգորդների և Արևմտյան Եվրոպայում քաղաքակրթություն տարածողների դերի մասին: Տե՛ս Բարթոլդ Վ., Աշխատություններ, 1966, հ. 6, Մոսկվա, էջ 368 (ռու.): Պատասխանելով Բարթոլդի այդ դրույթին՝ Ն. Մառը գրում է, որ մահմեդականներն իրենք անմիջականորեն չեն առնչվել ոչ անտիկ, ոչ էլ հելլենիստական աշխարհի հետ, և եթե նրանց նախնիները նույնիսկ յուրացրել են անտիկ աշխարհի մշակույթը, ապա միայն Արևելքի քրիստոնյա ժողովուրդների միջնորդությամբ, հանդիսանալով վերջիններիս աշակերտները հին արևելքի մշակույթային ժառանգությունը պահպանելու ասպարեզում: Տե՛ս Христианский Восток, 1912, т. 1, вып. 1, с. 95:

<sup>4</sup> Ինչպես իրավացիորեն նկատում է Վ. Բարթոլդը, այդ փոփոխությունը (պարբերականի փոխարեն տարեգիրք) չպետք է ազդեր նոր հրատարակության ոչ բովանդակության, ոչ արտաքին ձևավորման վրա, քանի որ նյութի հրատարակման համար որոշակի ժամանակ չէր նախատեսվում: Ենթադրվում էր հրատարակել ամսագիրը առանձին պրակներով՝ հավաքված նյութի համեմատ և տարվա վերջին այդ բոլորը միացնել 25-30 էջանոց մեկ հատորի մեջ (տե՛ս Բարթոլդ Վ., նշվ. աշխ., էջ 378): Սակայն Բարթոլդն ու խմբագրության անդամները մի քիչ սխալվում էին, որովհետև հանդեսի յուրաքանչյուր հատոր 300-400 էջ էր կազմում:

կյանքի լայն ընդգրկմամբ (շոշափվում էին պատմության, եկեղեցու, իրավունքի, գրականության և արվեստի հարցեր), և ոչ միայն անցյալի, այլև ներկայի ուսումնասիրությունը, որքանով վերջինս կարող էր նպաստել առաջադրված հարցերի հետազոտմանը և ըմբռնմանը: Հատուկ ուշադրություն էր դարձվելու քրիստոնյա Արևելքի և Բյուզանդիայի ու Արևմուտքի, ինչպես նաև մահմեդական Արևելքի հետ փոխադարձ կապերի և փոխհարաբերությունների ուսումնասիրմանը<sup>5</sup>: Քանի որ Արևելք ասելով ամենուր հասկացվում էր դասական Արևելքը, այսինքն՝ Եգիպտոս, Փոքր Ասիա, Սիրիա, Պաղեստին, Իրան, ընտրվեց ենթավերնագիր՝ ավելի ճիշտ բնորոշումով՝ «Ասիայի և Աֆրիկայի քրիստոնյա ժողովուրդների մշակույթի ուսումնասիրությանը նվիրված» պարբերական:

Նախագծի հեղինակներն ընդգծում էին հատկապես Հայաստանի ու Վրաստանի պատմության և մշակույթի բազմակողմանի ուսումնասիրության կարևորությունը. «Բայց ավելի մոտ և անմիջական հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանը և Վրաստանը, որոնց ուսումնասիրությունը պետք է լինի ռուս արևելագետների նախընտրելի և շնորհակալ գործը»:

Սկզբում «Քրիստոնեայ Արեւելք» հանդեսի աշխատակիցների թիվը մեծ չէր, իսկ խմբագրական խորհուրդը կազմում էին Ն. Մառը, Վ. Բենեշևիչը և Բ. Տուրանը: Հանդեսի առաջին համարը լույս է տեսել մոտ 100 տարի առաջ, 1912 թ., Պետերբուրգում և ընդհատումներով շարունակվել մինչև 1922 թ.: Այդ տարիների ընթացքում հրատարակվել է վեց հատոր, յուրաքանչյուրը՝ երեքական պրակներով<sup>6</sup>: Նախատեսված և պատրաստված է եղել նաև յոթերորդ

<sup>5</sup> Ն. Մառը իր “Мир Ислама” հոդվածում գրում է. «Ժամանակակից արևելագիտության հերթական խնդիրներից մեկն է՝ պարզել մահմեդական արևելքի՝քրիստոնյա արևելքի հետ ունեցած մշակութային շփման բարերար ճանապարհներն անցյալում: Այդ հարցը կարող է ներկայացնել ընդհանուր հետաքրքրության առարկա, ինչպես մեր հանդեսի, այնպես էլ “Мир ислама”-ի համար, որն էլ մղում է մեզ ավելի մեծ համակրանքով ողջունել նրա երևան գալը»: *St’v Христианский Восток*, 1912, т. 1, вып. 1, с. 96.

<sup>6</sup> Հանդեսի մատենագիտությունը հրատարակվել է 1976 թ., տե՛ս «Քրիստոնեայ Արեւելք» հանդեսի մատենագիտություն, (ռուս.), կազմ. Կ. Ավետյան, ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆ. սեկտոր, Բ. մատենաշար, հմր. 5(28), Երևան, 1976, 42 էջ: Ֆրանսիացի հայագետ Բեռնար Ուտին Հայկ Պերպերյանի (որ շատ էր գնահատում մատենագիտական աշխատանքները) խնդրանքով թարգմանել է մեր կազմած

հատոր, սակայն հետագայում այդ հավաքված նյութերը հրատարակվել են Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի (Кавказский историко-археологический институт (հիմնադրված 1917 թ. Թիֆլիսում), «Տեղեկագիր»-ում: Այսպիսով Գիտությունների ակադեմիայի որոշումով «Քրիստոնյա Արևելք» հանդեսը դադարեցնում է հրատարակությունը՝ համալրվելով-միանալով «Известия» - «Տեղեկագրին»: Հանդեսն առանձնանում էր իր բացառապես գիտական բարձր մակարդակով: Այն հրատարակվել է արևելյան տարբեր լեզուներով: Հրատարակվել են նաև հայերեն, վրացերեն, եթովպերեն, արաբերեն մատենագրական բնագրեր, արձանագրություններ: Բավական է նշել, որ նրա մշտական աշխատակիցներ էին այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպես Վ. Բարթոլդը, Ի. Կրաչկովսկին, Հ. Օրբելին, Ի. Ջավախիշվիլին, Կ. Կեկելիձեն և ռուսական արևելագիտության այլ ներկայացուցիչներ: Հանդեսում հրապարակվել են Ն. Մառի բազմաթիվ հոդվածները բնագրագիտության, ձեռագրագիտության, վիմագրագիտության վերաբերյալ: Հրատարակվել են Ն. Ադոնցի, Կ. Կեկելիձեի, Գ. Հովսեփյանի, Լ. Մելիքսեթ-Բեկի, Ն. Ջանաշիայի հոդվածների գրախոսությունները: Ն. Մառի թարգմանությամբ հրատարակվել են հայ հեղինակների (Գ. Հովսեփյան, Գ. Տեր-Մկրտչյան, Կ. Տեր-Մկրտչյան, Տիրայր Տեր-Հովհաննիսյան) գործեր:

Ն. Մառի մտահոգությունը նաև նյութը առանց ուշացնելու հրատարակել և գիտական շրջանառության մեջ դնելն էր: Ենթադրվում էր հրատարակել հանդեսը առանձին պրակներով՝ հավաքված նյութի համեմատ և տարվա վերջին այդ բոլորը միացնել մեկ հատորի մեջ: Նախատեսվում էր հրատարակել ռուսերեն, լատիներեն և հունարեն: Այդ պայմաններում, իհարկե, «Քրիստոնյա Արևելք»-ը դեպի իրեն էր ձգելու միայն ոչ մեծ աշխատանքներ, գիտական շրջանառության մեջ մտցնելով նոր մտքեր և հետաքրքիր նյութեր. չնայած եղել են նաև բացառություններ՝ Գ. Հովսեփյանի, Կ. Կեկելիձեի, Հ. Օրբելու, Ն. Ջանաշիայի բավական ծավալուն

---

մատենագիտության հայագիտությանը վերաբերող հատվածները, նույնությամբ պահպանելով ծանոթագրություններն ու համարակալումը, և հրատարակել վերջինիս հիշատակին նվիրված ժողովածուի մեջ (տե՛ս Etudes Armeniennes in memoriam Haig Berberian. Dickran Kouymjian Editor, Lisboa, 1986, pp. 645-651):



աշխատանքները տեղ են գտել հանդեսի էջերում: Հարց էր առաջանում՝ արդյոք նոր ամսագրի հրատարակությունը չէր խանգարի արևելագիտությանը նվիրված արդեն գոյություն ունեցող պարբերականներին, գիտական ուժերի ցրվածություն չէր առաջացնի: Գոյություն ունեցող «Византийский Временник»-ին նոր պարբերականը չի խանգարի, քանի որ մտածված կերպով պետք է շրջանցի և բացառի Արևելքի՝ Բյուզանդիայի հետ փոխհարաբերություններին վերաբերող այն բոլոր հարցերն ու նյութերը, որոնք «Византийский Временник»-ին ավելի հարմար են: Բացի հոդվածներից հանդեսն ուներ «Մատենագիտություն, քննադատություն (գրախոսություն) և զանազան լուրեր (գիտական) և նկատառումներ» բաժինները:

Ա. Քալանթարյանն ու Ա. Շանիձեն հայերեն և վրացերեն ներկայացրել են 1911-12 թթ. հրատարակությունները, ռուսերեն թարգմանությամբ հանդերձ: Ի. Կրաչկովսկին՝ 1912-1914 թթ. քրիստոնյա արաբական, Բ. Տուրակը՝ եթովպական 1912-1914 թթ., Ա. Կոցեիովսկին՝ ղպտիական 1912-1915 թթ. հրատարակությունները:

Ն. Մառի մասին, որպես մեծ գիտնականի, շատ է գրվել: Նա նաև փայլուն խմբագիր էր, ինչի մասին վկայում է հանդեսի յուրաքանչյուր էջը: Նրա ծանոթագրությունները և դիտողությունները հաճախ կատարյալ հոդվածի նշանակություն ունեն, որոնք էական սրբագրություններ են մտցնում հեղինակների հոդվածների մէջ, ամենևին չմթազնելով վերջիններիս աշխատանքը: Որոշ հոդվածներ առանց այդ ծանոթագրությունների կլինեին թերի և ոչ այնքան պարզ ու հասկանալի, ինչպես օրինակ Վ. Բոլտոսովի «Հայկական եկեղեցական տարվա մասին», կամ Ն. Ջանաշիայի «Աբխազների կրոնական հաւատալիքները» հոդվածները: Վերջինս ոչ միայն ծանոթագրվել է Մառի կողմից. Ջանաշիայի հոդվածին անմիջապես հաջորդում է խմբագրի գրախոսությունը: Բազմաթիվ են Լ. Մելիքսեր-Բեկի, Ե. Թաղայշվիլու, Գ. Չուբինովի հոդվածների ծանոթագրությունները: Պետք է ասել, որ հեղինակները ոչ միշտ էին ընդունում խմբագրի դիտողությունները, հաճախ բանավեճի բռնվելով նրա հետ, ինչպես օրինակ Հ. Օրբելին<sup>7</sup> (նամակներ, էջ 300) հայերեն

<sup>7</sup> Письма И. Орбели к Н. Марру, տե՛ս Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա., Երևան, 1974, էջ 300:

արձանագրություններն ուսումնասիրելիս: «Քրիստոնյա Արևելք» հանդեսում Ն. Մառի հրատարակած հոդվածների մի ամբողջ շարք նվիրված է հայ-վրացական բանասիրության հարցերին: Նրա հետ միասին այդ նույն հարցերով զբաղվում էին նաև Ի. Ջավախիշվիլին, Կ. Կեկելիձեն, Հ. Օրբելին, Լ. Մելիքսեթ-Բեկը, Ա. Շանիձեն:

Լ. Մելիքսեթ-Բեկը հաճախ էր գրում Կովկասի ժողովուրդների մշակույթի տարբեր բնագավառներին նվիրված հոդվածներ: Հանդեսում հրատարակված նրա հոդվածներից ուշագրավ են “Ангелы-хранители”, “Одна из надписей Агарцинского монастыря”, “Кахтубанский храм”, “Грузинская версия Агафангела и ее значение для грузинской историографии” և այլն:

«Քրիստոնյա Արևելք»-ի մյուս աշխատակիցը բնագրագետ և եկեղեցական մատենագրության պատմաբան Կ. Կեկելիձեն էր: Ուշադրության արժանի են նրա հետևյալ հոդվածները՝ “Историко-географические отрывки”, “Житие и подвиги св. Иоанна, католикоса Урхайского”, “Житие Агафангела, католикоса Дамасского”, “Грузинская версия арабского Жития св. Иоанна Дамаскина”, “Иоанн Ксифилин, продолжатель Симеона Метафраста”, “Житие Петра Нового, мученика Капетоллийского”. Լինելով հիմնականում վրաց եկեղեցական մատենագրության պատմության ուսումնասիրող Կեկելիձեն ոչ պակաս հաջողությամբ աշխատում էր նաև աշխարհիկ գրականության հետազոտության ասպարեզում:

«Քրիստոնյա Արևելք»-ում բավական մեծ տեղ էր հատկացվում ընդհանրապես վիմագրագիտությանը, մասնավորապես՝ հայկականին: Հայերեն արձանագրությունների հավաքմամբ և հրապարակմամբ զբաղվում էին բազմաթիվ գիտնականներ՝ Մ. Բրոսեն, Վ. Լանգլուան, Մ. Բժշկյանը, Ղ. Ալիշանը, Ս. Ջալալյանը, Հովհ. Շահխաթունյանը և ուրիշներ, սակայն նրանց հրապարակումները հաճախ պարունակում էին վրիպակներ, անճշտություններ և չէին բավարարում գիտական պահանջները: Հայկական վիմագրագիտության ասպարեզում մեծ վաստակ ունի Հ. Օրբելին և ոչ միայն իր հավաքած ու հրատարակած հարուստ նյութի շնորհիվ: Հանդեսի էջերում նա Ն. Մառի հետ միասին մշակել էր այդ արժեքավոր սկզբնաղբյուրների հանդեպ նոր գիտական մոտեցման

հիմքերը: Հ. Օրբելու հրապարակմամբ 7-10-րդ դդ. հայերեն վիմագիր արձանագրությունները դրվեցին գիտական շրջանառության մեջ: Այդ հրապարակումների համար Հ. Օրբելու պատվերով և անմիջական մասնակցությամբ ձուլվել են այն բոլոր փակագրեր-կցագրերը, որոնք հանդիպում են հայերեն արձանագրություններում և որոնք առաջին անգամ օգտագործվել են «Բագավանի 639 թ. արձանագրությունը» հոդվածը հրատարակելու համար: Օրբելու այդ հոդվածում տեղ են գտել 7-րդ դարի հայերեն մի քանի արձանագրություններ՝ Բագավանի, Բագարանի, Մրենի, Ալամանի, Արուճի: «Քրիստ. Արևելք» հանդեսում Հ. Օրբելին հրատարակել է նաև Կոմիտաս կաթողիկոսի, Անիի պալատական տաճարի (եկեղեցու) արձանագրությունները, Արտավազդ Կամսարականի տապանագիրը, Սանահնի կամուրջի, Թալինի տաճարի, Այրիվանքի, Կարմիր վանքի, Մեծարանից, Վարագավանքի և այլ արձանագրություններ օժտելով դրանք 7-րդ դ. հայերեն 13 արձանագրությունների անունների ցանկերով և բառարանով: Հայերեն արձանագրությունների հրապարակմանը զուգահեռ նա «Քրիստոնյա Արևելք» հանդեսի էջերում հրատարակել է արծաթյա երկու շերտիների վրայի 1586 թ. հունարեն<sup>8</sup> և հայերեն արձանագրությունները և 13-14-րդ դդ. խաչքարի վրայի արաբերեն արձանագրությունը: Նա ուշադրություն է դարձնում ոչ միայն արձանագրությունների վրա, այլ նաև կատարված աշխատանքի արվեստին և ենթադրում, որ կիրառական արվեստի այդ նմուշները վկայություն են Լվովի հայկական գաղթավայրում արհեստների աշխույժ զարգացման:

Հ. Օրբելին նաև խմբագրել է «Քրիստոնյա Արևելք»-ի մի քանի պրակներ (1915-1916 թթ., հ. 4-5), ինչպես նաև հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքի պարբերական “Заноски”-ն:

«Քրիստոնյա Արևելք» հանդեսի մասին շատ քիչ է գրվել: Առաջին հատորը գրախոսել է Վ. Բարթոլոմը, իր խմբագրած “Мир ислама”-ամսագրի մեջ, որը ի տարբերություն «Քրիստոնյա Արևելք»-ի

---

<sup>8</sup> Արծաթյա շերտիներով զբաղվել են նաև Ա. Մարկովը և Պ. Երնշտեդտը: Հ. Օրբելին տեսնելով որ Մարկովը դեռևս 1898 թ. վերծանել է արձանագրությունը, և որ այն նկատելի տարբերվում է իր վերծանություն-թարգմանությունից, հանդեսի հաջորդ պրակում իր փոքրիկ նախաբանից հետո, հրատարակել է նրանց հոդվածները:

նախատեսված էր ոչ միայն գիտական շրջանակների համար: Առաջին չորս հատորների և հինգերորդ հատորի երրորդ պրակի համար գրախոսություն է գրել Լ. Մելիքսեթ-Բեկը, որ հրատարակվել է «Ազգագրական հանդես»-ում: Վերջիններն ըստ էության գրախոսություններ էլ չէին, այլ հանդեսի հատորներում տպագրված հոդվածների ոչ լրիվ ցանկեր:

Մի ուշացած գրախոսություն էլ հրատարակվել է 1959 թ., հեղինակը՝ Ն. Մենաղարիշվիլին «ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի պարբերական հրատարակությունները արևելագիտության ասպարեզում 1917-1957 թթ.», հոդվածում ի թիվս մի քանի հրատարակությունների՝ (Византийский временник, Записки Вост. отд., Ученые записки ИВ) խոսում է նաև «Քրիստոնյա Արևելք» հանդեսի մասին, որի խմբագիր է համարում Վ. Բարթոլոմի, շփոթելով հավանաբար “Мир ислама”-ը “Христианский Восток”-ի հետ: Հեղինակը բարձր է գնահատում վերջինիս գիտական մակարդակը, սակայն գտնում է, որ այնտեղ թույլ են արտահայտված նոր խնդիրները և իրադարձությունները: Թերևս հոդվածագիրը ծանոթ չի եղել հանդեսի հրատարակման նախագծին, ըստ որի ժամանակակից հարցերի լուսաբանում չէր նախատեսվում, դա նրա ծրագրից դուրս էր: Այնուհետև նա գրում է, որ «Քրիստոնյա Արևելք»-ի թեման, օրինակ, հիմնականում տոգորված է կրոնական մոտիվներով. պատմական աշխատանքները նվիրված են հիմնականում կրոնական՝ քրիստոնեական մատենագրության հուշարձանների և Քրիստոնյա Արևելքի երկրների՝ Հայաստանի, Վրաստանի, Ասորիքի (Սիրիայի) մշակույթների ուսումնասիրությանը. և որպես հաստատում իր մտքի օրինակ է բերում Հ. Օրբելու “Фрагмент крестного камня с арабской надписью в Тифлисе”, Ա. Դյակոնովի “К истории сирийского сказания о св. Мар-Евгене”, Լ. Մելիքսեթ-Բեկի, Բ. Տուրակի և ուրիշների այլ հոդվածներ<sup>9</sup>:

---

<sup>9</sup> Հեղինակն, իհարկե, ծայր աստիճան անարդարացի է իր մեղադրանքների մեջ: Ավելորդ է նույնիսկ ասել, որ այս հոդվածները ոչ մի կպա չունեն կրոնի կամ կրոնական աշխարհայացքի հետ, սակայն եթե նկատի ունենանք այն ժամանակը և իրադրությունը, երբ գրվել է այդ հոդվածը, ամեն ինչ հասկանալի է դառնում: Ինչ վերաբերում է բերված մնացած օրինակներին, ապա դրանք մի մասն են այն հսկայական նյութի, որոնց հանդեպ չի մարել գիտնականների հետաքրքրությունը և դեռ երկար ժամանակ դրանք ուսումնասիրությունների առարկա կդառնան: Այն հանգամանքը, որ այդ նյութը վերաբերում է եկեղեցական մատենագրությանը, ամենևին չի նսեմացնում նրա

«Քրիստոնեայ Արևելք»-ը բացառապես գիտական հանդես էր, սակայն դա չէր խանգարում խմբագրությանը որոշակի համագործակցության մեջ լինել այլ պարբերականների հետ: Վ. Բարթոլդի խոստովանությամբ. «Քրիստոնյա Արևելք»-ի և «Մահմեդական աշխարհ»-ի գիտական խնդիրների նմանությունը, ինչպես իրավացիորեն նշել է Ն. Մառը, ի թիվս բազմաթիվ այլ պատճառների, թույլ է տալիս մեզ ցանկանալ Ն. Մառի և իր աշխատակիցների նախաձեռնած հրատարակությանը երկար կյանք և հաջող պայքար ռուս ընթերցող հասարակության անտարբերության դեմ, չբացառելով նրա ամենակրթված շերտերը, ռուսական արևելագիտության բոլոր բնագավառները: Եթե արևելագիտության որևէ բնագավառ կարիք ունի գիտության ավելի մեծ ուշադրության, ապա դա, իհարկե, քրիստոնյա Արևելքի ուսումնասիրությունն է, Բյուզանդիայի ուսումնասիրության հետ կապված<sup>10</sup>:

«Քրիստոնեայ Արևելք»-ի մատուցած ծառայությունները արևելագիտությանը՝ նրան դնում են 20-րդ դ. եվրոպական ամենակարևոր պարբերական հրատարակությունների շարքում:

KARINE AVETYAN

## REVUE “XRISTJANSKIĪ VOSTOK” ET JOSEPH ORBELI

Revue “Xristjanskiĭ Vostok” (Orient Chrétienne) paru à S. Petersbourg-Petrograd de 1912 à 1922, en six tomes de trios fascicules. La revue a beaucoup publié les articles sur l’Arménie, la Géorgie, la Syrie, l’Éthiopie médiéval. Au commencement N. Marr et ensuite J. Orbeli étaient rédacteurs de revue; on y trouve aussi de nombreux articles des N. Adontz, N. Marr, J. Orbeli, L. Meilket-Bekov, B. Touraev, I. Kratchkovski, I. Djavakhichvili, K. Kekelidze.

---

նշանակությունը, քանի որ ժողովուրդների պատմական անցյալի հուշարձաններ են, որոնց մեջ արտացոլվում է երկրի ներքին կյանքը, հասարակական, քաղաքական իրադարձությունները, ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը և այլն: Այդ հուշարձանները մի շարք դեպքերում օգնում են պարզել և վերականգնել ժամանակի որոշակի հատվածում տվյալ ժողովրդի անցած պատմական ճանապարհի շատ կողմեր:

<sup>10</sup> Տե՛ս Բարթոլդ Վ., նշվ. աշխ., էջ 286:

## ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՂՄՈՅԱՆ

### **ԴԵՆԻ ԴՐ ՌՈՒԺՄՈՆԸ «ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎՄՈՒՏՔ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ**

Հայտնի փիլիսոփա, էսսեիստ, գրող Դենի դը Ռուժմոնն արդեն հայ գրական և գեղագիտական մտքի սեփականությունն է: Եվ եթե ընդունենք այն տեսակետը, որ ամեն մի թարգմանվող հեղինակի ճակատագիր տվյալ մշակութային աշխարհում մեծապես կախված է նրա թարգմանչից, ապա կարելի է փաստել, որ ֆրանսերենի գիտակ, հմուտ թարգմանիչ և լայն իմացությունների տեր Ալեքսանդր Թոփչյանի ռուժմոնյան շարքը (թվով հինգ գիրք\*) դառնում է ընթերցող հասարակայնության և առավելապես միջնադարագետ բանասերների ու մշակութաբանների սեղանի գիրքը: «Սերը և Արևմուտքը» (Երևան, 2007), ինչպես նաև դրա շարունակությունը հանդիսացող «Սիրո առասպելները» (Երևան, 2011), Դենի դը Ռուժմոնի ամենահայտնի ուսումնասիրություններն են, որոնք թարգմանվել են տասնյակ լեզուներով և գրախոսվել Ժան Պոլ Սարտրի նման մեծությունների կողմից:

Խորհրդային համեմատաբաններից շատերը (А.Д. Михайлов, Е.М. Мелетинский) հիշատակել են Ռուժմոնի «պոպուլյար տեսությունը», և մենք տեսական աշխատություններում միշտ զգացել ենք նրա ներկայությունը, սակայն այսօր, մեզ բացառիկ հնարավորություն է տրված առանց միջնորդավորված մեկնաբանության ծանոթանալու «Միասնական մշակութային Եվրոպայի» գաղափարակիր Ռուժմոնի մտքի հոսքին, ընդգրկուն համեմատություններին, փաստական վկայություններով ամրագրված բազմաթիվ հարցադրումներին, իր ընթերցողի ինտելեկտին ապավինած՝ հայտնի ու անհայտ անուններին, թևավոր խոսքերին, սուրբգրային մեջբերումներին ու արձագանքներին երբեմն, մեղմ ասած, անսպասելի համեմատական զուգահեռներին,

---

\* «Եվրոպայի 28 դարերը», Երևան, 1996: «Մտածել ձեռքերով», Երևան, 1999: «Նամակներ ատոմային ռումբի մասին», Երևան, 2000:

ինչպես օրինակ՝ Կյերկեգոր-Համլետ<sup>1</sup>: Ճիշտ է, նշված համեմատության օբյեկտները համազոր չեն իրենց իրական և գրական-գեղարվեստական ծագումով, ինչպես նաև ժամանակագրական առումով, սակայն համամարդկային տիպաբանություն են փաստում: Համեմատության թանձրույթն է՝ հզոր անհատների կողմից իրենց տրված առաքելությունը վերանձնական դարձնելու և սիրուց բարձր դասելու իրավունքը:

Ռուժմոնի նշված գրքերը մեզ համար ճանաչելի են դարձնում տարբեր քաղաքակրթությունները, էթնիկ մշակույթային աշխարհներն ու բոլոր պատմական ժամանակաշրջանները մերձեցնող և միավորող այն ֆենոմենը, որը կոչվում է Սեր: Այն ունի բազմաթիվ որակներ՝ էրոս, սեր Ագապե, սեր պլատոնական, սեր առ Աստված, սեր զգայական-կիրք: Ըստ Ռուժմոնի՝ հենց տրիստանյան («Տրիստան և Իզոլդա») լեգենդար սեր-կիրքն էր, որ իր տարբերակներով երկար դարեր մնում էր որպես նախատիպ համաեվրոպական մշակույթում զարգացող սիրային զգացումի այն տարատեսակների, որոնք արվեստում (օրինակ՝ Վագներ) ու գրականության մեջ դրսևորվում էին «սեր-մահ» ողբերգական մոդելով: Ռուժմոնը խռովահույզ հոգիներին, որոնք տառապանքի ու մահվան մեջ էին տեսնում սիրո հաղթանակը, ճանաչում է նաև այլ աշխարհներում, օրինակ՝ իսլամական մշակույթում (Նիզամի), արաբական սիրային քնարերգության մի տեսակում, որը Բանու Օզրա ցեղի անունով կոչվում էր օզրայան, որտեղ սիրահարը եթե սիրում էր, ապա միայն՝ մեռնելու գնով:

Այդօրինակ բազմաթիվ ընդհանրություններն են Ռուժմոնի որոնումների պատճառը, որ նա Տրիստանի և եվրոպական տրոպադուրների կուրտուազ սիրո արվեստը խարսխում է կատարների միստիկ գաղափարներին, որն էլ իր հերթին, ըստ նրա, ընդերքային կապ ուներ իրանական դուալիզմի (մանիքեություն) և արաբական սուֆիական հայացքների հետ:

Ռուժմոնի ամեն մի հարցադրումը և ամեն մի դիտարկումը տասնյակ ճառագայթներով մուտք է գործում բազմաթիվ գիտական ասպարեզներ՝ գրականություն, փիլիսոփայություն, հոգեբանություն,

---

<sup>1</sup> Դենի դը Ռուժմոն, Սիրո առապելները (գրականագիտական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 73:

երաժշտություն, պատմություն, կրոն, հոգեվերլուծություն: Եվ այդ ամենը՝ փաստարկելու համար մի կարևոր դրույթ, այն է՝ եվրոպական միջնադարյան մշակույթը խանդավառ ջանադրությամբ որդեգրում է դժբախտ սիրո գաղափարը, որին ուղեկցում է սիրային-զգայական կրքի և ամուսնության ինստիտուտի «բախումը»: Այստեղ անթաքույց են նիցչեյան արձագանքները, եթե հիշենք նրա՝ աֆորիզմի ուժ ստացած մի դրույթը, թե ամուսնությունը սեռական կյանքի ամենաստապատիր ձևն է:

Ռուժմոնի նախասիրություն հանդիսացող էսսեի ժանրը նրան ինչ-որ տեղ ազատել է Արևելք-Արևմուտք բազմաշերտ ընդհանրությունների ծագումնաբանությանը և դրանց տարբեր դրսևորումներին որոշակի և հստակ պատճառաբանություն տալու պարտավորությունից, մանավանդ, որ նա անկաշկանդ «ջրջում է» դարերում և մշակույթներում: Բազմաթիվ եզրահանգումներ և հիպոթեզեր արդյունք են հենց այդ ազատ ու խիստ անհատական համեմատությունների՝ Կյերկեգորը և Դոն ժուանը, Կյերկեգորը և Տրիստանը, Նիցչեն և Կյերկեգորը<sup>2</sup>: Համեմատության ոգին, իհարկե, հայտնի է դառնում: Դոն ժուանը և Տրիստանը որպես հակաթեզեր ռուժմոնյան լայն ընդհանրացմամբ ներկայացնում են հենց նույն եվրոպայում կայացած երկու արժեքներ՝ ասպետական պատվի կոդեքս և բարոյական նիհիլիզմ:

Ինչ որ տեղ կարծես կախյալ է մնում մանիքություն - կատարներ - տրուբադուրներ, նեոպլատոնիզմ - սուֆիզմ - տրուբադուրներ «խառնաշփոթ» և «անհավանական» համադրությունը<sup>3</sup> որում, ի դեպ, անսքող է նաև իսլամի ներկայությունը: Այս համադրությունն ապացուցելու համար Ռուժմոնն առավելապես ապավինում է, մեր կարծիքով, «իսկ ինչո՞ւ ոչ» տարբերակին:

Իրականում պարսիկ սուֆի պոետների արվեստը կարծես այլ բան է ապացուցում. այն, որ սուֆիզմի հետ պոեզիա մուտք գործեց երջանիկ սիրո գաղափարը, քանի որ այն խարսխված էր սիրեցյալի (Աստծո) հետ հանդիպման, միացման և իրար մեջ տարրալուծվելու միստիկական-էքստատիկ գաղափարին և զգացմանը: Ճիշտ է, դա

<sup>2</sup> Դենի դը Ռուժմոն, Սիրո առասպելները, Երևան, 2011, էջ 95-118:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 104:



բանաստեղծությունը երկիմաստ մեկնաբանելու հնարավորություն էր տալիս, աղետատների համար սիմվոլիկ լեզու և մտածողության այլ համակարգ էր դառնում: Բայց միայն աղետատների: Մյուսները տեսնում էին հարազատ, կարծրատիպ կառույցը՝ սիրեցյալ-տառապանք:

Այնուհանդերձ, էսսեն արգելք չէ, որ Ռուժմոնն իր լայնախոհ զուգահեռներով, նուրբ դիտողականությամբ, ընդմիջվող «զանազան»<sup>4</sup> արժանահիշատակ զրույցներով, երբեմն պատկերավոր և զգացմունքային դատողություններով ընթերցողին ուղղորդի նորանոր նկատառումների, մղի մտովի ռուժմոնյան մոդելը նորից ու նորից սեփական կամ լավ ծանոթ այլ միջնադարյան պոեզիայի վրա տեղադրելու ցանկությամբ:

Օրինակ, ասենք, ու՞մ համար է գաղտնիք, որ հայ միջնադարյան տաղերգության մեջ գերակայում է սեր-մահ, սեր-տառապանք, սեր-ավերածություն կարծրատիպը, սիրելիի իդեալականացումը, հատկապես նրա արտաքին-պատկերագրական նկարագիրը, որն արդեն սիրահարի համար տանջանքի պոտենցիալ աղբյուր էր դառնում: Բայց, մինչև օտար ազդեցություն և «հյուր» երևույթ որոնելն, առաջին հերթին փորձում ենք դրանց ծագումը փնտրել սեփական պոեզիայի ավանդույթներում, միջնադարի հոգևոր մշակույթի արժեքների և էսթետիկական գիտացության դաշտում՝ երբեք չմերժելով նաև հարևան քաղաքակրթության ընդերքային և ուղղակի ազդեցության հնարավոր և օրինաչափ պարագան:

Գրականագիտության անվերջ քննարկվող և վիճահարույց խնդիրներից է արևելյան և արևմտյան-կուրտուազ պոետիկայի զարմանալի նմանության հանգամանքը<sup>5</sup>:

Գուցե 30-ականներին դեռևս հստակ չէր ձևավորվել համեմատական գրականագիտության հիմնական եզրաբանությունը՝ ուղղակի ազդեցություն, տիպաբանական զուգահեռ, գենետիկ ընդհանրություն և շփման բարձրագույն ձև՝ սինթեզ: Այնուհանդերձ Ռուժմոնի պատմահամեմատական վերլուծությունը մեթոդաբանական ճշտություն է արտահայտում, երբ փաստարկում է, թե գաղափարներն

---

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 166:

<sup>5</sup> Հմմտ. Դենի դը Ռուժմոն, Սերը և Արևմուտքը (պատմափիլիսոփայական ուսումնասիրություն), Երևան, 2007, էջ 104:

ու նրանց պատկերավոր ձևակերպումները Արևելքից հասնում էին «...մինչև արաբական Իսպանիա և Պիրենեյան լեռներն անցնելով՝ Ֆրանսիայի հարավում գտնում մի հասարակություն, որն ասես սպասում էր լեզվական այդ արտահայտչամիջոցներին, որպեսզի ասի այն, ինչը չէր համարձակվում կամ չէր կարողանում խոստովանել ո՛չ կղերականների լեզվով, ո՛չ էլ ռամկական խոսվածքով: **Կուրտուազ բանաստեղծությունը ծնվել է այս հանդիպումից**<sup>6</sup>»:

Այսպիսով, Ռուժմոնը չի ժխտում միգրացիայի երևույթը և նրա հայտնի ճանապարհը (արաբական Իսպանիա), ավելին, կծու հեգնանքով է պատասխանում հայտնի արևելագետների արաբական ազդեցությունը մերժող «անվերապահ կեցվածքին»<sup>7</sup>: Մյուս կողմից՝ փորձում է «...կուրտուազ պոեզիայի հիմնական գաղտնիքն ավելի մոտիկ տեղում փնտրել, այսինքն՝ իր տեղում, հենց այն միջավայրում, որտեղ ծնունդ է առել»<sup>8</sup>:

Այսինքն՝ Եվրոպայում արդեն կար պատրաստի ենթահող նորել երևույթը ընդունելու, ադապտացնելու և արագորեն զարգացնելու:

Իհարկե, հյուր երևույթը պասսիվ յուրացում չէ, այլ «հյուրընկալ» ժողովրդի էթնոմշակութային գիտակցության և հոգեկան կերտվածքի (mentality) միջով անցած և յուրացված մի նոր որակ: Ընթերցողին մնում է ճիգ գործել, մտորել թեր ու դեմի բարդ խնդիրը, և մենք չենք հակադրվում այդ գայթակղությանը:

Ասենք, 14-րդ դարում Հաֆեզը Սամարղանդն ու Բուխարան նվիրում էր իր սիրելի մի խալին<sup>9</sup>, նա ի՞նչ է, կարդացե՛լ էր պրովանսյան տրուբադուրներին, որոնք սիրեցյալին էին նվիրում Եվրոպայի հանրահայտ երկրամասեր ու երկրներ: Կամ մեր Թլկուրանցին, որ մի համբույրի արժեքը համարում է Երզնկան, Հաբեշտանը, Եմենը, Հնդկաստանը, ի՞նչ է, անպայման ուզում էր ետ չմնա՛լ Հաֆեզից: Անշուշտ, ո՛չ: Միջնադարյան մարդու գիտակցության մեջ ամենաթանկ արժեքները տարածքներն էին, որ ավատատիրական պետության հիմքերի հիմքն էր՝ ֆեոդալը ռազմիկ է՝ նվաճող: Իսկ

<sup>6</sup> Ընդգծումը մերն է, Ա.Կ., տե՛ս Սերը և Արևմուտքը, էջ 110:

<sup>7</sup> Տե՛ս Սերը և Արևմուտքը, էջ 109:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>9</sup> Տե՛ս Hafez, Divan, Tehran, 1374.

պոետը իր ժամանակի զավակն է և նա նվիրում է իր պատկերացմամբ ամենաարժեքավորն ու թանկը, թեկուզև այն իրենը չէ:

Չենք կարող չհիանալ հայտնի միջնադարագետ, մշակութաբան Ա. Գուրկիչի այն եզրահանգմամբ ու ձևակերպմամբ, թե «...հասկացությունների համակարգը և տերմինաբանությունը ավատատիրական և իրավական է՝ «ճառայություն», «նվիրատվություն», «վասալական երդում», «սենյոր»: Այդպիսին է սիրային բառապաշարը, որի միջոցով նա վարում է իր սիրային խոստովանությունը<sup>10</sup>: Այսինքն, գրական և մշակութային ընդհանրությունը պատմական կատեգորիա է: Դրույթ, որ դեռևս 30-ականներին հիմնավորվում է Ռուժմոնի մի սրամիտ ձևակերպմամբ՝ «Սիրո աստվածը մի աղեղնավոր է, որ մահացու սլաքներ է արձակում, կինն անձնատուր է լինում տղամարդուն, ով նվաճում է իրեն.....<sup>11</sup>»: Իրավամբ՝ աղեղ, նետ, նվաճել, հանձնվել, մեռնել տերմինաբանությունը, պատկերավոր մտածողության ողջ համալիրը ծնվում է ավատատիրական հասարակարգի կենսակերպից, որը բոլոր երկրներում, սակայն տարբեր ժամանակներում կրկնվում է:

Ահա թե ինչն է միավորում միջնադարյան տարբեր գրականությունները՝ պրովանսյանը, արաբականը, պարսկականը, հայկականը, որ թվում է, թե հենց նույն գեղեցիկ սիրուհին և հենց նույն տառապյալ սիրահարը մի գրականությունից տեղափոխվում է մի այլ:

Այսպիսով, մշակութային առնչություններում Ռուժմոնն ընդունում է և՛ տիպաբանությունը և՛ ուղղակի ազդեցությունը և՛ սինթեզը:

Մեր հիշողության մեջ մնացել է անգլիացի արևելագետ Մոնտգոմերի Ուոտտի մի ակնարկը՝ արված նրա գրքի ռուսերեն թարգմանության առաջաբանում. «Արաբները ինչ-որ չափով հասկանում են, որ իրենց մշակութային նվաճումները հաճախ նսեմացվում են եվրոպացիների կողմից», իսկ Գյոթեն գրում էր. «Եթե մենք ուզում ենք մասնակցություն ունենալ հոյակապ մտքերի արարման ընթացքին, ապա մեզ հարկավոր է նմանվել համայն արևելյանին, ինքը՝ Արևելքը, մեզ մոտ հյուր չի գա»: Գյոթեն լավ գիտեր, որ Արևելքը ոչ թե հյուր էր եկել, այլ եկել էր որպես նվաճող, 711

<sup>10</sup> Гуревич А., Категория средневековой культуры, Москва, 1972, с. 28.

<sup>11</sup> Մերը և Արևմուտքը, էջ 252:

թ.-ին բախվել էին ոչ միայն ասպետական թերերը, այլ նաև քաղաքակրթությունները, որ Ջիբրալթար անունը նեղուցի վրա (Ալ-Թարիդի լեռ) արաբների թողած միակ հետքը չէր, որ այդ հանդիպումից ծնվեց մի հրաշալի մշակութային ֆենոմեն, որի գաղափարն ինքն էլ տեսականացրեց՝ «Արևմտյան-արևելյան սինթեզ»:

Օտար մշակույթների ճշմարիտ գիտակցումն ու դրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքը մեծությունների դասերն են:

Ռուժմոնի հիշյալ գրքերը մեծարում են սեփական՝ եվրոպական հոգևոր արժեքները, բայց և հարգանք ու գնահատանք են արտահայտում այն ժողովուրդների հանդեպ, ում հետ միասնաբար ստեղծվել են համաշխարհային քաղաքակրթության «մույթ» ու «լուսավոր» մի հատվածի՝ միջնադարյան կոչվող մշակույթի հուշարձանները:

«Սերը և Արևմուտքը» գրքի հետգրությունում հեղինակը խոստովանում է. «Իմ աշխատությունը, որ չափազանց տարբեր նշանակություններ ունի և անդասակարգելի է, վայրենի ձևով առնչվում է բազմաթիվ դիսցիպլինների...<sup>12</sup>»: Իրավամբ, նա մուտք է գործում ոչ միայն բազմազան ոլորտներ, այլ նաև բազում դարեր և ժամանակներ: Եվ այդ ամենը նշված գրքերի 20-ից ավել գլուխներում և հարյուրավոր ենթամասերում, որոնց անդրադառնալու համար մեր ընտրած ժանրը բավարար չէ: Թող ամեն ոք ինքն ընտրի շվեյցարացի մեծ ինտելեկտուալի գործերից ճշմարիտը քաղելու իր բանալին:

Չնայած թարգմանության որակը ֆրանսերենի գիտակաների ասպարեզն է, սակայն ուզում ենք ասել, որ թարգմանիչն իր մաքրամաքուր հայերենով և բնագրին հարազատ մնալու ջանքերով մեզ է հասցրել ռուժմոնյան տեքստերի և՛ գաղափարաբանությունը և՛ գիտական արտիստիզմը:

Ռուժմոնը լայնածավալ նյութի, խիտ ու պատկերավոր վկայակոչումների, վերացական դատողությունների, բառախաղերի, եզրերի և այլալեզու արտահայտությունների մի այնպիսի տարափ է տեղում, որ շվարած ընթերցողին երբեմն թվում է, թե հեղինակն ու թարգմանիչը, որ հրնթացս նաև ծանոթագրում է, մրցում են իրար հետ:

---

<sup>12</sup> Սերը և Արևմուտքը, էջ 352:

Երախտագիտություն բոլոր թարգմանիչներին, որոնք մեզ համար պատուհան են բացում դեպի այլ աշխարհներ:

ARMANUSH KOZMOYAN

### **DENIS DE ROUGEMONT IN THE QUEST FOR “EAST-WEST” CULTURAL CONNECTIONS**

The recent years Armenian scientific-literary heritage has been significant with the 20<sup>th</sup> - century writer Denis de Rougemont’s classic works “Love in the Western World” and “ The Myths of Love “ which deal with intercultural issues: the author traces the evolution of Western romantic love from its literary beginnings bringing together historical, religious, philosophical, and cultural dimensions.

At the heart of these works lies the phenomenon of love that united various cultures and societies of the medieval world. In this context, some peculiarities of medieval Armenian poetry become more evident.

Also, de Rougemont illustrates elements of unity that include genetics, direct influence and synthesis.

Translator Alexander Toptchian remains faithful both to style and artistic value of the original French text.

**«ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ  
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐ**

1. Արևելագիտական ժողովածու - Հատ. I: Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, 402 էջ:
2. Արևելագիտական ժողովածու - Հատ. II: Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1964, 380 էջ:
3. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. III, Արաբական երկրներ: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 227 էջ:
4. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. IV, Իրան: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, 405 էջ:
5. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. V, Թուրքիա: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 449 էջ:
6. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. VI, Արաբական երկրներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 434 էջ:
7. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. VII, Քրդագիտություն: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 383 էջ:
8. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. VIII, Իրան: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 404 էջ:
9. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. IX, Արաբական երկրներ: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 397 էջ:
10. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. X, Թուրքիա: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 329 էջ:
11. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XI, Իրան: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 345 էջ:
12. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XII, Թուրքիա: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 276 էջ:
13. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XIII, Քրդագիտություն: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 285 էջ:
14. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XIV, Արաբական երկրների ներքին և արտաքին քաղաքականության ժամանակակից պրոբլեմներ: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 315 էջ:
15. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XV: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 341 էջ:
16. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XVI: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1996, 270 էջ:

17. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XVII: Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն, 1998, 240 էջ:
18. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XVIII: Եր., «Չանգակ-97», 1999, 236 էջ:
19. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XIX: Եր., «Չանգակ-97», 2000, 218 էջ:
20. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XX: Եր., «Չանգակ-97», 2001, 349 էջ:
21. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXI: Եր., «Չանգակ-97», 2002, 405 էջ:
22. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXII: Եր., «Չանգակ-97», 2003, 332 էջ:
23. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXIII: Եր., «Չանգակ-97», 2004, 568 էջ:
24. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXIV: Եր., «Չանգակ-97», 2005, 536 էջ:
25. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXV: Եր., «Չանգակ-97», 2006, 476 էջ:
26. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXVI: Եր., «Ասողիկ», 2007, 316 էջ:
27. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXVII: Եր., «Էդիթ Պրինտ», 2009, 272 էջ:
28. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ - Հատ. XXVIII: Եր., «Չանգակ-97», 2011, 352 էջ:

**ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ  
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ**

**THE COUNTRIES AND PEOPLES  
OF THE NEAR AND MIDDLE EAST**

**СТРАНЫ И НАРОДЫ  
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА**

**XXIX**

ISBN 978-9939-68-311-9

Հրատարակչության տնօրեն՝ Է. Մկրտչյան  
Էջաղորդ՝ Գ. Հարությունյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16: Թուղթը՝ օֆսեթ:  
Ծավալը՝ 22 տպ. մամ.: Տպաքանակը՝ 300 օրինակ:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28  
Հեռապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am  
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am